«Այդի Բանկ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
կողմից թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳԻՐ

Երևան - 2021թ.

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

«ԱՅԴԻ ԲԱՆԿ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Թողարկողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական տեսակը

ՀՀ, ք. Երևան, 0010, Վարդանանց 13
Հեռ.՝ (+37410) 59 33 33
Էլ. փոստ՝ info@idbank.am
Կայք՝ www.idbank.am

«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր տեղաբաշխողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական տեսակը

ՀՀ, ք. Երևան, 0010, Վարդանանց 13
Հեռ.՝ (+37410) 59 33 33
Էլ. փոստ՝ info@idbank.am
Կայք՝ www.idbank.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ

Արժեթղթերի տեսակը՝	անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից
Արժեթղթերի անվանական արժեքը՝	ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից
Արժեթղթերի թողարկման ծավալը՝	50,000,000 (հիսուն միլիոն) ԱՄՆ Դոլար, 20,000,000 (քսան միլիոն) ԵՎՐՈ, 10,000,000,000 (տաս միլիարդ) ՀՀ դրամ
Արժեկտրոնը՝	ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից
Շրջանառության ժամկետը՝	ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը՝	ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1: ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 8

1.1 Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն 8

1.2 Թողարկողին և արժեթղթերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 10

1.3 Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ 11

1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին համառոտ տեղեկություններ 13

1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները 13

1.6 Թողարկողի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տվյալներ 14

1.7 Արժեթղթերի համակողմանի նկարագիրը 15

1.8 Ամփոփ ֆինանսական տվյալներհազզ. ՀՀ դրամ 16

ԲԱԺԻՆ 2: ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 17

2.1 Ռիսկային գործոններ 17

2.2 Հիմնական տեղեկատվություն 18

2.3 Տեղեկատվություն արժեթղթերի վերաբերյալ 19

2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները 27

2.5 Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 34

2.6 Լրացուցիչ տեղեկատվություն 34

ԲԱԺԻՆ 3: ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 35

3.1 Անկախ աուդիտորները 35

3.2 Ռիսկային գործոններ 35

3.3 Տեղեկատվություն Բանկի մասին 41

3.4 Բիզնեսի նկարագիրը 42

3.5 Թողարկողի կառուցվածքը 45

3.6 Զարգացման վերջին միտումները 45

3.7 Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը 42

3.8 Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները 46

3.9 Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին 53

3.10 Էական պայմանագրերը 54

3.11 Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը 54
3.12 Այլ տեղեկատվություն 54
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 55
Հավելված 1: «Այդի բանկ» ՓԲԸ կազմակերպական կառուցվածք 57
Հավելված 2: Թողարկման վերջնական պայմաններ 58
Հավելված 5: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևեր 68
Հավելված 6: «Այդի բանկ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվություններ 69

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

Վարդան Դիլանյան «ԱյԴի Բանկ» ՓԲԸ խորհրդի նախագահ	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*
Կարեն Մարգարյան «ԱյԴի Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ	*(ստորագրություն)*	01.07.202 *(ամսաթիվ)*
Ալեքսանդր Խաչատուրյան «ԱյԴի Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*
Ելենա Խաչվանքյան «ԱյԴի Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ	(ստորագրություն)	01.07.2021 (ամսաթիվ)
Ալեքսեյ Կոմար «ԱյԴի Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Միեր Աբրահամյան «ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության նախագահ	(ստորագրություն)	06.07.2021 (ամսաթիվ)
Արման Ասատրյան «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Ֆինանսական տնօրեն,Վարչության անդամ	(ստորագրություն)	06.07.2021 (ամսաթիվ)

Ռաֆիկ Սուվարյան «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Ռիսկերի կառավարման գծով տնօրեն,Վարչության անդամ	(ստորագրություն)	06.07.2021 (ամսաթիվ)
Անուշիկ Խաչատրյան «ԱյԴի Բանկ» ՓԲԸ գլխավոր հաշվապահ	(ստորագրություն)	06.07.2021 (ամսաթիվ)
Կարեն Նալբանդյան «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Բիզնեսի զարգացման Տնօրեն,Վարչության անդմ	(ստորագրություն)	06.07.2021 (ամսաթիվ)
Սերգեյ Առաքելյան «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Թվային Բանկինգի Տնօրեն,Վարչության անդամ	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*
Տիգրան Մխիթարյան «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Կորպորատիվ բիզնեսի տնօրեն,Վարչության անդամ	(ստորագրություն)	06.07.2021 (ամսաթիվ)

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

Վարտան Դիլանյան «Այդի Բանկ» ՓԲԸ խորհրդի նախագահ	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*
Կարեն Մարգարյան «Այդի Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*
Ալեքսանդր Խաչատուրյան «Այդի Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ	*(ստորագրություն)*	*(ամսաթիվ)*
Ելենա Խաչվանքյան «Այդի Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ալեքսեյ Կոմար «Այդի Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Միեր Աբրահամյան «Այդի Բանկ» ՓԲԸ վարչության նախագահ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արման Ասատրյան «Այդի Բանկ» ՓԲԸ Ֆինանսական տնօրեն,Վարչության անդամ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ռաֆիկ Սուվարյան «Այդի Բանկ» ՓԲԸ Ռիսկերի կառավարման գծով տնօրեն,Վարչության անդամ	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ԲԱԺԻՆ 1: ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵԴՐՈՂԻՆ
ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Բանկի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային էջում՝ www.idbank.am:

1.1 Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

1.1.1 Թողարկողի անվանումը և կապի միջոցները

1.1.1.1 Բանկի անվանումը

Բանկի լրիվ անվանումն է՝

հայերեն՝	«Այդի Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
ռուսերեն՝	Закрытое Акционерное Общество “АйДи Банк”
անգլերեն՝	“ID Bank” Closed Joint Stock Company:

Բանկի կրճատ անվանումն է՝

հայերեն՝	«Այդի Բանկ» ՓԲԸ
ռուսերեն՝	ЗАО “АйДи Банк”
անգլերեն՝	“ID Bank” CJSC:

1.1.1.2 Բանկի պետական գրանցման վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փ. 13, գրանցման համարը՝ 9: Բանկի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փողոց՝ 13:

1.1.1.3 Կապի միջոցներ են՝ հեռախոս՝ +37410 593333, էլ-փոստ՝ info@idbank.am, ինտերնետային կայք՝ www.idbank.am: Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել «Այդի բանկ» ՓԲԸ Գանձապետ՝ Վահան Հայրապետյանի հետ կապի հետևյալ միջոցներով՝ հեռախոս՝ +37410 593395 (3275), էլ. փոստ՝ vahan.hayrapetyan@idbank.am:

1.1.2 Թողարկողի համառոտ պատմությունը

«Այդի բանկ» ՓԲԸ-ն «Անելիք Բանկ» ՓԲԸ-ի իրավահաջորդն է, որը հիմնադրվել է 1990թ. օգոստոսի 1-ին թեթև արդյունաբերության բնագավառի ձեռնարկությունների կողմից որպես փայատիրական առևտրային բանկ: 1996թ. «Անելիք» փայատիրական առևտրային բանկը գրանցվել է (ՀՀ ԿԲ արտոնագիր N9) որպես «Անելիք Բանկ» ՍՊԸ: 2007թ. «Անելիք Բանկ» ՍՊԸ-ն վերակազմավորվել է «Անելիք Բանկ» ՓԲԸ: 2018թ. հունիսին «Անելիք Բանկ» ՓԲԸ վերանվանվել է «Այդի Բանկ» ՓԲԸ: 2013 թվականից մինչ 2016 թվականի սեպտեմբեր ամիսը «Այդի Բանկ» ՓԲԸ միակ բաժնետերն է եղել լիբանանյան «Կրեդիտբանկ» Ս.Ա.Լ.-ը: 2016 թվականի հոկտեմբեր ամսում Բանկի բաժնետերերի կառուցվածքում տեղի է ունեցել փոփոխություն, և ներգրավվել է նոր բաժնետեր «Ֆիսթոքո» LTD ընկերությունը: Սույն ազդագրի ԿԲ ներկայացման պահին Բանկի բաժնետոմսերի 59.68 տոկոսը պատկանել է «Ֆիսթոքո» Էլ Թի Դի ընկերությանը և 40.32 տոկոսը՝ «Կրեդիտբանկ» Ս.Ա.Լ.-ին:

1.1.3 Թողարկողի կանոնադրական կապիտալը

«Այդի բանկ» ՓԲԸ կանոնադրական կապիտալը 31.03.2021թ. դրությամբ կազմել է 33,971,850 հազ. ՀՀ դրամ, բաժնետոմսերի քանակը՝ 679,437 հատ սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրի անվանական արժեքը՝ 50,000 ՀՀ դրամ:

1.1.4 Թողարկողի ռազմավարությունը

Բանկը շարունակաբար ուսումնասիրում է հաճախորդների պահանջմունքները՝ ձգտելով լինել ֆինանսական ծառայությունների ոլորտում ընթացող գլոբալ փոփոխությունների առաջնագծում: 2021 թվականին Բանկի ռազմավարական հիմնական ուղղվածությունը թվային ուղիների զարգացումն է և հեռահար ուղիներով ծառայությունների մատուցումը: Բանկը շարունակելու է կատարելագործել մանրածախ և կորպորատիվ հաճախորդներին մատուցվող ծառայությունները՝ դրանք դարձնելով ավելի պարզ և հարմարավետ: Շարունակվելու է նաև արժեթղթային գործառնությունների իրականացումը, մասնավորապես պարտատոմսերի թողարկման գործառնությունը՝ այդպիսով դիվերսիֆիկացնելով Բանկի կողմից ներգրավվող միջոցների աղբյուրները: Իր նորարարական ռազմավարության շրջանակներում Բանկը կարևորում է նաև ներդրումային բիզնեսի թվայնացումը՝ թվային տեխնոլոգիաների զարգացմանը համընթաց:

1.1.5 Թողարկողի բիզնեսի համառոտ նկարագիրը

«Այդի բանկ» ՓԲԸ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ մայրաքաղաքում և 4 մարզերում տեղաբաշխված 13 մասնաճյուղերի միջոցով: Մասնավորապես Երևան քաղաքում Բանկի մասնաճյուղերը տեղակայված են

Կենտրոն (2), Արաբկիր (2), Դավթաշեն (1), Էրեբունի (1), Նոր նորք (1), Շենգավիթ (1) Հարավարևմտյան թաղամաս վարչական շրջաններում (1), իսկ ՀՀ մարզերում՝ Աբովյան (1), Գյումրի (1), Վանաձոր (1) և Էջմիածին (1) քաղաքներում: 31.03.2021թ. դրությամբ Բանկի կողմից սպասարկվող բանկոմատների թիվը կազմել է 56, որոնցից 49-ը՝ Երևան քաղաքում, իսկ 7-ը՝ ՀՀ մարզերում, իսկ տեղադրված POS տերմինալների թիվը՝ 467: Բանկի գործունեությունն ընդհանուր առմամբ ուղղված է իր կողմից սահմանված թիրախային սեգմենտներին բանկային ծառայությունների մատուցմանը, որի համաձայն Բանկում ձևավորվել են համապատասխան բիզնես ուղղությունները, այն է՝ մանրածախ բանկային ծառայությունների ուղղություն և կորպորատիվ բանկային ծառայությունների ուղղություն

- ***Կորպորատիվ բանկային գործառնություններ.*** Բանկը կարևորում է ՓՄՁ ոլորտի հիմնական ֆինանսական խնդիրների բացահայտումը՝ դրանց համապատասխան մշակելով պարզ և հարմարավետ բանկային ծառայություններ: Մասնավորապես, առևտրային նպատակով տրամադրվող վարկերը, առևտրի ֆինանսավորման նպատակով թողարկվող բանկային գործիքները մշտապես համադրվում են հաճախորդի պահանջմունքների, ինչպես նաև շուկայում առաջարկվող համանման գործիքների պայմանների հետ:
- ***Մանրածախ բանկային գործառնություններ.*** Ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման ընթացքում Բանկն առավելապես կարևորում է պարզ ընթացակարգերով ծառայությունների մատուցումը, ինչը թույլ է տալիս հաճախորդին հնարավորինս սեղմ ժամանակահատվածում ստանալ իր կարիքներին համապատասխան բանկային ծառայություն:

1.1.6 Բանկի կազմակերպական կառուցվածքը

Բանկի կազմակերպական կառուցվածքը ներկայացված է սույն Ազդագրի Հավելված 1-ում:

1.2 Թողարկողին և արժեթղթերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի ներդրումները, այդ թվում՝ բանկերի պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը:

Բանկը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար: Ռիսկերը այն բոլոր տեսակի իրադարձություններն են, որոնք կարող են էապես ազդել Բանկի գործունեության և Բանկի կողմից թողարկված արժեթղթերի վրա: Հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել՝

- **ՀՀ-ում բանկային ծառայությունների շուկայի բարձր մրցակցության առկայությունը,** որի պատճառով Բանկը չի կարող երաշխավորել պլանավորված շահույթի ստացումը,
- **պարտատոմսերի իրացվելիության ռիսկը**, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով,
- **արտարժութային ռիսկը**, որը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների հետևանքով, ինչպես նաևհասարակության մոտ արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների ռիսկի ոչ պատշաճ կառավարման և արտարժույթով արտահայտված պարտատոմսերում ներդրողների մոտ իրենց առաջարկված գործիքի վերաբերյալ ոչ բավարար տեղեկատվություն ստանալու արդյունքում,
- **տոկոսադրույքի ռիսկը,** որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության,
- **օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը,** որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա:
- **Տարածաշրջանային ռիսկ,** որը կարող է առաջանալ տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակի փոփոխությունների հետևանքով՝ իր հերթին բացասական ազդեցություն ունենալով երկրի մակրոտնտեսական վիճակի վրա: Երկրի անբարենպաստ մակրոտնտեսական վիճակն իր հերթին կարող է վատ ազդեցություն ունենալ թողարկողի բնականոն գործունեության և շահութաբերության վրա:
- **Երկրում/աշխարհում արտակարգ դրություն հայտարարելու ռիսկ (օրինակ՝ Պանդեմիայի ռիսկ)**, որն իր վրա կարող է կրել թե՛ թողարկողը, թե՛ ներդրողը: Նման իրավիճակում կարող է փոփոխության ենթարկվել երկրի մակրոտնտեսական վիճակը՝ այդպիսով բացասական ազդեցություն թողնելով նաև թողարկողի հիմնական ցուցանիշների վրա, և ներդրողն իր հերթին, պարտատոմսերում ներդրում կատարելով, որոշակի չափով իր վրա է վերցնում նաև այդ ռիսկը:

1.3 Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ

Բանկի գործունեությունը մշտապես գտնվում է Բանկի խորհրդի և գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Բանկի գործունեությունը շուկայի պահանջներին, ինչպես նաև նվազեցնելով տարբեր ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը:

31.03.2021թ. դրությամբ Բանկի ակտիվների կառուցվածքը ներկայացված է ստորև աղյուսակում.

Ակտիվի անվանումը	Արժեքը 31.03.2021թ. դրությամբ (հազ. ՀՀ դրամ)	Կշիռն ընդհանուր ակտիվներում, %
Կանխիկ դրամական միջոցներ	6,129,909	3.38%
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	11,815,440	6.52%
Պահանջներ բանկերի նկատմամբ	8,969,728	4.95%
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	4,211	0.00%
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,435,116	3.55%
Հաճախորդներին տրված վարկեր	104,072,268	57.42%
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	8,588,309	4.74%
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	21,141,331	11.67%
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	8,324,183	4.59%
Հետաձգված հարկային ակտիվներ	-	0.00%
Բռնագանձված ակտիվներ	2,444,106	1.35%
Այլ ակտիվներ	3,311,995	1.83%
Ընդամենը՝ ակտիվներ	181,236,596	100.00%

Գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են:

Բանկի կառավարման մոդելն ուղղված է գործարար գործընթացների արդյունավետության բարձրացմանը, ուստի Բանկի ղեկավարությունը ըստ նպատակահարմարության իրականացնում է կազմակերպական փոփոխություններ աշխատանքի արդյունավետության շարունակական բարելավման համար:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Բանկի ղեկավարությունը մշտապես իր ուշադրության ներքո է պահում նաև Բանկի կազմակերպական կառուցվածքի արդիական և ժամանակակից բիզնեսի վարման կանոններին համապատասխանեցնելու խնդիրը, որոնք միտված են Բանկի գործունեության բարելավմանը և արդյունավետության ու շահութաբերության բարձրացմանը:

1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին համառոտ տեղեկություններ

Բանկի 2018, 2019 և 2020 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է և 2019 թվականի անկախ աուդիտորական ստուգումն ևս իրականացնելու է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության կողմից: «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ն հանդիսանում է KPMG International Cooperative կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է՝ ՀՀ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փող., 26/1 շենք, «Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ, հեռ.՝ +37410 566762, կայքի հասցեն է՝ www.kpmg.am, էլ. փոստ՝ general@kpmg.co.am: «Քեյ- Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության տնօրեն է հանդիսանում Տիգրան Գասպարյանը:

Նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Բանկի աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները

1.5.1 Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները.

- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետև՝ Ընդհանուր Ժողով)
- Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ)
- Բանկի վարչությունը և Բանկի վարչության նախագահը:

1.5.2 2013 թվականից մինչ 2016 թվականի սեպտեմբեր ամիսը Բանկի միակ բաժնետերն է եղել լիբանանյան «Կրեդիտբանկ» Ս.Ա.Լ.-ը: 2016 թվականի հոկտեմբերին Բանկի բաժնետերերի կառուցվածքում ներգրավվել է նոր բաժնետեր՝ «Ֆիսթոքո» LTD ընկերությունը: Սույն ազդագրի գրանցման ներկայացման պահին Բանկի բաժնետիրական կապիտալը կազմված է եղել 679,437 հատ բաժնետոմսերից, որի 59.68 տոկոսը տնօրինվել է «Ֆիսթոքո» LTD ընկերության կողմից և 40.32 տոկոսը՝ «Կրեդիտբանկ» Ս.Ա.Լ.-ի կողմից:

1.5.3 Բանկի Խորհուրդը կազմված է 5 անդամներից: Բանկի խորհրդի անդամներն են.

- Վարտան Դիլանյան (խորհրդի նախագահ)
- Կարեն Մարգարյան (խորհրդի անդամ)
- Ալեքսանդր Խաչատուրյան (խորհրդի անդամ)
- Ելենա Խաչվանքյան (խորհրդի անդամ)
- Ալեքսեյ Կոմար (խորհրդի անդամ)

1.5.4 Բանկի վարչությունը կազմված է 7 անդամներից: Բանկի վարչության անդամներն են.

- Միեր Աբրահամյան (Վարչության նախագահ)
- Արման Ասատրյան (Ֆինանսական տնօրեն, վարչության անդամ)
- Անուշիկ Խաչատրյան (Գլխավոր հաշվապահ, վարչության անդամ)
- Ռաֆիկ Սուվարյան (Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, վարչության անդամ)
- Կարեն Նալբանդյան (Բիզնեսի զարգացման տնօրեն, վարչության անդամ)

- Սերգեյ Առաքելյան (Թվային Բանկինգի տնօրեն, վարչության անդամ)
- Տիգրան Մխիթարյան (Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, Վարչության անդամ)

1.5.5 31.03.2021թ. դրությամբ Բանկի աշխատակիցների թիվը կազմել է 576:

1.6 Թողարկողի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տվյալներ

Բանկը մինչ այժմ թողարկել է բաժնետոմսեր և պարտատոմսեր: Բանկի կանոնադրական կապիտալը 31.03.2021թ. դրությամբ կազմել է 33,971,850 հազար ՀՀ դրամ և բաժնետիրական կապիտալը կազմված է եղել թվով 679,437 բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Հաշվի առնելով Բանկի կազմակերպաիրավական ձևը՝ Բանկի կողմից թողարկված բաժնետոմսերը չեն շրջանառվում կարգավորող շուկայում: Բանկի բաժնետոմսերը թողարկված են անժամկետ:

«Այդի բանկ» ՓԲԸ Խորհրդի 2016թ. նոյեմբերի 29-ի թիվ 43-Լ որոշմամբ հաստատված և ՀՀ Կենտրոնական Բանկի նախագահի 07 դեկտեմբերի 2016թ. թիվ 1/886Ա որոշմամբ գրանցված բանկի ծրագրային ազդագրի շրջանակում 2016-2017թթ. ընթացքում Բանկի կողմից կատարվել է թվով 5 թողարկում, որի ընթացքում թողարկվել են 20,000,000.00 ԱՄՆ դոլարի և 1,000,000,000.00 ՀՀ դրամի պարտատոմսեր, որոնք ամբողջությամբ արդեն մարվել են:

«Այդի բանկ» ՓԲԸ Խորհրդի 2017թ. դեկտեմբերի 22-ի թիվ 11 որոշմամբ հաստատված և ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 23 փետրվարի 2018 թ. թիվ 1/124Ա որոշմամբ գրանցված բանկի ծրագրային ազդագրի շրջանակում 2018թ.-ին Բանկի կողմից կատարվել է թվով մեկ թողարկում, որի ընթացքում թողարկվել է 5,000,000.00 ԱՄՆ դոլարի պարտատոմսեր, որոնք ամբողջությամբ մարվել են:

«Այդի բանկ» ՓԲԸ Խորհրդի 2019թ. փետրվարի 1-ի թիվ 01 որոշմամբ հաստատված և ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 13 փետրվարի 2019 թ. թիվ 1/93Ա որոշմամբ գրանցված Բանկի ծրագրային ազդագրի շրջանակում 2019թ.-ին Բանկի կողմից կատարվել է թվով 3 թողարկում, որի ընթացքում թողարկվել են 10,000,000.00 ԱՄՆ դոլարի և 250,000,000.00 ՀՀ դրամի պարտատոմսեր, որոնք շրջանառվում են կարգավորվող շուկայում:

«Այդի բանկ» ՓԲԸ Խորհրդի 2020թ. մարտի 20-ի թիվ 02 որոշմամբ հաստատված և ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 05 հունիսի 2020 թ. թիվ 1/291Ա որոշմամբ գրանցված Բանկի ծրագրային ազդագրի շրջանակում 2020թ.-ին Բանկի կողմից կատարվել է թվով 2 թողարկում, որի ընթացքում թողարկվել են 10,000,000.00 ԱՄՆ պարտատոմսեր, որոնք շրջանառվում են կարգավորվող շուկայում:

«Այդի բանկ» ՓԲԸ Խորհրդի 2021թ. մարտի 20-ի թիվ 02 որոշմամբ հաստատված և ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 05 հունիսի 2020 թ. թիվ 1/291Ա որոշմամբ գրանցված Բանկի ծրագրային ազդագրի շրջանակում 2021թ.-ին Բանկի կողմից կատարվել է թվով 1 թողարկում, որի ընթացքում թողարկվել են

5,000,000.00 ԱՄՆ պարտատոմսեր, որոնք շրջանառվում են կարգավորվող շուկայում:

1.7 Արժեթղթերի համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերի տեսակը՝	անվանական, արժեկտրոնային:
Ձևը՝	ոչ փաստաթղթային
Փոխարկելիությունը՝	ոչ փոխարկելի
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	Ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար
Թողարկման արժույթը՝	ԱՄՆ դոլար / ԵՎՐՈ / ՀՀ դրամ
Թողարկման ընդհանուր ծավալը՝	50,000,000 (հիսուն միլիոն) ԱՄՆ Դոլար, 20,000,000 (քսան միլիոն) ԵՎՐՈ, 10,000,000,000 (տաս միլիարդ) ՀՀ դրամ
Տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր քանակը՝	Ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար
Տեղաբաշխման օրը՝	Ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝	Ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար
Տարեկան արժեկտրոնի մեծությունը՝	Ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար
Շրջանառության ժամկետը՝	Ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար
Շրջանառության ձևը՝	ազատ շրջանառության իրավունքով
Պարտատոմսերի ապահովվածությունը՝	չապահովված:

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Վարչության կողմից:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում է Բանկի ինտերնետային կայքում տեղաբաշխումից առնվազն 2 (երկու) օր առաջ:

Բանկի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման հիմնական նպատակն է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են վարկերի տրամադրմանը:

1.8 Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ցուցանիշի անվանում	31.03.2021թ.	31.12.2020թ.	31.12.2019թ.	31.12.2018թ.
	(աուդիտ չանցած) հազ. ՀՀ դրամ	(աուդիտ չանցած) հազ. ՀՀ դրամ	(աուդիտ անցած) հազ. ՀՀ դրամ	(աուդիտ անցած) հազ. ՀՀ դրամ
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	467,810	1,171,462	2,555,508	2,182,970
Սեփական կապիտալի միջին մեծություն	44,626,231	42,912,423	41,909,878	45,630,834
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	4.19	2.73	6.10	4.78
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	175,982,596	163,493,525	136,065,244	126,121,339
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	1.06	0.72	1.88	1.73
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	467,810	1,171,462	2,555,508	2,182,970
Գործառնական եկամուտ	2,919,434	10,417,697	9,076,588	9,914,133
Զուտ շահույթի մարժա (NPM), %	0.16	0.11	0.28	0.22
Գործառնական եկամուտ	2,919,434	10,417,697	9,076,588	9,914,133
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	175,982,596	163,493,525	136,065,244	126,121,339
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	0.07	0.06	0.07	0.08
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	175,982,596	163,493,525	136,065,244	126,121,339
Սեփական կապիտալի միջին մեծություն	44,626,231	42,912,423	41,909,878	45,630,834

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	3.94	3.81	3.25	2.76
Զուտ տոկոսային եկամուտ	2,189,606	8,225,452	7,633,606	7,123,692
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	143,915,015	135,160,417	122,484,289	102,930,222
Զուտ տոկոսային մարժա (NIM), %	0.06	0.06	0.06	0.07
Տոկոսային եկամուտ	3,653,484	13,491,380	12,325,560	11,634,191
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	143,915,015	135,160,417	122,484,289	102,930,222
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	0.10	0.10	0.10	0.11
Տոկոսային ծախսեր	1,463,878	5,265,928	4,691,954	4,510,499
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	123,122,883	108,367,958	96,632,443	76,778,163
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	0.05	0.05	0.05	0.06
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	467,810	1,171,462	2,555,508	2,182,970
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	679,437	679,437	679,437	679,437
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	0.69	1.72	3.76	3.21
Սպրեդ, %	0.05	0.05	0.05	0.05

ԲԱԺԻՆ 2: ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1 Ռիսկային գործոններ

2.1.1 Շուկայական ռիսկ. ներդրումները պարտատոմսերում, ինչպես և այլ արժեթղթերում, ենթակա են որոշակի ռիսկերի, որոնք կապված են ինչպես Թողարկողի ֆինանսատնտեսական վիճակի և գործունեության արդյունքների **(թողարկողի ռիսկ)**, այնպես էլ ֆինանսական շուկայում տիրող իրավիճակի հետ **(շուկայական ռիսկ)**: Շուկայական ռիսկը առաջանում է տնտեսությունում պարտատոմսերի գնի վրա ազդող գործոնների փոփոխության հետևանքով, ինչի արդյունքում ներդրողը կարող է կրել կորուստներՇուկայական ռիսկի հիմնական տարատեսակներն են **տոկոսադրույքի ռիսկը** և **արտարժութային ռիսկը**: **Տոկոսադրույքի ռիսկը** առաջանում է շուկայական տոկոսադրույքների փոփոխության հետևանքով. տոկոսադրույքների աճի դեպքում պարտատոմսերի

գինը նվազում է, ինչը կարող է հանգեցնել նրան, որ ներդրողը մինչև մարումը պարտատոմսը վաճառելու դեպքում կարող է կրել վնասներ, կամ չստանալ նախատեսված եկամուտը: **Արտարժույթի ռիսկը** առաջանում է ազգային դրամի փոխարժեքի տատանումների պատճառով և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի՝ պարտատոմսերից ստացված եկամուտների վրա, երբ ներդրողը պարտատոմսից ստացված եկամուտը գնահատում է ՀՀ դրամով (օրինակ՝ ներդրում կատարելու համար ներդրողը ՀՀ դրամը փոխարկել է արտարժույթի և պարտատոմսի մարումից հետո ստացված արտարժույթը փոխարկում է ՀՀ դրամի): Մասնավորապես, ազգային արժույթի արժևորման դեպքում, արտարժույթով արտահայտված պարտատոմսի մարումից ստացված գումարները (ներառյալ տոկոսները) փոխարկելու դեպքում ՀՀ դրամով հաշվարկված եկամուտը կարող է նախատեսվածից քիչ (բացասական) լինել:

2.1.2 **Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ.** պարտատոմսերի շուկայի զարգացվածության ցածր մակարդակի պայմաններում շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության, ինչպես նաև Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ պարտատոմսի սեփականատերը ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների բախվի: Մասնավորապես, հնարավոր է, որ պարտատոմսի սեփականատերը չկարողանա իր նախընտրած պահին վաճառել պարտատոմսը կամ ստիպված լինի այն վաճառել ցածր գնով՝ կրելով վնասներ:

2.1.3 **Ինֆլյացիոն ռիսկ**. Թողարկողի կողմից ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով կամ Եվրոյով թողարկված պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ պարտատոմսերի մարման պահին իրական եկամտաբերությունը կարող է լինել ավելի ցածր անվանական եկամտաբերությունից:

2.1.4 Վերը նշված ռիսկերից բացի Թողարկողը կարող է բախվել նաև այլ ռիսկերի հետ, որոնք Թողարկողը սույն փաստաթղթում նշելու համար էական չի համարել:

2.2 Հիմնական տեղեկատվություն

Բանկի կողմից անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք ուղղվելու են Բանկի հիմնական գործունեության ֆինանսավորմանը, այն է՝ վարկերի տրամադրմանը: Ի հավելումն վերը նշվածի՝ պարտատոմսերի թողարկմամբ Բանկը նպատակ է հետապնդում նվազեցնել վարկավորմանն ուղղվող ռեսուրսի գինը և հետևաբար նաև իր կողմից մշակվող վարկային պրոդուկտների առաջարկվող տոկոսադրույքները: Պարտատոմսերի թողարկմամբ միջոցների ներգրավման արդյունքում Բանկը կկարողանա ապահովել իր պասիվների կառավարման արդյունավետության բարձրացում և միջոցների աղբյուրների դիվերսիֆիկացում:

2.2.1 Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի վարչության կողմից:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումից առնվազն 2 (երկու) օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում:

2.3 Տեղեկատվություն արժեթղթերի վերաբերյալ

Արժեթղթերի տեսակը և դասը	անվանական, արժեկտրոնային, առանց հետգնման հնարավորության, ոչ փաստաթղթային և ոչ փոխարկելի պարտատոմսեր: Թողարկվող պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր:
Արժեթղթերի անվանական արժեքը	ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից
Արժույթը	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ
Թողարկման ընդհանուր ծավալը	10,000,000,000.00 (տասը միլիարդ) ՀՀ դրամ, 50,000,000.00 (հիսուն միլիոն) ԱՄՆ Դոլար, 20,000,000.00 (տասը միլիոն) ԵՎՐՈ
Երկիրը, որի օրենսդրության համաձայն թողարկվել են արժեթղթերը	թողարկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համաձայն և դրա շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
Արժեթղթերի ձևը	թողարկված պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի ռեեստրը վարվելու է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից՝ ըստ համապատասխան կանոնների և ընթացակարգերի:
Արժեթղթերի անվանական արժեքը և քանակը	Ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար:
Թողարկման արժույթը	պարտատոմսերը թողարկվում են ԱՄՆ դոլարով/ ԵՎՐՈ-ով/ ՀՀ դրամով համաձայն սույն ազդագրով սահմանված ծավալի:

2.3.1 Առաջարկվող արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն.

Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ.

- **առաջին**՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և

հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ ՀՀ ԿԲ-ի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում,

- **երկրորդ**՝ այն պարտատերերի պահանջները, որոնք Բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ Բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել Բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և ՀՀ ԿԲ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի,
- **երրորդ**՝ ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 16 միլիոն դրամի չափով, իսկ արտարժութային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով, ընդ որում՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 16 միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում, տվյալ անձի՝ մինչև 16 միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է երրորդ հերթով, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ չորրորդ հերթով,
- **չորրորդ**՝ բանկի այլ պարտավորությունները, ներառյալ՝ «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ»-ի կողմից հատուցման կազմակերպման հետ կապված ծախսերը, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների,
- **հինգերորդ**՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.
- **վեցերորդ**՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները
- **յոթերորդ**՝ բանկի մասնակիցների պահանջները:

Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ՀՀ օրենքի և նույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով բանկի թողարկած անվանական արժեթղթերով, տվյալ դեպքում՝ պարտատոմսերով, ֆիզիկական անձանցից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից) ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, որոնց հատուցումը երաշխավորված է նույն օրենքով սահմանված կարգով և պայմաններով, հետևյալ չափերով՝

- եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն դրամային պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը տասնվեց միլիոն ՀՀ դրամ է,

- եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը յոթ միլիոն ՀՀ դրամ է,
- եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային պարտատոմսեր, և դրամային պարտատոմսերի գումարը յոթ միլիոն ՀՀ դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային պարտատոմսերի գումարը՝ մինչև տասնվեց միլիոն ՀՀ դրամով:
- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով

Ներդրողի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները, ներառյալ՝ պարտատոմսերում ներդրումները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները:

Երաշխավորված ավանդների հատուցման դեպք (այսուհետ՝ հատուցման դեպք) է համարվում «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին անվճարունակ ճանաչելը և ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը հաստատելը կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին սնանկ ճանաչելը (այսուհետ՝ բոլոր դեպքերի համար՝ անվճարունակ բանկ):

Պարտատոմսերի վերադասակարգում կարող է տեղի ունենալ նոր արժեթղթերի թողարկման դեպքում, եթե դրանք համարվելու են վերադաս, այն էլ միայն այն մասով, որը չի վերաբերվում ավանդների երաշխավորման հիմնադրամին:

2.3.2 **Արժեթղթերից բխող իրավունքների նկարագրությունը**. պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվել են պարտատոմսերից բխող հետևյալ իրավունքները.

- **ստանալ** պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամուտները և մարման գումարը՝ ըստ սահմանված կարգի: Արժեկտրոնային եկամտի

ստացման և շրջանառության ժամկետի վերջում պարտատոմսերի մարման գումարի ստացման իրավունքի իրականացման համար ներդրողներից լրացուցիչ գործողությունների կատարում չի պահանջվում, և արժեկտրոնային եկամուտը/պարտատոմսի մարման գումարը փոխանցվում է ներդրողի բանկային հաշվին Թողարկողի կողմից,

- Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ,
- գրավադրել պարտատոմսերն օրենքով սահմանված կարգով
- իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր, բացառություն են կազմում.
  - ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները, որոնք ՀՀ ԿԲ և ֆինանսական շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներն են, թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները:

Միաժամանակ պարտատոմսի սեփականատերը պարտավոր է պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվին (կիրապարակվի յուրաքանչյուր տրանշի թողարկման վերջնական պայմաններում) , կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն, ինչպես նաև կրել օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

Պարտատոմսերից բխող իրավունքները որևէ սահամանփակոմ չկա:

2.3.3 Արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները

2.3.3.1 Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային եկամուտ, որը ենթակա է որոշման Բանկի վարչության կողմից:

2.3.3.2 Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը վճարվելու է պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից հաստատված պարբերականությամբ:

2.3.3.3 Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը ԱՄՆ դոլարով և Եվրոյով թողարկվող պարտատոմսերի դեպքում հաշվարկվելու է

համապատասխանաբար ԱՄՆ դոլարով և Եվրոյով, ներդրողներին վճարվելու է այն արժույթով որով պարտատոմսը թողարկվել է:

2.3.3.4 Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարվելու են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2.3.3.5 Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրը պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի փակման դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը): Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվելու է պարտատոմսերի հերթական արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ին, այսինքն՝ նշված ժամից հետո ռեեստրում գրանցված սեփականատերերը/անվանատերերը չեն կարող ունենալ նախորդող արժեկտրոնային ժամանակաշրջանի համար (նախորդ կիսամյակ) վճարվող արժեկտրոնի ստացման իրավունքից:

2.3.3.6 Թողարկողը արժեկտրոնների մարման (վճարման) օրը պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրի հիման վրա պատրաստում է տեղեկանք պարտատոմսերի արժեկտրոնների գումարներ ստանալու իրավունք ունեցող անձանց (սեփականատերեր կամ անվանատերեր) վերաբերյալ՝ ներառյալ արժեկտրոնների գումարի փոխանցման համար անհրաժեշտ տվյալները:

2.3.3.7 Արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարներն անվանատերերին և/կամ սեփականատերերին վճարվում են մինչև 10 ՀՀ դրամ ճշտությամբ (ընդ որում կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր թիվը): Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 0-ից 4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 5-ից 9-ի:

2.3.3.8 Թողարկողը արժեկտրոնի գումարները վճարելու է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային դրամային հաշիվներին փոխանցելու միջոցով:

2.3.3.9 Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների ճիշտ չլինելու դեպքում Բանկը հարցում է ուղարկում ՀՀ կենտրոնական դեպոզիտարիա բանկային հաշվեհամարը ճշտելու և համապատասխան փոխանցում իրականացնելու համար: Ռեեստրում ճիշտ հաշվեհամարի բացակայության դեպքում վճարումը իրականացվում է ներդրողին առձեռն՝ Բանկի գլխամասային գրասենյակում արժեկտրոնի վճարման օրվա

համապատասխան ՀՀ ԿԲ արտարժույթի համար սահմանված միջին փոխարժեքով:

2.3.3.10 Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI = FV \times \frac{C}{k} \times \frac{DCS}{DCC}$$

- **AI՝** կուտակված արժեկտրոնային եկամուտն է,
- **FV՝** մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,
- **C՝** տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
- **k՝** մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը (արժեկտրոնների կիսամյակային վճարման դեպքում k=2),
- Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual-ը, ընդ որում
  - **DCS՝** գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման / արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2 - D1M1Y1],
  - **DCC՝** արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3 - D1M1Y1],
  - **D1M1Y1՝** գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման / արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,
  - **D2M2Y2՝** գործարքի կատարման ամսաթիվն է,
  - **D3M3Y3՝** գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման / անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

2.3.4 **Պարտատոմսի մարման ժամկետը և արժեքը.** պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Բանկի վարչության կողմից: Պարտատոմսերի սեփականատերերի /անվանատերերի ռեեստրը փակվում է պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը՝ ժամը 18:00-ին, այսինքն՝ պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ մինչև ռեեստրի փակման պահը պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք: Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին / անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը, այսինքն պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի փակման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում: Թողարկողը պարտատոմսերի մարման գումարները վճարում է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների ճիշտ չլինելու դեպքում Բանկը հարցում է ուղարկում ՀՀ կենտրոնական դեպոզիտարիա բանկային հաշվեհամարը ճշտելու և համապատասխան փոխանցում իրականացնելու համար: Ռեեստրում ճիշտ հաշվեհամարի բացակայության դեպքում վճարումը իրականացվում է ներդրողին

առձեռն՝ Բանկի գլխամասային գրասենյակում: Պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են տվյալ թողարկման արժույթով: Հաշվի առնելով պարտատոմսերի անվանական արժեքի արժույթը և պարտատոմսերի մարման հետ կապված հնարավոր միջբանկային փոխանցումների անհրաժեշտությունը (եթե ներդրողի ԱՄՆ դոլարի կամ Եվրոյի հաշիվը չի գտնվում հաշվարկային բանկում), ներդրողները պետք է նկատի ունենան, որ մարման գումարների փոխանցման (միջբանկային փոխանցումներ) հետ կապված միջնորդավճարների ծախսերը պետք է կատարվեն ներդրողի հաշվին, հետևաբար նման ներդրողները մարման գումարները կստանան պահումներով՝ համապատասխան բանկում և այլ միջնորդ բանկերում (եթե այդպիսիք կլինեն) գործող սակագների: Թողարկողը վճարման/մարման հանձնարարագրի(րերի) իրականացման հետ միաժամանակ կտեղեկացնի դեպոզիտարիային՝ ներկայացնելով համապատասխան հանձնարարական(ներ) պարտատոմսերի մարման վերաբերյալ: Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

2.3.5 **Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը.** արժեկտրոնի (տոկոսների) եկամտաբերությունը ենթական է որոշման Բանկի վարչության կողմից սույն ազդագրի **2.4.3** մասում բերված բանաձևի համաձայն:

2.3.6 **Նոր թողարկման մասին համառոտ տեղեկատվություն.** պարտատոմսերի թողարկման վերաբերյալ որոշումն ընդունվել է Բանկի վարչության 20/05/2021թ. նիստում (նիստի արձանագրության N 218-Լ) և հաստատվել է Բանկի Խորհրդի 25/06/2021թ. N06 արձանագրությամբ, որի համաձայն Պարտատոմսերի տեղաբաշխման կարգն ու, ներառյալ՝ պարտատոմսերի անվանական արժեքի, արժեկտրոնների վճարման հաճախականության, լրացուցիչ տեղաբաշխող ներգրավելու, տեղաբաշխումից հետո պարտատոմսերի կարգավորող շուկայում ցուցակման և առաջարկի ծրագրից բխող հետագա կարգավորումները հաստատված է համարվում՝ համաձայն Բանկի Վարչության կողմից հավանություն արժանացած պայմանների:

2.3.7 **Արժեթղթերի ազատ շրջանառելիության սահմանափակումների նկարագրությունը.** Թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին Թողարկողի համապատասխան իրավասու մարմնի որոշմամբ պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ այլ սահմանափակումներ չեն սահմանվում, բացի տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի նկատմամբ կիրառվող ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի սահմանափակումից: Համաձայն Թողարկողի կողմից սահմանված թողարկման պայմանների մեկ ներդրողը տեղաբաշխման ժամկետի ընթացքում չի կարող 10 (տասը) հատից պակաս պարտատոմս ձեռք բերել անկախ թողարկված պարտատոմսերի արժույթից: Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված որևէ այլ սահմանափակումներ չկան՝ բացառությամբ օրենքով և ենթաօրենսդրական

ակտերով սահմանված դեպքերի: Թողարկողը դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:

2.3.8 Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը. Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտահարկով (ֆիզիկական անձանց համար):

- **Շահութահարկով հարկման կարգը և նկարագիրը**. ՀՀ-ում շահութահարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ՀՀ ԿԲի:
  - *Ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը.* ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի ՀՀ Հարկային Օրենսգրիքի 104-րդ հոդվածով սահմանված համախառն եկամտի և ՀՀ Հարկային Օրենսգրիքի 110-րդ հոդվածով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 18 (տասնութ) տոկոս դրույքաչափով
  - *Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը.* ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներին են դասվում նաև ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները: Ընդ որում, ոչ ռեզիդենտի ստացված պասիվ եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրելով) ՀՀ տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, այսինքն՝ շահաբաժիններ, տոկոսներ, ռոյալթիներ և այլ պասիվ եկամուտներ: ՀՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ: ՀՀ-ում ոչ ռեզիդենտի ստացած եկամտից վճարման աղբյուրի մոտ ՀՀ Հարկային Օրենսգրքով սահմանված կարգով հարկային գործակալները շահութահարկը պահում են 5 (հինգ) տոկոս դրույքաչափով:
- **Եկամտային հարկով հարկման կարգը և նկարագիրը.** ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում ՀՀ Հարկային Օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում ՀՀ-

ում գտնվել է 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: Կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, եթե այնտեղ է գտնվում տունը կամ բնակարանը, որտեղ բնակվում է նրա ընտանիքը և գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը:

– *Ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկումը.* ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը: Պարտատոմսերից ստացված եկամուտները՝ կապիտալի հավելաճից, ենթակա չեն հարկման, իսկ տոկոսների համար եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով: Ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտային հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը: Եկամտային հարկի պահումը (գանձումը) իրականացվում է տոկոսների յուրաքանչյուր վճարման դեպքում (Դրույթը գործում է մինչև 2020թ. փետրվարի 1-ը):

2020թվականի մարտի 1-ից.

Հարկային օրենսգրքի 149-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից, պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից ստացվող եկամուտը, բացառությամբ բանկերի կողմից թողարկված այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը փոքր է 2 տարուց, ենթակա չեն հարկման եկամտային հարկով:

Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկումը. ոչ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը: Հարկվող եկամուտը հարկատուի ՀՀ Հարկային Օրենսգրքի 141-րդ հոդվածով սահմանված համախառն եկամտի և ՀՀ Հարկային Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները և եկամտային հարկի կիրառվող դրույքաչափը նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (եկամտային հարկի գծով), ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (շահութահարկի գծով) համար հարկային գործակալ է հանդիսանում Թողարկողը:

2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1 Առաջարկի պայմանները, ժամանակացույցը և առաջարկից օգտվելու համար անհրաժեշտ գործողությունները

2.4.1.1 Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու օրը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից:

2.4.1.2 Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը պետք է կատարվի պարտատոմսերի ձեռքբերման յուրաքանչյուր հայտ-հանձնարարականի ներկայացման օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը՝ 16:45-ը:

2.4.1.3 Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված Թողարկողի կողմից բացված և թողարկամ վերջնական պայմաններով նշված բանկային հաշվեհամարներին դրամական միջոցների մուտքագրման պահից:

2.4.1.4 Հաճախորդի կողմից մուտքագրված միջոցները 2.4.1.2 կետով սահմանված ժամկետից ուշ (կամ հաջորդ օրը մինչև ժամը 16:45-ը) համապատասխան հաշիվներին մուտքագրելու դեպքում հայտը համարում է բավարարված հաջորդ օրվա սահմանված գնով՝ մուտքագրված միջոցներին համարժեք արժեթղթերի քանակով, մնացորդային մասը հաճախորդի հաշվին փոխանցելու պայմանով, կապի միջոցով հաճախորդին ծանուցելով այդ մասին:

2.4.1.5 Նվազագույն քանակով (10 հատ) պարտատոմի հայտ ներկայացնելու դեպքում 2.4.1.4 կետի ի հայտ գալու դեպքում, բանկը հաճախորդին է վերադարձնում մուտքագրված միջոցները:

2.4.1.6 Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական ներկայացնողները պետք է տեղյակ լինեն, որ իրենց հայտ-հանձնարարականները չբավարարվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում պարտատոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների՝ հատուկ հաշվի վրա մնալը՝ մինչև պարտատոմսերի թողարկման պայմանների համաձայն դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

2.4.1.7 Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

2.4.1.8 Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր:

2.4.1.9 Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ է դրամական միջոցները մուտքագրել տեղաբաշխողի կողմից «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ում բացված՝ Բանկի պարտատոմսերի տեղաբաշխման միջոցների հավաքագրման համապատասխան ՀՀ դրամով 11800083843300, ԱՄՆ դոլարով 11800082588500 ԵՎՐՈ 11800094856200 հաշվհամարներին:

2.4.1.10 Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$V = P \times Q$, որտեղ

- **V-ն** պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունն է:
- **P-ն** պարտատոմսերի ձեռք բերման հայտի Բանկ ներկայացման օրվա դրությամբ պարտատոմսի գինն է, որը հաշվարկվում է Ազդագրի 2.4.3 կետի համաձայն:
- **Q-ն** պարտատոմսերի այն քանակն է, որը ներդրողը ցանկանում է ձեռք բերել:

2.4.1.11 Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Պարտատոմսերի տեղաբաշխման հստակ ժամանակահատվածը՝ ներառյալ տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը, ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից:

Թողարկողի կողմից պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել միայն անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):

Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Սահմանված հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան 5 աշխատանքային օրը՝ Ազդագրի լրացման հրապարակումից հետո:

Արժեթղթերի հետգնումը և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցների վերադարձն իրականացվում են Բանկի կողմից՝ հետաձգման կամ չեղյալ հայտարարման որոշումն ընդունելուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:

Տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և այն դադարեցնելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակամիջոցի համար:

ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ տեքստում՝ Օրենք) համաձայն:

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով:

Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Բանկը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց Օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.1.12 Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացի նկարագրությունը.

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները պետք է լրացնեն և պատշաճ կերպով Տեղաբաշխողին ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական(ներ)ը (Հավելված 3, Հավելված 4), որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր:

Թողարկողման նպատակով Բանկում բացված համապատասխան հաշվեհամարին դրամական միջոցների ստացումից անմիջապես հետո Բանկը Դեպոզիտարիային ներկայացնում է պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարագիր Թողարկողի թողարկման հաշվից համապատասխան քանակի պարտատոմսերի փոխանցման և ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին հաշվեգրման համար:

Դեպոզիտարիայից ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ դեպո հաշվին պարտատոմսերի փոխանցման վերաբերյալ համապատասխան հաստատում ստանալուց անմիջապես հետո Բանկը թողարկման նպատակով բացված **համապատասխան** տարանցիկ հաշվեհամարից իր օգտագործման համար մատչելի է դարձնում համապատասխան հայտ-հանձնարարականում նշված դրամական միջոցները:

Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո թողարկման նպատակով բացված **համապատասխան** տարանցիկ հաշվեհամարին ստացված գումարները ենթակա են հետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել անկախ դրանց առաքման և/կամ Բանկի կողմից ստացման ժամկետից:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը կհամարվի պատշաճ կերպով առաքված Տեղաբաշխողին, եթե այն առաքվել է Բանկի հետ միայն ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով (կամ առձեռն՝ Բանկ այցելելով) և ստացվել է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում:

Տեղաբաշխողի հետ կապի միջոցներն են՝

- **Հասցե՝** ՀՀ, ք. Երևան, 0010, Վարդանանց 13, «ԱյԴի Բանկ» ՓԲԸ գանձապետարան, Գանձապետ՝ Վահան Հայրապետյան,
  կամ
- **Էլեկտրոնային փոստ՝** vahan.hayrapetyan@idbank.am,
  կամ
- **Financial Market Department IDBank/CBANet@CBANet,**
  կամ
- այցելելով որևէ մասնաճյուղ և հաճախորդների սպասարկման բաժնի աշխատակցի միջոցով լրացնելով համապատասխան հայտ-հանձնարարականը:
- Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի թողարկման վերջնական պայմաններով հաստատված լրացուցիչ կապի միջոցով:

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

2.4.1.13 Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը. հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը: Բացի վերոնշյալ դեպքերից, ներդրողները պարտատոմսերի հայտ-հանձնարարականները պատշաճ կերպով առաքելուց, Տեղաբաշխողի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող ետ կանչել:

2.4.1.14 Ձեռքբերման հայտի նվազագույն և առավելագույն գումարները. սույն թողարկման ընթացքում գոյություն ունեն պարտատոմսերի ձեռքբերման քանակական սահմանափակումներ: Տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողին կարող է վաճառվել նվազագույնը 10 (տասը) հատ պարտատոմս: Պարտատոմսերի վաճառքի առավելագույն սահմանաչափ չի սահմանվում՝ բացառությամբ պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալի:

2.4.1.15 Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները. Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձիք վճարումը կատարում են թողարկման նպատակով «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ում բացված **համապատասխան** տարանցիկ հաշվեհամարին: Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

2.4.1.16 Առաջարկի արդյունքների հրապարակման ձևի և ժամկետների ամբողջական նկարագրությունը. տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն բանկի ինտերնետային կայքում թողարկման ավարտից 10 օր հետո:

2.4.1.17 Նախապատվության իրավունքից օգտվելու գործընթացի նկարագրությունը. պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն առաջնահերթություն ունի այն ներդրողը ում հայտ-հանձնարարականի համաձայն վճարումը թողարկման նպատակով «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ում բացված **համապատասխան** տարանցիկ հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել: Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

2.4.2 Պարտատոմսերի տեղաբաշխման պլանը

2.4.2.1 Ներդրողների թիրախային խմբերը. պարտատոմսերի առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական ու իրավաբանական անձանց: Բանկի անվանական պարտատոմսերի առաջարկն իրականացվելու է ազատ վաճառքի սկզբունքով՝ Բանկի մասնաճյուղերի միջոցով:

2.4.2.2 Հայտի բավարարման մասին ծանուցման եղանակները. ներդրողները Տեղաբաշխողից տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին մինչև հայտի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Տեղաբաշխողին է ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը/երը: Բանկի որևէ մասնաճյուղ ներկայացած և մասնաճյուղերի աշխատակիցների միջոցով համապատասխան հայտ-հանձնարարականը լրացրած ներդրողը իր հայտ-հանձնարարականի բավարարման մասին տեղեկանալու համար պարտավոր է ներկայանալ Բանկ և իր հայտ-հանձնարարականը լրացրած աշխատակցի միջոցով տեղեկանալ իր հայտ-հանձնարարականի բավարարման մասին:

2.4.3 Առաջարկի գինը. պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$DP = \frac{C}{f}\sum_{t=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

որտեղ՝ $\tau = \frac{DSN}{DCC}$

- **DP՝** պարտատոմսի գինն է,

- **DSN՝** գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,
- **DCC՝** գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,
- **f՝** արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (2՝ կիսամյակային վճարումների համար),
- **N՝** հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,
- **C՝** տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,
- **Y՝** մինչև մարում եկամտաբերություն:

Թողարկման վերջնական պայմանները հայտարարելուց հետո մինչև տեղաբաշխման սկիզբը տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի, պարտատոմսերի վաճառքի գինը կհրապարակվի Բանկի ինտերնետային կայքում: Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը: Ներդրողները պարտավոր են նաև դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական դեպո հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

2.4.4 Տեղաբաշխումը

2.4.4.1 Սույն Ծրագրային ազդագրի շրջանակում թողարկվող պարատոմսերի տեղաբաշխող է համարվում «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն:

2.4.4.2 Թողարկողը իրավունք ունի պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի թողարկման համար Բանկի գործադիր մարմնի (Վարչության) որոշմամբ ներգրավելու լրացուցիչ տեղաբաշխող՝ կնքելով երաշավորված կամ չերաշխավորված տեղաբաշխման պայմանագրեր:

2.4.4.3 **Վճարումները ընդունող բանկերի ցանկը.** պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ում (ՀՀ, Երևան 0010, Վարդանանց 13) բացված **համապատասխան** տարանցիկ հաշվեհամարին: Եթե ներդրողը պարտատոմսերի ձեռք բերումը իրականացնելու է իր բրոքերային ընկերության միջոցով, ապա հարկավոր է վճարման գործընթացի մանրամասները հստակեցնել ներդրողի բրոքերային ընկերության հետ: Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես Գլխավոր պահառու համաձայն ՀՀ օրենսդրության և կազմակերպության գործունեությունը

կարգավորող կանոնների: Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (Դեպոզիտարիայի ենթապահառու)՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով: Դեպոզիտարիայի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ (հեռ.՝ +374 60 615555): Պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատոր հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն: Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական դեպո հաշիվ:

2.5 Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

2.5.1 Առևտրին թույլտվությունը. սույն ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո Բանկը դիմելու է «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ-ին տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու համար: Պարտատոմսերի առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ արտարժույթով արտահայտված պարտատոմսերի դեպքում սույն Ծրագրային ազդագով հաստատված 2.4.1.11 կետով սահանված կարգով:

2.5.2 Առևտրի շուկաները. այս պահին Թողարկողի կողմից սույն ազդագրով գրանցվող պարտատոմսերը թույլատրված չեն հրապարակային առևտրի ոչ մի շուկայում:

2.5.3 Շուկա ստեղծողները. Բանկը պարտատոմսերի տեղաբաշխումն ավարտելուց հետո կնքելու է համապատասխան պայմանագիր երկրորդային շուկայում վաճառքի ակտիվացման գործառույթներ իրականացնողի հետ (շուկա ստեղծող)՝ Բանկի պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով: Շուկա ստեղծողը «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ-ում իրականացնում է պարտատոմսերի առքի և վաճառքի գնանշումներ:

2.6 Լրացուցիչ տեղեկատվություն

2.6.1 Ներգրավված խորհրդատուներ. սույն ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից:

2.6.2 Աուդիտորական եզրակացություն. բացի սույն ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվությունների, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են ազդագրի Հավելված 6-ում:

2.6.3 **Երրորդ անձանցից ստացված տեղեկատվություն**. որպես սույն բաժնում ներկայացված տեղեկատվության ստացման աղբյուր երրորդ անձինք ներգրավված չեն:

2.6.4 **Շնորհված վարկանիշեր**. թողարկվող պարտատոմսերին վարկանիշ չի շնորհվել:

ԲԱԺԻՆ 3: ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1 Անկախ աուդիտորները

Բանկի 2017,2018 և 2019 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության կողմից: «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ն հանդիսանում է KPMG International Cooperative կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է՝ ՀՀ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փող., 26/1 շենք, «Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ, հեռ.՝ +37410 566762, կայքի հասցեն է՝ www.kpmg.am, էլ. փոստ՝ general@kpmg.co.am: «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության տնօրեն է հանդիսանում Տիգրան Գասպարյանը:

3.1.1 Նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Բանկի աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

3.2 Ռիսկային գործոններ

3.2.1 Բանկում գործում է ռիսկերի կառավարման արդիական համակարգ, որի նպատակն է բացահայտել և կառավարել Բանկում առկա և հնարավոր ռիսկերը: Բանկում ռիսկերի կառավարման նպատակով դիտարկվում են բանկային ռիսկերի հետևյալ հիմնական տեսակները.

- **Վարկային ռիսկ;**
- **Իրացվելիության ռիսկ;**
- **Տոկոսադրույքի;**
- **Արտարժութային;**
- **Գործառնական ռիսկ;**
- **Երկրի ռիսկ:**

3.2.2 **Վարկային ռիսկի կառավարում**: Բանկում վարկային ռիսկի կառավարումն ունի երկու ուղղվածություն՝

• Վարկերի տրամադրման գործընթացի ռիսկայնության գնահատում, զսպում և սահմանաչափերի սահմանում,

• Վարկային պորտֆելի ռիսկայնության գնահատում, բարձր ռիսկային հատվածների բացահայտում, սահմանաչափերի սահմանում (ըստ հաճախորդների, տնտեսության հատվածների, տարածաշրջանների, խոշոր պարտապանների և այլն):

Վարկավորման գործընթացում առաջացող ռիսկերի զսպման նպատակով Բանկը վարկավորման գործընթացի հիմքում դնում է հետևյալ սկզբունքները.

• վարկի նպատակայնության և մարման աղբյուրների առկայությունը:

• գրավի առարկան և գրավի առարկայի զգայունությունը տնտեսական և շուկայական զարգացումների նկատմամբ, ինչպես նաև վարկ/գրավ հարաբերակցության սահմանաչափերին համապատասխանությունը:

• պոտենցիալ վարկառուի նախկին վարկային պատմությունը:

• պոտենցիալ վարկառուի գործունեության տնտեսական ոլորտի առկա իրավիճակը, այդ ոլորտում դիմորդի գործունեություն ծավալելու ուղղությամբ փորձառությունը, ոլորտում նրա դիրքը, ոլորտի մրցակցության աստիճանը և մրցակցությունը:

• վարկի համար առաջարկվող ժամկետները և գործընկերների պայմանները, ներառյալ պայմանագրերը, որոնք ուղղված են սահմանափակելու վարկառուի ռիսկի մակարդակի ապագա փոփոխությունները:

• պոտենցիալ վարկառուի գործող բիզնեսի և/կամ դրական վարկային պատմության առկայությունը:

• հիփոթեքային և սպառողական վարկատեսակների պոտենցիալ վարկառուի զուտ համախառն եկամտի կայուն մակարդակի և/կամ դրական վարկային պատմության առկայությունը:

• պոտենցիալ վարկառուի ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների սահմանաչափերի սահմանումը:

Վարկային ռիսկի կառավարումն իրականացվում է նաև վարկառին ռիսկի ախորժակի սահմանմամբ և Բանկի ընդհանուր պորտֆելի ռիսկայնության գնահատմամբ:

Ներկայումս բանկում գործում են վարկային ռիսկի կառավարման արդիական մոտեցումներ և հաշվողական մոդելներ, մանրածախ վարկավորման գործընթացի սքորինգային համակարգեր, հաճախորդների ռիսկայնության մակարդակների վրա հիմնված վարկերի գնագոյացման համակարգ (Advanced Risk-Based Pricing (RBP) model), վարկային պորտֆելի վերլուծության նոր մեխանիզմներ (վարկատեսակների գծով պորտֆելների սերունդային վերլուծություն և NPL-ի կանխատեսում, ըստ մասնաճյուղերի և ըստ վարկային մասնագետների վարկային պորտֆելների շահութաբերության կանխատեսում, պորտֆելի ռիսկային սեգմենտների բացահայտում և պորտֆելի վեկտորների փոփոխում և այլն):

Ստորև՝ վարկային ռիսկ պարունակող ակտիվների վերլուծությունը ըստ տնտեսության ճյուղերի 31.03.2021թ դրությամբ:

Վարկեր 31.03.2021թ. դրությամբ, այդ թվում	Հաճախորդներին տրված վարկերի մնացորդ (հազ. ՀՀ դրամ)
Առևտուր և ֆինանսներ	27,395,422
Արդյունաբերություն	3,406,146
Հանգստի կազմակերպման ոլորտ	701,160
Էներգետիկայի ոլորտ	0
Շինարարություն	1,311,544

Տրանսպորտ և կապ	174,314
Գյուղատնտեսություն, անտառապահություն և փայտամշակում	26,640
Սպասարկման ոլորտ	360,523
Այլ	22,075,692
Անհատներին տրված վարկեր	56,311,419
Ընդամենը	111,762,860
Արժեզրկման գծով պահուստ	-7,690,592

Ստորև՝ վարկային ռիսկ պարունակող ակտիվների որակի վերլուծությունը 31.03.2021թ դրությամբ:

Վարկեր 31.03.2021թ. դրությամբ, այդ թվում	Հաճախորդներին տրված վարկերի մնացորդ (հազ. ՀՀ դրամ)	Վարկերի գծով արժեզրկման պահուստ (հազ. ՀՀ դրամ)
Անհատներին տրված վարկեր, այդ թվում՝	**56,311,419**	**1,041,051**
Զամբյուղ 1	53,336,166	484,421
Զամբյուղ 2	766,385	105,221
Զամբյուղ 3	2,208,868	451,409
Կորպորատիվ վարկեր, այդ թվում՝	**55,451,439**	**6,649,541**
Զամբյուղ 1	46,157,617	265,200
Զամբյուղ 2	108,992	3,961
Զամբյուղ 3	9,184,830	6,380,380
Ընդամենը	**111,762,858**	**7,690,592**

- «**Զամբյուղ 1**»-ում ներառվում են տրամադրման պահից ռիսկի ոչ նշանակալից աճ ունեցող աշխատող ֆինանսական գործիքները,
- «**Զամբյուղ 2**»- ում ներառվում են տրամադրման պահից ռիսկի նշանակալից աճ ունեցող աշխատող ֆինանսական գործիքները,
- «**Զամբյուղ 3**» ում ներառվում են Դեֆոլտ ճանաչված և/կամ արժեզրկված ֆինանսական գործիքները

3.2.3 Ներքոնշյալ աղյուսակում ներկայացվում են Բանկային գործունեության վերահսկման նպատակով ՀՀ ԿԲ կողմից սահմանված հիմնական տնտեսական նորմատիվների, մասնավորապես, պոտենցիալ ներդրողների կողմից Բանկի ֆինանսական վիճակի վերաբերյալ գնահատական տալու համար անհրաժեշտ տեղեկատվություն՝

	ՀՀ ԿԲ թույլատրելի արժեք	Փաստացի մեծություն 31/12/2018	Փաստացի մեծություն 31/12/2019	Փաստացի մեծություն 31/12/2020	Փաստացի մեծություն 31/03/2021
Բանկի ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը	Նվազագույնը 12%	38.34%	28.61%	24.60%	23.35%
Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը	Նվազագույնը 15%	31.10%	26.93%	22.73%	22.17%
Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	Նվազագույնը 60%	268.16%	164.52%	109.62%	100.72%

3.2.4 **Իրացվելիության ռիսկի կառավարում**: Իրացվելիության ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը օրական կտրվածքով հաշվարկում է իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվները, որոնց հիման վրա կայացվում են համապատասխան որոշումներ: Բանկը իրացվելիության ռիսկի կառավարումն իրականացնում է հետևյալ հիմնական մոդելների միջոցով՝

- Իրացվելիության ճեղքվածքի (GAP) մոդել,
- Իրացվելիության նորմատիվների, այդ թվում՝ LCR, NSFR վերլուծություն,
- Սթրես թեստավորում:

LCR-ը՝ իրացվելիության ծածկույթի գործակիցը հաշվարկվում է որպես բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև

հարաբերակցություն: Զուտ դրամական արտահոսքը առաջիկա 30 օրվա ընթացքում բոլոր ակնկալվող դրամական արտահոսքերի և ներհոսքերի հանրագումարների տարբերությունն է:

NSFR-ը՝ զուտ կայուն ֆինանսավորման գործակիցը, հաշվարկվում է որպես բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև սահմանային հարաբերակցություն:

LCR և NSFR գործակիցների արժեքները 31.03.2021թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար 131% և 114% սահմանված նվազագույն 100% սահմանաչափի պարագայում:

Համաձայն իրականացված ստրեսս թեստերի՝ 31.03.2021թ դրությամբ LCR մեթոդաբանությամբ հաշվարկված դրամական միջոցների արտահոսքի պարագայում (հաշվի չառնելով ներհոսքը) Բանկի իրացվելիության Ն21 նորմատիվը կազմում է 22.29%:

3.2.5 **Տոկոսադրույքի ռիսկի կառավարում**: Տոկոսադրույքի ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը, հաշվի առնելով շուկայում առկա տոկոսադրույքները, կատարում է տոկոսադրույքների գնահատում և համապատասխանեցում շուկայում գործող ցուցանիշներին, մշտապես վերահսկում է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների միջև առկա ժամկետայնության ճեղքվածքը, իսկ շուկայական տոկոսադրույքների փոփոխության դեպքում արագ արձագանքելով՝ նվազագույնի է հասցվում փոփոխության արդյունքում Բանկի համար հնարավոր կորուստների ռիսկը: Համաձայն իրականացված սթրես թեստերի՝ 31.03.21 դրությամբ տոկոսադրույքների 2-% ով անբարենպաստ աճի դեպքում Բանկի կորուստը չի գերազանցի Բանկի ընդհանուր կապիտալի 0.1%-ը:

3.2.6 **Արտարժութային ռիսկի կառավարում**: Արտարժութային դիրքի կառավարման տեսանկյունից Բանկը ձգտում է զերծ մնալ արտարժութային ռիսկերից և հիմնականում վարում է արտարժութային փակ դիրքի քաղաքականություն: Համաձայն իրականացված սթրես թեստերի՝ 31.03.21 դրությամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի 20% տատանման դեպքում Բանկի կորուստը չի գերազանցի ընդհանուր կապիտալի 1.6%. նույնիսկ բոլոր դրամային պարտավորությունների 10%-ի արտարժութային փոխարկման արդյունքում դիրքի կարճացման պարագայում:

3.2.7 Բանկում **գործառնական ռիսկերը** կարգավորվում են ռիսկերի կառավարման ինտեգրված համակարգերի միջոցով: Վերջինս նշանակում է, որ Բանկում գործառնական ռիսկը կառավարվում/կարգավորվում է սահմանված այնպիսի ընթացակարգերի միջոցով, որոնք սահմանում են Գործառնական ռիսկի հայտնաբերման, չափման/գնահատման, Գործառնական ռիսկի գծով համալիր հաշվետվությունների ներկայացման և մոնիթորինգի փուլերը, ինչպես նաև գործառնական ռիսկերի կառավարման մոտեցումներն ու հիմնական մեթոդները:

Գործառնական ռիսկերի հայտնաբերման և դասակարգման համար Բանկն իրականացնում է ռիսկերի ինքնագնահատում, տեղի ունեցած գործառնական

պատահարների վերաբերյալ տվյալների բազայի հավաքագրում և խաբեության ռիսկի հայտնաբերում («Կատարված, փոփոխված և հեռացված գործարքների», FPD/SPD/TPD տվյալների մասին հաշվետվությունների և Բանկում իրականացված գործրաքների մշտադիտարկման միջոցով):

Մինչ նոր պրոդուկտների, նոր և վերանայվող ներքին իրավական ակտերի, բանկային գործառնությունների, գործողությունների և համակարգերի ներդրումը, Բանկը ԳՌ տեսանկյունից պոտենցիալ ռիսկերի բացահայտման նպատակով ապահովում է վերջիններիս ուսումնասիրությունը և սահմանում է գործընթացների քայլային հաջորդականությունների ռիսկի հակվածության աստիճանները:

Բանկը կանոնավոր կերպով գնահատում է Գործառնական ռիսկերի ազդեցության չափերը, որոնք կարող են առաջանալ տարբեր ռիսկային իրադրություններում, ինչպես նաև վերջիններիս առաջացման հավանականությունները:

Բանկի Խորհրդի կողմից սահմանված ԳՌ ռիսկի ախորժակից բարձր ռիսկը Բանկը փոխանցում է Բանկի և ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված ապահովագրական կազմակերպությանը («Բանկային ռիսկերի համալիր ապահովագրության պայմանագրով» (BBB)):

3.2.8 **Երկրի Ռիսկի** կառավարման նպատակով այլ երկրներում գրանցված և/կամ փաստացի գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ հանրագումարային 4 մլրդ ՀՀ դրամին համարժեք արտարժույթը գերազանցող ակտիվային գործարքների կնքման, թղթակցային հաշիվների բացման և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների ստանձնման դեպքերում, տվյալ երկրի հետ առաջին անգամ գործարքի կնքման պահին, ինչպես նաև հետագայում Բանկը գնահատում է տվյալ կազմակերպության երկրի ռիսկը:

Բանկի կողմից երկրի ռիսկի գնահատման համար հիմք է ընդունվում միջազգային ռեյտինգային ընկերություններից մեկի (Moody's, Standard&Poor's, Fitch) կողմից տվյալ երկրին շնորհված վարկանիշը:

Միջազգային ռեյտինգային ընկերությունների կողմից տվյալ երկրին շնորհված վարկանիշի հիման վրա Բանկը սահմանում է տվյալ երկրում թղթակցային հաշիվների մնացորդների հանրագումարի և տեղաբաշխված ակտիվների (ներառյալ հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների) հանրագումարի առավելագույն ուղենիշային սահմանաչափեր:

3.2.9 **Երկրում/աշխարհում արտակարգ դրություն հայտարարելու ռիսկ (օրինակ՝ Պանդեմիայի ռիսկ),** որն իր վրա կարող է կրել նաև թողարկողը: Նման իրավիճակում կարող է փոփոխության ենթարկվել երկրի մակրոտնտեսական վիճակը՝ այդպիսով բացասական ազդեցություն թողնելով նաև թողարկողի հիմնական ցուցանիշների վրա: Թողարկողն այդպիսով կարող է կրել վնասներ, որն իր հերթին կարող է բացասաբար ազդել շահութաբերության վրա:

3.2.10 Ներդրողը պետք է գիտակցի, որ նկարագրված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որոնք Բանկը կարող է երբևէ կրել: Բանկը բացահայտել է միայն այն ռիսկերը,

որոնք համարել է էական: Ենթադրաբար կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք Բանկն այժմ չի համարում էական, կամ որոնք ներկայումս հայտնի չեն նրան, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է հանգեցնել ներդրողի կողմից ներդրված գումարի մասնակի կամ ամբողջական կորստին:

3.3 Տեղեկատվություն Բանկի մասին

3.3.1 Բանկի պատմությունը և զարգացումը

3.3.1.1 Թողարկողի անվանումը, կազմակերպաիրավական ձևը, գրանցված ապրանքանիշը

Բանկի լրիվ անվանումն է՝

հայերեն՝ «Այդի Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество “АйДи Банк”
անգլերեն՝ “ID Bank” Closed Joint Stock Company:

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Այդի Բանկ» ՓԲԸ
ռուսերեն՝ ЗАО “АйДи Банк”
անգլերեն՝ “ID Bank” CJSC:

Բանկի սպասարկման նշանն է՝

3.3.1.2 Թողարկողի պետական գրանցման վայրը և համարը. Բանկի պետական գրանցման վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փ. 13, գրանցման համարը՝ 9:

3.3.1.3 Թողարկողի ստեղծման տվյալներ. Բանկը հիմնադրվել է 1990թ. օգոստոսի 1-ին թեթև արդյունաբերության բնագավառի ձեռնարկությունների կողմից՝ որպես փայատիրական կոմերցիոն բանկ: 1996թ. «Անելիք» փայատիրական առևտրային բանկը գրանցվել է (ՀՀ ԿԲ արտոնագիր No 9) և սկսել է գործել որպես «Անելիք Բանկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն: 2007թ. «Անելիք Բանկ» ՍՊԸ վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության: 2018թ. հունիսին «Անելիք Բանկ» ՓԲԸ վերանվանվել է «Այդի Բանկ» փակ բաժնետիրական ընկերության: 2013 թվականից մինչ 2016 թվականը Բանկի միակ բաժնետերն է եղել լիբանանյան «Կրեդիտ Բանկ» Ս.Ա.Լ.-ը: 2016 թվականի հոկտեմբերին Բանկի բաժնետերերի կառուցվածքում տեղի է ունեցել փոփոխություններ, և ի լրումն «Կրոեդիտբանկ» Ս.Ա.Լ.-ի, ներգրավվել է նոր բաժնետեր՝ «Ֆիսթոքո» Էլ Թի Դի ընկերությունը՝ 59.68 տոկոս բաժնեմասնակցությամբ:

3.3.1.4 Թողարկողի գտնվելու վայրը, կապի միջոցները. Բանկի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փողոց 13: Կապի միջոցներն են՝ հեռախոս՝ +37410 593333, էլ. փոստ՝ info@idbank.am, ինտերնետային կայք՝ www.idbank.am:

31.03.2021թ. դրությամբ Բանկն ունեցել է 14 մասնաճյուղ, որոնցից 4-ը տեղակայված են ՀՀ մարզերում, իսկ 10-ը՝ Երևան քաղաքում: Բանկի բոլոր մասնաճյուղերն իրականացնում են լիարժեք ֆինանսական գործառնություններ առանց որևէ սահմանափակման: Ստորև աղյուսակում ներկայացված է Բանկի մասնաճյուղերը և համապատասան հասցեները.

N	Մասնաճյուղի անվանում	Հասցե
1	«Վարդանանց»	ք. Երևան, Վարդանանց 13.3
2	«Բաղրամյան»	ք. Երևան, Բաղրամյան 75
3	«Կենտրոն»	ք. Երևան, Հյուսիսային պողոտա 6 շ 10 տարածք
4	«Արաբկիր»	ք. Երևան, Կոմիտաս 56/162
5	«Նոր Նորք»	ք. Երևան, Գայի 17/1
6	«Էրեբունի»	ք. Երևան, Էրեբունի 7/60
7	Դավթաշենի	ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 11/91
8	«Մալաթիա»	ք. Երևան, Րաֆֆու 39/61
9	«Շենգավիթ» մասնաճյուղ	ք. Երևան, Բագրատունյաց 13
10	Աբովյանի	ք. Աբովյան, Տարտուի փ. 1/1
11	Գյումրիի	ք. Գյումրի, Անկախության հրապարակ 6
12	Էջմիածնի	ք. Էջմիածին, Մովսես Խորենացի 16
13	Վանաձորի	ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 73

Բանկը ՀՀ տարածքում և տարածքից դուրս գրանցված ներկայացուցչություններ չունի:

3.3.1.5 Նշանակալի դեպքեր. 31.03.2021թ. դրությամբ Բանկում տեղի չեն ունեցել այնպիսի իրադարձություններ, որոնք ողջամիտ ներդրողը կկարևորեր Թողարկողի իրացվելիության մասին գնահատական կազմելու տեսանկյունից:

3.4 Բիզնեսի նկարագիրը

3.4.1 Հիմնական գործունեությունը

3.4.1.1 Հիմնական գործունեության նկարագիրը

Բանկի համար առավել կարևոր և նպատակային գործունեությունը ֆինանսական միջոցների ներգրավումն է և տեղաբաշխումը: Սակայն Բանկն իրականացնում է նաև այնպիսի օժանդակ գործառնություններ, ինչպիսիք են վճարահաշվարկային համակարգերով ծառայությունների մատուցումը, հաշվարկադրամարկղային գործառնությունները:

Միջոցների ներգրավում. Բանկն իր միջոցների ներգրավման քաղաքականությունն իրականացնում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից ժամկետային և ցպահանջ ավանդների ներգրավման, պարտատոմսերի թողարկման, միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկային ռեսուրսների ներգրավման, ինչպես նաև վերաֆինանսավորվող վարկային ծրագրերի իրականացման միջոցով:

Միջոցների տեղաբաշխում. միջոցների տեղաբաշխման հիմնական ուղղություններն են վարկային գործիքները և արժեթղթերում կատարվող ներդրումները: Վարկային գործիքներ մշակելիս Բանկն առաջնորդվում է շուկայի խորը ուսումնասիրմամբ և հաճախորդների պահանջմունքների բացահայտմամբ: Բանկի գործունեության վերջին շրջանում առավել մեծ պահանջարկ են ունեցել ֆիզիկական անձանց տրամադրվող քարտային վարկերը և ՓՄՁ ոլորտի զարգացման ուղղվող ծրագրային և ունիվերսալ բիզնես վարկերը:

Վճարային քարտերով գործառնություններ. Բանկի կողմից թողարկվում են ArCA, Visa և MasterCard տեսակի վճարային քարտեր, որոնց նկատմամբ Բանկը հետևողականորեն սահմանում է բարձր մրցունակությամբ սպասարկման պայմաններ, ինչպես նաև շարունակաբար բարելավվող համակարգերի միջոցով մեծացնում է քարտերի կիրառության անվտանգությունը:

Դրամական փոխանցումների համակարգեր. դրամական փոխանցումները Բանկի ավանդական գործառնություններից է: Բանկը վերջին տարիներին ինտեգրել է մեծ քանակությամբ նոր փոխանցման համակարգեր, որոնք թույլ են տալիս իրականացնել առավել մեծ քանակությամբ հաճախորդների սպասարկում, ինչպես նաև ապահովել ծառայությունների զանազանություն: Բանկն անդամակցում է նաև միջազգային փոխանցումների SWIFT համակարգին, որի միջոցով իրականացվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց փոխանցումներ՝ բանկային հաշվի առկայության պարագայում:

Հաշվարկադրամարկղային սպասարկում. շնորհիվ ներդրված ծրագրային ապահովման համակարգերի՝ Բանկն ընդունում է հանրային ծառայությունների դիմաց կատարվող վճարներ, գույքահարկի գծով կատարվող վճարումներ, ինչպես նաև իրականացնում արտարժույթի փոխանակման գործառնություններ:

Պարտատոմսերի թողարկում. 2016 թվականի տարեվերջից Բանկը իրականացնում է պարտատոմսերի թողարկում: Վերջինս Բանկի գործունեության էական ուղղություններից է, և այս ճանապարհով Բանկը դիվերսիֆիկացնում է իր պարտավորությունների կառուցվածքը՝ հաճախորդներին առաջարկելով ներդրումների այլընտրանքային տարբերակներ՝ ի լրումն ավանդային պրոդուկտների:

3.4.1.2 Նոր ծառայությունների մատուցում

Բանկը մշտապես ուսումնասիրում է հայկական և միջազգային բանկային համակարգը՝ ինչպես նոր բանկային ծառայությունների մշակման, այնպես էլ գործող ծառայությունների պայմանները առավել մրցունակ դարձնելու նպատակով: Բանկում նոր բանկային ծառայությունների ներդնումը և վաճառքը կանոնակարգվում է գործող ներքին իրավական ակտերով, ինչը թույլ է տալիս ապահովել բանկային ծառայությունների մշակման գործարար գործընթացների անընդհատությունը: Թվային ուղիների զարգացմանը զուգընթաց՝ 2018 թվականից Բանկը ընդլայնում է նաև ինքնասպասարկման 24/7 շուրջօրյա սպասարկման համակարգերի ցանցը՝ առավել հարմարավետ և հասանելի դարձնելով բանկային ծառայություններից օգտվելը:

3.4.2 Հիմնական շուկաները

3.4.2.1 Թողարկողի ծառայությունների մատուցման հիմնական շուկաների նկարագիրը

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն ունիվերսալ բանկ է, որն իր գործունեությունն իրականացնում է կորպորատիվ և մանրածախ բանկային ծառայությունների շուկայում: Ներկայումս Բանկը առաջարկում է բազմազան ավանդային և վարկային պրոդուկտներ, դրամական փոխանցումների համակարգերի զանազանություն, վճարային քարտերով գործառնությունների հարմարավետություն:

3.4.2.2 Թողարկողի մրցակցային դիրքի նկարագրությունը

Բանկի մրցակցային դիրքի հիմնական առավելություններն են.

- Ռեբրենդինգից հետո իրականացվող ակտիվ արշավները, ինչպես նաև շարունակական բնույթ կրող միջոցառումները հասարակության մոտ ձևավորում են նորարար և ժամանակակից Բանկի համբավ:
- Բանկի բաժնետերերը, ընտրելով Բանկի զարգացման թվայնացման ճանապարհը, իրականացնում են շարունակական ներդրումներ ինչպես հեռահար ուղիներով մատուցվող ծառաությունների ցանկի ընդլայման և որակի բարելավման, այնպես էլ Բանկի ներքին գործընթացների ավտոմատացման ուղղությամբ,
- Բանկի գործարար գործընթացների շարունակական բարելավման ուղղությամբ կատարվող միջոցառումները:
- կորպորատիվ կառավարման համակարգի շարունակական բարելավումը, որի միջոցով հստակ տարանջատված են կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները, ինչպես նաև հաղորդակցման ուղիները,
- Բանկի ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգը, որը թույլ է տալիս ժամանակին բացահայտել առաջացող ռիսկերը, դրանց հնարավոր ազդեցության մակարդակները և կիրառել համապատասխան կանխարգելիչ միջոցներ,
- Բանկի մասնաճյուղերի աշխարհագրական դիրքը և հասանելիությունը թիրախային շուկաներում,
- Բանկի աշխատակիցների պրոֆեսիոնալիզմի բավարար մակարդակը, ինչպես նաև մարդկային ռեսուրսների զարգացմանն ուղղված շարունակական վերապատրաստման ծրագրերը:
- BSI ընկերության կողմից Բանկին շնորհվել է ISO 9001:2015 որակի կառավարման հավաստագիր, որը վերահաստատվել է 2018 թվականին, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության ISO/IEC 27001:2013 հավաստագիր:
- Moody's հեղինակավոր միջազգային վարկանիշային գործակալությունը բարձրացրել է IDBank-ի «Երկարաժամկետ տեղական և արտարժույթով ավանդների» վարկանիշը՝ B3-ից B2. հեռանկարը՝ կայուն:
- Գործակալությունը փոփոխել է նաև երկարաժամկետ գործընկերային ռիսկերի գնահատման (CRR) վարկանիշը՝ B2-ից բարձրացնելով B1-ի: Բանկի

վարկարժանության հիմնական գնահատականը (BCA)՝ B2 է, իսկ երկարաժամկետ գործընկերային ռիսկերի գնահատականը՝ B1(cr):

3.5 Թողարկողի կառուցվածքը

2013 թվականից մինչ 2016 թվականը սեպտեմբեր ամիսը Բանկի միակ բաժնետերն է եղել լիբանանյան «Կրեդիտբանկ» ՍԱԼ.-ը, որն իր խմբում ներառել է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն Հայաստանում, «Անելիք Ռու» ՍՊԸ-ն Ռուսաստանում և «Կրեդեքս» ապահովագրական ընկերությունը Լիբանանում: 2016 թվականի հոկտեմբեր ամսին Բանկի բաժնետերերի կառուցվածում տեղի է ունեցել փոփոխություն, և «Ֆիսթոքո» Էլ Թի Դի-ն դարձել է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ(նախկինում «Անելիք Բանկ» ՓԲԸ) 59.68 տոկոս բաժնետեր: Բանկն իր կառուցվածում չունի որևէ դուստր ընկերություն:

Բանկի կազմակերպական կառուցվածքը ներկայացված է Հավելված 1-ում:

3.6 Զարգացման վերջին միտումները

Բանկը, հավատարիմ մնալով իր առաջատար թվային բանկ դառնալու տեսլականին , սահմանել է գործունեության հետևյալ նպատակները.

- Հաճախորդների լավագույն փորձառության ապահովումը;
- Վճարումների համար լավագույն բանկ դառնալը;
- Դեպի նոր շուկաներ ընդլայնումը:

Առաջնորդվելով սահմանված նպատակներով, Բանկը.

- ✓ մշտապես զարգացնում է թվային հարթակի գործիքակազմը՝ հաճախորդներին առաջարկելով օնլայն ռեժիմում անհրաժեշտ բոլոր ծառայությունները;
- ✓ շարունակում է ընդլայնել ակտիվ հաճախորդների բազան ՝ միաժամանակ ապահովելով նրանց գոհունակության բարձր մակարդակ և թվային հարթակի միջոցով բանկային ծառայություններից օգտվելու ակտիվության բարձրացում

3.4 Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը

3.4.1 Շահույթի կանխատեսման հիմնական սկզբունքները

Բանկի շահույթի ծրագրավորման համար հիմք են ծառայում Բանկի բաժնետերերի սպասումները և դրանց շրջանակում Բանկի ընդլայնման և/կամ կորուստների կրճատման հնարավորությունները՝ պայմանավորված մակրոտնտեսական միջավայրի փոփոխություններով, ինչպես նաև Բանկի՝ մրցունակության ապահովման ներուժով: Այս առումով նախորդող երկու տարիներին Բանկը կարողացել է ապահովել շահույթի ծրագրավորված մակարդակը:

Առաջիկա տարիների գործունեության և շահույթի կանխատեսումներում Բանկը հիմնվել է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

- կանխարգելել այն վտանգները, որոնք հանգեցրել են նախորդ տարիներին Բանկի ցածր շահութաբերությանը,
- Բանկի գործունեությունն ուղղորդել կայուն շահութաբերության ապահովման սկզբունքով՝ նպատակ ունենալով մեծացնել բիզնեսի շուկայական գինը,

- Բանկի ռեսուրսները տեղաբաշխել բարձր եկամտաբերություն ունեցող ակտիվներում՝ ընդունելի մակարդակի վրա պահելով Բանկի ռիսկերը, պահպանելով բանկային գործունեությունը կարգավորող ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները,
- մշակել նոր եկամտաբեր բանկային ծառայություններ,
- ապահովել Բանկի հասանելիությունը իր հաճախորդներին թվային բանկային ծառայությունների զարգացման միջոցով,
- իրականացնել գործարար գործընթացների շարունակական բարելավում՝ հիմնվելով գործընթացների ավտոմատացման սկզբունքի վրա:

3.4.2 Շահութաբերության ցուցանիշների հիմնական ծրագրավորումները կատարվում են Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի շրջանակում, և այդ առումով 2018-2020 թվականներին Բանկին հաջողվել է ապահովել շահութաբերության ծրագրավորված մակարդակը:

3.4.3 Այն գործոնները որոնց վրա բանկի կառավարման մարմինները ազդելու հնարավորություն ունեն:

Բանկի կառավարման մարմինները **հնարավորություն ունեն ազդել** Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հիմնական գործոնների վրա հետևյալ միջոցներով.

- Բանկի ներգրավող և տեղաբաշխվող միջոցների ծավալների կառավարում,
- Բանկի ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանում և կառավարում,
- Բանկի տեխնիկատեխնոլոգիական և տեղեկատվական բազայի արդիականացմանն ուղղված ներդրումների իրականացում,
- Բանկի անձնակազմի վարձատրության, պատրաստման և վերապատրաստման ծախսերի կառավարում,
- Բանկի գործունեության ապահովման ծախսերի կառավարում,
- նոր բանկային գործիքների ներդնում:

Բանկի կառավարման մարմինները կարող են արձագանքել, սակայն **հնարավորություն չունեն ազդել** Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

- բանկային ավանդների և վարկերի առաջարկի ու պահանջարկի և դրանից բխող տոկոսադրույքների փոփոխության վարքագիծ,
- արժեզրկման ու փոխարժեքի վարքագիծ,
- անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրության հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Բանկի բնականոն գործունեությունը):

3.5 Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

3.5.1 Բանկի կանոնադրության համաձայն Բանկի կառավարման մարմիններն են.

- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը
- Բանկի խորհուրդը
- Բանկի վարչությունը և վարչության նախագահը:

Բացի վերը նշված կառավարման մարմիններից Բանկն ունի նաև գլխավոր հաշվապահ և ներքին աուդիտի ստորաբաժանում:



3.5.1.1 Բանկի Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում.

- Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,
- Բանկի վերակազմակերպումը,
- Բանկի լուծարումը,
- ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,
- խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,
- հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը, ինչպես նաև կանոնադրական հիմնադրամի ավելացումը,
- խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
- Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
- ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը,
- բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը,

- դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,
- դուստր կամ կախյալ ընկերություններին մասնակցությունը,
- առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը,
- առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը,
- խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,
- օրենսդրությամբ սահմանված դեպքերում շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը,
- օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ Բանկի գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը /Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 %-ից ավելին/, ինչպես նաև Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից մինչև 50 տոկոսի դեպքերում, եթե խորհրդի կողմից չի ընդունվել միաձայն, և հարցը բարձրացվել է ընդհանուր ժողովի քննարկմանը, օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը:

3.5.1.2 Բանկի խորհրդի իրավասություններն են՝

- Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,
- ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,
- Բանկի վարչության անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
- Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
- Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը. և բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը,
- Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը, եթե կանոնադրությամբ կամ ընդհանուր ժողովի որոշմամբ նրան տրված է այդպիսի լիազորություն,
- շահութաբաժինների վճարման վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բանկի մասնակիցների ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են բանկի մասնակիցների ռեեստրում՝ բանկի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ,

- Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ներկայացումը ընդհանուր ժողովին,
- ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը և Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,
- Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,
- Բանկի կողմից օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը և բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը,
- օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը /Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը/, որը պետք է ընդունվի միաձայն, ինչպես նաև խորհրդի կողմից միաձայն չընդունվելու դեպքում խոշոր գործարքի հարցն ընդհանուր ժողովում քննարկելու մասին որոշման ընդունումը,
- օրենսդրությամբ սահմանված դեպքերում շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը,
- գույքի շուկայական արժեքի որոշումը օրենսդրությամբ սահմանված կարգով,
- օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը,
- Բանկի վերակազմակերպումը, դուստր կամ կախյալ ընկերությունների առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը, դրանցում մասնակցությունը, ինչպես նաև խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանման հարցերի ներկայացումն ընդհանուր ժողովի քննարկմանը,
- Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը, բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,
- Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.
- Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը,
- առնվազն տարին մեկ անգամ Բանկի խորհուրդն իր նիստում պետք է քննարկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկի և անհրաժեշտության դեպքում վերանայի Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը,

- առնվազն եռամսյակը մեկ անգամ բանկի խորհուրդը պետք է քննարկի Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, վարչության նախագահի (վարչության) և գլխավոր հաշվապահի հաշվետվությունները՝ իր սահմանած կարգով և ձևով:

3.5.1.3 Բանկի վարչությունը.

- իրականացնում է Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը, ապահովում է մասնակիցների ընդհանուր ժողովի, խորհրդի և իր կողմից ընդունված որոշումների կատարումը,
- խորհրդի հաստատմանն է ներկայացնում խորհրդի իրավասությանը վերաբերող ներքին իրավական ակտերը, ստորաբաժանումների կանոնադրությունները և Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը,
- Բանկի խորհրդի կողմից ընդունված «Բանկի գործունեությունը կանոնակարգող ներքին ակտերի մասին» կարգի պահանջների համաձայն հաստատում է առանձին գործառնությունների իրականացման կամ ծառայության մատուցման գործընթացը նկարագրող ընթացակարգերը, ֆինանսական գործիքի/ծառայության պայմանները և սակագները,
- իր իրավասությունների շրջանակում սահմանում է վարկավորման, ավանդների ներգրավման պայմանները, Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները և դրույքաչափերը,
- ապահովում է Բանկի ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը, դրանց ժամանակին ներկայացումը խորհրդին և այլ մարմիններին, ինչպես նաև սահմանում է վերահսկողություն ստորաբաժանումների գործունեության նկատմամբ,
- ապահովում է ռիսկերի արդյունավետ կառավարումը՝ պահպանելով Բանկի ռիսկերի կառավարման համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը,
- նախապես քննարկում է վարչության կողմից մասնակիցների ընդհանուր ժողովի և Բանկի խորհրդի քննարկմանը ներկայացվող հարցերը,
- քննարկում է ստուգումներին, վերստուգումներին վերաբերող նյութերը, զեկուցագրեր, առաջարկություններ, Բանկի ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները,
- ապահովում է Բանկի Խորհրդի կողմից հաստատված ռազմավարական ծրագրի, բանկի տարեկան ծախսերի և եկամուտների (բյուջեի) և այլ ներքին իրավական ակտերի պահանջների կատարումը,
- ներքին հսկողության համակարգում կամ բանկի գործունեության միջավայրի էական փոփոխությունների դեպքում առաջարկություններ է ներկայացնում խորհրդին՝ վարչակազմակերպական կառուցվածքը փոխելու վերաբերյալ,
- վերահսկում է կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարների գործունեությունը, պահանջում է ստորաբաժանումների ղեկավարներից ապահովել ընթացիկ հսկողություն իրենց աշխատակիցների աշխատանքային պարտականությունների կատարման գործընթացի նկատմամբ,

- ապահովում է Բանկի խորհրդի կողմից հաստատված ներքին հսկողության ստանդարտներով սահմանված պահանջների կատարումը, պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետ կիրառման, ինչպես նաև խորհրդի կողմից հաստատված քաղաքականությունների, կարգերի և այլ ներքին իրավական ակտերի՝ Բանկում արդյունավետ շրջանառության ապահովման համար,
- անհրաժեշտության դեպքում Բանկի խորհրդին առաջարկություններ է ներկայացնում ներքին հսկողության համակարգի, դրա առանձին տարրերի փոփոխությունների վերաբերյալ, հաշվի առնելով բանկի գործունեության բնույթը, առկա ու հնարավոր ռիսկերը, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները, բանկի գործունեության միջավայրը,
- իրականացնում է Բանկի կանոնադրությամբ, ինչպես նաև խորհրդի կողմից ընդունված իրավական ակտերով նախատեսված՝ բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ լիազորություններ:

Այն հարցերը, որոնք օրենքներով կամ Բանկի կանոնադրությամբ վերապահված չեն որպես ընդհանուր ժողովի, խորհրդի կամ ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը, վերապահվում են բանկի վարչությանը:

Բանկի վարչության նախագահը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է բանկի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

Բանկի վարչությունը խորհրդի կողմից սահմանած կարգով խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն:

3.5.1.4 Բանկի վարչության նախագահը՝

- տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Բանկի մասնաճյուղերի կառավարիչներին, կառավարիչների տեղակալներին, գլխավոր հաշվապահներին, աշխատակիցներին, Գլխամասային Բանկի աշխատակիցներին, բացառությամբ այն աշխատակիցների, որոնց աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու իրավասությունը պատկանում է ժողովին կամ Խորհրդին,
- Բանկի Խորհրդի հաստատած Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում հաստատում է Բանկի աշխատատեղերը,
- Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
- խորհրդին պարբերաբար, բայց որ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ խորհրդի կողմից սահմանված կարգով:

3.5.2 Տեղեկությունների Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Բնակության վայր	Այլ գործունեություն
Վարտան Դիլանյան	Խորհրդի նախագահ	ք. Մոսկվա, ՌԴ	«Աքսենչեր» ընկերության տարածաշրջանային ներկայացուցչության ղեկավար, Ռուսաստան և Ղազախստան
Կարեն Մարգարյան	Խորհրդի անդամ	ք. Մոսկվա, ՌԴ	1. IQG Asset Management Բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նախագահ (Մոսկվա), 2. Մոսկվայի ֆինանսա-իրավաբանական ինստիտուտի դասախոս (Մոսկվա), 3. Գլոբալ Էկոնոմիկայի ԳՀԻ տնօրեն:
Ալեքսանդր Խաչատուրյան	Խորհրդի անդամ	ք. Երևան, ՀՀ	1. Գործընկեր, TK & Partners ՓԲԸ 2. Դասախոս, Հայաստանում Ֆրանսիական համալսարան 3. Խորհրդի անդամ, Էներգետիկայի Հայկական Գործակալություն
Ելենա Խաչվանքյան	Խորհրդի անդամ	ք. Երևան, ՀՀ	1. Հարկաբյուջետային գծով փորձագետ, Խորհրդատու, Ասիական Զարգացման Բանկ, 2. Բիզնես խորհրդատու, TK & Partners ՓԲԸ
Ալեքսեյ Կոմառ	Խորհրդի անդամ		
Միեր Աբրահամյան	Վարչության նախագահ	ք. Երևան, ՀՀ	Առկա չէ
Արման Ասատրյան	ֆինանսական տնօրեն, Վարչության անդամ	ք. Երևան, ՀՀ	Առկա չէ
Անուշիկ Խաչատրյան	Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ	ք. Երևան, ՀՀ	Առկա չէ

Ռաֆիկ Սուվարյան	Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Վարչության անդամ,	ք. Երևան, ՀՀ	Առկա չէ
Կարեն Նալբանդյան	Բիզնեսի զարգացման տնօրեն, Վարչության անդամ	ք. Երևան, ՀՀ	Առկա չէ
Սերգեյ Առաքելյան	Թվային բանկինգի տնօրեն, Վարչության անդամ	ք. Երևան, ՀՀ	Առկա չէ
Տիգրան Մխիթարյան	Կորպորատիվ բիզնեսի տնօրեն	ք. Երևան, ՀՀ	Առկա չէ

Բանկի կառավարման մարմինների իրավասությունները և պատասխանատվությունները սահմանվում են Բանկի կանոնադրությամբ:

3.5.3 Թողարկողի մասնաճյուղերի կառավարիչներ

Ազդագրի գրանցման ներկայացման պահին Բանկի ակտիվների 10 և ավելի տոկոսը որևիցէ մասնաճյուղում կենտրոնացված չէ:

3.8.4 Շահերի բախումը

Բանկի և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև ազդագրի գրանցման ներկայացման պահի դրությամբ շահերի բախում առկա չէ :

Հսկող անձինք

Ազդագրի գրանցման ներկայացման պահին Բանկը գտնվել է «Կրեդիտբանկ» Ս.Ա.Լ.-ի և «Ֆիսթոքո» Էլ Թի Դի-ի ուղղակի հսկողության տակ, քանի որ նրանց կողմից տնօրինվել էլ Բանկի բաժնետոմսերի համապատասխանաբար՝ 40.32 և 59.68 տոկոսը, ինչպես նաև Բանկը գտնվում է նշված անձանց անուղղակի հսկողության տակ՝ Թարեկ Խալիֆե (հասցե՝ Սուրսոկ 76 փող., Հաբանա Բիբջ 6 հարկ, Տարասիբա Աշրալչ) Credit Bank S.A.L.- ի և Վարտան Դիլանյան FISTOCO LTD-ի միջոցով:

3.6 Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

3.6.1 Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Բանկի 2018-2020թ.թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները անկախ աուդիտորական եզրակացություններով, ներկայացված են սույն ազդագրում՝ Հավելված 6-ում: Հաշվետվությունները կարելի է նաև ներբեռնել Բանկի ինտերնետային էջից:

3.6.2 Միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն

Բանկի 2021 թվականի հաշվետվությունը հաստատված Բանկի կառավարման մարմնի կողմից, ներկայացված են սույն ազդագրում՝ Հավելված 6-ում: Հաշվետվությունները կարելի է նաև ներբեռնել Բանկի ինտերնետային էջից:

3.6.3 Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

31.03.2021թ. դրությամբ Թողարկողի ֆինանսական վիճակի վրա ազդող էական փոփոխություններ տեղի չեն ունեցել :

3.6.4 Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկություն

Ընկերությունը ներգրավված չէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական իրավական վարույթների մեջ, որոնք կարող են էական ազդել Ընկերության ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա և/կամ կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են էական ազդեցություն:

3.7 Էական պայմանագրերը

Բանկում առկա չեն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում Բանկի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Բանկի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

3.8 Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Բացի ֆինանսական աուդիտի ենթարկված և ազդագրում ներկայացված Բանկի ֆինանսական հաշվետվություններից, ազդագրի որևէ մասում չի օգտագործվել հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտական կարծիք:

3.9 Այլ տեղեկատվություն

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները, ինչպես նաև որպես հաշվետու թողարկող,

ներդրողների համար պատրաստվող տարեկան և միջանկյալ հաշվետվություն-վերլուծությունները մշտապես մատչելի են հանրությանը ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են ինտերնետի Բանկի տնային էջում, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Բանկի գլխամասային գրասենյակ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐԴՐՈՂԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐԻՆ, ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1:	«Այդի բանկ» ՓԲԸ կազմակերպական կառուցվածք
Հավելված 2:	Թողարկման վերջնական պայմաններ
Հավելված 3:	«Այդի բանկ» ՓԲԸ կողմից թողարկված պարտատոմսերի ձեռքբերման

	հայտ-հանձնարարական (ֆիզիկական անձանց համար)
Հավելված 4:	«Այդի բանկ» ՓԲԸ կողմից թողարկված պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական (իրավաբանական անձանց համար)
Հավելված 5:	Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևեր
Հավելված 6:	«Այդի բանկ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվություններ

Հավելված 1: «Այդի բանկ» ՓԲԸ կազմակերպական կառուցվածք


Բաժնետերերի ընդհանուր ժողով
Խորհուրդ
Ներքին աուդիտի ծառայություն
Բիզնեսի զարգացման կենտրոն
Վարչության նախագահ
Մանրածախ բիզնեսի գծով տնօրեն
Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն
Բիզնեսի զարգացման տնօրեն
Ֆինանսական տնօրեն
Ռիսկերի կառավարման գծով տնօրեն
Գործառնական տնօրեն
Գնման պլանների մշակման վարչություն
Վարկավորման վարչություն
Ռազմավարության և ներդրումների բաժին
Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների վարչություն
Վարկային ռիսկերի կառավարման վարչություն
Ծրագրային ապահովման ներդրման և սպասարկման վարչություն
Ներքին աուդիտ
Ռիսկերի մոդելավորման և վերլուծության վարչություն
Ռիսկերի մեթոդաբանության և հաշվետվողականության վարչություն
Ռիսկերի մոնիթորինգի և հսկողության վարչություն
Ռիսկերի ռազմավարական կառավարման

Հավելված 2: Թողարկման վերջնական պայմաններ

ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ[1]

_____ _____ 2021թ.
օր *ամիս* *տարի*

«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
(Թողարկողի անունը)

Անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս
(արժեթղթի տեսակը)

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է 2020 թվականի _____), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են «Այդի բանկ» ՓԲԸ-ում, ՀՀ, ք. Երևան, 0010, Վարդանանց 13 հասցեում:

1.	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)	
1.1	Թողարկողը (Թողարկողի անվանումը)	«Այդի բանկ» ՓԲԸ
1.2	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր
1.3	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	
1.4	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	
1.5	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ Թողարկողի	Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի

[1] Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Թողարկողի Գործադիր մարմնի կողմից: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումից առնվազն 2 (երկու) օր առաջ: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում:

	պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո: Առաջարկվող պարտատոմսերի դեպքում սեփականատերերի պահանջները կբավարարվեն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի ա) և բ) ենթակետերով սահմանված պահանջները բավարարելուց հետո: Կազմակերպության պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից պարտատոմսերից բխող պահանջները ենթակա չեն վերադասակարգման:
1.6	Թողարկման արժույթը	ԱՄՆ դոլար / ԵՎՐՈ / ՀՀ դրամ
1.7	Առաջարկի գինը	Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝ $DP = \frac{C}{f}\sum_{t=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$ որտեղ՝ $\tau=\frac{DSN}{DCC}$ • **DP՝** պարտատոմսի գինն է, • **DSN՝** գործարքի կատարման օրից

		(settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, • **DCC՝** գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, • **f՝** արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (2՝ կիսամյակային վճարումների համար), • **N՝** հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը, • **C՝** տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց, • **Y՝** մինչև մարում եկամտաբերություն: Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսի լրիվ գինը յուրաքանչյուր օրվա համար հրապարակվում է Թողարկողի կայքում:
1.8	Անվանական արժեքը	
1.9	Քանակը	
1.10	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր	

	փոփոխությունները)	
1.11	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	
1.12	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	
1.13	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	«ԱյԴի բանկ» ՓԲԸ Խորհրդի 2019թ. փետրվարի 01-ի թիվ 1 որոշումը: «ԱյԴի բանկ» ՓԲԸ Վարչության 2019թ. հունվարի 29 թիվ 5 որոշումը:
2.	**ԱՐԺԵԿՏՐՈՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	
2.1	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	
2.2	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Թողարկողի կառավարման իրավասու մարմնի (Վարչության) կողմից:
2.3	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	
2.4	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում / Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
2.5	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	Չի նախատեսվում
2.6	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	
2.7	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Չի նախատեսվում
3.	**ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	
3.1	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	
3.2	Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	

3.3	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	Չի նախատեսվում
3.4	Վաղաժամկետ մարման հնարավորություն Թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Չի նախատեսվում
3.4.1	*Ժամկետ(ներ)ը*	
3.4.2	*Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)*	
3.4.3	*Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը*	
3.4.4	*Այլ տեղեկություններ*	
3.5	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Չի նախատեսվում
3.5.1	*Ժամկետ(ներ)ը*	
3.5.2	*Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),*	
3.5.3	*Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)*	
4.	**ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	
4.1	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«Այդի բանկ» ՓԲԸ, ք. Երևան, 0010, Վարդանանց 13
4.2	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	
5.	**ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	
5.1	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռ չեն թույլատրված կարգավորվող շուկայում առևտր
5.2	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել,	Թողարկողը դիմելու է պարտատոմսերը կարգավորող շուկայում ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորող

	առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	շուկայում: Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի "Հայաստանի Ֆոնդային Բորսա" ԲԲԸ-ն
5.3	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանշված չեն:
5.4	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք վճարումը կատարում են թողարկման նպատակով «Այդի բանկ» ՓԲԸ-ում բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարին:

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Միեր Աբրահամյան
«Այդի բանկ» ՓԲԸ Վարչության նախագահ (ստորագրություն) (ամսաթիվ)

Արման Ասատրյան
«Այդի բանկ» ՓԲԸ ֆինանսական տնօրեն (ստորագրություն) (ամսաթիվ)

Ռաֆիկ Սուվարյան
«Այդի բանկ» ՓԲԸ Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, վարչության անդամ *(ստորագրություն)* *(ամսաթիվ)*

Անուշիկ Խաչատրյան
«Այդի բանկ» ՓԲԸ գլխավոր հաշվապահ, վարչության անդամ *(ստորագրություն)* *(ամսաթիվ)*

Սերգեյ Առաքելյան
«Այդի Բանկ» ՓԲԸ Թվային Բանկինգի տնօրեն, վարչության անդամ *(ստորագրություն)* *(ամսաթիվ)*

Կարեն նալբանդյան
«Այդի բանկ» ՓԲԸ Բիզնեսի զարգացման տնօրեն, վարչության անդամ *(ստորագրություն)* *(ամսաթիվ)*

Տգրան Մխիթարյան
«Այդի բանկ» ՓԲԸ Կորպորատիվ բիզնեսի տնօրեն *(ստորագրություն)* *(ամսաթիվ)*

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Միեր Աբրահամյան
«Այդի բանկ» ՓԲԸ _____ _____

վարչության նախագահ _____ _____

(ստորագրություն)

Հավելված 3: «Այդի բանկ» ՓԲԸ կողմից թողարկված պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական (ֆիզիկական անձանց համար)

Հայտը Բանկ ներկայացնելու ամսաթիվը և ժամը

_____ *Ժամը* _____

Հայտը ներկայացնողի անունը

Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ

(անձնագրի համար) *(տրման ամսաթիվ)* *(ռեզիդենտությունը)*

Գրանցման հասցեն

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «ԱյԴի բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը (հատ)

(քանակը տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման գինը

ԱՄՆ դոլար

(գինը տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը

ԱՄՆ դոլար

(գումարը տառերով)

Անձի բանկային վավերապայմանները
ԱՄՆ դոլարով հաշիվ *ՀՀ դրամով հաշիվ*

Բանկի անվանումը

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը

Արժեթղթերի հաշվի համարը

Հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ազդագրիին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Տեղյակ ենք, որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանուցվել, ստացել և համաձայն եմ Ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին ու կարգին:

Հաստատում եմ, որ Ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական

ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տեղեկացված ենք, որ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով*:

Սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու պահից, այն կհանդիսանա մեր Կողմերիս միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Լրացվում է Բանկի կողմից
Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ

Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր քանակը (հատ)

(քանակը տառերով)

Դրամական միջոցների փոխանցման/մուտքագրման ամսաթիվը

Անուն ազգանուն

(ստորագրություն)

Հիշեցում

Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները Բանկի համապատասխան բանկային հաշվին փոխանցվում են մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը *16:45*-ը, ապա դրամական միջոցները ստացված են համարվում այդ օրը, իսկ եթե դրանք վճարվում են տվյալ աշխատանքային օրվա ժամը *16:45*-ից հետո, ապա՝ ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը*:

**ՀՀ օրենսդրության համաձայն, անհատ ձեռնարկատերը չի օգտվում իր պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնելու հնարավորությունից:*

Հավելված 4: «Այդի բանկ» ՓԲԸ կողմից թողարկված պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական (իրավաբանական անձանց համար)

Հայտը Բանկ ներկայացնելու ամսաթիվը և ժամը

Ժամը

Իրավաբանական անձի անվանումը

Պետական գրանցման վկայականի համար

Գրանցման ամսաթիվը

Գրանցման հասցեն

Գտնվելու վայրի հասցեն

ՀՎՀՀ

Ռեզիդենտությունը

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «Այդի բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը (հատ)

(քանակը տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման գինը

ԱՄՆ դոլար

(գինը տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը

ԱՄՆ դոլար

(գումարը տառերով)

Անձի բանկային վավերապայմանները
ԱՄՆ դոլարով հաշիվ

ՀՀ դրամով հաշիվ

Բանկի անվանումը

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը

Արժեթղթերի հաշվի համարը

Սույնով, հավաստում ենք, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել ենք վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ազդագրին, ընդունում և համաձայն ենք դրանում նշված պայմաններին, ստանձնում ենք այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու/ակցեպտավորվելու պահից, այն կհանդիսանա Կողմերիս միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Լրացվում է Բանկի կողմից
Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ

Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր քանակը (հատ)

(քանակը տառերով)

Դրամական միջոցների փոխանցման/մուտքագրման ամսաթիվը

Իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն ազգանունը

(ստորագրություն)

Կ.Տ.

Հիշեցում
Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները Բանկի համապատասխան բանկային հաշվին փոխանցվում են մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը *16:45*-ը, ապա դրամական միջոցները ստացված են համարվում այդ օրը, իսկ եթե դրանք վճարվում են տվյալ աշխատանքային օրվա ժամը *16:45*-ից հետո, ապա՝ ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Հավելված 5: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևեր

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) =
(Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն) x 100

Ակտիվների շահութաբերություն (ROA) =
(Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն) x 100

Զուտ շահույթի մարժա (NPM) =
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո /Գործառնական եկամուտ

Ակտիվների օգտագործման գործակից (AU) =
Գործառնական եկամուտ / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) =
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն / Սեփական կապիտալի միջին մեծություն

Զուտ տոկոսային մարժա (NIM) =
Զուտ տոկոսային եկամուտ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն =
Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր =
Տոկոսային ծախսեր / Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) =
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սպրեդ =
(Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն)- (Տոկոսային ծախսեր/ Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր)

Հավելված 6: «ԱյԴի բանկ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվություններ

31 Մարտի 2021թ.

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ և կից ծանոթագրություններ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ֆինանսական արդյունքների մասին
«31» Մարտի 2021 թ.

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող 13
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	01/01/2021 - 31/03/2021	01/01/2020 - 31/03/2020
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	3,653,484	3,301,920
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(1,463,878)	(1,228,655)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		**2,189,606**	**2,073,265**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	602,070	268,532
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(237,246)	(102,161)
Ստացված զուտ միջնորդավճարներ և այլ վճարներ		**364,824**	**166,371**
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	238,069	(223,176)
Այլ գործառնական եկամուտներ	6	126,935	439,924
Գործառնական եկամուտներ		**2,919,434**	**2,456,384**
Կորուստներ արժեզրկումից	7	(185,262)	(51,940)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(1,616,961)	(1,411,806)
Այլ գործառնական ծախսեր	9	(578,879)	(273,222)
Շահույթը/(վնասը) մինչև հարկումը		**538,332**	**719,416**
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	10	(70,522)	(34,891)
Ժամանակաշրջանի զուտ շահույթ		**467,810**	**684,525**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		**2,426**	**(698,707)**
Ֆինանսական արդյունքներ փոխանցված զուտ օգուտ (վնաս)		-	(6,773)
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ (վնաս)		2,958	(870,119)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերվող բաղկացուցիչ մասի շահութահարկ		(532)	178,185
Համապարփակ ֆինանսական արդյունք		**470,236**	**(14,182)**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	11	0.7	0.8
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	11	0.7	0.8

Հաշվետվության վավերացման ամսաթիվը *14/04/21*

Վարչության նախագահ՝ Միեր Աբրահամյան

Գլխավոր հաշվապահ՝ Անուշիկ Խաչատրյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ֆինանսական վիճակի մասին

«31» Մարտի 2021 թ.

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող 13

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	31/03/21	31/12/2020թ. (Ճշտված)
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ		6,129,909	6,812,304
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	12	11,815,440	13,352,934
Պահանջներ բանկերի նկատմամբ	13	8,969,728	10,192,585
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	14	4,211	2,817
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	15	6,435,116	6,039,207
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	16	104,072,268	97,427,551
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	17	8,588,309	8,484,090
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	18	21,141,331	20,665,861
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	19	8,324,183	8,199,508
Բռնագանձված ակտիվներ	20	2,444,106	2,484,925
Այլ ակտիվներ	21	3,311,995	3,468,263
Ընդամենը՝ ակտիվներ		***181,236,596***	***177,130,045***
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	22	28,993,348	31,101,249
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	87,396,848	81,994,955
Այլ փոխառություններ	24	1,883,496	1,868,271
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	14	2,392	21,857
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	25	13,629,830	13,416,535
Հետաձգված հարկային պարտավորություններ	26	1,081,086	1,050,048
Այլ պարտավորություններ	27	3,340,293	3,238,063
Ընդամենը՝ պարտավորություններ		***136,327,293***	***132,690,978***
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	28	33,971,850	33,971,850
Էմիսիոն եկամուտ		5,014,099	5,014,099
Պահուստներ՝		600,883	598,457
Գլխավոր պահուստ		107,760	107,760
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ		105,601	105,601
Իրական արժեքով չափվող ֆին. ակտիվների վերագնահատ. պահուստ		387,522	385,096
Չբաշխված շահույթ (վնաս)		5,322,471	4,854,661
Ընդամենը՝ կապիտալ		***44,909,303***	***44,439,067***
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		***181,236,596***	***177,130,045***

Հաշվետվության վավերացման ամսաթիվը *14/04/21*

Վարչության նախագահ՝ Միհեր Աբրահամյան

Գլխավոր հաշվապահ՝ Անուշիկ Խաչատրյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին

« 31» Մարտի 2021 թ

«Այդի Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող 13

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եամուտ	Գլխավոր պահուստ	Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	Իրական արժեքով՝ այլ համ ֆին արդ միջ չափվող ֆին ակտիվների վերագ պահուստ	Չբաշխված շահույթ (վնաս)	***Ընդամենը կապիտալ***
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական)							
Մնացորդը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ (սրտուգված)	33,971,850	5,014,099	107,760	110,808	903,636	4,059,606	***44,167,759***
Տարվա շահույթ (վնաս)	-	-	-	-	-	684,525	***684,525***
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**-**	**-**	***(698,707)***	**-**	***(698,707)***
Ֆինանսական արդյունքներ փոխանցված զուտ օգուտ (վնաս)	**-**	**-**	**-**	**-**	(6,773)	-	***(6,773)***
Իրական արժեքի փոփոխությունից չվաստկած զուտ օգուտ (վնաս)	-	-	-	-	(870,119)	-	***(870,119)***
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերվող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	-	178,185	-	***178,185***
Մնացորդը 2020թ. մարտի 31-ի դրությամբ (չսրտուգված)	***33,971,850***	***5,014,099***	***107,760***	***110,808***	***204,929***	***4,744,131***	***44,153,577***

Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական)							
Մնացորդը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ (չստուգված)	33,971,850	5,014,099	107,760	105,601	385,096	4,854,661	**44,439,067**
Տարվա շահույթ (վնաս)	-	-	-	-	-	467,810	**467,810**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	**2,426**	-	**2,426**
Իրական արժեքի փոփոխությունից չվաստրակած զուտ օգուտ (վնաս)	-	-	-	-	2,958	-	**2,958**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերվող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	-	(532)	-	**(532)**
Մնացորդը 2021թ. մարտի 31-ի դրությամբ (չստուգված)	**33,971,850**	**5,014,099**	**107,760**	**105,601**	**387,522**	**5,322,471**	**44,909,303**

Վարչության նախագահ՝ Միեր Աբրահամյան

Գլխավոր հաշվապահ՝ Անուշիկ Խաչատրյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դրամական միջոցների հոսքերի մասին

« 31» Մարտի 2021 թ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող. 13

(բանկի անվանումը և գտնվելու վայրը) *(հազար դրամ)*

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
	01/01/20-ից 31/03/20թ.	**01/01/21-ից 31/03/21թ.**
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**2,002,596**	**2,037,291**
Ստացված տոկոսներ	3,063,666	3,701,902
Վճարված տոկոսներ	(677,675)	(562,332)
Ստացված կոմիսիոն գումարներ	268,532	602,070
Վճարված կոմիսիոն գումարներ	(102,161)	(237,246)
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)	30,919	(58,367)
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ	298,951	307,152
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(769,631)	(931,611)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	(110,005)	(784,277)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	**(1,179,085)**	**(3,494,805)**
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)	1,845,226	(5,605,720)
այդ թվում՝ վարկերի և փոխատվությունների նվազում/ (ավելացում)	(649,105)	(6,384,980)
այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)	2,494,331	779,260
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)	(3,024,311)	2,110,915
այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)	695,579	4,843,943
այլ գործառնական պարտավորությունների ավելացում/(նվազում)	(3,719,890)	(2,733,028)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը	**823,511**	**(1,457,514)**
Վճարված շահութահարկ	-	**-**
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	**823,511**	**(1,457,514)**
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	**x**	**x**
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներում ներդրումների նվազում (ավելացում)	(1,240,238)	(584,368)
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)	(704,686)	-
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)	(279,098)	(2,546)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների (ձեռքբերում) օտարում	(280,839)	(383,446)
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	**(2,504,861)**	**(970,360)**
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	**x**	**x**
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)	-	323,981
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)	-	707,060
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)	846,011	**-**
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	**846,011**	**1,031,041**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	458,316	85,299
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**(377,023)**	**(1,311,534)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	17,144,330	20,123,865
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	*16,767,307*	18,812,331

Հաշվետվության վավերացման ամսաթիվը *14/04/21*

Վարչության նախագահ՝ Միհեր Աբրահամյան

Գլխավոր հաշվապահ՝ Անուշիկ Խաչատրյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13

(Բանկի անվանումը և գտնվելու վայրը)

Ամսաթիվը 01/01/21 թ.-ից 31/03/21 թ.

(Հազար դրամ)

Նորմատիվներ	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	*2*	*3*	*4*
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	33,971,850	50,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	35,958,314	30,000,000	Խախտում առկա չէ
Ն11 Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	23.35%	9.0%	Խախտում առկա չէ
Ն12 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	23.70%	12.0%	Խախտում առկա չէ
Ն21 Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	22.17%	15.0%	Խախտում առկա չէ
Ն22 Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	100.72%	60.0%	Խախտում առկա չէ
Ն23 Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)	131.21%	100.0%	Խախտում առկա չէ
Ն23 (FX) Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)	117.59%	60.0%	Խախտում առկա չէ
Ն24 Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)	105.36%	100.0%	Խախտում առկա չէ
Ն24(FX) Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)	108.26%	60.0%	Խախտում առկա չէ
Ն211 Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	21.28%	4.0%	Խախտում առկա չէ
Ն221 Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	114.71%	10.0%	Խախտում առկա չէ
Ն31 Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	15.90%	20.0%	Խախտում առկա չէ
Ն32 Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	82.73%	500.0%	Խախտում առկա չէ
Ն41 Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	0.27%	5.0%	Խախտում առկա չէ
Ն42 Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	3.77%	20.0%	Խախտում առկա չէ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը՝			
ՀՀ դրամով	X	2.0%	Խախտում առկա չէ
արտարժույթով	X	18%, որից 8% արտարժույթով, 10% դրամով	Խախտում առկա չէ
Արտարժութային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը	6.26%	10.0%	Խախտում առկա չէ
Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը՝			
ԱՄՆ դոլարով	5.4%	7.0%	Խախտում առկա չէ
Եվրոյով	0.0%	7.0%	Խախտում առկա չէ
Ռուսական ռուբլիով	0.0%	7.0%	Խախտում առկա չէ
Այլ	X	7.0%	Խախտում առկա չէ

Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

Բանկը հիմնադրվել է 1990թ.-ին Հայաստանի Հանրապետությունում: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության 2007թ. ապրիլին: Նախկինում Բանկն իր գործունեությունն իրականացրել է «Անելիք Բանկ» ՓԲԸ անվանմամբ: 2018թ. հունիսի 4-ից վերանվանվել է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ):
Բանկի հիմնական գործունեությունն է հանդիսանում ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկային գործառնությունների իրականացումը, երաշխավորությունների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական համակարգի անդամ:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում, իսկ թվով 13 մասնաճյուղերը գտնվում են Երևանում և տարբեր շրջաններում:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Վարդանանց փ. 13:

Բանկի մասնաճյուղերը՝

«Վարդանանց» մասնաճյուղ,ք. Երեւան, Վարդանանց փ. 13/3, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
Գյումրիի մասնաճյուղ, ք.Գյումրի, Անկախության հր-կ 6, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33,
Աբովյանի մասնաճյուղ,ք.Աբովյան, Տարտուի փ 1/1, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
«Արաբկիր» մասնաճյուղ,ք. Երեւան, Կոմիտաս 56/162, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
«Նոր Նորք» մասնաճյուղ,ք. Երեւան, Գայի պողոտա 17/1 շենք, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33,
Էջմիածնի մասնաճյուղ,ք.Էջմիածին, Խորենացի 16, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
Վանաձորի մասնաճյուղ,ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 73, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
Դավթաշենի մասնաճյուղ,ք. Երեւան, Դավթաշեն 4-րդ թաղ., 11/91, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
«Բաղրամյան » մասնաճյուղ, ք. Երեւան, Բաղրամյան 75, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
«Մալաթիա» մասնաճյուղ, ք. Երեւան, Րաֆֆու 39/61,Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33,
«Կենտրոն» մասնաճյուղ, ք. Երեւան, Հյուսիսային պողոտա շենք 6, տարածք 10, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
«Էրեբունի» մասնաճյուղ, ք. Երեւան, Էրեբունի 7/60, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
«Շենգավիթ» մասնաճյուղ, ք. Երեւան, Բագրատունյաց 13, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33



Բանկի աշխատողների միջին թվաքանակը 2021 թ-ի առաջին եռամսյակում կազմել է 577 մարդ:

1.1 Կորպորատիվ կառավարում

Կորպորատիվ կառավարման սկզբունքներից ելնելով և ղեկավարվելով «Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթներով, Բանկի արդյունավետ ղեկավարման համար գործում է Բանկի Վարչությունը: Բանկի Վարչությունն իրականացնում է Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը, կազմակերպում է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի, Բանկի Խորհրդի և իր կողմից ընդունված որոշումների կատարումը, ապահովում է բանկի խորհրդի կողմից հաստատված ռազմավարական ծրագրի և ներքին ակտերի կատարումը:

Բանկի Խորհուրդը, Վարչության աշխատանքների գնահատման համար, հիմք է ընդունում Վարչության նախագահի, Գլխավոր հաշվապահի, Ներքին վերահսկողության վարչության կողմից Խորհրդին ներկայացվող պարբերական հաշվետվությունները և տեղեկատվությունը, ՀՀ կենտրոնական բանկի ստուգման ակտերը, ինչպես նաև արտաքին աուդիտի եզրակացությունը: Վարչության աշխատանքները գնահատվում են ելնելով Վարչության կողմից իրականացվող՝

- ✓ Բանկի ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքից,
- ✓ Խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարումից,
- ✓ Ռիսկերի զսպմանն ուղղված գործառույթներից,
- ✓ Բանկի ընթացիկ գործունեության արդյունավետ կառավարումից,
- ✓ Տոկոսադրույքների քաղաքականությունից,
- ✓ Եկամուտների և ծախսերի արդյունավետ քաղաքականությունից,
- ✓ Կադրային քաղաքականությունից

Բանկի խորհրդի կազմը

Վարտան Դիլանյան՝	Խորհրդի նախագահ
Կարեն Մարգարյան՝	Խորհրդի անդամ
Ելենա Խաչվանքյան՝	Խորհրդի անդամ
Ալեքսեյ Կոմար՝	Խորհրդի անդամ
Ալեքսանդր Խաչատուրյան՝	Խորհրդի անդամ

Բանկի վարչության կազմը

Միեր Աբրահամյան՝	Վարչության նախագահ
Կարեն Նալբանդյան՝	Բիզնեսի զարգացման գծով տնօրեն, Վարչության անդամ
Արման Ասատրյան՝	Ֆինանսական տնօրեն ՝ Վարչության անդամ
Ռաֆիկ Սուվարյան՝	Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Վարչության անդամ
Անուշիկ Խաչատրյան՝	Գլխավոր հաշվապահ-Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների վարչության պետ, Վարչության անդամ
Սերգեյ Առաքելյան՝	Թվային Բանկինգի տնօրեն, Վարչության անդամ
Տիգրան Մխիթարյան՝	Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, Վարչության անդամ

Բանկի բաժնետերեր

Բաժնետեր	Մասնակության չափը (հազար դրամ)	%
ՖԻՍԹՈՔՈ Էլ Թի Դի	20,275,550	59.68%
CreditBank S.A.L.	13,696,300	40.32%
Ընդամենը	**33,971,850**	**100%**

1.2

1.3 Գործարար միջավայր

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:
Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:
Բացի այդ, 2020թ. -ին համաշխարհային շուկայում տեղի են ունեցել զգալի ցնցումներ՝ պայմանավորված կորոնավիրուսի բռնկումով: Այլ գործոնների հետ մեկտեղ, հիվանդության բռնկումը հանգեցրել է ֆոնդային բորսայի ցուցանիշների կտրուկ անկման: Այս զարգացումներն էլ ավելի են մեծացնում գործունեության իրականացման հետ կապված անորոշության մակարդակը Հայաստանի գործարար միջավայրում:

1. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

1.4 Համապատասխանությունը

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

1.5 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով ու վերագնահատված արժեքով հաշվառվող շենքերի:

1.6 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:
Դրամը հանդիսանում է նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:
Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:
Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

1.7 Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են դրամի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերահաշվարկից առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված փոխարժեքային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

1.8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները, ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

1.9 Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույք

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռքբերված կամ տրամադրված արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու սպասվող պարտքային վնասը: Ձեռքբերված կամ տրամադրված արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ սպասվող պարտքային վնասը:
Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

1.10 Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

1.11 Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված սպասվող պարտքային վնասի գծով պահուստի մասով:
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան սպասվող պարտքային վնասի գծով պահուստի մասով ճշգրտումը:

1.12 Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվն արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լողացող տոկոսադրույքով գործիքների գծով դրամական միջոցների հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխություններն արտացոլելու նպատակով: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է նաև իրական արժեքի հեջավորման հետ

կապված ճշգրտումներն արտացոլելու համար այն ամսաթվի դրությամբ, երբ սկսվում է հեջի գծով ճշգրտման ամորտիզացիայի հաշվարկը:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս արժեզրկված չէ, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է:

1.13 Ներկայացում

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկած տոկոսային եկամուտը ներառում է՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները,
- այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

1.14 Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ՝ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և սինդիկացված վարկերի գծով միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ վարկը կտրամադրվի վարկավորելու պարտավորվածության շրջանակներում, ապա վարկավորման պարտավորվածության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ պարտավորվածության գործողության ժամկետի ընթացքում:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

Դասակարգում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և թե՛ ֆինանսական ակտիվների վաճառքի միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով շահույթը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչ որ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով շահույթը և վնասը.

- տոկոսային եկամուտ՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- սպասվող պարտքային վնաս և հակադարձումներ և
- օգուտ և վնաս փոխարժեքային տարբերություններից:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակված շահույթը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Առևտրական նպատակներով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անդառնալիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Բաժնային գործիքներում այս ներդրումների գծով շահույթը և վնասը երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակնհայտորեն իրենցից ներկայացնում են ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում են այլ համապափակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապափակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային շահույթը և վնասը փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասպանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

1.15 Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակներում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեության կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունն ուղղված է պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների հոսքերի իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Բանկի ղեկավարությանը:
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ ակտիվներից հավաքագրվող պայմանագրային դրամական միջոցների հոսքերից:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ֆինանսական ակտիվների) արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- նախորդ ժամանակաշրջանների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, վաճառքների պատճառները և վաճառքների ապագա ծավալների ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների ծավալի վերաբերյալ տեղեկատվությունը առանձին չի դիտարկվում, այն դիտարկվում է իրականացնելիս մեկ ընդհանուր վերլուծություն առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Բանկի առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական միջոցների հոսքերը:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվներ վաճառելու համար:

1.16 Վերադասակարգում

1.17 Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը։

1.18

1.19 Ֆինանսական պարտավորություններ

Բանկն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և վարկ տրամադրելու պարտավորվածությունների, դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին։

1.20 Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո։

Ապաճանաչում

1.21 Ֆինանսական ակտիվներ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները, կամ որում Բանկը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը։

Ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և այլ համապարփակ արդյունքում նախկինում ճանաչված կուտակված որևէ շահույթի կամ վնասի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում։

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախատեսված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակված շահույթը/վնասը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի արժեզրկման ժամանակ։ Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահվող մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն։

Բանկը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերը և հատույցները կամ դրանց մի մասը։ Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում։ Նման գործարքների օրինակներ են արժեթղթերի որպես փոխառություն տրամադրումը և վաճառքի և հետգնման գործարքները։

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, և պահպանում է ակտիվի

նկատմամբ վերահսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է նրա ներգրավվածությունը ֆինանսական ակտիվում, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

1.22 Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի կազմում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր փոփոխված ֆինանսական պարտավորությունը:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը:

Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արտարժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմանների համաձայն դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները (առանց ստացված վճարների) և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության փոփոխությունը չի բավարարում ապաճանաչման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, զեղչելով փոփոխված դրամական միջոցների հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների համար փոփոխությունից առաջացող շահույթը կամ վնասը հաշվարկելու համար կիրառված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է՝ արտացոլելու համար փոփոխության պահին գործող ընթացիկ շուկայական պայմանները: Ցանկացած կրած ծախսումները կամ վճարված վճարները ճանաչվում են որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում են փոփոխված ֆինանսական պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում՝ գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

1.23 Արժեզրկում

Բանկը ճանաչում է պահուստ սպասվող պարտքային վնասի գծով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող հետևյալ ֆինանսական գործիքների համար.

- պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ,

- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր և
- փոխատվության հանձնառություններ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում:

Բանկը չափում է վնասի գծով պահուստը ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով.

- պարտքային ներդրումային արժեթղթեր, եթե որոշվել է, որ դրանք ունեն ցածր պարտքային ռիսկ հաշվետու ամսաթվի դրությամբ, և
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկն էականորեն չի աճել սկզբնական ճանաչման պահից

Բանկը չի կիրառում ցածր պարտքային ռիսկի համար գործող բացառություն որևէ ֆինանսական գործիքի նկատմամբ:

12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է սպասվող պարտքային վնասի այն մասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման այն դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնաս, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է այն սպասվող պարտքային վնասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում է ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ:

1.24 Ակնկալվող պարտքային վնասի չափում

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են և չափվում է հետևյալ կերպ.

- ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ. որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան Բանկին հասանելիք դրամական հոսքերի և Բանկի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է),
- ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ. որպես համախառն հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերություն,
- չօգտագործված փոխատվության հանձնառություններ. որպես հետևյալ նշվածների միջև տարբերության ներկա արժեք՝ պայմանագրային դրամական հոսքերի, որոնք ենթակա են վճարման Բանկին, եթե օգտագործում է փոխառությունը ստանալու իրավունքը, և այն դրամական հոսքերի, որոնք Բանկն ակնկալում է ստանալ,

- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր. որպես այն ակնկալվող վճարումների ներկա արժեք, որոնք փոխհատուցում են տիրապետողին կրած պարտքային կորուստը՝ հանած այն գումարները, որոնք Բանկն ակնկալում է հետ ստանալ:

1.25 Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերանայվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են հետևյալ կերպ.

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում:
- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեր՝ վերջինիս ապաճանաչման ժամանակ: Այս գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը զեղչվում է ապաճանաչման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

1.26 Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվներն արժեզրկված լինելու տեսանկյունից (որոնք դիտարկում ենք որպես 3-րդ փուլի ֆինանսական գործիքներ): Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե տեղի են ունցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու վկայությունը ներառում է հետևյալ դիտարկելի տվյալները.

- վարկառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, այդ թվում՝ պարտականությունների չկատարումը կամ վճարման ուշացումը,
- Բանկի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- վարկառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, անհատներին տրվող վարկերի դեպքում պարտքային առումով արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

1.27 Ակնկալվող պարտքային վնասի գծով պահուստի ներկայացում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային վնասի գծով պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,
- փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորության պայմանագրեր՝ սովորաբար որպես պահուստ,
- երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Բանկը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորստներից առանձին՝ Բանկը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում:

1.28 Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը վերականգնելու ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Բանկը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այս գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:

Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ՝ վճարման ենթակա գումարների վերադարձման Բանկի ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

1.29 Ֆինանսական ակտիվի անբաժանելի մասը չհադիսացող ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բանկը գնահատում է, թե արդյոք ֆինանսական երաշխավորության պայմանագիրը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, որը հաշվառվում է որպես այդ գործիքի բաղադրիչ, կամ արդյոք այն հանդիսանում է առանձին հաշվառվող պայմանագիր: Այս գնահատումը կատարելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- արդյոք երաշխավորությունը նախատեսված է պարտքային գործիքի պայմանագրի պայմաններով,
- արդյոք երաշխավորության պայմանագիրը կնքվել է պարտքային գործիքի պայմանագրի հետ նույն ժամանակ և հաշվի առնելով վերջինիս պայմանները և
- արդյոք երաշխավորությունը տրամադրվել է փոխառուի մայր կազմակերպության կամ այն փոխառուի խմբի անդամ հանդիսացող որևէ այլ կազմակերպության կողմից:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման հետ կապված ցանկացած վճարվելիք հավելաճար հաշվառվում է որպես այդ ակտիվի ձեռքբերման գործարքի հետ կախված ծախսում: Պարտքային գործիքի իրական արժեքը և սպասվող պարտքային վնասը չափելիս Բանկը հաշվի առնում երաշխավորությամբ ապահովվող պաշտպանության ազդեցությունը:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը չի հանդիսանում է պարտքային գործիքի անբաժանելի տարր, ապա այն ճանաչում է ակտիվ, որն իրենից ներկայացնում է երաշխավորության հավելավճարի գծով կանխավճար, և պարտքային վնասի դիմաց հատուցում ստանալու իրավունք: Կանխավճարի տեսքով վճարված հավելավճարի գծով ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե ֆինանսական ակտիվը, որի համար ձեռք է բերվել երաշխավորությունը, արժեզրկված չէ և դրա գծով չի գրանցվել պարտքային ռիսկի էական աճ երաշխավորությունը ստանալու պահին: Այս ակտիվները ճանաչվում են «այլ ակտիվներ» հոդվածի կազմում: Բանկը հատուցման իրավունքի գծով շահույթը կամ վնասը ներակայցնում է շահույթում կամ վնասում՝ «պարտքային ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ» հոդվածում:

1.30 Պարունակվող ածանցյալ գործիքներ

Ածանցյալ գործիքները կարող են պարունակվել մեկ այլ պայմանագրում (հիմնական պայմանագիր): Բանկը պարունակվող ածանցյալ գործիքը հաշվառում է հիմնական պայմանագրից առանձին, երբ.

- հիմնական պայմանագիրը չի հանդիսանում ակտիվ ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում,
- հիմնական պայմանագիրն ինքնին չի հաշվառվում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- պարունակվող ածանցյալ գործիքի պայմանները կհամապատասխանեին ածանցյալ գործիքի սահմանմանը, եթե ներառվեին առանձին պայմանագրում և
- պարունակվող ածանցյալ գործիքի տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն հիմնական պայմանագրի տնտեսական բնութագրերի և ռիսկերի հետ:

Առանձնացված պարունակվող ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի բոլոր փոփոխությունները ճանաչելով շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ կազմում են որակվող դրամական միջոցների հոսքերի կամ զուտ ներդրման հեջավորման փոխհարաբերության մաս:

1.31 Հաճախորդներին տրված վարկեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր» հոդվածը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկերը, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված լրացուցիչ ուղղակի ծախսումները,

իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

1.32 Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «ներդրումային արժեթղթեր» հոդվածը ներառում է.

- ամորտիզացված արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթերը, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը
- այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթերը
- բաժնային ներդրումային արժեթղթերը, որոնք նախատեսված են որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող

Հիմնական միջոցներ

1.32.1.1.1 Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:
Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

1.32.1.1.2 Վերագնահատում

Շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա շենքերի իրական արժեքների շարժից: Երբ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Երբ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

1.32.1.1.3 Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

շենքեր	50 տարի
վարձակալված գույքի բարելավում	10 տարի
համակարգիչներ և կապի սարքավորումներ	4-10 տարի
փոխադրամիջոցներ	10 տարի
տնտեսական գույք	10 տարի

Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:
Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կան վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

Առգրավված ակտիվներ

Բանկը ճանաչում է առգրավված ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն ունի մարման ամբողջական և վերջնական իրավունքներ գրավի նկատմամբ:

Առգրավված ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից նվազագույնով՝ հանած վաճառքի կազմակերպման ծախսերը: Սկզբնական ճանաչման պահին բռնագանձված ակտիվները չափվում են չաշխատող վարկի հաշվեկշռային արժեքով՝ ներառյալ գրավի բռնագանձման հետ կապված ծախսումները: Իրական արժեքի և վաճառքի կազմակերպման ծախսերի տարբերությունը հանդիսանում է գրավի գնահատված վաճառքի գինը բնականոն գործունեության ընթացքում՝ հանած վաճառքի հարակից ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո գրավի նկատմամբ սեփականության ձեռքբերման արդյունքում առաջացած ակտիվները վերանայվում են որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու տեսանկյունից և համապատասխանաբար վերադասակարգվում են այդ դասի չափանիշները բավարարելու դեպքում:

Առգրավված ակտիվների օտարումից ստացվող օգուտը և վնասը ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ գործառնական եկամուտ» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից հանած վաճառքի ծախսերը և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, կիրառելիության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

Բաժնետիրական կապիտալ

1.32.1.1.4 Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

1.32.1.1.5 Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող գումարը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

1.32.1.1.6 Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող եկամտի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի

մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման գծով ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքում, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասի, չօգտագործված հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որին հաշվին դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթի գումարը որոշվում է հակադարձման ենթակա համապատասխան հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների հակադարձման չափով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Բանկի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ համապատասխան հարկային հատուցումը կիրացվի: Այս նվազեցումները հակադարձվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթի առկայության հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Բանկը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Վարձակալություն

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» ստանդարտը (այսուհետ՝ ՖՀՄՍ 16) սահմանում է մեկ՝ հաշվեկշռային հաշվառման մոդել վարձակալության համար: Վարձակալը ճանաչում օգտագործման իրավունք հանդիսացող ակտիվը, որն իրենից ներկայացնում է ելակետային ակտիվն օգտագործելու իրավունք, և վարձակալության գծով պարտավորությունը, որն իրենից ներկայացնում է վարձավճարների վճարման պարտականություն: Նախատեսված են բացառություններ կարճաժամկետ վարձակալության և ցածր արժեք ունեցող միավորների վարձակալության համար: Վարձատուի համար հաշվառման ներկայիս մոտեցումը չի փոփոխվում, վարձատուն շարունակում է դասակարգել վարձակալությունը ֆինանսական և գործառնական դասերի:

Բանկը՝ որպես վարձակալ

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում Բանկը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Բանկը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Բանկին չեն փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Բանկը կիրագործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Բանկը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Բանկը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Բանկի գնահատականի փոփոխություն, եթե Բանկը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Բանկը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների, այդ թվում՝ բանկոմատների համար: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարներն Բանկը ճանաչում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

հազար ՀՀ դրամ

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	01/01/2021թ. 31/03/2021թ.	01/01/2020թ. 31/03/2020թ.
Տոկոսային եկամուտներ բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից	155,346	68,146
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխատվություններից	2,674,825	2,445,914
Տոկոսային եկամուտ արժեղթերից	726,588	718,777
Տոկոսային եկամուտ «Ռեպո» պայմանագրերից	96,441	65,752
Այլ տոկոսային եկամուտ	284	3,331
Ընդամենը	**3,653,484**	**3,301,920**



հազար ՀՀ դրամ

Տոկոսային և նմանատիպ ծախսեր	01/01/2021թ. 31/03/2021թ.	01/01/2020թ. 31/03/2020թ.
Տոկոսային ծախսեր բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց	267,853	239,186
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց	770,384	715,378
Տոկոսային ծախսեր բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց	167,025	97,146
Տոկոսային ծախսեր «Ռեպո» պայմանագրերի դիմաց	211,223	153,684
Այլ տոկոսային ծախսեր	47,393	23,261

Ընդամենը	**1,463,878**	**1,228,655**



Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	**2,189,606**	**2,073,265**

4. Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

հազար ՀՀ դրամ

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ	**01/01/2021թ. 31/03/2021թ.**	**01/01/2020թ. 31/03/2020թ.**
Դրամարկղային գործառնություններից	28,488	11,716
Հաշվարկային ծառայություններից և սպասարկումից	117,906	137,489
Վճարային քարտերի սպասարկումից	455,620	114,787
Այլ կոմիսիոն վճարներ	56	4,540
Ընդամենը	**602,070**	**268,532**



հազար ՀՀ դրամ

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	01/01/2021թ. 31/03/2021թ.	01/01/2020թ. 31/03/2020թ.
Թղթակցային և այլ հաշիվների դիմաց կոմիսիոն վճարներ	19,666	18,529
Վճարային քարտերով գործառնությունների գծով վճարներ	190,563	59,942
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	26,245	23,427
Այլ կոմիսիոն վճարներ	772	263
Ընդամենը	**237,246**	**102,161**



2

Ստացված զուտ միջնորդավճարներ և այլ վճարներ	**364,824**	**166,371**

3

5. Զուտ եկամուտ առևտրային գործունեությունից

հազար ՀՀ դրամ

Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներից	01/01/2021թ. 31/03/2021թ.	01/01/2020թ. 31/03/2020թ.
Զուտ շահույթ արտարժութային պայմանագրերից	967,891	303,197
Զուտ շահույթ ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից	(263,943)	326,751
Ընդամենը	**703,948**	**629,948**



հազար ՀՀ դրամ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից	**01/01/2021թ. 31/03/2021թ.**	**01/01/2020թ. 31/03/2020թ.**
Զուտ շահույթ Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից	-	5,557
Ընդամենը	**-**	**5,557**

Արտարժութային գործառնություններից	**01/01/2021թ. 31/03/2021թ.**	**01/01/2020թ. 31/03/2020թ.**
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	205,575	(295,766)
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	(667,048)	(571,147)
Ընդամենը	**(461,473)**	**(866,913)**



հազար ՀՀ դրամ

Այլ Գործառնություններից	01/01/2021թ. 31/03/2021թ.	01/01/2020թ. 31/03/2020թ.
Առարկայազուրկ մետաղական հաշիվների առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	(269)	1,768
Առարկայազուրկ մետաղական հաշիվների վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	(4,137)	6,464
Ընդամենը	**(4,406)**	**8,232**



Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	**238,069**	**(223,176)**

6. Այլ գործառնական եկամուտ

հազար ՀՀ դրամ

Այլ գործառնական եկամուտներ	01/01/2021թ. 31/03/2021թ.	01/01/2020թ. 31/03/2020թ.
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	69,931	80,060
Օգուտներ հիմնական միջոցների և այլ գույքի օտարումից	4,739	4,297
Այլ եկամուտներ	52,265	355,567
Ընդամենը	**126,935**	**439,924**



7. Արժեզրկման ծախս

հազար ՀՀ դրամ

	01/01/2021թ. 31/03/2021թ.	01/01/2020թ. 31/03/2020թ.
Արժեզրկումից կորուստներ		
Հաճախորդներին տրված վարկեր, փոխատվություններ	(194,482)	(43,947)
Այլ ակտիվներ	8,022	(7,774)
Երաշխավորություններ և պարտքային ռիսկ պարունակող այլ պայմանական պարտավորություններ	1,198	(219)
Ընդամենը	**(185,262)**	**(51,940)**



8. Ընդհանուր վարչական ծախսեր

հազար ՀՀ դրամ

Ընդհանուր վարչական ծախսեր	**01/01/2021թ. 31/03/2021թ.**	**01/01/2020թ. 31/03/2020թ.**
Անձնակազմի գծով ծախսեր	957,757	782,830
Հ. մ. և ոչ նյութ ակտի ամորտ ծախսեր	265,115	215,130
Գովազդային և ներկայացուց ծախսեր	33,326	51,165
Գործառ վարձակալ գծով ծախսեր	7,903	22,178
Կապի և հաղորդն միջոցների գծով ծախսեր	51,378	27,257
Ծախսեր հարկերի և այլ պարտ վճ գծով	105,463	73,161
Վերանորոգման և պահպ ծախսեր	74,006	85,878
Գործուղման ծախսեր	414	4,885
Անվտանգության գծով ծախսեր	24,061	21,790
Գրասենյակային ծախսեր	10,492	9,817
Աուդիտ և խորհ ծառ գծով ծախսեր	39,513	74,522
Այլ վարչական ծախսեր	47,533	43,193
Ընդամենը	**1,616,961**	**1,411,806**



Բանկի աշխատակիցների միջին քանակը հաշվետու եռամսյակում կազմել է 547 (2020թ. 1-ին եռամսյակում՝ 500):

9. Այլ գործառնական ծախսեր

հազար ՀՀ դրամ

Այլ գործառնական ծախսեր	**01/01/2021թ. 31/03/2021թ.**	**01/01/2020թ. 31/03/2020թ.**
Վճարված տույժեր և տուգանքներ	-	159
Ինկասացիայի համար կատարված վճարումներ	5,000	5,000
Կորուստներ հիմնական միջոցների և այլ գույքի օտարումից	7,116	684
Այլ ծախսեր	566,763	267,379
այդ թվում՝ վճարային գործառնությունների գծով	*438,196*	*159,095*

Ընդամենը	**578,879**	**273,222**



10. Շահութահարկի գծով ծախսեր

հազար ՀՀ դրամ

Շահութահարկի գծով ծախս	**01/01/2021թ. 31/03/2021թ.**	**01/01/2020թ. 31/03/2020թ.**
Ընթացիկ հարկի գծով ծախս	40,016	2,880
Հետաձգված հարկի գծով ծախս/(հատուցում)	30,506	195,627
Ընդամենը	**70,522**	**198,507**



Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2020թ.՝ 18%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով:

11. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

հազար ՀՀ դրամ

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	01/01/2021թ. 31/03/2021թ.	01/01/2020թ. 31/03/2020թ.
Ժամանակաշրջանի զուտ շահույթ	467,810	520,909
Բաժնետոմսերի քանակը	679,437	679,437
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ	**0.7**	**0.8**

12. ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ

Հազար ՀՀ դրամ

ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ

	31/03/21թ.	31/12/20թ.
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	11,530,440	12,619,434
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	285,000	733,500
Ընդամենը ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված միջոցներ	**11,815,440**	**13,352,934**



2021թ. մարտի 31-ի դրությամբ թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներգրաված դրամային որոշ միջոցների 2%-ի և արտարժույթով որոշ միջոցների 18%-ի չափով (8% արտարժույթով, 10 % դրամով)։

13. Պահանջներ բանկերի նկատմամբ

Հազար ՀՀ դրամ

Թղթակցային / նոստրո / հաշիվներ	31/03/21թ.	31/12/20թ.
Ընդամենը	1,151,982	692,127
Միջբանկային վարկեր և ավանդներ		
Ընդամենը	6,610,703	7,362,583
Այլ պահանջներ բանկերի նկատմամբ		
Ընդամենը	1,221,667	2,156,942
Սպասվող պարտքային կորուստ	(14,624)	(19,067)
Ընդամենը պահանջներ բանկերի նկատմամբ	8,969,728	10,192,585



14. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

	31/03/21թ. հազ. դրամ	31/12/20թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Ածանցյալ ֆինանսական գործիքներ		
Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր	4,211	2,817
	4,211	**2,817**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ածանցյալ ֆինանսական գործիքներ		
Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր	2,392	21,857
	2,392	**21,857**

Ածանցյալ ֆինանսական գործիքներն ժամկետանց կամ արժեզրկված չեն:

15. Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

Հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

	31/03/21թ.	31/12/20թ.
ՀՀ ֆինանսական կազմակերպություններ	6,441,784	6,045,468
Հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	**6,441,784**	**6,045,468**
Սպասվող պարտքային կորուստ	(6,668)	(6,261)
Հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	**6,435,116**	**6,039,207**



16.Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ

(հազ. դրամ)

Հաճախորդներին տրված վարկեր	**31/03/2021թ.**	**31/12/2020թ.**
Առևտրային վարկեր		
Վարկեր ֆինանսական կազմակերպություններին	3,696,266	3,622,376
Վարկեր իրավաբանական անձանց	50,104,048	47,597,199
Վարկեր անհատ ձեռնարկատերերին	1,651,127	1,458,081
Ընդամենը	**55,451,441**	**52,677,656**
Անհատներին տրված վարկեր		
Սպառողական վարկեր	24,158,646	22,469,085
Էքսպրես վարկեր	5,477,706	5,774,803
Ոսկու գրավով վարկեր	7,941,516	7,537,300
Հիպոթեքային վարկեր	18,630,559	16,427,793
Գյուղատնտեսական վարկեր	102,992	128,864
Ընդամենը	**56,311,419**	**52,337,845**
Ընդամենը վարկեր	**111,762,860**	**105,015,501**
Արժեզրկման գծով պահուստ	(7,690,592)	(7,587,950)

Ընդամենը զուտ վարկեր	**104,072,268**	**97,427,551**

Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշները

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2021 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Առևտրային վարկերի պորտֆելի որակական ցուցանիշներ

	Զամբյուղ 1		Զամբյուղ 2		Զամբյուղ 3			
	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
Վարկեր ա/ձ-ին և ընկերություններին								
Վարկեր, որոնց գծով արժեզրկման առանձին հայտանիշ չի հայտնաբերվել	46,123,549	261,685	-	-	-	-	***45,861,864***	***0.57%***
Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր								
· Ոչ ժամկետանց	330	-	69,991	424	229,698	2,257	***297,338***	***0.89%***
· Մինչև 30 օր ժամկետանց	33,738	3,515	8,516	369	11,274	-	***49,644***	***7.26%***
· 31-90 օր ժամկետանց	-	-	30,485	3,168	5,732	1,194	***31,855***	***12.04%***
· 91-180 օր ժամկետանց	-	-	-	-	40,515	9,495	***31,020***	***23.44%***
· 181-360 օր ժամկետանց	-	-	-	-	8,175,129	6,367,434	***1,807,695***	***77.89%***
· 361 օր և ավել ժամկետանց	-	-	-	-	722,482	-	***722,482***	***0.00%***
Ընդամենը արժեզրկված վարկեր	**34,068**	**3,515**	**108,992**	**3,961**	**9,184,830**	**6,380,380**	2,940,034	***68.48%***
Ընդամենը վարկեր ընկերություններին	**46,157,617**	**265,200**	**108,992**	**3,961**	**9,184,830**	**6,380,380**	48,801,898	***11.99%***

Անհատներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշներ

	Զամբյուղ 1		Զամբյուղ 2		Զամբյուղ 3			
	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
Սպառողական վարկեր								
· Ոչ ժամկետանց	21,465,697	193,307	140,278	1,516	188,897	21,855	***21,578,194***	***0.99%***
· Մինչև 30 օր ժամկետանց	491,185	41,885	-	-	35,733	8,579	***476,454***	***9.58%***
· 31-90 օր ժամկետանց	-	-	404,227	57,682	95,279	22,191	***419,633***	***15.99%***
· 91-180 օր ժամկետանց	-	-	-	-	308,920	82,994	***225,926***	***26.87%***
· 181-360 օր ժամկետանց	-	-	-	-	646,459	196,839	***449,620***	***30.45%***
· 361 օր և ավել ժամկետանց	-	-	-	-	381,971	-	***381,971***	***0.00%***
Ընդամենը սպառողական վարկեր	**21,956,882**	**235,192**	**544,505**	**59,198**	**1,657,259**	**332,458**	**23,531,798**	***2.59%***
Էքսպրես վարկեր								
· Ոչ ժամկետանց	5,160,090	137,843	10,519	399	33,021	15,467	***5,049,921***	***2.95%***
· Մինչև 30 օր ժամկետանց	120,725	20,786	-	-	12,556	7,247	***105,248***	***21.03%***
· 31-90 օր ժամկետանց	-	-	84,545	30,117	10,398	6,552	***58,274***	***38.62%***
· 91-180 օր ժամկետանց	-	-	-	-	15,361	5,671	***9,690***	***36.92%***
· 181-360 օր ժամկետանց	-	-	-	-	30,491	14,486	***16,005***	***47.51%***
Ընդամենը էքսպրես վարկեր	**5,280,815**	**158,629**	**95,064**	**30,516**	**101,827**	**49,423**	**5,239,138**	***4.36%***
Ոսկու գրավով վարկեր								
· Ոչ ժամկետանց	7,559,208	24,764	3,183	20	2,219	842	***7,538,984***	***0.34%***
· Մինչև 30 օր ժամկետանց		9,234	-	-			***221,153***	***4.73%***

	227,512				4,631	1,756		
· 31-90 օր ժամկետանց	-	-	90,699	13,064	4,471	1,695	*80,411*	*15.51%*
· 91-180 օր ժամկետանց	-	-	-	-	25,748	12,188	*13,560*	*47.34%*
· 181-360 օր ժամկետանց	-	-	-	-	23,845	16,412	*7,433*	*68.83%*
Ընդամենը Ոսկու գրավով վարկեր	**7,786,720**	**33,998**	**93,882**	**13,084**	**60,914**	**32,893**	7,861,541	*1.01%*
Հիփոթեքային վարկեր								
· Ոչ ժամկետանց	18,162,086	52,758	6,171	15	42,279	-	*18,157,763*	*0.29%*
· Մինչև 30 օր ժամկետանց	51,622	3,073	-	-	-	-	*48,549*	*5.95%*
· 31-90 օր ժամկետանց	-	-	26,763	2,408	6,183	1,246	*29,292*	*11.09%*
· 91-180 օր ժամկետանց	-	-	-	-	125,539	30,263	*95,276*	*24.11%*
· 181-360 օր ժամկետանց	-	-	-	-	70,309	2,311	*67,998*	*3.29%*
· **361 օր** և ավել ժամկետանց	**-**	**-**	**-**	**-**	**139,607**	**-**	139,607	*0.00%*
Ընդամենը հիփոթեքային վարկեր	**18,213,708**	**55,831**	**32,934**	**2,423**	**383,917**	**33,820**	18,538,485	0.49%
Գյուղատնտեսական վարկեր								
· Ոչ ժամկետանց	98,041	771	-	-	32	20	*97,282*	*0.81%*
· 181-360 օր ժամկետանց	-	-	-	-	4,919	2,795	*2,124*	*56.82%*
Ընդամենը գյուղատնտեսական վարկեր	98,041	771	-	-	4,951	2,815	*99,406*	*3.48%*
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**53,336,166**	**484,421**	**766,385**	**105,221**	**2,208,868**	**451,409**	55,270,368	*1.85%*

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Առևտրային վարկերի պորտֆելի որակական ցուցանիշներ

	Զամբյուղ 1		Զամբյուղ 2		Զամբյուղ 3			
	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
Վարկեր ա/ձ-ին և ընկերություններին								
Վարկեր, որոնց գծով արժեզրկման առանձին հայտանիշ չի հայտնաբերվել	42,933,567	212,076	332,193	6,910	-	-	***43,046,774***	***0.51%***
Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր								
· Ոչ ժամկետանց	1,272	-	96,842	603	181,756	-	***279,267***	***0.22%***
· Մինչև 30 օր ժամկետանց	14,694	843	20,695	1,298	-	-	***33,248***	***6.05%***
· 31-90 օր ժամկետանց	528	102	27,474	3,634	23,319	-	***47,585***	***7.28%***
· 91-180 օր ժամկետանց	-	-	556	267	8,287,220	6,367,807	***1,919,702***	***76.84%***
· 181-360 օր ժամկետանց	-	-	-	-	30,692	-	***30,692***	***0.00%***
· 361 օր և ավել ժամկետանց	-	-	-	-	726,847	-	***726,847***	***0.00%***
Ընդամենը արժեզրկված վարկեր	**16,494**	**945**	**145,567**	**5,802**	**9,249,834**	**6,367,807**	3,037,341	***67.73%***
Ընդամենը վարկեր ընկերություններին	**42,950,061**	**213,021**	**477,760**	**12,712**	**9,249,834**	**6,367,807**	46,084,115	***12.52%***

Անհատներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշներ

	Զամբյուղ 1		Զամբյուղ 2		Զամբյուղ 3			
	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
Սպառողական վարկեր								
· Ոչ ժամկետանց	19,741,856	151,341	55,650	659	164,964	10,443	***19,800,027***	***0.81%***
· Մինչև 30 օր ժամկետանց	482,293	28,099	-	-	31,522	5,722	***479,994***	***6.58%***
· 31-90 օր ժամկետանց	-	-	730,477	88,585	30,520	1,214	***671,198***	***11.80%***
· 91-180 օր ժամկետանց	-	-	-	-	761,964	223,070	***538,894***	***29.28%***
· 181-360 օր ժամկետանց	-	-	-	-	96,260	16,845	***79,415***	***17.50%***
· 361 օր և ավել ժամկետանց	-	-	-	-	373,579	-	***373,579***	***0.00%***
Ընդամենը սպառողական վարկեր	**20,224,149**	**179,440**	**786,127**	**89,244**	**1,458,809**	**257,294**	**21,943,107**	***2.34%***
Էքսպրես վարկեր								
· Ոչ ժամկետանց	5,366,182	159,032	11,627	554	3,550	1,476	***5,220,297***	***2.99%***
· Մինչև 30 օր ժամկետանց	133,433	25,306	-	-	9,698	5,911	***111,914***	***21.81%***
· 31-90 օր ժամկետանց	-	-	207,920	71,930	8,203	4,545	***139,648***	***35.38%***
· 91-180 օր ժամկետանց	-	-	-	-	34,190	13,037	***21,153***	***38.13%***
Ընդամենը էքսպրես վարկեր	**5,499,615**	**184,338**	**219,547**	**72,484**	**55,641**	**24,969**	**5,493,012**	***4.88%***
Ոսկու գրավով վարկեր								
· Ոչ ժամկետանց	7,048,818	22,164	1,453	7	2,650	1,005	***7,029,745***	***0.33%***
· Մինչև 30 օր ժամկետանց	250,477	10,141	-	-	1,349	511	***241,174***	***4.23%***
· 31-90 օր ժամկետանց		-					***154,933***	***16.34%***

	-		183,650	29,672	1,538	583		
· 91-180 օր ժամկետանց	-	-	-	-	46,831	22,342	*24,489*	*47.71%*
· 181-360 օր ժամկետանց	-	-	-	-	534	349	*185*	*65.36%*
Ընդամենը Ոսկու գրավով վարկեր	**7,299,295**	**32,305**	**185,103**	**29,679**	**52,902**	**24,790**	**7,450,526**	*1.15%*
Հիփոթեքային վարկեր								
· Ոչ ժամկետանց	15,855,765	46,581	-	-	34,084	4,328	*15,838,940*	*0.32%*
· Մինչև 30 օր ժամկետանց	80,187	5,282	-	-	31,259	6,299	*99,865*	*10.39%*
· 31-90 օր ժամկետանց	-	-	126,869	14,352	46,776	2,836	*156,457*	*9.90%*
· 91-180 օր ժամկետանց	-	-	-	-	46,185	10,570	*35,615*	*22.89%*
· 181-360 օր ժամկետանց	-	-	-	-	67,061	2,009	*65,052*	*3.00%*
· 361 օր և ավել ժամկետանց	-	-	-	-	139,607	-	*139,607*	*0.00%*
Ընդամենը հիփոթեքային վարկեր	**15,935,952**	**51,863**	**126,869**	**14,352**	**364,972**	**26,042**	16,335,536	*0.56%*
Գյուղատնտեսական վարկեր								
· Ոչ ժամկետանց	98,529	968	-	-	-	-	*97,561*	*0.98%*
· 31-90 օր ժամկետանց	-	-	18,853	1,613	2,123	1,308	*18,055*	*13.93%*
· 91-180 օր ժամկետանց	-	-	-	-	4,722	2,272	*2,450*	*48.12%*
· 181-360 օր ժամկետանց	-	-	-	-	4,637	1,447	*3,190*	*31.21%*
Ընդամենը գյուղատնտեսական վարկեր	**98,529**	**968**	**18,853**	**1,613**	**11,482**	**5,027**	121,256	*5.90%*
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**49,057,540**	**448,914**	**1,336,499**	**207,372**	**1,943,806**	**338,123**	51,343,436	*1.90%*

աճախորդներին տրված վարկերի վերլուծությունը ըստ տնտեսության ճյուղերի

	31/03/2021թ. հազ. դրամ	31/12/2020թ. հազ. դրամ
Առևտուր և ֆինանսներ	27,395,422	26,848,108
Արդյունաբերություն	3,406,146	3,426,219
Հանգստի կազմակերպման ոլորտ	701,160	706,904
Էներգետիկայի ոլորտ	0	3,685
Շինարարություն	1,311,544	842,205
Տրանսպորտ և կապ	174,314	238,309
Գյուղատնտեսություն, անտառապահություն	26,640	27,741
Սպասարկման ոլորտ	360,523	364,704
Այլ	22,075,692	20,219,781
Անհատներին տրված վարկեր	56,311,419	52,337,845
	111,762,860	**105,015,501**
Արժեզրկման գծով պահուստ	(7,690,592)	(7,587,950)
	104,072,268	**97,427,551**

Վարկերի գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է՝

	31/03/21թ. հազ. դրամ	31/03/20թ. հազ. դրամ
Սկզբնական Մնացորդ /01 հունվարի /	7,587,950	8,283,870
Տարվա ծախս(հակադարձում)	194,482	43,947
Հետհաշվեկշիռ (դուրս գրում)/վերադարձ	(91,840)	22,090
Վերջնական մնացորդ Մնացորդ	**7,690,592**	**8,349,907**

17. Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվեղ ֆինանսական ակտիվներ

	31/03/21թ. հազ. դրամ	31/12/20թ. հազ. դրամ
- Կառավարության պարտատոմսեր		
ՀՀ կառավարության արժեթղթեր	6,448,792	6,491,605
Ոչ պետական արժեթղթեր	2,161,522	2,012,665
Ընդամենը	**8,610,314**	**8,504,270**
Սպասվող պարտքային կորուստ	**(22,005)**	**(20,180)**

Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**8,588,309**	**8,484,090**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ



18. Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ

	31/03/21թ. հազ. դրամ	**31/12/20թ. հազ. դրամ**
Բանկի կողմից պահվող		
- Կառավարության պարտատոմսեր		
Ընդամենը կառավարության պարտատոմսեր	18,487,339	17,999,633
- Իրավաբանական անձանց պարտատոմսեր		
Ընդամենը իրավաբանական անձանց պարտատոմսեր	2,810,739	2,816,278
Ընդամենը ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	21,298,078	20,815,911
Սպասվող պարտքային կորուստ	(156,747)	(150,050)
Ընդամենը ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	**21,141,331**	**20,665,861**

Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ



19. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

4

5

հազ. դրամ	Շենքեր	Վարձակալված գույքի բարելավում	Համակարգիչներ և կապի սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխադրա-միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Օգտագործման իրավունք	Ընդամենը
Սկզբնական արժեք/ Վերագնահատված արժեք								
Մնացորդը 31 Դեկտեմբերի 2020թ.	4,256,112	848,261	2,067,182	1,478,212	132,397	1,734,697	1,669,352	12,186,213
Ավելացումներ	242	2,546	123,489	15,951	700	163,796	87,046	393,770
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	(20,451)	(4,927)	-	-	-	(25,378)
Վերադասակարգումներ	-	-	1,549	(1,549)	-	-	-	-
Մնացորդը առ 31 Մարտի 2021թ.	**4,256,354**	**850,807**	**2,171,769**	**1,487,687**	**133,097**	**1,898,493**	**1,756,398**	**12,554,605**
Մաշվածություն և ամորտիզացիա								
Մնացորդը 31 Դեկտեմբերի 2020թ.	967,749	81,256	1,373,834	748,529	47,267	575,565	192,505	3,986,705
Մաշվածություն և ամորտիզացիա	20,501	10,419	57,973	44,355	3,720	68,195	59,952	265,115
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	(18,451)	(2,947)	-	-	-	(21,398)
Վերադասակարգումներ	-	-	135	(135)	-	-	-	-
Մնացորդը առ 31 Մարտի 2021թ.	**988,250**	**91,675**	**1,413,491**	**789,802**	**50,987**	**643,760**	**252,457**	**4,230,422**
Հաշվեկշռային արժեք								
Մնացորդը առ 31 Մարտի 2021թ.	**3,268,104**	**759,132**	**758,278**	**697,885**	**82,110**	**1,254,733**	**1,503,941**	**8,324,183**
Մնացորդը 31 Դեկտեմբերի 2020թ.	*3,288,363*	*767,005*	*693,348*	*729,683*	*85,130*	*1,159,132*	*1,476,847*	*8,199,508*

6

հազ. դրամ	Շենքեր	Վարձակալված գույքի բարելավում	Համակարգիչներ և կապի սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխադրա-միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Օգտագործման իրավունք	Ընդամենը
Սկզբնական արժեք/ Վերագնահատված արժեք								
Մնացորդը 31 Դեկտեմբրի 2019թ.	4,323,235	477,360	1,698,308	1,271,886	122,381	1,045,812	1,826,876	10,759,388
Ավելացումներ	3,796	279,098	43,354	163,989	10,530	73,589	17,942	592,298
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	(1,797)	(12,352)	-	(5,392)	(6,470)	(26,011)
Վերադասակարգումներ	**-**	**-**	3,811	(3,811)	**-**	**-**	**-**	**-**
Մնացորդը առ 31 Մարտի 2020թ.	4,327,031	756,458	1,743,676	1,419,712	132,911	1,114,009	1,838,348	11,332,145
Մաշվածություն և ամորտիզացիա								
Մնացորդը 31 Դեկտեմբրի 2019թ.	906,122	47,560	1,157,735	586,118	34,459	396,243	220,572	3,342,339
Մաշվածություն և ամորտիզացիա	21,026	5,717	47,234	42,724	3,476	39,709	55,244	215,130
Օտարումներ/դուրսգրումներ	**-**	**-**	**(1,797)**	**(8,653)**	**-**	**(5,392)**	**(6,470)**	**(22,312)**
Վերադասակարգումներ	-	-	32	(32)	-	-	-	-
Մնացորդը առ 31 Մարտի 2020թ.	**927,148**	**53,277**	**1,203,204**	**620,157**	**37,935**	**430,560**	**269,346**	**3,541,627**
Հաշվեկշռային արժեք								
Մնացորդը առ 31 Մարտի 2020թ.	*3,399,883*	*703,181*	*540,472*	*799,555*	*94,976*	*683,449*	*1,569,002*	*7,790,518*
Մնացորդը 31 Դեկտեմբրի 2019թ.	*3,417,113*	*429,800*	*540,573*	*685,768*	*87,922*	*649,569*	*1,606,304*	*7,417,049*

7

20. Բռնագանձված ակտիվներ

Գրավի տնօրինման արդյունքում առաջացած հիմնական միջոցներ	31/03/21թ. հազ. դրամ	31/12/20թ. հազ. դրամ
Այլ	10,474	15,622
Անշարժ գույք	2,433,632	2,469,303
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	**2,444,106**	**2,484,925**

Բռնագանձված ակտիվները ներառում են գրավի տնօրինման արդյունքում սեփականացված ակտիվներ:

21. Այլ ակտիվներ

	31/03/21թ. հազ. դրամ	31/12/20թ. հազ. դրամ
Կանխավճարներ	1,094,326	676,567
Նյութեր և պաշարներ	100,753	80,479
Կանխավճարներ այլ հարկերի գծով	105,033	151,920
Կանխավճարներ շահութահարկի գծով	108,915	103,697
Այլ	4,365,193	4,898,152
Ընդամենը	**5,774,220**	**5,910,815**
Այլ ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	(2,462,225)	(2,442,552)
Ընդամենը այլ ակտիվներ	**3,311,995**	**3,468,263**



Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

	31/03/21թ. հազ. դրամ	31/03/20թ. հազ. դրամ
Սկզբնական Մնացորդ /01 հունվարի /	2,442,552	2,607
Տարվա ծախս(հակադարձում)	(12,127)	(13,636)
Հետհաշվեկշիռ (դուրս գրում)/վերադարձ	31,800	13,920
Վերջնական մնացորդ Մնացորդ	**2,462,225**	**2,891**

22. Պարտավորություններ բանկերի նկատմամբ

	31/03/21թ. հազ. դրամ	31/12/20թ. հազ. դրամ
Վարկեր բանկերից	6,202,036	6,380,427
Ավանդներ բանկերից	4,588,998	3,376,187
Թղթակցային / լորո / հաշիվներ	103,068	67,255
Ռեպո համաձայնագ և այլ պարտավոր	18,099,246	21,277,380
Ընդամենը պարտավորություններ բանկերի նկատմամբ	**28,993,348**	**31,101,249**



23. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

	31/03/21թ. հազ. դրամ	31/12/20թ. հազ. դրամ
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
- Անհատներ	15,984,379	14,873,606
- Իրավաբանական անձինք	17,203,563	17,605,744
Ժամկետային ավանդներ		
- Անհատներ	39,952,993	37,929,956
- Իրավաբանական անձինք	13,319,873	10,623,827
Հետգնման պայմանագրերի դիմաց վճարվելիք գումարներ		
- Իրավաբանական անձինք	936,040	961,822
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**87,396,848**	**81,994,955**

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ



24. Այլ փոխառություններ

	31/03/21թ. հազ. դրամ	31/12/20թ. հազ. դրամ
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	1,815,616	1,798,662
Այլ փոխառություն		

	67,880	69,609
Ընդամենը այլ փոխառություններ	**1,883,496**	**1,868,271**



25. Բանկի կողմից թողարկված արժեթղթեր

	31/03/21թ. հազ. դրամ	31/12/20թ. հազ. դրամ
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր		
	13,629,830	13,416,535
Ընդամենը Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	**13,629,830**	**13,416,535**



26. Հետաձգված հարկային պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով:

հազ. դրամ	Մնացորդը առ 31 Դեկտեմբերի 2020թ.	Նախորդ տարիներին վերաբերվող հարկի ազդեցություն	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 Մարտի 2021թ.
Արժեթղթեր	(20,119)	-	1,711	(532)	(18,940)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	19,610	-	(12,591)	-	7,019
Հաճախորդներին տրված վարկեր	(963,493)	-	(13,818)	-	(977,311)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(22,058)	-	(8,426)	-	(30,484)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(294,916)	-	8,065	-	(286,851)
Այլ ակտիվներ	(120,307)	-	(11,567)	-	(131,874)
Վարձակալության գծով պարտավորություններ	294,916	-	-	-	294,916
Այլ պարտավորություններ	59,379	-	6,120	-	65,499
Հաջորդ տարի փոխանցված հարկային վնաս	(3,060)	-	-	-	(3,060)
	(1,050,048)	**-**	**(30,506)**	**(532)**	**(1,081,086)**

27. Այլ պարտավորություններ

	31/03/21թ. հազ. դրամ	31/12/20թ. հազ. դրամ
Մատակարարներին վճարվելիք գումարներ	253,784	234,050
Վարձակալության գծով պարտավորություն	1,616,682	1,569,373
Աշխատավարձ և նմանատիպ վճարներ	516,609	473,120
Վճարման ենթակա հարկեր, բացառությամբ շահութահարկի	100,354	136,053
Այլ	50,732	58,013

Ընդամենը	**3,339,038**	**3,235,611**
Այլ պահուստներ	1,255	2,452
Ընդամենը այլ պարտավորություններ	**3,340,293**	**3,238,063**



2019թ. Հունվարի 1-ից պարտադիր կիրառելի է ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» ստանդարտը: Այն փոխարինում է ՖՀՄՍ 17 «Վարձակալություն» ստանդարտին: Վարձակալական ակտիվները և պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են հաշվապահական հաշվեկշռում ապագա վարձակալական վճարների ներկա արժեքի չափով:
Բանկը՝ որպես վարձակալ, վարձակալված ակտիվների գծով ճանաչել է օգտագործման իրավունքի ակտիվ և վարձակալության գծով համապատասխան պարտավորություն:

28. Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

2021թ. Մարտի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 33,971,850 հազար դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 679,437 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 50,000 դրամ անվանական արժեքով:

2021թ. Մարտի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են

Բաժնետեր	Մասնակության չափը (հազար դրամ)	%
ՖԻՍԹՈՔՈ Էլ Թի Դի	20,275,550	59.68%
CreditBank S.A.L.	13,696,300	40.32%
Ընդամենը	**33,971,850**	**100%**

2021թ. Մարտի 31-ի դրությամբ դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

29. Պահուստների բնույթը և նպատակը

Շենքերի վերագնահատումից աճ

Շենքերի վերագնահատումից աճը ներառում է շենքերի վերագնահատված կուտակային դրական արժեքը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով:

30. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31/03/21թ. հազ. դրամ	31/12/20թ. հազ. դրա
Կանխիկ դրամական միջոցներ	6,129,909	6,812,304
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	11,530,440	12,619,434
Պահանջներ բանկերի նկատմամբ - նոստրո հաշիվներ	1,151,982	692,127
Ընդամենը	**18,812,331**	**20,123,865**



31. Վարկային պարտավորվածություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Այս պարտավորվածություններն իրենցից ներկայացնում են հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների գծով պարտավորվածություններ:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումն երրորդ անձանց հանդեպ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Վարկային պարտավորվածությունների, ֆինանսական երաշխավորությունների և ակրեդիտիվների հետ կապված Բանկը կիրառում է վարկային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք գործում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են վարկային պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն պայմանագրային պարտականությունները:

2021թ. Մարտի 31-ի դրությամբ և 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

	31/03/21թ. հազ. դրամ	31/12/20թ. հազ. դրամ
Պայմանագրային գումար		
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	545,578	394,998
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	2,156,559	3,265,059
Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ	3,793,765	3,648,645
Չօգտագործված օվերդրաֆտներ	3,786	26,797
Ընդամենը	**6,499,688**	**7,335,499**



32. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Այլ կապակցված կողմերը ներառում են Խորհրդի և Վարչության նշանակալից ազդեցության ներքո գտնվող կազմակերպությունները և Խորհրդի ու Վարչության անդամների ընտանիքների անդամներին:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլ գործարքներ:

Գործարքների ծավալները, մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2021 թ. Մարտի 31-ի դրությամբ		2020 թ. Մարտի 31-ի դրությամբ	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	**Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր**	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվությունում				
Ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	-	**395,438**	-	295,603
Ժամանակաշրջանի ընթացքում տրամադրված	-	**91,650**	-	126,361
Ժամանակաշրջանի ընթացքում մարված		**(76,825)**		(111,963)
Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ	-	**410,263**	-	310,001
Արժեզրկման պահուստ	-	**(3,384)**	-	(1,068)
Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ	-	**406,879**	-	308,933

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	**44**	**-**	1,092	-
Մուտքեր	**3**	**-**	58,563	-
Ելքեր	**(3)**	**-**	(59,615)	-
Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**44**	**-**	40	-
Պարտավորություններ				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	**65,462**	**-**	103,377	-
Ժամանակաշրջանի ընթացքում ստացված ավանդներ	**7**	**-**	3,463	-
Ժամանակաշրջանի ընթացքում մարված ավանդներ	**(9)**	**-**	(41,390)	-
Ավանդներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**65,460**	**-**	65,450	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	**5,013**	**235,293**	35,704	206,315
Ժամանակաշրջանի ընթացքում ստացված ավանդներ	**153,923**	**612,908**	44,419	447,463
Ժամանակաշրջանի ընթացքում մարված ավանդներ	**(157,103)**	**(341,769)**	(50,501)	(490,693)
Ավանդներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**1,833**	**506,432**	29,622	163,085
Թողարկված պարտքային արժեթղթեր				
Արժեթղթեր հունվարի 1-ի դրությամբ	**-**	**139,028**	-	174,844
Ժամանակաշրջանի ընթացքում իրացված(մարված) արժեթղթեր	**-**	**26,118**	-	73,405
Արժեթղթեր ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**-**	**165,146**	-	248,249

Ղեկավար անձնակազմի զծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ

	01/01/2021թ. – 31/03/2021թ.	01/01/2020թ. – 31/03/2020թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	112,507	120,335
Ընդամենը Ղեկավար անձնակազմի զծով կատարված փոխհատուցումներ	**112,507**	**120,335**

33. Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է հիմնական ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների։

31/03/21	Մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 5-տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	ժամկետանց	Ընդամենը
	հազ. դրամ	*հազ. դրամ*	*հազ. դրամ*	*հազ. դրամ*	*հազ. դրամ*	*հազ. դրամ*	*հազ. դրամ*	*հազ. դրամ*
Ակտիվներ								
Կանխիկ դրամական միջոցներ	6,129,909	-	-	-	-	-	-	**6,129,909**
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	11,530,440	-	-	-	-	285,000	-	**11,815,440**
Պահանջներ բանկերի նկատմամբ	8,757,260	-	-	212,468	-	-	-	**8,969,728**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	4,211	-	-	-	-	-	-	**4,211**
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,435,116	-	-	-	-	-	-	**6,435,116**
Հաճախորդներին տրված վարկեր	5,679,467	8,822,687	15,289,966	55,865,306	18,074,329	-	340,513	**104,072,268**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	-	267,557	-	5,557,439	2,449,807	313,506	-	**8,588,309**
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	1,798,785	-	-	6,172,325	13,170,221	-	-	**21,141,331**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	8,324,183	-	**8,324,183**
Բռնագանձված ակտիվներ	-	-	-	-	-	2,444,106	-	**2,444,106**
Այլ ակտիվներ	3,269,820	-	1,430	-	-	-	40,745	**3,311,995**
Ընդամենը ակտիվներ	**43,605,008**	**9,090,244**	**15,291,396**	**67,807,538**	**33,694,357**	**11,366,795**	**381,258**	**181,236,596**

Ռիսկի կառավարում

7.1 Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի բանկային գործունեության համար և կազմում է Բանկի գործառնությունների կենսական տարրը: Ֆինանսական ռիսկը, շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, գործառնական և իրավական ռիսկերը և համբավը վտանգող ռիսկն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող արտադրանքն ու ծառայությունների և ընդունված լավագույն պրակտիկան արտացոլելու նպատակով: Բանկը մշակել է նշանակալի ռիսկերի և կապիտալի մասին հաշվետվությունների ներկայացման համակարգ:

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար:

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Բանկի գործունեության իրականացումն ապահովելու համար: Ռիսկերի կառավարման վարչության ղեկավարը պատասխանատու է ռիսկերի

ընդհանուր կառավարման և սահմանված պահանջների հետ համապատասխանության ապահովման, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն Վարչության նախագահին և անուղղակիորեն՝ Բանկի Խորհրդին: Ռիսկերի կառավարման վարչությունը չի ենթարկվում և հաշվետու չէ համապատասխան ռիսկերն ընդունող բաժիններին:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի միջոցով և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության տեսակից և չափից:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի ներսում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը: Բացի պարտքային և շուկայական ռիսկերի ստանդարտ վերլուծություն իրականացնելուց, Ռիսկերի կառավարման վարչությունը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական բաժինների հետ՝ նրանց գործունեության համապատասխան ոլորտների հետ կապված մասնագիտական դատողություններ ստանալու համար:

Բանկի ներքին փաստաթղթերի համաձայն՝ Ռիսկերի կառավարման վարչությունը և ներքին աուդիտի ծառայությունը հաճախ պատրաստում են Բանկի նշանակալի ռիսկերի կառավարմանն անդրադարձող հաշվետվություններ: Հաշվետվությունները ներառում են դիտարկումներ Բանկի ընթացակարգերի և մեթոդաբանության

արդյունավետության գնահատման վերաբերյալ և առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ:

7.2 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար, ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ստեղծումը՝ պարտքային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական անձանց և անհատների) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական վերահսկման ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող մենեջերների կողմից և փոխանցվում են Վարկային բաժին, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի

գործունեության կառուցվածքային վերլուծության և ֆինանսական արդյունքների վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման բաժնի կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկի դիմումը՝ Կորպորատիվ վարկերի բաժնի և Ռիսկերի կառավարման բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Բանկի իրավաբանական, հաշվապահական հաշվառման և հարկային բաժինների կողմից՝ կախված ռիսկերի առանձնահատկություններից:

Բանկը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Անհատների վարկային դիմումներն ուսումնասիրվում են Անհատական վարկավորման ծառայությունների բաժնի կողմից՝ կիրառելով Ռիսկերի կառավարման բաժնի հետ համատեղ մշակած գնահատման մոդելները և դիմումների տվյալների ստուգման ընթացակարգերը:

Բացի առանձին վարկերի վերլուծությունից, Ռիսկերի կառավարման բաժինը վարկային պորտֆելը գնահատում է պարտքային ռիսկի կենտրոնացվածության և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

7.3 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ

փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը: Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են ԱՊԿԿ-ի կողմից՝ Ռիսկերի կառավարման վարչության առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների գծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտարժույթի դիրքեր և կորուստների սահմանաչափեր, որոնք կանոնավոր կերպով մշտադիտարկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Վարչության կողմից:

7.4 Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Բանկը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

7.5 Արտարժույթի ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուսական ռուբլի	Այլ արտարժույթ	Ընդամենը

	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Ակտիվներ						
Կանխիկ դրամական միջոցներ	2,059,069	2,835,212	675,451	484,678	75,499	***6,129,909***
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	5,634,543	5,848,429	332,468	-	-	***11,815,440***
Պահանջներ բանկերի նկատմամբ	28,916	2,856,989	5,945,812	126,241	11,770	***8,969,728***
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	4,211	-	-	-	-	***4,211***
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,392,430	-	42,686	-	-	***6,435,116***
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	64,080,282	25,791,884	12,063,475	2,136,627	-	***104,072,268***
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆին արդ չափ ակտիվներ	4,400,616	4,187,693	-	-	-	***8,588,309***
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆին ակտիվներ	16,697,936	2,752,034	1,691,361	-	-	***21,141,331***
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	8,324,183	-	-	-	-	***8,324,183***
Բռնագանձված ակտիվներ	2,444,106	-	-	-	-	***2,444,106***
Այլ ակտիվներ	2,965,293	286,909	25,831	33,962	-	***3,311,995***
Ընդամենը՝ ակտիվներ	**113,031,585**	**44,559,150**	**20,777,084**	**2,781,508**	**87,269**	***181,236,596***

Արտարժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում: Թեև Բանկը հեջավորում է իր

ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին, այս գործունեությունը չի որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն ՖՀՄՍ պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2021թ. Մարտի 31-ի դրությամբ:

Պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	17,804,066	5,658,550	4,929,586	601,146	-	***28,993,348***
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	48,215,409	34,790,729	3,343,313	1,031,660	15,737	***87,396,848***
Այլ փոխառություններ	1,877,614	5,882	-	-	-	***1,883,496***
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	2,392	-	-	-	-	***2,392***
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	253,507	13,376,323	-	-	-	***13,629,830***
Հետաձգված հարկային պարտավորություններ	1,081,086	-	-	-	-	***1,081,086***
Այլ պարտավորություններ	**2,858,867**	**479,785**	**1,605**	**36**	**-**	***3,340,293***
Ընդամենը՝ պարտավորություններ	**72,092,941**	**54,311,269**	**8,274,504**	**1,632,842**	**15,737**	***136,327,293***
Զուտ հաշվեկշռային դիրք առ 31 Մարտի 2021թ.	**40,938,644**	**(9,752,119)**	**12,502,580**	**1,148,666**	**71,532**	**44,909,303**

	ՀՀ դրամ հազ. դրամ	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Ռուսական ռուբլի հազ. դրամ	Այլ արժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Ակտիվներ						
Կանխիկ դրամական միջոցներ	3,629,452	767,213	559,737	1,822,956	32,946	***6,812,304***
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	7,354,424	5,466,852	531,658	-	-	***13,352,934***
Պահանջներ բանկերի նկատմամբ	12,760	3,658,203	6,243,930	256,778	20,914	***10,192,585***
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	2,817	-	-	-	-	***2,817***
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	5,974,316	23,652	41,239	-	-	***6,039,207***
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	58,753,352	25,672,483	11,327,176	1,674,540	-	***97,427,551***
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆին արդ չափ ակտիվներ	4,361,778	4,122,312	-	-	-	***8,484,090***
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆին ակտիվներ	16,182,835	2,759,674	1,723,352	-	-	***20,665,861***
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	8,199,508	-	-	-	-	***8,199,508***
Բռնագանձված ակտիվներ	2,484,925	-	-	-	-	***2,484,925***
Այլ ակտիվներ	2,962,563	455,975	8,317	41,408	-	***3,468,263***
Ընդամենը՝ ակտիվներ	**109,918,730**	**42,926,364**	**20,435,409**	**3,795,682**	**53,860**	***177,130,045***

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Պարտավորություններ					
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	17,465,586	9,014,024	4,349,091	272,548	-

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	46,311,427	31,164,207	3,194,622	1,311,668	13,031
Այլ փոխառություններ	1,861,878	6,393	-	-	-
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	21,857	-	-	-	-
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	253,573	13,162,962	-	-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	1,050,048	-	-	-	-
Այլ պարտավորություններ	2,746,568	489,135	1,264	1,096	-
Ընդամենը՝ պարտավորություններ	**69,710,937**	**53,836,721**	**7,544,977**	**1,585,312**	**13,031**
Զուտ հաշվեկշռային դիրք առ 31 Դեկտեմբերի 2020թ.	**40,207,793**	**(10,910,357)**	**12,890,432**	**2,210,370**	**40,829**

7.6 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:
Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է թողարկվող պարտքային արժեթղթերը, այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական կորպորատիվ հաճախորդների և անհատների ավանդները, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու արդյունավետ բավարարելու նպատակով:
Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքերի ֆինանսավորման ծրագրերի ապահովում,
- բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման ծրագրերի անընդհատության ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Գանձապետարանը գործարար ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը

ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակներով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում: Գանձապետարանը վերահսկում է իրացվելիության դիրքն օրական կտրվածքով և իրականացնում է կանոնավոր «սթրես թեստերը» իրացվելիության գծով՝ շուկայի սովորական և ավելի խիստ պայմանների տեսանկյունից: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Գանձապետարանի կողմից:

7.7 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից: Բանկը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ առևտրային բանկերի համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները:
2020թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշի («կապիտալի համարժեքության ցուցանիշ») նվազագույն մակարդակը կազմում էր 12% (2020թ-ին՝ 12%): 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. Մարտի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված մակարդակին:
Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի համարժեքության ցուցանիշը:

	Մարտ 2021թ.	Դեկտեմբեր 2020թ.

Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)	**23.70%**	**25.02%**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած ընդունելի գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

7.8 Պայմանական դեպքեր

7.9 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Բանկի գույքն ապահովագրված և Բանկն ունի Բանկերս Բլանկետ Բոնդ (Banker's Blanket Bond (BBB)) ապահովագրության պայմանագիր:

7.10 Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ

պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:
Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 9
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 10
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 11
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 12
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 13

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի Բաժնետերերին և Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (*ՀԷՄՄԽ կանոնագիրք*) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՄԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցեր են հանդիսանում այն հարցերը, որոնք ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի էին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Մենք անդրադարձել ենք այս հարցերին ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընդհանուր շրջանակում և վերջիններիս վերաբերյալ մեր կարծիքը ձևավորելիս և չենք արտահայտում առանձին կարծիք այս հարցերի վերաբերյալ:

Հաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստներ	
Տեղեկատվությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 25-ի (բ) կետում և Ծանոթագրություն 15-ում:	
Աուդիտի առանցքային հարց	**Աուդիտի առանցքային հարցի հետ կապված իրականացված աուդիտորական ընթացակարգեր**
Հաճախորդներին տրված վարկերը կազմում են ընդհանուր ակտիվների ավելի քան 50%-ը և ներառում են ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը, որը կանոնավոր հիմունքով գնահատվում է և զգայուն է կիրառվող ենթադրությունների նկատմամբ: Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման մոդելը ղեկավարությունից պահանջում է կատարել մասնագիտական դատողություններ և ենթադրություններ հետևյալ առանցքային հարցերի հետ կապված. – պարտքային ռիսկի նշանակալի աճի և պարտազանցման դեպքերի ժամանակին բացահայտում հաճախորդներին տրված վարկերի հետ կապված (բաշխում 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի միջև՝ ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* (այսուհետ՝ ՖՀՄՍ 9) համաձայն), – պարտազանցում տեղի ունենալու հավանականության և պարտազանցման դեպքում առաջացող կորստի գնահատում, – լրացուցիչ ճշգրտման գնահատում՝ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու հետ կապված; – ակնկալվող դրամական հոսքերի, այդ թվում՝ գրավի իրացումից ակնկալվող	Մենք վերլուծել ենք ակնկալվող պարտքային կորուստների գնահատմանը վերաբերող Բանկի մեթոդաբանության և քաղաքականության առանցքային դրույթները ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ համապատասխանության տեսանկյունից՝ գործընթացում ներգրավելով նաև ֆինանսական ռիսկերի կառավարման գծով մասնագետներին: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման հետ կապված ղեկավարության կողմից կատարված մասնագիտական դատողությունների և ենթադրությունների տեղին լինելը վերլուծելու համար մենք իրականացրել ենք հետևյալ աուդիտորական ընթացակարգերը. – իրավաբանական անձանց տրված վարկերի համար գնահատել և ստուգել ենք վարկերի փուլերի միջև բաշխումը վերահսկող համակարգի կառուցվածքը, աշխատանքը և գործառնական արդյունավետությունը: – իրավաբանական անձանց տրված վարկերի ընտրանքի համար ստուգել ենք, թե արդյոք փուլերը ճիշտ են որոշված Բանկի կողմից՝ վերլուծելով ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվությունը, ինչպես նաև Բանկի կողմից կատարված ենթադրությունները և մասնագիտական դատողությունները. – իրավաբանական անձանց տրված վարկերի ընտրանքի համար ստուգել ենք պարտազանցման հավանականության և պարտազանցման դեպքում կորստի գումարի հաշվարկի ելակետային տվյալների ճշգրտությունը: – 3-րդ փուլի վարկերի ընտրանքի համար,

դրամական հոսքերի կանխատեսում 3-րդ փուլ դասված հաճախորդներին տրված վարկերի համար: Բացի այդ, Բանկն ունի հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պորտֆել, որոնց պայմանները փոխվել են պայմանավորված COVID-19 հետևանքներով, ինչը լրացուցիչ բարդություն է ստեղծում պարտքային ռիսկի նշանակալի աճի բացահայտման հետ կապված: Հաճախորդներին տրված վարկերի մեծ ծավալի և ակնկալվող պարտքային կորուստների ժամկետների և գումարների գնահատման բարդության և սուբյեկտիվության պատճառով, այս հարցը դիտարկվում է որպես աուդիտի առանցքային հարց:	որոնց դեպքում ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են անհատական հիմունքով, գնահատել ենք ապագա դրամական հոսքերի կանխատեսման համար Բանկի կողմից կիրառված ենթադրությունները, ներառյալ իրացվելի գրավի գծով մուտքերի գնահատումը և գրավի իրացման ակնկալվող պայմանները՝ հիմք ընդունելով մեր պատկերացումները և շուկայում հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը: Մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել հաճախորդներին տրված այն վարկերի վրա, որոնք ըստ հավանականության կարող են առավելագույնս նշանակալի ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա: – Ֆիզիկական անձանց տրված վարկերի համար ստուգել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մոդելների ելակետային տվյալների ամբողջականությունը և ճշգրտությունը վերահսկող համակարգի կառուցվածքը և գործառնական արդյունավետությունը, վարկերի գծով վճարումների ուշացումների և մարումների ժամանակին արտացոլումը համապատասխան համակարգերում և վարկերի բաշխումը փուլերի միջև: Բացի այդ, մենք գնահատել ենք Բանկի կողմից COVID-19 հետևանքով հաճախորդներին վարկային արձակուրդ տրամադրելու ողջամտությունը՝ պարտքային ռիսկի նշանակալի աճի տեսանկյունից: Համեմատել ենք ելակետային տվյալները հիմնավորող փաստաթղթերի տվյալների հետ ընտրանքային կարգով: – իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված համար վարկերի համար, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են խմբային հիմունքով, մենք ստուգել ենք համապատասխան մոդելների ճշգրտությունը և համադրել ենք մոդելի ելակետային տվյալներն առաջնային աղբյուրների տվյալների հետ ընտրանքային կարգով: – գնահատել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի Բանկի մեթոդաբանության կանխատեսման կարողությունը՝ համեմատելով 2020թ.

	հունվարի 1-ի դրությամբ կատարած գնահատումները 2020թ. փաստացի արդյունքների հետ: – գնահատել ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունների բացահայտումներն ըստ պատշաճի արտացոլում են Բանկի ենթարկվածությունը պարտքային ռիսկին: Բացի այդ, դիտարկել ենք, թե արդյոք հիմնական դատողությունների և ենթադրությունների բացահայտումները, այդ թվում՝ COVID-19-ի վերաբերյալ, բավականաչափ տեղեկատվական էին:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է տարեկան հաշվետվությունում պարունակվող տեղեկատվությունը, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունը:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր եզրակացությունը չի անդրադառնում այլ տեղեկատվությանը, և մենք չենք արտահայտի որևէ հավաստիացում այդ տեղեկատվության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պատասխանատվությունն է ծանոթանալ այլ տեղեկատվությանը և այդ տեղեկատվությանը ծանոթանալիս դիտարկել, թե արդյոք այլ տեղեկատվությունն էականորեն չի համապատասխանում ֆինանսական հաշվետվություններին կամ աուդիտի ընթացքում մեր կողմից ձեռք բերված տեղեկատվությանը կամ կարող է այլ կերպ էականորեն խեղաթյուրված լինել:

Եթե, հիմք ընդունելով մեր կողմից իրականացված աշխատանքը, մենք եզրահանգում ենք, որ այլ տեղեկատվությունն էականորեն խեղաթյուրված է, մենք պարտավոր ենք տեղեկացնել այդ փաստի մասին: Մենք չենք բացահայտել որևէ փաստ, որի մասին պետք է տեղեկացնենք այս կապակցությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե առկա չէ ղեկավարության՝ Բանկը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ

կհայտնաբերվի էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա.

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև՝

– հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու համար և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

– պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընացակարգեր նախագծելու, և ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

– գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

– եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

– գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձություններն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող

նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տրամադրում ենք նաև հավաստիացում, որ պահպանել ենք անկախությանը վերաբերող էթիկայի պահանջները և տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և կիրառելի լինելու դեպքում, ռիսկերը վերացնելու կամ անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տեղեկացված հարցերից մենք ընտրում ենք այն հարցերը, որոնք առավել նշանակալի էին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք ներկայացնում ենք այս հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող նորմերով արգելվում է հարցի հրապարակային բացահայտումը, կամ երբ խիստ հազվագյուտ դեպքերում, մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացնել աուդիտորական եզրակացությունում, քանի որ ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ըստ ողջամիտ ակնկալիքների կարող են գերակշռել ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Իրինա Գևորգյան
Գործընկեր

Տիգրան Գասպարյան
Տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
30 ապրիլի 2021թ.

	Ծնթգ.	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	4	13,491,380	12,325,560
Տոկոսային ծախս	4	(5,265,928)	(4,691,954)
Զուտ տոկոսային եկամուտ		**8,225,452**	**7,633,606**
Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ	5	1,577,052	891,540
Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս	5	(1,681,729)	(797,076)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ (ծախս)/եկամուտ		**(104,677)**	**94,464**
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	6	935,793	1,226,290
Զուտ վնաս իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող այլ ֆինանսական գործիքների գծով		(344,236)	(550,515)
Զուտ իրացված օգուտ ներդրումային արժեթղթերի գծով		1,299,081	1,324
Զուտ այլ գործառնական եկամուտ	7	406,284	671,419
Գործառնական եկամուտ		**10,417,697**	**9,076,588**
Զուտ արժեզրկումից կորուստներ ֆինանսական գործիքների գծով	8	(2,176,258)	(136,539)
Անձնակազմի գծով ծախսեր		(3,627,125)	(3,326,719)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	9	(2,917,238)	(2,469,057)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		**1,697,076**	**3,144,273**
Շահութահարկի գծով ծախս	10	(525,614)	(588,765)
Շահույթ տարվա համար		**1,171,462**	**2,555,508**
Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ՝ առանց շահութահարկի			
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.			
– իրական արժեքի զուտ փոփոխություն	10	607,361	737,063
– շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	10	(1,065,246)	(1,059)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս		*(457,885)*	*736,004*
Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ տարվա համար՝ առանց շահութահարկի		**(457,885)**	**736,004**
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		**713,577**	**3,291,512**

9-ից 99-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2021թ. ապրիլի 29-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Միհր Աբրահամյան
Վարչության նախագահ

Անուշիկ Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ

	Ծնթգ.	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	17,217,615	14,337,037
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	12		
– Բանկի կողմից պահվող		6,040,756	6,502,509
– Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		2,443,334	2,260,311
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	12		
– Բանկի կողմից պահվող		6,606,680	11,270,882
– Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		14,059,182	11,829,493
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		-	4,312
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	13	17,819,238	10,305,167
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	14	6,039,207	4,767,263
Հաճախորդներին տրված վարկեր	15	94,522,560	77,379,245
Ընթացիկ հարկային ակտիվ		-	99,786
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	16	6,722,661	5,810,745
Օգտագործման իրավունքի ձևի ակտիվ	17	1,493,835	1,606,304
Առգրավված ակտիվներ	15	2,484,925	1,476,007
Այլ ակտիվներ	18	1,480,526	2,407,470
Ընդամենը ակտիվներ		**176,930,519**	**150,056,531**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		19,040	-
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	19	26,812,253	20,129,742
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	20	20,785,812	16,292,695
Թողարկված պարտքային արժեթղթեր	21	13,416,535	6,700,803
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	22	66,773,517	58,819,120
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	1,011,619	1,389,630
Վարձակալության գծով պարտավորություն	17	1,542,646	1,638,420
Ընթացիկ հարկային պարտավորություններ		661,306	-
Այլ պարտավորություններ	23	1,638,580	1,530,487
Ընդամենը պարտավորություններ		**132,661,308**	**106,500,897**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	24	33,971,850	33,971,850
Էմիսիոն եկամուտ		5,014,099	5,014,099
Շենքերի վերագնահատումից աճ		105,601	110,808
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ		385,096	842,981
Չբաշխված շահույթ		4,792,565	3,615,896
Ընդամենը սեփական կապիտալ		**44,269,211**	**43,555,634**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**176,930,519**	**150,056,531**

	Ծնթգ.	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Ստացված տոկոսներ		13,423,198	11,807,607
Վճարված տոկոսներ		(5,483,882)	(4,300,316)
Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ		1,577,052	891,540
Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ		(1,681,729)	(797,076)
Զուտ վճարումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով		(320,641)	(556,359)
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից		368,566	848,241
Այլ ստացված եկամուտ		411,491	526,668
Աշխատակազմի գծով ծախսերի և այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ		(5,613,721)	(4,957,374)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		(1,269,114)	(1,337,205)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ		(6,197,277)	2,735,830
Հաճախորդներին տրված վարկեր		(16,056,000)	(15,669,226)
Այլ ակտիվներ		779,927	(695,093)
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)			
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ		6,180,007	13,645,608
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		3,685,688	9,545,547
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		4,955,856	2,913,084
Այլ պարտավորություններ		149,034	215,094
Գործառնական գործունեության համար (օգտագործված)/ գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը		**(5,091,545)**	**14,816,570**
Վճարված շահութահարկ		(18,000)	-
Գործառնական գործունեության համար (օգտագործված)/ գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր		**(5,109,545)**	**14,816,570**
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(2,508,324)	(8,368,271)
Մուտքեր ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից		6,141,496	2,737,112
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(1,710,632)	(1,980,597)
Ստացված շահաբաժիններ		-	144,751
Ներդրումային գործունեությունից ստացված/ներդրումային գործունեության համար (օգտագործված) դրամական հոսքեր		**1,922,540**	**(7,467,005)**
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Մուտքեր պարտքային արժեթղթերի թողարկումից	21	5,708,144	4,252,464
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	21	-	(8,207,150)
Վարձակալության գծով պարտավորության մարում	17	(290,591)	(282,238)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ֆինանսավորման գործունեության համար (օգտագործված) դրամական հոսքեր		**5,417,553**	**(4,236,924)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**2,230,548**	**3,112,641**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		654,234	(37,750)
Ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(4,204)	1,390
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ		14,337,037	11,260,756
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	11	**17,217,615**	**14,337,037**

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Շենքերի վերագնահատումից աճ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	33,971,850	5,014,099	110,808	106,977	1,060,388	40,264,122
Ընդամենը համապարփակ եկամուտ						
Շահույթ տարվա համար	-	-	-	-	2,555,508	2,555,508
Այլ համապարփակ եկամուտ						-
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս						
– Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	737,063	-	737,063
– Շահույթ կամ վնաս փոխանցված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	(1,059)	-	(1,059)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	-	*736,004*	-	*736,004*
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	-	**736,004**	-	**736,004**
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	-	**736,004**	**2,555,508**	**3,291,512**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**33,971,850**	**5,014,099**	**110,808**	**842,981**	**3,615,896**	**43,555,634**
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	33,971,850	5,014,099	110,808	842,981	3,615,896	43,555,634
Ընդամենը համապարփակ եկամուտ						
Շահույթ տարվա համար	-	-	-	-	1,171,462	1,171,462
Այլ համապարփակ վնաս						
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս						
– Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	607,361	-	607,361
– Շահույթ կամ վնաս փոխանցված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	(1,065,246)	-	(1,065,246)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	-	*(457,885)*	-	*(457,885)*
Հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս						
Վերագնահատված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք	-	-	(5,207)	-	5,207	-
Ընդամենը հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս	-	-	*(5,207)*	-	5,207	-
Ընդամենը այլ համապարփակ վնաս	-	-	**(5,207)**	**(457,885)**	**5,207**	**(457,885)**
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	**(5,207)**	**(457,885)**	**1,176,669**	**713,577**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**33,971,850**	**5,014,099**	**105,601**	**385,096**	**4,792,565**	**44,269,211**

1 Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն (Բանկ) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 1990թ-ին և վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության 2007թ-ին: Նախկինում Բանկն իր գործունեությունն իրականացրել է «Անելիք Բանկ» ՓԲԸ անվանմամբ: 2018թ. հունիսին Բանկը վերանվանվել է «Այդի Բանկ» ՓԲԸ-ի:

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկային գործառնությունների իրականացումը, երաշխավորությունների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով և արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական համակարգի անդամ է:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վարդանանց փ. 13:

Բանկն ունի 13 մասնաճյուղ: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկի բաժնետերերն են FISTOCO LTD (59.68%) և Creditbank SAL (40.32%): Բանկի վերջնական վերահսկող անձն է պրն. Վարդան Դիլանյանը:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 29-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

COVID-19 համավարակը, Լեռնային Ղարաբաղում 2020թ. սեպտեմբերին վերսկսված զինված հակամարտության հետ մեկտեղ, հանգեցրեցին տնտեսության անկմանը: Այնուամենայնիվ, հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ և COVID-19 վիճակագրական տվյալների դրական միտումները թույլ տվեցին կառավարությանը վերաբացել տնտեսական գործունեությունը, շատ քիչ սահմանափակումներով՝ տեղիք տալով դրական ակնկալիքների:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության հավաստում

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով, և վերագնահատված արժեքով հաշվառվող շենքերի:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական ակտիվների դասակարգում. այն բիզնես մոդելի գնահատում, որի շրջանակում պահվում են ակտիվները, և գնահատում, արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 3 (ե) (i):
- չափանիշների սահմանում որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող

պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն և հաստատում – Ծանոթագրություն 25 (բ):

Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական գործիքների արժեզրկում. որոշել ելակետային տվյալներն ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելի համար, այդ թվում՝ ապագայամետ տեղեկատվության ներառումը – Ծանոթագրություն 25 (բ),
- ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի գնահատում – Ծանոթագրություն 30,
- շենքերի վերագնահատում – Ծանոթագրություն 16,
- առգրավված ակտիվների արժեզրկման գնահատում – Ծանոթագրություն 15:

(ե) Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի փոփոխություններ

2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ են գործող ստանդարտների մի շարք փոփոխություններ, որոնք սակայն նշանակալի ազդեցություն չունեն Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է Բանկի կողմից այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են ՀՀ դրամի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ՀՀ դրամի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների ու վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերահաշվարկից

առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված փոխարժեքային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքներ են կանխիկ դրամական միջոցները և ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): ՀՀ ԿԲ-ում պահվող պարտադիր պահուստային ավանդը չի համարվում դրամական միջոցների համարժեք, քանի որ դրանից միջոցների ելքագրումը սահմանափակված է: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույք

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի գծով ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը: Գործարքի գծով ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտաքային կորուստների գծով պահուստով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ճշգրտումը:

Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լողացող դրույքով գործիքների դրամական հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական դրույքների փոփոխություններն արտացոլելու նպատակով: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է նաև իրական արժեքի հեջի ճշգրտումներն արտացոլելու համար այն ամսաթվի դրությամբ, երբ սկսվում է համապատասխան ճշգրտման ամորտիզացիայի հաշվարկը:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է:

Տեղեկատվությունն այն մասին, թե որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում պարտքային առումով արժեզրկված, ներկայացված է Ծանոթագրություն 3 (ե) (vi) կետում:

Ներկայացում

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկած տոկոսային եկամուտը ներառում է՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

(դ) Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում (տես Ծանոթագրություն 3 (գ)):

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և վարկի սինդիկացման միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական ակտիվներ

i. Դասակարգում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով օգուտները և կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչ որ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը և կորուստները.

- արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ,
- ակնկալվող պարտքային կորուստ և հակադարձումներ և
- արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ և վնասներ:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական

արդյունքում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Այս բաժնային գործիքների գծով օգուտները և կորուստները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահաբաժինն ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում է այլ համապափակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապափակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտները և կորուստները փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

– պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, ապահովել տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:

- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Բանկի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա):
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես մեկ ընդհանուր վերլուծության մաս առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Բանկի առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվներ վաճառելու համար:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Բանկը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դիտարկումը ներառում է այն գնահատումը, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այս պայմանը: Գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,

- պայմանները, որոնք սահմանափակում են Բանկի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածությունների), և
- հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերաբար վերասահմանումը:

Առանց ռեգրեսի իրավունքի վարկեր

Որոշ դեպքերում Բանկի կողմից տրամադրված վարկերը, որոնք ապահովված են փոխառուի գրավով, սահմանափակում են Բանկի պահանջը հիմքում ընկած գրավից առաջացող դրամական հոսքերով (առանց ռեգրեսի իրավունքի վարկեր): Բանկը կիրառում է դատողություն գնահատելու համար, թե արդյոք առանց ռեգրեսի իրավունքի վարկերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ: Այս դատողությունը կատարելիս Բանկը որպես կանոն դիտարկում է հետևյալ տեղեկատվությունը.

- արդյոք պայմանագիրը սահմանում է վարկի գծով դրամական վճարումների հստակ գումարները և ժամկետները,
- գրավի իրական արժեքն ի համեմատություն գրավով ապահովված ֆինանսական ակտիվի գումարի,
- պայմանագրով նախատեսված վճարումները կատարելու փոխառուի կարողությունը և ցանկությունը, չնայած գրավի արժեքի նվազմանը,
- արդյոք փոխառուն հանդիսանում է ֆիզիկական անձ կամ գործառնական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ հատուկ նշանակության կազմակերպություն,
- ակտիվի գծով վնաս կրելու Բանկի ռիսկն ի համեմատություն ամբողջությամբ վերադարձելի վարկի,
- որքանով է գրավը ներկայացնում փոխառուի բոլոր ակտիվները կամ դրանց գերակշռող մասը, արդյոք Բանկն օգուտ կստանա հիմքուն ընկած ակտիվների արժեքի աճից:

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների, դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

ii. Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ կորստի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ, ինչպես բացատրվում է Ծանոթագրություն 3 (ե) (i) կետում: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, և պահպանում է ակտիվի նկատմամբ հսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն

այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով, որն այն չափն է, որով Բանկը ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

iii. Հետգնման և հակադարձ վաճառքի պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում՝ «փոխառություններ և բանկերի այլ մնացորդներ» հոդվածում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հետադարձ վաճառքի պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ՝ «բանկերին տրված վարկեր» հոդվածում: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառքի պայմանագրով ձեռք բերված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:.

iv. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն այն և միայն այն դեպքում, երբ Բանկը տվյալ պահին ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ: Բանկը տվյալ պահին ունի հաշվանցում կատարելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, եթե այդ իրավունքը կախված չէ ապագա դեպքերից և իրագործելի է թե՛ բնականոն գործունեության և թե՛ Բանկի ու բոլոր պայմանագրային կողմերի կողմից պարտազանցման, լուծարման կամ սնանկացման դեպքում:

v. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Բանկը գնահատում է, արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները: Որպես փոփոխության մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ.

- վճարները, որոնք դիտարկվում են նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարները, որոնք իրենցից ներկայացվում են պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ,
- մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վնասում՝ որպես ապաճանաչումից օգուտի կամ կորուստի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ Բանկի կողմից տոկոսադրույքների փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով Բանկն իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Բանկը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը կիրառում է կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,

– ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը:

Եթե դրամական հոսքերի փոփոխությունը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն փոփոխության նպատակն է առավելագույն չափով հետ ստանալ/վերականգնել ակտիվը պայմանագրի սկզբնական պայմաններով, այլ ոչ՝ սկզբնավորել նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Բանկը մտադիր է այնպես փոփոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դուրսգրվի նախքան փոփոխությունը կատարելը (տես՝ ստորև դուրսգրման քաղաքականություն): Այս մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապաճանաչման չափանիշները միշտ չէ որ բավարարվում են նման դեպքերում: Բանկն իրականացնում է նաև որակական գնահատում գնահատելու համար փոփոխության նշանակալի լինելը:

Եթե ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես փոփոխումից օգուտ կամ կորուստ շահույթում կամ վնասում: Լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Փոփոխման շրջանակում ցանկացած կրած ծախսում կամ վճար կամ ստացված վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Եթե նման փոփոխությունն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ:

Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն հնարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Բանկը հաշվառում է տոկոսադրույքի փոփոխությունը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր փոփոխված ֆինանսական պարտավորությունը:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության փոփոխությունը չի բավարարում ապաճանաչման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, զեղչելով փոփոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացորդային ժամանակահատվածում: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական պարտավորության մնացորդային ժամանակահատվածում գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

vi. Արժեզրկում

Տես նաև Ծանոթագրություն 25 (բ):

Բանկը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հետևյալ ֆինանսական գործիքների համար.

- պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր և
- փոխատվության հանձնառություններ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում:

Բանկը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորստներին հավասար գումարով.

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ամսաթվի դրությամբ և
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր (տես՝ Ծանոթագրություն 25 (բ)):

Բանկը չի կիրառում ցածր պարտաքային ռիսկի հետ կապված ազատումը որևէ ֆինանսական գործիքի համար:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժակետում պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ:

Ակնկալվող պարտքային կորստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են և չափվում է հետևյալ կերպ.

- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ*. որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան Բանկին հասանելիք դրամական հոսքերի և Բանկի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է),
- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ*. որպես համախառն հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերություն,
- *չօգտագործված փոխատվության հանձնառություններ*. որպես հետևյալ նշվածների միջև տարբերության ներկա արժեք՝ պայմանագրային դրամական հոսքերի, որոնք ենթակա են վճարման Բանկին, եթե օգտագործում է փոխառությունը ստանալու իրավունքը, և այն դրամական հոսքերի, որոնք Բանկն ակնկալում է ստանալ,
- *ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*. որպես այն ակնկալվող վճարումների ներկա արժեք, որոնք փոխհատուցում են տիրապետողին կրած պարտքային կորուստը՝ հանած այն գումարները, որոնք Բանկն ակնկալում է հետ ստանալ:

Տես նաև Ծանոթագրություն 25 (բ):

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերաբանակցվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, գնահատվում է ֆինանսական ակտիվն ապաճանաչելու անհրաժեշտությունը (տես՝ Ծանոթագրություն 3 (ե) (ii)), և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են հետևյալ կերպ.

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում (տես՝ Ծանոթագրություն 25 (բ)):
- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեր՝ վերջինիս ապաճանաչման ժամանակ: Այս գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը զեղչվում է ապաճանաչման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից (որոնք դիտարկում ենք որպես 3-րդ փուլի ֆինանսական ակտիվներ): Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, եթե տեղի են ունցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Բանկի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսնկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, ֆիզիկական անձանց տրվող վարկերի դեպքում պարտքային առումով արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Պետական պարտատոմսերում ներդրման պարտքային առումով արժեզրկված լինելը գնահատելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- Վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությունում:
- Վարկունակության վարկանիշային գործակալությունների գնահատումները:
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:
- Պարտքի պայմանների վերանայման հավանականությունը, որի արդյունքում տիրապետողները կարող են վնաս կրել պարտքը կամավոր կամ պարտադիր կերպով ներելու պատճառով:

– Գործող միջազգային աջակցման մեխանիզմները, որոնք թույլ են տալիս որպես «վերջին հնարավոր վարկատու» տվյալ երկրին տրամադրել անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև կառավարությունների և գործակալությունների հրապարակային հայտարարություններում նշված այդ մեխանիզմները կիրառելու մտադրությունը: Սա ներառում է նշված մեխանիզմների աշխատանքի արդյունավետության և, անկախ քաղաքական մտադրություններից, պահանջվող չափանիշները բավարարելու կարողության առկայության գնահատումը:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

– ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,
– փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորության պայմանագրեր՝ սովորաբար որպես պահուստ,
– երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Բանկը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորստներից առանձին՝ Բանկը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և
– իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում:

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը վերականգնելու ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Բանկը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այս գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:

Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ/պարտքերի գանձման միջոցներ՝ վճարման ենթակա գումարների փոխհատուցման Բանկի ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

Ֆինանսական ակտիվի անբաժանելի մաս չհանդիսացող ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բանկը գնահատում է, արդյոք ֆինանսական երաշխավորության պայմանագիրը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, որը հաշվառվում է որպես այդ գործիքի

բաղադրիչ, թե առանձին հաշվառվող պայմանագիր: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- արդյոք երաշխավորությունը նախատեսված է պարտքային գործիքի պայմանագրի պայմաններով,
- արդյոք երաշխավորության պայմանագիրը կնքվել է պարտքային գործիքի պայմանագրի հետ նույն ժամանակ և հաշվի առնելով վերջինիս պայմանները և
- արդյոք երաշխավորությունը տրամադրվել է փոխառուի մայր կազմակերպության կամ փոխառուի խմբի անդամ հանդիսացող որևէ այլ կազմակերպության կողմից:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման հետ կապված վճարվելիք ցանկացած հավելաճար հաշվառվում է որպես այդ ակտիվի ձեռքբերման գործարքի գծով ծախսում: Պարտքային գործիքի իրական արժեքը և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Բանկը հաշվի է առնում երաշխավորությամբ ապահովվող պաշտպանության ազդեցությունը:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը չի հանդիսանում պարտքային գործիքի անբաժանելի տարր, ապա այն ճանաչում է ակտիվ, որն իրենից ներկայացնում է երաշխավորության հավելավճարի գծով կանխավճար, և պարտքային կորուստների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք: Կանխավճարի տեսքով վճարված հավելավճարի գծով ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը, որի համար ստացվել է երաշխավորությունը, ոչ պարտքային առումով արժեզրկված է և ոչ էլ ենթարկվել է պարտքային ռիսկի նշանակալի աճի երաշխավորությունը ստանալու պահին: Այս ակտիվները ճանաչվում են «այլ ակտիվներ» հոդվածի կազմում: Բանկը փոխհատուցման իրավունքի գծով օգուտները կամ կորուստները ներկայացնում է շահույթում կամ վնասում՝ «պարտքային ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ» հոդվածում:

(զ) Հաճախորդներին տրված վարկեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր» հոդվածը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկերը (տես՝ Ծանոթագրություն 3 (ե) (i)), որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(է) Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «ներդրումային արժեթղթեր» հոդվածը ներառում է.

- ամորտիզացված արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթերը (տես Ծանոթագրություն 3 (ե) (i)), որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող

պարտքային արժեթղթերը (տես Ծանոթագրություն 3 (ե) (i)),
– բաժնային ներդրումային արժեթղթերը, որոնք նախորոշված են որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող (տես Ծանոթագրություն 3 (ե) (i)):

(ը) Ավանդներ, թողարկված պարտքային արժեթղթեր և բաներից և այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր

Ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և բաներից և այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը պարտավորությունները նախորոշում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

(թ) Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դեբիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում դրանք չափվում են հետևյալ նշվածներից ավելի բարձրով՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստից (տես՝ Ծանոթագրություն 3 (ե) (vi)) և սկզբնապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը: Բանկը չունի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող փոխատվության հանձնառություններ:

Այլ փոխատվության հանձնառությունների համար Բանկը ճանաչում է կորստի պահուստ (տես Ծանոթագրություն 3 (ե) (vi)) ՖՀՄՍ 9-ի համաձայն:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացող պարտավորությունները ներառվում են պահուստների կազմում:

(ժ) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Վերագնահատում

Շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատվող շենքերի իրական արժեքի

փոփոխություններից: Եթե շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Այնուամենայնիվ, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որով նախապես նվազումը ճանաչվել էր շահույթում կամ վնասում: Եթե շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(iii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով առանձին ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռքբերման ամսաթվից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողատարածքների գծով մաշվածություն չի հաշվարկվում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

– շենքեր	50 տարի
– վարձակալված գույքի բարելավում	10 տարի
– համակարգիչներ և կապի սարքավորումներ	4-10 տարի
– փոխադրամիջոցներ	10 տարի
– տնտեսական գույք	10 տարի

(ի) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման և ներդրման ծախսումները կապիտալացվում են համապատասխան ոչ նյութական արժեքի ինքնարժեքին:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կան վնասում գծային մեթոդով ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները կազմում են 3-ից 10 տարի:

(լ) Առգրավված ակտիվներ

Բանկը ճանաչում է առգրավված ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն ունի իրացման ամբողջական և վերջնական իրավունքներ գրավի նկատմամբ:

Առգրավված ակտիվները չափվում են հետևյալ երկու մեծությունների նվազագույնով՝ հաշվեկշռային արժեքի և իրական արժեքի՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչման պահին առգրավված ակտիվները չափվում են այն վարկի հաշվեկշռային արժեքով, որի գծով տեղի է ունեցել պարտազանցություն՝ ներառյալ գրավի առգրավման ընթացքում կրած ծախսումները: Իրական արժեքը՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները, իրենից ներկայացնում է գրավի գնահատված վաճառքի գինը բնականոն գործունեության ընթացքում՝ հանած հարակից վաճառքի ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո առգրավված ակտիվները վերանայվում են վաճառքի համար պահվող դասակարգման չափանիշներին համապատասխանելու տեսանկյունից և համապատասխանաբար վերադասակարգվում են չափանիշները բավարարելու դեպքում:

Առգրավված ակտիվների օտարումից օգուտը և կորուստը ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ գործառնական եկամուտ» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(խ) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքներից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքներ չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը

հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(ծ) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը հատուկ ռիսկերը:

(կ) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

(ii) Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող գումարը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

(iii) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

(հ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող եկամտի գծով՝ կիրառելով այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Բանկի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

(ձ) Սեգմենտային հաշվետվություններ

Գործառնական սեգմենտը Բանկի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնություններիc հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Բանկի ղեկավարությունը գտնում է, որ Բանկը բաղկացած է մեկ գործառնական սեգմենտից:

(ղ) Վարձակալություն

Պայմանագրի սկզբում Բանկը գնահատում է արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը: Գնահատելու համար, թե արդյոք պայմանագրով փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը, Բանկն օգտագործում է ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանումը:

(i) Բանկը՝ որպես վարձակալ

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում, Բանկը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Բանկը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Բանկին չեն փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Բանկը կիրագործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Բանկը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Բանկը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները.

- հաստատուն վճարումները, ներառյալ ըստ էության հաստատուն վճարումները,
- վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- գումարները, որոնք, ինչպես ակնկալվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և
- գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Բանկը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե Բանկը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ երկարաձգման օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե Բանկը խելամտորեն համոզված չէ, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Բանկի գնահատականի փոփոխություն, եթե Բանկը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Ներդրումային գույքի սահմանմանը չհամապատասխանող օգտագործման իրավունքի ձևով ակտիվները Բանկը ներկայացնում է հիմնական միջոցների կազում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորությունների կազմում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների, այդ թվում բանկոմատների համար: Այս վարձակալությունների գծով վարձավճարները Բանկը ճանաչում է որպես ծախս գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

(ճ) Հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ

Մի շարք նոր ստանդարտներ և ստանդարտների փոփոխություններ գործում են 2020թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բանկը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները: Ստորև ներկայացված փոփոխված ստանդարտները և մեկնաբանություններն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ա. Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)

Փոփոխությունները հստակեցնում են, թե որ ծախսումներն է Բանկը ներառում պայմանագրի անբարենպաստ լինելը գնահատելու համար պայմանագրի կատարման ծախսումները որոշելիս: Փոփոխությունները գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ փոփոխություններն առաջին անգամ կիրառելու ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար:

Բ. Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխում. Փուլ 2 (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 փոփոխություններ)

Փոփոխություններն անդրադառնում են այն հարցերին, որոնք կարող են ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման արդյունքում, ներառյալ փոփոխությունների ազդեցությունը պայմանագրային դրամական հոսքերի կամ հեջավորման հարաբերությունների վրա՝ ուղենիշային տոկոսադրույքն այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքով փոխարինելու դեպքում: Փոփոխությունները նախատեսում եմ ազատում ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 որոշակի պահանջներից, որոնք վերաբերում են.

- ֆինանսական ակտիվների, ֆինանսական պարտավորությունների և վարձակալության գծով պարտավորությունների հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխություններին և
- հեջի հաշվառմանը:

(i) Դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխություն

Փոփոխությունները Բանկից կպահանջեն հաշվառել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գծով պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխությունը, որը պահանջվում է ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխմամբ՝ թարմացնելով ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը:

(ii) Հեջի հաշվառում

Փոփոխությունները նախատեսում են բացառություններ հեջի հաշվառման պահանջների հետ կապված հետևյալ ոլորտներում.

- Թույլ տալ փոփոխություն հեջավորման հարաբերության նախորոշման հետ կապված բարեփոխմամբ պահանջվող փոփոխություններն արտացոլելու համար:
- Բարեփոխմամբ պահանջվող փոփոխություններն արտացոլելու համար դրամական հոսքերի հեջում հեջավորված հոդվածի գծով փոփոխություն կատարելիս՝ դրամական հոսքերի հեջի պահուստում կուտակված գումարը կդիտարկվի որպես հիմնված այն այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքի վրա, որով որոշվում են հեջավորված ապագա դրամական հոսքերը:
- Երբ հոդվածների խումբը նախորոշվում է որպես հեջավորված հոդված, և խմբի հոդվածի հետ կապված կատարվում է փոփոխություն բարեփոխմամբ պահանջվող փոփոխություններն արտացոլելու համար, հեջավորված հոդվածները բաշխվում են ենթախմբերի հեջավորվող ուղենիշային տոկոսադրույքների հիման վրա:
- Եթե Բանկը ողջամտորեն ակնկալում է, որ այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքն առանձին նույնականացվող է 24 ամսվա ընթացքում, ապա չի արգելվում տոկոսադրույքը նախորոշել որպես պայմանագրորեն չհատկորոշված ռիսկային բաղադրիչ, եթե այն առանձին նույնականացվող չէ նախոշորման ամսաթվի դրությամբ:

(iii) Բացահայտում

Փոփոխությունները Բանկից կպահանջեն բացահայտել լրացուցիչ տեղեկատվություն ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման արդյունքում առաջացող ռիսկերին Բանկի ենթարկվածության և ռիսկերի կառավարման համար իրականացվող համապատասխան գործունեության վերաբերյալ:

Գ. *Այլ ստանդարտներ*

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Հիմնական միջոցներ. Մուտքեր նախքան նպատակային օգտագործումը (ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ)*
- *Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ (ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ)*
- *Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների (ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ)*
- *ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» և ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» փոփոխություններ*

4 Զուտ տոկոսային եկամուտ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	9,788,219	8,974,794
Ներդրումային արժեթղթեր	2,894,599	2,751,228
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	298,884	326,423
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	502,763	267,456
Այլ	6,915	5,659
	13,491,380	**12,325,560**
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	2,901,795	2,546,602
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	632,627	713,458
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	878,357	566,820
Թողարկված պարտքային արժեթղթեր	488,757	470,604
Վարձակալության գծով պարտավորություններ	80,357	93,781
Այլ փոխառություններ	65,181	57,326
Այլ	218,854	243,363
	5,265,928	**4,691,954**
Զուտ տոկոսային եկամուտ	**8,225,452**	**7,633,606**

5 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով (ծախս)/եկամուտ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ		
Պլաստիկ քարտերի սպասարկում	1,066,878	524,020
Դրամային փոխանցումներ	227,304	201,443
Դրամական միջոցների կանխիկացում և հաշիվների սպասարկում	110,616	121,792
Այլ	172,254	44,285
	1,577,052	**891,540**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս		
Գործարքներ քարտերով	1,058,237	521,686
Վճարային համակարգերի սպասարկում	491,682	85,859
Այլ	131,810	189,531
	1,681,729	**797,076**
Զուտ միջնորդավճարների և այլ վճարների տեսքով (ծախս)/եկամուտ	**(104,677)**	**94,464**

6 Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Օգուտ սփոթ գործարքներից	368,566	848,241
Օգուտ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	567,227	378,049
	935,793	**1,226,290**

7 Զուտ այլ գործառնական եկամուտ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Ստացված տույժեր և տուգանքներ	240,247	471,943
Ստացված շահաբաժիններ	-	144,751
Օգուտ/(վնաս) առգրավված ակտիվների վաճառքից	7,336	(235)
Այլ	158,701	54,960
	406,284	**671,419**

8 Զուտ արժեզրկումից կորուստներ ֆինանսական գործիքների գծով

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվության հանձնառություններ	1,688,869	150,133
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	114,726	(1,421)
Այլ ֆինանսական ակտիվներ	371,499	(8,860)
Տրված ֆինանսական երաշխավորություններ	1,164	(3,313)
	2,176,258	**136,539**

Ստորև ներկայացված է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածի համադրումը 2020թ. և 2019թ. համար:

2020թ. **հազ. դրամ**	**Կորստի պահուստի զուտ վերաչափում**	**Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ**	**Վերականգնում/ (Դուրսգրում)**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,243	(6,447)	-	(4,204)
Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	10,419	(21,478)		(11,059)
Ամորտիզացված արժեքով չափվող հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	2,300	(6,261)	-	(3,961)
Ամորտիզացված ա րժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք	(1,291,652)	(84,209)	-	(1,375,861)
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – ֆիզիկական անձիք	(351,099)	(177,309)	215,400	(313,008)
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	(191,689)	(120,668)	(39,918)	(352,275)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	(114,726)	-	-	(114,726)
Տրված ֆինանսական երաշխավորություններ	716	(1,880)	-	(1,164)
Ընդամենը	**(1,933,488)**	**(418,252)**	**175,482**	**(2,176,258)**

2019թ. հազ. դրամ	Կորստի պահուստի զուտ վերաչափում	Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	Նախկինում դուրսգրված գումարների վերականգնում	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,633	(2,243)	-	1,390
Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	22,967	(12,673)	-	10,294
Ամորտիզացված արժեքով չափվող հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	2,017	(2,300)	-	(283)
Ամորտիզացված ա րժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք	(814,672)	(73,308)	216,561	(671,419)
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – ֆիզիկական անձիք*	(410,459)	(214,389)	1,146,134	521,286
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	196	(2,737)	-	(2,541)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	(21,181)	22,602	-	1,421
Տրված ֆինանսական երաշխավորություններ	3,745	(432)	-	3,313
Ընդամենը	**(1,213,754)**	**(285,480)**	**1,362,695**	**(136,539)**

* ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 11-ի որոշման համաձայն՝ տուգանքները, որոնք սահմանվել են ֆիզիկական անձանց տրված վարկերի համար, որոնց գծով տեղի է ունեցել պարտազնացում, ներվել են: Արդյունքում, 2019թ-ին մեծ թվով հաճախորդներ դուրսգրված մայր գումարը և հաշվեգրված տոկոսները մարել են 2013-2017թթ. ընթացքում:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումն ըստ ֆինանսական գործիքների դասերի 2020թ. համար:

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Մնացորդը առ 1 հունվարի	(2,243)	-	-	(2,243)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	2,243	-	-	2,243
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(6,447)	-	-	(6,447)

հազ. դրամ	2020թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(6,447)**	-	-	**(6,447)**

հազ. դրամ	2020թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	(31,240)	-	-	(31,240)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	10,419	-	-	10,419
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(21,478)	-	-	(21,478)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(42,299)**	-	-	**(42,299)**

հազ. դրամ	2020թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ				
Մնացորդը առ 1 հունվարի	(2,300)	-	-	(2,300)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	2,300	-	-	2,300
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(6,261)	-	-	(6,261)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(6,261)**	-	-	**(6,261)**

հազ. դրամ	2020թ.*			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք				
Մնացորդը առ 1 հունվարի	(147,480)	(4,056)	(9,826,711)	(9,978,247)
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	276	(11,454)	11,178	-
Տեղափոխում 3-րդ փուլ	246	681	(927)	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	46,131	2,384	(1,340,167)	(1,291,652)

	2020թ.*			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(84,209)	-	-	(84,209)
Դուրսգրումներ	-	-	681,475	681,475
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(185,036)**	**(12,445)**	**(10,475,152)**	**(10,672,633)**

Տարվա ընթացքում ամենաէական տեղափոխումն իրենից ներկայացնում է իրավաբանական անձանց տրված 502,978 հազար դրամ համախառն մնացորդով վարկերի տեղափոխումը 1-ին փուլից 2-րդ փուլ COVID-19 համավարակից հետո: Այս տեղափոխումը նշանակալի ազդեցություն չի ունեցել ակնկալվող պարտքային կորուստների վրա այդ վարկերի խոշոր գրավով ապահովված լինելու պատճառով:

	2020թ.*			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – ֆիզիկական անձիք				
Մնացորդը առ 1 հունվարի	(262,949)	(30,084)	(614,640)	(907,673)
Տեղափոխում 1-ին փուլ	(35,205)	3,800	31,405	-
Տեղափոխում 2-րդ փուլ	7,111	(18,025)	10,914	-
Տեղափոխում 3-րդ փուլ	5,473	2,185	(7,658)	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	13,965	(165,248)	(199,816)	(351,099)
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(177,309)	-	-	(177,309)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(448,914)**	**(207,372)**	**(779,795)**	**(1,436,081)**

* Այս աղյուսակներում ներկայացված կորստի պահուստը ներառում է իրավաբանական և ֆիզիկական անձանց համար նախատեսված որոշ գործիքների, այդ թվում՝ վարկային քարտերի և օվերդրաֆտների հետ կապված փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները:

Տարվա ընթացքում տեղի ունեցած ամենանշանակալի տեղափոխումները ներրառում են հետևյալը.

- ֆիզիկական անձանց տրված 797,613 հազար դրամ համախառն մնացորդով վարկերի տեղափոխումը 1-ին փուլից 2-րդ փուլ COVID-19 համավարակից հետո, ինչը հանգեցրեց ակնկալվող պարտքային կորուստների համապատասխան աճի:
- ֆիզիկական անձանց տրված 724,533 հազար դրամ համախառն մնացորդով վարկերի տեղափոխումը 1-ին փուլից 3-րդ փուլ COVID-19 համավարակից հետո, ինչը հանգեցրեց ակնկալվող պարտքային կորուստների համապատասխան աճի:

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ				
Մնացորդը առ 1 հունվարի	(3,201)	-	-	(3,201)
Տեղափոխում 3-րդ փուլ	1,499	-	(1,499)	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(4,973)	-	(186,716)	(191,689)
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(6,186)	-	(114,482)	(120,668)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(12,861)**	**-**	**(302,697)**	**(315,558)**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
Մնացորդը առ 1 հունվարի	(35,323)	-	-	(35,323)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(114,726)	-	-	(114,726)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(150,049)**	**-**	-	**(150,049)**

	2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Տրված ֆինանսական երաշխավորություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	(1,288)	-	-	(1,288)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	716	-	-	716
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(1,880)	-	-	(1,880)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(2,452)**	**-**	-	**(2,452)**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումն ըստ ֆինանսական գործիքների դասերի 2019թ. համար:

	2019թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Մնացորդը առ 1 հունվարի	(3,633)	-	-	(3,633)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	3,633	-	-	3,633
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(2,243)	-	-	(2,243)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(2,243)**	-	-	**(2,243)**

	2019թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	(41,534)	-	-	(41,534)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	22,967	-	-	22,967
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(12,673)	-	-	(12,673)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(31,240)**	-	-	**(31,240)**

	2019թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ				
Մնացորդը առ 1 հունվարի	(2,017)	-	-	(2,017)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	2,017	-	-	2,017
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(2,300)	-	-	(2,300)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(2,300)**	-	-	**(2,300)**

	2019*			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամortիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք				
Մնացորդը առ 1 հունվարի	(204,067)	(782)	(8,950,759)	(9,155,608)
Տեղափոխում 1-ին փուլ	115	(33)	(82)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(75)	327	(252)	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(85)	(212)	297	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	129,940	(11,908)	(932,704)	(814,672)
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(73,308)	-	-	(73,308)
Դուրսգրումներ	-	8,552	56,789	65,341
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(147,480)**	**(4,056)**	**(9,826,711)**	**(9,978,247)**

	2019*			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամortիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – ֆիզիկական անձիք				
Մնացորդը առ 1 հունվարի	(214,259)	(48,117)	(336,613)	(598,989)
Տեղափոխում 1-ին փուլ	16,906	(2,643)	(14,263)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(2,349)	17,068	(14,719)	-
Տեղափոխում 3-րդ փուլ	87,965	59,377	(147,342)	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	63,177	(55,769)	(417,867)	(410,459)
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(214,389)	-	-	(214,389)
Դուրսգրումներ	-	-	316,164	316,164
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(262,949)**	**(30,084)**	**(614,640)**	**(907,673)**

* Այս աղյուսակներում ներկայացված կորստի պահուստը ներառում է իրավաբանական և ֆիզիկական անձանց համար նախատեսված որոշ գործիքների, այդ թվում՝ վարկային քարտերի և օվերդրաֆտների հետ կապված փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները:

	2019թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամortիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ				

հազ. դրամ	2019թ. 1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի	(660)	-	-	(660)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	196	-	-	196
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(2,737)	-	-	(2,737)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(3,201)**	**-**	**-**	**(3,201)**

հազ. դրամ	2019թ. 1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
Մնացորդը առ 1 հունվարի	(36,744)	-	-	(36,744)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(21,181)	-	-	(21,181)
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	22,602	-	-	22,602
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(35,323)**	**-**	**-**	**(35,323)**

հազ. դրամ	2019թ. 1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Տրված ֆինանսական երաշխավորություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	(4,601)	-	-	(4,601)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	3,745	-	-	3,745
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(432)	-	-	(432)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(1,288)**	**-**	**-**	**(1,288)**

9 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա*	962,669	773,732
Գովազդ և շուկայավարում	482,535	276,217
Ոչ փոխհատուցելի հարկեր և տուրքեր	342,064	321,904
Մասնագիտական ծառայություններ	283,229	187,005
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	183,722	148,251

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	168,732	209,679
Կապի և տեղեկատվական ծառայություններ	146,291	81,236
Վարձակալության ծախսեր	36,951	43,907
Անվտանգության ծառայություն	87,762	83,141
Ապահովագրություն	78,956	71,947
Ներկայացուցչական և կազմակերպչական ծախսեր	58,720	150,037
Այլ	85,607	122,001
	2,917,238	**2,469,057**

* 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա մաշվածության և ամորտիզացիայի գումարում ներառված 226,929 հազար դրամը վերաբերում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ամորտիզացիային՝ ՖՀՄՍ 16 *«Վարձակալություններ»* պահանջների համաձայն (տես Ծանոթագրություն 17):

10 Շահութահարկի գծով ծախս

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս	803,114	460
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման արդյունքում	(277,500)	588,305
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**525,614**	**588,765**

2020թ-ին ընթացիկ հարկի գծով կիրառելի հարկի դրույքաչափը կազմում է 18% (2019թ-ին՝ 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2020թ. հազ. դրամ	%	2019թ. հազ. դրամ	%
Շահույթ նախքան հարկումը	1,697,076		3,144,273	
Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով	305,474	18.0	628,855	20.0
Չնվազեցվող ծախսեր	220,140	13.0	113,211	3.6
Օրենսդրության փոփոխություն*	-	-	(153,761)	(4.9)
Նախորդ տարիներում պակաս հաշվարկված	-	-	460	0.0
	525,614	**31**	**588,765**	**18.7**

* 2019թ. հունիսի 25-ի հարկերի մասին որոշման համաձայն՝ 2020թ. հունվարի 1-ից գործում է նոր հարկային օրենսգիրք, ըստ որի շահութահարկի դրույքաչափը 20%-ից նվազել է 18%: Հաշվի առնելով, որ օրենսդրության փոփոխությունն ուժի մեջ է մտել 2019թ. ընթացքում, հետաձգված հարկային ակտիվները վերահաշվարկվել են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ օգտագործելով հարկի նոր դրույքը, որն ըստ ակնկալիքների պետք է գործեր հակադարձման պահին:

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու նպատակով որոշված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև ներկայացված են ժամանակավոր տարբերությունների փոսփոխությունները 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում:

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	404	756	-	1,160
Ներդրումային արժեթղթեր	(166,586)	(39,715)	100,511	(105,790)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(16,989)	6,906	-	(10,083)
Հաճախորդներին տրված վարկեր	(1,386,039)	399,644	-	(986,395)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(15,324)	1,265	-	(14,059)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(289,135)	21,182	-	(267,953)
Այլ ակտիվներ	(22,977)	25,416	-	2,439
Վարձակալության գծով պարտավորություն	294,916	(17,240)	-	277,676
Այլ պարտավորություններ	111,381	(19,995)	-	91,386
Հաջորդ տարի փոխանցված հարկային վնաս	100,719	(100,719)	-	-
	(1,389,630)	**277,500**	**100,511**	**(1,011,619)**

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	727	(323)	-	404
Ներդրումային արժեթղթեր	(36,231)	53,646	(184,001)	(166,586)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(26,468)	9,479	-	(16,989)
Հաճախորդներին տրված վարկեր	(911,661)	(474,378)	-	(1,386,039)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(15,905)	581	-	(15,324)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	(289,135)	-	(289,135)
Այլ ակտիվներ	(35,681)	12,704	-	(22,977)
Վարձակալության գծով պարտավորություն	-	294,916		294,916
Այլ պարտավորություններ	140,913	(29,532)	-	111,381
Հաջորդ տարի փոխանցված հարկային վնաս	266,982	(166,263)	-	100,719
	(617,324)	**(588,305)**	**(184,001)**	**(1,389,630)**

(բ) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված շահութահարկ

Ստորև ներկայացված են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի բաղադրիչներին վերաբերող հարկային հետևանքները 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2020թ.			2019թ.		
հազ. դրամ	Գումարը նախքան հարկումը	Հարկի գծով ծախս	Գումարը հարկումից հետո	Գումարը նախքան հարկումը	Հարկի գծով ծախս	Գումարը հարկումից հետո
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային	740,685	(133,324)	607,361	921,329	(184,266)	737,063
Շահույթ կամ վնաս փոխանցված այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	(1,299,081)	233,835	(1,065,246)	(1,324)	265	(1,059)
Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ	**(583,396)**	**100,511**	**(457,885)**	**920,005**	**(184,001)**	**736,004**

11 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Կանխիկը դրամարկղում	6,789,095	6,580,587
Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	9,742,840	7,118,931
Նոստրո հաշիվներ այլ բանկերում		
– A- -ից A+ վարկանիշով	14,490	118,695
– BBB- -ից BBB+ վարկանիշով	22,013	6,823
– BB- -ից BB+ վարկանիշով	415,653	312,396
– B- -ից B+ վարկանիշով	43,568	90,240
– առանց վարկանիշի	196,403	111,608
Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում	**692,127**	**639,762**
Ընդամենը համախառն դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**17,224,062**	**14,339,280**
Պարտքային կորստի պահուստ	(6,447)	(2,243)
Ընդամենը զուտ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**17,217,615**	**14,337,037**

ՀՀ ԿԲ-ում պահվող նոստրո հաշիվները վերաբերում են վճարահաշվարկային գործունեությանը (տես Ծանոթագրություն 13) և անհրաժեշտության դեպքում կարող են ելքագրվել:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն պարտքային առումով արժեզրկված չեն կամ ժամկետանց չեն:

Վարկանիշները հիմնված են «Standard & Poor's» գործակալության վարկանշավորման համակարգի տվյալների վրա:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային կողմ հանդիսացող այնպիսի բանկ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի (2019թ-ին՝ ոչ մի բանկ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի), որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

12 Ներդրումային արժեթղթեր

(ա) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
– ՀՀ կառավարության արժեթղթեր	4,048,272	2,350,550

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
– Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	-	25,718
Ընդամենը պետական պարտատոմսեր	**4,048,272**	**2,376,268**
Կորպորատիվ պարտատոմսեր		
– B -ից B+ վարկանիշով	254,183	232,995
– առանց վարկանիշի	1,444,975	1,339,794
Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր	**1,699,158**	**1,572,789**
Բաժնային գործիքներ		
Կորպորատիվ բաժնետոմսեր	293,326	2,553,452
Ընդամենը Բանկի կողմից պահվող արժեթղթեր	**6,040,756**	**6,502,509**
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
– Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	2,443,334	2,260,311
Ընդամենը վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված արժեթղթեր	**2,443,334**	**2,260,311**
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**8,484,090**	**8,762,820**

(բ) Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
– ՀՀ կառավարության արժեթղթեր	3,838,371	7,803,216
– Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	-	600,653
Ընդամենը պետական պարտատոմսեր	**3,838,371**	**8,403,869**
Կորպորատիվ պարտատոմսեր		
– B -ից B+ վարկանիշով	1,815,460	2,005,660
– առանց վարկանիշի	1,000,818	896,676
Ընդամենը պետական պարտատոմսեր	**2,816,278**	**2,902,336**
Ընդամենը Բանկի կողմից պահվող արժեթղթեր	**6,654,649**	**11,306,205**
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
– ՀՀ կառավարության արժեթղթեր	11,380,632	7,384,332
– Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	2,780,630	4,445,161
Ընդամենը պետական պարտատոմսեր	**14,161,262**	**11,829,493**
Ընդամենը վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված արժեթղթեր	**14,161,262**	**11,829,493**
Ընդամենը համախառն ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**20,815,911**	**23,135,698**
Պարտքային կորստի գծով պահուստ	(150,049)	(35,323)
Ընդամենը զուտ ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**20,665,862**	**23,100,375**

(գ) Ներդրումային արժթղթերի պարտքային որակ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն ներդրումային արժթղթերի պարտքային որակի վերաբերյալ 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Եթե այլ նշում չի արվում, աղյուսակում ֆինանսական ակտիվների համար ներկայացվում է համախառն հաշվեկշռային արժեքը:

	31 դեկտեմբերի 2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ**	**2-րդ փուլ Պարտքային առումով չարժեզրկված ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ**	**3-րդ փուլ Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ**	**Ընդամենը**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
– BB- -ից BB+ վարկանիշով	6,491,605	-	-	6,491,605
– B- -ից B+ վարկանիշով	254,183	-	-	254,183
– առանց վարկանիշի*	1,444,975	-	-	1,444,975
Հաշվեկշռային արժեք	**8,190,763**	-	-	**8,190,763**

* Ղեկավարության գնահատմամբ առանց վարկանիշի գործիքների վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Standard & Poor's» գործակալության վարկանշավորման համակարգի B+ վարկանիշին:

	31 դեկտեմբերի 2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ**	**2-րդ փուլ Պարտքային առումով չարժեզրկված ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ**	**3-րդ փուլ Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
– BB- -ից BB+ վարկանիշով	17,999,633	-	-	17,999,633
– B- -ից B+ վարկանիշով	1,815,460			1,815,460
– առանց վարկանիշի*	1,000,818	-	-	1,000,818
	20,815,911	-	-	**20,815,911**
Կորստի պահուստ	**(150,049)**	-	-	**(150,049)**
Հաշվեկշռային արժեք	**20,665,862**	-	-	**20,665,862**

* Ղեկավարության գնահատմամբ առանց վարկանիշի գործիքների վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Standard & Poor's» գործակալության վարկանշավորման համակարգի B+ վարկանիշին:

	31 դեկտեմբերի 2019թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ**	**2-րդ փուլ Պարտքային առումով չարժեզրկված ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ**	**3-րդ փուլ Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ**	**Ընդամենը**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
– BB- -ից BB+ վարկանիշով	4,636,579	-	-	4,636,579
– B- -ից B+ վարկանիշով	232,995	-	-	232,995
– առանց վարկանիշի*	1,339,794	-	-	1,339,794
Հաշվեկշռային արժեք	**6,209,368**	-	-	**6,209,368**

* Ղեկավարության գնահատմամբ 1,339,794 հազար դրամ գումարով առանց վարկանիշի գործիքների վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Standard & Poor's» գործակալության վարկանշավորման համակարգի B+ վարկանիշին:

	31 դեկտեմբերի 2020թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ**	**2-րդ փուլ Պարտքային առումով չարժեզրկված ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ**	**3-րդ փուլ Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
– B- -ից BB+ վարկանիշով	22,239,022	-	-	22,239,022
– առանց վարկանիշի*	896,676	-	-	896,676
	23,135,698	**-**	**-**	**23,135,698**
Կորստի պահուստ	**(35,323)**	-	-	**(35,323)**
Հաշվեկշռային արժեք	**23,100,375**	-	-	**23,100,375**

* Ղեկավարության գնահատմամբ առանց վարկանիշի գործիքների վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Standard & Poor's» գործակալության վարկանշավորման համակարգի B+ վարկանիշին:

Պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտվում է «Standard & Poor's» գործակալության վարկանիշներից:

Բանկը վաճառում է արժեթղթեր հետգնման պայմանագրերի շրջանակում և ձեռք է բերում արժեթղթեր վերավաճառքի պայմանագրերի շրջանակում:

Հետգնման պայմանագրերի շրջանակում վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմերին, և Բանկը ստանում է դրամական միջոցներ դրա դիմաց: Պայմանագրային կողմերը կարող են վերագրավադրել կամ վերավաճառվել այս ֆինանսական ակտիվները Բանկի կողմից պարտազանցման բացակայության դեպքում, սակայն պայմանագրային կողմը պարտավոր է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ժամկետի ավարտին: Բանկը որոշել է, որ պահպանում է այս արժեթղթերի հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, այդ իսկ պատճառով, չի ապաճանաչել դրանք: Ստացված դրամական միջոցները ճանաչվում են որպես ֆինանսական ակտիվ, իսկ գրավի ձեռքբերման գինը մարելու պարտականության գծով ճանաչվում է ֆինանսական պարտավորություն և ներառվում է հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներում (Ծանոթագրություն 20):

Այս գործարքներն իրականացվում են փոխատվության, արժեթղթերի փոխառության և փոխատվություն ստանդարտ գործառնություններին բնորոշ պայմաններով:

13 Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
ՀՀ ԿԲ-ի պարտավորություններ		
Վարկային քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց ՀՀ ԿԲ-ում	733,500	527,500
Ավանդ ՀՀ ԿԲ-ում, պարտադիր պահուստներ	2,876,594	2,749,312
Ընդամենը ՀՀ ԿԲ-ի պարտավորություններ	**3,610,094**	**3,276,812**
Վարկեր և ավանդներ		
Եվրասիական տնտեսական միության բանկեր		
– BB- -ից BB+ վարկանիշով	127	-
– B- -ից B+ վարկանիշով	1,442,239	1,934,283
– առանց վարկանիշի	5,887,035	584,061
Հայկական բանկեր		
– B- -ից B+ վարկանիշով	235,526	-
– առանց վարկանիշի	1,282,814	1,106,259
Այլ ոչ ռեզիդենտ բանկեր		
– AA- -ից AA+ վարկանիշով	575,617	169,111
– A- -ից A+ վարկանիշով	-	13,432
– BBB- -ից BBB+ վարկանիշով	96,167	80,589
Միջին չափի հայկական վարկային կազմակերպություններ	2,642,628	2,009,833
Վճարային համակարգեր	2,089,290	1,162,027
Ընդամենը վարկեր և ավանդներ	**14,251,443**	**7,059,595**
Ընդամենը բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված համախառն վարկեր և փոխատվություններ	**17,861,537**	**10,336,407**
Պարտքային կորստի պահուստ	(42,299)	(31,240)
Ընդամենը բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված զուտ վարկեր և փոխատվություններ	**17,819,238**	**10,305,167**

(ա) Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում

Վարկային քարտերով գործառնությունների համար ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցը ոչ տոկոսակիր ավանդ է, որը հաշվարկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կանոնակարգերի համաձայն և որի ելքագրումը սահմանափակված է:

Բանկերից պահանջվում է ՀՀ ԿԲ-ում պահել կանխիկ ավանդ (պարտադիր պահուստ) ներգրավված միջոցների համար: ՀՀ դրամով ներգրավված միջոցների համար պարտադիր պահուստը կազմում է 2% և ամբողջությամբ պահվում է ՀՀ դրամով: Արտարժույթով ներգրավված միջոցների համար պարտադիր պահուստը կազմում է 18%, որից 12%-ը պահվում է ՀՀ դրամով, իսկ 6%-ը՝ ներգրավված միջոցների համապատասխան արտարժույթով: ՀՀ դրամով պահվող ավանդը ելքագրելու Բանկի իրավունքը չի սահմանափակվում օրենսդրությամբ, սակայն եթե Բանկը չի ապահովում պահուստի նվազագույն միջին ամսական գումարը, վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ:

ՀՀ դրամով պահվող պարտադիր պահուստները դասակարգվում են որպես դրամական միջոցներ և դրանց դրամական համարժեքներ (տես Ծանոթագրություն 11), քանի որ կարող են ելքագրվել անհրաժեշտության դեպքում:

Արտարժույթով պահվող պարտադիր պահուստի համար Բանկն պարտավոր է ապահովել նվազագույն օրական մնացորդ: Այս պահուստները չեն համարվում դրամական միջոցներ և դրանց դրամական համարժեքներ և ներառված են բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների կազմում: Պարտադիր օրական նվազագույն պահուստ ապահովելու պահանջն ուժի մեջ է մտել 2019թ-ին: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում պահվող ավանդներում ներառված է 2,876,594 հազար դրամ գումարով պարտադիր պահուստն արտարժույթով ներգրավված միջոցների համար (2019թ-ին՝ 2,749,312 հազար դրամ):

(բ) Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների կենտրոնացում

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ունի պայմանագրային կողմ հանդիսացող մեկ բանկ (2019թ-ին՝ նման բանկ չկար), որի գծով մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում էր 5,868,225 հազար դրամ:

(գ) Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային որակ

Ղեկավարության գնահատմամբ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 11,901,767 հազար դրամ գումարով առանց վարկանիշի գործիքների վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Standard & Poor's» գործակալության վարկանշավորման համակարգի B- -ից B+ վարկանիշին (2019թ-ին 4,862,180 հազար դրամ գումարով առանց վարկանիշի գործիքների վարկանիշը մոտավորապես համապատասխանում էր «Standard & Poor's» գործակալության վարկանշավորման համակարգի B- -ից B+ վարկանիշին):

Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերը և փոխատվություններն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերը և փոխատվությունները պարտքային առումով արժեզրկված չեն կամ ժամկետանց չեն:

Պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտվում է «Standard & Poor's» գործակալության վարկանիշներից:

14 Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Տեղական ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք գումարներ	6,045,468	4,769,563
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք համախառն գումարներ	**6,045,468**	**4,769,563**
Պարտքային կորստի պահուստ	(6,261)	(2,300)
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք զուտ գումարներ	**6,039,207**	**4,767,263**

2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի այնպիսի պայմանագրային կողմ, որի հետ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները վերագրելի են խոշոր տեղական ֆինանսական կազմակերպություններին: Բոլոր գումարները դասված են 1-ին փուլ և

չափվում են ամորտիզացված արժեքով 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները պարտքային առումով արժեզրկված չեն կամ ժամկետանց չեն:
Ղեկավարության գնահատմամբ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք 6,045,468 հազար դրամ (2019թ-ին՝ 4,769,563 հազար դրամ) առանց վարկանիշի գումարի վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Standard & Poor's» գործակալության վարկանշավորման համակարգի B- -ից B+ վարկանիշին:

(ա) Ակտիվների համար որպես ապահովություն ընդունված գրավ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված ֆինանսական ակտիվների (ՀՀ կառավարության արժեթղթեր) իրական արժեքը կազմում է 7,026,359 հազար դրամ (2019թ-ին՝ 5,281,943 հազար դրամ):

Այս գործարքներն իրականացվում են փոխատվության, արժեթղթերի փոխառության և փոխատվության ստանդարտ գործառնություններին բնորոշ պայմաններով:

15 Հաճախորդներին տրված վարկեր

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր		
Վարկեր խոշոր կազմակերպություններին	38,203,088	36,488,694
Վարկեր առևտրային կազմակերպություններին	2,342,435	2,060,225
Վարկեր արդյունաբերական կազմակերպություններին	3,073,598	1,492,256
Դրամական միջոցների գրավով վարկեր	3,032,742	384,165
Այլ վարկեր իրավաբանական անձանց	7,199,895	5,244,474
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**53,851,758**	**45,669,814**
Ֆիզիկական անձանց տրված վարկեր		
Անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր	17,758,361	15,626,296
Հիփոթեքային վարկեր	16,070,099	11,030,994
Ոսկու գրավով վարկեր	7,537,300	6,682,090
Էքսպրես վարկեր առանց երաշխավորության	5,613,371	3,171,605
Վարկային գծեր	2,378,629	2,182,738
Դրամական միջոցների գրավով վարկեր	877,225	303,553
Աշխատավարձային ծրագրերի գծով վարկեր	515,978	536,695
Էքսպրես վարկեր երաշխավորությամբ	159,504	369,759
Այլ վարկեր ֆիզիկական անձանց	1,869,049	2,691,621
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված վարկեր	**52,779,516**	**42,595,351**
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված համախառն վարկեր	**106,631,274**	**88,265,165**
Պարտքային կորստի պահուստ	(12,108,714)	(10,885,920)
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված զուտ վարկեր	**94,522,560**	**77,379,245**

(a)

(ա) Հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակը

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	31 դեկտեմբերի 2020թ.*			
	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Վարկեր խոշոր կազմակերպություններին**				
- ոչ ժամկետանց	27,458,829	-	-	27,458,829
- 91-180 օր ժամկետանց	-	-	10,744,259	10,744,259
Ընդամենը համախառն վարկեր խոշոր կազմակերպություններին	**27,458,829**	**-**	**10,744,259**	**38,203,088**
Պարտքային կորստի պահուստ	**(136,651)**	**-**	**(8,321,114)**	**(8,457,765)**
Ընդամենը զուտ վարկեր խոշոր կազմակերպություններին	**27,322,178**	**-**	**2,423,145**	**29,745,323**
Վարկեր առևտրային կազմակերպություններին				
- ոչ ժամկետանց	1,890,815	47,538	101,160	2,039,513
- 91-180 օր ժամկետանց	-	-	72,294	72,294
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	230,628	230,628
Ընդամենը համախառն վարկեր առևտրային կազմակերպություններին	**1,890,815**	**47,538**	**404,082**	**2,342,435**
Պարտքային կորստի պահուստ	**(10,188)**	**(309)**	**(215,449)**	**(225,946)**
Ընդամենը զուտ վարկեր առևտրային կազմակերպություններին	**1,880,627**	**47,229**	**188,633**	**2,116,489**
Վարկեր արդյունաբերական կազմակերպություններին				
- ոչ ժամկետանց	2,812,353	-	9,464	2,821,817
- 181-360 օր ժամկետանց	-	-	21,718	21,718
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	230,063	230,063
Ընդամենը համախառն վարկեր արդյունաբերական կազմակերպություններին	**2,812,353**	**-**	**261,245**	**3,073,598**
Պարտքային կորստի պահուստ	**(4,848)**	**-**	**(87,249)**	**(92,097)**
Ընդամենը զուտ վարկեր արդյունաբերական կազմակերպություններին	**2,807,505**	**-**	**173,996**	**2,981,501**
Դրամական միջոցների գրավով վարկեր				-
- ոչ ժամկետանց	3,032,742	-	-	3,032,742
Պարտքային կորստի պահուստ	-	-	-	-
Ընդամենը զուտ դրամական միջոցների գրավով վարկեր	**3,032,742**	**-**	**-**	**3,032,742**

	31 դեկտեմբերի 2020թ.*			
	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
Այլ վարկեր իրավաբանական անձանց				
- ոչ ժամկետանց	4,117,726	381,496	805,463	5,304,685
- մինչև 30 օր ժամկետանց	14,694	20,695	-	35,389
- 31-90 օր ժամկետանց	-	28,002	-	28,002
- 91-180 օր ժամկետանց	-	-	988,009	988,009
- 181-360 օր ժամկետանց	-	-	26,018	26,018
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	817,792	817,792
Ընդամենը համախառն այլ վարկեր իրավաբանական անձանց	**4,132,420**	**430,193**	**2,637,282**	**7,199,895**
Պարտքային կորստի պահուստ	(33,349)	(12,136)	(1,851,340)	(1,896,825)
Ընդամենը զուտ այլ վարկեր իրավաբանական անձանց	**4,099,071**	**418,057**	**785,942**	**5,303,070**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված համախառն վարկեր	**39,327,159**	**477,731**	**14,046,868**	**53,851,758**
Ընդամենը ակնկալվող պարտքային կարուստներ իրավաբանական անձանց տրված վարկերի համար	**(185,036)**	**(12,445)**	**(10,475,152)**	**(10,672,633)**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված զուտ վարկեր	**39,142,123**	**465,286**	**3,571,716**	**43,179,125**
Ֆիզիկական անձանց տրված վարկեր				
Անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	14,926,681	46,508	127,522	15,100,711
- մինչև 30 օր ժամկետանց	439,806	-	-	439,806
- 31-90 օր ժամկետանց	-	672,849	-	672,849
- 91-180 օր ժամկետանց	-	-	706,424	706,424
- 181-360 օր ժամկետանց	-	-	139,340	139,340
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	699,231	699,231
Ընդամենը համախառն անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր	**15,366,487**	**719,357**	**1,672,517**	**17,758,361**
Պարտքային կորստի պահուստ	**(131,801)**	**(55,156)**	**(492,536)**	**(679,493)**
Ընդամենը զուտ անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր	**15,234,686**	**664,201**	**1,179,981**	**17,078,868**
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	15,628,631	-	21,476	15,650,107
- մինչև 30 օր ժամկետանց	80,187	-	-	80,187
- 31-90 օր ժամկետանց	-	126,869	-	126,869
- 91-180 օր ժամկետանց	-	-	123,167	123,167
- 181-360 օր ժամկետանց	-	-	89,769	89,769
Ընդամենը համախառն հիփոթեքային վարկեր	**15,708,818**	**126,869**	**234,412**	**16,070,099**

Պարտքային կորստի պահուստ	**(48,786)**	**(14,352)**	**(64,043)**	**(127,181)**
Ընդամենը զուտ հիփոթեքային վարկեր	**15,660,032**	**112,517**	**170,369**	**15,942,918**

	31 դեկտեմբերի 2020թ.*			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը վարկեր**
	հազ. դրամ	**հազ. դրամ**	**հազ. դրամ**	**հազ. դրամ**
Ոսկու գրավով վարկեր				
- ոչ ժամկետանց	7,048,818	1,453	2,651	7,052,922
- մինչև 30 օր ժամկետանց	246,618	-	-	246,618
- 31-90 օր ժամկետանց	-	187,509	-	187,509
- 91-180 օր ժամկետանց	-	-	49,717	49,717
- 181-360 օր ժամկետանց	-	-	534	534
Ընդամենը համախառն ոսկու գրավով վարկեր	**7,295,436**	**188,962**	**52,902**	**7,537,300**
Պարտքային կորստի պահուստ	**(32,305)**	**(29,679)**	**(24,791)**	**(86,775)**
Ընդամենը զուտ ոսկու գրավով վարկեր	**7,263,131**	**159,283**	**28,111**	**7,450,525**
Էքսպրես վարկեր առանց երաշխավորության				
- ոչ ժամկետանց	5,264,898	9,075	2,335	5,276,308
- մինչև 30 օր ժամկետանց	127,436	-	9,185	136,621
- 31-90 օր ժամկետանց	2,172	192,249	6,021	200,442
Ընդամենը համախառն էքսպրես վարկեր առանց երաշխավորության	**5,394,506**	**201,324**	**17,541**	**5,613,371**
Պարտքային կորստի պահուստ	**(180,939)**	**(68,679)**	**(11,020)**	**(260,638)**
Ընդամենը զուտ էքսպրես վարկեր առանց երաշխավորության	**5,213,567**	**132,645**	**6,521**	**5,352,733**
Դրամական միջոցների գրավով վարկեր				-
- ոչ ժամկետանց	877,225	-	-	**877,225**
Ընդամենը համախառն դրամական միջոցների գրավով վարկեր	**877,225**	**-**	**-**	**877,225**
Պարտքային կորստի պահուստ	(95)	-	-	(95)
Ընդամենը զուտ դրամական միջոցների գրավով վարկեր	**877,130**	**-**	**-**	**877,130**
Էքսպրես վարկեր երաշխավորությամբ				
- ոչ ժամկետանց	99,537	2,552	1,215	103,304
- մինչև 30 օր ժամկետանց	3,540	-	-	3,540
- 31-90 օր ժամկետանց	-	15,956	-	15,956
- 91-180 օր ժամկետանց	-	-	36,704	36,704
Ընդամենը համախառն էքսպրես վարկեր երաշխավորությամբ	**103,077**	**18,508**	**37,919**	**159,504**
Պարտքային կորստի պահուստ	**(3,378)**	**(3,805)**	**(13,837)**	**(21,020)**
Ընդամենը զուտ էքսպրես վարկեր երաշխավորությամբ	**99,699**	**14,703**	**24,082**	**138,484**
Աշխատավարձային ծրագրերի				

գծով վարկեր				
- ոչ ժամկետանց	496,581	493	-	497,074
- մինչև 30 օր ժամկետանց	5,189	-	-	5,189
- 31-90 օր ժամկետանց	-	5,652	-	5,652
- 91-180 օր ժամկետանց	-	-	8,046	8,046
- 181-360 օր ժամկետանց	-	-	17	17
Ընդամենը աշխատավարձային ծրագրերի գծով համախառն վարկեր	**501,770**	**6,145**	**8,063**	**515,978**
Պարտքային կորստի պահուստ	**(3,321)**	**(1,312)**	**(3,899)**	**(8,532)**
Ընդամենը աշխատավարձային ծրագրերի գծով զուտ վարկեր	**498,449**	**4,833**	**4,164**	**507,446**

	31 դեկտեմբերի 2020թ.*			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը վարկեր**
	հազ. դրամ	**հազ. դրամ**	**հազ. դրամ**	**հազ. դրամ**
Վարկային գծոր				
- ոչ ժամկետանց	2,194,233	92	-	2,194,325
- մինչև 30 օր ժամկետանց	27,885	-	-	27,885
- 31-90 օր ժամկետանց	-	58,990	-	58,990
- 91-180 օր ժամկետանց	-	-	94,225	94,225
- 181-360 օր ժամկետանց	-	-	3,204	3,204
Ընդամենը համախառն վարկային գծեր	**2,222,118**	**59,082**	**97,429**	**2,378,629**
Պարտքային կորստի պահուստ	**(32,203)**	**(29,956)**	**(67,460)**	**(129,619)**
Ընդամենը զուտ վարկային գծեր	**2,189,915**	**29,126**	**29,969**	**2,249,010**
Այլ վարկերի ֆիզիկական անձանց				
- ոչ ժամկետանց	1,574,547	8,558	86,140	1,669,245
- մինչև 30 օր ժամկետանց	7,013	-	-	7,013
- 31-90 օր ժամկետանց	-	14,240	-	14,240
- 91-180 օր ժամկետանց	-	-	101,596	101,596
- 181-360 օր ժամկետանց	-	-	3,997	3,997
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	72,958	72,958
Ընդամենը համախառն այլ վարկերի ֆիզիկական անձանց	**1,581,560**	**22,798**	**264,691**	**1,869,049**
Պարտքային կորստի պահուստ	**(16,086)**	**(4,433)**	**(102,207)**	**(122,726)**
Ընդամենը զուտ այլ վարկերի ֆիզիկական անձանց	**1,565,474**	**18,365**	**162,484**	**1,746,323**
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված համախառն վարկեր	**49,050,997**	**1,343,045**	**2,385,474**	**52,779,516**
Ընդամենը ակնկալվող պարտքային կարուստներ ֆիզիկական անձանց տրված վարկերի համար	**(448,914)**	**(207,372)**	**(779,795)**	**(1,436,081)**
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված զուտ վարկեր	**48,602,083**	**1,135,673**	**1,605,679**	**51,343,435**

* Աղյուսակում ներկայացված կորստի պահուստը ներառում է իրավաբանական և ֆիզիկական անձանց համար նախատեսված որոշ գործիքների, այդ թվում՝ վարկային քարտերի և օվերդրաֆտների հետ կապված փոխհատուցման հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները:

** Ղեկավարության գնահատմամբ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խոշոր կազմակերպություններին տրված առանց վարկանիշի համախառն վարկերի կազմում 15,916,719 հազար դրամ գումարով վարկերի (2019թ-ին՝ 10,263,491 հազար դրամ) վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Standard & Poor's» գործակալության վարկանշավորման համակարգի B+ վարկանիշին և 11,542,109 հազար դրամ գումարով վարկերի վարկանիշը մոտավորապես համապատասխանում է B վարկանիշին (2019թ-ին՝ 7,057,009 հազար դրամ):

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	31 դեկտեմբերի 2019թ.*			
	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Վարկեր խոշոր կազմակերպություններին				
- ոչ ժամկետանց	22,174,895	-	-	22,174,895
- ոչ ժամկետանց, պարտքային առումով արժեզրկված	-	-	14,313,799	14,313,799
Ընդամենը համախառն վարկեր խոշոր կազմակերպություններին	**22,174,895**	**-**	**14,313,799**	**36,488,694**
Պարտքային կորստի պահուստ	**(92,800)**	**-**	**(8,343,811)**	**(8,436,611)**
Ընդամենը զուտ վարկեր խոշոր կազմակերպություններին	**22,082,095**	**-**	**5,969,988**	**28,052,083**
Վարկեր առևտրային կազմակերպություններին				
- ոչ ժամկետանց	1,329,178	-	172,804	1,501,982
- 31-90 օր ժամկետանց	-	1,016	-	1,016
- 91-180 օր ժամկետանց	-	-	138,552	138,552
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	418,675	418,675
Ընդամենը համախառն վարկեր առևտրային կազմակերպություններին	**1,329,178**	**1,016**	**730,031**	**2,060,225**
Պարտքային կորստի պահուստ	**(18,250)**	**(898)**	**(295,924)**	**(315,072)**
Ընդամենը զուտ վարկեր առևտրային կազմակերպություններին	**1,310,928**	**118**	**434,107**	**1,745,153**
Վարկեր արդյունաբերական կազմակերպություններին				
- ոչ ժամկետանց	1,303,184	-	-	1,303,184
- 91-180 օր ժամկետանց	-	-	17,424	17,424
- 181-360 օր ժամկետանց	-	-	2,324	2,324
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	169,324	169,324
Ընդամենը համախառն վարկեր արդյունաբերական կազմակերպություններին	**1,303,184**	**-**	**189,072**	**1,492,256**

	31 դեկտեմբերի 2019թ.*			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը վարկեր
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Պարտքային կորստի պահուստ	**(1,155)**	**-**	**(32,124)**	**(33,279)**
Ընդամենը զուտ վարկեր արդյունաբերական կազմակերպություններին	**1,302,029**	**-**	**156,948**	**1,458,977**
Դրամական միջոցների գրավով վարկեր				-
- ոչ ժամկետանց	384,165	-	-	384,165
Պարտքային կորստի պահուստ	**-**	**-**	**-**	**-**
Ընդամենը զուտ դրամական միջոցների գրավով վարկեր	**384,165**	**-**	**-**	**384,165**

	31 դեկտեմբերի 2019թ.*			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը վարկեր
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Այլ վարկեր իրավաբանական անձանց				
- ոչ ժամկետանց	3,124,330	53,533	30,813	3,208,676
- մինչև 30 օր ժամկետանց	5,272	8,742	1,617	15,631
- 31-90 օր ժամկետանց	-	18,004	24,508	42,512
- 91-180 օր ժամկետանց	-	-	99,084	99,084
- 181-360 օր ժամկետանց	-	-	751,103	751,103
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	1,127,468	1,127,468
Ընդամենը համախառն այլ վարկեր իրավաբանական անձանց	**3,129,602**	**80,279**	**2,034,593**	**5,244,474**
Պարտքային կորստի պահուստ	**(35,275)**	**(3,158)**	**(1,154,852)**	**(1,193,285)**
Ընդամենը զուտ այլ վարկեր իրավաբանական անձանց	**3,094,327**	**77,121**	**879,741**	**4,051,189**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված համախառն վարկեր	**28,321,024**	**81,295**	**17,267,495**	**45,669,814**
Ընդամենը ակնկալվող պարտքային կարուստներ իրավաբանական անձանց տրված վարկերի համար	**(147,480)**	**(4,056)**	**(9,826,711)**	**(9,978,247)**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված զուտ վարկեր	**28,173,544**	**77,239**	**7,440,784**	**35,691,567**
Ֆիզիկական անձանց տրված վարկեր				
Անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	13,392,523	17,547	343,115	13,753,185
- մինչև 30 օր ժամկետանց	357,315	5,360	55,570	418,245
- 31-90 օր ժամկետանց	-	91,069	94,221	185,290
- 91-180 օր ժամկետանց	-	-	146,680	146,680
- 181-360 օր ժամկետանց	-	-	34,461	34,461

- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	1,088,435	1,088,435
Ընդամենը համախառն անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր	**13,749,838**	**113,976**	**1,762,482**	**15,626,296**
Պարտքային կորստի պահուստ	**(60,097)**	**(6,535)**	**(452,296)**	**(518,928)**
Ընդամենը զուտ անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր	**13,689,741**	**107,441**	**1,310,186**	**15,107,368**
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	10,857,309	-	83,253	10,940,562
- մինչև 30 օր ժամկետանց	18,384	-	67,941	86,325
- 31-90 օր ժամկետանց	-	4,107	-	4,107
Ընդամենը համախառն հիփոթեքային վարկեր	**10,875,693**	**4,107**	**151,194**	**11,030,994**
Պարտքային կորստի պահուստ	**(24,754)**	**(245)**	**(26,722)**	**(51,721)**
Ընդամենը զուտ հիփոթեքային վարկեր	**10,850,939**	**3,862**	**124,472**	**10,979,273**

	31 դեկտեմբերի 2019թ.*			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը վարկեր**
	հազ. դրամ	**հազ. դրամ**	**հազ. դրամ**	**հազ. դրամ**
Ոսկու գրավով վարկեր				
- ոչ ժամկետանց	6,532,127	830	4,646	6,537,603
- մինչև 30 օր ժամկետանց	128,264	2,890	865	132,019
- 31-90 օր ժամկետանց	-	8,534	1,174	9,708
- 91-180 օր ժամկետանց	-	-	1,585	1,585
- 181-360 օր ժամկետանց	-	-	1,175	1,175
Ընդամենը համախառն ոսկու գրավով վարկեր	**6,660,391**	**12,254**	**9,445**	**6,682,090**
Պարտքային կորստի պահուստ	**(16,088)**	**(1,329)**	**(3,755)**	**(21,172)**
Ընդամենը զուտ ոսկու գրավով վարկեր	**6,644,303**	**10,925**	**5,690**	**6,660,918**
Էքսպրես վարկեր առանց երաշխավորության				
- ոչ ժամկետանց	3,014,374	30,699	33,978	3,079,051
- մինչև 30 օր ժամկետանց	33,753	1,616	22,797	58,166
- 31-90 օր ժամկետանց	-	19,732	14,656	34,388
Ընդամենը համախառն էքսպրես վարկեր առանց երաշխավորության	**3,048,127**	**52,047**	**71,431**	**3,171,605**
Պարտքային կորստի պահուստ	**(108,344)**	**(10,509)**	**(46,685)**	**(165,538)**
Ընդամենը զուտ էքսպրես վարկեր առանց երաշխավորության	**2,939,783**	**41,538**	**24,746**	**3,006,067**
Դրամական միջոցների գրավով վարկեր				-
- ոչ ժամկետանց	301,519	-	-	**301,519**
- մինչև 30 օր ժամկետանց	2,034	-	-	**2,034**
Ընդամենը համախառն դրամական միջոցների գրավով վարկեր	**303,553**	-	-	**303,553**
Պարտքային կորստի պահուստ	-	-	-	-
Ընդամենը զուտ դրամական միջոցների գրավով վարկեր	**303,553**	-	-	**303,553**
Էքսպրես վարկեր				

երաշխավորությամբ				
- ոչ ժամկետանց	324,729	7,037	11,160	342,926
- մինչև 30 օր ժամկետանց	3,601	395	2,229	6,225
- 31-90 օր ժամկետանց	-	4,573	278	4,851
- 91-180 օր ժամկետանց	-	-	9,592	9,592
- 181-360 օր ժամկետանց	-	-	6,165	6,165
Ընդամենը համախառն էքսպրես վարկեր երաշխավորությամբ	**328,330**	**12,005**	**29,424**	**369,759**
Պարտքային կորստի պահուստ	**(4,905)**	**(1,655)**	**(14,411)**	**(20,971)**
Ընդամենը զուտ էքսպրես վարկեր երաշխավորությամբ	**323,425**	**10,350**	**15,013**	**348,788**

	31 դեկտեմբերի 2019թ.*			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը վարկեր
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Աշխատավարձային ծրագրերի գծով վարկեր				
- ոչ ժամկետանց	516,945	1,589	1,281	519,815
- մինչև 30 օր ժամկետանց	3,964	90	28	4,082
- 31-90 օր ժամկետանց	-	4,155	566	4,721
- 91-180 օր ժամկետանց	-	-	5,400	5,400
- 181-360 օր ժամկետանց	-	-	2,677	2,677
Ընդամենը աշխատավարձային ծրագրերի գծով համախառն վարկեր	**520,909**	**5,834**	**9,952**	**536,695**
Պարտքային կորստի պահուստ	**(4,702)**	**(1,331)**	**(5,020)**	**(11,053)**
Ընդամենը աշխատավարձային ծրագրերի գծով զուտ վարկեր	**516,207**	**4,503**	**4,932**	**525,642**
Վարկային գծոր				
- ոչ ժամկետանց	2,130,376	-	5,780	2,136,156
- մինչև 30 օր ժամկետանց	16,584	169	-	16,753
- 31-90 օր ժամկետանց	-	11,314	-	11,314
- 91-180 օր ժամկետանց	-	-	16,247	16,247
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	2,268	2,268
Ընդամենը համախառն վարկային գծեր	**2,146,960**	**11,483**	**24,295**	**2,182,738**
Պարտքային կորստի պահուստ	**(15,039)**	**(4,719)**	**(12,040)**	**(31,798)**
Ընդամենը զուտ վարկային գծեր	**2,131,921**	**6,764**	**12,255**	**2,150,940**
Այլ վարկեր ֆիզիկական անձանց				
- ոչ ժամկետանց	2,536,969	4,787	32,025	2,573,781
- մինչև 30 օր ժամկետանց	3,548	1,265	4,574	9,387
- 31-90 օր ժամկետանց	-	11,399	3,260	14,659
- 91-180 օր ժամկետանց	-	-	15,939	15,939
- 181-360 օր ժամկետանց	-	-	10,742	10,742
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	67,113	67,113
Ընդամենը համախառն այլ վարկերի ֆիզիկական անձանց	**2,540,517**	**17,451**	**133,653**	**2,691,621**
Պարտքային կորստի պահուստ	**(29,020)**	**(3,761)**	**(53,711)**	**(86,492)**
Ընդամենը զուտ այլ վարկերի ֆիզիկական անձանց	**2,511,497**	**13,690**	**79,942**	**2,605,129**
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված համախառն վարկեր	**40,174,318**	**229,157**	**2,191,876**	**42,595,351**
Ընդամենը ակնկալվող պարտքային կարուստներ ֆիզիկական անձանց տրված վարկերի համար	**(262,949)**	**(30,084)**	**(614,640)**	**(907,673)**
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված զուտ վարկեր	**39,911,369**	**199,073**	**1,577,236**	**41,687,678**

* Աղյուսակում ներկայացված կորստի պահուստը ներառում է իրավաբանական և ֆիզիկական անձանց համար նախատեսված որոշ գործիքների, այդ թվում՝ վարկային քարտերի և օվերդրաֆտների հետ կապված փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները:

(բ) Պարտքային կորստի պահուստի գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրություններ և դատողություններ

Պարտքային կորստի պահուստի գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրությունները և դատողությունները ներկայացված են Ծանոթագրություն 25 (բ) կետում:

(գ) Գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների վերլուծություն

(i) Իրավաբանական անձանց տրված վարկեր

Իրավաբանական անձանց տրված վարկերը ենթակա են վարկունակության գնահատման և արժեզրկման ստուգման անհատական հիմունքով: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի ընդհանուր վճարունակությունը վերջինիս տրամադրված վարկի պարտքային որակի առավել տեղին ցուցանիշն է: Այնուամենայնիվ, գրավը տալիս է լրացուցիչ ապահովվածություն, և Բանկը որպես կանոն գրավ է պահանջում իրավաբանական անձանցից:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն իրավաբանական անձանց տրված վարկերի համար ապահովություն ծառայող գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների վերաբերյալ (առանց արժեզրկման)՝ ըստ գրավի տեսակների:

31 դեկտեմբերի 2020թ.

հազ. դրամ	Հաճախորդներին տրված վարկերի հաշվեկշռային արժեք	Գրավի իրական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար	Գրավի իրական արժեքը վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար
Պարտքային առումով չարժեզրկված վարկեր			
Անշարժ գույք	11,686,248	-	11,686,248
Կորպորատիվ երաշխավորություններ*	17,531,201	-	17,531,201
Կորպորատիվ բաժնետոմսեր	4,243,923	-	4,243,923
Բարձր իրացվելի ակտիվներ**	4,101,474	4,101,474	-
Այլ գրավ	1,002,609	-	1,002,609
Առանց գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների	1,041,954	-	1,041,954
Ընդամենը պարտքային առումով չարժեզրկված վարկեր	**39,607,409**	**4,101,474**	**35,505,935**
Պարտքային առումով արժեզրկված վարկեր			
Անշարժ գույք***	3,294,865	3,294,865	-
Այլ գրավ	268,856	-	268,856
Առանց գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների	7,995	-	7,995
Ընդամենը պարտքային առումով արժեզրկված վարկեր	**3,571,716**	**3,294,865**	**276,851**

Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**43,179,125**	**7,396,339**	**35,782,786**

31 դեկտեմբերի 2019թ.

հազ. դրամ	Հաճախորդներին տրված վարկերի հաշվեկշռային արժեք	Գրավի իրական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար	Գրավի իրական արժեքը վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար
Պարտքային առումով չարժեզրկված վարկեր			
Անշարժ գույք	8,565,356	-	8,565,356
Կորպորատիվ երաշխավորություններ*	9,404,397	-	9,404,397
Կորպորատիվ բաժնետոմսեր	4,901,139	-	4,901,139
Բարձր իրացվելի ակտիվներ**	429,039	429,039	-
Այլ գրավ	1,150,375	-	1,150,375
Առանց գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների	3,800,477	-	3,800,477
Ընդամենը պարտքային առումով չարժեզրկված վարկեր	**28,250,783**	**429,039**	**27,821,744**
Պարտքային առումով արժեզրկված վարկեր			
Անշարժ գույք***	5,234,164	5,234,164	-
Բարձր իրացվելի ակտիվներ**	2,206,620	2,206,620	-
Ընդամենը պարտքային առումով արժեզրկված վարկեր	**7,440,784**	**7,440,784**	**-**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**35,691,567**	**7,869,823**	**27,821,744**

* Կորպորատիվ երաշխավորությունները տրամադրել են կայուն ֆինանսական արդյունքներ ունեցող ընկերություններ, և ըստ ղեկավարության ակնկալիքների, եթե համապատասխան վարկերի գծով տեղի ունենա պարտազանցում, երաշխավորողները կկարողանան ամբողջությամբ մարել վարկը:

** Բարձր իրացվելի ակտիվները ներառում են 3,032,742 հազար դրամ գումարով բանկերի և հաճախորդների ավանդները (2019թ-ին՝ 2,635,659 հազար դրամ) և 1,068,732 հազար դրամ գումարով կորպորատիվ պարտատոմսերը (2019թ-ին նման պարտատոմսեր չկային):

*** Անշարժ գույքի գումարում ներառված 922,271 հազար դրամ (2019թ-ին՝ 2,839,641 հազար դրամ) գումարն ուղղակիորեն գրավադրված չէ Բանկում: Այնուամենայնիվ, այն ծառայում է որպես ապահովություն երկու վարկառուներին տրամադրված վարկերի դիմաց Բանկում գրավադրված իրավունքի համար:

Վերը ներկայացված աղյուսակը բացառում է լրացուցիչ գրավի անհրաժեշտությունը:

Բանկն ունի վարկեր, որոնց համար գրավի իրական արժեքը գնահատվել է վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ և չի վերանայվել՝ հետագա փոփոխություններն արտացոլելու համար, ինչպես նաև վարկեր, որոնց գրավի իրական արժեքը չի որոշվել: Որոշ վարկերի համար գրավի իրական արժեքը վերանայվել է հաշվետու ամսաթվի դրությամբ: Գրավի գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է կախված այն փաստից, թե երբ է այն գնահատվել, եթե նման գնահատում իրականացվել է:

Մի քանի տեսակի գրավով ապահովված վարկերի համար բացահայտվում է այն գրավը, որն առավել տեղին է արժեզրկման գնահատման համար: Ֆիզիկական անձանցից, օրինակ՝ ՓՄՁ վարկառուների բաժնետերերից ստացված երաշխավորությունները չեն դիտարկվում արժեզրկման գնահատման նպատակների համար: Այդ իսկ պատճառով, նման վարկերը և մասնակիորեն ապահովված վարկերի չապահովված մասերը ներկայացվում են որպես առանց գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների վարկեր:
Ոչ ժամկետանց և չարժեզրկված վարկերի վերադարձելիությունը հիմնականում կախված է վարկառուների վճարունակությունից, այլ ոչ գրավի արժեքից, և Բանկի համար պարտադիր չէ վերանայել գրավի գնահատումը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցների գրավով վարկերի մնացորդը, որի գծով արժեզրկման գծով պահուստ չէր ձևավորվել գրավի առկայության պատճառով, կազմում էր 3,909,967 հազար դրամ (2019թ-ին՝ 813,551 հազար դրամ):

(ii) Ֆիզիկական անձանց տրված վարկեր

Սպառողական վարկերի համար ապահովություն է ծառայում հիմնականում անշարժ գույքը: Բանկի քաղաքականության համաձայն՝ սպառողական վարկերը տրամադրվում են առավելագույնը 40% վարկ/արժեք հարաբերակցությամբ վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ:

Երաշխավորությամբ և առանց երաշխավորության էքսպրես վարկերը հիմնականում գրավով ապահովված չեն:

Ոսկու գրավով վարկերի համար ապահովություն են ծառայում ոսկյա զարդերը: Բանկի քաղաքականության համաձայն՝ ոսկու գրավով վարկերը տրամադրվում են առավելագույնը 100% վարկ/արժեք հարաբերակցությամբ՝ վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ:

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Բանկի քաղաքականության համաձայն՝ հիփոթեքային վարկերը տրամադրվում են առավելագույնը 80% վարկ/արժեք հարաբերակցությամբ՝ վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ:

Դրամական միջոցների գրավով վարկերի և վարկային գծերի մի մասի դիմաց գրավադրված են բարձր իրացվելի ակտիվները, որոնք ներառում են ավանդները, Բանկի կողմից թողարկված ձեռք բերված պարտքային արժեթղթերը և ընթացիկ հաշիվները:

Աշխատավարձային ծրագրերի գծով վարկերի և վարկային գծերի մի մասը գրավով ապահովված չէ:

(iii) Վոգրաված գրավ

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել 1,126,820 հազար դրամ (2019թ-ին՝ 471,817 հազար դրամ) զուտ հաշվեկշռային արժեքով ակտիվներ՝ հաճախորդներին տրված վարկերի դիմաց գրավադրված միջոցների առգրավման միջոցով: 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առգրավված գրավը ներառում է հիմնականում անշարժ գույքը:

	2020թ. Հաշվեկշռային արժեք հազ. դրամ	2019թ. Հաշվեկշռային արժեք հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	1,476,007	1,087,443
Ավելացումներ	1,126,820	471,817
Վաճառք	(117,902)	(83,253)
Մանցորդը առ 31 դեկտեմբերի	**2,484,925**	**1,476,007**

Առգրավվման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարված վարկի հաշվեկշռային արժեքով: Ագրավումից հետո առգրավված ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Արժեզրկումը գնահատվում է շուկայական մեթոդով: Շուկայական մեթոդը հիմնված է նմանատիպ ակտիվների վերջերս տեղի ունեցած վաճառքների արդյունքների համեմատական վերլուծության կամ նմանատիպ ակտիվների վաճառքների հայտարարված գների վրա, կիրառելով 10%-ից 40% զեղչ վաճառքի հայտարարված գների նկատմամբ՝ կախված ակտիվի բնույթից և գտնվելու վայրից:

Բանկի քաղաքականության համաձայն՝ նման ակտիվները պետք է վաճառվեն հնարավորինս սեղմ ժամկետներում:

(դ) Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են տնտեսության հետևյալ ճյուղերում գործունեություն իրականացնող հաճախորդներին:

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Առևտուր և ֆինանսներ	29,733,721	30,154,107
Հանքարդյունաբերություն	5,706,623	5,792,620
Շինարարություն	5,378,669	3,755,289
Էներգետիկայի ոլորտ	5,331,535	730,739
Արդյունաբերություն	3,968,121	1,706,478
Հանգստի կազմակերպման ոլորտ	1,020,819	895,071
Սպասարկման ոլորտ	574,393	937,298
Տրանսպորտ և կապ	447,709	620,887
Գյուղատնտեսություն, անտառապահություն և փայտամշակում	31,145	38,486
Այլ	1,659,023	1,038,839
Ֆիզիկական անձանց տրված վարկեր	52,779,516	42,595,351
	106,631,274	**88,265,165**
Պարտքային կորստի պահուստ	(12,108,714)	(10,885,920)
	94,522,560	**77,379,245**

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 99,496,065 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2019թ-ին՝ 83,410,769 հազար դրամ) տրամադրվել են Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող հաճախորդներին:

(ե) Գրավադրված ակտիվներ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2,690,467 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2019թ-ին՝ 2,417,771 հազար դրամ) ծառայում են որպես գրավ վարկային կազմակերպություններից ստացված վարկերի և ՀՀ կառավարությունից ստացված փոխառությունների համար (տես Ծանոթագրություն 19):

(զ) Պարտքային ռիսկին ենթարկվածություն

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երեք վարկառու կամ կապակցված վարկառուների խմբեր (2019թ-ին՝ հինգ), որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկերի ընդհանուր գումարը կազմում է 22,095,098 հազար դրամ (2019թ-ին՝ 29,861,852 հազար դրամ):

(է) Վարկերի մարման ժամկետներ

Վարկային պորտֆելի մարման ժամկետների վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 25-ի (դ) կետում, որն արտացոլում է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի՝ պայմանագրով նախատեսված մարման ժամկետը մնացած ժամանակահատվածը:

16 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Շենքեր	Վարձակալված գույքի բարելավում	Համակարգիչներ և կապի սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխադրա-միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք/ վերագնահատված արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	4,323,235	477,360	1,698,307	1,271,887	122,383	1,052,058	8,945,230
Ավելացումներ	5,483	375,539	371,060	237,204	15,550	705,796	1,710,632
Օտարումներ/դուրսգրումներ	(72,606)	(4,638)	(6,140)	(26,924)	(5,534)	(16,911)	(132,753)
Վերադասակարգում	-	-	3,954	(3,954)	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**4,256,112**	**848,261**	**2,067,181**	**1,478,213**	**132,399**	**1,740,943**	**10,523,109**
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	906,124	47,560	1,157,735	578,600	34,458	410,008	3,134,485
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	83,686	38,334	222,188	180,470	14,826	196,236	735,740
Օտարումներ/դուրսգրումներ	(22,059)	(4,638)	(6,140)	(18,011)	(2,018)	(16,911)	(69,777)
Վերադասակարգում	-	-	51	(51)	-	-	
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**967,751**	**81,256**	**1,373,834**	**741,008**	**47,266**	**589,333**	**3,800,448**
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**3,288,361**	**767,005**	**693,347**	**737,205**	**85,133**	**1,151,610**	**6,722,661**

Սկզբնական արժեք/ վերագնահատված արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	4,278,337	266,517	1,499,699	1,051,131	81,871	658,310	7,835,865
Ավելացումներ	44,898	236,158	206,782	265,290	40,512	525,873	1,319,513
Օտարումներ/դուրսգրումներ	-	(25,315)	(8,174)	(44,534)	-	(132,125)	(210,148)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**4,323,235**	**477,360**	**1,698,307**	**1,271,887**	**122,383**	**1,052,058**	**8,945,230**
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	822,383	56,579	993,015	484,359	22,445	395,240	2,774,021
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	83,741	16,129	171,746	130,162	12,013	139,369	553,160
Օտարումներ/դուրսգրումներ	-	(25,148)	(7,026)	(35,921)	-	(124,601)	(192,696)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**906,124**	**47,560**	**1,157,735**	**578,600**	**34,458**	**410,008**	**3,134,485**
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**3,417,111**	**429,800**	**540,572**	**693,287**	**87,925**	**642,050**	**5,810,745**

(ա) Վերագնահատված ակտիվներ

2021թ. ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու համար ղեկավարությունը պայմանագիր է կնքել անկախ գնահատողի հետ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շենքերի իրական արժեքը գնահատելու համար: Անկախ գնահատողի կողմից գնահատված շենքերի իրական արժեքը մոտավորապես համապատասխանել է դրանց հաշվեկշռային արժեքին:

Գնահատման համար որպես հիմք օգտագործվել է շուկայական և եկամտի կապիտալացման մեթոդների համակցությունը:

Շենքերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին, քանի որ կիրառվող գնահատման մեթոդի դիտելի ելակետային տվյալների գծով կատարվել են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ (գործակիցներ):

Եթե շենքերի վերագնահատում չիրականացվեր, ապա 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շենքերի հաշվեկշռային արժեքը կկազմեր 3,172,202 հազար դրամ (2019թ-ին՝ 3,281,252 հազար դրամ):

17 Վարձակալության գծով պարտավորություն/ Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ

Բանկը վարձակալում է ակտիվներ, մասնավորապես, հաճախորդների սպասարկման կենտրոնի տարածքներ սովորաբար 5-10 տարի ժամկետով: Ստորև ներկայացված է այն վարձակալությունների մասին տեղեկատվությունը, որոնց շրջանակում Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ:

(ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	1,606,304	859,117
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ավելացումներ	114,460	967,759
Ժամանակաշրջանի մաշվածության գումար	(226,929)	(220,572)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**1,493,835**	**1,606,304**

(բ) Վարձակալության գծով պարտավորություն

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Մինչև մեկ տարի ժամկետով	286,048	299,993
Մեկից երկու տարի ժամկետով	286,468	265,049
Երկուսից հինգ տարի ժամկետով	853,246	736,171
Ավելի քան հիմնգ տարի ժամկետով	808,728	872,190
Ընդամենը չզեղչված վարձակալության գծով վճարվելիք գումար	**2,234,490**	**2,173,403**
Չվաստակած ֆինանսական ծախսեր	(691,844)	(534,983)
Վարձակալության գծով պարտավորություն	**1,542,646**	**1,638,420**

(գ) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածություն	226,929	220,572
Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ	80,357	93,781
Կարճաժամկետ վարձակալություններին վերաբերող ծախսեր	36,951	43,907

(դ) Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Ընդամենը դրամական միջոցների արտահոսք վարձակալությունների գծով		
Վարձակալության գծով պարտավորությունների գծով վճարումներ	290,591	282,238

18 Այլ ակտիվներ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Այլ ստացվելիք գումարներ	758,076	848,824
Պարտքային կորստի պահուստ	(315,558)	(3,201)
Ընդամենը զուտ այլ ֆինանսական ակտիվներ	**442,518**	**845,623**
Կանխավճարներ	934,320	1,418,083
Նյութեր և պաշարներ	80,479	88,026
Այլ	23,209	55,738
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	**1,038,008**	**1,561,847**
Ընդամենը այլ ակտիվներ	**1,480,526**	**2,407,470**

314,059 հազար դրամ պահուստն իրենից ներկայացնում է 3-րդ փուլի ֆինանսական ակտիվների պահուստ:

19 Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Ժամկետային ավանդներ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	11,367,033	9,240,996
Գրավով չապահովված վարկեր բանկերից	5,488,339	4,672,177
Գրավով ապահովված վարկեր այլ ֆինանսական կազմակերպություններից	2,690,750	2,418,041
Լորո հաշիվներ	7,266,131	3,798,528
	26,812,253	**20,129,742**

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2,690,467 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2019թ-ին՝ 2,417,771 հազար դրամ) ծառայում են որպես գրավ վարկային կազմակերպություններից ստացված գրավով ապահովված վարկերի համար (Ծանոթագրություն 15):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երեք բանկի և այլ ֆինանսական կազմակերպությունների (2019թ-ին՝ մեկ բանկի և ֆինանսական կազմակերպության) Բանկում տեղաբաշխված միջոցների մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 13,595,038 հազար դրամ (2019թ-ին՝ 5,452,875 հազար դրամ):

20 Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ ՀՀ ԲԿ-ին	16,504,941	4,001,223
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ տեղական բանկերին	3,319,049	11,535,658
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ տեղական ֆինանսական կազմակերպություններին	961,822	755,814
	20,785,812	**16,292,695**

Հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված են այլ համապատիկ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող 2,443,334 հազար դրամ գումարով և ամորտիզացված արժեքով չափվող 19,624,563 հազար դրամ գումարով Բանկի սեփական արժեթղթերը (2019թ-ին՝ այլ համապատիկ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող 2,260,311 հազար դրամ և ամորտիզացված արժեքով չափվող 13,053,180 հազար դրամ գումարով ներդրումային արժեթղթերը):

21 Թողարկված պարտքային արժեթղթեր

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Թողարկված պարտքային արժեթղթեր	**13,416,535**	**6,700,803**

2020թ. ընթացքում Բանկը թողարկել է 10,000,000 ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտատոմսեր (2019թ-ին՝ 10,000,000 ԱՄՆ դոլար և 250,000 հազար դրամ անվանական արժեքով պարտատոմսեր): 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի արժեթղթերի ֆոնդային բորսայում Բանկի կողմից տեղաբաշխված արժեթղթերի անվանական արժեքը կազմում է 25,000,000 ԱՄՆ դոլար և 25,000,000 հազար դրամ:

(ա) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համաձրում

հազ. դրամ	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	6,700,803	10,823,040
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Մուտքեր թողարկված պարտքային արժեթղթերից	5,708,144	4,252,464
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	-	(8,207,150)

հազ. դրամ	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**5,708,144**	**(3,954,686)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	**906,469**	**(14,659)**
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	488,757	470,604
Վճարված տոկոսներ (դրամական հոսքեր գործառնական գործունեությունից)	(387,638)	(623,496)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**13,416,535**	**6,700,803**

22 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
- Ֆիզիկական անձիք	14,602,631	9,656,926
- Իրավաբանական անձինք	11,538,331	5,474,322
Ժամկետային ավանդներ		
- Ֆիզիկական անձիք	37,929,956	41,881,392
- Իրավաբանական անձինք	2,702,599	1,806,480
	66,773,517	**58,819,120**

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկում պահվող հաճախորդների ավանդների 3,675,054 հազար դրամ գումարով մնացորդները (2019թ-ին՝ 4,477,966 հազար դրամ) ծառայում են որպես գրավ հաճախորդներին տրված վարկերի և Բանկի կողմից տրամադրված երաշխավորությունների համար:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի այնպիսի հաճախորդ (2019թ-ին նման հաճախորդ չկար), որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

23 Այլ պարտավորություններ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Այլ ֆինանսական պարտավորություններ	487,162	390,006
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**487,162**	**390,006**
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	581,895	672,480
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	433,470	329,554
Վճարվելիք հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	136,053	138,447
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**1,151,418**	**1,140,481**
Ընդամենը այլ պարտավորություններ	**1,638,580**	**1,530,487**

24 Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

(ա) Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 679,437 սովորական բաժնետոմսից (2019թ-ին՝ 679,437): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 50,000 դրամ (2019թ-ին՝ 50,000 դրամ):

2020թ. ընթացքում սովորական բաժնետոմսեր չեն թողարկվել (2019թ-ին նույնպես չէին թողարկվել): Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Պահուստների բնույթը և նպատակը

Շենքերի վերագնահատումից աճ

Շենքերի վերագնահատումից աճը ներառում է շենքերի վերագնահատված կուտակային դրական արժեքը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

(գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով:

2020թ-ին և 2019թ-ին շահաբաժիններ չեն հայտարարվել:

25 Ռիսկերի կառավարում

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի բանկային գործունեության համար և կազմում է Բանկի գործառնությունների կենսական տարրը: Ֆինանսական ռիսկը, շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, գործառնական և իրավական ռիսկերը և համբավը վտանգող ռիսկն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող արտադրանքն ու ծառայությունների և ընդունված լավագույն պրակտիկան արտացոլելու նպատակով: Բանկը մշակել է նշանակալի ռիսկերի և կապիտալի մասին հաշվետվությունների ներկայացման համակարգ:

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար:

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Բանկի գործունեության իրականացումն ապահովելու համար: Ռիսկերի կառավարման վարչության ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և սահմանված պահանջների հետ համապատասխանության ապահովման, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն Վարչության նախագահին և անուղղակիորեն՝ Բանկի Խորհրդին: Ռիսկերի կառավարման վարչությունը չի ենթարկվում և հաշվետու չէ համապատասխան ռիսկերն ընդունող բաժիններին:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի միջոցով և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության տեսակից և չափից:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի ներսում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը: Բացի պարտքային և շուկայական ռիսկերի ստանդարտ վերլուծություն իրականացնելուց, Ռիսկերի կառավարման վարչությունը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական բաժինների հետ՝ նրանց գործունեության համապատասխան ոլորտների հետ կապված մասնագիտական դատողություններ ստանալու համար:
Բանկի ներքին փաստաթղթերի համաձայն՝ Ռիսկերի կառավարման վարչությունը և ներքին աուդիտի ծառայությունը հաճախ պատրաստում են Բանկի նշանակալի ռիսկերի կառավարմանն անդրադարձող հաշվետվություններ: Հաշվետվությունները ներառում են դիտարկումներ Բանկի ընթացակարգերի և մեթոդաբանության արդյունավետության գնահատման վերաբերյալ և առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ:

(բ) Ֆինանսական ռիսկերի ուսումնասիրություն

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ֆինանսական ռիսկերին Բանկի ենթարկվածության վերաբերյալ:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Բանկում գործում են պարտքային ռիսկին ենթարկվածությունը կառավարող քաղաքականություն և ընթացակարգեր (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար), ներառյալ պորտֆելի գծով ռիսկի կենտրոնացումը սահմանափակելու վերաբերյալ ուղեցույցները և Վարկային կոմիտեի ստեղծումը՝ պարտքային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- փոխառուների (իրավաբանական անձանց և անհատների) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ գործիքների, որոնց գծով Բանկը ենթարկված է պարտքային ռիսկին,

շարունակական հսկողության ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող համապատասխան մենեջերների կողմից և փոխանցվում են Կորպորատիվ վարկավորման վարչություն, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման վարչության կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկի դիմումը՝ Կորպորատիվ վարկավորման վարչության և Ռիսկերի կառավարման վարչության կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Բանկի իրավաբանական, հաշվապահական հաշվառման և հարկային բաժինների կողմից՝ կախված առանձին ռիսկերից:

Բանկը շարունակաբար վերահսկում է պարտքային ռիսկին ենթարկվող առանձին գործիքների կատարողականը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և փոխառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Անհատների վարկային դիմումներն ուսումնասիրվում են Անհատների վարկավորման վարչության կողմից՝ կիրառելով Ռիսկերի կառավարման վարչության հետ համատեղ մշակած գնահատման մոդելները և դիմումների տվյալների ստուգման ընթացակարգերը:

Բացի առանձին վարկերի վերլուծությունից, Ռիսկերի կառավարման վարչությունը վարկային պորտֆելը գնահատում է պարտքային ռիսկի կենտրոնացվածության և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Պարտքային ռիսկ. Ակնկալվող պարտքային կորստների գումարները

Արժեզրկման գնահատման համար օգտագործվող ելակետային տվյալներ, ենթադրություններ և մեթոդներ

Տես հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Ծանոթագրություն 3 (ե) (vi) կետում:

Պարտքային ռիսկի նշանակալի աճ

Որոշելու համար, արդյոք ֆինանսական գործիքի գծով պարտազանցման ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, Բանկը դիտարկում է ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ինչպես նաև Բանկի անցյալ ժամանակաշրջանների փորձի, վարկային որակի փորձագետների գնահատման և ապագայամետ տեղեկատվության վրա հիմնված վերլուծությունը:

Գնահատման նպատակն է պարզել, արդյոք տեղի է ունցել պարտքային ռիսկի նշանակալի աճ՝ համեմատելով հետևյալ ցուցանիշները.

- պարտազանցման հավանականությունն ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում՝ հաշվետու ամսաթվի դրությամբ,
- պարտազանցման հավանականությունն ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում ժամանակի տվյալ պահի համար, որը գնահատվել է պարտքային ռիսկին ենթարկվող գործիքի սկզբնական ճանաչման պահին (ճշգրտված վաղաժամ մարումների ակնկալիքների փոփոխությունների մասով՝ կիրառելի լինելու դեպքում):

Բանկն օգտագործում է երեք չափանիշ, որոշելու համար, արդյոք տեղի է ունցել պարտքային ռիսկի նշանակալի աճ.

- քանակական թեստ՝ հիմք ընդունելով պարտազանցման հավանականության փոփոխությունները,
- որակական ցուցանիշներ և
- ժամկետանցության 30-օրյա սահմանափակիչ:

Բանկի վարկառուների ենթարկվածությունը պարտքային ռիսկին կանոնավոր կերպով հսկվում է, որի արդյունքում կարող է ի հայտ գալ պարտքային ռիսկի նշանակալի աճի հայտանիշ: Հսկողության համար որպես կանոն օգտագործվում է հետևյալ տեղեկատվությունը.

Ենթարկվածությունը պարտքային ռիսկին (իրավաբանական անձանց տրված վարկեր)	**Ենթարկվածությունը պարտքային ռիսկին (իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր)**
– Հաճախորդի փաստաթղթերի, օրինակ՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների, կառավարչական հաշվետվությունների, բյուջեների և կանխատեսումների պարբերական ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը: Ցուցանիշները, որոնց հատուկ ուշադրություն է դարձվում, ներառում են՝ համախառն շահույթի մարժաները, ֆինանսական լծակավորման ցուցանիշները, պարտքի սպասարկման գործակիցը, համապատասխանությունը կովենանտներին, կառավարման որակը, վերադաս ղեկավար անձնակազմի փոփոխությունները:	– Վճարումների մասին տեղեկատվությունը, ներառյալ ժամկետանցության կարգավիճակի, մարումների փոփոխականության մասին տեղեկատվությունը:
– Վարկանիշային գործակալությունների, մամուլի հոդվածների տվյալները, արտաքին վարկանիշների փոփոխությունների մասին տեղեկատվությունը:	– Տրամադրված սահմանաչափի օգտագործումը, – Վարկային պայմանագրի պայմանների վերանայման դիմումը և դիմումի բավարարումը:
– Պարտատոմսերի գնանշված գները և պարտքի պարտազանցման սվոփերի գները վարկառուի համար՝ առկայության դեպքում:	– Առևտրային, ֆինանսական և տնտեսական պայմանների առկա և կանխատեսվող փոփոխությունները:
– Վակառուի քաղաքական, օրենսդրական և տեխնոլոգիական միջավայրի կամ նրա գործունեության փաստացի և ակնկալվող նշանակալի փոփոխությունները:	

Պարտազանցման հավանականության ժամկետային կառուցվածքի ստեղծում

Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ օգտագործվում են որպես հիմնական ելակետային տվյալներ իրավաբանական անձանց համար պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների գծով պարտազանցման հավանականության ժամկետային կառուցվածքը ստեղծելիս: Բանկը հավաքում է պարտքային ռիսկին ենթարկվող իր ֆինանսական գործիքների կատարողականի և պարտազանցման վերաբերյալ տեղեկատվություն, որը վերլուծվում է ըստ արտադրանքի/ծառայության և փոխառուի տեսակի, ինչպես նաև ըստ պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակի: Որոշ պորտֆելների համար օգտագործվում է նաև արտաքին վարկանիշային գործակալություններից ձեռք բերված տեղեկատվությունը: Բանկը սահմանում է պարտազանցման հավանականության առավելագույն չափը, որը հավասար է այն երկրի պարտազանցման հավանականության վարկանիշին, որտեղ իր գործունեությունն է իրականացնում վարկառուն:

Ժամկետանց օրերն օգտագործվում են որպես հիմնական ելակետային տվյալներ անհատների համար պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների գծով պարտազանցման հավանականության ժամկետային կառուցվածքը ստեղծելիս միգրացիայի մատրիցների Մարկովի մոդելում: Միգրացիայի մատրիցները կառուցվում են նախորդ 12 ամիսների տվյալների հիման վրա: COVID-19 համավարակի պատճառով Բանկը վարկային արձակուրդ էր տրամադրել իր ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներին 2020թ. որոշ ամիսների համար: Պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը պակաս գնահատելուց խուսափելու համար Բանկը պարտազանցման տեղի ունենալու տարեկան միջին հավանականության հաշվարկից բացառել է համապատասխան ամիսների մատրիցները:

Պարտքային ռիսկի նշանակալի աճի որոշում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Պարտքային ռիսկի աճի նշանակալի լինելը որոշելիս դիտարկվում են ֆինանսական գործիքի և փոխառուի բնութագրերը և աշխարհագրական տարածաշրջանը: Նշանակալիության չափանիշները տարբեր են փոխատվության տարբեր տեսակների, մասնավորապես, իրավաբանական և ֆիզիկական անձանց տրվող փոխատվությունների համար:

Սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի աճը կարող է համարվել նշանակալի նաև այն դեպքերում, երբ դրա այդ մասին են վկայում Բանկի պարտքային ռիսկի կառավարման գործընթացների հետ կապված որակական ցուցանիշները, որոնք այլ պարագայում կարող են ժամանակին ամբողջական առումով չարտացոլվել քանակական վերլուծության շրջանակում: Սա վերաբերում է պարտքային ռիսկին ենթարկվող այն գործիքներին, որոնք բավարարում են բարձրացված ռիսկի որոշ չափանիշներին, որոնցից է հատուկ ուշադրության ցանկում ներառվելը: Նման որակական գործոնները հիմնված են փորձագետների դատողությունների և անցյալ ժամանակաշրջանների համապատասխան փորձի վրա:

Բանկը պարտքային ռիսկի նշանակալի աճի մասին վկայող սահմանափակիչ է համարում ակտիվի ավելի քան 30 օր ժամկետանցությունը հաճախորդներին տրված վարկերի համար և 1 օր ժամկետանցությունը՝ բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների և ներդրումային արժեթղթերի համար: Ժամկետանց օրերի քանակը որոշվում է հաշվելով օրերն այն առաջին օրվանից, երբ վճարումն ամբողջությամբ չի ստացվել: Վճարում կատարելու ամսաթվերը որոշվում են առանց հաշվի առնելու արտոնյալ ժամանակահատվածը, որը կարող է տրամադրվել փոխառուին:

Որպես ընդհանուր ցուցանիշ համարվում է, որ տեղի է ունեցել պարտքային ռիսկին ենթարկվող գործիքի պատքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, եթե Բանկի քանակական մոդելների հիման վրա որոշվում է, որ ֆինանսական գործիքի մնացած ժամկետի համար պարտազանցման հավանականությունն աճել է ավելի քան 64%-ով:

Եթե գոյություն ունի վկայություն, որ այլևս չկա պարտքային ռիսկի նշանակալի աճ ի համեմատություն սկզբնական ճանաչման, գործիքի գծով կորստի պահուստը կրկին չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների չափով: Պարտքային ռիսկի աճի որոշ որակական ցուցանիշներ, այդ թվում՝ վերանայված պայմանների խախտումը, կարող են վկայել պարտազանցման ռիսկի աճի մասին, որը պահպանվում է, նույնիսկ երբ ցուցանիշն ինքնին դադարում է գոյություն ունենալ: Նման դեպքերում Բանկը սահմանում է փորձաշրջան, որի ընթացքում ֆինանսական ակտիվի գծով վճարումները պետք է կատարվեն ժամանակին և սահմանված չափով՝ ապացուցելու համար, որ պարտքային ռիսկը նշանակալիորեն նվազել է: Վարկի պայմանագրային պայմանների փոփոխության դեպքում ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչման չափանիշների այլևս բավարարված չլինելու ապացույց կարող է հանդիսանալ արդիական տեղեկատվությունը, որ առկա է վճարումները ժամանակին կատարելու պատմություն՝ փոփոխված պայմանագրային պայմաններին համապատասխան:

Պարտազանցության սահմանում

Բանկը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե՝

- հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի Բանկի նկատմամբ ստանձնած իր վարկային պարտավորությունները, եթե Բանկը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (առկայության դեպքում),
- Բանկի նկատմամբ փոխառուի նշանակալի վարկային պարտավորություններից որևէ մեկն ավելի քան 90 օր ժամկետանց է հաճախորդներին տրված վարկերի համար և ավելի քան 30 օր՝ բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների և ներդրումային արժեթղթերի համար: Օվերդրաֆտները ժամկետանց են համարվում այն օրվանից, երբ հաճախորդը խախտում է սահմանված սահմանաչափը կամ երբ հաճախորդին առաջարկվում է այնպիսի սահմանաչափ, որը ցածր է ընթացիկ չմարված գումարից, կամ

– հավանական է դառնում, որ ակտիվի պայմանները կվերանայվեն փոխառուի սնանկության արդյունքում՝ վարկային պարտավորությունները կատարելու փոխառուի անկարողության պատճառով:

Փոխառուի հետ կապված պարտազանցման տեղի ունենալը գնահատելիս՝ Բանկը դիտարկում է հետևյալը՝

– որակական ցուցանիշները, օրինակ՝ կովենանտների խախտումը,
– քանակական ցուցանիշները, օրինակ՝ նույն թողարկողի կողմից Բանկի նկատմամբ այլ պարտավորության ժամկետանց կարգավիճակը և չկատարումը և
– Բանկի ներսում մշակված և արտաքին աղբյուրներից ստացված տվյալները:

Ելակետային տվյալները, որոնք օգտագործվում են ֆինանսական գործիքի գծով պարտազանցման տեղի ունենալը գնահատելու համար, և դրանց նշանակալիությունը կարող են փոփոխվել ժամանակի ընթացքում՝ հանգամանքների փոփոխություններն արտացոլելու համար:

Ապագայամետ տեղեկատվության ներառում

Բանկը ներառում է ապագայամետ տեղեկատվությունը, երբ գնահատում է, արդյոք տեղի է ունեցել գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ չափում է ակնկալվող պարտքային կորուստները: Ապագայամետ տեղեկատվությունը գնահատելիս Բանկն օգտագործում է փորձագետների դատողությունները:

Բանկը նունականացրել և փաստաթղթավորել է պարտքային ռիսկի և պարտքային կորուստների առանցքային գործոնները ֆինանսական գործիքների յուրաքանչյուր պորտֆելի համար և, օգտագործելով անցյալ ժամանակաշրջանների տվյալների վերլուծությունը, գնահատել է մակրոտնտեսական փոփոխականի, պարտքային ռիսկի և պարտքային կորուստների միջև փոխհարաբերությունները: Առանցքային գործոններ է ՀՆԱ-ն: Առանցքային գործոնների և ֆինանսական ակտիվների տարբեր պորտֆելների գծով պարտազանցման և կորստի դրույքների կանխատեսվող փոխհարաբերությունները մշակվել են վերջին 6 տարիների տվյալների հիման վրա: Հաշվետու ամսաթվի դրությամբ, չնայած ապագա կանխատեսումների վրա հիմնված տեղեկատվության դրական գնահատված ազդեցության բազային մակրո սցենարի շրջանակում, ակնկալվող պարտքային կորուստները չեն ճշգրտվել ապագա կանխատեսումների վրա հիմնված տեղեկատվության մասով մակրո սցենարների միջև մեծ տարբերությունների պատճառով՝ պայմանավորված COVID-19 համավարակի հետ կապված իրավիճակով, Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ և այլ հանգամանքներով:

Փոփոխված ֆինանսական ակտիվներ

Վարկի պայմանագրային պայմանները կարող են փոփոխվել մի շարք պատճառներից ելնելով, ներառյալ շուկայական պայմանների փոփոխությունը, հաճախորդների պահպանումը և այլ գործոնները, որոնք կապված չեն հաճախորդի վճարունակության ներկայիս կամ հնարավոր վատթարացման հետ: Գոյություն ունեցող վարկը, որի պայմանները փոփոխվել են, կարող է ապաճանաչվել, և վերաբանակցված վարկը կարող է ճանաչվել որպես նոր վարկ իրական արժեքով՝ Ծանոթագրություն 3 (ե) (v) կետում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, և փոփոխությունը չի հանգեցնում ապաճանաչման, որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ, համեմատվում են՝

- պարտազանցման հավանականությունը ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում հաշվետու ամսաթվի դրությամբ՝ ելնելով փոփոխված պայմաններից,
- պարտազանցման հավանականությունը ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում, որը գնահատվում է սկզբնական ճանաչման պահին առկա տվյալների և սկզբնական պայմանագրային պայմանների հիման վրա:

Եթե փոփոխությունը հանգեցնում է ապաճանաչման, ճանաչվում է նոր վարկ և դասվում 1-ին փուլին (ենթադրելով, որ այն պարտքային առումով արժեզրկված չէ այդ պահին):

Բանկը վերաբանակցում է ֆինանսական դժվարություններ ունեցող հաճախորդների վարկերի պայմանները (վարկային պայմանագրի պայմանների վերանայում)՝ նպատակ ունենալով առավելագույնի հասցնել պարտքի վերադարձման հնարավորությունները և նվազագույնի հասցնել պարտազանցման ռիսկը: Վարկային պայմանագրի պայմանների վերանայման Բանկի քաղաքականության համաձայն՝ վարկի պայմանները վերնայավում են ընտրանքային կարգով, եթե փոխառուն ներկա պահին չի կատարել պարտքի գծով իր պարտականությունները կամ գոյություն ունի պարտազանցման մեծ ռիսկ, եթե գոյություն ունի վկայություն, որ փոխառուն ձեռնարկել է բոլոր ողջամիտ քայլերը մարումները սկզբնական պայմանագրային պայմանների համաձայն կատարելու համար և ակնկալվում է, որ կկարողանա կատարել իր պարտականությունները վերանայված պայմաններով:

Պայմանների վերանայումը սովորաբար ներառում է մարման ժամկետի երկարաձգումը, տոկոսների վճարման ժամկետների փոփոխությունը և կովենանտների պայմանների փոփոխությունը: Վարկային պայմանագրի պայմանների վերանայման քաղաքականությունը գործում է թե՛ անհատներին և թե՛ իրավաբանական անձանց տրված վարկերի համար:

Վարկային պայմանագրի պայմանների վերանայման Բանկի քաղաքականության շրջանակում փոփոխված ֆինանսական ակտիվների համար պարտազանցման հավանականության գնահատումն արտացոլում է այն հանգամանքը, արդյոք փոփոխությունը բարելավել է կամ վերականգնել է տոկոսները և մայր գումարը հավաքագրելու Բանկի կարողությունը, ինչպես նաև վարկային պայմանագրերի պայմանների նման վերանայումների Բանկի անցյալ ժամանակաշրջանների փորձը: Այս գործընթացի շրջանակում Բանկը գնահատում է փոխառուի կողմից մարումները ժամանակին կատարելու հնարավորությունը պայմանագրի պայմանների փոփոխության դեպքում և դիատրկում է տարբեր վարքագծային ցուցանիշներ:

Ընդհանուր առմամբ, վարկային պայմանագրի պայմանների վերանայումն իրենից ներկայացնում է պարտքային ռիսկի նշանակալի աճի որակական ցուցանիշ, և պայմանների վերանայման ակնկալիքը կարող է հանդես գալ որպես պարտքային առումով արժեզրկման վկայություն (տես՝

Ծանոթագրություն 3 (ե) (iv)): Անհրաժեշտ է, որ հաճախորդը հետևողականորեն ցուցադրի պարտաճանաչ վճարման վարքագիծ որոշակի ժամանակահատվածի ընթացքում, մինչև որ վարկն այլևս չհամարվի պարտքային առումով արժեզրկված/վարկի հետ կապված այլևս չարձանագրվի պարտազանցում, կամ մինչև որ չհամարվի, որ պարտազանցման հավանականությունն այնքան է նվազել, որ կորստի պահուստը կարող է կրկին չափվել 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս որպես առանցքային ելակետային տվյալներ հանդես են գալիս հետևյալ փոփոխականների ժամկետային կառուցվածքները.

- պարտազանցման հավանականությունը,
- կորուստը պարտազանցման դեպքում,
- պարտքի գումարը պարտազանցման պահին:

1-ին փուլի գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են բազմապատկելով 12-ամսյա պարտազանցման հավանականությունը պարտազանցման դեպքում առաջացող կորստի գումարով և պարտքի գումարով պարտազանցման պահին: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են բազմապատկելով ամբողջ ժամկետի համար պարտազանցման հավանականությունը պարտազանցման դեպքում առաջացող կորստի գումարով և պարտքի գումարով պարտազանցման պահին:

Պարտազանցման հավանականության գնահատման մեթոդաբանությունը ներկայացված է վերը՝ «Պարտազանցման հավանականության ժամկետային կառուցվածքի ստեղծում» բաժնում:

Բանկը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը գնահատում է հիմք ընդունելով պարտականությունները չկատարած պայմանագրային կողմերին ներկայացված պահանջների արդյունքում միջոցների վերադարձման ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը: Պարտազանցման դեպքում առաջացող կորստի գնահատման մոդելներում դիտարկվում են պահանջի կառուցվածքը, գրավը, առաջնահերթությունը, պայմանագրային կողմի գործունեության ոլորտը, ֆինանսական ակտիվի անբաժանելի մասը կազմող ցանկացած գրավի փոխհատուցման ծախսումները: Անշարժ գույքով ապահովված վարկերի համար վարկի գումար/գրավի արժեք հարաբերակցությունն առանցքային ցուցանիշ է պարտազանցման դեպքում առաջացող կորուստը որոշելու համար: Պարտազանցման դեպքում առաջացող կորստի գնահատականները ճշգրտվում են տարբեր տնտեսական սցենարների տեսանկյունից և անշարժ գույքով ապահովված վարկերի հետ կապված՝ անշարժ գույքի գների հնարավոր փոփոխություններն արտացոլելու համար: Պարտազանցման դեպքում առաջացող կորուստը հաշվարկվում է զեղչված դրամական հոսքերի հիմունքով՝ որպես զեղչման գործակից կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է պարտքի ակնկալվող գումարը պարտազանցման դեպքում: Բանկը պարտազանցման պահին պարտքի գումարը հաշվարկում է հիմք ընդունելով պայմանագրային կողմի պարտքի ընթացիկ գումարը և պայմանագրով թույլատրվող և մաշվածության արդյունքում այդ գումարի հնարավոր փոփոխությունները: Ֆինանսական ակտիվի համար պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է վերջինիս համախառն հաշվեկշռային արժեքը պարտազանցման պահին: Փոխատվության հանձնառությունների համար պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է հնարավոր ապագա գումարները, որոնք կարող են օգտագործվել պայմանագրի շրջանակում, որոնք գնահատվում են անցյալ ժամանակաշրջանների դիտարկումների և ապագայամետ տեղեկատվության հիման վրա: Ֆինանսական երաշխավորությունների համար պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է վճարման ենթակա գումարը ֆինանսական երաշխավորության կատարման պահին:

Ինչպես նշված է վերը և պայմանով, որ 1-ին փուլի ֆինանսական ակտիվների համար առավելագույնս կօգտագործվի պարտազանցման հավանականության 12-ամսյա ցուցանիշը, Բանկը ակնկալվող պարտքային կորուստները չափում է հաշվի առնելով պարտազանցման ռիսկն այն առավելագույն պայմանագրային ժամանակահատվածում (ներառյալ փոխառուի երկարաձգման բոլոր հնարավորությունները), որի ընթացքում այն ենթարկվում է պարտքային ռիսկին, եթե նույնիսկ Բանկը դիտարկում է ավելի երկար ժամանակահատված պարտքային ռիսկի կառավարման նպատակների համար: Առավելագույն պայմանագրային ժամանակահատվածը տևում է մինչև այն ամսաթիվը, երբ Բանկն իրավունք ունի պահանջել փոխատվության մարումը կամ դադարեցնել փոխատվության հանձնառությունը կամ երաշխավորությունը:

Եթե ցուցանիշի մոդելավորումն իրականացվում է խմբային հիմունքով, ֆինանսական գործիքները խմբավորվում են ըստ ռիսկի ընդհանրական բնութագրերի, որոնք ներառում են՝

- գործիքի տեսակը,
- ժարտքային ռիսկի վարկանիշները,
- գրավի տեսակը:

Խմբավորումները պետք է կանոնավոր հիմունքով վերանայվեն՝ առանձին խմբերի շրջանակում պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների միատեսակ լինելն ապահովելու համար:

Այն պորտֆելների համար, որոնց վերաբերյալ Բանկն ունի անցյալ ժամանակաշրջանների սահմանափակ տվյալներ, ներքին աղբյուրներից հասանելի տեղեկատվությունը լրացնելու համար օգտագործվում է արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվությունը: Ստորև ներկայացված են այն պորտֆելները, որոնց համար արտաքին աղբյուրներից ստացված

ուղենիշային տեղեկատվությունն օգտագործվել է որպես նշանակալի ելակետային տվյալ ակնկալվող պարտքային կորուստները չափելիս:

		Օգտագործված արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվություն	
	Ենթարկվածությունը պարտքային ռիսկին	**Պարտազանցման հավանականություն**	**Կորուստը պարտազանցման դեպքում**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	8,190,764	«S&P» գործակալության պարտազանցման վերլուծության հաշվետվություն	«Moody» գործակալության պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	20,815,911	«S&P» գործակալության պարտազանցման վերլուծության հաշվետվություն	«Moody» գործակալության պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն
Իրավաբանական անձանց տրված վարկեր	18,251,332	«S&P» գործակալության պարտազանցման վերլուծության հաշվետվություն	«Moody» գործակալության պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն
Իրավաբանական անձանց տրված վարկեր	9,231,744	«S&P» գործակալության պարտազանցման վերլուծության հաշվետվություն	-
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	17,861,537	«S&P» գործակալության պարտազանցման վերլուծության հաշվետվություն	«Moody» գործակալության պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն

Պարտքային ռիսկի կենտրոնացում

Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային հանձնառություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10,428,520	7,756,450
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	8,484,090	8,762,820
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	20,665,862	23,100,375
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	4,312
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	17,819,238	10,305,167
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,039,207	4,767,263
Հաճախորդներին տրված վարկեր	94,522,560	77,379,245
Այլ ֆինանսական ակտիվներ	442,518	845,623
Պարտքային ռիսկին ընդհանուր առավելագույն ենթարկվածություն	**158,401,995**	**132,921,255**

Որպես կանոն գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում ներդրումների, բանկերին տրված վարկերի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառության գործառնությունների մաս:

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և այդ վարկերի գծով պարտքային ռիսկի կենտրոնացման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 15-ում:

Չճանաչված պայմանագրային հանձնառությունների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է Ծանոթագրություն 27-ում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են այն ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

– հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ

– հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցվելու հանգամանքից:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ գործիքների քլիրինգի պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխատվության գլխավոր պայմանագրերը: Համանման ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի փոխառության և փոխատվության պայմանագրերը:

Բանկը ստանում և ընդունում է գրավ դրամական միջոցների և շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով:

Նման գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտազանցում կատարելու, անվճարունակ դառնալու կամ սնանկանալու դեպքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	**Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավո-րության համախառն գումարներ**	**Ֆին. վիճակի մասին հաշվետվու-թյունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. Պարտավո-րության/ ակտիվի համախառն գումար**	**Ֆին. վիճակի մասին հաշվետվությու նում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորու-թյունների զուտ գումար**	**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ**		
				Ֆին. գործիքներ	**Որպես գրավ ստացված դրամական միջոցներ**	**Զուտ գումար**
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,039,207	-	6,039,207	(6,039,207)	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**6,039,207**	**-**	**6,039,207**	**(6,039,207)**	**-**	**-**
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	(2,690,750)	-	(2,690,750)	2,690,467	-	(283)
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(20,785,812)	-	(20,785,812)	16,604,596	-	(4,181,216)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(23,476,562)**	**-**	**(23,476,562)**	**19,295,063**	**-**	**(4,181,499)**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրազործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	**Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավո-րության համախառն գումարներ**	**Ֆին. վիճակի մասին հաշվետվու-թյունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. Պարտավո-րության/ ակտիվի համախառն գումար**	**Ֆին. վիճակի մասին հաշվետվությու նում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորու-թյունների զուտ գումար**	**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ**		**Զուտ գումար**
				Ֆին. գործիքներ	**Որպես գրավ ստացված դրամական միջոցներ**	
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	4,767,263	-	4,767,263	(4,767,263)	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**4,767,263**	-	**4,767,263**	**(4,767,263)**	-	-
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	(2,418,041)	-	(2,418,041)	2,417,771	-	(270)
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(16,292,695)	-	(16,292,695)	14,089,904	-	(2,202,791)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(18,710,736)**	-	**(18,710,736)**	**16,507,675**	-	**(2,203,061)**

Վերը նշված աղյուսակներում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են ԱՊԿԿ-ի կողմից՝ Ռիսկերի կառավարման վարչության առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների գծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտարժույթի դիրքեր և կորուստների սահմանաչափեր, որոնք կանոնավոր կերպով մշտադիտարկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Վարչության կողմից:

(i) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Բանկը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա շուկայում գերակշռող տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել կորուստների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխությունների դեպքում:

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների ճեղքվածքի հսկողության միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների ճեղքվածքի վերաբերյալ տեղեկատվությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2020թ.							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նեդրումային արժեթղթեր	99,787	750,715	262,297	5,530,560	1,547,405	293,326	8,484,090
Ամորտիզացված արժեքով չափվող նեդրումային արժեթղթեր	91,472	1,696,663	1,014,150	11,292,554	6,571,023	-	20,665,862
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	2,766,609	5,385,653	1,569,520	1,230,349	-	6,867,107	17,819,238
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,039,207	-	-	-	-	-	6,039,207
Հաճախորդներին տրված վարկեր	14,662,888	8,129,308	8,218,628	47,404,717	15,725,772	381,247	94,522,560
	23,659,963	**15,962,339**	**11,064,595**	**65,458,180**	**23,844,200**	**7,541,680**	**147,530,957**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	6,624,212	5,674,649	5,217,074	1,456,493	573,694	7,266,131	26,812,253
Թողարկված պարտքային արժեթղթեր	2,639,733	-	2,628,864	8,147,938	-	-	13,416,535
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	20,785,812	-	-	-	-	-	20,785,812
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	35,163,603	9,854,810	17,133,587	4,009,380	612,137	-	66,773,517
	65,213,360	**15,529,459**	**24,979,525**	**13,613,811**	**1,185,831**	**7,266,131**	**127,788,117**
	(41,553,397)	**432,880**	**(13,914,930)**	**51,844,369**	**22,658,369**	**275,549**	**19,742,840**

Բացասական կարճաժամկետ տոկոսադրույքի ճեղքվածքի դիրքը կառավարելու համար Բանկն օգտագործում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերը, որոնք կարող են վաճառվել կամ գրավադրվել հետգնման պայմանագրերի դիմաց, և առաջնորդվում է այն ենթադրությամբ, որ ժամկետային ավանդները կերկարաձգվեն մարման ժամկետից հետո:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2020թ.							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	103,767	219,843	209,884	2,386,388	3,289,485	2,553,453	8,762,820
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	72,837	24,047	2,633,269	4,997,342	15,372,880	-	23,100,375
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	1,182,194	1,127,723	1,943,532	197,062	-	5,854,656	10,305,167
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	4,767,263	-	-	-	-	-	4,767,263
Հաճախորդներին տրված վարկեր	16,505,481	19,675,582	24,816,664	14,590,621	1,790,897	-	77,379,245
	22,631,542	**21,047,195**	**29,603,349**	**22,171,413**	**20,453,262**	**8,408,109**	**124,314,870**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	3,325,711	6,323,917	4,070,298	2,161,072	450,217	3,798,527	20,129,742
Թողարկված պարտքային արժեթղթեր	54,803	-	-	6,646,000	-	-	6,700,803
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	16,292,695	-	-	-	-	-	16,292,695
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	24,982,574	11,416,436	16,799,490	4,803,012	817,608	-	58,819,120
	44,655,783	**17,740,353**	**20,869,788**	**13,610,084**	**1,267,825**	**3,798,527**	**101,942,360**
	(22,024,241)	**(3,306,842)**	**8,733,561**	**8,561,329**	**19,185,437**	**4,609,582**	**22,372,510**

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2020թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			2019թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսակիր ակտիվներ						
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նեդրումային արժեթղթեր	13.2%	7.0%	-	10.5%	7.0%	-
Ամորտիզացված արժեքով չափվող նեդրումային արժեթղթեր	8.4%	7.2%	4.0%	12.4%	6.5%	4.0%
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	11.0%	4.2%	6.5%	10.7%	5.4%	4.5%
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6.4%	1.0%	1.3%	6.1%	-	1.4%
Հաճախորդներին տրված վարկեր	12.1%	11.5%	6.6%	12.3%	11.5%	7.4%
Տոկոսակիր պարտավորություններ						
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ						
- Ժամկետային ավանդներ	7.2%	5.0%	2.5%	7.0%	4.1%	-
- Վարկեր բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	7.9%	3.0%	-	8.2%	4.0%	1.6%
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ						
- Ժամկետային ավանդներ	8.6%	4.5%	1.6%	8.8%	4.5%	2.1%
- Ընթացիկ հաշիվներ	0.0%-5%	0.0%-1.5%	0.0%-0.25%	0.0%-5%	0.0%-1.5%	0.0%-0.25%
Թողարկված պարտքային արժեթղթեր	9.5%	5.1%	-	9.5%	5.2%	-
Վարձակալության գծով պարտավորություն	11.9%	10.4%	-	11.9%	10.4%	-

	2020թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			2019թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	5.5%	3.0%	1.0%	5.6%	-	-

Տոկոսադրույքի զգայնության վերլուծություն

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության հսկողությամբ: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխությունների (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է համապատասխանաբար տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գոյություն ունեցող դիրքերի հիման վրա:

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
100 բկ զուգահեռ նվազում	156,464	127,587
100 բկ զուգահեռ աճ	(156,464)	(127,587)

Ստորև ներկայացված է սեփական կապիտալի զգայնության վերլուծությունը, պայմանավորված տոկոսադրույքների փոփոխության հետևանքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններով, որն իրականացվել է 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գոյություն ունեցող դիրքերի և եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	2020թ. Սեփական կապիտալ հազ. դրամ	2019թ. Սեփական կապիտալ հազ. դրամ
100 բկ զուգահեռ նվազում	329,999	263,025
100 բկ զուգահեռ աճ	(329,999)	(263,025)

(ii) Արժութային ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արժութային ռիսկին, սակայն այս գործառնությունները չեն որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն՝ ՖՀՄՍ պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ՀՀ դրամ հազ. դրամ	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,385,450	6,726,705	1,129,026	1,976,434	17,217,615
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նեդրումային արժեթղթեր	4,341,597	4,142,493	-	-	8,484,090
Ամորտիզացված արժեքով չափվող նեդրումային արժեթղթեր	16,173,111	2,760,586	1,732,165	-	20,665,862
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	3,593,754	7,853,508	6,195,846	176,130	17,819,238
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	5,974,250	23,676	41,281	-	6,039,207
Հաճախորդներին տրված վարկեր	56,805,530	24,715,314	11,327,176	1,674,540	94,522,560
Այլ ֆինանսական ակտիվներ	133,506	303,392	726	4,894	442,518
Ընդամենը ակտիվներ	**94,407,198**	**46,525,674**	**20,426,220**	**3,831,998**	**165,191,090**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	15,447,837	6,940,907	3,646,361	777,148	26,812,253
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	33,089,397	30,606,680	2,229,051	848,389	66,773,517
Թողարկված պարտքային արժեթղթեր	253,572	13,162,963	-	-	13,416,535
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	16,504,941	2,613,635	1,667,236	-	20,785,812
Վարձակալության գծով պարտավորություն	1,162,389	380,257	-	-	1,542,646
Այլ ֆինանսական պարտավորություններ	393,017	92,269	781	1,095	487,162
Ընդամենը պարտավորություններ	**66,851,153**	**53,796,711**	**7,543,429**	**1,626,632**	**129,817,925**
Արժութային սվոփ պայմանագրեր	-	**15,093,498**	**(12,913,790)**	**(2,198,748)**	**(19,040)**
Զուտ դիրքը	**27,556,045**	**7,822,461**	**(30,999)**	**6,618**	**35,354,125**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ՀՀ դրամ հազ. դրամ	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,991,075	1,877,796	944,097	3,524,069	14,337,037
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նեդրումային արժեթղթեր	2,644,898	3,858,817	-	2,259,105	8,762,820
Ամորտիզացված արժեքով չափվող նեդրումային արժեթղթեր	16,224,096	5,308,512	1,567,767	-	23,100,375
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	2,462,989	5,727,012	1,469,375	645,791	10,305,167
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	4,723,190	-	44,073	-	4,767,263
Հաճախորդներին տրված վարկեր	46,680,368	20,966,541	7,553,438	2,178,898	77,379,245
Այլ ֆինանսական ակտիվներ	461,301	376,738	1,018	6,566	845,623
Ընդամենը ակտիվներ	**81,187,917**	**38,115,416**	**11,579,768**	**8,614,429**	**139,497,530**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	12,305,088	2,949,750	3,385,660	1,489,244	20,129,742
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	24,835,917	32,001,003	1,645,951	336,249	58,819,120
Թողարկված պարտքային արժեթղթեր	253,538	6,447,265	-	-	6,700,803
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	10,918,439	-	5,374,256	-	16,292,695
Այլ ֆինանսական պարտավորություններ	309,857	60,503	5,893	13,753	390,006
Ընդամենը պարտավորություններ	**48,622,839**	**41,458,521**	**10,411,760**	**1,839,246**	**102,332,366**
Արժութային սվոփ պայմանագրեր	**-**	**6,698,934**	**(1,049,362)**	**(5,645,260)**	**4,312**
Զուտ դիրքը	**32,565,078**	**3,355,829**	**118,646**	**1,129,923**	**37,169,476**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս հաշվի են առնվել նախքան հարկումը գումարները և հիմք են ընդունվել արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները, որոնք Բանկը դիտարկում էր որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճ 10%-ով	782,246	335,583
ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի փոխարժեքի աճ 10%-ով	(3,040)	11,865

2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի աճը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով:

Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Բանկը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածք, որը կազմված է թողարկված պարտքային արժեթղթերից, այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերից, հիմնական կորպորատիվ հաճախորդների և անհատների ավանդներից, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելներ՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և արդյունավետ բավարարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության հսկողություն:

Գանձապետարանը բաժիններից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ ամբողջ Բանկում:

Գանձապետարանն իրականացնում է իրացվելիության դիրքի հսկողություն օրական կտրվածքով և իրացվելիության կանոնավոր «ստրեսային թեսթեր»՝ շուկայական սովորական և ավելի խիստ պայմանները ներառող տարբեր սցենարների շրջանակում: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Գանձապետարանի կողմից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով չզեղչված դրամական հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված ամենավաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված դրամական ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է չզեղչված պայմանագրային դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ փոխատվության հանձնառությունների գծով:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	**Ցպահանջ և մինչև 1 ամիս**	**1-ից 3 ամիս**	**3-ից 6 ամիս**	**6-ից 12 ամիս**	**Ավելի քան 1 տարի**	**Ներհոսքի (արտահոսքի) ընդհանուր համախառն գումար**	**Հաշվեկշռ. արժեք**
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	12,787,053	1,156,928	5,904,400	5,468,440	2,507,275	27,824,096	26,812,253
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	28,567,537	6,838,851	10,125,984	17,859,742	5,836,671	69,228,785	66,773,517
Թողարկված պարտքային արժեթղթեր	2,706,310	105,916	133,443	2,868,652	8,438,228	14,252,549	13,416,535
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	19,764,901	1,048,101	-	-	-	20,813,002	20,785,812
Այլ ֆինանսական պարտավորություններ	68,120	62,397	85,962	270,683		487,162	487,162
Վարձակալության գծով պարտավորություն	23,837	47,674	71,512	143,025	1,948,442	2,234,490	1,542,646
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**63,917,758**	**9,259,867**	**16,321,301**	**26,610,542**	**18,730,616**	**134,840,084**	**129,817,925**
Փոխատվության հանձնառություններ	**7,335,498**	**-**	**-**	**-**	**-**	**7,335,498**	**-**

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ներհոսքի (արտահոսքի) ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	5,271,911	1,869,006	6,508,140	4,258,630	3,262,679	21,170,366	20,129,742
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	19,998,474	5,226,346	11,777,771	17,590,718	7,054,741	61,648,050	58,819,120
Թողարկված պարտքային արժեթղթեր	50,771	111,327	80,524	134,277	6,882,592	7,259,491	6,700,803
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	13,619,189	2,689,797	-	-	-	16,308,986	16,292,695
Այլ ֆինանսական պարտավորություններ	70,659	63,869	255,478	-	-	390,006	390,006
Վարձակալության գծով պարտավորություն	24,999	49,998	74,997	149,999	1,873,410	2,173,403	1,638,420
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**39,036,003**	**10,010,343**	**18,696,910**	**22,133,624**	**19,073,422**	**108,950,302**	**103,970,786**
Փոխատվության հանձնառություններ	**4,370,145**	-	-	-	-	**4,370,145**	-

ՀՀ օրենսդրության համաձայն՝ անհատները կարող են ցանկացած պահի ելքագրել իրենց ժամկետային ավանդները՝ դեպքերի մեծամասնությունում կորցնելով հաշվեգրված տոկոսները: Ստորև ներկայացված է այս ավանդների դասակարգումն ըստ սահմանված մարման ժամկետների:

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Ցպահանջ և մինչև 1 ամիս ժամկետով	2,349,133	4,431,096
1-ից 3 ամիս ժամկետով	6,635,397	4,918,600
3-ից 6 ամիս ժամկետով	8,696,817	11,001,153
6-ից 12 ամիս ժամկետով	16,066,818	16,746,920
1-ից 5 տարի ժամկետով	3,569,692	4,010,004
Ավելի քան 5 տարի ժամկետով	612,099	773,619
	37,929,956	**41,881,392**

Որոշ իրավաբանական անձանց հետ կնքված ժամկետային ավանդների պայմանագրերի համաձայն՝ հաճախորդները կարող են ցանկացած պահի ելքագրել իրենց ժամկետային ավանդները՝ կորցնելով հաշվեգրված տոկոսները: Այս ավանդները դասակարգվում են ըստ պայմանագրային մարման ժամկետների: Ստորև ներկայացված է այս ավանդների դասակարգումն ըստ սահմանված մարման ժամկետների:

	2020թ. հազ. դրամ	**2019թ. հազ. դրամ**
Ցպահանջ և մինչև 1 ամիս ժամկետով	2,826	379,644
1-ից 3 ամիս ժամկետով	35,285	122,031
3-ից 6 ամիս ժամկետով	1,159,091	415,283
6-ից 12 ամիս ժամկետով	1,065,813	52,695
1-ից 5 տարի ժամկետով	439,584	792,838
Ավելի քան 5 տարի ժամկետով	-	43,989
	2,702,599	**1,806,480**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17,217,615	-	-	-	-	-		17,217,615
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նեդրումային արժեթղթեր	-	99,787	1,013,013	5,530,560	1,547,404	293,326	-	8,484,090
Ամորտիզացված արժեքով չափվող նեդրումային արժեթղթեր	-	91,472	2,710,813	11,292,554	6,571,023	-	-	20,665,862
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	9,633,715	-	6,955,175	1,230,348	-	-	-	17,819,238
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,039,207	-	-	-	-	-	-	6,039,207
Հաճախորդներին տրված վարկեր	3,525,564	10,813,553	16,350,644	47,552,434	15,955,875	-	324,490	94,522,560
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	6,722,661	-	6,722,661
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	-	1,493,835	-	1,493,835
Այլ ակտիվներ	80,479	795,961	580,877	-	-	2,508,134	-	3,965,451
Ընդամենը ակտիվներ	**36,496,580**	**11,800,773**	**27,610,522**	**65,605,896**	**24,074,302**	**11,017,956**	**324,490**	**176,930,519**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	19,040	-	-	-	-	-	-	19,040
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	12,778,502	1,125,462	10,891,601	1,450,600	566,088	-	-	26,812,253
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	28,492,921	6,670,682	26,988,397	4,009,380	612,137	-	-	66,773,517

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց*	Ընդամենը
Թողարկված պարտքային արժեթղթեր	2,639,733	-	2,628,864	8,147,938	-	-	-	13,416,535
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	19,740,461	1,045,351	-	-	-	-	-	20,785,812
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	-	1,011,619	-	1,011,619
Ընթացիկ հարկային պարտավորություններ	-	661,305	-	-	-	-	-	661,305
Վարձակալության գծով պարտավորություն	10,767	22,888	105,296	718,811	684,884	-	-	1,542,646
Այլ պարտավորություններ	508,016	469,140	390,741	270,683	-	-	-	1,638,580
Ընդամենը պարտավորություններ	**64,189,440**	**9,994,828**	**41,004,899**	**14,597,412**	**1,863,109**	**1,011,619**	**-**	**132,661,307**
Զուտ դիրքը	**(27,692,860)**	**1,805,945**	**(13,394,377)**	**51,008,484**	**22,211,193**	**10,006,337**	**324,490**	**44,269,212**

* Ժամկետանց վարկերի ժամկետանց մասը

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14,337,037	-	-	-	-	-		14,337,037
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նեդրումային արժեթղթեր	-	103,767	429,728	2,386,388	3,289,485	2,553,452	-	8,762,820
Ամորտիզացված արժեքով չափվող նեդրումային արժեթղթեր	48,407	24,430	2,657,316	4,997,342	15,372,880	-	-	23,100,375
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	5,838,748	672,774	3,071,255	197,062	525,328	-	-	10,305,167
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	4,767,263	-	-	-	-	-	-	4,767,263
Հաճախորդներին տրված վարկեր	1,299,614	7,593,112	29,557,074	24,867,694	12,663,639	-	1,398,112	77,379,245
Ընթացիկ հարկային ակտիվ	-	99,786	-	-	-	-	-	99,786
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	5,810,745	-	5,810,745
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	-	1,606,304	-	1,606,304
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	4,312	-	-	-	-	-	-	4,312
Այլ ակտիվներ	986,867	961,083	311,800	11,477	-	1,612,250	-	3,883,477
Ընդամենը ակտիվներ	**27,282,248**	**9,454,952**	**36,027,173**	**32,459,963**	**31,851,332**	**11,582,751**	**1,398,112**	**150,056,531**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	5,262,110	1,856,068	10,394,240	2,167,155	450,169	-	-	20,129,742

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց*	Ընդամենը
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	19,941,943	5,040,631	28,215,926	4,803,012	817,608	-	-	58,819,120
Թողարկված պարտքային արժեթղթեր	24,000	30,803	-	6,646,000	-	-	-	6,700,803
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	13,604,923	2,687,772	-	-	-	-	-	16,292,695
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	-	1,389,630	-	1,389,630
Վարձակալության գծով պարտավորություն	16,409	39,975	177,129	748,839	656,068	-	-	1,638,420
Այլ պարտավորություններ	421,433	123,563	725,020	240,713	19,758	-	-	1,530,487
Ընդամենը պարտավորություններ	**39,270,818**	**9,778,812**	**39,512,315**	**14,605,719**	**1,943,603**	**1,389,630**	**-**	**106,500,897**
Զուտ դիրքը	**(11,988,570)**	**323,860**	**(3,485,142)**	**17,854,244**	**29,907,729**	**10,193,121**	**1,398,112**	**43,555,634**

* Ժամկետանց վարկերի ժամկետանց մասը

26 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ առևտրային բանկերի համար որպես կապիտալ սահմանված հոդվածները:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության նվազագույն ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») կազմում էր 12% (2019թ-ին՝ 12%): 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր օրենսդրությամբ սահմանված ցուցանիշին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի համարժեքության ցուցանիշը դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2020թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	2019թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված
Հիմնական կապիտալ		
Հիմնական կապիտալ	39,110,639	35,967,146
Նվազեցումներ	(3,599,948)	(2,853,618)
Ընդամենը հիմնական կապիտալ	**35,510,691**	**33,113,528**

	2020թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	2019թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված
Լրացուցիչ կապիտալ		
Լրացուցիչ կապիտալ	551,352	1,014,444
Նվազեցումներ	-	-
Ընդամենը լրացուցիչ կապիտալ	**551,352**	**1,014,444**
Ընդամենը կապիտալ	**36,062,043**	**34,127,972**
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվները՝ ներառյալ պարտքային, շուկայական և գործառնական ռիսկերը	**130,111,234**	**115,307,418**
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)	**27.72%**	**29.60%**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկի կշիռների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված պարտքային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականը՝ հաշվի առնելով պահանջներին համապատասխանող ցանկացած գրավ կամ երաշխավորություն: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր կորուստների առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

27 Փոխատվության հանձնառություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու հանձնառություններ: Այս հանձնառությունները նախատեսում են վարկային ռեսուրսների տրամադրում հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների տեսքով:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ երրորդ անձանց հանդեպ հաճախորդների պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Փոխատվության հանձնառությունների, ֆինանսական երաշխավորությունների և ակրեդիտիվների հետ կապված Բանկը կիրառում է պարտքային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք գործում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են փոխատվության հանձնառություններն ըստ դասակարգերի: Աղյուսակում փոխատվության հանձնառությունների գծով արտացոլված գումարները ենթադրում են, որ այդ գումարներն ամբողջությամբ տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն իրենց պայմանագրային պարտականությունները:

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Պայմանագրային գումար		
Վարկային քարտերի գծով հանձնառություններ	3,648,645	2,689,456
Վարկերի և վարկային գծերի գծով հանձնառություններ	3,291,856	1,454,282
Երաշխավորություններ և ակրեդիտիվներ	394,997	226,407
	7,335,498	**4,370,145**

Վերը ներկայացված ընդհանուր պայմանագրային փոխատվության հանձնառությունները պարտադիր չէ որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս հանձնառությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել մինչև կատարվելը:

Վարկերի և վարկային գծերի գծով հանձնառությունների մեծամասնությունն իրենից չի ներկայացնում Բանկի ոչ պայմանական փոխատվության հանձնառություն:

Վարկային քարտերի գծով հանձնառությունները և վարկերի և վարկային գծերի գծով հանձնառություններն հիմնականում դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Վարկային քարտերի գծով հանձնառությունները և վարկերի և վարկային գծերի գծով հանձնառությունները պարտքային առումով ժամկետանց չեն կամ արժեզրկված չեն:

28 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրության ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Բանկի գույքն ապահովագրված է, և Բանկն ունի «Բանկերս Բլանկետ Բոնդ» (Banker's Blanket Bond (BBB)) ապահովագրության պայմանագիր մինչև 3,000 հազար ԱՄՆ դոլար գումարով:

(բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունների վերջնական գումարը, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

2017թ. հոկտեմբերի 4-ին Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան հայց է ներկայացվել, որով Բանկից պահանջվում է 22,301 հազար ԱՄՆ դոլար Բանկի կողմից իր հաճախորդներից մեկի հետ կնքված պայմանագիրը խախտելու համար: Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում հայցի կրկնակի քննումից հետո և Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ դատարան Բանկի կողմից հայցը բողոքարկելուց հետո 2020թ. ապրիլի 13-ին հաճախորդը դիմել էր ՀՀ վճռաբեկ դատարան: 2020թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ վճռաբեկ դատարանը մերժել էր հաճախորդի բողոքարկումը և վճիռը կայացրել էր հօգուտ Բանկի:

(գ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

29 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Բանկի մայր կազմակերպությունն է FISTOCO LTD: Բանկի վերջնական վերահսկող անձն է պրն. Վարդան Դիլանյանը:

Բանկի մայր կազմակերպությունը չի հրապարակում աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները:

(բ) Գործարքներ Խորհրդի և Վարչության անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Բանկի Խորհրդի անդամներ	28,021	34,083
Վարչության անդամներ	654,956	757,489
	682,977	**791,572**

Այս գումարները ներառում են Խորհրդի և Վարչության անդամների դրամային և ոչ դրամային հատուցումները:

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Շահույթ կամ վնաս		
Տոկոսային եկամուտ	34,933	21,562
Տոկոսային ծախս	(11,215)	(9,159)
Զուտ արժեզրկումից կորուստ	(1,961)	(431)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	907	1,060
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	(74)	(120)

Ստորև ներկայացված են Խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2020թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	2019թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
ԱԿՏԻՎՆԵՐ				
Տրված վարկեր (համախառն)	430,319	11.17%	270,541	9.79%
Վարկերի արժեզրկման գծով պահուստ	(3,216)	-	(1,255)	-
Այլ ակտիվներ	2,808	-	-	-
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Ստացված ավանդներ	97,537	7.15%	123,738	5.93%
Ընթացիկ հաշիվներ	84,099	-	73,826	1.26%
Թողարկված պարտքային արժեթղթեր	81,854	5.06%	14,962	5.25%
Փոխատվության հանձնառություններ	73,819	-	51,581	-

Ստորև ներկայացված են Խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր		Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ		Այլ		
	հազ. դրամ	Միջին արդյու-նավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյու-նավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյու-նավետ տոկոսադր., %	Ընդամենը հազ. դրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	44,191	-	-	-	-	-	44,191
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	-	-	23,814	12.26%	23,814

	Բաժնետերեր		Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ		Այլ		
	հազ. դրամ	Միջին արդյու-նավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյու-նավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյու-նավետ տոկոսադր., %	Ընդամենը հազ. դրամ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ							
- Լորո հաշիվներ	65,332	-	-	-	-	-	65,332
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ							
- Ընթացիկ հաշիվներ	35,704	2.10%	-	-	31,258	0.25%	66,961
- Ժամկետային ավանդներ	-	-	-	-	53,833	8.15%	53,833
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	-	-	-	165,186	5.02%	325,946
Ծախույթ (վնաս)							
Տոկոսային եկամուտ	-	-	-	-	2,721	-	2,721
Տոկոսային ծախս	-	-	-	-	(12,938)	-	(12,938)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	-	473	-	-	171	-	644
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	-	(24)	-	-	(18)	-	(42)

Ստորև ներկայացված են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր		Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ		Այլ		
	հազ. դրամ	Միջին արդյու-նավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյու-նավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյու-նավետ տոկոսադր., %	Ընդամենը հազ. դրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,092	-	-	-	-	-	1,092
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	-	-	24,946	11.20%	24,946
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ							
- Լորո հաշիվներ	103,378	-	-	-	-	-	103,378
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ							
- Ընթացիկ հաշիվներ	35,704	2.1%	-	-	4,777	0.3%	40,481
- Ժամկետային ավանդներ	-	-	-		6,809	8.61%	6,809
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	-	-	-	159,882	5.24%	159,882
Շահույթ (վնաս)							
Տոկոսային եկամուտ	-		7,761		220		7,981
Տոկոսային ծախս	-		-		(8,314)		(8,314)

	Բաժնետերեր		Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ		Այլ		
	հազ. դրամ	Միջին արդյու-նավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյու-նավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյու-նավետ տոկոսադր., %	Ընդամենը հազ. դրամ
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	-		-		162		162
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	-		-		(17)		(17)

Այլ կապակցված կողմերը ներառում են Խորհրդի և Վարչության նշանակալից ազդեցության ներքո գտնվող կազմակերպությունները և Խորհրդի և Վարչության անդամների ընտանիքների անդամներին:

Այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդների մեծ մասի մարման ժամկետը կազմում է մեկ տարի, բացառությամբ պարտքային արժեթղթերի, որոնց մարման ժամկետը կազմում է երկու տարի: Այլ կապակցված կողմերի հետ իրականացվող գործարքները գրավով ապահովված չեն:

30 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բանկը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):

- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել են նմանատիպ գործիքների համար գործող շուկայում գնանշված գները, նմանատիպ գործիքների համար գնանշված գներն ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են շուկայական տվյալներից:

- 3-րդ մակարդակ. ոչ դիտելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնց դեպքում գնահատման մեթոդները ներառում են դիտելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալները և ոչ դիտելի ելակետային տվյալները նշանակալի ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշված գների հիման վրա, որոնց գծով պահաջվում են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու համար:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների, բացառությամբ ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի, գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 20,665,862 հազար դրամ հաշվեկշռային արժեքով ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը կազմում էր 26,513,104 հազար դրամ(2019: 23,100,375 հազար դրամ հաշվեկշռային արժեքով ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը կազմում էր 25,344,689 հազար դրամ): Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի չափումը դասակարգվել է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	**1-ին մակարդակ**	**2-րդ մակարդակ**	**Ընդամենը**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ			
- Ածանցյալ պարտավորություններ	-	19,040	19,040
Ներդրումային արժեթղթեր			
- Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	-	8,190,764	8,190,764
- Բաժնային գործիքներ	293,326	-	293,326

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	Ընդամենը
Ճահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ			
- Ածանցյալ պարտավորություններ	-	4,312	4,312
Ներդրումային արժեթղթեր			
- Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	-	6,209,368	6,209,368
- Բաժնային գործիքներ	2,553,452	-	2,553,452

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու համար՝ չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և զեղչված դրամական հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայական դիտելի գները, և գնահատման այլ մոդելները: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ոչ ռիսկային և ուղենիշային տոկոսադրույքները, վարկային սփրեդերը և այլ հավելավճարները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնային գործիքների և բաժնային գործիքների ինդեքսի գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»:

«Այդի Բանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 8
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 9
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 10
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 11
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 12

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյանի փ. 26/1
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Այդի Բանկ» ՓԲԸ-ի Բաժնետերերին և Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Այդի Բանկ» ՓԲԸ-ի (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019թ., այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն.

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն *Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի* (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկային վերաբերող մեր պարտականություններն այս պահանջներին և էթիկայի միջազգային կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն,
շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International")
կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյանի փ. 26/1
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի ընթացքում: Այս հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այս հարցերի վերաբերյալ:

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն,
շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International")
կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ

Հաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստներ	
Տեղեկատվությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 25-ի (բ) կետում և Ծանոթագրություն 15-ում:	
Աուդիտի առանցքային հարց	**Ինչպես ենք անդրադարձել հարցին աուդիտի ընթացքում**
Հաճախորդներին տրված վարկերը կազմում են ընդհանուր ակտիվների ավելի քան 50%-ը և ներառում են ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը, որը կանոնավոր հիմունքով գնահատվում է և զգայուն է կիրառվող ենթադրությունների նկատմամբ: Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման մոդելը ղեկավարությունից պահանջում է կիրառել մասնագիտական դատողություններ և կատարել ենթադրություններ հետևյալ առանցքային հարցերի հետ կապված. – պարտքային ռիսկի նշանակալի աճի և հաճախորդներին տրված վարկերի գծով պարտազանցման դեպքերի ժամանակին բացահայտում (բաշխում 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի միջև՝ ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* (այսուհետ՝ ՖՀՄՍ 9) համաձայն), – պարտազանցման հավանականության և պարտազանցման դեպքում առաջացող կորստի գնահատում, – լրացուցիչ ճշգրտման գնահատում՝ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու հետ կապված, – ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսում 3-րդ փուլ դասակարգված հաճախորդներին տրված վարկերի համար: Հաճախորդներին տրված վարկերի մեծ ծավալի և ակնկալվող պարտքային կորուստների գնահատման բարդության և սուբյեկտիվության պատճառով, այս	Մենք վերլուծել ենք ակնկալվող պարտքային կորուստների գնահատմանը վերաբերող Բանկի մեթոդաբանության և քաղաքականության առանցքային դրույթները ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ համապատասխանության տեսանկյունից՝ գործընթացում ներառելով նաև ֆինանսական ռիսկերի կառավարման գծով մասնագետներին: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման հետ կապված ղեկավարության կողմից կատարած մասնագիտական դատողությունների և ենթադրությունների տեղին լինելը վերլուծելու համար մենք իրականացրել ենք հետևյալ աուդիտորական ընթացակարգերը. – իրավաբանական անձանց տրված վարկերի համար գնահատել և ստուգել ենք վարկերի փուլերի միջև բաշխումը վերահսկող համակարգի կառուցվածքը և գործառնական արդյունավետությունը: – իրավաբանական անձանց տրված վարկերի ընտրանքի համար ստուգել ենք, թե արդյոք փուլերը ճիշտ են որոշված Բանկի կողմից՝ վերլուծելով ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվությունը, ինչպես նաև Բանկի կողմից կիրառված ենթադրությունները և մասնագիտական դատողությունները: – իրավաբանական անձանց տրված վարկերի ընտրանքի համար ստուգել ենք պարտազանցման հավանականության և պարտազանցման դեպքում կորստի գումարի հաշվարկի ելակետային տվյալների ճշգրտությունը: – 1-ին և 2-րդ փուլերին բաշխված հաճախորդներին տրված վարկերի համար, որոնց դեպքում ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են խմբային հիմունքով, ստուգել ենք համապատասխան մոդելների տեղին լինելը և համադրել ենք մոդելի ելակետային տվյալներն առաջնային փաստաթղթերի տվյալների հետ

հարցը դիտարկվում է որպես աուդիտի առանցքային հարց:	ընտրանքային կարգով:
	– 3-րդ փուլի վարկերի ընտրանքի համար, որոնց դեպքում ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են անհատական հիմունքով, գնահատել ենք ապագա դրամական հոսքերի կանխատեսման համար Բանկի կողմից կիրառված ենթադրությունները, ներառյալ իրացվելի գրավի գծով մուտքերի գնահատումը և գրավի իրացման ակնկալվող պայմանները՝ հիմք ընդունելով մեր պատկերացումները և շուկայում հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը: Մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել հաճախորդներին տրված այն վարկերի վրա, որոնք ըստ հավանականության կարող են առավելագույնս նշանակալի ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա: – անհատներին տրված վարկերի համար ստուգել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մոդելների ելակետային տվյալների ամբողջականությունը և ճշգրտությունը վերահսկող համակարգի կառուցվածքը և գործառնական արդյունավետությունը, վարկերի գծով վճարումների ուշացումների և մարումների ժամանակին արտացոլումը համապատասխան համակարգերում և վարկերի բաշխումը փուլերի միջև: Համեմատել ենք ելակետային տվյալները հիմնավորող փաստաթղթերի տվյալների հետ ընտրանքային կարգով: Մենք գնահատել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի Բանկի մեթոդաբանության կանխատեսման կարողությունը՝ համեմատելով 2019թ. հունվարի 1-ի դրությամբ կատարած գնահատումները 2019թ. փաստացի արդյունքների հետ: Մենք գնահատել ենք նաև, թե որքան պատշաճորեն են արտացոլում ֆինանսական հաշվետվությունների բացահայտումները Բանկի ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է տարեկան հաշվետվությունում պարունակվող տեղեկատվությունը, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը կտրամադրվի մեզ այս աուդիտորական եզրակացության ստորագրման ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր եզրակացությունը չի անդրադառնում այլ տեղեկավությանը, և մենք չենք արտահայտի որևէ հավաստիացում այդ տեղեկատվության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պատասխանատվությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն դառնա հասանելի, և այդ տեղեկատվությանը ծանոթանալիս դիտարկել, թե արդյոք այլ տեղեկատվությունն էականորեն չի համապատասխանում ֆինանսական հաշվետվություններին կամ աուդիտի ընթացքում մեր կողմից ձեռք բերված տեղեկատվությանը կամ կարող է այլ կերպ ոչ ճշգրիտ ներկայացված լինել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհարժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե առկա չէ ղեկավարության՝ Բանկը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով պատճառով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու համար և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընացակարգեր նախագծելու, և ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարա չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

– գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձություններն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տրամադրում ենք նաև հավաստիացում, որ պահպանել ենք անկախությանը վերաբերող էթիկայի պահանջները և տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և կիրառելի լինելու դեպքում, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք հարավել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և հետևաբար, իրենցից ներկայացնում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը ներկայացվում են մեր աուդիտորական եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ երբ խիստ բացառիկ հանգամանքներում որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ այդ հարցի ներկայացման հետ կապված բացասական հետևանքները կարող են գերակշռել դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Իրինա Գևորգյան
Գործընկեր

Տիգրան Գասպարյան
Տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ

27 ապրիլի 2020թ.

«Այդի Բանկ» ՓԲԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծնթգ.	2019թ. հազ. դրամ	2018թ.* հազ. դրամ
Արդյունավետ տոկոադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	4	12,325,560	11,634,191
Տոկոսային ծախս	4	(4,691,954)	(4,510,499)
Զուտ տոկոսային եկամուտ		**7,633,606**	**7,123,692**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	5	891,540	738,970
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	5	(797,076)	(454,591)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ		**94,464**	**284,379**
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	6	1,226,290	361,857
Զուտ (կորուստ)/օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող այլ ֆինանսական գործիքների գծով		(550,515)	165,636
Զուտ իրացված օգուտ ներդրումային արժեթղթերի գծով		1,324	1,481,635
Զուտ այլ գործառնական եկամուտ	7	671,419	496,934
Գործառնական եկամուտ		**9,076,588**	**9,914,133**
Զուտ արժեզրկումից կորուստներ ֆինանսական գործիքների գծով	8	(136,539)	(1,813,773)
Անձնակազմի գծով ծախսեր		(3,326,719)	(3,002,806)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	9	(2,469,057)	(2,204,748)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		**3,144,273**	**2,892,806**
Շահութահարկի գծով ծախս	10	(588,765)	(709,836)
Շահույթ տարվա համար		**2,555,508**	**2,182,970**
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս)՝ առանց շահութահարկի			
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.			
- իրական արժեքի զուտ փոփոխություն	10	737,063	(86,988)
- շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	10	(1,059)	(1,185,308)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս		*736,004*	*(1,272,296)*
Հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս			
Վերագնահատված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք	10	-	(45,691)
Ընդամենը հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս		-	*(45,691)*
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս) տարվա համար՝ առանց շահութահարկի		**736,004**	**(1,317,987)**
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		**3,291,512**	**864,983**

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը: Այս մոտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 2-ի կետ (ե)):

8-ից 111-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2020թ. ապրիլի 27-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

«Այդի Բանկ» ՓԲԸ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Միեր Աբրահամյան Վարչության նախագահ	Անուշիկ Խաչատրյան Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

առ 31 դեկտեմբերի 2019թ.

	Ծնթգ.	2019թ. հազ. դրամ	2018թ.* հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	14,337,037	11,260,756
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	12		
- Բանկի կողմից պահվող		6,502,509	4,728,200
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		2,260,311	-
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	12		
- Բանկի կողմից պահվող		11,270,882	15,136,723
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		11,829,493	5,587,003
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		4,312	-
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	13	10,305,167	13,068,992
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	14	4,767,263	3,429,813
Հաճախորդներին տրված վարկեր	15	77,379,245	61,470,502
Ընթացիկ հարկային ակտիվ		99,786	139,189
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	16	5,810,745	5,061,844
Օգտագործման իրավունքի ձևի ակտիվ	17	1,606,304	-
Առգրավված ակտիվներ	15	1,476,007	1,087,443
Այլ ակտիվներ	18	2,407,470	1,103,491
Ընդամենը ակտիվներ		**150,056,531**	**122,073,956**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		-	1,337
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	19	20,129,742	5,937,780
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	20	16,292,695	6,771,902
Թողարկված պարտքային արժեթղթեր	21	6,700,803	10,823,040
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	22	58,819,120	56,320,356
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	1,389,630	617,324
Վարձակալության գծով պարտավորություն	17	1,638,420	-
Այլ պարտավորություններ	23	1,530,487	1,338,095
Ընդամենը պարտավորություններ		**106,500,897**	**81,809,834**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	24	33,971,850	33,971,850
Էմիսիոն եկամուտ		5,014,099	5,014,099
Շենքերի վերագնահատումից աճ		110,808	110,808
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ		842,981	106,977
Չբաշխված շահույթ		3,615,896	1,060,388
Ընդամենը սեփական կապիտալ		**43,555,634**	**40,264,122**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**150,056,531**	**122,073,956**

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը: Այս մոտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 2-ի կետ (ե)):

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Ծնթգ.	2019թ. հազ. դրամ	2018թ.* հազ. դրամ
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Ստացված տոկոսներ		11,807,607	11,012,778
Վճարված տոկոսներ		(4,300,316)	(4,822,049)
Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ		891,540	738,970
Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ		(797,076)	(454,591)
Զուտ վճարումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով		(556,359)	(52,828)
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից		848,241	638,962
Այլ ստացված եկամուտ		526,668	381,597
Աշխատակազմի գծով ծախսերի և այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ		(4,957,374)	(4,768,296)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		(1,337,205)	3,075,123
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ		2,735,830	(1,877,157)
Հաճախորդներին տրված վարկեր		(15,669,226)	(9,413,928)
Այլ ակտիվներ		(695,093)	(208,535)
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)			
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ		13,645,608	(326,129)
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		9,545,547	6,757,099
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		2,913,084	(7,569,030)
Այլ պարտավորություններ		215,094	499,054
Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը		**14,816,570**	**(6,388,960)**
Վճարված շահութահարկ		-	(33,000)
Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգտագործված) դրամական հոսքեր		**14,816,570**	**(6,421,960)**
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(8,368,271)	(5,194,557)
Մուտքեր ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից		2,737,112	6,457,542
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(1,980,597)	(593,278)
Ստացված շահաբաժիններ		144,751	-
Ներդրումային գործունեության համար (օգտագործված)ներդրումային գործունեությունից ստացված դրամական հոսքեր		**(7,467,005)**	**669,707**
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Մուտքեր պարտքային արժեթղթերի թողարկումից	21	4,252,464	2,418,750
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	21	(8,207,150)	(2,422,500)
Վարձակալության գծով պարտավորության մարում	17	(282,238)	-
Ֆինանսավորամ գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր		**(4,236,924)**	**(3,750)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**3,112,641**	**(5,756,003)**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(37,750)	(212,494)
Ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		1,390	-
Դրամական միջոցները և դրանց համարժեքները (համախառն) տարեսկզբի դրությամբ		11,260,756	17,229,253
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	11	**14,337,037**	**11,260,756**

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը: Այս մոտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

է չբաշխված շահույթում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 2-ի կետ (ե)):

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Բաժնետի-րական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Շենքերի վերագնա-հատումից աճ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	33,971,850	5,014,099	156,499	1,379,273	(1,122,582)	39,399,139
Ընդամենը համապարփակ եկամուտ						
Շահույթ տարվա համար	-	-	-	-	2,182,970	2,182,970
Այլ համապարփակ վնաս						
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս						
- Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	(86,988)	-	(86,988)
- Շահույթ կամ վնաս փոխանցված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	(1,185,308)	-	(1,185,308)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	-	*(1,272,296)*	-	*(1,272,296)*
Հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս						
Շենքերի վերագնահատման պահուստի փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	(45,691)	-	-	(45,691)
Ընդամենը հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս	-	-	*(45,691)*	-	-	*(45,691)*
Ընդամենը այլ համապարփակ վնաս	-	-	(45,691)	(1,272,296)	-	(1,317,987)
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	(45,691)	(1,272,296)	2,182,970	864,983
			110,808	106,977	1,060,388	40,264,122
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	**33,971,850**	**5,014,099**				
			110,808	106,977	1,060,388	40,264,122
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.*	33,971,850	5,014,099				
Ընդամենը համապարփակ եկամուտ						
Շահույթ տարվա համար	-	-	-	-	2,555,508	2,555,508
Այլ համապարփակ եկամուտ						-
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս						
- Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	737,063	-	737,063
- Շահույթ կամ վնաս փոխանցված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	(1,059)	-	(1,059)

հազ. դրամ	Բաժնետի-րական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Շենքերի վերագնա-հատումից աճ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	-	*736,004*	-	*736,004*
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	-	736,004	-	736,004
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	-	736,004	2,555,508	3,291,512
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	33,971,850	5,014,099	110,808	842,981	3,615,896	43,555,634

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը: Այս մոտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 2-ի կետ (ե)):

31 Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն (Բանկ) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 1990թ-ին և վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության 2007թ-ին: Նախկինում Բանկն իր գործունեությունն իրականացրել է «Անելիք Բանկ» ՓԲԸ անվանմամբ:

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկային գործառնությունների իրականացումը, երաշխավորությունների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով և արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական համակարգի անդամ է:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վարդանանց փ. 13:

Բանկն ունի 13 մասնաճյուղ: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկի բաժնետերերն են FISTOCO LTD (59.68%) և Creditbank SAL (40.32%): Բանկի վերջնական վերահսկող անձն է պրն. Վարդան Դիլանյանը, ով իրավասու է ղեկավարել Բանկի գործառնություններն իր սեփական հայեցողությամբ և իր շահերից ելնելով:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 29-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Բացի այդ, 2020թ. առաջին ամիսներին համաշխարհային շուկայում տեղի են ունեցել զգալի ցնցումներ՝ պայմանավորված կորոնավիրուսի բռնկումով: Այլ գործոնների հետ մեկտեղ, հիվանդության բռնկումը հանգեցրել է ֆոնդային բորսայի ցուցանիշների կտրուկ անկման և ՀՀ դրամի արժեզրկման: Այս զարգացումներն էլ ավելի են մեծացնում գործունեության իրականացման հետ կապված անորոշության մակարդակը Հայաստանի գործարար միջավայրում:

32 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

Այս ֆինանսական հաշվետվություններն իրենցից ներկայացնում են Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթը, որտեղ կիրառվել են ՖՀՄՍ 16 *«Վարձակալություններ»* պահանջները: Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համապատասխան փոփոխությունները ներկայացված են Ծանոթագրություն 2-ի (ե) կետում:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով, և վերագնահատված արժեքով հաշվառվող շենքերի:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական ակտիվների դասակարգում. այն բիզնես մոդելի գնահատում, որի շրջանակում պահվում են ակտիվները, և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 3 (ե) (i):
- չափանիշների սահմանում որոշելու համար, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն և հաստատում – Ծանոթագրություն 25 (բ):

Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական գործիքների արժեզրկում. որոշել ելակետային տվյալներն ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելի համար, այդ թվում՝ ապագայամետ տեղեկատվության ներառումը – Ծանոթագրություն 25 (բ),
- ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի գնահատում – Ծանոթագրություն 30,
- շենքերի վերագնահատում – Ծանոթագրություն 16,
- պայմանական դեպքեր և դատական վարույթներ – Ծանոթագրություն 28 (բ),
- առգրավված ակտիվների արժեզրկման գնահատում – Ծանոթագրություն 15:

(ե) Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի փոփոխություններ

Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16 *«Վարձակալություններ»* ստանդարտը 2019թ. հունվարի 1-ից:

Բանկը կիրառել է ՖՀՄՍ 16-ն օգտագործելով պարզեցված հետընթաց մոտեցումը, համաձայն որի ստանդարտը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը չի ճանաչվում է չբաշխված շահույթում 2019թ. հունվարի 1-ի դրությամբ որպես պարտավորության գծով պարտավորության հավասար օգտագործման իրավունքի ձևի ակտիվ վարձակալության մեկնարկի ամսաթվին: Համապատասխանաբար, 2019թ. համար ներկայացված համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում, այսինքն՝ այն ներկայացվում է ինչպես նախկինում՝ ՀՀՄՍ 17-ի և համապատասխան մեկնաբանությունների համաձայն: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների մանրամասները ներկայացված են ստորև: Բացի այդ, ՖՀՄՍ 16-ի բացահայտման պահանջներն ընդհանուր առմամբ չեն կիրառվել համադրելի տեղեկատվության նկատմամբ:

(i) Վարձակալության սահմանումը

Նախկինում Բանկը պայմանագրի սկզբում որոշում էր, թե արդյոք համաձայնությունը հանդիսանում էր վարձակալության պայմանագիր կամ պարունակում էր վարձակալություն՝ ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 4 *«Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում»* համաձայն: Այժմ Բանկը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն վարձակալության սահմանման հիման վրա, ինչպես ներկայացված է Ծանոթագրություն 3-ի (ղ) կետում:

ՖՀՄՍ 16-ին անցնելիս Բանկը որոշել է օգտվել գործնական բնույթի պարզեցումից, որը թույլ է տալիս չվերանայել վարձակալության գործարքների բացահայտման համար նախկինում իրականացված գնահատման արդյունքները: Բանկը ՖՀՄՍ 16-ը կիրառել է միայն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք նախկինում որոշակիացվել էին որպես վարձակալության պայմանագրեր: Պայմանագրերը, որոնք չէին որոշակիացվել որպես վարձակալության պայմանագրեր ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն, չեն վերագնահատվել ՖՀՄՍ 16-ի պահանջներին

համապատասխանող վարձակալություն բացահայտելու համար: Այդ իսկ պատճառով, ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանումը կիրառվել է միայն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք կնքվել կամ փոփոխվել են 2019թ. հունվարի 1-ին կամ հետո:

(ii) Բանկը՝ որպես վարձակալ

Որպես վարձակալ Բանկը վարձակալում է գույք: Նախկինում Բանկը վարձակալության պայմանագրերը դասակարգում էր որպես գործառնական կամ ֆինանսական վարձակալություն ելնելով իր գնահատումից, թե արդյոք վարձակալության դեպքում Բանկին են փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: ՖՀՄՍ 16-ի համաձայն՝ Բանկը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ վարձակալության այս պայմանագրերի մեծ մասի համար, այսինքն՝ վարձակալությունն արտացոլվում է հաշվապահական հաշվեկշռում:

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում, Բանկը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Վարձակալության բոլոր պայմանագրերը համարվում են ավտոմատ կերպով վերսկսվող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համաձայն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի գործարար միջավայրում բանկերի համար հասանելի են բիզնես տարածքների մեծ հնարավորություններ, ղեկավարությունը գտնում է, որ չկան էական տնտեսական տուգանքներ, բացի կորցրած անբաժանելի վարձակալված գույքի բարելավումների հաշվեկշռային արժեքի:

(iii) ՀՀՄՍ 17-ի համաձայն որպես գործառնական վարձակալություն դասակարգված վարձակալություն

Նախկինում գույքի վարձակալությունը Բանկը դասակարգում էր որպես գործառնական վարձակալություն՝ ՀՀՄՍ 17-ի համաձայն: ՖՀՄՍ 16-ին անցման ժամանակ վարձակալության այս պայմանագրերի գծով պարտավարությունները չափվել են մնացած վարձավճարների ներկա արժեքով՝ զեղչված Բանկի լրացուցիչ փոխառության դրույքով 2019թ. հունվարի 1-ի դրությամբ (տես Ծանոթագրություն 3 (ե) (iv)): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է այն գումարով, որը հավասար է վարձակալության գծով պարտավորությանը՝ ճշգրտված վարձակալության գծով կատարած կանխավճարներով կամ հաշվեգրված վարձավճարներով:
Բանկը ստուգել է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվների արժեզրկված լինելը ստանդարտին անցման ամսաթվին և եզրահանգել է, որ չկա օգտագործման իրավունքի ձևով ակտիվների արժեզրկման հայտանիշ:

Նախկինում ՀՀՄՍ 17-ի համաձայն որպես գործառնական վարձակալություն դասակարգված վարձակալության պայմանագրերի նկատմամբ Բանկը կիրառել է մի շարք գործնական բնույթի պարզեցումներ: Մասնավորապես, Բանկը՝

- չի ճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավարություններ փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով,
- չի ճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ այն վարձակալությունների հետ կապված, որոնց դեպքում վարձակալության ժամկետն ավարտվում է սկզբնական ճանաչման ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում,
- կիրառել է մեկ միասնական զեղչման դրույք խելամտորեն համանման հատկանիշներ ունեցող վարձակալությունների պորտֆելի նկատմամբ,
- բացառել է սկզբնական ուղղակի ծախսումներն օգտագործման իրավունքի ձևով ակտիների չափումից սկզբնական կիրառման ամսաթվին և
- կիրառել է դատողություններ հետադարձ ամսաթվով վարձակալության ժակետը որոշելիս:

(iv) Ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա

Ազդեցությունը ստանդարտին անցնելիս

ՖՀՄՍ 16-ին անցնելիս Բանկը ճանաչել է ստորև ներկայացված լրացուցիչ իրավունքի ձևով ակտիները և լրացուցիչ վարձակալության գծով պարտավորությունները: ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառումը կուտակային ազդեցություն չի ունեցել չբաշխված շահույթի վրա: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տանդարտին անցման ազդեցությունը:

հազ. դրամ	1 հունվարի 2019թ.
Իրավունքի ձևով ակտիներ	859,117
Վարձակալության գծով պարտավորություններ	(859,117)

ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը շահույթի կամ վնասի վրա ներկայացված է Ծանոթագրություն 17-ում, իսկ ՖՀՄՍ 16-ի և ՀՀՄՍ 17-ի համաձայն հաշվապահական հաշվառման քաղաքականության մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 3-ի (ղ) կետում:

Որպես գործառնական վարձակալություն դասակարգված վարձակալությունների գծով պարտավորությունները չափելիս Բանկը վարձավճարները զեղչել է լրացուցիչ փոխառության դրույքով 2019թ. հունվարի 1-ի դրությամբ: Կիրառված միջին կշռված դրույքը կազմում է 9.71%:

հազ. դրամ	1 հունվարի 2019թ.
Գործառնական վարձակալության գծով հանձնառություններ առ 31 դեկտեմբերի 2018թ.՝ ՀՀՄՍ 17-ի համաձայն	-
Վարձավճարների ներառում չեղյալ համարվող վարձակալությունների շրջանակում	1,594,658
Չզեղչված վարձակալության գծով պարտավարություն	**1,594,658**
Բանկի՝ որպես վարձակալի միջին կշռված լրացուցիչ փոխառության դրույք	9.71%
2019թ. հունվարի 1-ի դրությամբ ճանաչված վարձակալության գծով պարտավորություններ	**859,117**

2019թ. հունվարի 1-ից գործում են մի շարք այլ նոր ստանդարտներ և գործող ստանդարտների փոփոխություններ, որոնք սակայն նշանակալի ազդեցություն չունեն Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա, բացառությամբ վերը ներկայացվածի:

33 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Բացառությամբ Ծանոթագրություն 2-ի (ե) կետում բացահայտված փոփոխությունների, ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է Բանկի կողմից այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար: Որոշ համադրելի տեղեկատվություն ճշգրտվել է ընթացիկ տարվա ներկայացման փոփոխությունների հետ համապատասխանություն ապահովելու համար:

(ա) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են դրամի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են դրամի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների ու վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերահաշվարկից առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված փոխարժեքային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքներ են կանխիկ դրամական միջոցները և ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): ՀՀ ԿԲ-ում պահվող պարտադիր պահուստային ավանդը չի համարվում դրամական միջոցների համարժեք, քանի որ դրանից միջոցների ելքագրումը սահմանափակված է: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույք

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի գծով ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը: Գործարքի գծով ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտաքային կորուստների գծով պահուստով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ճշգրտումը:

Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լողացող դրույքով գործիքների դրամական հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական դրույքների փոփոխություններն արտացոլելու նպատակով: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է նաև իրական արժեքի հեջի ճշգրտումներն արտացոլելու համար այն ամսաթվի դրությամբ, երբ սկսվում է համապատասխան ճշգրտման ամորտիզացիայի հաշվարկը:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է:

Տեղեկատվությունն այն մասին, թե որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում պարտքային առումով արժեզրկված, ներկայացված է Ծանոթագրություն 3 (ե) (vi) կետում:

Ներկայացում

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկած տոկոսային եկամուտը ներառում է՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

(դ) Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում (տես Ծանոթագրություն 3 (գ)):

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և վարկի սինդիկացման միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան

փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական ակտիվներ

i. Դասակարգում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

– ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
– ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով օգուտները և կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչ որ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը և կորուստները.

– արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ,
– ակնկալվող պարտքային կորուստ և հակադարձումներ և
– արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ և վնասներ:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Այս բաժնային գործիքների գծով օգուտները և կորուստները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահաբաժինն ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում է այլ համապափակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապափակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտները և կորուստները փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու

պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, ապահովել տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Բանկի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա):
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես մեկ ընդհանուր վերլուծության մաս առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Բանկի առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվներ վաճառելու համար:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Բանկը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դիտարկումը ներառում է այն գնահատումը, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այս պայմանը: Գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Բանկի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածությունների), և
- հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերաբար վերասահմանումը:

Առանց ռեգրեսի իրավունքի վարկեր

Որոշ դեպքերում Բանկի կողմից տրամադրված վարկերը, որոնք ապահովված են փոխառուի գրավով, սահմանափակում են Բանկի պահանջը հիմքում ընկած գրավից առաջացող դրամական հոսքերով (առանց ռեգրեսի իրավունքի վարկեր): Բանկը կիրառում է դատողություն գնահատելու համար, թե արդյոք առանց ռեգրեսի իրավունքի վարկերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ: Այս դատողությունը կատարելիս Բանկը որպես կանոն դիտարկում է հետևյալ տեղեկատվությունը.

- արդյոք պայմանագիրը սահմանում է վարկի գծով դրամական վճարումների հստակ գումարները և ժամկետները,
- գրավի իրական արժեքն ի համեմատություն գրավով ապահովված ֆինանսական ակտիվի գումարի,
- պայմանագրով նախատեսված վճարումները կատարելու փոխառուի կարողությունը և ցանկությունը, չնայած գրավի արժեքի նվազմանը,
- արդյոք փոխառուն հանդիսանում է անհատ կամ գործառնական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ հատուկ նշանակության կազմակերպություն,

- ակտիվի գծով վնաս կրելու Բանկի ռիսկն ի համեմատություն ամբողջությամբ վերադարձելի վարկի,
- որքանով է գրավը ներկայացնում փոխառուի բոլոր ակտիվները կամ դրանց գերակշռող մասը, արդյոք Բանկն օգուտ կստանա հիմքում ընկած ակտիվների արժեքի աճից:

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների, դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

ii. Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված

հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ կորստի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ, ինչպես բացատրվում է Ծանոթագրություն 3 (ե) (i) կետում: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, և պահպանում է ակտիվի նկատմամբ հսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով, որն այն չափն է, որով Բանկը ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

iii. Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում՝ «փոխառություններ և բանկերի այլ մնացորդներ» հոդվածում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային ծախս և ճանաչվում է

շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հետադարձ վաճառքի պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ՝ «բանկերին տրված վարկեր» հոդվածում: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառքի պայմանագրով ձեռք բերված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

iv. Դադարեցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն այն և միայն այն դեպքում, երբ Բանկը տվյալ պահին ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ: Բանկը տվյալ պահին ունի հաշվանցում կատարելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, եթե այդ իրավունքը կախված չէ ապագա դեպքերից և իրագործելի է թե՛ բնականոն գործունեության և թե՛ Բանկի ու բոլոր պայմանագրային կողմերի կողմից պարտազանցման, լուծարման կամ սնանկացման դեպքում:

v. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Բանկը գնահատում է, արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները: Որպես փոփոխության մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ.

– վճարները, որոնք դիտարկվում են նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարները, որոնք իրենցից ներկայացվում են պայմաններին համապատասխանող

գործարքի գծով ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ,
- մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վնասում՝ որպես ապաճանաչումից օգուտի կամ կորստի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ Բանկի կողմից տոկոսադրույքների փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով Բանկն իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Բանկը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը կիրառում է կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը:

Եթե դրամական հոսքերի փոփոխությունը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն փոփոխության նպատակն է առավելագույն չափով վերականգնել ակտիվը պայմանագրի սկզբնական պայմաններով, այլ ոչ՝ սկզբնավորել նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Բանկը մտադիր է այնպես փոփոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դուրսգրվի նախքան փոփոխությունը կատարելը (տես ստորև դուրսգրման քաղաքականություն): Այս մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապաճանաչման չափանիշները միշտ

չէ որ բավարարվում են նման դեպքերում: Բանկն իրականացնում է նաև որակական գնահատում գնահատելու համար փոփոխության նշանակալի լինելը:

Եթե ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես փոփոխումից օգուտ կամ կորուստ շահույթում կամ վնասում: Լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Փոփոխման շրջանակում ցանկացած կրած ծախսում կամ վճար կամ ստացված վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Եթե նման փոփոխությունն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ:

Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն հնարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Բանկը հաշվառում է տոկոսադրույքի փոփոխությունը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր փոփոխված ֆինանսական պարտավորությունը:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության փոփոխությունը չի բավարարում ապաճանաչման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, զեղչելով փոփոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացորդային ժամանակահատվածում: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական պարտավորության մնացորդային ժամանակահատվածում գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

vi. Արժեզրկում

Տես՝ նաև Ծանոթագրություն 25 (բ):

Բանկը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հետևյալ ֆինանսական գործիքների համար.

– պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ,
– ֆինանսական երաշխավորության պայմանագրեր և
– փոխատվության հանձնառություններ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում:

Բանկը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորստներին հավասար գումարով.

– պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ասմաթվի դրությամբ և
– այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր (տես Ծանոթագրություն 25 (բ)):

Բանկը չի օգտվում ցածր պարտքային ռիսկի համար գործող ազատումից ֆինանսական գործիքների հետ կապված:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժակետում պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ:

Ակնկալվող պարտքային կորստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են և չափվում է հետևյալ կերպ.

– *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ.* որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան Բանկին

հասանելիք դրամական հոսքերի և Բանկի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է),
- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ.* որպես համախառն հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերություն,
- *չօգտագործված փոխատվության հանձնառություններ*. որպես հետևյալ նշվածների միջև տարբերության ներկա արժեք՝ պայմանագրային դրամական հոսքերի, որոնք ենթակա են վճարման Բանկին, եթե օգտագործում է փոխառությունը ստանալու իրավունքը, և այն դրամական հոսքերի, որոնք Բանկն ակնկալում է ստանալ,
- *ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*. որպես այն ակնկալվող վճարումների ներկա արժեք, որոնք փոխհատուցում են տիրապետողին կրած պարտքային կորուստը՝ հանած այն գումարները, որոնք Բանկն ակնկալում է հետ ստանալ:

Տես՝ նաև Ծանոթագրություն 25 (բ):

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերաբանակցվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, գնահատվում է ֆինանսական ակտիվն ապաճանաչելու անհրաժեշտությունը (տես Ծանոթագրություն 3 (ե) (ii)), և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են հետևյալ կերպ.

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում (տես Ծանոթագրություն 25 (բ)):
- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեր՝ վերջինիս ապաճանաչման ժամանակ: Այս գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը զեղչվում է ապաճանաչման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից (որոնք դիտարկվում են որպես 3-րդ փուլի ֆինանսական ակտիվներ): Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, եթե տեղի են ունցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Բանկի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսնկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, անհատներին տրվող վարկերի դեպքում պարտքային առումով արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Պետական պարտատոմսերում ներդրման պարտքային առումով արժեզրկված լինելը գնահատելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- Վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությունում:
- Վարկունակության վարկանիշային գործակալությունների գնահատումները:
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:
- Պարտքի պայմանների վերանայման հավանականությունը, որի արդյունքում տիրապետողները կարող են վնաս կրել պարտքը կամավոր կամ պարտադիր կերպով ներելու պատճառով:
- Գործող միջազգային աջակցման մեխանիզմները, որոնք թույլ են տալիս որպես «վերջին հնարավոր վարկատու» տվյալ երկրին տրամադրել անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև կառավարությունների և գործակալությունների հրապարակային հայտարարություններում նշված այդ մեխանիզմները կիրառելու մտադրությունը: Սա ներառում է նշված մեխանիզմների աշխատանքի արդյունավետության և, անկախ քաղաքական մտադրություններից, պահանջվող չափանիշները բավարարելու կարողության առկայության գնահատումը:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

- *ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*՝ որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,
- *փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*՝ սովորաբար որպես պահուստ,
- *երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Բանկը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորստներից առանձին*՝ Բանկը

ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և

– *իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝* ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում:

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը վերականգնելու ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Բանկը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այս գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:

Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ՝ վճարման ենթակա գումարների փոխհատուցման Բանկի ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

Ֆինանսական ակտիվի անբաժանելի մաս չհադիսացող ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բանկը գնահատում է, արդյոք ֆինանսական երաշխավորության պայմանագիրը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, որը հաշվառվում է որպես այդ գործիքի բաղադրիչ, թե առանձին հաշվառվող պայմանագիր: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

– արդյոք երաշխավորությունը նախատեսված է պարտքային գործիքի պայմանագրի պայմաններով,
– արդյոք երաշխավորության պայմանագիրը կնքվել է պարտքային գործիքի պայմանագրի հետ նույն ժամանակ և հաշվի առնելով վերջինիս պայմանները և
– արդյոք երաշխավորությունը տրամադրվել է փոխառուի մայր կազմակերպության կամ փոխառուի խմբի անդամ հանդիսացող որևէ այլ կազմակերպության կողմից:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման հետ կապված վճարվելիք ցանկացած հավելաճար հաշվառվում է որպես այդ ակտիվի ձեռքբերման գործարքի գծով ծախսում: Պարտքային գործիքի իրական արժեքը և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Բանկը հաշվի է առնում երաշխավորությամբ ապահովվող պաշտպանության ազդեցությունը:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը չի հանդիսանում պարտքային գործիքի անբաժանելի տարր, ապա այն ճանաչում է ակտիվ, որն իրենից ներկայացնում է երաշխավորության հավելավճարի գծով կանխավճար, և պարտքային կորուստների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք: Կանխավճարի տեսքով վճարված հավելավճարի գծով ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը, որի համար ստացվել է երաշխավորությունը, ոչ պարտքային առումով արժեզրկված է և ոչ էլ ենթարկվել է պարտքային ռիսկի նշանակալի աճի երաշխավորությունը ստանալու պահին: Այս ակտիվները ճանաչվում են «այլ ակտիվներ» հոդվածի կազմում: Բանկը փոխհատուցման իրավունքի գծով օգուտները կամ կորուստները ներկայացնում է շահույթում կամ վնասում՝ «պարտքային ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ» հոդվածում:

(զ) Հաճախորդներին տրված վարկեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր» հոդվածը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկերը (տես Ծանոթագրություն 3 (ե) (i)), որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(է) Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «ներդրումային արժեթղթեր» հոդվածը ներառում է.

- ամորտիզացված արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթերը (տես Ծանոթագրություն 3 (ե) (i)), որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթերը (տես Ծանոթագրություն 3 (ե) (i)),
- բաժնային ներդրումային արժեթղթերը, որոնք նախորոշված են որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող (տես Ծանոթագրություն 3 (ե) (i)):

(ը) Ավանդներ, թողարկված պարտքային արժեթղթեր և բաներից և այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր

Ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և բաներից և այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը պարտավորությունները նախորոշում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

(թ) Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դեբիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում դրանք չափվում են հետևյալ նշվածներից ավելի բարձրով՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստից (տես Ծանոթագրություն 3 (ե) (vi)) և սկզբնապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

Բանկը չունի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող փոխատվության հանձնառություններ:

Այլ փոխատվության հանձնառությունների համար Բանկը ճանաչում է կորստի պահուստ (տես Ծանոթագրություն 3 (ե) (vi)) ՖՀՄՍ 9-ի համաձայն:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացող պարտավորությունները ներառվում են պահուստների կազմում:

(ժ) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Վերագնահատում

Շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատվող շենքերի իրական արժեքի փոփոխություններից: Եթե շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Այնուամենայնիվ, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որով նախապես նվազումը ճանաչվել էր շահույթում կամ վնասում: Եթե շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(iii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով առանձին ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռքբերման ամսաթվից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողատարածքների գծով մաշվածություն չի հաշվարկվում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

- շենքեր	50 տարի
- վարձակալված գույքի բարելավում	10 տարի
- համակարգիչներ և կապի սարքավորումներ	4-10 տարի
- փոխադրամիջոցներ	10 տարի
- տնտեսական գույք	10 տարի

(հ) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման և ներդրման ծախսումները կապիտալացվում են համապատասխան ոչ նյութական արժեքի ինքնարժեքին:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կան վնասում գծային մեթոդով ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները կազմում են 3-ից 10 տարի:

(լ) Առգրավված ակտիվներ

Բանկը ճանաչում է առգրավված ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ ունի մարման ամբողջական և վերջնական իրավունք գրավի նկատմամբ:

Առգրավված ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից նվազագույնով՝ հանած վաճառքի կազմակերպման ծախսերը: Սկզբնական ճանաչման պահին առգրավված ակտիվները չափվում են պարտազանցումով վարկի հաշվեկշռային արժեքով՝ ներառյալ գրավի առգրավման հետ կապված ծախսումները: Իրական արժեքի և վաճառքի կազմակերպման ծախսերի տարբերությունը գրավի գնահատված վաճառքի գինն է բնականոն գործունեության ընթացքում՝ հանած վաճառքի հարակից ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո գրավի նկատմամբ սեփականության ձեռքբերման արդյունքում առաջացած ակտիվները վերանայվում են որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու տեսանկյունից և համապատասխանաբար վերադասակարգվում են այդ դասի չափանիշները բավարարելու դեպքում:

Առգրավված ակտիվների օտարումից ստացվող օգուտը և կորուստը ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ գործառնական եկամուտ» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(խ) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(ծ) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը հատուկ ռիսկերը:

(կ) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

(ii) Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող գումարը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

(iii) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

(հ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող եկամտի գծով՝ կիրառելով այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Բանկի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

(ձ) Սեգմենտային հաշվետվություններ

Գործառնական սեգմենտը Բանկի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնություններիc հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները

կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Բանկի ղեկավարությունը գտնում է, որ Բանկը բաղկացած է մեկ գործառնական սեգմենտից:

(ղ) Վարձակալություններ

Բանկը կիրառել է ՖՀՄՍ 16-ն օգտագործելով պարզեցված փոփոխված հետընթաց մոտեցումը, այդ իսկ պատճառով, համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել և շարունակվում է ներկայացվել ՀՀՄՍ 17 և ՖՀՄՄԿ մեկնաբանություն 4 պահանջների համաձայն: ՀՀՄՍ 17 և ՖՀՄՄԿ մեկնաբանություն 4 պահանջների համաձայն հաշվապահական հաշվառման քաղաքականությունն առավել մանրամասն բացահայտվում է առանձին:

2019թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Պայմանագրի սկզբում Բանկը գնահատում է արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը: Գնահատելու համար, թե արդյոք պայմանագրով փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը, Բանկն օգտագործում է ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանումը:

Այս քաղաքականությունը կիրառելի է 2019թ. հունվարի 1-ին կամ հետո կնքված պայմանագրերի համար:

(i) Բանկը՝ որպես վարձակալ

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում Բանկը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Բանկը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև

ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Բանկին չեն փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Բանկը կիրագործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Բանկը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Բանկը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները.

- հաստատուն վճարումները, ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումները,
- վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և
- գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Բանկը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե Բանկը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ երկարաձգման օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե Բանկը խելամտորեն համոզված չէ, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Բանկի գնահատականի փոփոխություն, եթե Բանկը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Բանկը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների, այդ թվում՝ բանկոմատների համար: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարներն Բանկը ճանաչում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

Նախքան 2019թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն

Նախքան 2019թ. կնքված պայմանագրերի համար Բանկը որոշում էր, թե արդյոք համաձայնությունը հանդիսանում էր վարձակալություն կամ պարունակում էր վարձակալություն գնահատելով՝

- արդյոք համաձայնության կատարումը կախված էր որոշակի ակտիվի կամ ակտիվների օգտագործումից,
- արդյոք համաձայնությունը փոխանցում էր օգտագործման իրավունքի ձևով ակտիվը: Համաձայնությունը փոխանցում էր օգտագործման իրավունքի ձևով ակտիվը, եթե բավարարվում էր ստորև նշված պայմաններից որևէ մեկը.
- գնորդը հնարավորություն կամ իրավունք ունի կառավարելու ակտիվը՝ ստանալով կամ վերահսկելով այդ ակտիվի արտադրանքի ավելի քան ոչ նշանակալի մասը,
- գնորդը հնարավորություն կամ իրավունք ունի վերահսկելու ակտիվի ֆիզիկական հասանելիությունը՝ ստանալով կամ վերահսկելով այդ ակտիվի արտադրանքի ավելի քան ոչ նշանակալի մասը, կամ
- փաստերն ու հանգամանքները ցույց են տալիս, որ շատ փոքր է հավանականությունը, որ այլ կողմերը կստանան արտադրանքի ավելի քան ոչ նշանակալի մասը և միավորի գինը ո՛չ ֆիքսված է ըստ արտադրանքի միավորի, ո՛չ էլ հավասար է մեկ միավոր արտադրանքի ընթացիկ շուկայական գնին:

Համադրելի ժամանակաշրջանում վարձակալությունները, որոնց շրջանակում փոխանցվում էին սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, որպես վարձակալ Բանկը դասակարգում էր որպես ֆինանսական վարձակալություն: Ֆինանսական վարձակալության դեպքում վարձակալված ակտիվները սկզբնապես չափվում էին իրական արժեքից և նվազագույն վարձավճարների ներկա արժեքից նվազագույնով: Նվազագույն վարձավճարներն այն վճարներն էին, որոնք վարձակալության ժամկետի ընթացքում պահանջվում կամ կարող էին պահանջվել վարձակալից՝ առանց պայմանական ռենտաների: Սկզբնական ճանաչումից հետո ակտիվները հաշվառվում էին այդ ակտիվի համար կիրառելի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

Այլ վարձակալությունների շրջանակում պահվող ակտիվները դասակարգվում էին որպես գործառնական վարձակալություն և ճանաչվում էին Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Գործառնական վարձակալության գծով վճարումները ճանաչվում էին շահույթում կամ վնասում գծային հիմունքով՝ վարձա-

կալության ժամկետի ընթացքում: Ստացված վարձակալության խրախուսումները ճանաչվում էին որպես վարձակալության գծով ընդհանուր ծախսի անբաժանելի մաս՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

(ճ) Հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ

Մի շարք նոր ստանդարտներ և ստանդարտների փոփոխություններ գործում են 2019թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բանկը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները: Ստորև ներկայացված փոփոխված ստանդարտները և մեկնաբանություններն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումների փոփոխություններ ՖՀՄՍ ստանդարտներում,*
- *«Բիզնես» տերմինի սահմանում (ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ),*
- *«Էական» տերմինի սահմանում (ՀՀՄՍ 1-ի և ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ),*
- *ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր»:*

34 Զուտ տոկոսային եկամուտ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Արդյունավետ տոկոադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	8,974,794	8,659,983
Ներդրումային արժեթղթեր	2,751,228	2,574,919
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	326,423	141,861
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	267,456	243,589
Այլ	5,659	13,839
	12,325,560	**11,634,191**
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	2,546,602	3,031,927
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	713,458	123,435
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	566,820	370,497
Թողարկված պարտքային արժեթղթեր	470,604	712,633
Վարձակալության գծով պարտավորություններ	93,781	-
Այլ փոխառություններ	57,326	77,992
Այլ	243,363	194,015
	4,691,954	**4,510,499**
Զուտ տոկոսային եկամուտ	**7,633,606**	**7,123,692**

35 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ		
Պլաստիկ քարտերի սպասարկում	524,020	244,170
Դրամային փոխանցումներ	217,071	171,623
Դրամական միջոցների կանխիկացում և հաշիվների սպասարկում	120,916	300,916
Այլ	29,533	22,261
	891,540	**738,970**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս		
Գործարքներ քարտերով	663,647	369,382
Վճարային համակարգերի սպասարկում	91,651	51,913
Այլ	41,778	33,296
	797,076	**454,591**
Զուտ միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	**94,464**	**284,379**

36 Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Օգուտ սփոթ գործարքներից	848,241	638,962
Օգուտ/(վնաս) ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	378,049	(277,105)
	1,226,290	**361,857**

37 Զուտ այլ գործառնական եկամուտ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Ստացված տույժեր և տուգանքներ	471,943	545,399
Ստացված շահաբաժիններ	144,751	-
Վնաս առգրավված ակտիվների վաճառքից	(235)	(48,064)
Այլ	54,960	(401)
	671,419	**496,934**

38 Զուտ արժեզրկումից կորուստներ ֆինանսական գործիքների գծով

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվության հանձնառություններ	150,133	1,944,363
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	(1,421)	(139,526)
Այլ ֆինանսական ակտիվներ	(8,860)	5,393
Տրված ֆինանսական երաշխավորություններ	(3,313)	3,543
	136,539	**1,813,773**

Ստորև ներկայացված է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «ֆինասնական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածի համադրումը 2019թ. և 2018թ. համար:

2019թ. **հազ. դրամ**	**Կորստի պահուստի զուտ վերաչափում**	**Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ**	**Նախկինում դուրսգրված գումարների վերականգնում**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,633	(2,243)	-	1,390
Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	22,967	(12,673)	-	10,294
Ամորտիզացված արժեքով չափվող հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	2,017	(2,300)	-	(283)
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք	(814,672)	(73,308)	216,561	(671,419)
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – անհատներ*	(410,459)	(214,389)	1,146,134	521,286
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	196	(2,737)	-	(2,541)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	(21,181)	22,602	-	1,421
Տրված ֆինանսական երաշխավորություններ	3,745	(432)	-	3,313
Ընդամենը	**(1,213,754)**	**(285,480)**	**1,362,695**	**(136,539)**

2018թ. հազ. դրամ	Կորստի պահուստի զուտ վերաչափում	Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,633	(3,633)	-
Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	30,675	(41,534)	(10,859)
Ամորտիզացված արժեքով չափվող հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,636	(2,017)	1,619
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք	(1,664,639)	(177,121)	(1,841,760)
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – անհատներ	36,543	(139,146)	(102,603)
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	4,507	(660)	3,847
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	182,341	(42,815)	139,526
Տրված ֆինանսական երաշխավորություններ	1,058	(4,601)	(3,543)
Ընդամենը	**(1,402,246)**	**(411,527)**	**(1,813,773)**

* ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 11-ի որոշման համաձայն՝ տուգանքները, որոնք սահմանվել են անհատներին տրված վարկերի համար, որոնց գծով տեղի է ունեցել պարտազնացում, ներվել են: Արդյունքում, մեծ թվով հաճախորդներ դուրսգրված մայր գումարը և հաշվեգրված տոկոսները մարել են 2013-2017թթ. ընթացքում:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումն ըստ ֆինանսական գործիքների դասերի 2019թ. համար:

	2019թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Մնացորդը առ 1 հունվարի	(3,633)	-	-	(3,633)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	3,633	-	-	3,633
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(2,243)	-	-	(2,243)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(2,243)**	**-**	**-**	**(2,243)**

	2019թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	(41,534)	-	-	(41,534)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	22,967	-	-	22,967
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(12,673)	-	-	(12,673)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(31,240)**	**-**	**-**	**(31,240)**

	2019թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ				
Մնացորդը առ 1 հունվարի	(2,017)	-	-	(2,017)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	2,017	-	-	2,017
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(2,300)	-	-	(2,300)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(2,300)**	**-**	**-**	**(2,300)**

	2019թ.*			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք				
Մնացորդը առ 1 հունվարի	(204,067)	(782)	(8,950,759)	(9,155,608)
Փոխանցում 1-ին փուլ	115	(33)	(82)	-
Փոխանցում 2-րդ փուլ	(75)	327	(252)	-
Փոխանցում 3-րդ փուլ	(85)	(212)	297	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	129,940	(11,908)	(932,704)	(814,672)
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(73,308)	-	-	(73,308)
Դուրսգրումներ	-	8,552	56,789	65,341
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(147,480)**	**(4,056)**	**(9,826,711)**	**(9,978,247)**

	2019թ.*			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – անհատներ				
Մնացորդը առ 1 հունվարի	(214,259)	(48,117)	(336,613)	(598,989)
Փոխանցում 1-ին փուլ	16,906	(2,643)	(14,263)	-
Փոխանցում 2-րդ փուլ	(2,349)	17,068	(14,719)	-
Փոխանցում 3-րդ փուլ	87,965	59,377	(147,342)	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	63,177	(55,769)	(417,867)	(410,459)
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(214,389)	-	-	(214,389)
Դուրսգրումներ	-	-	316,164	316,164
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(262,949)**	**(30,084)**	**(614,640)**	**(907,673)**

* Այս աղյուսակներում ներկայացված կորստի պահուստը ներառում է իրավաբանական անձանց և անհատների համար նախատեսված որոշ գործիքների, այդ թվում՝ վարկային քարտերի և օվերդրաֆտների հետ կապված փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները:

	2019թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ				
Մնացորդը առ 1 հունվարի	(660)	-	-	(660)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	196	-	-	196
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(2,737)	-	-	(2,737)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(3,201)**	**-**	**-**	**(3,201)**

	2019թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
Մնացորդը առ 1 հունվարի	(36,744)	-	-	(36,744)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(21,181)	-	-	(21,181)
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	22,602	-	-	22,602
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(35,323)**	**-**	**-**	**(35,323)**

	2019թ.			
հազ. դրամ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը

	2019թ.			
հազ. դրամ **Տրված ֆինանսական երաշխավորություններ**	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի	(4,601)	-	-	(4,601)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	3,745	-	-	3,745
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(432)	-	-	(432)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(1,288)**	**-**	-	**(1,288)**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումն ըստ ֆինանսական գործիքների դասերի 2018թ. համար:

	2018թ.			
հազ. դրամ **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի	(3,633)	-	-	(3,633)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	3,633	-	-	3,633
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(3,633)	-	-	(3,633)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(3,633)**	**-**	**-**	**(3,633)**

	2018թ.			
հազ. դրամ **Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ**	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի	(30,675)	-	-	(30,675)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	30,675	-	-	30,675
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(41,534)	-	-	(41,534)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(41,534)**	**-**	**-**	**(41,534)**

	2018թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ				
Մնացորդը առ 1 հունվարի	(3,636)	-	-	(3,636)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	3,636	-	-	3,636
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(2,017)	-	-	(2,017)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(2,017)**	**-**	**-**	**(2,017)**

	2018թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք				
Մնացորդը առ 1 հունվարի	(121,832)	(11,607)	(7,061,736)	(7,195,175)
Փոխանցում 1-ին փուլ	(41)	41	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	-	-	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	42,320	5,925	(48,245)	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	52,355	5,111	(1,722,105)	(1,664,639)
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(176,869)	(252)	-	(177,121)
Զուտ վերականգնումներ	-	-	(118,673)	(118,673)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(204,067)**	**(782)**	**(8,950,759)**	**(9,155,608)**

	2018թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – անհատներ				
Մնացորդը առ 1 հունվարի	(243,450)	(70,647)	(340,800)	(654,897)
Փոխանցում 1-ին փուլ	(2,552)	2,278	274	-
Փոխանցում 2-րդ փուլ	29,312	(29,473)	161	-
Փոխանցում 3-րդ փուլ	217,027	49,691	(266,718)	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(104,496)	9,310	131,729	36,543
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(110,100)	(9,276)	(19,770)	(139,146)
Զուտ դուրսգրումներ	-	-	158,511	158,511

	2018թ.			
հազ. դրամ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(214,259)**	**(48,117)**	**(336,613)**	**(598,989)**

	2018թ.			
հազ. դրամ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ				
Մնացորդը առ 1 հունվարի	(4,507)	-	-	(4,507)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	4,507	-	-	4,507
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(660)	-	-	(660)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(660)**	**-**	**-**	**(660)**

	2018թ.			
հազ. դրամ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
Մնացորդը առ 1 հունվարի	(176,270)	-	-	(176,270)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	182,341	-	-	182,341
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(42,815)	-	-	(42,815)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(36,744)**	**-**	**-**	**(36,744)**

	2018թ.			
հազ. դրամ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը
Տրված ֆինանսական երաշխավորություններ				
Մնացորդը առ 1 հունվարի	(1,058)	-	-	(1,058)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	1,058	-	-	1,058
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(4,601)	-	-	(4,601)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**(4,601)**	**-**	**-**	**(4,601)**

39 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա*	773,732	470,154
Ոչ փոխհատուցելի հարկեր և տուրքեր	321,904	335,186
Գովազդ և շուկայավարում	276,217	282,656
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	209,679	113,554
Մասնագիտական ծառայություններ	187,005	77,647
Ներկայացուցչական և կազմակերպչական ծախսեր	150,037	181,943
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	148,251	152,108
Անվտանգության ծառայություն	83,141	91,590
Կապի և տեղեկատվական ծառայություններ	81,236	63,829
Ապահովագրություն	71,947	71,371
Վարձակալության ծախսեր	43,907	199,268
Այլ	122,001	165,442
	2,469,057	**2,204,748**

* 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա մաշվածության և ամորտիզացիայի գումարում ներառված 220,572 հազար դրամը վերաբերում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ամորտիզացիային՝ ՖՀՄՍ 16 *«Վարձակալություններ»* պահանջների համաձայն (տես Ծանոթագրություն 17):

40 Շահութահարկի գծով ծախս

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Նախորդ տարիներում պակաս հաշվարկված ընթացիկ հարկի գծով ծախս	460	2,907
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման արդյունքում	588,305	706,929
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**588,765**	**709,836**

2019թ-ին ընթացիկ հարկի գծով կիրառելի դրույքը կազմում է 20% (2018թ-ին՝ 20%), իսկ հետաձգված հարկերի գծով կիրառելի դրույքը՝ 18% (2018թ-ին՝ 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2019թ. հազ. դրամ	%	2018թ. հազ. դրամ	%
Շահույթ նախքան հարկումը	3,144,273		2,892,806	
Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով	628,855	20.0	578,561	20.0
Չնվազեցվող ծախսեր	113,211	3.6	128,368	4.4
Օրենսդրության փոփոխություն*	(153,761)	(4.9)	-	-
Նախորդ տարիներում պակաս հաշվարկված	460	0.0	2,907	0.1
	588,765	**18.7**	**709,836**	**24.5**

* Համաձայն 2019թ. հունիսի 25-ի հարկերի մասին որոշման՝ 2020թ. հունվարի 1-ից գործում է նոր հարկային օրենսգիրքն ըստ որի շահութահարկի դրույքը 20%-ից նվազել է 18%: Հաշվի առնելով, որ օրենսդրության փոփոխությունն ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանում, հետաձգված հարկային ակտիվները վերահաշվարկվել են օգտագործելով հարկի նոր դրույքը, որն ըստ ակնկալիքների պետք է գործեր հակադարձման պահին:

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու նպատակով որոշված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն: արկային վնասը կարող է փոխանցվել հաջորդ տարի մինչև 2021թ.:

Ստորև ներկայացված են ժամանակավոր տարբերությունների փոփոխությունները 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում:

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	727	(323)	-	404
Ներդրումային արժեթղթեր	(36,231)	53,646	(184,001)	(166,586)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(26,468)	9,479	-	(16,989)
Հաճախորդներին տրված վարկեր	(911,661)	(474,378)	-	(1,386,039)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(15,905)	581	-	(15,324)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	-	(289,135)	-	(289,135)
Այլ ակտիվներ	(35,681)	12,704	-	(22,977)
Վարձակալության գծով պարտավորություն	-	294,916	-	294,916
Այլ պարտավորություններ	140,913	(29,532)	-	111,381
Հաջորդ տարի փոխանցված հարկային վնաս	266,982	(166,263)	-	100,719
	(617,324)	**(588,305)**	**(184,001)**	**(1,389,630)**

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	727	-	-	727
Ներդրումային արժեթղթեր	(310,058)	(44,247)	318,074	(36,231)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(16,207)	(10,261)	-	(26,468)
Հաճախորդներին տրված վարկեր	(53,257)	(858,404)	-	(911,661)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(21,830)	(5,498)	11,423	(15,905)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	726	(726)	-	-
Այլ ակտիվներ	(18,610)	(17,071)	-	(35,681)
Այլ պարտավորություններ	52,180	88,733	-	140,913
Հաջորդ տարի փոխանցված հարկային վնաս	126,437	140,545	-	266,982
	(239,892)	**(706,929)**	**329,497**	**(617,324)**

(բ) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված շահութահարկ

Ստորև ներկայացված են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի բաղադրիչների հետ կապված հարկային հետևանքները 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2019թ.			2018թ.		
հազ. դրամ	**Գումարը մինչև հարկումը**	**Հարկի գծով ծախս**	**Գումարը հարկումից հետո**	**Գումարը մինչև հարկումը**	**Հարկի գծով ծախս**	**Գումարը հարկումից հետո**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	921,329	(184,266)	737,063	(108,735)	21,747	(86,988)
Շահույթ կամ վնաս փոխանցված այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	(1,324)	265	(1,059)	(1,481,635)	296,327	(1,185,308)
Վերագնահատված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք	-	-	-	(57,114)	11,423	(45,691)
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս)	**920,005**	**(184,001)**	**736,004**	**(1,647,484)**	**329,497**	**(1,317,987)**

41 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2019թ. հազ. դրամ	**2018թ. հազ. դրամ**
Կանխիկը դրամարկղում	6,580,587	2,602,168
Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	7,118,931	8,212,667
Նոստրո հաշիվներ այլ բանկերում		
- A- -ից A+ վարկանիշով	118,695	1,891
- BBB- -ից BBB+ վարկանիշով	6,823	52,077
- BB- -ից BB+ վարկանիշով	312,396	157,033
- B- -ից B+ վարկանիշով	90,240	182,165
- առանց վարկանիշի	111,608	56,388
Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում	**639,762**	**449,554**
Ընդամենը համախառն դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**14,339,280**	**11,264,389**

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Պարտքային կորստի պահուստ	(2,243)	(3,633)
Ընդամենը զուտ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**14,337,037**	**11,260,756**

ՀՀ ԿԲ-ում պահվող նոստրո հաշիվները վերաբերում են վճարահաշվարկային գործունեությանը (տես Ծանոթագրություն 13) և անհրաժեշտության դեպքում կարող են ելքագրվել:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն պարտքային առումով արժեզրկված չեն կամ ժամկետանց չեն:

Վարկանիշները հիմնված են «Standard & Poor's» գործակալության վարկանշավորման համակարգի տվյալների վրա:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային կողմ հանդիսացող այնպիսի բանկեր, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի (2018թ-ին՝ ոչ մի բանկ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն ամբողջությամբ ընդգրկված են 1-ին փուլում և չափվում են ամորտիզացված արժեքով 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

42 Ներդրումային արժեթղթեր

(ա) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ կառավարության արժեթղթեր	2,350,550	1,533,661
- Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	25,718	2,071,829
Ընդամենը պետական պարտատոմսեր	**2,376,268**	**3,605,490**
Կորպորատիվ պարտատոմսեր		
- B -ից B+ վարկանիշով	232,995	-
- առանց վարկանիշի	1,339,794	-
Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր	**1,572,789**	-
Բաժնային գործիքներ		
Կորպորատիվ բաժնետոմսեր	2,553,452	1,122,710
Ընդամենը Բանկի կողմից պահվող արժեթղթեր	**6,502,509**	**4,728,200**
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	2,260,311	-

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Ընդամենը վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված արժեթղթեր	**2,260,311**	-
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**8,762,820**	**4,728,200**

(բ) Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ կառավարության արժեթղթեր	7,803,216	9,576,095
- Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	600,653	2,617,138
Ընդամենը պետական պարտատոմսեր	**8,403,869**	**12,193,233**
Կորպորատիվ պարտատոմսեր		
- B -ից B+ վարկանիշով	2,005,660	2,287,867
- առանց վարկանիշի	896,676	692,367
Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր	**2,902,336**	**2,980,234**
Ընդամենը Բանկի կողմից պահվող արժեթղթեր	**11,306,205**	**15,173,467**
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ կառավարության արժեթղթեր	7,384,332	5,587,003
- Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	4,445,161	-
Ընդամենը պետական պարտատոմսեր	**11,829,493**	**5,587,003**
Ընդամենը վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված արժեթղթեր	**11,829,493**	**5,587,003**
Ընդամենը համախառն ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**23,135,698**	**20,760,470**
Պարտքային կորստի գծով պահուստ	(35,323)	(36,744)
Ընդամենը զուտ ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**23,100,375**	**20,723,726**

(գ) Ներդրումային արժթղթերի պարտքային որակ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն ներդրումային արժթղթերի պարտքային որակի վերաբերյալ 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Եթե այլ նշում չի արվում, աղյուսակում ֆինանսական ակտիվների համար ներկայացվում է համախառն հաշվեկշռային արժեքը:

	31 դեկտեմբերի 2019թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	
հազ. դրամ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Պարտքային առումով չարժեզրկված ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ	Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
– BB- -ից BB+ վարկանիշով	4,636,579	-	-	4,636,579
– B- -ից B+ վարկանիշով	232,995	-	-	232,995
– առանց վարկանիշի*	1,339,794	-	-	1,339,794
Հաշվեկշռային արժեք	**6,209,368**	-	-	**6,209,368**

* Ղեկավարության գնահատմամբ առանց վարկանիշի գործիքների կազմում 1,339,794 հազար դրամ գումարով գործիքների վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Standard & Poor's» գործակալության վարկանշավորման համակարգի B+ վարկանիշին:

	31 դեկտեմբերի 2019թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	
հազ. դրամ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Պարտքային առումով չարժեզրկված ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ	Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
– B- -ից BB- վարկանիշով	22,239,022	-	-	22,239,022
– առանց վարկանիշի*	896,676	-	-	896,676
	23,135,698	-	-	**23,135,698**
Կորստի պահուստ	**(35,323)**	-	-	**(35,323)**
Հաշվեկշռային արժեք	**23,100,375**	-	-	**23,100,375**

* Ղեկավարության գնահատմամբ առանց վարկանիշի գործիքների վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Standard & Poor's» գործակալության վարկանշավորման համակարգի B+ վարկանիշին:

	31 դեկտեմբերի 2018թ.			
հազ. դրամ	1-ին փուլ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	2-րդ փուլ Պարտքային առումով չարժեզրկված ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ	3-րդ փուլ Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
– B- -ից B+ վարկանիշով	3,605,490	-	-	3,605,490
Հաշվեկշռային արժեք	**3,605,490**	-	-	**3,605,490**

	31 դեկտեմբերի 2018թ.			
հազ. դրամ	1-ին փուլ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	2-րդ փուլ Պարտքային առումով չարժեզրկված ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ	3-րդ փուլ Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
– B- -ից B+ վարկանիշով	20,068,103	-	-	20,068,103
– առանց վարկանիշի	692,367	-	-	692,367
	20,760,470	**-**	**-**	**20,760,470**
Կորստի պահուստ	**(36,744)**	-	-	**(36,744)**
Հաշվեկշռային արժեք	**20,723,726**	-	-	**20,723,726**

Պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտվում է «Standard & Poor's» գործակալության վարկանիշներից:

Բանկը վաճառում է արժեթղթեր հետգնման պայմանագրերի շրջանակում և ձեռք է բերում արժեթղթեր վերավաճառքի պայմանագրերի շրջանակում:

Հետգնման պայմանագրերի շրջանակում վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմերին, և Բանկը ստանում է դրամական միջոցներ դրա դիմաց: Պայմանագրային կողմերը կարող են վերագրավադրել կամ վերավաճառվել այս ֆինանսական ակտիվները Բանկի կողմից պարտազանցման բացակայության դեպքում, սակայն պայմանագրային կողմը պարտավոր է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ժամկետի ավարտին: Բանկը որոշել է, որ պահպանում է այս արժեթղթերի հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, այդ իսկ պատճառով, չի ապաճանաչել դրանք: Ստացված դրամական միջոցները ճանաչվում են որպես ֆինանսական ակտիվ, իսկ գրավի ձեռքբերման գինը մարելու պարտականության գծով ճանաչվում է ֆինանսական պարտավորություն և ներառվում է հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներում (Ծանոթագրություն 20):

Այս գործարքներն իրականացվում են վոխատվության, արժեթղթերի փոխառության և փոխատվություն ստանդարտ գործառնություններին բնորոշ պայմաններով:

43 Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
ՀՀ ԿԲ-ի պարտավորություններ		
Վարկային քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց ՀՀ ԿԲ-ում	527,500	523,000
Ավանդ ՀՀ ԿԲ-ում, պարտադիր պահուստներ	2,749,312	-
Ընդամենը ՀՀ ԿԲ-ի պարտավորություններ	**3,276,812**	**523,000**
Վարկեր և ավանդներ		
Եվրասիական տնտեսական միության բանկեր		
- B- -ից B+ վարկանիշով	1,934,283	-
- առանց վարկանիշի	584,061	4,841,505
Հայկական բանկեր		
- BB- -ից BB+ վարկանիշով	-	971,196
- B- -ից B+ վարկանիշով	-	4,862,396
- առանց վարկանիշի	1,106,259	-
Այլ ոչ ռեզիդենտ բանկեր		
- AA- -ից AA+ վարկանիշով	169,111	-
- A- -ից A+ վարկանիշով	13,432	166,818
- BBB- -ից BBB+ վարկանիշով	80,589	83,047
- առանց վարկանիշի	-	502,071
Միջին չափի հայկական վարկային կազմակերպություններ	2,009,833	973,412
Այլ ֆինանսական կազմակերպություններ	1,162,027	187,081
Ընդամենը վարկեր և ավանդներ	**7,059,595**	**12,587,526**
Ընդամենը բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված համախառն վարկեր և փոխատվություններ	**10,336,407**	**13,110,526**
Պարտքային կորստի պահուստ	(31,240)	(41,534)
Ընդամենը բանկերին և ֆինանսական կազմակերպություններին	**10,305,167**	**13,068,992**

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
տրված զուտ վարկեր և փոխատվություններ		

(ա) Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում

Վարկային քարտերով գործառնությունների համար ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցը ոչ տոկոսակիր ավանդ է, որը հաշվարկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կանոնակարգերի համաձայն և որի ելքագրումը սահմանափակված է:

Բանկերից պահանջվում է ՀՀ ԿԲ-ում պահել կանխիկ ավանդ (պարտադիր պահուստ) ներգրավված միջոցների համար: ՀՀ դրամով ներգրավված միջոցների համար պարտադիր պահուստը կազմում է 2% և ամբողջությամբ պահվում է ՀՀ դրամով: Արտարժույթով ներգրավված միջոցների համար պարտադիր պահուստը կազմում է 18%, որից 12%-ը պահվում է ՀՀ դրամով, իսկ 6%-ը՝ ներգրավված միջոցների համապատասխան արտարժույթով: ՀՀ դրամով պահվող ավանդը ելքագրելու Բանկի իրավունքը չի սահմանափակվում օրենսդրությամբ, սակայն եթե Բանկը չի ապահովում պահուստի նվազագույն միջին ամսական գումարը, վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ: ՀՀ դրամով պահվող պարտադիր պահուստները դասակարգվում են որպես դրամական միջոցներ և դրանց դրամական համարժեքներ (տես Ծանոթագրություն 11), քանի որ կարող են ելքագրվել անհրաժեշտության դեպքում:
Արտարժույթով պահվող պարտադիր պահուստի համար Բանկն պարտավոր է ապահովել նվազագույն օրական մնացորդ: Այս պահուստները չեն համարվում դրամական միջոցներ և դրանց դրամական համարժեքներ և ներառված են բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների կազմում: Պարտադիր օրական նվազագույն պահուստ ապահովելու պահանջն ուժի մեջ է մտել 2019թ-ին: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում պահվող ավանդներում ներառված է 2,749,312 հազար դրամ գումարով պարտադիր պահուստն արտարժույթով ներգրավված միջոցների համար (2018թ-ին նման պահուստ չկար):

(բ) Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների կենտրոնացում

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային կողմ հանդիսացող այնպիսի բանկեր (2018թ-ին՝ մեկ բանկ), որոնց գծով մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում էր 4,841,505 հազար դրամ:

(գ) Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային որակ

Ղեկավարության գնահատմամբ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 4,862,180 հազար դրամ գումարով առանց վարկանիշի գործիքների վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Standard & Poor's» գործակալության վարկանշավորման համակարգի B- -ից B+ վարկանիշին (2018թ-ին 6,504,069 հազար դրամ գումարով առանց վարկանիշի գործիքների վարկանիշը մոտավորապես համապատասխանում էր «Standard & Poor's» գործակալության վարկանշավորման համակարգի B- -ից B+ վարկանիշին):

Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերը և փոխատվություններն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերը և փոխատվությունները պարտքային առումով արժեզրկված չեն կամ ժամկետանց չեն:

Պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտվում է «Standard & Poor's» գործակալության վարկանիշներից:

Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Տեղական ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք գումարներ	4,769,563	3,431,830
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք համախառն գումարներ	**4,769,563**	**3,431,830**
Պարտքային կորստի պահուստ	(2,300)	(2,017)
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք զուտ գումարներ	**4,767,263**	**3,429,813**

2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի այնպիսի պայմանագրային կողմ, որից հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները գերազանցեն Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները վերագրելի են խոշոր տեղական ֆինանսական կազմակերպություններին: Բոլոր գումարները դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները պարտքային առումով արժեզրկված չեն կամ ժամկետանց չեն:

Ղեկավարության գնահատմամբ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք 4,769,563 հազար դրամ (2018թ-ին՝ 3,431,830 հազար դրամ) առանց վարկանիշի գումարի վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Standard & Poor's» գործակալության վարկանշավորման համակարգի B- -ից B+ վարկանիշին:

(ա) Ակտիվների համար որպես ապահովություն ընդունված գրավ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված ֆինանսական ակտիվների (ՀՀ կառավարության արժեթղթեր) իրական արժեքը կազմում է 5,281,943 հազար դրամ (2018թ-ին՝ 3,693,871 հազար դրամ):

Այս գործարքներն իրականացվում են փոխատվության, արժեթղթերի փոխառության և փոխատվության ստանդարտ գործառնություններին բնորոշ պայմաններով:

44 Հաճախորդներին տրված վարկեր

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր		
Վարկեր խոշոր կազմակերպություններին	36,488,694	33,388,034
Վարկեր առևտրային կազմակերպություններին	2,060,225	2,540,210
Վարկեր արդյունաբերական կազմակերպություններին	1,492,256	1,579,952
Դրամական միջոցների գրավով վարկեր	384,165	242,590
Այլ վարկեր իրավաբանական անձանց	5,244,474	3,796,494
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**45,669,814**	**41,547,280**
Անհատներին տրված վարկեր		
Անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր	15,626,296	11,894,266
Հիփոթեքային վարկեր	11,030,994	5,918,862
Ոսկու գրավով վարկեր	6,682,090	5,905,991
էքսպրես վարկեր առանց երաշխավորության	3,171,605	1,179,693
Վարկային գծեր	2,182,738	230,514
Դրամական միջոցների գրավով վարկեր	536,695	336,774
Աշխատավարձային ծրագրերի գծով վարկեր	369,759	707,000
էքսպրես վարկեր երաշխավորությամբ	303,553	887,010
Այլ վարկեր անհատներին	2,691,621	2,617,709
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**42,595,351**	**29,677,819**
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված համախառն վարկեր	**88,265,165**	**71,225,099**
Պարտքային կորստի պահուստ	(10,885,920)	(9,754,597)
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված զուտ վարկեր	**77,379,245**	**61,470,502**

(ա) Հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակը

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	31 դեկտեմբերի 2019թ.*			
	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Վարկեր խոշոր կազմակերպություններին				
- ոչ ժամկետանց	22,174,895	-	-	22,174,895
- ոչ ժամկետանց, պարտքային առումով արժեզրկված	-	-	14,313,799	14,313,799
Ընդամենը համախառն վարկեր խոշոր կազմակերպություններին	**22,174,895**	**-**	**14,313,799**	**36,488,694**
Պարտքային կորստի պահուստ	**(92,800)**	**-**	**(8,343,811)**	**(8,436,611)**
Ընդամենը զուտ վարկեր խոշոր կազմակերպություններին	**22,082,095**	**-**	**5,969,988**	**28,052,083**
Վարկեր առևտրային կազմակերպություններին				
- ոչ ժամկետանց	1,329,178	-	172,804	1,501,982
- 31-90 օր ժամկետանց	-	1,016	-	1,016
- 181-360 օր ժամկետանց	-	-	138,552	138,552
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	418,675	418,675
Ընդամենը համախառն վարկեր առևտրային կազմակերպություններին	**1,329,178**	**1,016**	**730,031**	**2,060,225**
Պարտքային կորստի պահուստ	**(18,250)**	**(898)**	**(295,924)**	**(315,072)**
Ընդամենը զուտ վարկեր առևտրային կազմակերպություններին	**1,310,928**	**118**	**434,107**	**1,745,153**
Վարկեր արդյունաբերական կազմակերպություններին				
- ոչ ժամկետանց	1,303,184	-	-	1,303,184
- 91-180 օր ժամկետանց	-	-	17,424	17,424
- 181-360 օր ժամկետանց	-	-	2,324	2,324
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	169,324	169,324
Ընդամենը համախառն վարկեր արդյունաբերական կազմակերպություններին	**1,303,184**	**-**	**189,072**	**1,492,256**
Պարտքային կորստի պահուստ	**(1,155)**	**-**	**(32,124)**	**(33,279)**
Ընդամենը զուտ վարկեր արդյունաբերական կազմակերպություններին	**1,302,029**	**-**	**156,948**	**1,458,977**
Դրամական միջոցների գրավով վարկեր				**-**
- ոչ ժամկետանց	384,165	-	-	384,165
Պարտքային կորստի պահուստ	**-**	**-**	**-**	-
Ընդամենը զուտ դրամական միջոցների գրավով վարկեր	**384,165**	**-**	**-**	**384,165**

	31 դեկտեմբերի 2019թ.*			
	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
	31 դեկտեմբերի 2019թ.*			
	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
Այլ վարկեր իրավաբանական անձանց				
- ոչ ժամկետանց	3,124,330	53,533	30,813	3,208,676
- մինչև 30 օր ժամկետանց	5,272	8,742	1,617	15,631
- 31-90 օր ժամկետանց	-	18,004	24,508	42,512
- 91-180 օր ժամկետանց	-	-	99,084	99,084
- 181-360 օր ժամկետանց	-	-	751,103	751,103
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	1,127,468	1,127,468
Ընդամենը համախառն այլ վարկեր իրավաբանական անձանց	**3,129,602**	**80,279**	**2,034,593**	**5,244,474**
Պարտքային կորստի պահուստ	**(35,275)**	**(3,158)**	**(1,154,852)**	**(1,193,285)**
Ընդամենը զուտ այլ վարկեր իրավաբանական անձանց	**3,094,327**	**77,121**	**879,741**	**4,051,189**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված համախառն վարկեր	**28,321,024**	**81,295**	**17,267,495**	**45,669,814**
Ընդամենը ակնկալվող պարտքային կարուստներ իրավաբանական անձանց տրված վարկերի համար	**(147,480)**	**(4,056)**	**(9,826,711)**	**(9,978,247)**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված զուտ վարկեր	**28,173,544**	**77,239**	**7,440,784**	**35,691,567**
Անհատներին տրված վարկեր				
Անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	13,392,523	17,547	343,115	13,753,185
- մինչև 30 օր ժամկետանց	357,315	5,360	55,570	418,245
- 31-90 օր ժամկետանց	-	91,069	94,221	185,290
- 91-180 օր ժամկետանց	-	-	146,680	146,680
- 181-360 օր ժամկետանց	-	-	34,461	34,461
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	1,088,435	1,088,435
Ընդամենը համախառն անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր	**13,749,838**	**113,976**	**1,762,482**	**15,626,296**
Պարտքային կորստի պահուստ	**(60,097)**	**(6,535)**	**(452,296)**	**(518,928)**
Ընդամենը զուտ անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր	**13,689,741**	**107,441**	**1,310,186**	**15,107,368**
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	10,857,309	-	83,253	10,940,562
- մինչև 30 օր ժամկետանց	18,384	-	67,941	86,325
- 31-90 օր ժամկետանց	-	4,107	-	4,107
Ընդամենը համախառն հիփոթեքային վարկեր	**10,875,693**	**4,107**	**151,194**	**11,030,994**
Պարտքային կորստի պահուստ	**(24,754)**	**(245)**	**(26,722)**	**(51,721)**
Ընդամենը զուտ հիփոթեքային	**10,850,939**	**3,862**	**124,472**	**10,979,273**

	31 դեկտեմբերի 2019թ.*			
	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
վարկեր				

	31 դեկտեմբերի 2019թ.*			
	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
Ոսկու գրավով վարկեր				
- ոչ ժամկետանց	6,532,127	830	4,646	6,537,603
- մինչև 30 օր ժամկետանց	128,264	2,890	865	132,019
- 31-90 օր ժամկետանց	-	8,534	1,174	9,708
- 91-180 օր ժամկետանց	-	-	1,585	1,585
- 181-360 օր ժամկետանց	-	-	1,175	1,175
Ընդամենը համախառն ոսկու գրավով վարկեր	**6,660,391**	**12,254**	**9,445**	**6,682,090**
Պարտքային կորստի պահուստ	**(16,088)**	**(1,329)**	**(3,755)**	**(21,172)**
Ընդամենը զուտ ոսկու գրավով վարկեր	**6,644,303**	**10,925**	**5,690**	**6,660,918**
Էքսպրես վարկեր առանց երաշխավորության				
- ոչ ժամկետանց	3,014,374	30,699	33,978	3,079,051
- մինչև 30 օր ժամկետանց	33,753	1,616	22,797	58,166
- 31-90 օր ժամկետանց	-	19,732	14,656	34,388
Ընդամենը համախառն էքսպրես վարկեր առանց երաշխավորության	**3,048,127**	**52,047**	**71,431**	**3,171,605**
Պարտքային կորստի պահուստ	**(108,344)**	**(10,509)**	**(46,685)**	**(165,538)**
Ընդամենը զուտ էքսպրես վարկեր առանց երաշխավորության	**2,939,783**	**41,538**	**24,746**	**3,006,067**
Դրամական միջոցների գրավով վարկեր				**-**
- ոչ ժամկետանց	301,519	-	-	**301,519**
- մինչև 30 օր ժամկետանց	2,034	-	-	**2,034**
Ընդամենը համախառն դրամական միջոցների գրավով վարկեր	**303,553**	-	-	**303,553**
Պարտքային կորստի պահուստ	-	-	-	**-**
Ընդամենը զուտ դրամական միջոցների գրավով վարկեր	**303,553**	-	-	**303,553**
Էքսպրես վարկեր երաշխավորությամբ				
- ոչ ժամկետանց	324,729	7,037	11,160	342,926
- մինչև 30 օր ժամկետանց	3,601	395	2,229	6,225
- 31-90 օր ժամկետանց	-	4,573	278	4,851
- 91-180 օր ժամկետանց	-	-	9,592	9,592
- 181-360 օր ժամկետանց	-	-	6,165	6,165
Ընդամենը համախառն էքսպրես վարկեր երաշխավորությամբ	**328,330**	**12,005**	**29,424**	**369,759**
Պարտքային կորստի պահուստ	**(4,905)**	**(1,655)**	**(14,411)**	**(20,971)**
Ընդամենը զուտ էքսպրես վարկեր երաշխավորությամբ	**323,425**	**10,350**	**15,013**	**348,788**
Աշխատավարձային ծրագրերի գծով վարկեր				
- ոչ ժամկետանց	516,945	1,589	1,281	519,815
- մինչև 30 օր ժամկետանց	3,964	90	28	4,082
- 31-90 օր ժամկետանց	-	4,155	566	4,721
- 91-180 օր ժամկետանց	-	-	5,400	5,400
- 181-360 օր ժամկետանց	-	-	2,677	2,677
Ընդամենը աշխատավարձային ծրագրերի գծով համախառն վարկեր	**520,909**	**5,834**	**9,952**	**536,695**

Պարտքային կորստի պահուստ	**(4,702)**	**(1,331)**	**(5,020)**	**(11,053)**
Ընդամենը աշխատավարձային ծրագրերի գծով զուտ վարկեր	**516,207**	**4,503**	**4,932**	**525,642**

	31 դեկտեմբերի 2019թ.*			
	1-ին փուլ հազ. դրամ	**2-րդ փուլ հազ. դրամ**	**3-րդ փուլ հազ. դրամ**	**Ընդամենը վարկեր հազ. դրամ**
Վարկային գծեր				
- ոչ ժամկետանց	2,130,376	-	5,780	2,136,156
- մինչև 30 օր ժամկետանց	16,584	169	-	16,753
- 31-90 օր ժամկետանց	-	11,314	-	11,314
- 181-360 օր ժամկետանց	-	-	16,247	16,247
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	2,268	2,268
Ընդամենը համախառն վարկային գծեր	**2,146,960**	**11,483**	**24,295**	**2,182,738**
Պարտքային կորստի պահուստ	**(15,039)**	**(4,719)**	**(12,040)**	**(31,798)**
Ընդամենը զուտ վարկային գծեր	**2,131,921**	**6,764**	**12,255**	**2,150,940**
Այլ վարկերի անհատներին				
- ոչ ժամկետանց	2,536,969	4,787	32,025	2,573,781
- մինչև 30 օր ժամկետանց	3,548	1,265	4,574	9,387
- 31-90 օր ժամկետանց	-	11,399	3,260	14,659
- 91-180 օր ժամկետանց	-	-	15,939	15,939
- 181-360 օր ժամկետանց	-	-	10,742	10,742
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	67,113	67,113
Ընդամենը համախառն այլ վարկերի անհատներին	**2,540,517**	**17,451**	**133,653**	**2,691,621**
Պարտքային կորստի պահուստ	**(29,020)**	**(3,761)**	**(53,711)**	**(86,492)**
Ընդամենը զուտ այլ վարկերի անհատներին	**2,511,497**	**13,690**	**79,942**	**2,605,129**
Ընդամենը անհատներին տրված համախառն վարկեր	**40,174,318**	**229,157**	**2,191,876**	**42,595,351**
Ընդամենը ակնկալվող պարտքային կարուստներ անհատներին տրված վարկերի համար	**(262,949)**	**(30,084)**	**(614,640)**	**(907,673)**
Ընդամենը անհատներին տրված զուտ վարկեր	**39,911,369**	**199,073**	**1,577,236**	**41,687,678**

* Աղյուսակում ներկայացված կորստի պահուստը ներառում է իրավաբանական անձանց և անհատների համար նախատեսված որոշ գործիքների, այդ թվում՝ վարկային քարտերի և օվերդրաֆտների հետ կապված փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները:

** Ղեկավարության գնահատմամբ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խոշոր կազմակերպություններին տրված առանց վարկանիշի համախառն վարկերի կազմում 10,263,491 հազար դրամ գումարով վարկերի վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Standard & Poor's» գործակալության վարկանշավորման համակարգի B+ վարկանիշին, 7,057,009 հազար դրամ գումարով վարկերի վարկանիշը մոտավորապես համապատասխանում է B վարկանիշին և 4,854,395 հազար դրամ գումարով վարկերը մեծամասամբ ապահովված են անշարժ գույքի գրավներով (2018թ-ին 6,582,563 հազար դրամ գումարով վարկերի վարկանիշը մոտավորապես համապատասխանում էր «Standard & Poor's» գործակալության վարկանշավորման համակարգի B+ վարկանիշին):

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	31 դեկտեմբերի 2018թ.			
	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Վարկեր խոշոր կազմակերպություններին				
- ոչ ժամկետանց	19,780,307	-	-	19,780,307
- ոչ ժամկետանց, պարտքային առումով արժեզրկված	-	-	13,607,727	13,607,727
Ընդամենը համախառն վարկեր խոշոր կազմակերպություններին	**19,780,307**	**-**	**13,607,727**	**33,388,034**
Պարտքային կորստի պահուստ	**(182,092)**	**-**	**(7,637,739)**	**(7,819,831)**
Ընդամենը զուտ վարկեր խոշոր կազմակերպություններին	**19,598,215**	**-**	**5,969,988**	**25,568,203**
Վարկեր առևտրային կազմակերպություններին				
- ոչ ժամկետանց	1,523,437	-	111,512	1,634,949
- մինչև 30 օր ժամկետանց	-	6,151	-	6,151
- 91-180 օր ժամկետանց	-	-	100,196	100,196
- 181-360 օր ժամկետանց	-	-	332,691	332,691
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	466,223	466,223
Ընդամենը համախառն վարկեր առևտրային կազմակերպություններին	**1,523,437**	**6,151**	**1,010,622**	**2,540,210**
Պարտքային կորստի պահուստ	**(13,979)**	**-**	**(367,043)**	**(381,022)**
Ընդամենը զուտ վարկեր առևտրային կազմակերպություններին	**1,509,458**	**6,151**	**643,579**	**2,159,188**
Վարկեր արդյունաբերական կազմակերպություններին	-	-	-	
- ոչ ժամկետանց	1,342,573	-	40,059	1,382,632
- մինչև 30 օր ժամկետանց	-	-	30,756	30,756
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	166,564	166,564
Ընդամենը համախառն վարկեր արդյունաբերական	**1,342,573**	**-**	**237,379**	**1,579,952**

	31 դեկտեմբերի 2018թ.			
	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
կազմակերպություններին				
Պարտքային կորստի պահուստ	(485)	-	(16,866)	(17,351)
Ընդամենը զուտ վարկեր արդյունաբերական կազմակերպություններին	1,342,088	-	220,513	1,562,601
Դրամական միջոցների գրավով վարկեր				
- ոչ ժամկետանց	242,590	-	-	242,590
Պարտքային կորստի պահուստ	-	-	-	-
Ընդամենը զուտ դրամական միջոցների գրավով վարկեր	242,590	-	-	242,590

	31 դեկտեմբերի 2018թ.			
	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
Այլ վարկեր իրավաբանական անձանց				
- ոչ ժամկետանց	1,679,731	79,022	802,323	2,561,076
- մինչև 30 օր ժամկետանց	10,388	29,036	42,598	82,022
- 31-90 օր ժամկետանց	-	35,097	-	35,097
- 91-180 օր ժամկետանց	-	-	15,714	15,714
- 181-360 օր ժամկետանց	-	-	7,569	7,569
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	1,095,016	1,095,016
Ընդամենը համախառն այլ վարկեր իրավաբանական անձանց	**1,690,119**	**143,155**	**1,963,220**	**3,796,494**
Պարտքային կորստի պահուստ	**(7,511)**	**(782)**	**(929,111)**	**(937,404)**
Ընդամենը համախառն այլ վարկեր իրավաբանական անձանց	**1,682,608**	**142,373**	**1,034,109**	**2,859,090**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված համախառն վարկեր	**24,579,026**	**149,306**	**16,818,948**	**41,547,280**
Ընդամենը ակնկալվող պարտքային կարուստներ իրավաբանական անձանց տրված վարկերի համար	**(204,067)**	**(782)**	**(8,950,759)**	**(9,155,608)**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված զուտ վարկեր	**24,374,959**	**148,524**	**7,868,189**	**32,391,672**
Անհատներին տրված վարկեր				
Անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	9,756,583	169,682	29,429	9,955,694
- մինչև 30 օր ժամկետանց	200,362	922	-	201,284
- 31-90 օր ժամկետանց	-	119,143	-	119,143
- 91-180 օր ժամկետանց	-	-	50,558	50,558
- 181-360 օր ժամկետանց	-	-	240,239	240,239
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	1,327,348	1,327,348
Ընդամենը համախառն անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր	**9,956,945**	**289,747**	**1,647,574**	**11,894,266**
Պարտքային կորստի պահուստ	**(70,883)**	**(13,161)**	**(217,631)**	**(301,675)**
Ընդամենը զուտ անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր	**9,886,062**	**276,586**	**1,429,943**	**11,592,591**
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	5,550,213	42,831	-	5,593,044
- մինչև 30 օր ժամկետանց	91,553	-	-	91,553
- 31-90 օր ժամկետանց	-	71,528	-	71,528
- 91-180 օր ժամկետանց	-	-	11,289	11,289
- 181-360 օր ժամկետանց	-	-	24,437	24,437
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	127,011	127,011
Ընդամենը համախառն հիփոթեքային վարկեր	**5,641,766**	**114,359**	**162,737**	**5,918,862**
Պարտքային կորստի պահուստ	**(17,463)**	**(4,058)**	**(7,014)**	**(28,535)**
Ընդամենը զուտ հիփոթեքային վարկեր	**5,624,303**	**110,301**	**155,723**	**5,890,327**

	31 դեկտեմբերի 2018թ.			
	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
Ոսկու գրավով վարկեր				
- ոչ ժամկետանց	5,587,245	43,047	15,382	5,645,674
- մինչև 30 օր ժամկետանց	127,630	206	108	127,944
- 31-90 օր ժամկետանց	-	84,693	-	84,693
- 91-180 օր ժամկետանց	-	-	23,246	23,246
- 181-360 օր ժամկետանց		-	14,486	14,486
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	9,948	9,948
Ընդամենը համախառն ոսկու գրավով վարկեր	**5,714,875**	**127,946**	**63,170**	**5,905,991**
Պարտքային կորստի պահուստ	**(14,629)**	**(5,491)**	**(9,854)**	**(29,974)**
Ընդամենը զուտ ոսկու գրավով վարկեր	**5,700,246**	**122,455**	**53,316**	**5,876,017**
Էքսպրես վարկեր առանց երաշխավորության				
- ոչ ժամկետանց	1,090,903	29,545	-	1,120,448
- մինչև 30 օր ժամկետանց	31,034	-	-	31,034
- 31-90 օր ժամկետանց	-	16,017	-	16,017
- 91-180 օր ժամկետանց	-	-	6,272	6,272
- 181-360 օր ժամկետանց	-	-	5,708	5,708
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	214	214
Ընդամենը համախառն էքսպրես վարկեր առանց երաշխավորության	**1,121,937**	**45,562**	**12,194**	**1,179,693**
Պարտքային կորստի պահուստ	**(38,501)**	**(13,916)**	**(7,901)**	**(60,318)**
Ընդամենը զուտ էքսպրես վարկեր առանց երաշխավորության	**1,083,436**	**31,646**	**4,293**	**1,119,375**
Դրամական միջոցների գրավով վարկեր				
- ոչ ժամկետանց	311,426	25,348	-	336,774
Ընդամենը համախառն դրամական միջոցների գրավով վարկեր	**311,426**	**25,348**	-	**336,774**
Պարտքային կորստի պահուստ	**-**	**-**	-	**-**
Ընդամենը զուտ դրամական միջոցների գրավով վարկեր	**311,426**	**25,348**	-	**336,774**
Էքսպրես վարկեր երաշխավորությամբ				
- ոչ ժամկետանց	804,288	9,336	-	813,624
- մինչև 30 օր ժամկետանց	15,023	405	-	15,428
- 31-90 օր ժամկետանց	-	6,337	-	6,337
- 91-180 օր ժամկետանց	-	-	4,781	4,781
- 181-360 օր ժամկետանց	-	-	7,702	7,702
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	39,138	39138
Ընդամենը համախառն էքսպրես վարկեր երաշխավորությամբ	**819,311**	**16,078**	**51,621**	**887,010**
Պարտքային կորստի պահուստ	**(14,838)**	**(3,077)**	**(24,712)**	**(42,627)**
Ընդամենը զուտ էքսպրես վարկեր երաշխավորությամբ	**804,473**	**13,001**	**26,909**	**844,383**

	31 դեկտեմբերի 2018թ.			
	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
Աշխատավարձային ծրագրերի գծով վարկեր				
- ոչ ժամկետանց	663,198	1,111	4,146	668,455
- մինչև 30 օր ժամկետանց	13,763	-	-	13,763
- 31-90 օր ժամկետանց	-	10,012	-	10,012
- 91-180 օր ժամկետանց	-	-	2,002	2,002
- 181-360 օր ժամկետանց	-	-	12,768	12,768
Ընդամենը աշխատավարձային ծրագրերի գծով համախառն վարկեր	**676,961**	**11,123**	**18,916**	**707,000**
Պարտքային կորստի պահուստ	**(6,313)**	**(353)**	**(7,449)**	**(14,115)**
Ընդամենը աշխատավարձային ծրագրերի գծով զուտ վարկեր	**670,648**	**10,770**	**11,467**	**692,885**
Վարկային գծեր				
- ոչ ժամկետանց	222,623	-	-	222,623
- մինչև 30 օր ժամկետանց	3,283	-	-	3,283
- 31-90 օր ժամկետանց	-	1,468	-	1,468
- 91-180 օր ժամկետանց	-	-	3,130	3,130
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	10	10
Ընդամենը համախառն վարկային գծեր	**225,906**	**1,468**	**3,140**	**230,514**
Պարտքային կորստի պահուստ	**(1,857)**	**(981)**	**(1,451)**	**(4,289)**
Ընդամենը զուտ վարկային գծեր	**224,049**	**487**	**1,689**	**226,225**
Այլ վարկերի անհատներին				
- ոչ ժամկետանց	2,240,729	21,686	5,557	2,267,972
- մինչև 30 օր ժամկետանց	39,811	4,963	-	44,774
- 31-90 օր ժամկետանց	-	18,219	-	18,219
- 91-180 օր ժամկետանց	-	-	3,475	3,475
- 181-360 օր ժամկետանց	-	-	200,853	200,853
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	82,416	82,416
Ընդամենը համախառն այլ վարկերի անհատներին	**2,280,540**	**44,868**	**292,301**	**2,617,709**
Պարտքային կորստի պահուստ	**(49,775)**	**(7,080)**	**(60,601)**	**(117,456)**
Ընդամենը զուտ այլ վարկերի անհատներին	**2,230,765**	**37,788**	**231,700**	**2,500,253**
Ընդամենը անհատներին տրված համախառն վարկեր	**26,749,667**	**676,499**	**2,251,653**	**29,677,819**
Ընդամենը ակնկալվող պարտքային կարուստներ անհատներին տրված վարկերի համար	**(214,259)**	**(48,117)**	**(336,613)**	**(598,989)**
Ընդամենը անհատներին տրված զուտ վարկեր	**26,535,408**	**628,382**	**1,915,040**	**29,078,830**

(բ) Պարտքային կորստի պահուստի գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրություններ և դատողություններ

Պարտքային կորստի պահուստի գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրությունները և դատողությունները ներկայացված են Ծանոթագրություն 25 (բ) կետում:

(գ) Գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների վերլուծություն

(i) Իրավաբանական անձանց տրված վարկեր

Իրավաբանական անձանց տրված վարկերը ենթակա են պարտքային առումով գնահատման և արժեզրկման ստուգման անհատական հիմունքով: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի ընդհանուր վճարունակությունը վերջինիս տրամադրված վարկի պարտքայի որակի կարևոր ցուցանիշ է: Այնուամենայնիվ, գրավն ապահովում է լրացուցիչ ապահովվածություն, և Բանկը որպես կանոն գրավ է պահանջում իրավաբանական անձանցից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է տեղեկատվություն իրավաբանական անձանց տրված վարկերի գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների (առանց արժեզրկման) վերաբերյալ՝ ըստ գրավի տեսակների:

31 դեկտեմբերի 2019թ.

հազ. դրամ	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	Գրավի իրական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար	Գրավի իրական արժեքը վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար
Պարտքային առումով չարժեզրկված վարկեր			
Անշարժ գույք	8,565,356	-	8,565,356
Կորպորատիվ երաշխավորություններ*	9,404,397	-	9,404,397
Կորպորատիվ բաժնետոմսեր	4,901,139	-	4,901,139
Բարձր իրացվելի ակտիվներ**	429,039	429,039	-
Այլ գրավ	1,150,375	-	1,150,375
Առանց գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների	3,800,477	-	3,800,477
Ընդամենը պարտքային առումով չարժեզրկված վարկեր	**28,250,783**	**429,039**	**27,821,744**
Պարտքային առումով արժեզրկված վարկեր			
Անշարժ գույք***	5,234,164	5,234,164	-
Բարձր իրացվելի ակտիվներ**	2,206,620	2,206,620	-

Ընդամենը պարտքային առումով արժեզրկված վարկեր	**7,440,784**	**7,440,784**	**-**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**35,691,567**	**7,869,823**	**27,821,744**

31 դեկտեմբերի 2018թ.

հզ. դրամ	**Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք**	**Գրավի իրական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար**	**Գրավի իրական արժեքը վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար**
Պարտքային առումով չարժեզրկված վարկեր			
Բանկային հաշվի շրջանառություն	4,338,179	4,338,179	-
Անշարժ գույք	4,778,882	-	4,778,882
Կորպորատիվ երաշխավորություններ*	6,795,629	-	6,795,629
Կորպորատիվ բաժնետոմսեր	3,852,334	-	3,852,334
Բարձր իրացվելի ակտիվներ**	197,453	197,453	-
Այլ գրավ	861,369		861,369
Առանց գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների	3,699,637	-	3,699,637
Ընդամենը պարտքային առումով չարժեզրկված վարկեր	**24,523,483**	**4,535,632**	**19,987,851**
Պարտքային առումով արժեզրկված վարկեր			
Անշարժ գույք***	5,642,939	5,642,939	-
Բարձր իրացվելի ակտիվներ**	2,225,250	2,225,250	-
Ընդամենը պարտքային առումով արժեզրկված վարկեր	**7,868,189**	**7,868,189**	**-**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**32,391,672**	**12,403,821**	**19,987,851**

* Կորպորատիվ երաշխավորությունները տրամադրել են կայուն ֆինանսական արդյունքներ ունեցող ընկերություններ, և ըստ ղեկավարության ակնկալիքների, եթե համապատասխան վարկերի գծով տեղի ունենա պարտազանցում, երաշխավորողները կկարողանան ամբողջությամբ մարել վարկը:

** Բարձր իրացվելի ակտիվները ներառում են բանկերի և հաճախորդների ավանդները:

*** Անշարժ գույքի գումարում ներառված 2,839,641 հազար դրամ (2018թ-ին՝ 3,009,351 հազար դրամ) գումարն ուղղակիորեն գրավադրված չէ Բանկում: Այնուամենայնիվ, այն ծառայում է որպես ապահովություն երկու վարկառուների տրամադրված վարկերի դիմաց Բանկում գրավադրված իրավունքի համար:

Վերը ներկայացված աղյուսակը բացառում է լրացուցիչ գրավի անհրաժեշտությունը:

Բանկն ունի վարկեր, որոնց համար գրավի իրական արժեքը գնահատվել է վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ և չի վերանայվել՝ հետագա փոփոխություններն արտացոլելու համար, ինչպես նաև վարկեր, որոնց գրավի իրական արժեքը չի որոշվել: Որոշ վարկերի համար գրավի իրական արժեքը վերանայվել է հաշվետու ամսաթվի դրությամբ: Գրավի գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է կախված այն փաստից, թե երբ է այն գնահատվել, եթե նման գնահատում իրականացվել է:

Մի քանի տեսակի գրավներով ապահովված վարկերի համար բացահայտվում է այն գրավը, որն առավել տեղին է արժեզրկման գնահատման համար: Անհատներից, օրինակ՝ ՓՄՁ փոխառուների բաժնետերերից ստացված երաշխավորությունները չեն դիտարկվում արժեզրկման գնահատման նպատակների համար: Այդ իսկ պատճառով, նման վարկերը և մասնակիորեն ապահովված վարկերի չապահովված մասերը ներկայացվում են որպես առանց գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների վարկեր:

Ոչ ժամկետանց և ոչ արժեզրկված վարկերի փոխհատուցելիությունը ավելի շատ կախված է փոխառուների վճարունակությունից, քան՝ գրավի արժեքից, և Բանկի համար պարտադիր չէ վերանայել գրավի արժեքի գնահատումը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Պարտքային առումով արժեզրկված արավաբանական անձանց տրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստներն ամբողջությամբ որոշվել են հիմք ընդունելով վերը բերվող աղյուսակում ներկայացված գրավից ակնկալվող հատուցումները:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցների գրավով վարկերի մնացորդը, որոնց համար արժեզրկման գծով պահուստ չէր ձևավորվել գրավի առկայության պատճառով, կազմում էր 813,551 հազար դրամ (2018թ-ին՝ 501,006 հազար դրամ):

(ii) Անհատներին տրված վարկեր

Սպառողական վարկերի համար ապահովություն է ծառայում հիմնականում անշարժ գույքը: Բանկի քաղաքականության համաձայն՝ սպառողական վարկերը տրամադրվում են առավելագույնը 40% վարկ/արժեք հարաբերակցությամբ վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ:

Երաշխավորությամբ և առանց երաշխավորության էքսպրես վարկերը հիմնականում գրավով ապահովված չեն:

Ոսկու գրավով վարկերի համար ապահովություն են ծառայում ոսկյա զարդերը: Բանկի քաղաքականության համաձայն՝ ոսկու գրավով վարկերը տրամադրվում են առավելագույնը 100% վարկ/արժեք հարաբերակցությամբ՝ վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ:

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Բանկի քաղաքականության համաձայն՝ հիփոթեքային վարկերը տրամադրվում են առավելագույնը 80% վարկ/արժեք հարաբերակցությամբ՝ վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ:

Դրամական միջոցների գրավով վարկերի և վարկային գծերի մի մասի դիմաց գրավադրված են բարձր իրացվելի ակտիվները, որոնք ներառում են ավանդները, Բանկի կողմից թողարկված ձեռք բերված պարտքային արժեթղթերը և ընթացիկ հաշիվները:

Աշխատավարձային ծրագրերի գծով վարկերի և վարկային գծերի մի մասը գրավով ապահովված չէ:

(iii) Առգրավված գրավ

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել 471,817 հազար դրամ (2018թ-ին՝ 552,491հազար դրամ) զուտ հաշվեկշռային արժեքով ակտիվներ՝ հաճախորդներին տրված վարկերի դիմաց գրավադրված միջոցների առգրավման միջոցով: 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առգրավված գրավը ներառում է հիմնականում անշարժ գույքը:

	2019թ. Հաշվեկշռային արժեք հազ. դրամ	2018թ. Հաշվեկշռային արժեք հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	1,087,443	749,383
Ավելացումներ	471,817	552,491
Վաճառք	(83,253)	(214,431)
Մանցորդը առ 31 դեկտեմբերի	**1,476,007**	**1,087,443**

Առգրավվման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարված վարկի հաշվեկշռային արժեքով: Ագրավումից հետո առգրավված ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Արժեզրկումը գնահատվում է շուկայական մեթոդով: Շուկայական մեթոդը հիմնված է նմանատիպ ակտիվների վերջերս տեղի ունեցած վաճառքների արդյունքների համեմատական վերլուծության կամ նմանատիպ ակտիվների վաճառքների հայտարարված գների վրա, կիրառելով 10%-ից 40% զեղչ վաճառքի հայտարարված գների նկատմամբ՝ կախված ակտիվի բնույթից և գտնվելու վայրից:

Բանկի քաղաքականության համաձայն՝ նման ակտիվները պետք է վաճառվեն հնարավորինս սեղմ ժամկետներում:

(դ) Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են տնտեսության հետևյալ ճյուղերում գործունեություն իրականացնող հաճախորդներին.

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Առևտուր և ֆինանսներ	26,656,176	21,795,817
Էներգետիկայի ոլորտ	6,523,359	8,697,421
Արդյունաբերություն	3,755,289	1,878,999
Հանգստի կազմակերպման ոլորտ	1,706,478	645,957
Տրանսպորտ և կապ	937,389	647,589
Շինարարություն	895,071	613,725
Հանքարդյունաբերություն	620,887	53,899
Գյուղատնտեսություն, անտառապահություն և փայտամշակում	38,486	19,935
Սպասարկման ոլորտ	38,395	132,800
Այլ	4,498,284	7,061,138
Անհատներին տրված վարկեր	42,595,351	29,677,819
	88,265,165	**71,225,099**
Պարտքային կորստի պահուստ	(10,885,920)	(9,754,597)
	77,379,245	**61,470,502**

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 83,410,769 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2018թ-ին՝ 66,319,916 հազար դրամ) տրամադրվել են Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող հաճախորդներին:

(ե) Գրավադրված ակտիվներ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2,417,771 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2018թ-ին՝ 2,503,920 հազար դրամ) ծառայում են որպես գրավ վարկային կազմակերպություններից ստացված վարկերի և ՀՀ կառավարությունից ստացված փոխառությունների համար (տես Ծանոթագրություն 19):

(զ) Պարտքային ռիսկին ենթարկվածություն

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի հինգ փոխառու կամ կապակցված փոխառուների խմբեր (2018թ-ին՝ հինգ), որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկերի ընդհանուր գումարը կազմում է 29,861,852 հազար դրամ (2018թ-ին՝ 29,776,070 հազար դրամ):

(է) Վարկերի մարման ժամկետներ

Վարկային պորտֆելը կազմող վարկերի մարման ժամկետների վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 25-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև պայմանագրով նախատեսված վարկերի մարման ժամկետը մնացած ժամանակահատվածը:

45 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Շենքեր	Վարձակալված գույքի բարելավում	Համակարգիչներ և կապի սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխադրա-միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք/ վերագնահատված արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	4,278,337	266,517	1,499,699	1,051,131	81,871	658,310	7,835,865
Ավելացումներ	44,898	236,158	206,782	265,290	40,512	525,873	1,319,513
Օտարումներ/դուրսգրումներ	-	(25,315)	(8,174)	(44,534)	-	(132,125)	(210,148)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**4,323,235**	**477,360**	**1,698,307**	**1,271,887**	**122,383**	**1,052,058**	**8,945,230**
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	822,383	56,579	993,015	484,359	22,445	395,240	2,774,021
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	83,741	16,129	171,746	130,162	12,013	139,369	553,160
Օտարումներ/դուրսգրումներ	-	(25,148)	(7,026)	(35,921)	-	(124,601)	(192,696)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**906,124**	**47,560**	**1,157,735**	**578,600**	**34,458**	**410,008**	**3,134,485**
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**3,417,111**	**429,800**	**540,572**	**693,287**	**87,925**	**642,050**	**5,810,745**

Սկզբնական արժեք/ վերագնահատված արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	4,396,920	208,321	1,375,132	864,006	101,781	564,637	7,510,797
Ավելացումներ	68,894	58,196	96,980	294,496	26,455	105,457	650,478
Օտարումներ/դուրսգրումներ	(187,477)	-	(8,016)	(71,768)	(46,365)	(11,784)	(325,410)
Վերադասակարգում	-	-	35,603	(35,603)	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	**4,278,337**	**266,517**	**1,499,699**	**1,051,131**	**81,871**	**658,310**	**7,835,865**
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	787,947	45,612	831,003	456,714	55,387	299,856	2,476,519
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	85,336	10,967	169,665	90,289	6,965	106,932	470,154
Օտարումներ/դուրսգրումներ	(50,900)	-	(7,927)	(62,370)	(39,907)	(11,548)	(172,652)
Վերադասակարգում	-	-	274	(274)	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	**822,383**	**56,579**	**993,015**	**484,359**	**22,445**	**395,240**	**2,774,021**
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2018թ.	**3,455,954**	**209,938**	**506,684**	**566,772**	**59,426**	**263,070**	**5,061,844**

(ա) Վերագնահատված ակտիվներ

Ղեկավարությունն իրականացրել է անշարժ գույքի գների գնահատում: Հիմք ընդունելով ժամանակաշրջանի ընթացքում անշարժ գույքի գների փոփոխությունների վերլուծությունը՝ ղեկավարությունը գտնում է, որ շենքերի իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է դրանց հաշվեկշռային արժեքին 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Շենքերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին, քանի որ կիրառվող գնահատման մեթոդի դիտելի ելակետային տվյալների գծով կատարվել են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ (գործակիցներ):

Եթե շենքերի վերագնահատում չիրականացվեր, ապա 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շենքերի հաշվեկշռային արժեքը կկազմեր 3,281,252 հազար դրամ (2018թ-ին՝ 3,368,903 հազար դրամ):

46 Վարձակալություն

Բանկը վարձակալում է ակտիվներ, մասնավորապես, հաճախորդների սպասարկման կենտրոնի տարածքներ սովորաբար 5-10 տարի ժամկետով: Ստորև ներկայացված է այն վարձակալությունների մասին տեղեկատվությունը, որոնց շրջանակում Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ:

(ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ

	2019թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի	859,117
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ավելացումներ	967,759
Ժամանակաշրջանի մաշվածության գումար	(220,572)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**1,606,304**

(բ) Վարձակալության գծով պարտավորություն

	2019թ. հազ. դրամ
Մինչև մեկ տարի ժամկետով	299,993
Մեկից երկու տարի ժամկետով	265,049
Երկուսից հինգ տարի ժամկետով	736,171
Ավելի քան հինգ տարի ժամկետով	872,190
Ընդամենը չզեղչված վարձակալության գծով վճարվելիք գումար	**2,173,403**
Չվաստակած ֆինանսական ծախսեր	(534,983)
Վարձակալության գծով պարտավորություն	**1,638,420**

(գ) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

	2019թ. հազ. դրամ
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածություն	220,572
Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ	93,781
Կարճաժամկետ վարձակալություններին վերաբերող ծախսեր	43,907

(գ) Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ

	2019թ. հազ. դրամ
Ընդամենը դրամական միջոցների արտահոսք վարձակալությունների գծով	
Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ	282,238

47 Այլ ակտիվներ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Այլ ստացվելիք գումարներ	848,824	250,940
Պարտքային կորստի պահուստ	(3,201)	(660)
Ընդամենը զուտ այլ ֆինանսական ակտիվներ	**845,623**	**250,280**
Կանխավճարներ	1,418,083	767,052
Նյութեր և պաշարներ	88,026	75,277
Այլ	55,738	10,882
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	**1,561,847**	**853,211**
Ընդամենը այլ ակտիվներ	**2,407,470**	**1,103,491**

48 Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Ժամկետային ավանդներ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	9,240,996	1,914,529
Գրավով չապահովված վարկեր բանկերից	4,672,177	-
Գրավով ապահովված վարկեր այլ ֆինանսական կազմակերպություններից	2,418,041	2,399,142
Լորո հաշիվներ	3,798,528	1,624,109
	20,129,742	**5,937,780**

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2,417,771 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2018թ-ին՝ 1,918,263 հազար դրամ) ծառայում են որպես գրավ վարկային կազմակերպություններից ստացված գրավով ապահովված վարկերի համար (Ծանոթագրություն 15):

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մեկ բանկի և այլ ֆինանսական կազմակերպության (2018թ-ին նման բանկ և ֆինանսական կազմակերպություն չկար) Բանկում տեղաբաշխված միջոցների մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 5,452,875 հազար դրամ:

49 Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ տեղական բանկերին	11,535,658	2,769,206
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ ՀՀ ԲԿ-ին	4,001,223	4,002,696
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ տեղական ֆինանսական կազմակերպություններին	755,814	-
	16,292,695	**6,771,902**

Հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված են այլ համապատիկ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող 2,260,311 հազար դրամ գումարով և ամորտիզացված արժեքով չափվող 11,829,493 հազար դրամ գումարով Բանկի սեփական արժեթղթերը (2018թ-ին՝ ամորտիզացված արժեքով չափվող 5,587,003 հազար դրամ գումարով ներդրումային արժեթղթերը):

50 Թողարկված պարտքային արժեթղթեր

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Թողարկված պարտքային արժեթղթեր	**6,700,803**	**10,823,040**

2019թ. ընթացքում Բանկը թողարկել է 10,000,000 ԱՄՆ դոլար և 250,000 հազար դրամ անվանական արժեքով պարտատոմսեր (2018թ-ին՝ 5,000,000 ԱՄՆ դոլար): 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի արժեթղթերի ֆոնդային բորսայում տեղաբաշխված արժեթղթերի անվանական արժեքը կազմում է 13,334,300 ԱՄՆ դոլար և 250,000 հազար դրամ:

2019թ. ընթացքում Հայաստանի արժեթղթերի ֆոնդային բորսայում ցուցակված Բանկի կողմից 2017թ-ին թողարկված15,000,000 ԱՄՆ դոլար և 1,000,000 հազար դրամ անվանական արժեքով պարտատոմսերը մարվել են:

(ա) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

հազ. դրամ	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	10,823,040	10,815,059
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Մուտքեր թողարկված պարտքային արժեթղթերից	4,252,464	2,418,750
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	(8,207,150)	(2,422,500)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**(3,954,686)**	**(3,750)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	**(14,659)**	**(448)**
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	470,604	712,633
Վճարված տոկոսներ	(623,496)	(700,454)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	**6,700,803**	**10,823,040**

51 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
- Անհատներ	9,656,926	5,880,267
- Իրավաբանական անձինք	5,474,322	4,820,251
Ժամկետային ավանդներ		
- Անհատներ	41,881,392	42,687,970
- Իրավաբանական անձինք	1,806,480	2,931,868
	58,819,120	**56,320,356**

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկում պահվող հաճախորդների ավանդների 4,477,966 հազար դրամ գումարով մնացորդները (2018թ-ին՝ 3,655,108 հազար դրամ) ծառայում են որպես գրավ հաճախորդներին տրված վարկերի և Բանկի կողմից տրամադրված երաշխավարությունների համար:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի այնպիսի հաճախորդ (2018թ-ին նման հաճախորդ չկար), որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

52 Այլ պարտավորություններ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Այլ ֆինանսական պարտավորություններ	390,006	269,467
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**390,006**	**269,467**
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	672,480	664,205
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	329,554	288,661
Վճարվելիք հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	138,447	115,762
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**1,140,481**	**1,068,628**
Ընդամենը այլ պարտավորություններ	**1,530,487**	**1,338,095**

53 Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

(ա) Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 679,437 սովորական բաժնետոմսից (2018թ-ին՝ 679,437): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 50,000 դրամ (2018թ-ին՝ 50,000 դրամ):

2019թ. ընթացքում սովորական բաժնետոմսեր չեն թողարկվել (2018թ-ին նույնպես չէին թղարկվել): Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Պահուստների բնույթը և նպատակը

Շենքերի վերագնահատումից ած

Շենքերի վերագնահատումից ածը ներառում է շենքերի վերագնահատված կուտակային դրական արժեքը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

(գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով:

2019թ-ին և 2018թ-ին շահաբաժիններ չեն հայտարարվել:

54 Ռիսկերի կառավարում

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի բանկային գործունեության համար և կազմում է Բանկի գործառնությունների կենսական տարրը: Ֆինանսական ռիսկը, շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, գործառնական և իրավական ռիսկերը և համբավը վտանգող ռիսկն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող արտադրանքն ու ծառայությունների և ընդունված լավագույն պրակտիկան արտացոլելու նպատակով: Բանկը մշակել է նշանակալի ռիսկերի և կապիտալի մասին հաշվետվությունների ներկայացման համակարգ:

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար:

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Բանկի գործունեության իրականացումն ապահովելու համար: Ռիսկերի կառավարման վարչության ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և սահմանված պահանջների հետ համապատասխանության ապահովման, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն Վարչության նախագահին և անուղղակիորեն՝ Բանկի Խորհրդին: Ռիսկերի կառավարման վարչությունը չի ենթարկվում և հաշվետու չէ համապատասխան ռիսկերն ընդունող բաժիններին:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի միջոցով և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի

արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության տեսակից և չափից:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի ներսում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը: Բացի պարտքային և շուկայական ռիսկերի ստանդարտ վերլուծություն իրականացնելուց, Ռիսկերի կառավարման վարչությունը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական բաժինների հետ՝ նրանց գործունեության համապատասխան ոլորտների հետ կապված մասնագիտական դատողություններ ստանալու համար:

Բանկի ներքին փաստաթղթերի համաձայն՝ Ռիսկերի կառավարման վարչությունը և ներքին աուդիտի ծառայությունը հաճախ պատրաստում են Բանկի նշանակալի ռիսկերի կառավարմանն անդրադարձող հաշվետվություններ: Հաշվետվությունները ներառում են դիտարկումներ Բանկի ընթացակարգերի և մեթոդաբանության արդյունավետության գնահատման վերաբերյալ և առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ:

(բ) Ֆինանսական ռիսկերի ուսումնասիրություն

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ֆինանսական ռիսկերին Բանկի ենթարկվածության վերաբերյալ:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Բանկում գործում են պարտքային ռիսկին ենթարկվածությունը կառավարող քաղաքականություն և ընթացակարգեր (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար), ներառյալ պորտֆելի գծով ռիսկի կենտրոնացումը սահմանափակելու վերաբերյալ ուղեցույցները և Վարկային կոմիտեի ստեղծումը՝ պարտքային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- փոխառուների (իրավաբանական անձանց և անհատների) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,

– վարկերի և այլ գործիքների, որոնց գծով Բանկը ենթարկված է պարտքային ռիսկին, շարունակական հսկողության ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող համապատասխան մենեջերների կողմից և փոխանցվում են Կորպորատիվ վարկավորման վարչություն, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման վարչության կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկի դիմումը՝ Կորպորատիվ վարկավորման վարչության և Ռիսկերի կառավարման վարչության կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Բանկի իրավաբանական, հաշվապահական հաշվառման և հարկային բաժինների կողմից՝ կախված առանձին ռիսկերից:

Բանկը շարունակաբար վերահսկում է պարտքային ռիսկին ենթարկվող առանձին գործիքների կատարողականը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և փոխառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Անհատների վարկային դիմումներն ուսումնասիրվում են Անհատների վարկավորման վարչության կողմից՝ կիրառելով Ռիսկերի կառավարման վարչության հետ համատեղ մշակած գնահատման մոդելները և դիմումների տվյալների ստուգման ընթացակարգերը:

Բացի առանձին վարկերի վերլուծությունից, Ռիսկերի կառավարման վարչությունը վարկային պորտֆելը գնահատում է պարտքային ռիսկի կենտրոնացվածության և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Պարտքային ռիսկ – ակնկալվող պարտքային կորստների գումարները

Արժեզրկման գնահատման համար օգտագործվող ելակետային տվյալներ, ենթադրություններ և մեթոդներ

Տես հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Ծանոթագրություն 3 (ե) (vi) կետում:

Պարտքային ռիսկի նշանակալի աճ

Որոշելու համար, թե արդյոք ֆինանսական գործիքի գծով պարտազանցման ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, Բանկը դիտարկում է ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ինչպես նաև Բանկի անցյալ ժամանակաշրջանների փորձի, վարկային որակի փորձագետների գնահատման և ապագայամետ տեղեկատվության վրա հիմնված վերլուծությունը:

Գնահատման նպատակն է պարզել, թե արդյոք տեղի է ունցել պարտքային ռիսկի նշանակալի աճ՝ համեմատելով հետևյալ ցուցանիշները.

- պարտազանցման հավանականությունն ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում՝ հաշվետու ամսաթվի դրությամբ,
- պարտազանցման հավանականությունն ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում ժամանակի տվյալ պահի համար, որը գնահատվել է պարտքային ռիսկին ենթարկվող գործիքի սկզբնական ճանաչման պահին (ճշգրտված վաղաժամ մարումների ակնկալիքների փոփոխությունների մասով՝ կիրառելի լինելու դեպքում):

Բանկն օգտագործում է երեք չափանիշ, որոշելու համար, թե արդյոք տեղի է ունցել պարտքային ռիսկի նշանակալի աճ.

- քանակական թեստ՝ հիմք ընդունելով պարտազանցման հավանականության փոփոխությունները,
- որակական ցուցանիշներ և
- ժամկետանցության 30-օրյա սահմանափակիչ:

Բանկի փոխառուների ենթարկվածությունը պարտքային ռիսկին կանոնավոր կերպով հսկվում է, որի արդյունքում կարող է ի հայտ գալ պարտքային ռիսկի նշանակալի աճի հայտանիշ: Հսկողության համար որպես կանոն օգտագործվում է հետևյալ տեղեկատվությունը.

Ենթարկվածությունը պարտքային ռիսկին (իրավաբանական անձիք)	**Ենթարկվածությունը պարտքային ռիսկին (իրավաբանական անձիք և անհատներ)**

– Հաճախորդի փաստաթղթերի, օրինակ՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների, կառավարչական հաշվետվությունների, բյուջեների և կանխատեսումների պարբերական ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը: Ցուցանիշները, որոնց հատուկ ուշադրություն է դարձվում, ներառում են՝ համախառն շահույթը, ֆինանսական լծակավորման ցուցանիշը, պարտքի սպասարկման գործակիցը, համապատասխանությունը կովենանտներին, կառավարման որակը, վերադաս ղեկավար անձնակազմի փոփոխությունները:	– Վճարումների մասին տեղեկատվությունը, ներառյալ ժամկետանցության կարգավիճակի, մարումների փոփոխականության մասին տեղեկատվությունը:
– Վարկանիշային գործակալությունների, մամուլի հոդվածների տվյալները, արտաքին վարկանիշների փոփոխությունների մասին տեղեկատվությունը	– Տրամադրված սահմանաչափի օգտագործումը – Վարկային պայմանագրի պայմանների վերանայման դիմումը և դիմումի բավարարումը
– Պարտատոմսերի գնանշվծշ գները և պարտքի պարտազանցման սվոփերի գները փոխառուի համար՝ առկայության դեպքում	– Առևտրային, ֆինանսական և տնտեսական պայմանների առկա և կանխատեսվող փոփոխությունները
– Փոխառուի քաղաքական, օրենսդրական և տեխնոլոգիական միջավայրի կամ նրա գործունեության փաստացի և ակնկալվող նշանակալի փոփոխությունները	

Պարտազանցության հավանականության ժամկետային կառուցվածքի ստեղծում

Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ օգտագործվում են որպես հիմնական ելակետային տվյալներ իրավաբանական անձանց համար պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների գծով պարտազանցման հավանականության ժամկետային կառուցվածքը ստեղծելիս: Բանկը հավաքում է պարտքային ռիսկին ենթարկվող իր ֆինանսական գործիքների կատարողականի և պարտազանցման վերաբերյալ տեղեկատվություն, որը վերլուծվում է ըստ ծառայության և փոխառուի տեսակի, ինչպես նաև ըստ պարտքային ռիսկի ներքին վարկանշավորման մակարդակի: Որոշ պորտֆելների համար օգտագործվում է նաև արտաքին վարկանիշային գործակալություններից ձեռք բերված տեղեկատվությունը: Բանկը սահմանում է պարտազանցման հավանականության առավելագույն չափը, որը հավասար է այն երկրի պարտազանցման հավանականության ցուցանիշին, որտեղ իր գործունեությունն է իրականացնում փոխառուն:

Ժամկետանց օրերն օգտագործվում են որպես հիմնական ելակետային տվյալներ անհատների համար պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների գծով պարտազանցման հավանականության ժամկետային կառուցվածքը ստեղծելիս

միգրացիայի մատրիցների Մարկովի մոդելում: Միգրացիայի մատրիցները կառուցվում են նախորդ 36 ամիսների տվյալների հիման վրա:

Պարտքային ռիսկի նշանակալի աճի որոշում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Պարտքային ռիսկի աճի նշանակալի լինելը որոշելիս դիտարկվում են ֆինանսական գործիքի և փոխառուի բնութագրերը և աշխարհագրական տարածաշրջանը: Նշանակալիության չափանիշները տարբեր են փոխատվության տարբեր տեսակների, մասնավորապես, իրավաբանական անձանց և անհատների տրվող փոխատվությունների համար:

Սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի աճը կարող է համարվել նշանակալի նաև այն դեպքերում, երբ դրա այդ մասին են վկայում Բանկի պարտքային ռիսկի կառավարման գործընթացների հետ կապված որակական ցուցանիշները, որոնք այլ պարագայում կարող են ժամանակին ամբողջական առումով չարտացոլվել քանակական վերլուծության շրջանակում: Սա վերաբերում է պարտքային ռիսկին ենթարկվող այն գործիքներին, որոնք բավարարում են բարձրացված ռիսկի որոշ չափանիշներին, որոնցից է հատուկ ուշադրության ցանկում ներառվելը: Նման որակական գործոնները հիմնված են փորձագետների դատողությունների և անցյալ ժամանակաշրջանների համապատասխան փորձի վրա:

Բանկը պարտքային ռիսկի նշանակալի աճի մասին վկայող սահմանափակիչ է համարում ակտիվի ավելի քան 30 օր ժամկետանցությունը հաճախորդներին տրված վարկերի համար և 1 օր ժամկետանցությունը՝ բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների և ներդրումային արժեթղթերի համար: Ժամկետանց օրերի քանակը որոշվում է հաշվելով օրերն այն առաջին օրվանից, երբ վճարումն ամբողջությամբ չի ստացվել: Վճարում կատարելու ամսաթվերը որոշվում են առանց հաշվի առնելու արտոնյալ ժամանակահատվածը, որը կարող է տրամադրվել փոխառուին:

Որպես ընդհանուր ցուցանիշ համարվում է, որ տեղի է ունեցել պարտքային ռիսկին ենթարկվող գործիքի պատքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, եթե Բանկի քանակական մոդելների հիման վրա որոշվում է, որ ֆինանսական գործիքի մնացած ժամկետի համար պարտազանցման հավանականությունն աճել է ավելի քան 64%-ով:

Եթե գոյություն ունի վկայություն, որ այլևս չկա պարտքային ռիսկի նշանակալի աճ ի համեմատություն սկզբնական ճանաչման, գործիքի գծով կորստի պահուստը կրկին չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների չափով: Պարտքային ռիսկի աճի որոշ որակական ցուցանիշներ, այդ թվում՝ վերանայված պայմանների խախտումը, կարող են վկայել պարտազանցման ռիսկի աճի մասին, որը պահպանվում է, նույնիսկ երբ ցուցանիշն ինքնին դադարում է գոյություն ունենալ: Նման դեպքերում

Բանկը սահմանում է փորձաշրջան, որի ընթացքում ֆինանսական ակտիվի գծով վճարումները պետք է կատարվեն ժամանակին և սահմանված չափով՝ ապացուցելու համար, որ պարտքային ռիսկը նշանակալիորեն նվազել է: Վարկի պայմանագրային պայմանների փոփոխության դեպքում ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչման չափանիշների այլևս բավարարված չլինելու ապացույց կարող է հանդիսանալ արդիական տեղեկատվությունը, որ առկա է վճարումները ժամանակին կատարելու պատմություն՝ փոփոխված պայմանագրային պայմաններին համապատասխան:

Պարտազանցության սահմանում

Բանկը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե՝

- հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի Բանկի նկատմամբ ստանձնած իր վարկային պարտավորությունները, եթե Բանկը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (առկայության դեպքում),
- Բանկի նկատմամբ փոխառուի նշանակալի վարկային պարտավորություններից որևէ մեկն ավելի քան 90 օր ժամկետանց է հաճախորդներին տրված վարկերի համար և ավելի քան 30 օր՝ բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների և ներդրումային արժեթղթերի համար: Օվերդրաֆտները ժամկետանց են համարվում այն օրվանից, երբ հաճախորդը խախտում է սահմանված սահմանաչափը կամ երբ հաճախորդին առաջարկվում է այնպիսի սահմանաչափ, որը ցածր է ընթացիկ չմարված գումարից, կամ
- հավանական է դառնում, որ ակտիվի պայմանները կվերանայվեն փոխառուի սնանկության արդյունքում՝ վարկային պարտավորությունները կատարելու փոխառուի անկարողության պատճառով:

Փոխառուի հետ կապված պարտազանցման տեղի ունենալը գնահատելիս՝ Բանկը դիտարկում է հետևյալը՝

- որակական ցուցանիշները, օրինակ՝ կովենանտների խախտումը,
- քանակական ցուցանիշները, օրինակ՝ նույն թողարկողի կողմից Բանկի նկատմամբ այլ պարտավորության ժամկետանց կարգավիճակը և չկատարումը և
- Բանկի ներսում մշակված և արտաքին աղբյուրներից ստացված տվյալները:

Ելակետային տվյալները, որոնք օգտագործվում են ֆինանսական գործիքի գծով պարտազանցման տեղի ունենալը գնահատելու համար, և դրանց նշանակալիությունը կարող են փոփոխվել ժամանակի ընթացքում՝ հանգամանքների փոփոխություններն արտացոլելու համար:

Ապագայամետ տեղեկատվության ներառում

Բանկը ներառում է ապագայամետ տեղեկատվությունը, երբ գնահատում է, թե արդյոք տեղի է ունեցել գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից

ի վեր և երբ չափում է ակնկալվող պարտքային կորուստները: Ապագայամետ տեղեկատվությունը գնահատելիս Բանկն օգտագործում է փորձագետների դատողությունները:

Բանկը նունականացրել և փաստաթղթավորել է պարտքային ռիսկի և պարտքային կորուստների առանցքային գործոնները ֆինանսական գործիքների յուրաքանչյուր պորտֆելի համար և, օգտագործելով անցյալ ժամանակաշրջանների տվյալների վերլուծությունը, գնահատել է մակրոտնտեսական փոփոխականի, պարտքային ռիսկի և պարտքային կորուստների միջև փոխհարաբերությունները: Առանցքային գործոններն են ՀՆԱ-ի կանխատեսումները, արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները:

Առանցքային գործոնների և ֆինանսական ակտիվների տարբեր պորտֆելների գծով պարտազանցման և կորստի դրույքների կանխատեսվող փոխհարաբերությունները մշակվել են վերջին 6 տարիների տվյալների հիման վրա:

Փոփոխված ֆինանսական ակտիվներ

Վարկի պայմանագրային պայմանները կարող են փոփոխվել մի շարք պատճառներից ելնելով, ներառյալ շուկայական պայմանների փոփոխությունը, հաճախորդների պահպանումը և այլ գործոնները, որոնք կապված չեն հաճախորդի վճարունակության ներկայիս կամ հնարավոր վատթարացման հետ: Գոյություն ունեցող վարկը, որի պայմանները փոփոխվել են, կարող է ապաճանաչվել, և վերաբանակցված վարկը կարող է ճանաչվել որպես նոր վարկ իրական արժեքով՝ Ծանոթագրություն 3 (ե) (iii) կետում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, և փոփոխությունը չի հանգեցնում ապաճանաչման, որոշելու համար, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ, համեմատվում են՝

- պարտազանցման հավանականությունը ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում հաշվետու ամսաթվի դրությամբ՝ ելնելով փոփոխված պայմաններից,
- պարտազանցման հավանականությունը ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում, որը գնահատվում է սկզբնական ճանաչման պահին առկա տվյալների և սկզբնական պայմանագրային պայմանների հիման վրա:

Եթե փոփոխությունը հանգեցնում է ապաճանաչման, ճանաչվում է նոր վարկ և դասվում 1-ին փուլին (ենթադրելով, որ այն պարտքային առումով արժեզրկված չէ այդ պահին):

Բանկը վերաբանակցում է ֆինանսական դժվարություններ ունեցող հաճախորդների վարկերի պայմանները (վարկային պայմանագրի պայմանների վերանայում)՝ նպատակ

ունենալով առավելագույնի հասցնել պարտքի վերադարձման հնարավորությունները և նվազագույնի հասցնել պարտազանցման ռիսկը: Վարկային պայմանագրի պայմանների վերանայման Բանկի քաղաքականության համաձայն՝ վարկի պայմանները վերնայավում են ընտրանքային կարգով, եթե փոխառուն ներկա պահին չի կատարել պարտքի գծով իր պարտականությունները կամ գոյություն ունի պարտազանցման մեծ ռիսկ, եթե գոյություն ունի վկայություն, որ փոխառուն ձեռնարկել է բոլոր ողջամիտ քայլերը մարումները սկզբնական պայմանագրային պայմանների համաձայն կատարելու համար և ակնկալվում է, որ կկարողանա կատարել իր պարտականությունները վերանայված պայմաններով:

Պայմանների վերանայումը սովորաբար ներառում է մարման ժամկետի երկարաձգումը, տոկոսների վճարման ժամկետների փոփոխությունը և կովենանտների պայմանների փոփոխությունը: Վարկային պայմանագրի պայմանների վերանայման քաղաքականությունը գործում է թե՛ անհատներին և թե՛ իրավաբանական անձանց տրված վարկերի համար:

Վարկային պայմանագրի պայմանների վերանայման Բանկի քաղաքականության շրջանակում փոփոխված ֆինանսական ակտիվների համար պարտազանցման հավանականության գնահատումն արտացոլում է այն հանգամանքը, թե արդյոք փոփոխությունը բարելավել է կամ վերականգնել է տոկոսները և մայր գումարը հավաքագրելու Բանկի կարողությունը, ինչպես նաև վարկային պայմանագրերի պայմանների նման վերանայումների Բանկի անցյալ ժամանակաշրջանների փորձը: Այս գործընթացի շրջանակում Բանկը գնահատում է փոխառուի կողմից մարումները ժամանակին կատարելու հնարավորությունը պայմանագրի պայմանների փոփոխության դեպքում և դիտարկում է տարբեր վարքագծային ցուցանիշներ:

Ընդհանուր առմամբ, վարկային պայմանագրի պայմանների վերանայումն իրենից ներկայացնում է պարտքային ռիսկի նշանակալի աճի որակական ցուցանիշ, և պայմանների վերանայման ակնկալիքը կարող է հանդես գալ որպես պարտքային առումով արժեզրկման վկայություն (տես՝ Ծանոթագրություն 3 (ե) (iv)): Անհրաժեշտ է, որ հաճախորդը հետևողականորեն ցուցադրի պարտաճանաչ վճարման վարքագիծ որոշակի ժամանակահատվածի ընթացքում, մինչև որ վարկն այլևս չհամարվի պարտքային առումով արժեզրկված/վարկի հետ կապված այլևս չարձանագրվի պարտազանցում, կամ մինչև որ չհամարվի, որ պարտազանցման հավանականությունն այնքան է նվազել, որ կորստի պահուստը կարող է կրկին չափվել 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս որպես առանցքային ելակետային տվյալներ հանդես են գալիս հետևյալ փոփոխականների ժամկետային կառուցվածքները.

- պարտազանցման հավանականությունը,
- կորուստը պարտազանցման դեպքում,
- պարտքի գումարը պարտազանցման պահին:

1-ին փուլի գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են բազմապատկելով 12-ամսյա պարտազանցման հավանականությունը պարտազանցման դեպքում առաջացող կորստի գումարով և պարտքի գումարով պարտազանցման պահին: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են բազմապատկելով ամբողջ ժամկետի համար պարտազանցման հավանականությունը պարտազանցման դեպքում առաջացող կորստի գումարով և պարտքի գումարով պարտազանցման պահին:

Պարտազանցման հավանականության գնահատման մեթոդաբանությունը ներկայացված է վերը՝ «Պարտազանցման հավանականության ժամկետային կառուցվածքի ստեղծում» բաժնում:

Բանկը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը գնահատում է հիմք ընդունելով պարտականությունները չկատարած պայմանագրային կողմերին ներկայացված պահանջների արդյունքում միջոցների վերադարձման ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը: Պարտազանցման դեպքում առաջացող կորստի գնահատման մոդելներում դիտարկվում են պահանջի կառուցվածքը, գրավը, առաջնահերթությունը, պայմանագրային կողմի գործունեության ոլորտը, ֆինանսական ակտիվի անբաժանելի մասը կազմող ցանկացած գրավի փոխհատուցման ծախսումները: Անշարժ գույքով ապահովված վարկերի համար վարկի գումար/գրավի արժեք հարաբերակցությունն առանցքային ցուցանիշ է պարտազանցման դեպքում առաջացող կորուստը որոշելու համար: Պարտազանցման դեպքում առաջացող կորստի գնահատականները ճշգրտվում են տարբեր տնտեսական սցենարների տեսանկյունից և անշարժ գույքով ապահովված վարկերի հետ կապված՝ անշարժ գույքի գների հնարավոր փոփոխություններն արտացոլելու համար: Պարտազանցման դեպքում առաջացող կորուստը հաշվարկվում է զեղչված դրամական հոսքերի հիմունքով՝ որպես զեղչման գործակից կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է պարտքի ակնկալվող գումարը պարտազանցման դեպքում: Բանկը պարտազանցման պահին պարտքի գումարը հաշվարկում է հիմք ընդունելով պայմանագրային կողմի պարտքի ընթացիկ գումարը և պայմանագրով թույլատրվող և մաշվածության արդյունքում այդ գումարի հնարավոր փոփոխությունները: Ֆինանսական ակտիվի համար պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է վերջինիս համախառն հաշվեկշռային արժեքը պարտազանցման պահին: Փոխատվության հանձնառությունների համար պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է հնարավոր ապագա գումարները, որոնք կարող են օգտագործվել պայմանագրի շրջանակում, որոնք գնահատվում են անցյալ ժամանակաշրջանների դիտարկումների և ապագայամետ տեղեկատվության հիման վրա: Ֆինանսական երաշխավորությունների համար պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից

ներկայացնում է վճարման ենթակա գումարը ֆինանսական երաշխավորության կատարման պահին:

Ինչպես նշված է վերը և պայմանով, որ 1-ին փուլի ֆինանսական ակտիվների համար առավելագույնս կօգտագործվի պարտազանցման հավանականության 12-ամսյա ցուցանիշը, Բանկը ակնկալվող պարտքային կորուստները չափում է հաշվի առնելով պարտազանցման ռիսկն այն առավելագույն պայմանագրային ժամանակահատվածում (ներառյալ փոխառուի երկարաձգման բոլոր հնարավորությունները), որի ընթացքում այն ենթարկվում է պարտքային ռիսկին, եթե նույնիսկ Բանկը դիտարկում է ավելի երկար ժամանակահատված պարտքային ռիսկի կառավարման նպատակների համար: Առավելագույն պայմանագրային ժամանակահատվածը տևում է մինչև այն ամսաթիվը, երբ Բանկն իրավունք ունի պահանջել փոխատվության մարումը կամ դադարեցնել փոխատվության հանձնառությունը կամ երաշխավորությունը:

Եթե ցուցանիշի մոդելավորումն իրականացվում է խմբային հիմունքով, ֆինանսական գործիքները խմբավորվում են ըստ ռիսկի ընդհանրական բնութագրերի, որոնք ներառում են՝

- գործիքի տեսակը,
- ժարտքային ռիսկի վարկանիշները,
- գրավի տեսակը:

Խմբավորումները պետք է կանոնավոր հիմունքով վերանայվեն՝ առանձին խմբերի շրջանակում պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների միատեսակ լինելն ապահովելու համար:

Այն պորտֆելների համար, որոնց վերաբերյալ Բանկն ունի անցյալ ժամանակաշրջանների սահմանափակ տվյալներ, ներքին աղբյուրներից հասանելի տեղեկատվությունը լրացնելու համար օգտագործվում է արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվությունը: Ստորև ներկայացված են այն պորտֆելները, որոնց համար արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվությունն օգտագործվել է որպես նշանակալի ելակետային տվյալ ակնկալվող պարտքային կորուստները չափելիս:

		Օգտագործված արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվություն	
	Պարտքային ռիսկին ենթարկվածություն	Պարտազանցման հավանականություն	Կորուստը պարտազանցման դեպքում
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	6,209,368	S&P պարտազանցման վերլուծության հաշվետվություն	Moody's» պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	23,135,698	S&P պարտազանցման վերլուծության հաշվետվություն	Moody's» պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն
Իրավաբանական անձանց տրված վարկեր	12,419,361	S&P պարտազանցման վերլուծության հաշվետվություն	Moody's» պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն
Իրավաբանական անձանց տրված վարկեր	9,755,534	S&P պարտազանցման վերլուծության հաշվետվություն	-
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	10,336,407	S&P պարտազանցման վերլուծության հաշվետվություն	Moody's» պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն

Պարտքային ռիսկի կենտրոնացում

Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային հանձնառություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
հազ. դրամ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,756,450	8,658,588
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	8,762,820	4,728,200
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	23,100,375	20,723,726
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	4,312	-
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	10,305,167	13,068,992
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	4,767,263	3,429,813
Հաճախորդներին տրված վարկեր	77,379,245	61,470,502
Այլ ֆինանսական ակտիվներ	845,623	250,280
Պարտքային ռիսկին ընդհանուր առավելագույն ենթարկվածություն	**132,921,255**	**112,330,101**

Որպես կանոն գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում ներդրումների, բանկերին տրված վարկերի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառության գործառնությունների մաս:

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և այդ վարկերի գծով պարտքային ռիսկի կենտրոնացման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 15-ում:

Չճանաչված պայմանագրային հանձնառությունների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է Ծանոթագրություն 27-ում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են այն ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցվելու հանգամանքից:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ գործիքների քլիրինգի պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխատվության գլխավոր պայմանագրերը: Համանման ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի փոխառության և փոխատվության պայմանագրերը:

Բանկը ստանում և ընդունում է գրավ դրամական միջոցների և շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով:

Նման գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտազանցում կատարելու, անվճարունակ դառնալու կամ սնանկանալու դեպքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	**Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումարներ**	**Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար**	**Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար**	**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ**		**Զուտ գումար**
				Ֆին. գործիքներ	**Որպես գրավ ստացված դրամական միջոցներ**	
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	4,767,263	-	4,767,263	(4,767,263)	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**4,767,263**	-	**4,767,263**	**(4,767,263)**	-	-
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	(2,418,041)	-	(2,418,041)	2,417,771	-	(270)
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(16,292,695)	-	(16,292,695)	14,089,804	-	(2,202,891)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(18,710,736)**	-	**(18,710,736)**	**16,507,575**	-	**(2,203,161)**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	**Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումարներ**	**Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար**	**Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար**	**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ**		**Զուտ գումար**
				Ֆին. գործիքներ	**Որպես գրավ ստացված դրամական միջոցներ**	
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,429,813	-	3,429,813	(3,429,813)	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**3,429,813**	-	**3,429,813**	**(3,429,813)**	-	-
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	(2,399,142)	-	(2,399,142)	2,399,142	-	-
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(6,771,902)	-	(6,771,902)	6,771,902	-	-

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		Զուտ գումար
				Ֆին. գործիքներ	Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(9,171,044)	-	(9,171,044)	(9,171,044)	-	-

Վերը նշված աղյուսակներում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են ԱՊԿԿ-ի կողմից՝ Ռիսկերի կառավարման վարչության առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների գծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտարժույթի դիրքեր և կորուստների սահմանաչափեր, որոնք կանոնավոր կերպով մշտադիտարկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Վարչության կողմից:

(ii) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Բանկը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա շուկայում գերակշռող տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել կորուստների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխությունների դեպքում:

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների ճեղքվածքի հսկողության միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների ճեղքվածքի վերաբերյալ տեղեկատվությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2019թ.							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	103,767	219,843	209,884	2,386,388	3,289,486	2,553,452	8,762,820
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	72,837	24,047	2,633,269	4,997,342	15,372,880	-	23,100,375
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	1,182,194	1,127,723	1,943,532	197,062	-	5,854,656	10,305,167
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	4,767,263	-	-	-	-	-	4,767,263
Հաճախորդներին տրված վարկեր	16,505,481	19,675,582	24,816,664	14,590,621	1,790,897	-	77,379,245
	22,631,542	**21,047,195**	**29,603,349**	**22,171,413**	**20,453,263**	**8,408,108**	**124,314,870**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	3,325,711	6,323,917	4,070,298	2,161,072	450,217	3,798,527	20,129,742
Թողարկված պարտքային արժեթղթեր	54,803	-	-	6,646,000	-	-	6,700,803
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	16,292,695	-	-	-	-	-	16,292,695
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	24,982,574	11,416,436	16,799,490	4,803,012	817,608	-	58,819,120
	44,655,783	**17,740,353**	**20,869,788**	**13,610,084**	**1,267,825**	**3,798,527**	**101,942,360**
	(22,024,241)	**3,306,842**	**8,733,561**	**8,561,329**	**19,185,438**	**4,609,581**	**22,372,510**

Բացասական կարճաժամկետ տոկոսադրույքի ճեղքվածքի դիրքը կառավարելու համար Բանկը հիմնվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վրա, որոնք կարող են վաճառվել կամ գրավադրվել հետգնման պայմանագրերի դիմաց, և այն ենթադրության վրա, որ ժամկետային ավանդները կերկարաձգվեն մարման ժամկետից հետո:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2018թ.							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	-	-	308,200	3,297,290	1,122,710	4,728,200
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	66,387	925,784	912,046	3,416,502	15,403,007	-	20,723,726
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	8,214,655	965,409	2,873,894	-	-	1,015,034	13,068,992
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,429,813	-	-	-	-	-	3,429,813
Հաճախորդներին տրված վարկեր	3,922,392	7,172,129	6,174,262	37,782,849	6,418,870	-	61,470,502
	15,633,247	**9,063,322**	**9,960,202**	**41,507,551**	**25,119,167**	**2,137,744**	**103,421,233**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	787,673	675,330	479,415	1,192,280	1,178,973	1,624,109	5,937,780
Թողարկված պարտքային արժեթղթեր	3,504,627	2,422,063	2,451,389	2,444,961	-	-	10,823,040
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	6,771,902	-	-	-	-	-	6,771,902
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	24,804,931	11,563,156	15,710,086	3,191,261	1,050,922	-	56,320,356
	35,869,133	**14,660,549**	**18,640,890**	**6,828,502**	**2,229,895**	**1,624,109**	**79,853,078**
	(20,235,886)	**(5,597,227)**	**(8,680,688)**	**34,679,049**	**22,889,272**	**513,635**	**23,568,155**

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2019թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			2018թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսակիր ակտիվներ						
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նեդրումային արժեթղթեր	10.5%	7.0%	-	9.5%	6.7%	-
Ամորտիզացված արժեքով չափվող նեդրումային արժեթղթեր	12.4%	6.5%	4.0%	14.6%	5.4%	-
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	10.7%	5.4%	4.5%	7.5%	3.5%	-
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6.1%	-	1.4%	6.8%	3.3%	-
Հաճախորդներին տրված վարկեր	12.3%	11.5%	7.4%	12.6%	11.7%	6.9%
Տոկոսակիր պարտավորություններ						
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ						
- Ժամկետային ավանդներ	7.0%	4.1%	-	9.5%	4.7%	-
- Վարկեր բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	8.2%	4.0%	1.6%	8.4%	-	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ						
- Ժամկետային ավանդներ	8.8%	4.5%	2.1%	9.0%	4.8%	3.7%
- Ընթացիկ հաշիվներ	0.0%-5%	0.0%-1.5%	0.0%-0.25%	0.0%-5%	0.0%-1.5%	0.0%-0.25%
Թողարկված պարտքային արժեթղթեր	9.5%	5.2%	-	12.3%	5.8%	-
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	5.6%	-	-	6.2%	-	0.9%

Տոկոսադրույքի զգայնության վերլուծություն

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության հսկողությամբ: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխությունների (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գյություն ունեցող դիրքերի հիման վրա:

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
100 բկ զուգահեռ նվազում	127,587	113,423
100 բկ զուգահեռ աճ	(127,587)	(113,423)

Ստորև ներկայացված է սեփական կապիտալի զգայնության վերլուծությունը, պայմանավորված տոկոսադրույքների փոփոխության հետևանքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններով, որն իրականացվել է 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գոյություն ունեցող դիրքերի և եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	2019թ.	2018թ.
	Սեփական կապիտալ հազ. դրամ	Սեփական կապիտալ հազ. դրամ
100 բկ զուգահեռ նվազում	263,025	182,498
100 բկ զուգահեռ աճ	(263,025)	(182,498)

(ii) Արժութային ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արժութային ռիսկին, սակայն այս գործառնությունները չեն որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն՝ ՖՀՄՍ պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ՀՀ դրամ հազ. դրամ	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,991,075	1,877,796	944,097	3,524,069	14,337,037
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	2,644,898	3,858,817	-	2,259,105	8,762,820
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	16,224,096	5,308,512	1,567,767	-	23,100,375
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	2,462,989	5,727,012	1,469,375	645,791	10,305,167
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	4,723,190	-	44,073	-	4,767,263
Հաճախորդներին տրված վարկեր	46,680,368	20,966,541	7,553,438	2,178,898	77,379,245
Այլ ֆինանսական ակտիվներ	461,301	376,738	1,018	6,566	845,623
Ընդամենը	**81,187,917**	**38,115,416**	**11,579,768**	**8,614,429**	**139,497,530**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	12,305,088	2,949,750	3,385,660	1,489,244	20,129,742
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	24,835,917	32,001,003	1,645,951	336,249	58,819,120
Թողարկված պարտքային արժեթղթեր	253,538	6,447,265	-	-	6,700,803
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	10,918,439	-	5,374,256	-	16,292,695
Այլ ֆինանսական պարտավորություններ	309,857	60,503	5,893	13,753	390,006
Ընդամենը պարտավորություններ	**48,622,839**	**41,458,521**	**10,411,760**	**1,839,246**	**102,332,366**
Արժութային սվոփ պայմանագրեր	-	6,698,934	(1,049,362)	(5,645,260)	4,312
Զուտ դիրքը	**32,565,078**	**3,355,829**	**118,646**	**1,129,923**	**37,169,476**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ՀՀ դրամ հազ. դրամ	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,070,377	2,320,822	480,114	1,389,443	11,260,756
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	1,570,422	2,209,045	-	948,733	4,728,200
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	16,703,028	4,020,698	-	-	20,723,726
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	585,429	11,934,458	98,143	450,962	13,068,992
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,236,227	193,586	-	-	3,429,813
Հաճախորդներին տրված վարկեր	29,746,643	26,880,223	4,151,994	691,642	61,470,502
Այլ ֆինանսական ակտիվներ	217,415	32,742	117	6	250,280
Ընդամենը	**59,129,541**	**47,591,574**	**4,730,368**	**3,480,786**	**114,932,269**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	5,022,477	896,023	16,955	2,325	5,937,780
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	19,268,486	34,905,492	1,778,639	367,739	56,320,356
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,036,400	9,786,640	-	-	10,823,040
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	4,002,696	-	2,769,206	-	6,771,902
Այլ ֆինանսական պարտավորություններ	256,276	12,824	367	-	269,467
Ընդամենը պարտավորություններ	**29,586,335**	**45,600,979**	**4,565,167**	**370,064**	**80,122,545**
Արժութային սվոփ պայմանագրեր	-	529,706	-	(531,043)	(1,337)
Զուտ դիրքը	**29,543,206**	**2,520,301**	**165,201**	**2,579,679**	**34,808,387**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս հաշվի են առնվել նախքան հարկումը գումարները և հիմք են ընդունվել արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները, որոնք Բանկը դիտարկում էր որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճ 10%-ով	335,583	252,030
ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի փոխարժեքի աճ 10%-ով	11,865	16,520

2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի աճը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով:

Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Բանկը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածք, որը կազմված է թողարկված պարտքային արժեթղթերից, այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերից, հիմնական կորպորատիվ հաճախորդների և անհատների ավանդներից, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելներ՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և արդյունավետ բավարարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության հսկողություն:

Գանձապետարանը բաժիններից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ ամբողջ Բանկում:

Գանձապետարանն իրականացնում է իրացվելիության դիրքի հսկողություն օրական կտրվածքով և իրացվելիության կանոնավոր «ստրեսային թեսթեր» շուկայական սովորական և ավելի խիստ պայմանները ներառող տարբեր սցենարների շրջանակում: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Գանձապետարանի կողմից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով չզեղչված դրամական հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված ամենավաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված դրամական ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է չզեղչված պայմանագրային դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ փոխատվության հանձնառությունների գծով:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Պահանջով և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ներհոսքի (արտահոսքի) ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	5,271,911	1,869,006	6,508,140	4,258,630	3,262,679	21,170,366	20,129,742
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	19,998,474	5,226,346	11,777,771	17,590,718	7,054,741	61,648,050	58,819,120
Թողարկված պարտքային արժեթղթեր	50,771	111,327	80,524	134,277	6,882,592	7,259,491	6,700,803
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	13,619,189	2,689,797	-	-	-	16,308,986	16,292,695
Այլ ֆինանսական պարտավորություններ	70,659	63,869	255,478	-	-	390,006	390,006
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**39,011,004**	**9,960,345**	**18,621,913**	**21,983,625**	**17,200,012**	**106,776,899**	**102,332,366**
Փոխատվության հանձնառություններ	**4,370,145**	**-**	**-**	**-**	**-**	**4,370,145**	**-**

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Պահանջով և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ներհոսքի (արտահոսքի) ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	1,655,674	798,066	747,774	596,797	3,234,045	7,032,356	5,937,780
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	17,850,775	8,089,972	11,994,217	17,553,752	6,349,919	61,838,635	56,320,356
Թողարկված պարտքային արժեթղթեր	29,108	3,604,882	2,519,757	2,563,902	2,590,501	11,308,150	10,823,040
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	6,780,089	-	-	-	-	6,780,089	6,771,902
Այլ ֆինանսական պարտավորություններ	101,348	151,702	16,417	-	-	269,467	269,467

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ներհոսքի (արտահոսքի) ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**26,416,994**	**12,644,622**	**15,278,165**	**20,714,451**	**12,174,465**	**87,228,697**	**80,122,545**
Փոխատվության հանձնառություններ	**2,537,830**	**-**	**-**	**-**	**-**	**2,537,830**	**-**

ՀՀ օրենսդրության համաձայն՝ անհատները կարող են ցանկացած պահի ելքագրել իրենց ժամկետային ավանդները՝ դեպքերի մեծամասնությունում կորցնելով հաշվեգրված տոկոսները: Ստորև ներկայացված է այս ավանդների դասակարգումն ըստ սահմանված մարման ժամկետների:

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Ցպահանջ և մինչև 1 ամիս ժամկետով	4,431,096	5,859,177
1-ից 3 ամիս ժամկետով	4,918,600	6,365,294
3-ից 6 ամիս ժամկետով	11,001,153	11,170,115
6-ից 12 ամիս ժամկետով	16,746,920	15,190,423
1-ից 5 տարի ժամկետով	4,010,004	3,095,720
Ավելի քան 5 տարի ժամկետով	773,619	1,007,241
	41,881,392	**42,687,970**

Որոշ իրավաբանական անձանց հետ կնքված ժամկետային ավանդների պայմանագրերի համաձայն՝ հաճախորդները կարող են ցանկացած պահի ելքագրել իրենց ժամկետային ավանդները՝ կորցնելով հաշվեգրված տոկոսները: Այս ավանդները դասակարգվում են ըստ պայմանագրային մարման ժամկետների: Ստորև ներկայացված է այս ավանդների դասակարգումն ըստ սահմանված մարման ժամկետների:

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Ցպահանջ և մինչև 1 ամիս ժամկետով	379,644	370,000
1-ից 3 ամիս ժամկետով	122,031	1,453,989
3-ից 6 ամիս ժամկետով	415,283	383,818
6-ից 12 ամիս ժամկետով	52,695	556,000
1-ից 5 տարի ժամկետով	792,838	95,512
Ավելի քան 5 տարի ժամկետով	43,989	72,549
	1,806,480	**2,931,868**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ ակնկալվող մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14,337,037	-	-	-	-	-	-	14,337,037
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	103,767	429,728	2,386,388	3,289,485	2,553,452	-	8,762,820
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	48,407	24,430	2,657,316	4,997,342	15,372,880	-	-	23,100,375
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	5,838,748	672,774	3,071,255	197,062	525,328	-	-	10,305,167
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	4,767,263	-	-	-	-	-	-	4,767,263
Հաճախորդներին տրված վարկեր	1,299,614	7,593,112	29,557,074	24,867,694	12,663,639	-	1,398,112	77,379,245
Ընթացիկ հարկային ակտիվ	-	99,786	-	-	-	-	-	99,786
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	5,810,745	-	5,810,745
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	-	-	-	-	-	1,606,304	-	1,606,304
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	4,312	-	-	-	-	-	-	4,312
Այլ ակտիվներ	986,867	961,083	311,800	11,477	-	1,612,250	-	3,883,477
Ընդամենը ակտիվներ	**27,282,248**	**9,454,952**	**36,027,173**	**32,459,963**	**31,851,332**	**11,582,751**	**1,398,112**	**150,056,531**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	5,262,110	1,856,068	10,394,240	2,167,155	450,169	-	-	20,129,742
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	19,941,943	5,040,631	28,215,926	4,803,012	817,608	-	-	58,819,120
Թողարկված պարտքային արժեթղթեր	24,000	30,803	-	6,646,000	-	-	-	6,700,803
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	13,604,923	2,687,772	-	-	-	-	-	16,292,695
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	1,389,630	-	-	-	1,389,630
Վարձակալության գծով պարտավորություն	16,409	39,975	177,129	748,839	656,068	-	-	1,638,420
Այլ պարտավորություններ	421,433	123,563	725,020	240,713	19,758	-	-	1,530,487
Ընդամենը պարտավորություններ	**39,270,818**	**9,778,812**	**39,512,315**	**15,995,349**	**1,943,603**	**-**	**-**	**106,500,897**

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց*	Ընդամենը
Զուտ դիրքը	(11,988,570)	(323,860)	(3,485,142)	16,464,614	29,907,729	11,582,751	1,398,112	43,555,634

* Ժամկետանց վարկերի ժամկետանց մասը

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ ակնկալվող մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	ժամկետանց*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11,260,756	-	-	-	-	-	-	11,260,756
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նեդրումային արժեթղթեր	119,731	-	-	308,200	3,177,559	1,122,710	-	4,728,200
Ամորտիզացված արժեքով չափվող նեդրումային արժեթղթեր	-	66,387	1,837,830	3,416,502	15,403,007	-	-	20,723,726
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	6,295,224	1,937,548	3,835,670	80,035	-	920,515	-	13,068,992
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,429,813	-	-	-	-	-	-	3,429,813
Հաճախորդներին տրված վարկեր	1,838,440	2,317,989	12,835,681	36,337,058	6,155,094	-	1,986,240	61,470,502
Ընթացիկ հարկային ակտիվ	-	-	139,189	-	-	-	-	139,189
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	5,061,844	-	5,061,844
Այլ ակտիվներ	302,525	386,759	131,305	31,302	-	1,339,043	-	2,190,934
Ընդամենը ակտիվներ	**23,246,489**	**4,708,683**	**18,779,675**	**40,173,097**	**24,735,660**	**8,444,112**	**1,986,240**	**122,073,956**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	1,337	-	-	-	-	-	-	1,337
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	1,636,921	774,861	1,154,745	1,192,280	1,178,973	-	-	5,937,780
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	16,980,184	7,824,747	27,273,242	3,191,261	1,050,922	-	-	56,320,356
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	3,504,627	4,873,452	2,444,961	-	-	-	10,823,040
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	6,771,902	-	-	-	-	-	-	6,771,902
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	-	617,324	-	617,324
Այլ պարտավորություններ	775,953	160,256	392,205	6,758	2,923	-	-	1,338,095
Ընդամենը պարտավորություններ	**26,166,297**	**12,264,491**	**33,693,644**	**6,835,260**	**2,232,818**	**617,324**	**-**	**81,809,834**
Զուտ դիրքը	**(2,919,808)**	**(7,555,808)**	**(14,913,969)**	**33,337,837**	**22,502,842**	**7,826,788**	**1,986,240**	**40,264,122**

* ժամկետանց վարկերի ժամկետանց մասը

Բացասական կարճաժամկետ իրացվելիության դիրքը կառավարելու համար Բանկը հիմնվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վրա, որոնք կարող են վաճառվել կամ գրավադրվել հետգնման պայմանագրերի դիմաց, և այն ենթադրության վրա, որ ժամկետային ավանդները կերկարաձգվեն մարման ժամկետից հետո:

55 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ առևտրային բանկերի համար որպես կապիտալ սահմանված հոդվածները:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության նվազագույն ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») կազմում էր 12% (2018թ-ին՝ 12%): 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր օրենսդրությամբ սահմանված ցուցանիշին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի համարժեքության ցուցանիշը դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2019թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	2018թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված
Հիմնական կապիտալ		
Հիմնական կապիտալ	35,967,146	36,409,735
Նվազեցումներ	(2,853,618)	(1,894,244)
Ընդամենը հիմնական կապիտալ	**33,113,528**	**34,515,491**

	2019թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	2018թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված
Լրացուցիչ կապիտալ		
Լրացուցիչ կապիտալ	1,014,444	217,785
Նվազեցումներ	-	-
Ընդամենը լրացուցիչ կապիտալ	**1,014,444**	**217,785**
Ընդամենը կապիտալ	**34,127,972**	**34,733,276**
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվները՝ ներառյալ պարտքային, շուկայական և գործառնական ռիսկերը	**115,307,418**	**92,690,658**
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)	**29.6%**	**37.5%**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկի կշիռների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված պարտքային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականը՝ հաշվի առնելով պահանջներին համապատասխանող ցանկացած գրավ կամ երաշխավորություն: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր կորուստների առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

Բանկն իր կապիտալի համարժեքության ցուցանիշը վերահսկում է նաև համաձայն Բազել II-ի: Ստորև ներկայացված է կապիտալի համարժեքության ցուցանիշի հաշվարկը Բազել II-ի համաձայն դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2019թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	2018թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված
1-ին մակարդակի կապիտալ	43,153,315	43,402,297
2-րդ մակարդակի կապիտալ	1,014,444	217,785
Ընդամենը կապիտալ	**44,167,759**	**43,620,082**
Ռիսկով կշռված ակտիվների	**115,549,759**	**94,483,462**
Պարտքային ռիսկ	102,040,689	87,887,131
Շուկայական ռիսկ	1,030,971	234,248
Գործառնական ռիսկ	590,118	557,312
Կապիտալի համարժեքության ցուցանիշ	**38.22%**	**46.17%**

Բազելի II-ի համաձայն՝ վերահսկողության նպատակների համար պահվող կապիտալը պետք է ներկայացվի երկու մակարդակով, այնպես, որպեսզի Բանկի կապիտալի բազայի առնվազն 50%-ը բաղկացած լինի հիմնական տարրից, որը կներառի սեփական կապիտալը և հրապարակված պահուստները հարկումց հետո չբաշխված շահույթից (1-ին մակարդակի կապիտալ): Կապիտալի մյուս տարրը (լրացուցիչ կապիտալը) կներառվի 2-րդ մակարդակի կապիտալում՝ չգերազանցելով 1-ին մակարդակի կապիտալի 100%-ը:

56 Փոխատվության հանձնառություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու հանձնառություններ: Այս հանձնառությունները նախատեսում են վարկային ռեսուրսների տրամադրում հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների տեսքով:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ երրորդ անձանց հանդեպ հաճախորդների պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Փոխատվության հանձնառությունների, ֆինանսական երաշխավորությունների և ակրեդիտիվների հետ կապված Բանկը կիրառում է պարտքային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք գործում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են փոխատվության հանձնառությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում փոխատվության հանձնառությունների գծով արտացոլված գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջությամբ տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն իրենց պայմանագրային պարտականությունները:

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Պայմանագրային գումար		
Վարկային քարտերի գծով հանձնառություններ	2,689,456	1,276,546
Վարկերի և վարկային գծերի գծով հանձնառություններ	1,454,282	925,248
Երաշխավորություններ և ակրեդիտիվներ	226,407	336,036
	4,370,145	**2,537,830**

Վերը ներկայացված ընդհանուր պայմանագրային փոխատվության հանձնառությունները պարտադիր չէ որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս հանձնառությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել մինչև կատարվելը: Վարկերի և վարկային գծերի գծով հանձնառությունների մեծամասնությունն իրենից չի ներկայացնում Բանկի ոչ պայմանական փոխատվության հանձնառություն:

Վարկային քարտերի գծով հանձնառությունները և վարկերի և վարկային գծերի գծով հանձնառություններն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Վարկային քարտերի գծով հանձնառությունները և վարկերի և վարկային գծերի գծով հանձնառությունները պարտքային առումով ժամկետանց չեն կամ արժեզրկված չեն:

57 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրության ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Բանկի գույքն ապահովագրված է, և Բանկն ունի «Բանկերս Բլանկետ Բոնդ» (Banker's Blanket Bond (BBB)) ապահովագրության պայմանագիր մինչև 3,000 հազար ԱՄՆ դոլար գումարով:

(բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունների վերջնական գումարը, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

2017թ. հոկտեմբերի 4-ին Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան հայց է ներկայացվել, որով Բանկից պահանջվում է 22,301 հազար ԱՄՆ դոլար Բանկի կողմից իր հաճախորդներից մեկի հետ կնքված պայմանագիրը խախտելու համար: 2018թ. մարտի 2-ին Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է 22,301 հազար ԱՄՆ դոլար վճարելու պահանջի հայցը: 2018թ. մարտի 30-ին Բանկը բողոքարկել է Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը ՀՀ վերաքննիչ

դատարան: 2018թ. հուլիսի 20-ին Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ դատարանը չի ընդունել Առաջին ատյանի դատարանի որոշումը և գործը վերադարձրել է Երևան քաղաքի Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան նոր վարույթի համար: 2019թ. սեպտեմբերի 20-ին Երևան քաղաքի Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել բավարարել հաճախորդի պահանջը և Բանկից գանձել 22,301 հազար ԱՄՆ դոլար հօգուտ հաճախորդի: 2019թ. հոկտեմբերի 18-ին Բանկը որոշումը բողոքարկել է ՀՀ վերաքննիչ դատարան:

Տարեվերջից հետո 2020թ. մարտի 12-ին ՀՀ վերաքննիչ դատարանը մերժել է Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019թ. սեպտեմբերի 20-ի որոշումը և վճիռ է կայացրել հօգուտ Բանկի: 2020թ. ապրիլի 13-ին հաճախորդը որոշումը բողոքարկել է ՀՀ վճռաբեկ դատարան:

Ղեկավարությունը գտնում է, որ վճարումը քիչ հավանական է, քանի որ բարձր է հավանականությունը, որ Վճռաբեկ դատարանը վարույթ չի ընդունի բողոքը:

(գ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

58 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Բանկի մայր կազմակերպությունն է FISTOCO LTD: Բանկի վերջնական վերահսկող անձն է պրն. Վարդան Դիլանյանը:

Բանկի մայր կազմակերպությունը չի հրապարակում աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները:

(բ) Գործարքներ Խորհրդի և Վարչության անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Բանկի Խորհրդի անդամներ	34,083	69,998
Վարչության անդամներ	757,489	637,423
	791,572	**707,421**

Այս գումարները ներառում են Խորհրդի և Վարչության անդամների դրամային և ոչ դրամային հատուցումները:

Ստորև ներկայացված են Խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2019թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	2018թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
ԱԿՏԻՎՆԵՐ				
Տրված վարկեր (համախառն)	270,541	9.79%	151,800	9.9%
Վարկերի արժեզրկման գծով պահուստ	(1,255)	-	(1,281)	-
Այլ ակտիվներ	-	-	745	-
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Ստացված ավանդներ	123,738	5.93%	296,214	5.3%
Ընթացիկ հաշիվներ	73,826	1.26%	-	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	14,962	5.25%	22,096	5.7%
Փոխատվության հանձնառություններ	51,581	-	38,477	-

Ստորև ներկայացված են Խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Շահույթ կամ վնաս		
Տոկոսային եկամուտ	21,562	7,342
Տոկոսային ծախս	(9,159)	(2,843)
Զուտ արժեզրկումից կորուստ	(431)	(741)

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	1,060	1,068
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	(120)	(28,877)

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2019թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր		Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ		Այլ		
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	Ընդամենը հազ. դրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,092	-	-	-	-	-	1,092
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	-	-	24,946	11.20%	24,946

	Բաժնետերեր		Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ		Այլ		
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	Ընդամենը հազ. դրամ
Պարտավորություններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ							
- Լորո հաշիվներ	103,378	-	-	-	-	-	103,378
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ							
- Ընթացիկ հաշիվներ	35,704	2.1%	-	-	4,777	0.3%	40,481
- Ժամկետային ավանդներ	-	-	-		6,809	8.61%	6,809
Թողարկված պարտաքային արժեթղթեր	-	-	-	-	159,882	5.24%	159,882
Շահույթ (վնաս)							
Տոկոսային եկամուտ	-		7,761		220		7,981
Տոկոսային ծախս	-		-		(8,314)		(8,314)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	-		-		162		162
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	-		-		(17)		(17)

Ստորև ներկայացված են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2018թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր		Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ		Այլ		
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	Ընդամենը հազ. դրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	617	-	-	-	-	-	617
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	453,826	0.0%	-	-	453,826

	Բաժնետերեր		Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ		Այլ		
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	Ընդամենը հազ. դրամ
Այլ ակտիվներ	-	-	48,119	-	-	-	48,119
Պարտավորություններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ							
- Լորո հաշիվներ	765,833	-	-	-	-	-	765,833
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ							
- Ընթացիկ հաշիվներ	35,974	-	-	-	639	-	36,613
Թողարկված պարտաքային արժեթղթեր	-	-	-	-	146,595	5.25%	146,595
Այլ պարտավորություններ	-	-	7,794	-	-	-	7,794
Շահույթ (վնաս)							
Տոկոսային եկամուտ	1,967		14,812		1,576		18,355
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	34,130		4		10		34,144
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	(10)		(10)		(4)		(24)

Այլ կապակցված կողմերը ներառում են Խորհրդի և Վարչության նշանակալից ազդեցության ներքո գտնվող կազմակերպությունները և Խորհրդի և Վարչության անդամների ընտանիքների անդամներին:

Այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդների մեծ մասի մարման ժամկետը կազմում է մեկ տարի: Այլ կապակցված կողմերի հետ իրականացվող գործարքները գրավով ապահովված չեն:

59 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բանկը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

– 1-ին մակարդակ. նույն գործիքների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):

– 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել են նմանատիպ գործիքների համար գործող շուկայում գնանշված գները, նմանատիպ գործիքների համար գնանշված գներն ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են շուկայական տվյալներից:

– 3-րդ մակարդակ. ոչ դիտելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնց դեպքում գնահատման մեթոդները ներառում են դիտելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալները և ոչ դիտելի ելակետային տվյալները նշանակալի ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշված գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու համար:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների, բացառությամբ ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի, գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 23,100,375 հազար դրամ հաշվեկշռային արժեքով ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը կազմում էր 25,344,689 հազար դրամ (2018թ-ին՝ 20,723,726 հազար դրամ հաշվեկշռային արժեքով ամորտիզացված արժեքով

չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը կազմում էր 24,760,137 հազար դրամ): Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի չափումը դասակարգվել է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	Ընդամենը
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ			
- Ածանցյալ ակտիվներ	-	4,312	4,312
Ներդրումային արժեթղթեր			
- Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	-	6,209,368	6,209,368
- Բաժնային գործիքներ	2,553,452	-	2,553,452

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	Ընդամենը
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ			
- Ածանցյալ պարտավորություններ	-	(1,337)	(1,337)
Ներդրումային արժեթղթեր			

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	Ընդամենը
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ			
- Ածանցյալ պարտավորություններ	-	(1,337)	(1,337)
- Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	-	3,605,490	3,605,490
- Բաժնային գործիքներ	1,122,710	-	1,122,710

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվը վաճառքելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու համար չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և զեղչված դրամական հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայական դիտելի գները, և գնահատման այլ մոդելները: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ոչ ռիսկային և ուղենիշային տոկոսադրույքները, վարկային սփրեդերը և այլ հավելավճարները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնային գործիքների և բաժնային գործիքների ինդեքսի գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»:

60 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր

2019թ. դեկտեմբերի 31-ից հետո COVID 19 բռնկման հետևանքով համաշխարհային շուկայում տեղի են ունեցել զգալի ցնցումներ: Այլ գործոնների հետ մեկտեղ, հիվանդության բռնկումը հանգեցրել է ֆոնդային բորսայի ցուցանիշների, նավթի և այլ ապրանքների գների կտրուկ անկման: Այս ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ Բանկը շարունակում էր իր գործունեությունն առանց ընդհատումների: Բանկի աշխատակիցների մի մասն անցել էր հեռավար աշխատանքի: Մասնաճյուղերի գործունեությունը հիմնականում չէր ընդհատվել:

COVID 19 բռնկման հետևանքով Բանկն ակնկալում է, որ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները կաճեն 2020թ-ին, մասնավորապես, հյուրանոցային ծառայությունների, մանրածախ առևտրի, սննդի և խմիչքների և անշարժ գույքի ոլորտում գործող իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների համար:

Բանկը վարկային արձակուրդ է տրամադրել իր անհատ վարկառուներին երկու ամիս ժամկետով՝ սկսած 2020թ. մարտի 17-ից: Արձակուրդի ժամանակահատվածում անհատ վարկառուները կարող են չիրականացնել գրաֆիկով նախատեսված իրենց վարկերի մայր գումարների և տոկոսների վճարումները՝ առանց վարկային պատմության վրա որևէ բացասական հետևանքի: Հետաձգված վճարումները հավասարապես կբաշխվեն մինչև մարման ժամկետի ավարտը, որը կարող է երկարաձգվել մեկ տարով: Սակայն 2020թ. մարտի 31-ի դրությամբ այս հնարավորությունից օգտվել է 10%-ից պակաս հաճախորդ, իսկ 2020թ. ապրիլի 23-ի դրությամբ՝ 20%-ից պակաս հաճախորդ:

Բանկը դիտարկել է հիվանդության բռնկման ազդեցությունն իր իրացվելիության դիրքի և կապիտալի համարժեքության ցուցանիշի վրա տարբեր սթրեսային սցենարների ներքո, և ղեկավարությունը գտնում է, որ այն չի ունենա լայնամասշտաբ ազդեցություն Բանկի ֆինանսական վիճակի վրա:

Բացի այդ, կարգավորող մարմինը (ՀՀ կենտրոնական բանկը) հայտարարել է, որ կցուցաբերի աջակցություն Հայաստանի Հանրապետության ֆինանսական հատվածին, մեղմացնելով նորմատիվները և աջակցելով իրացվելիության հարցում, անհրաժեշտության դեպքում, և ՀՀ կառավարությունն իրականացնում է տնտեսության աջակցության ծրագրեր, որոնք նպատակաուղղված են COVID 19 հետևանքների հաղթահարմանը:

Այնուամենայնիվ, ղեկավարությունը չի կարող բացառել այն հնարավորությունը, որ սահմանափակումների ժամկետի երկարաձգումը բացասաբար կանդրադառնա Բանկի, վերջինիս ֆինանսական վիճակի և գործառնական գործունեության արդյունքների վրա միջին ժամկետի և երկարաժամկետ հեռանկարում: Բանկը շարունակում է ուշադիր հետևել իրավիճակին և կձեռնարկի պատասխան քայլեր հնարավոր իրադարձությունների և հանգամանքների ազդեցությունը մեղմելու համար դրանց առաջացմանը զուգահեռ:

«Այդի Բանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 9
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 10
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 11
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 12
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 13

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,
Վ. Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Այդի Բանկ» ՓԲԸ-ի Բաժնետերերին և Խորհրդին

Կարծիք

Մենք իրականացրել ենք «Այդի Բանկ» ՓԲԸ-ի (Բանկ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

7.10.1.1.1 Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

7.10.1.1.2 Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքի (ՀԷՄՍԽ օրենսգիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և մենք կատարել ենք էթիկային վերաբերող մեր պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ օրենսգրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

7.10.1.1.3

7.10.1.1.4 Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցեր են հանդիսանում այն հարցերը, որոնք մեր մասնագիտական կարծիքով, առավել էական նշանակություն ունեն հաշվետու տարվա ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի համար: Մենք անդրադարձել ենք այս հարցերին ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընդհանուր շրջանակներում և վերջիններիս վերաբերյալ մեր կարծիքը ձևավորելիս և չենք արտահայտում առանձին կարծիք այս հարցերի վերաբերյալ:

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն,
շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International")
կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ

Սպասվող պարտքային վնաս հաճախորդներին տրված վարկերի գծով	
Ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 23-ի (բ) կետում և Ծանոթագրություն 13-ում:	
Աուդիտի առանցքային հարցեր	*Ինչպես ենք անդրադարձել հարցին աուդիտի ընթացքում*
Հաճախորդներին տրված վարկերը կազմում են ակտիվների 50%-ը և ներառում են սպասվող պարտքային վնասի գծով պահուստը, որը կանոնավոր հիմունքով գնահատվում է և զգայուն է կիրառվող ենթադրությունների նկատմամբ: 2018թ. հունվարի 1-ից Բանկը կիրառում է սպասվող պարտքային վնասի գծով պահուստի գնահատման նոր մոդել, որը ղեկավարությունից պահանջում է կիրառել մասնագիտական դատողություններ և կատարել ենթադրություններ հետևյալ առանցքային հարցերի հետ կապված. – պարտքային ռիսկի էական աճի և հաճախորդներին տրված վարկերի գծով պարտականությունները չկատարելու դեպքերի ժամանակին բացահայտում (բաշխում 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի միջև՝ ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտի (այսուհետ՝ ՖՀՄՍ 9) համաձայն), – պարտականությունների չկատարման հավանականության և պարտականությունների չկատարման դեպքում առաջացող վնասի գնահատում, – լրացուցիչ ճշգրտման գնահատում՝ հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը	Մենք վերլուծել ենք սպասվող պարտքային վնասի գնահատմանը վերաբերող Բանկի մեթոդաբանության և քաղաքականության առանցքային դրույթները ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ համապատասխանության տեսանկյունից՝ գործընթացում ներառելով նաև ֆինանսական ռիսկերի կառավարման գծով մեր մասնագետներին: Սպասվող պարտքային վնասի գնահատման հետ կապված ղեկավարության կողմից կատարած մասնագիտական դատողությունների և ենթադրությունների տեղին լինելը վերլուծելու համար մենք մեր աուդիտորական ընթացակարգերում ներառել ենք հետևյալը. – իրավաբանական անձանց տրված վարկերի համար գնահատել և ստուգել ենք վարկերի բաշխումը փուլերին վերահսկող համակարգի կառուցվածքը և գործառնական արդյունավետությունը: – իրավաբանական անձանց տրված վարկերի ընտրանքի համար ստուգել ենք, թե արդյոք փուլերը ճիշտ են որոշված Բանկի կողմից՝ վերլուծելով ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվությունը, ինչպես նաև Բանկի կողմից կիրառված ենթադրությունները և մասնագիտական դատողությունները: – իրավաբանական անձանց տրված վարկերի ընտրանքի համար ստուգել ենք պարտականությունների հավանականության հաշվարկի համար ելակետային տվյալների ճշգրտությունը: – 1-ին և 2-րդ փուլերին բաշխված հաճախորդներին տրված վարկերի համար, որոնց դեպքում սպասվող պարտքային վնասը գնահատվում է հավաքական հիմունքով, ստուգել ենք համապատասխան մոդելների տեղին լինելը և կիրառումը և համեմատել ենք

ներառելու հետ կապված, – ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսում 3-րդ փուլ դասակարգված հաճախորդներին տրված վարկերի համար: Հաճախորդներին տրված վարկերի մեծ ծավալի պատճառով, սպասվող պարտքային վնասի նոր մոդելի կիրառումը և վերջինիս հետ կապված գնահատմանը վերաբերող անորոշությունը դիտարկվում են որպես աուդիտի առանցքային հարց:	մոդելի ելակետային տվյալներն առաջնային փաստաթղթերի տվյալների հետ ընտրանքային կարգով. – վերլուծել ենք հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը ներառելու հետ կապված լրացուցիչ ճշգրտման տեղին լինելը, համեմատություն կատարելով մեր սեփական գնահատման հետ՝ հաշվի առնելով ներկայիս տնտեսական իրավիճակը և գործարար միջավայրը փոխառուների որոշ դասերի հետ կապված: – 3-րդ փուլի վարկերի ընտրանքի համար, որոնց դեպքում սպասվող պարտքային վնասը գնահատվում է առանձին հիմունքով, գնահատել ենք ապագա դրամական միջոցների կանխատեսման համար Բանկի կողմից կիրառված ենթադրությունները, ներառյալ՝ իրացվելի գրավի գծով մուտքերի գնահատումը և վերջինիս իրացման ակնկալվող պայմանները՝ հիմք ընդունելով մեր պատկերացումները և շուկայում հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը: Մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել հաճախորդներին տրված այն վարկերի վրա, որոնք հավանաբար կարող են առավելագույնս նշանակալի ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա: – անհատներին տրված վարկերի համար ստուգել ենք սպասվող պարտքային վնասի հաշվարկի ելակետային տվյալների ամբողջականությունը և ճշգրտությունը վերահսկող համակարգի կառուցվածքը և գործառնական արդյունավետությունը, վարկերի գծով վճարումների ուշացումների և մարումների ժամանակին արտացոլումը համապատասխան համակարգերում և վարկերի բաշխումը փուլերին: Ընտրանքային կագով համեմատել ենք ելակետային տվյալները հիմնավորող փաստաթղթերի տվյալների հետ: Մենք գնահատել ենք սպասվող պարտքային վնասի հաշվարկի Բանկի մեթոդաբանության կանխատեսման կարողությունը՝ համեմատելով 2018թ. հունվարի 1-ի դրությամբ կատարած գնահատումները 2018թ. փաստացի արդյունքների հետ: Բացի այդ մենք գնահատել ենք, թե որքան պատշաճորեն են արտացոլում ֆինանսական հաշվետվությունների բացահայտումները

	Բանկի ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտի կիրառում	
Ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 3-ում և Ծանոթագրություն 4-ում:	
Աուդիտի առանցքային հարցեր	***Ինչպես ենք անդրադարձել հարցին աուդիտի ընթացքում***
Ֆինանսական գործիքների օգտագործումը Բանկի գործունեության հիմնական մասն է, և ֆինանսական ակտիվները կազմում է Բանկի ակտիվների գերակշիռ մասը: 2018թ. հունավարի 1-ից Բանկը կիրառում է ֆինանսական գործիքների հաշվապահական հաշվառման նոր ստանդարտ՝ ՖՀՄՍ 9-ը, որը նախատեսում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման էական փոփոխություններ: Հաշվի առնելով նոր պահանջների կիրառումը, որոնք էականորեն փոխում են ֆինանսական գործիքների հաշվապահական հաշվառման սկզբունքները, ինչպես նաև այն նշանակալի ազդեցությունը, որը նոր ստանդարտն ունեցել է 2018թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդների, Բանկի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վրա, այս հարցը դիտարկվում են որպես աուդիտի առանցքային հարց:	Մենք վերլուծել ենք ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելների որոշման չափանիշները՝ հարցումներ ուղղելով պատասխանատու աշխատակիցներին, ուսումնասիրելով Բանկի ներքին փաստաթղթերը և վերլուծելով ներքին բիզնես գործընթացները ֆինանսական գործիքների ընտրված խոշոր պորտֆելների գծով: Մենք ստուգել ենք, թե արդյոք Բանկն իրականացրել է պատշաճ գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ՝ վերլուծելով հիմնավորող փաստաթղթերը ֆինանսական ակտիվների ընտրանքի համար: Մենք նաև գնահատել ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները պատշաճ կերպով են բացահայտում ֆինանսական գործիքների դասակարգման և չափման սկզբունքները, ինչպես նաև Բանկի կողմից ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է տարեկան հաշվետվությունում պարունակվող տեղեկատվությունը, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը կտրամադրվի մեզ աուդիտորական եզրակացության ստորագրման ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր եզրակացությունը չի անդրադառնում այլ տեղեկավությանը, և մենք չենք արտահայտի որևէ հավաստիացում այդ տեղեկատվության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պատասխանատվությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն դառնա հասանելի, և այդ տեղեկատվությանը ծանոթանալիս դիտարկել, թե արդյոք այլ տեղեկատվությունն էականորեն չի համապատասխանում ֆինանսական հաշվետվություններին կամ աուդիտի ընթացքում մեր կողմից ձեռք բերված տեղեկատվությանը կամ կարող է այլ կերպ ճշգրիտ ներկայացված չլինել:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողության գնահատման համար, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Բանկը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են վերահսկել Բանկի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

7.10.1.1.5 Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թերահավատություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադարձող աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընացակարգեր մշակելու, բայց ոչ Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:

– կատարում ենք եզրահանգում ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է լուրջ կասկածներ հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

– գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած նշանակալից հարցերի, այդ թվում՝ աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:

Մենք նաև ներկայացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հայտարարություն առ այն, որ մենք հետևում ենք էթիկայի համապատասխան պահանջներին և տեղեկացնում ենք նրանց այն բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք խելամիտ կերպով կարող են համարվել որպես մեր անկախության վրա ազդեցություն ունեցող և, կիրառելի լինելու դեպքում, պաշտպանություն ապահովող համապատասխան միջոցների մասին:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց տեղեկացված հարցերից մենք ընտրում ենք այն հարցերը, որոնք առավել էական ազդեցություն ունեն հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք ներկայացնում ենք այս հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կանոնակարգով չի թույլատրվում հարցի հանրային բացահայտում, կամ երբ հազվադեպ դեպքերում մենք որոշում ենք, որ հարցը չպետք է ներկայացվի մեր եզրակացությունում, քանի որ ներկայացման բացասական հետևանքներն ըստ ողջամիտ ակնկալիքների կարող են գերակշռել ներկայացման հետ կապված հանրային հետաքրքրվածության առավելությունները:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ

26 ապրիլի 2019թ.

«Այդի Բանկ» ՓԲԸ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծնթգ.	2018թ. հազ. դրամ	2017թ.* հազ. դրամ
Արդյունավետ տոկոադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	5	11,634,191	22,036,520
Տոկոսային ծախս	5	(4,510,499)	(13,454,144)
Զուտ տոկոսային եկամուտ		**7,123,692**	**8,582,376**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ		738,970	559,827
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս		(454,591)	(310,229)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ		**284,379**	**249,598**
Զուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից		361,857	468,190
Զուտ եկամուտ/ (վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներից		165,636	(255,836)
Զուտ իրացված օգուտ ներդրումային արժեթղթերի գծով		1,481,635	911,472
Զուտ այլ գործառնական եկամուտ		496,934	979,287
Գործառնական եկամուտ		**9,914,133**	**10,935,087**
Զուտ արժեզրկումից կորուստ ֆինանսական գործիքների գծով	6	(1,813,773)	(4,060,115)
Անձնակազմի գծով ծախսեր		(3,002,806)	(2,814,399)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	7	(2,204,748)	(1,683,991)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		**2,892,806**	**2,376,582**
Շահութահարկի գծով ծախս	8	(709,836)	(529,802)
Շահույթ տարվա համար		**2,182,970**	**1,846,780**
Այլ համապարփակ (վնաս)/ եկամուտ՝ առանց շահութահարկի			
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.			
- իրական արժեքի զուտ փոփոխություն	8	(86,988)	2,146,088
- շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	8	(1,185,308)	(729,178)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս		*(1,272,296)*	*1,416,910*
Հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս			
Վերագնահատված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք	8	(45,691)	-
Ընդամենը հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս		*(45,691)*	-
Այլ համապարփակ (վնաս)/ եկամուտ տարվա համար՝ առանց շահութահարկի		**(1,317,987)**	**1,416,910**
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		**864,983**	**3,263,690**

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Ստանդարտին անցման ընտրված մեթոդի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել (Ծանոթագրություն 2 (ե)): ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում Բանկը փոխել է որոշ հոդվածների ներկայացումը, համադրելի տեղեկատվությունը համապատասխանաբար վերաներկայացվել է (Ծանոթագրություն 3 (ճ)):

9-ից 111-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2019թ. ապրիլի 25-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Այդի Բանկ» ՓԲԸ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Միեր Աբրահամյան Վարչության նախագահ	Անուշիկ Խաչատրյան Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Ծնթգ.	2018թ. հազ. դրամ	2017թ.* հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	11,260,756	17,229,253
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր			
- Բանկի կողմից պահվող	10	4,728,200	29,406,955
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր			
- Բանկի կողմից պահվող	10	15,136,723	-
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	10	5,587,003	-
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		-	9,952
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	11	13,068,992	11,476,427
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	12	3,429,813	6,493,486
Հաճախորդներին տրված վարկեր	13	61,470,502	57,763,789
Ընթացիկ հարկային ակտիվ		139,189	142,648
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	14	5,061,844	5,034,278
Այլ ակտիվներ	15	2,190,934	1,301,201
Ընդամենը ակտիվներ		**122,073,956**	**128,857,989**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		1,337	229,753
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	16	5,245,790	4,988,819
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	17	6,771,902	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	18	10,823,040	10,815,059
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	19	56,320,356	64,651,008
Այլ փոխառություններ	20	691,990	1,357,706
Հետաձգված հարկային պարտավորություններ	8	617,324	1,486,487
Այլ պարտավորություններ	21	1,338,095	943,640
Ընդամենը պարտավորություններ		**81,809,834**	**84,472,472**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	22	33,971,850	33,971,850
Էմիսիոն եկամուտ		5,014,099	5,014,099
Շենքերի վերագնահատումից աճ		110,808	156,499
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ		106,977	3,342,351
Չբաշխված շահույթ		1,060,388	1,900,718
Ընդամենը սեփական կապիտալ		**40,264,122**	**44,385,517**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**122,073,956**	**128,857,989**

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Ստանդարտին անցման ընտրված մեթոդի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել (Ծանոթագրություն 2 (ե)): ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում Բանկը փոխել է որոշ հոդվածների ներկայացումը, համադրելի տեղեկատվությունը համապատասխանաբար վերաներկայացվել է (Ծանոթագրություն 3 (ճ)):

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Ծնթգ.	2018թ. հազ. դրամ	2017թ.* հազ. դրամ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Ստացված տոկոսներ		11,012,778	23,815,358
Վճարված տոկոսներ		(4,822,049)	(14,586,776)
Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ		738,970	559,827
Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ		(454,591)	(310,229)
Զուտ վճարումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով		(52,828)	(20,348)
Զուտ մուտքեր արտարժութային գործառնությունների գծով		638,962	343,087
Այլ ստացված եկամուտ		381,597	885,476
Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ		(4,768,296)	(3,868,686)
Գործառնական ակտիվների նվազում/(աճ)			
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		3,075,123	1,229,639
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ		(1,877,157)	(10,886,898)
Հաճախորդներին տրված վարկեր		(9,413,928)	151,659,011
Այլ ակտիվներ		(208,535)	2,581,737
Գործառնական պարտավորությունների (նվազում)/աճ			
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ		327,598	(61,167,608)
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		6,757,099	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		(7,569,030)	(101,202,329)
Այլ պարտավորություններ		499,054	(30,021)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը		**(5,735,233)**	**(10,998,760)**
Վճարված շահութահարկ		(33,000)	(19,689)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր		**(5,768,233)**	**(11,018,449)**
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(5,194,557)	(8,547,725)
Մուտքեր ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից		6,457,542	460,795
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(593,278)	(596,013)
Ներդրումային գործունեությունից ստացված/ներդրումային գործունեության համար (օգտագործված) դրամական միջոցների հոսքեր		**669,707**	**(8,682,943)**
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Մուտքեր պարտքային արժեթղթերի թողարկումից	18	2,418,750	8,336,627
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	18	(2,422,500)	-
Այլ ստացված փոխառություններ	20	315,235	414,599
Այլ փոխառությունների մարում	20	(968,962)	(2,305,099)
Ֆինանսավորման գործունեության համար (օգտագործված)/ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր		**(657,477)**	**6,446,127**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում		**(5,756,003)**	**(13,255,265)**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(212,494)	423,029
Դրամական միջոցները և դրանց համարժեքները (համախառն) տարեսկզբի դրությամբ		17,229,253	30,061,489
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	9	**11,260,756**	**17,229,253**

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Ստանդարտին անցման ընտրված մեթոդի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել (Ծանոթագրություն 2 (ե)): ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում Բանկը փոխել է որոշ հոդվածների ներկայացումը, համադրելի տեղեկատվությունը համապատասխանաբար վերաներկայացվել է (Ծանոթագրություն 3 (ճ)):

¸ñ³Ù³Ï³Ý ÙÇçáóÝ»ñÇ Ñáëù»ñÇ Ù³ëÇÝ Ñ³ßí»ïíáõÃÛáõÝÁ å»ïù ¿ ¹Çï³ñÏíÇ ýÇÝ³Ýë³Ï³Ý Ñ³ßí»ïíáõÃÛáõÝÝ»ñÇ µ³ÕÏ³óáõóÇã Ù³ëÁ Ï³½ÙáÕ Í³ÝáÃ³·ñáõÃÛáõÝÝ»ñÇ Ñ»ï Ù»Ïï»Õ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Բաժնետի-րական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Շենքերի վերագնա-հատումից աճ	Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	33,971,850	5,014,099	156,499	1,925,441	53,938	41,121,827
Ընդամենը համապարփակ եկամուտ						
Շահույթ տարվա համար	-	-	-	-	1,846,780	1,846,780
Այլ համապարփակ եկամուտ						
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	2,146,088	-	2,146,088
Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	(729,178)	-	(729,178)
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	-	1,416,910	-	1,416,910
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	**-**	**-**	**-**	**1,416,910**	**1,846,780**	**3,263,690**
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**33,971,850**	**5,014,099**	**156,499**	**3,342,351**	**1,900,718**	**44,385,517**
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	33,971,850	5,014,099	156,499	3,342,351	1,900,718	44,385,517
Ճշգրտում ՖՀՄՍ 9-ի սկզբանական կիրառման ժամանակ՝ առանց հարկի (Ծնթգ. 4)	-	-	-	(1,963,078)	(3,023,300)	(4,986,378)
Վերահաշվարկված մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	33,971,850	5,014,099	156,499	1,379,273	(1,122,582)	39,399,139
Ընդամենը համապարփակ եկամուտ						
Շահույթ տարվա համար	**-**	**-**	**-**	**-**	2,182,970	2,182,970
Այլ համապարփակ վնաս						
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ						
- Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	**-**	**-**	**-**	(86,988)	-	(86,988)
- Շահույթ կամ վնաս փոխանցված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	**-**	**-**	**-**	(1,185,308)	-	(1,185,308)
Շենքերի վերագնահատման պահուստի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	**-**	**-**	(45,691)	**-**	**-**	(45,691)
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	(45,691)	(1,272,296)	-	(1,317,987)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Բաժնետի-րական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Շենքերի վերագնա-հատումից աճ	Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	(45,691)	(1,272,296)	2,182,970	864,983
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	33,971,850	5,014,099	110,808	106,977	1,060,388	40,264,122

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Ստանդարտին անցման ընտրված մեթոդի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել (Ծանոթագրություն 2 (ե)): ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում Բանկը փոխել է որոշ հոդվածների ներկայացումը, համադրելի տեղեկատվությունը համապատասխանաբար վերաներկայացվել է (Ծանոթագրություն 3 (ճ)):

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

61 Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն (Բանկ) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 1990թ-ին և վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության 2007թ-ին: Նախկինում Բանկն իր գործունեությունն իրականացրել է «Անելիք Բանկ» ՓԲԸ անվանմամբ:

Բանկի հիմնական գործունեությունն է հանդիսանում ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկային գործառնությունների իրականացումը, երաշխավորությունների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական համակարգի անդամ:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վարդանանց փ. 13:

Բանկն ունի 13 մասնաճյուղ: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկի բաժնետերերն են FISTOCO LTD (59.68%) և Creditbank SAL (40.32%): Բանկի վերջնական վերահսկող անձն է հանդիսանում պրն. Վարդան Դիլանյանը, ով իրավասու է ղեկավարել Բանկի գործառնություններն իր սեփական հայեցողությամբ և իր շահերից ելնելով:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 27-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

62 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

Այս ֆինանսական հաշվետվություններն իրենցից ներկայացնում են Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթը, որտեղ կիրառվել են ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* և ՖՀՄՍ 15 *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»* ստանդարտների պահանջները: Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների փոփոխությունները ներկայացված են Ծանոթագրություն 2-ի (ե) կետում:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով և վերագնահատված արժեքով հաշվառվող շենքերի:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են

այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարված դատողությունների վերաբերյալ տեղեկատվութունը, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Կիրառելի է միայն 2018թ. համար

  – ֆինանսական ակտիվների դասակարգում. այն բիզնես մոդելի գնահատում, որի շրջանակներում պահվում են ակտիվները և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հանդիսանում են միայն միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 3 (ե) (i):

  – չափանիշների սահմանում որոշելու համար, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո, որոշելու համար սպասվող պարտքային վնասի չափման մեջ հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և սպասվող պարտքային վնասի չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն և հաստատում – Ծանոթագրություն 23 (բ):

Ենթադրություններ և գնահատումների անորոշություն

Այն ենթադրությունների և գնահատումների հետ կապված անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք ենթադրում են 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա տվյալների էական ճշգրտման մեծ ռիսկ, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Կիրառելի է միայն 2018թ. համար

  – ֆինանսական գործիքների արժեզրկում. որոշել ելակետային տվյալները սպասվող պարտքային վնասի գնահատման մոդելի համար, այդ թվում՝ հեռանկարի վերաբերյալ տեղեկատվության ներառումը – Ծանոթագրություն 23 (բ):

- Կիրառելի է 2018թ. և 2017թ. համար

  – ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի գնահատում – Ծանոթագրություն 28,
  – շենքերի վերագնահատում – Ծանոթագրություն 14,
  – պայմանական դեպքեր և դատական վարույթներ – Ծանոթագրություն 26 (բ),
  – բռնագանձված ակտիվների արժեզրկման գնահատում – Ծանոթագրություն 13:

(ե) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը և ՖՀՄՍ 15-ը 2018թ. հունվարի 1-ից: 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել նաև մի քանի այլ նոր ստանդարտներ, սակայն այդ ստանդարտներն էական ազդեցություն չունեն Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Բանկի կողմից ՖՀՄՍ 9-ին անցման ընտրված մեթոդի համաձայն՝ այս ֆինանսական հաշվետվություններում համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել ստանդարտի պահանջներն արտացոլելու համար:

ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառման հիմնական արդյունքներն են.

- ֆինանսական ակտիվների գծով ճանաչված արժեզրկումից կորուստների աճը (Ծանոթագրություն 4),
- ՖՀՄՍ 9-ին վերաբերող լրացուցիչ բացահայտումները (Ծանոթագրություններ 23 (բ) և 4):

ՖՀՄՍ 15-ի կիրառումն ազդեցություն չի ունեցել Բանկի հաճախորդների հետ պայմանագրերի գծով միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամտի գումարի և ժամկետների և Բանկի կողմից ճանաչված համապատասխան ակտիվների և պարտավորությունների վրա:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

ՖՀՄՍ 9-ը սահմանում է ֆինանսական ակտիվների, ֆինանսական պարտավորությունների և ոչ ֆինանսական միավորների առք ու վաճառքի որոշ պայմանագրերի ճանաչման և չափման պահանջները: Այս ստանդարտը փոխարինում է ՀՀՄՍ 39 *«Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում»* ստանդարտը: ՖՀՄՍ 9-ի պահանջներն էականորեն տարբերվում են ՀՀՄՍ 39-ի պահանջներից: Նոր ստանդարտն առաջադրում է ֆինանսական ակտիվների հաշվառման և ֆինանսական պարտավորությունների հաշվառման որոշ ոլորտների սկզբունքային փոփոխություններ:

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում Բանկը կիրառել է ՀՀՄՍ 1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* ստանդարտի համապատասխան փոփոխությունները, որոնք պահանջում են առանձին տողով ներկայացնել արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտը շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Նախկինում Բանկը բացահայտում էր այդ գումարը ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

Բացի այդ, Բանկը կիրառել է ՖՀՄՍ 7 *«Ֆինանսական գործիքներ. Բացահայտում»* ստանդարտի համապատասխան փոփոխությունները 2018թ. տեղեկատվության բացահայտումների հետ կապված, որոնք սակայն չեն կիրառվել համադրելի տեղեկատվության նկատմամբ:

Ստորև ամփոփ կերպով ներկայացված են ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում տեղի ունեցած առանցքային փոփոխությունները:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների դասակարգում և չափում

ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների երեք հիմնական դաս՝ ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: ՖՀՄՍ 9-ով նախատեսված ֆինանսական ակտիվների դասակարգումը որպես կանոն հիմնված է այն բիզնես մոդելի վրա, որի շրջանակներում կառավարվում է ֆինանսական ակտիվը, և դրամական միջոցների հոսքերի վրա: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ այլևս չեն գործում ՀՀՄՍ 39-ով սահմանված մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների, փոխառությունների և դեբիտորական պարտքերի և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դասերը: ՖՀՄՍ 9-ի համաձայն, եթե պարունակվող ածանցյալ գործիք ներառող հիմնական պայմանագիրը հանդիսանում է ֆինանսական ակտիվ ստանդարտի շրջանակներում, ապա պարունակվող ածանցյալ գործիքը չի առանձնացվում այդ պայմանագրից: Փոխարենը, գնահատվում է ամբողջությամբ վերցված հիբրիդային ֆինանսական գործիքը՝ ստանդարտի համաձայն դասակարգում ստանալու համար: Բանկի կողմից ՖՀՄՍ 9-ի համաձայն ֆինանսական ակտիվների դասակարգման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 3 (ե) (i) կետում:

ՖՀՄՍ 9-ը մեծամասամբ պահպանում է ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման համար գործող ՀՀՄՍ 39-ի պահանջները: Այնուամենայնիվ, թեև ՖՀՄՍ 39-ի համաձայն, որպես իրական արժեքով չափվող նախատեսված պարտավորությունների իրական արժեքի բոլոր փոփոխությունները ճանաչվում էին շահույթում կամ վնասում, ՖՀՄՍ 9-ի համաձայն, իրական արժեքի փոփոխությունները, որպես կանոն, ներկայացվում են հետևյալ կերպ.

- իրական արժեքի փոփոխության այն մասը, որը վերագրելի է պարտավորության պարտքային ռիսկի փոփոխություններին, ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում, իսկ
- իրական արժեքի փոփոխության մնացած մասը ներկայացվում է շահույթի կամ վնասի կազմում:

Բանկի կողմից ՖՀՄՍ 9-ի համաձայն ֆինանսական պարտավորությունների դասակարգման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 3 (ե) (i) կետում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ով սահմանված «կրած վնասի» մոդելը «սպասվող պարտքային վնասի» մոդելով: Արժեզրկման նոր մոդելը կիրառելի է նաև որոշ վարկ տրամադրելու պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի, սակայն ոչ՝ բաժնային ներդրումների համար:

ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ պարտքային վնասն ավելի շուտ է ճանաչվում, քան պահանջվում է ՀՀՄՍ 39-ով: Բանկի կողմից ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջների կիրառման բացատրությունը ներկայացված է Ծանոթագրություն 3 (ե) (iv) կետում:

Անցումը նոր ստանդարտին

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականությունում տեղի ունեցած փոփոխությունները կիրառվել են հետընթաց, բացառությամբ ստորև ներկայացվածի.

- Համադրելի ժամանակաշրջանների տվյալները չեն վերահաշվարկվել: ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում առաջացող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքների տարբերությունները ճանաչվում են չբաշխված շահույթի և պահուստների կազմում 2018թ. հունվարի 1-ի դրությամբ: Համապատասխանաբար, 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար ներկայացված տեղեկատվությունը չի արտացոլում ՖՀՄՍ 9-ի պահանջները և, այդ իսկ պատճառով, համադրելի չէ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար ՖՀՄՍ 9-ի համաձայն ներկայացված տեղեկատվության հետ:

  Բանկն օգտվել է համադրելի ժամանակաշրջանների տվյալների վերահաշվարկ չկատարելը թույլատրող պարզեցումից, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՖՀՄՍ 9-ի արդյունքում ՀՀՄՍ 1-ում կատարված փոփոխությունները պահանջում են առանձին տողով ներկայացնել «արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտը» շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, Բանկը 2017թ. ֆինանսական հաշվետվություններում ներկայացված «տոկոսային եկամուտ» հոդվածը ներկայացրել է «արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ» անվանմամբ:

- Սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ գոյություն ունեցող փաստերի և հանգամանքների հիման վրա կատարվել են հետևյալ գնահատումները.

  – որոշվել է այն բիզնես մոդելը, որի շրջանակներում պահվում է ֆինանսական ակտիվը:

- Եթե պարտքային արժեթուղթն ունի ցածր պարտքային ռիսկ ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ, Բանկը ենթադրում է, որ ակտիվի գծով պարտքային ռիսկն էականորեն չի աճել սկզբնական ճանաչման պահից:

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում տեղի ունեցած փոփոխությունների և դրանց հետևանքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 4-ում:

63 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Բացառությամբ Ծանոթագրություն 2-ի (ե) կետում բացահայտված փոփոխությունների, ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է Բանկի կողմից այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են դրամի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Վերափոխարկման արդյունքում առաջացող արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերափոխարկման արդյունքում առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված արտարժութային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները և ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում ենք ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Տոկոսներ

2018թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Արդյունավետ տոկոսադրույք

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռքբերված կամ տրամադրված արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու սպասվող պարտքային վնասը: Ձեռքբերված կամ տրամադրված արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ սպասվող պարտքային վնասը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված սպասվող պարտքային վնասի գծով պահուստի (կամ նախքան 2018թ. հունվարի 1-ը արժեզրկման գծով պահուստի) մասով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան սպասվող պարտքային վնասի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվն արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լողացող տոկոսադրույքով գործիքների գծով դրամական միջոցների հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխություններն արտացոլելու նպատակով: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է նաև իրական արժեքի հեջավորման հետ կապված ճշգրտումներն արտացոլելու համար այն ամսաթվի դրությամբ, երբ սկսվում է հեջի գծով ճշգրտման ամորտիզացիայի հաշվարկը:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս արժեզրկված չէ, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է:

Տեղեկատվությունն այն մասին, թե որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում արժեզրկված, ներկայացված է Ծանոթագրություն 3 (ե) (iv) կետում:

Ներկայացում

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկած տոկոսային եկամուտը ներառում է՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները,
- այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

Նախքան 2018թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն

Նախքան 2018թ. հունվարի 1-ը կիրառվում էր նույն քաղաքականությունը, բացառությամբ հետևյալի.

- արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն էր, որը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գործողության ակնկալվող ժամկետի (կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակակահատվածի) համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում էր ճշգրիտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում էր ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ապագա պարտքային վնասը:
- ձեռքբերված կամ ստեղծված արժեզրկված ֆինանսական ակտիվների համար պարտքային ռիսկի ճշգրտումով արդյունավետ տոկոսադրույքը սահմանված չէր:

(դ) Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում (տես՝ Ծանոթագրություն 3 (գ):

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ՝ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և սինդիկացված վարկերի գծով միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ վարկը կտրամադրվի վարկավորելու պարտավորվածության շրջանակներում, ապա վարկավորման պարտավորվածության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ պարտավորվածության գործողության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, իսկ այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

vii. Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ – 2018թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և թե՛ ֆինանսական ակտիվների վաճառքի միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով շահույթը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչ որ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով շահույթը և վնասը.

- տոկոսային եկամուտ՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- սպասվող պարտքային վնաս և հակադարձումներ և
- օգուտ և վնաս փոխարժեքային տարբերություններից:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակված շահույթը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Առևտրական նպատակներով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անդառնալիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Բաժնային գործիքներում այս ներդրումների գծով շահույթը և վնասը երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակնհայտորեն իրենցից ներկայացնում են ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում են այլ համապափակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապափակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային շահույթը և վնասը փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասպանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակներում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեության կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունն ուղղված է պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների հոսքերի իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Բանկի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ֆինանսական ակտիվների) արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ ակտիվներից հավաքագրվող պայմանագրային դրամական միջոցների հոսքերից:
- նախորդ ժամանակաշրջանների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, վաճառքների պատճառները և վաճառքների ապագա ծավալների ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների ծավալի վերաբերյալ տեղեկատվությունը առանձին չի դիտարկվում, այն դիտարկվում է իրականացնելիս մեկ ընդհանուր վերլուծություն առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Բանկի առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական միջոցների հոսքերը:

Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական ակտիվները, որոնք կառավարվում են և որոնց արդյունավետությունը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը

հավաքագրելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հավաքագրելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու համար:

Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և վարկավորման հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Բանկը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Այս գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների գումարը և ժամկետը,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամկետ մարման և գործողության ժամկետի երկարաձգման հնարավորությունը,
- պայմանները, որոնք սահմանափակում են Բանկի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ (օրինակ՝ ոչ վերադարձնելի ակտիվների հետ կապված պայմանավորվածություններ),
- առանձնահատկությունները, որոնք փոխում են փողի ժամանակային արժեքի հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, որը հաջորդում է Բանկի կողմից ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելի փոփոխությանը:

Ֆինանսական ակտիվներ – նախքան 2018թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն

Բանկը դասակարգում էր իր ֆինանսական ակտիվները ստորև բերվող դասերից մեկին.

- վարկեր և փոխառություններ,
- մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ և այս դասի շրջանակներում որպես՝
  - առևտրական նպատակներով պահվող, կամ
  - նախատեսված որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Տես՝ Ծանոթագրություն 3 (է), (ը) կետերը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և վարկ տրամադրելու պարտավորվածությունների, դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

viii. Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները, կամ որում Բանկը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում նախկինում ճանաչված կուտակված որևէ շահույթի կամ վնասի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

2018թ. հունվարի 1-ից որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախատեսված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակված շահույթը/վնասը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի արժեզրկման ժամանակ, ինչպես բացատրվում է Ծանոթագրություն 3 (ե) (i) կետում: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահվող մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերը և հատույցները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Նման գործարքների օրինակներ են արժեթղթերի որպես փոխառություն տրամադրումը և վաճառքի և հետգնման գործարքները:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է նրա ներգրավվածությունը ֆինանսական ակտիվում, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ վերջինիս պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

ix. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխություն

2018թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում են, Բանկը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները: Որպես փոփոխության մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ.

- վճարները, որոնք դիտարկվում են նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարներ, որոնք իրենցից ներկայացվում են գործարքի հետ կապված ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ,
- մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վնասում՝ որպես ապաճանաչումից առաջացող շահույթի կամ վնասի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվներից կամ ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե առաջանում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ Բանկի կողմից տոկոսադրույքների փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխության պատճառով, եթե վարկային պայմանագրով Բանկն իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինող ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերից: Բանկը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը քանակական և որակական գործոնների հիման վրա հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արտարժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը:

Եթե դրամական միջոցների հոսքերի փոփոխությունը պայմանավորված է վարկառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն փոփոխության նպատակն ակտիվի արժեքի առավելագույն չափով հատուցումն է ըստ պայմանագրի սկզբնական պայմանների, այլ ոչ՝ էականորեն տարբեր պայմաններով նոր ակտիվի ստեղծումը: Եթե Բանկը մտադիր է այնպես փոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական միջոցների հոսքերը, ապա այն նախ պետք է դիտարկի ակտիվի մի մասի դուրսգրման հնարավորությունը նախքան փոփոխությունը կատարելը (տես՝ ստորև

դուրսգրման քաղաքականություն): Այս մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և հանգեցնում է նրան, որ ապաճանաչման չափանիշները սովորաբար չեն բավարարվում նման դեպքերում: Բանկն իրականացնում է նաև որակական գնահատում, որոշելու համար փոփոխության նշանակալի լինելը:

Եթե ամորտիզացված արժեքով կամ այլ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվի փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես շահույթի կամ վնասի փոփոխություն՝ շահույթի կամ վնասի կազմում: Լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների համար փոփոխությունից առաջացող շահույթը կամ վնասը հաշվարկելու համար կիրառված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է՝ արտացոլելու համար փոփոխության պահին գործող ընթացիկ շուկայական պայմանները: Փոփոխության շրջանակներում կրած ցանկացած ծախսումները կամ վճարված վճարները ճշգրտում են փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված ֆինանսական ակտիվի գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Եթե այս փոփոխությունն իրականացվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա շահույթը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ:

Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում վարկառուն հնարավորություն ունի ժակետից շուտ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Բանկը հաշվառում է տոկոսադրույքի փոփոխությունը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի կազմում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության

դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր փոփոխված ֆինանսական պարտավորությունը:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը:

Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արտարժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմանների համաձայն դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները (առանց ստացված վճարների) և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության փոփոխությունը չի բավարարում ապաճանաչման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, զեղչելով փոփոխված դրամական միջոցների հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների համար փոփոխությունից առաջացող շահույթը կամ վնասը հաշվարկելու համար կիրառված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է՝ արտացոլելու համար փոփոխության պահին գործող ընթացիկ շուկայական պայմանները: Ցանկացած կրած ծախսումները կամ վճարված վճարները ճանաչվում են որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում են փոփոխված ֆինանսական պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում՝ գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

Նախքան 2018թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում էին, Բանկը գնահատում էր, թե արդյոք փոփոխված ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր էին: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր էին, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում էին ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում էր և ճանաչվում էր նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով:

Եթե այս փոփոխությունն իրականացվում էր վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով և ակտիվը չէր ապաճանաչվում, ակտիվի արժեզրկումը չափվում էր կիրառելով նախքան փոփոխությունը գործող տոկոսադրույքով:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում էր ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում էին վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր էին: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում էր նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում էր շահույթի կամ վնասի կազմում: Վճարված հատուցումը ներառում էր փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր փոփոխված ֆինանսական պարտավորությունը:

Եթե ֆինանսական պարտավորության փոփոխությունը չէր բավարարում ապաճանաչման պայմանները, կրած ծախսումները կամ վճարված վճարները ճանաչվում էին որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում էին փոփոխված ֆինանսական պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում՝ գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

x. Արժեզրկում

Տես՝ նաև Ծանոթագրություն 23 (բ):

2018թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Բանկը ճանաչում է պահուստ սպասվող պարտքային վնասի գծով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող հետևյալ ֆինանսական գործիքների համար.

- պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր և
- վարկ տրամադրելու պարտավորվածություններ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում:

Բանկը չափում է վնասի գծով պահուստը ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով.

- պարտքային ներդրումային արժեթղթեր, եթե որոշվել է, որ դրանք ունեն ցածր պարտքային ռիսկ հաշվետու ամսաթվի դրությամբ, և
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկն էականորեն չի աճել սկզբնական ճանաչման պահից (տես՝ Ծանոթագրություն 23 (բ)):

Բանկը չի կիրառում ցածր պարտքային ռիսկի համար գործող բացառություն որևէ ֆինանսական գործիքի նկատմամբ:

12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է սպասվող պարտքային վնասի այն մասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման այն դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնաս, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է այն սպասվող պարտքային վնասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում է ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ:

Սպասվող պարտքային վնասի չափում

Սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է ըստ պարտականությունների չկատարման հավանականության աստիճանի կշռված պարտքային վնասի գնահատականը և չափվում է հետևյալ կերպ.

- *ֆինանսական ակտիվներ, որոնք արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ.* որպես բոլոր պակասող դրամական միջոցների ներկա արժեք (այսինքն՝ տարբերությունն այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Բանկը պետք է ստանա պայմանագրի համաձայն և որոնք Բանկն ակնկալում է ստանալ),
- *ֆինանսական ակտիվներ, որոնք արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ.* որպես համախառն հաշվեկշռային արժեքի և ապագա գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի տարբերություն,
- *վարկ տրամադրելու պարտավորվածությունների չօգտագործված մաս*. որպես այն տարբերության ներկա արժեք, որը գոյություն ունի պայմանագրային դրամական միջոցների հոսքերի, որոնք Բանկը պետք է ստանա, եթե վարկառուն օգտվի վարկ ստանալու իր իրավունքից, և այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Բանկն ակնկալում է ստանալ,
- *ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*. որպես այն ակնկալվող վճարումների ներկա արժեք, որոնք կվճարվեն տիրապետողին պարտքային վնասը հատուցելու համար՝ հանած այն գումարները, որոնք Բանկն ակնկալում է հետ ստանալ:

Տես՝ նաև Ծանոթագրություն 23 (բ):

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերանայվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տես՝ Ծանոթագրություն 3 (ե) (ii)), և սպասվող պարտքային վնասը չափվում է հետևյալ կերպ.

- Եթե պայմանների ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով պակասող դրամական միջոցների հաշվարկում (տես՝ Ծանոթագրություն 23 (բ)):
- Եթե պայմանների ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական միջոցների հոսքեր՝ վերջինիս ապաճանաչման ժամանակ: Այս գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով պակասող դրամական միջոցների հաշվարկում, որոնք զեղչվում են ապաճանաչման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային

ֆինանսական ակտիվներն արժեզրկված լինելու տեսանկյունից (որոնք դիտարկում ենք որպես 3-րդ փուլի ֆինանսական գործիքներ): Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե տեղի են ունցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու վկայությունը ներառում է հետևյալ դիտարկելի տվյալները.

- վարկառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, այդ թվում՝ պարտականությունների չկատարումը կամ վճարման ուշացումը,
- Բանկի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- վարկառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերանայվել են վարկառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է արժեզրկված, եթե գոյություն չունի վկայություն, որ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը չստանալու ռիսկն էականորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, անհատներին տրված վարկերի դեպքում արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- Վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությունում:
- Վարկունակության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից:
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:
- Պարտքի պայմանների վերանայման հավանականությունը, որի արդյունքում տիրապետողները կարող են վնաս կրել պարտքը կամավոր կամ պարտադիր կերպով ներելու հետևանքով:
- Գործող միջազգային աջակցման մեխանիզմները, որոնք թույլ են տալիս տվյալ երկրին տրամադրել անհրաժեշտ աջակցություն որպես «վերջին հնարավոր վարկատու», ինչպես նաև կառավարությունների և գործակալությունների հրապարակային հայտարարություններում նշված այդ մեխանիզմները կիրառելու մտադրությունը: Սա ներառում է նշված մեխանիզմների աշխատանքի արդյունավետության և, անկախ քաղաքական մտադրություններից, պահանջվող չափանիշները բավարարելու կարողության առկայության գնահատումը:

Սպավող պարտքային վնասի գծով պահուստի ներկայացում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Սպավող պարտքային վնասի գծով պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

- *ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝* որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,
- *վարկ տրամադրելու պարտավորվածություններ և ֆինանսական երաշխավորության պայմանագրեր՝* սովորաբար որպես պահուստ,
- *երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղկացուցիչ, և Բանկը չի կարող տարանջատել վարկ տրամադրելու պարտավորվածության բաղկացուցչի գծով սպասվող պարտքային վնասն արդեն օգտագործված բաղկացուցչի գծով սպասվող պարտքային վնասից,* Բանկը ներակայացնում է վնասի գծով ընդհանուր պահուստ երկու բաղկացուցիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղկացուցչի համախառն հաշվեկշռային արժեքից: Այն գումարը, որով վնասի գծով պահուստը գերազանցում է օգտագործված բաղկացուցչի համախառն հաշվեկշռային արժեքը, ներկայացվում է որպես պահուստ,
- *այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքներ՝* ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վնասի գծով պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեք է հանդիսանում վերջիններիս իրական արժեքը: Այնուամենայնիվ, վնասի գծով պահուստը բացահայտվում է ճանաչվում է իրական արժեքի փոփոխության գծով պահուստում:

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխհատուցելու իրատեսական ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Բանկը որոշում է, որ վարկառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական միջոցների հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այս գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:
Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «Ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ՝ վճարման ենթակա գումարների վերադարձման Բանկի ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

Ֆինանսական ակտիվի անբաժանելի մասը չհադիսացող ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բանկը գնահատում է, թե արդյոք ֆինանսական երաշխավորության պայմանագիրը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, որը հաշվառվում է որպես այդ գործիքի բաղադրիչ, կամ արդյոք այն հանդիսանում է առանձին հաշվառվող

պայմանագիր: Այս գնահատումը կատարելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- արդյոք երաշխավորությունը նախատեսված է պարտքային գործիքի պայմանագրի պայմաններով,
- արդյոք երաշխավորության պայմանագիրը կնքվել է պարտքային գործիքի պայմանագրի հետ նույն ժամանակ և հաշվի առնելով վերջինիս պայմանները և
- արդյոք երաշխավորությունը տրամադրվել է փոխառուի մայր կազմակերպության կամ այն փոխառուի խմբի անդամ հանդիսացող որևէ այլ կազմակերպության կողմից:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման հետ կապված ցանկացած վճարվելիք հավելաճար հաշվառվում է որպես այդ ակտիվի ձեռքբերման գործարքի հետ կախված ծախսում: Պարտքային գործիքի իրական արժեքը և սպասվող պարտքային վնասը չափելիս Բանկը հաշվի առնում երաշխավորությամբ ապահովվող պաշտպանության ազդեցությունը:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը չի հանդիսանում է պարտքային գործիքի անբաժանելի տարր, ապա այն ճանաչում է ակտիվ, որն իրենից ներկայացնում է երաշխավորության հավելավճարի գծով կանխավճար, և պարտքային վնասի դիմաց հատուցում ստանալու իրավունք: Կանխավճարի տեսքով վճարված հավելավճարի գծով ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե ֆինանսական ակտիվը, որի համար ձեռք է բերվել երաշխավորությունը, արժեզրկված չէ և դրա գծով չի գրանցվել պարտքային ռիսկի էական աճ երաշխավորությունը ստանալու պահին: Այս ակտիվները ճանաչվում են «այլ ակտիվներ» հոդվածի կազմում: Բանկը հատուցման իրավունքի գծով շահույթը կամ վնասը ներակայցնում է շահույթում կամ վնասում՝ «պարտքային ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ» հոդվածում:

Նախքան 2018թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն

Արժեզրկման անկողմնակալ վկայություն

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում էր, թե արդյոք գոյություն ուներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվների արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն: Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում էր, երբ առկա էր անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի(ների) սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած կորստի դեպքերի մասին, և այդ կորստի դեպքն ազդեցություն էր ունեցել ֆինանսական ակտիվի(ների) գծով գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա, որոնք հնարավոր էր արժանահավատորեն գնահատել:
Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը ներառում էր՝

- վարկառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,

- պարտավորությունների չկատարումը կամ վճարումների ուշացումը վարկառուի կողմից,
- Բանկի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները,
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը, կամ
- ակտիվների խմբին վերաբերող դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կամ թողարկողների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կամ թողարկողների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանները:

Հնարավորության դեպքում Բանկը փորձում էր վերանայել վարկի պայմանները՝ նախընտրելով դրա գրավի բռնագանձմանը: Սա կարող էր ներառել մարումների ժամկետի երկարաձգումը և նոր պայմանների համաձայնեցումը:

Պայմանների այդպիսի վերանայումը հաշվառվում էր հետևյալ կերպ.

- Եթե վարկի արժույթը փոխվել էր, ապա հին վարկն ապաճանաչվում էր և նոր վարկ էր ճանաչվում:
- Եթե վարկի պայմանների վերանայումը պայմանավորված չէր վարկառուի ֆինանսական դժվարություններով, Բանկը կիրառում էր նույն մոտեցումը, որն օգտագործում է վարկային պորտֆելի համար:
- Եթե վարկի պայմանների վերանայումը պայմանավորված էր վարկառուի ֆինանսական դժվարություններով, և վարկն արժեզրկվում էր պայմանների վերանայումից հետո, ապա Բանկը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված նոր դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի և նախքան պայմանների վերանայումը հաշվեկշռային արժեքի միջև տարբերությունը ճանաչում էր տվյալ ժամանակաշրջանի արժեզրկման գծով պահուստում: Եթե վարկը չէր արժեզրկվում պայմանների վերանայումից հետո, ապա Բանկը վերահաշվարկում էր արդյունավետ տոկոսադրույքը:

Պայմանների վերանայումից հետո վարկն այլևս չէր համարվում ժամկետանց: Ղեկավարությունը շարունակաբար վերահսկում էր վերանայված պայմաններով վարկերը՝ հավաստիանալու համար, որ բոլոր չափանիշներն պահպանված են, և որ ապագա վճարումները, ամենայն հավանականությամբ, կիրականացվեն: Վարկերը շարունակում էին լինել առանձին կամ հավաքական արժեզրկման գնահատման առարկա՝ կիրառելով վարկի սկզբնական կամ ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքը:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս Բանկը ձեռնարկում էր նույն քայլերն ինչ որ և 2018թ. հունվարից հետո:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Բանկը վերանայում էր իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Բանկը նախ գնահատում էր, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի էին, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չէին: Եթե Բանկը որոշում էր, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկար, ապա այն ներառում էր այդ վարկը կամ դեբիտորական պարտքը պարտքային ռիսկի համանման բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին էին գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում էր ճանաչվել, չէին ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա էր վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում էր որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխավորությունների և գրավի գծով ստացվելիք գումարների ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա կատարվել էին ճշգրտումներ, հանդիսանում էին դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում էին վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող էին լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ հանգամանքներին: Դա կարող էր տեղի ունենալ այն դեպքերում, երբ վարկառուն ուներ ֆինանսական դժվարություններ և առկա էին քիչ քանակությամբ պատմական տվյալներ համանման վարկառուների վերաբերյալ: Այդպիսի դեպքերում արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Բանկն օգտագործում էր իր փորձը և դատողությունները:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում էին շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի էր անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէր, վարկը դուրս էր գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Բանկը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստները) դուրս էր գրում, երբ ղեկավարությունը որոշում էր, որ վարկը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում էին վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կազմում ընդգրկված չգնահատվող բաժնային գործիքները, որոնք չէին հաշվառվում իրական արժեքով, քանի որ այն հնարավոր չէր արժանահավատորեն գնահատել: Եթե առկա էր այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում էր որպես ներդրման հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հատույցադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում էին շահույթում կամ վնասում և ենթակա չէին հակադարձման:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում էին այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ եկամտից վերադասակարգվում էր շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում էր ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու ամորտիզացիան, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթի կամ վնասի կազմում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում էին որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում էր, և այդ աճը հնարավոր էր անկողմնակալորեն կապել շահույթի կամ վնասի կազմում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում էր, իսկ հակադարձված գումարը ճանաչվում էր շահույթում կամ վնասում: Այնուհանդերձ, արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում էր այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում:

Դուրսգրում

Բանկն ամբողջությամբ կամ մասնակիորեն դուրս էր գրում վարկը կամ ներդրումային պարտքային արժեթուղթը և արժեզրկումից կորուստների գծով համապատասխան պահուստը, եթե որոշում էր, որ գոյությունի չունի դրանք փոխհատուցելու իրատեսական հեռանկար:

xi. Նախատեսում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին Բանկը որոշ ֆինանսական ակտիվներ նախատեսել է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, քանի որ այս նախատեսումը վերացնում է կամ էականորեն նվազեցնում է այն հաշվառման անհամապատասպանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Նախքան 2018թ. հունվարի 1-ը Բանկը որոշ ֆինանսական ակտիվներ նախատեսում էր նաև որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, քանի որ այդ ակտիվները կառավարվում էին, գնահատվում էին և ներկայացվում էին ներքին հաշվետվություններում իրական արժեքի հիմունքով:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը որոշ ֆինանսական պարտավորություններ նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող հետևյալ հանգամանքներից որևէ մեկում.

- պարտավորությունները կառավարվում, գնահատվում և ներկայացվում են ներքին հաշվետվություններում իրական արժեքի հիմունքով, կամ
- նախատեսումը թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասպանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

(զ) Պարունակվող ածանցյալ գործիքներ

2018թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Ածանցյալ գործիքները կարող են պարունակվել մեկ այլ պայմանագրում (հիմնական պայմանագիր): Բանկը պարունակվող ածանցյալ գործիքը հաշվառում է հիմնական պայմանագրից առանձին, երբ.

- հիմնական պայմանագիրը չի հանդիսանում ակտիվ ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում,
- հիմնական պայմանագիրն ինքնին չի հաշվառվում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- պարունակվող ածանցյալ գործիքի պայմանները կհամապատասխանեին ածանցյալ գործիքի սահմանմանը, եթե ներառվեին առանձին պայմանագրում և
- պարունակվող ածանցյալ գործիքի տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն հիմնական պայմանագրի տնտեսական բնութագրերի և ռիսկերի հետ:

Առանձնացված պարունակվող ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի բոլոր փոփոխությունները ճանաչելով շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ կազմում են որակվող դրամական միջոցների հոսքերի կամ զուտ ներդրման հեջավորման փոխհարաբերության մաս:

Նախքան 2018թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն

Ածանցյալ գործիքները կարող են պարունակվել մեկ այլ պայմանագրում (հիմնական պայմանագիր): Բանկը պարունակվող ածանցյալ գործիքը հաշվառում էր հիմնական պայմանագրից առանձին, երբ.

- հիմնական պայմանագիրն ինքնին չէր հաշվառվում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- պարունակվող ածանցյալ գործիքի պայմանները կհամապատասխանեին ածանցյալ գործիքի սահմանմանը, եթե ներառվեին առանձին պայմանագրում և
- պարունակվող ածանցյալ գործիքի տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չէին հիմնական պայմանագրի տնտեսական բնութագրերի և ռիսկերի հետ:

Առանձնացված պարունակվող ածանցյալ գործիքները չափվում էին իրական արժեքով՝ իրական արժեքի բոլոր փոփոխությունները ճանաչելով շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ կազմում էին որակվող դրամական միջոցների հոսքերի կամ զուտ ներդրման հեջավորման փոխհարաբերության մաս:

(է) Հաճախորդներին տրված վարկեր

2018թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր» հոդվածը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկերը (տես՝ Ծանոթագրություն 3 (ե) (i)), որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Նախքան 2018թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն

Հաճախորդներին տրված վարկերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն էին, որոնք գնանշված չէին գործող շուկայում և որոնք Բանկը մտադիր չէր վաճառել անմիջապես կամ մոտ ապագայում:

Հաճախորդներին տրված վարկերը ներառում էին որպես վարկեր և դեբիտորական պարտքեր դասակարգված վարկերը: Հաճախորդներին տրված վարկերը սկզբնապես չափվում էին իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում չափվում էին ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(ը) Ներդրումային արժեթղթեր

2018թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «ներդրումային արժեթղթեր» հոդվածը ներառում է.

- ամորտիզացված արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթերը (տես՝ Ծանոթագրություն 3 (ե) (i)), որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը

- այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթերը (տես՝ Ծանոթագրություն 3 (ե) (i)),
- բաժնային ներդրումային արժեթղթերը, որոնք նախատեսված են որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող (տես՝ Ծանոթագրություն 3 (ե) (i)):

Նախքան 2018թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն

Ներդրումային արժեթղթերը սկզբնապես չափվում էին իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված լրացուցիչ ուղղակի ծախսումները շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող ներդրումային արժեթղթերի դեպքում, և հետագայում, կախված իրենց դասակարգումից, հաշվառվում էին կամ որպես մինչև մարման ժամկետը պահվող, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ վաճառքի համար մատչելի:

Վաճառքի համար մատչելի

Վաճառքի համար մատչելի ներդրումներն իրենցից ներկայացնում էին ոչ ածանցյալ ներդրումներ, որոնք նախատեսված էին որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չէին ֆինանսական ակտիվի որևէ այլ դասին: Վաճառքի համար մատչելի ներդրումները ներառում էին բաժնային արժեթղթերը և պարտքային արժեթղթերը: Չգնահատված բաժնային արժեթղթերը, որոնց իրական արժեքը հնարավոր չէր արժանահավատորեն գնահատել, հաշվառվում էին սկզբնական արժեքով: Մյուս բոլոր վաճառքի համար մատչելի ներդրումները չափվում էին իրական արժեքով սկզբնական ճանաչումից հետո:

Տոկոսային եկամուտը ճանաչվում էր շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Շահաբաժինների տեսքով եկամուտը ճանաչվում էր շահույթում կամ վնասում, երբ Բանկը ստանում էր շահաբաժին ստանալու իրավունք: Վաճառքի համար մատչելի պարտքային ներդրումային արժեթղթերի գծով փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը կամ վնասը ճանաչվում էր շահույթում կամ վնասում: Արժեզրկումից կորուստները ճանաչվում էին շահույթում կամ վնասում (տես՝ Ծանոթագրություն 3 (ե) (iv)):

Իրական արժեքի այլ փոփոխությունները, բացառությամբ արժեզրկումից կորուստների (տես՝ Ծանոթագրություն 3 (ե) (iv)), ճանաչվում էին այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում և ներկայացվում էին իրական արժեքի պահուստում սեփական կապիտալի կազմում: Ներդրման վաճառքի դեպքում սեփական կապիտալում կուտակված շահույթը կամ վնասը վերադասակարգվում էր շահույթ կամ վնաս:

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվը, որը կհամապատասխաներ վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, եթե չդասակարգվեր որպես վաճառքի համար մատչելի, կարող էր վաճառքի համար մատչելի դասից վերադասակարգվել վարկերի և դեբիտորական պարտքերի դաս, եթե Բանկը մտադիր էր և հնարավորություն ունենար պահել ֆինանսական ակտիվը մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետի լրանալը:

(թ) Ավանդներ, թողարկված պարտքային արժեթղթեր և ստորադաս պարտավորություններ

Ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի հետ կապված ուղղակի լրացուցիչ ծախսումները, և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը պարտավորությունները նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

(ժ) Ֆինանսական երաշխավորություններ և վարկ տրամադրելու պարտավորվածություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դեբիտորի կողմից պարտքային գործիքի սկզբնական կամ փոփոխված պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Վարկ տրամադրելու պարտավորվածություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն պարտավորվածություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում դրանք չափվում են հետևյալ կերպ.

- *2018թ. հունվարի 1-ից.* ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված վնասի գծով պահուստի գումարի (տես՝ Ծանոթագրություն 3 (ե) (iv)) և սկզբնապես ճանաչված գումարի և համապատասխան դեպքերում, ՖՀՄՍ 15-ի համաձայն ճանաչված կուտակված եկամտի տարբերության առավելագույն գումարով:
- *Նախքան 2018թ. հունվարի 1-ը.* հետևյալ նշվածներից առավելագույնով՝ երաշխավորության կամ պարտավորվածության գործողության ժամկետի ընթացքում ամորտիզացված սկզբնական իրական արժեքը և պարտավարության մարման համար ակնկալվող վճարման ներկա արժեքը, երբ պայմանագրով նախատեսված վճարումը դարձել է հավանական:

Բանկը չունի շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող վարկ տրամադրելու պարտավորվածություններ:

Վարկ տրամադրելու այլ պարտավորվածությունների համար.

- *2018թ. հունվարի 1-ից.* Բանկը ճանաչում է վնասի գծով պահուստ (տես՝ Ծանոթագրություն 3 (ե) (iv)) ՖՀՄՍ 9-ի համաձայն,
- *Նախքան 2018թ. հունվարի 1-ը.* Բանկը ճանաչում էր պահուստ ՀՀՄՍ 37-ի համաձայն, եթե պայմանագիրը համարվում էր անբարենպաստ:

Ֆինանսական երաշխավորությունների և վարկ տրամադրելու պարտավորվածությունների գծով առաջացող պարտավորությունները ներառվում են պահուստների կազմում:

(հ) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Վերագնահատում

Շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակշենքերի իրական արժեքների շարժից: Երբ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Երբ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչ-ված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(iii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

- շենքեր	50 տարի
- վարձակալված գույքի բարելավում	20 տարի
- համակարգիչներ և կապի սարքավորումներ	4-10 տարի
- փոխադրամիջոցներ	10 տարի
- տնտեսական գույք	10 տարի

(լ) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

(խ) Բռնագանձված ակտիվներ

Բանկը ճանաչում է բռնագանձված ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն ունի մարման ամբողջական և վերջնական իրավունքներ գրավի նկատմամբ:

Բռնագանձված ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից նվազագույնով՝ հանած վաճառքի կազմակերպման ծախսերը: Սկզբնական ճանաչման պահին բռնագանձված ակտիվները չափվում են չաշխատող վարկի հաշվեկշռային արժեքով՝ ներառյալ գրավի բռնագանձման հետ կապված ծախսումները: Իրական արժեքի և վաճառքի կազմակերպման ծախսերի տարբերությունը հանդիսանում է գրավի գնահատված վաճառքի գինը բնականոն գործունեության ընթացքում՝ հանած վաճառքի հարակից ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո գրավի նկատմամբ սեփականության ձեռքբերման արդյունքում առաջացած ակտիվները վերանայվում են որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու տեսանկյունից և համապատասխանաբար վերադասակարգվում են այդ դասի չափանիշները բավարարելու դեպքում:

Բռնագանձված ակտիվների օտարումից ստացվող օգուտը և վնասը ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ գործառնական եկամուտ» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ծ) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից հանած վաճառքի ծախսերը և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն

դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(կ) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, կիրառելիության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

(հ) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

(ii) Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող գումարը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

(iii) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

(ձ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող եկամտի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման գծով ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքում, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասի, չօգտագործված հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որին հաշվին դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթի գումարը որոշվում է հակադարձման ենթակա համապատասխան հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների հակադարձման չափով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Բանկի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ համապատասխան հարկային հատուցումը կիրացվի: Այս նվազեցումները հակադարձվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթի առկայության հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Բանկը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

(ղ) Վարձակալություն

7.10.1.1.6 (i) Գործառնական վարձակալություն՝ Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ

Ակտիվի վարձակալությունը, որի դեպքում սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության գծով վարձավճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են այլ գործառնական ծախսերում:

(ճ) Համադրելի տեղեկատվություն

ՖՀՄՍ 9-ին կիրառման արդյունքում Բանկը փոխել է որոշ հոդվածների ներկայացումը ֆինանսական հաշվետվությունների հիմնական ձևերում: Համադրելի տեղեկատվությունը վերադասակարգվել է՝ հաշվետու ժամանակաշրջանի ներկայացման փոփոխությունների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ներկայացման հիմնական փոփոխությունների ազդեցությունը բացահայտված է Ծանոթագրություն 4-ում:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ներկայացման հիմնական փոփոխություններն ունեցել են հետևյալ ազդեցությունը.

- «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները» ներակայացվել են «Ներդրումային արժեթղթերի» հոդվածի կազմում,
- «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստը» ներակայացվել է «Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ» հոդվածի կազմում:

2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ներկայացման հիմնական փոփոխություններն ունեցել են հետևյալ ազդեցությունը.

- «Տոկոսային եկամուտը» ներկայացվել է «Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ» հոդվածի կազմում,
- «Արժեզրկումից կորուստը» ներկայացվել է «Ներդրումային արժեթղթերի և այլ ֆինանսական ակտիվների, հաճախորդներին տրված վարկերի, վարկ տրամադրելու պարտավորվածությունների արժեզրկումից կորուստներ» հոդվածի կազմում:

(մ) Հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ

Մի շարք նոր ստանդարտներ, այդ ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Բանկի ֆինանսական վիճակի և գործունեության վրա: Բանկը մտադիր է կիրառել նշված ստանդարտները և փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

(i) ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16 *«Վարձակալություն»* ստանդարտը (այսուհետ՝ ՖՀՄՍ 16) սահմանում է մեկ՝ հաշվեկշռային հաշվառման մոդել վարձակալության համար: Վարձակալը ճանաչում օգտագործման իրավունք հանդիսացող ակտիվը, որն իրենից ներկայացնում է ելակետային ակտիվն օգտագործելու իրավունք, և վարձակալության գծով պարտավորությունը, որն իրենից ներկայացնում է վարձավճարների վճարման պարտականություն: Նախատեսված են բացառություններ կարճաժամկետ վարձակալության և ցածր արժեք ունեցող միավորների վարձակալության համար: Վարձատուի համար հաշվառման ներկայիս մոտեցումը չի փոփոխվում, վարձատուն շարունակում է դասակարգել վարձակալությունը ֆինանսական և գործառնական դասերի:

ՖՀՄՍ 16-ը փոխարինում է ՀՀՄՍ 17 *«Վարձակալություն»*, ՖՀՄՄԿ մեկնաբանություն 4 *«Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում»*, ՄՄԿ մեկնաբանություն 15 *«Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ»* և ՄՄԿ մեկնաբանություն 27 *«Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»* սահմանված վարձակալության հաշվառման ուղեցույցները:

ՖՀՄՍ 16-ը կգործի 2019թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ՝ նաև ՖՀՄՍ 15 *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ »* ստանդարտը ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթվին կամ դրանից առաջ կիրառելու պայմանով:

Բանկը սկսել է իր ֆինանսական հաշվետվությունների վրա ՖՀՄՍ 16-ի կիրառման հնարավոր ազդեցության նախնական գնահատումը: Ներկա պահին բացահայտված առավել էական ազդեցությունը կայանում է նրանում, որ Բանկը պետք է ճանաչի ակտիվներ և պարտավորություններ տարածքների գործառնական վարձակալության պայմանագրերի գծով: Բացի այդ, կփոխվի վարձակալության այդ պայմանագրերի գծով ճանաչվող ծախսերի բնույթը, քանի որ ՖՀՄՍ 16-ի համաձայն, պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում վարձակալության ծախսերը գծային հիմունքով ճանաչելու փոխարեն, Բանկը կարտացոլի ակտիվից օգտվելու իրավունքի մաշվածության գծով ծախսերը և վարձակալության գծով պարտավորություններին վերաբերող տոկոսային ծախսերը: Բանկը դեռ չի որոշել, թե արդյոք այն կօգտվի ստանդարտով նախատեսված ոչ պարտադիր պարզեցումներից:

Որպես վարձակալ Բանկը կարող է՝

- կիրառել ստանդարտը հետընթաց, կամ
- կիրառել ձևափոխված հետընթաց մոտեցում՝ գործնական բնույթի ոչ պարտադիր ազատումներով:

Վարձակալը պետք է կիրառի ընտրված մոտեցումը հետևողականորեն իր բոլոր վարձակալության պայմանագրերի համար: Ներկայումս Բանկը պլանավորում է սկսել կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից: Բանկը դեռ չի ընտրել ստանդարտին անցման մեթոդը:

Բանկի գնահատմամբ ՖՀՄՍ 16-ի կիրառումն էական ազդեցություն չի ունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

(ii) Այլ ստանդարտներ

Ստորև ներկայացված փոփոխված ստանդարտները և դրանց մեկնաբանություններն ըստ ակնկալիքների էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 23 *«Շահութահարկի հաշվառման հետ կապված անորոշություն»,*
- *Երկարաժամկետ մասնակցություններ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում (ՀՀՄՍ 28-ի փոփոխություններ),*
- *Պլանի փոփոխություն, կրճատում կամ մարում (ՀՀՄՍ 19-ի փոփոխություններ),*
- *ՖՀՄՍ-ների տարեկան կատարելագործումներ, 2015-2017թթ. ժամանակաշրջան – տարբեր ստանդարտներ,*
- *Կոնցեպտուալ հիմունքներին հղումների փոփոխություններ ՖՀՄՍ ստանդարտներում:*

64 Անցումը ՖՀՄՍ 9-ին

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների դասակարգումը ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Բանկի ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական չափման դասերն ըստ ՀՀՄՍ 39-ի և նոր չափման դասերն ըստ ՖՀՄՍ 9-ի 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

հազ. դրամ	Ծնթգ.	Սկզբնական դասակարգումն ըստ ՀՀՄՍ 39	Նոր դասակարգումն ըստ ՖՀՄՍ 9	Սկզբնական հաշվեկշռային արժեքն ըստ ՀՀՄՍ 39	Նոր հաշվեկշռային արժեքն ըստ ՖՀՄՍ 39
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեքով չափվող	17,229,253	17,225,620
Ներդրումային արժեթղթեր – պարտքային (ա)	10	Վաճառքի համար մատչելի	Ամորտիզացված արժեքով չափվող	20,436,965	17,806,848
Ներդրումային արժեթղթեր – պարտքային (բ)	10	Վաճառքի համար մատչելի	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով	8,796,012	8,796,012

հազ. դրամ	Ծնթգ.	Սկզբնական դասակարգումն ըստ ՀՀՄՍ 39	Նոր դասակարգումն ըստ ՖՀՄՍ 9	Սկզբնական հաշվեկշռային արժեքն ըստ ՀՀՄՍ 39	Նոր հաշվեկշռային արժեքն ըստ ՖՀՄՍ 39
Ներդրումային արժեթղթեր – բաժնային (գ)	10	Վաճառքի համար մատչելի	չափվող Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող	173,978	173,978
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող	9,952	9,952
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	11	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեքով չափվող	11,476,427	11,461,336
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	12	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեքով չափվող	6,493,486	6,489,850
Հաճախորդներին տրված վարկեր	13	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեքով չափվող	57,763,789	54,173,875
Այլ ֆինանսական ակտիվներ	15	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեքով չափվող	132,050	142,527
Ընդամենը ֆինանսական ակտիվներ				**122,511,912**	**116,279,998**

հազ. դրամ	Ծնթգ.	Սկզբնական դասակարգումն ըստ ՀՀՄՍ 39	Նոր դասակարգումն ըստ ՖՀՄՍ 9	Սկզբնական հաշվեկշռային արժեքն ըստ ՀՀՄՍ 39	Նոր հաշվեկշռային արժեքն ըստ ՖՀՄՍ 39
Ֆինանսական պարտավորություններ					
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող	229,753	229,753
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	16	Ամորտիզացված արժեքով չափվող	Ամորտիզացված արժեքով չափվող	4,988,819	4,988,819
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	19	Ամորտիզացված արժեքով չափվող	Ամորտիզացված արժեքով չափվող	64,651,008	64,651,008
Թողարկված պարտքային արժեթղթեր	18	Ամորտիզացված արժեքով չափվող	Ամորտիզացված արժեքով չափվող	10,815,059	10,815,059
Այլ փոխառություններ	20	Ամորտիզացված արժեքով չափվող	Ամորտիզացված արժեքով չափվող	1,357,706	1,357,706
Այլ ֆինանսական պարտավորություններ	21	Ամորտիզացված արժեքով չափվող	Ամորտիզացված արժեքով չափվող	273,041	274,099
				82,315,386	**82,316,444**

ՖՀՄՍ 9-ի համաձայն ֆինանսական գործիքների դասակարգմանը վերաբերող Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 3 (ե) (i) կետում: Այս քաղաքականության կիրառմամբ պայմանավորված վերադասակարգումները ներկայացված են վերը բերվող աղյուսակում և բացատրվում են ստորև:

ա. Որոշ պարտքային արժեթղթեր Բանկի կողմից պահվում են առանձին պորտֆելում՝ երկարաժամկետ եկամտաբերություն ապահովելու նպատակով: Այդ արժեթղթերը կարող են վաճառվել, սակայն չի ակնկալվում, որ նման վաճառքները հաճախ կլինեն: Բանկը գտնում է, որ այդ արժեթղթերը պահվում են այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հավաքագրելու համար: Այս ակտիվները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն:

բ. Որոշ պարտքային արժեթղթեր Բանկի կողմից պահվում են առանձին պորտֆելներում՝ ամենօրյա իրացվելիության պահանջները բավարարելու նպատակով: Բանկի գանձապետարանը ձգտում է նվազեցնել իրացվելիության այդ պահանջների կառավարման ծախսերը, այդ իսկ պատճառով, ակտիվորեն կառավարում է պորտֆելի հատույցը: Հատույցը ներառում է պայմանագրային վճարումների հավաքագրումը և ֆինանսական ակտիվների վաճառքից ստացվող շահույթը և վնասը: Ներդրումային ռազմավարությունը հաճախ հանգեցնում է էական արժեքով վաճառքների: Բանկը գտնում է, որ ՖՀՄՍ 9-ի համաձայն այդ արժեթղթերը պահվում են այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և թե՛ ֆինանսական ակտիվների վաճառքի միջոցով:

գ. Բանկի կողմից ռազմավարական նպատակներով պահվող որոշ բաժնային ներդրումներ ՖՀՄՍ 9-ի համաձայն նախատեսվել են որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող: Նախքան ՖՀՄՍ 9-ի կիրառումն այդ արժեթղթերը չափվում էին սկզբնական արժեքով, քանի որ դրանց իրական արժեքը չէր համարվում արժանահավատորեն գնահատելի: ՖՀՄՍ 9-ի համաձայն սկզբնական արժեքով հաշվառման բացառությունն այլևս չի կիրառվում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀՄՍ 39-ի համաձայն հաշվեկշռային արժեքի համադրումը ՖՀՄՍ 9-ի համաձայն հաշվեկշռային արժեքի հետ ՖՀՄՍ 9-ի կիրառման ամսաթվի՝ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեքն ըստ ՀՀՄՍ 39 31 դեկտեմբերի 2017թ.	Վերադասա-կարգում	Վերաչափում	Հաշվեկշռային արժեքն ըստ ՖՀՄՍ 9 1 հունվարի 2018թ.
Ֆինանսական ակտիվներ				
Ամորտիզացված արժեքով չափվող				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Սկզբնական մնացորդ	17,229,253	-	-	-
Վերաչափում	-	-	(3,633)	-
Վերջնական մնացորդ	-	-	-	17,225,620
Ներդրումային արժեթղթեր				
Սկզբնական մնացորդ	-	-	-	-
«Վաճառքի համար մատչելի» դասից	-	20,436,965	-	-
Վերաչափում	-	-	(2,630,118)	-
Վերջնական մնացորդ	-	-	-	17,806,847
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ				
Սկզբնական մնացորդ	11,476,427	-	-	-
Վերաչափում	-	-	(15,091)	-
Վերջնական մնացորդ	-	-	-	11,461,336
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ				
Սկզբնական մնացորդ	6,493,486	-	-	-
Վերաչափում	-	-	(3,636)	-
Վերջնական մնացորդ	-	-	-	6,489,850
Հաճախորդներին տրված վարկեր				
Սկզբնական մնացորդ	57,763,789	-	-	-
Վերաչափում	-	-	(3,589,914)	-
Վերջնական մնացորդ	-	-	-	54,173,875
Այլ ֆինանսական ակտիվներ				
Սկզբնական մնացորդ	132,050	-	-	-
Վերաչափում	-	-	10,477	-
Վերջնական մնացորդ	-	-	-	142,527
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող	**93,095,005**	**20,436,965**	**(6,231,915)**	**107,300,055**
Վաճառքի համար մատչելի				
Ներդրումային արժեթղթեր				
Սկզբնական մնացորդ	29,406,955	-	-	-
«Ամորտիզացված արժեքով չափվող» դասին		(20,436,965)	-	-
«Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող» դասին – պարտքային	-	(8,796,012)	-	-
«Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող» դասին – բաժնային	-	(173,978)	-	-

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեքն ըստ ՀՀՄՍ 39 31 դեկտեմբերի 2017թ.	Վերադասակարգում	Վերաչափում	Հաշվեկշռային արժեքն ըստ ՖՀՄՍ 9 1 հունվարի 2018թ.
Վերջնական մնացորդ	-	-	-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող – պարտքային				
Ներդրումային արժեթղթեր				
Սկզբնական մնացորդ	-	-	-	-
«Վաճառքի համար մատչելի» դասից	-	8,796,012	-	-
Վերաչափում	-	-	-	-
Վերջնական մնացորդն իրական արժեքով	-	-	-	8,796,012
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող – բաժնային				
Ներդրումային արժեթղթեր				
Սկզբնական մնացորդ	-	-	-	-
«Վաճառքի համար մատչելի» դասից	-	173,978	-	-
Վերջնական մնացորդ	-	-	-	173,978
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող	**29,406,955**	**(20,436,965)**	**-**	**8,969,990**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող				
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	9,952	-	-	9,952
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող	**9,952**	**-**	**-**	**9,952**
Ֆինանսական պարտավորություններ				
Ամորտիզացված արժեքով չափվող				
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	4,988,819	-	-	4,988,819
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	64,651,008	-	-	64,651,008
Այլ փոխառություններ	1,357,706	-	-	1,357,706
Այլ ֆինանսական պարտավորություններ	273,041	-	1,058	274,099
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող	**71,270,574**	**-**	**1,058**	**71,271,632**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	229,753	-	-	229,753
Թողարկված պարտքային արժեթղթեր	10,815,059	-	-	10,815,059
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող	**11,044,812**	**-**	**-**	**11,044,812**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀՄՍ 39-ի դասերից ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վերադասակարգումը ՖՀՄՍ 9-ով նախատեսված ամորտիզացված արժեքով չափվող դասակարգի:

	հազ. դրամ
Վերադասակարգում ՀՀՄՍ 39-ի «վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ» դասից	
Իրական արժեքը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,864,083
Վնաս իրական արժեքի փոփոխություններից, որն այլապես 2018թ. ընթացքում կճանաչվել այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում, եթե ֆինանսական ակտիվները չվերադասակարգվեին	1,372,732

Ստորև բերվող աղյուսակում վերլուծված է ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցությունը (առանց հարկերի) պահուստների և կուտակված վնասի վրա: Ստանդարտի կիրառումն ազդում է իրական արժեքի փոփոխության գծով պահուստի և չբաշխված շահույթի վրա: ՖՀՄՍ 9-ի կիրառումն ազդեցություն չի ունեցել սեփական կապիտալի այլ բաղադրիչների վրա:

հազ. դրամ	**2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 9 կիրառման ազդեցությունը**
Իրական արժեքի փոփոխության գծով պահուստ – այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքներ (31 դեկտեմբերի 2017թ. – Իրական արժեքի փոփոխության գծով պահուստ – վաճառքի համար մատչելի)	
Տարեվերջի դրությամբ մնացորդն ըստ ՀՀՄՍ 39 (31 դեկտեմբերի 2017թ.)	3,342,351
Պարտքային ներդրումային արժեթղթերի վերադասակարգում «վաճառքի համար մատչելի» դասից «ամորտիզացված արժեքով չափվող» դասի	(1,963,078)
Տարեսկզբի դրությամբ մնացորդն ըստ ՖՀՄՍ 9 (1 հունվարի 2018թ.)	**1,379,273**
Կուտակված վնաս	
Տարեվերջի դրությամբ մնացորդն ըստ ՀՀՄՍ 39 (31 դեկտեմբերի 2017թ.)	1,900,718
Սպասվող պարտքային վնասի ճանաչում ՖՀՄՍ 9-ի համաձայն հաճախորդներին տրված վարկերի համար (ներառյալ՝ վարկ տրամադրելու պարտավորվածությունները)	(2,871,932)
Սպասվող պարտքային վնասի ճանաչում ՖՀՄՍ 9-ի համաձայն ներդրումային արժեթղթերի համար	(141,016)
Սպասվող պարտքային վնասի ճանաչում ՖՀՄՍ 9-ի համաձայն այլ ֆինանսական ակտիվների համար (ներառյալ՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները, բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերը և փոխատվությունները, հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները, այլ ֆինանսական ակտիվները)	(9,506)
Սպասվող պարտքային վնասի ճանաչում ՖՀՄՍ 9-ի համաձայն ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար	(846)
Տարեսկզբի դրությամբ մնացորդն ըստ ՖՀՄՍ 9 (1 հունվարի 2018թ.)	**(1,122,582)**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է հետևյալ երկու մեծությունների համադրումը.

- ՀՀՄՍ 39-ի համաձայն ֆինանսական ակտիվների և ՀՀՄՍ 37 *«Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ»* ստանդարտի համաձայն վարկեր տրամադրելու պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի արժեզրկման գծով պահուստների տարեվերջի դրությամբ գումարները 2017թ. դեկտեմբերի 3-ի դրությամբ և
- ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված սպասվող պարտքային վնասի գծով պահուստի տարեսկզբի դրությամբ գումարը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Այս աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն ֆինանսական ակտիվների համապատասխան չափման դասերի վերաբերյալ ՀՀՄՍ 39 և ՖՀՄՍ 9 համաձայն, և առանձին ներկայացված է չափման դասի փոփոխության ազդեցությունը սպասվող պարտքային վնասի գծով պահուստի վրա ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառման ամսաթվի՝ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2017թ. (ՀՀՄՍ 39/ՀՀՄՍ 37)	Վերադասակարգում	Վերաչափում	1 հունվարի 2018թ. (ՖՀՄՍ 9)
Վարկեր և դեբիտորական պարտքեր՝ ըստ ՀՀՄՍ 39/ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ ըստ ՖՀՄՍ 9 (ներառյալ՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները, բանկերին տրված վարկերը, հաճախորդներին տրված վարկերը, հակադարձ հետգնման պայմանագրերը, այլ ֆինանսական ակտիվները)	3,420,323	-	2,881,229	6,301,552
Վաճառքի համար մատչելի պարտքային ներդրումային արժեթղթեր՝ ըստ ՀՀՄՍ 39՝ վերադասակարգված «ամորտիզացված արժեքով չափվող» դասի՝ ըստ ՖՀՄՍ 9	-	-	141,016	141,016
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող	**3,420,323**	**-**	**3,022,245**	**6,442,568**
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	-	-	846	846

65 Զուտ տոկոսային եկամուտ

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Արդյունավետ տոկոադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	8,659,983	18,551,523
Ներդրումային արժեթղթեր	2,574,919	2,980,826
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	243,589	217,752
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	141,861	278,514
Այլ	13,839	7,905
	11,634,191	**22,036,520**
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	3,031,927	9,736,316
Թողարկված պարտքային արժեթղթեր	712,633	431,068
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	370,497	2,553,153
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	123,435	298,949
Այլ փոխառություններ	77,992	210,370
Այլ	194,015	224,288
	4,510,499	**13,454,144**
	7,123,692	**8,582,376**

66 Զուտ արժեզրկումից կորուստ ֆինանսական գործիքների գծով

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր և վարկ տրամադրելու պարտավորվածություններ	1,944,363	3,982,696
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	(139,526)	-
Այլ ֆինանսական ակտիվներ	8,936	77,419
	1,813,773	**4,060,115**

67 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա	470,154	386,748
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	335,186	244,032
Գովազդ և շուկայավարում	282,656	62,550
Գործառնական վարձակալության գծով ծախս	199,268	179,576
Ներկայացուցչական և կազմակերպչական ծախսեր	181,943	92,873
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	152,108	120,797
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	113,554	125,132
Անվտանգության ծառայություն	91,590	121,153
Մասնագիտական ծառայություններ	77,647	68,899
Ապահովագրություն	71,371	83,294
Կապի և տեղեկատվական ծառայություններ	63,829	59,634
Այլ	165,442	139,303
	2,204,748	**1,683,991**

68 Շահութահարկի գծով ծախս

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Նախորդ տարիներին պակաս հաշվարկված ընթացիկ հարկի գծով ծախս	2,907	2,485
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման արդյունքում	706,929	527,317
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**709,836**	**529,802**

2018թ-ին ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2017թ-ին՝ 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2018թ. հազ. դրամ	%	2017թ. հազ. դրամ	%
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	2,892,806		2,376,582	
Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով	578,561	20.0	475,316	20.0
Չնվազեցվող ծախսեր	128,368	4.4	52,001	2.2
Նախորդ տարիներում պակաս հաշվարկված	2,907	0.1	2,485	0.1
	709,836	**24.5**	**529,802**	**22.3**

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ և ակտիվներ համապատասխանաբար 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն: Հարկային վնասը կարող է փոխանցվել հաջորդ տարի մինչև 2021թ.:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում:

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.*	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.
Դրամական միջոց	727	-	-	727
Ներդրումային արժեթղթեր	(310,058)	(44,247)	318,074	(36,231)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(16,207)	(10,261)	-	(26,468)
Հաճախորդներին տրված վարկեր	(53,257)	(858,404)	-	(911,661)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(21,830)	(5,498)	11,423	(15,905)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	726	(726)	-	-
Այլ ակտիվներ	(18,610)	(17,071)	-	(35,681)
Այլ պարտավորություններ	52,180	88,733	-	140,913
Հաջորդ տարի փոխանցված հարկային վնաս	126,437	140,545	-	266,982
	(239,892)	**(706,929)**	**329,497**	**(617,324)**

* 2018թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդը ներառում է ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառման ազդեցությունը (տես՝ Ծանոթագրություն 4):

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	(481,695)	(159)	(354,228)	(836,082)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(1,238)	(17,987)	-	(19,225)
Հաճախորդներին տրված վարկեր	(525,312)	(245,928)	-	(771,240)
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	(1,405)	1,405	-	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(18,626)	(3,204)	-	(21,830)
Այլ ակտիվներ	(21,321)	4,806	-	(16,515)
Այլ պարտավորություններ	40,843	11,125	-	51,968
Հաջորդ տարի փոխանցված հարկային վնաս	403,812	(277,375)	-	126,437
	(604,942)	**(527,317)**	**(354,228)**	**(1,486,487)**

(բ) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված շահութահարկ

Ստորև ներկայացված են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի բաղադրիչներին վերաբերող հարկային հետևանքները 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2018թ.			2017թ.		
հազ. դրամ	Գումարը մինչև հարկումը	Հարկի գծով ծախս	Գումարը հարկումից հետո	Գումարը մինչև հարկումը	Հարկի գծով ծախս	Գումարը հարկումից հետո
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	(108,735)	21,747	(86,988)	2,682,610	(536,522)	2,146,088
Շահույթ կամ վնաս փոխանցված այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	(1,481,635)	296,327	(1,185,308)	(911,472)	182,294	(729,178)
Վերագնահատված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք	(57,114)	11,423	(45,691)	-	-	-
Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ	**(1,647,484)**	**329,497**	**(1,317,987)**	**1,771,138**	**(354,228)**	**1,416,910**

69 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Կանխիկը դրամարկղում	2,602,168	2,967,268
Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	8,212,667	11,915,803
Նոստրո հաշիվներ այլ բանկերում		
- A-ից A+ վարկանիշով	1,891	-
- BBB+ վարկանիշով	52,077	519
- BB- -ից BB+ վարկանիշով	157,033	-
- B- -ից B+ վարկանիշով	182,165	268,327
- առանց վարկանիշի	56,388	76,596
Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում	**449,554**	**345,442**
Դրամական միջոցների համարժեքներ		
Օվերնայթ ավանդ ՀՀ ԿԲ-ում	-	2,000,740
Ընդամենը համախառն դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**11,264,389**	**17,229,253**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(3,633)	-
Ընդամենը զուտ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**11,260,756**	**17,229,253**

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

Վարկերի որակական ցուցանիշները բացահայտելիս՝ Բանկն օգտագործում է «Standard&Poor» վարկանիշային գործակալության վարկանիշները:

2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային կողմ հանդիսացող այնպիսի բանկեր, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի (2017թ-ին՝ ոչ մի բանկ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում

Նոստրո հաշիվները վճարահաշվարկային գործունեությանը վերաբերող ՀՀ ԿԲ-ում պահվող մնացորդներ են, որոնք կարող են ելքագրվել տարեվերջին:

Բանկերը պարտավոր են ունենալ դեպոնացված դրամական միջոցներ (պարտադիր պահուստ) ՀՀ ԿԲ-ում՝ ՀՀ դրամով ներգրավված միջոցների 2%-ի չափով և արտարժույթով ներգրավված միջոցների 18%-ի չափով: Օրենսդրությամբ չի սահմանափակվում այդ միջոցների ելքագրումը, սակայն եթե Բանկը չի ապահովում ՀՀ դրամով և արտարժույթով ներգրավված գումարների գծով նվազագույն միջին ամսական գումարը, Բանկի նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ:

70 Ներդրումային արժեթղթեր

(ա) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ կառավարության արժեթղթեր	1,533,661	22,590,656
- Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	2,071,829	5,622,338
Ընդամենը պետական պարտատոմսեր	**3,605,490**	**28,212,994**
Կորպորատիվ պարտատոմսեր		
- B -ից B+ վարկանիշով	-	807,772
- առանց վարկանիշի	-	212,211
Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր	-	**1,019,983**
Բաժնային գործիքներ		
Կորպորատիվ բաժնետոմսեր	1,122,710	173,978
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**4,728,200**	**29,406,955**

(բ) Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ կառավարության արժեթղթեր	9,576,095	-
- Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	2,617,138	-
Ընդամենը պետական պարտատոմսեր	**12,193,233**	**-**
Կորպորատիվ պարտատոմսեր		
- B -ից B+ վարկանիշով	2,287,867	-
- առանց վարկանիշի	692,367	-
Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր	**2,980,234**	-
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ կառավարության արժեթղթեր	5,587,003	-
Ընդամենը պետական պարտատոմսեր	**5,587,003**	**-**
Ընդամենը համախառն ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**20,760,470**	**-**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(36,744)	**-**
Ընդամենը զուտ ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**20,723,726**	**-**

Ներդրումային արժեթղթերը ժամկետանց չեն:

Ներդրումային արժեթղթերի որակական ցուցանիշները բացահայտելիս՝ Բանկն օգտագործում է «Standard&Poor» վարկանիշային գործակալության վարկանիշները:

71 Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Վարկային քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց ՀՀ ԿԲ-ում	523,000	520,000
Վարկեր և ավանդներ		
Եվրասիական տնտեսական միության բանկեր	4,841,505	-
Հայկական բանկեր		
- BB- -ից BB+ վարկանիշով	971,196	-
- B- -ից B+ վարկանիշով	4,862,396	6,545,340
Այլ ոչ ռեզիդենտ բանկեր		
- A-ից A+ վարկանիշով	166,818	-
- BBB- -ից BBB+ վարկանիշով	83,047	-
- B- -ից B+ վարկանիշով	-	426,808
- առանց վարկանիշի	502,071	814,513
Միջին չափի հայկական վարկային կազմակերպություններ	973,412	3,139,304
Այլ ֆինանսական կազմակերպություններ	187,081	46,046
Ընդամենը վարկեր և ավանդներ	**12,587,526**	**10,972,011**
Ընդամենը բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված համախառն վարկեր և փոխատվություններ	**13,110,526**	**11,492,011**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(41,534)	(15,584)
Ընդամենը բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված զուտ վարկեր և փոխատվություններ	**13,068,992**	**11,476,427**

Բանկերին տրված վարկերը և փոխատտվությունները ժամկետանց չեն

Բանկերին տրված վարկերի և փոխատտվությունների որակական ցուցանիշները բացահայտելիս՝ Բանկն օգտագործում է «Standard&Poor» վարկանիշային գործակալության վարկանիշները:

(ա) ՀՀ ԿԲ-ում պլաստիկ քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց

ՀՀ ԿԲ-ում պլաստիկ քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոցը վարկային քարտերով գործառնությունների համար դեպոնացված ոչ տոկոսակիր միջոց է, որը հաշվարկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կանոնակարգերի համաձայն և որի ելքագրումը սահմանափակված է:

(բ) Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների կենտրոնացում

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի պայմանագրային կողմ հանդիսացող մեկ բանկ (2017թ-ին նման բանկ չկար), որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 4,841,505 հազար դրամ:

72 Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Տեղական ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք գումարներ	3,431,830	3,576,045
«Standard&Poor» գործակալության B վարկանիշով տեղական բանկերից ստացվելիք գումարներ	-	2,900,619
Անհատներից ստացվելիք գումարներ	-	16,822
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք համախառն գումարներ	**3,431,830**	**6,493,486**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(2,017)	-
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք զուտ գումարներ	**3,429,813**	**6,493,486**

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի այնպիսի պայմանագրային կողմ (2017թ-ին նման պայմանագրային կողմ չկար), որից հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարը գերազանցի Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները վերագրելի են խոշոր տեղական ֆինանսական կազմակերպություններին: Այդ գումարները ժամկետանց չեն:

Ակտիվների համար որպես ապահովություն ընդունված գրավ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց գրավադրված ակտիվների (Հայաստանի Հանրապետության կառավարության արժեթղթերի) իրական արժեքը կազմում է 3,693,871 հազար դրամ (2017թ-ին՝ 6,721,464 հազար դրամ):

73 Հաճախորդներին տրված վարկեր

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր		
Վարկեր խոշոր կազմակերպություններին	33,388,034	24,807,302
Վարկեր առևտրային կազմակերպություններին	2,540,210	2,548,457
Վարկեր արդյունաբերական կազմակերպություններին	1,579,952	2,008,280
Գրավով ապահովված վարկեր փոքր և միջին չափի կազմակերպություններին	955,768	1,473,041
Դրամական միջոցների գրավով վարկեր	242,590	1,532,333
Այլ վարկեր իրավաբանական անձանց	2,840,726	2,483,657
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**41,547,280**	**34,853,070**
Անհատներին տրված վարկեր		
Անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր	11,894,266	10,650,232
Հիփոթեքային վարկեր	5,918,862	2,805,923
Ոսկու գրավով վարկեր	5,905,991	5,904,584
Էքսպրես վարկեր առանց երաշխավորության	1,179,693	2,685,149
Էքսպրես վարկեր երաշխավորությամբ	887,010	1,474,187
Աշխատավարձային ծրագրերի գծով վարկեր	707,000	786,041
Դրամական միջոցների գրավով վարկեր	336,774	900,998
Վարկային գծեր	230,514	521,647
Այլ վարկեր անհատներին	2,617,709	1,442,116
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**29,677,819**	**27,170,877**
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված համախառն վարկեր	**71,225,099**	**62,023,947**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(9,754,597)	(4,260,158)
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված զուտ վարկեր	**61,470,502**	**57,763,789**

(ա) Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	31 դեկտեմբերի 2018թ.				31 դեկտեմբեր ի 2017թ.
	1-ին փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
Իրավաբանական անձանց տրված վարկեր					
Վարկեր խոշոր կազմակերպություններին					
- ոչ ժամկետանց	19,780,307	-	-	19,780,307	12,253,086
- ոչ ժամկետանց, արժեզրկված	-	-	13,607,727	13,607,727	12,554,216
Ընդամենը համախառն վարկեր խոշոր կազմակերպություններին	**19,780,307**	**-**	**13,607,727**	**33,388,034**	**24,807,302**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	**(182,092)**	**-**	**(7,637,739)**	**(7,819,831)**	**(2,736,400)**
Ընդամենը զուտ վարկեր խոշոր կազմակերպություններին	**19,598,215**	**-**	**5,969,988**	**25,568,203**	**22,070,902**
Վարկեր առևտրային կազմակերպություններին					
- ոչ ժամկետանց	1,523,437	-	111,512	1,634,949	1,609,375
- մինչև 30 օր ժամկետանց	-	6,151	-	6,151	22,379
- 31-90 օր ժամկետանց				-	468,926
- 91-180 օր ժամկետանց	-	-	100,196	100,196	41,660
- 81-360 օր ժամկետանց	-	-	332,691	332,691	79,737
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	466,223	466,223	326,380
Ընդամենը համախառն վարկեր առևտրային կազմակերպություններին	**1,523,437**	**6,151**	**1,010,622**	**2,540,210**	**2,548,457**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	**(13,979)**	**-**	**(367,043)**	**(381,022)**	**(284,704)**
Ընդամենը զուտ վարկեր առևտրային կազմակերպություններին	**1,509,458**	**6,151**	**643,579**	**2,159,188**	**2,263,753**
Վարկեր արդյունաբերական կազմակերպություններին	-	-	-		
- ոչ ժամկետանց	1,342,573	-	40,059	1,382,632	1,433,501
- մինչև 30 օր ժամկետանց	-	-	30,756	30,756	21,250
- 91-180 օր ժամկետանց				-	24,649
- 81-360 օր ժամկետանց				-	140,772
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	166,564	166,564	388,108
Ընդամենը համախառն վարկեր արդյունաբերական կազմակերպություններին	**1,342,573**	**-**	**237,379**	**1,579,952**	**2,008,280**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	**(485)**	**-**	**(16,866)**	**(17,351)**	**(133,287)**
Ընդամենը զուտ վարկեր արդյունաբերական կազմակերպություններին	**1,342,088**	**-**	**220,513**	**1,562,601**	**1,874,993**

	31 դեկտեմբերի 2018թ.				31 դեկտեմբերի 2017թ.
	1-ին փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
Գրավով ապահովված վարկեր փոքր և միջին չափի կազմակերպություններին					
- ոչ ժամկետանց	641,462	76,437	35,304	753,203	1,058,699
- մինչև 30 օր ժամկետանց	1,971	11,124	15,463	28,558	65,083
- 31-90 օր ժամկետանց	-	35,097	-	35,097	50,475
- 91-180 օր ժամկետանց	-	-	10,945	10,945	37,252
- 81-360 օր ժամկետանց	-	-	7,569	7,569	103,525
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	120,396	120,396	158,007
Ընդամենը համախառն գրավով ապահովված վարկեր փոքր և միջին չափի կազմակերպություններին	**643,433**	**122,658**	**189,677**	**955,768**	**1,473,041**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	**(1,933)**	**(309)**	**(23,693)**	**(25,935)**	**(76,112)**
Ընդամենը զուտ գրավով ապահովված վարկեր փոքր և միջին չափի կազմակերպություններին	**641,500**	**122,349**	**165,984**	**929,833**	**1,396,929**
Դրամական միջոցների գրավով վարկեր					
- ոչ ժամկետանց	242,590	-	-	242,590	1,532,333
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	**-**	**-**	**-**	**-**	**-**
Ընդամենը զուտ դրամական միջոցների գրավով վարկեր	**242,590**	**-**	**-**	**242,590**	**1,532,333**
Այլ վարկեր իրավաբանական անձանց					
- ոչ ժամկետանց	1,038,269	2,585	767,019	1,807,873	1,276,339
- մինչև 30 օր ժամկետանց	8,417	17,912	27,135	53,464	53,913
- 31-90 օր ժամկետանց					77,072
- 91-180 օր ժամկետանց	-	-	4,769	4,769	2,941
- 81-360 օր ժամկետանց					215,921
- ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	974,620	974,620	857,471
Ընդամենը համախառն այլ վարկեր իրավաբանական անձանց	**1,046,686**	**20,497**	**1,773,543**	**2,840,726**	**2,483,657**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	**(5,578)**	**(473)**	**(905,418)**	**(911,469)**	**(484,779)**
Ընդամենը զուտ այլ վարկեր իրավաբանական անձանց	**1,041,108**	**20,024**	**868,125**	**1,929,257**	**1,998,878**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված համախառն վարկեր	**24,579,026**	**149,306**	**16,818,948**	**41,547,280**	**34,853,070**
Ընդամենը սպասվող պարտքային վնասի գծով պահուստ իրավաբանական անձանց տրված վարկերի համար	**(204,067)**	**(782)**	**(8,950,759)**	**(9,155,608)**	**(3,715,283)**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված զուտ վարկեր	**24,374,959**	**148,524**	**7,868,189**	**32,391,672**	**31,137,787**
Անհատներին տրված վարկեր					
Անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր					
- ոչ ժամկետանց	9,756,583	169,682	29,429	9,955,694	9,073,788
- մինչև 30 օր ժամկետանց	200,362	922	-	201,284	173,018

	31 դեկտեմբերի 2018թ.				31 դեկտեմբեր ի 2017թ.
	1-ին փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
- 31-90 օր ժամկետանց	119,743	-	-	119,743	157,211
- 91-180 օր ժամկետանց	50,558	-	-	50,558	283,651
- 81-360 օր ժամկետանց	58,659	-	181,580	240,239	555,302
- ավելի քան 1 տարի ժամկետանց	30,533	-	1,296,215	1,326,748	407,262
Ընդամենը համախառն անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր	**10,216,438**	**170,604**	**1,507,224**	**11,894,266**	**10,650,232**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	**(70,883)**	**(13,161)**	**(217,631)**	**(301,675)**	**(299,568)**
Ընդամենը զուտ անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր	**10,145,555**	**157,443**	**1,289,593**	**11,592,591**	**10,350,664**
Հիփոթեքային վարկեր					
- ոչ ժամկետանց	5,550,213	42,831	-	5,593,044	2,636,273
- մինչև 30 օր ժամկետանց	91,553	-	-	91,553	5,954
- 31-90 օր ժամկետանց	71,528		-	71,528	27,978
- 91-180 օր ժամկետանց	11,289	-	-	11,289	31,049
- 81-360 օր ժամկետանց	24,437	-	-	24,437	82,175
- ավելի քան 1 տարի ժամկետանց	6,351	-	120,660	127,011	22,494
Ընդամենը համախառն հիփոթեքային վարկեր	**5,755,371**	**42,831**	**120,660**	**5,918,862**	**2,805,923**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	**(17,463)**	**(4,058)**	**(7,014)**	**(28,535)**	**(28,060)**
Ընդամենը զուտ հիփոթեքային վարկեր	**5,737,908**	**38,773**	**113,646**	**5,890,327**	**2,777,863**
Ոսկու գրավով վարկեր					
- ոչ ժամկետանց	5,587,245	43,047	15,382	5,645,674	5,796,017
- մինչև 30 օր ժամկետանց	127,630	206	108	127,944	54,172
- 31-90 օր ժամկետանց	84,335	358	-	84,693	30,379
- 91-180 օր ժամկետանց	22,845	401	-	23,246	12,731
- 81-360 օր ժամկետանց	14,486	-	-	14,486	11,285
- ավելի քան 1 տարի ժամկետանց	5,942	-	4,006	9,948	-
Ընդամենը համախառն ոսկու գրավով վարկեր	**5,842,483**	**44,012**	**19,496**	**5,905,991**	**5,904,584**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	**(14,629)**	**(5,491)**	**(9,854)**	**(29,974)**	**(29,526)**
Ընդամենը զուտ ոսկու գրավով վարկեր	**5,827,854**	**38,521**	**9,642**	**5,876,017**	**5,875,058**
Էքսպրես վարկեր առանց երաշխավորության					
- ոչ ժամկետանց	1,090,903	29,545	-	1,120,448	2,551,731
- մինչև 30 օր ժամկետանց	31,034	-	-	31,034	69,644
- 31-90 օր ժամկետանց	15,798	219	-	16,017	63,774
- 91-180 օր ժամկետանց	6,188	84	-	6,272	-
- 81-360 օր ժամկետանց	4,740	968	-	5,708	-
- ավելի քան 1 տարի ժամկետանց	194	20	-	214	-
Ընդամենը համախառն էքսպրես վարկեր առանց երաշխավորության	**1,148,857**	**30,836**	**-**	**1,179,693**	**2,685,149**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	**(46,402)**	**(13,916)**	**-**	**(60,319)**	**(77,513)**
Ընդամենը զուտ էքսպրես վարկեր	**1,102,455**	**16,920**	**-**	**1,119,374**	**2,607,636**

	31 դեկտեմբերի 2018թ.				31 դեկտեմբեր ի 2017թ.
	1-ին փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
առանց երաշխավորության					
Դրամական միջոցների գրավով վարկեր					
- ոչ ժամկետանց	311,426	25,348	-	336,774	900,998
Ընդամենը համախառն դրամական միջոցների գրավով վարկեր	**311,426**	**25,348**	**-**	**336,774**	**900,998**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	**-**	**-**	**-**	**-**	**-**
Ընդամենը զուտ դրամական միջոցների գրավով վարկեր	**311,426**	**25,348**	**-**	**336,774**	**900,998**
էքսպրես վարկեր երաշխավորությամբ					
- ոչ ժամկետանց	804,288	9,336	-	813,624	1,413,660
- մինչև 30 օր ժամկետանց	15,023	405	-	15,428	9,480
- 31-90 օր ժամկետանց	6,337	-	-	6,337	17,271
- 91-180 օր ժամկետանց	4,781	-	-	4,781	13,961
- 81-360 օր ժամկետանց	4,627	589	2,486	7,702	19,815
- ավելի քան 1 տարի ժամկետանց	362	-	38,776	39,138	-
Ընդամենը համախառն էքսպրես վարկեր երաշխավորությամբ	**835,418**	**10,330**	**41,262**	**887,010**	**1,474,187**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	**(14,838)**	**(3,077)**	**(24,712)**	**(42,627)**	**(30,053)**
Ընդամենը զուտ էքսպրես վարկեր երաշխավորությամբ	**820,580**	**7,253**	**16,550**	**844,383**	**1,444,134**
Աշխատավարձային ծրագրերի գծով վարկեր					
- ոչ ժամկետանց	663,198	1,111	4,146	668,455	762,412
- մինչև 30 օր ժամկետանց	13,763	-	-	13,763	3,650
- 31-90 օր ժամկետանց	10,012	-	-	10,012	5,224
- 91-180 օր ժամկետանց	2,002	-	-	2,002	6,060
- 81-360 օր ժամկետանց	3,874	-	8,894	12,768	8,695
Ընդամենը համախառն աշխատավարձային ծրագրերի գծով վարկեր	**692,849**	**1,111**	**13,040**	**707,000**	**786,041**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	**(6,313)**	**(353)**	**(7,449)**	**(14,115)**	**(11,329)**
Ընդամենը զուտ աշխատավարձային ծրագրերի գծով վարկեր	**686,536**	**758**	**5,591**	**692,885**	**774,712**
Վարկային գծեր					
- ոչ ժամկետանց	222,623	-	-	222,623	491,058
- մինչև 30 օր ժամկետանց	3,283	-	-	3,283	3,711
- 31-90 օր ժամկետանց	1,468	-	-	1,468	16,406
- 91-180 օր ժամկետանց	3,130	-	-	3,130	-
- 81-360 օր ժամկետանց	-	-	-	-	2,414
- ավելի քան 1 տարի ժամկետանց	10	-	-	10	8,058
Ընդամենը համախառն վարկային գծեր	**230,514**	**-**	**-**	**230,514**	**521,647**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	**(4,289)**	**-**	**-**	**(4,289)**	**(13,989)**
Ընդամենը զուտ վարկային գծեր	**226,225**	**-**	**-**	**226,225**	**507,658**
Այլ վարկերի անհատներին					

	31 դեկտեմբերի 2018թ.				31 դեկտեմբեր ի 2017թ.
	1-ին փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ	Ընդամենը վարկեր հազ. դրամ
- ոչ ժամկետանց	2,240,729	21,686	5,557	2,267,972	1,338,063
- մինչև 30 օր ժամկետանց	39,811	4,963	-	44,774	19,197
- 31-90 օր ժամկետանց	18,219	-	-	18,219	12,415
- 91-180 օր ժամկետանց	3,475	-	-	3,475	44,278
- 81-360 օր ժամկետանց	3,716	242	196,895	200,853	11,195
- ավելի քան 1 տարի ժամկետանց	2,975	-	79,441	82,416	16,968
Ընդամենը համախառն այլ վարկերի անհատներին	**2,308,925**	**26,891**	**281,893**	**2,617,709**	**1,442,116**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	**(49,775)**	**(7,080)**	**(60,601)**	**(117,456)**	**(54,838)**
Ընդամենը զուտ այլ վարկերի անհատներին	**2,259,150**	**19,811**	**221,293**	**2,500,254**	**1,387,278**
Ընդամենը անհատներին տրված համախառն վարկեր	**27,342,281**	**351,963**	**1,983,575**	**29,677,819**	**27,170,877**
Ընդամենը սպասվող պարտքային վնասի գծով պահուստ անհատներին տրված վարկերի համար	**(224,592)**	**(47,136)**	**(327,261)**	**(598,989)**	**(544,876)**
Ընդամենը անհատներին տրված զուտ վարկեր	**27,117,689**	**304,827**	**1,656,314**	**29,078,830**	**26,626,001**

(բ) Գրավի և այլ ապահովության վերլուծություն

(i) Իրավաբանական անձանց տրված վարկեր

Իրավաբանական անձանց տրված վարկերը ենթակա են վարկային գնահատման և արժեզրկման ստուգման անհատական հիմունքով: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի ընդհանուր վճարունակությունը վերջինիս տրամադրված վարկի պարտքայի որակի կարևոր ցուցանիշ է: Այնուամենայնիվ, գրավն ապահովում է լրացուցիչ ապահովվածություն, և Բանկը որպես կանոն գրավ է պահանջում իրավաբանական անձանցից:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն իրավաբանական անձանց տրված վարկերի համար ապահովություն ծառայող գրավի և ապահովության այլ միջոցների (առանց արժեզրկման) վերաբերյալ՝ ըստ գրավի տեսակների:

31 դեկտեմբերի 2018թ.

հազ. դրամ	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	Գրավի իրական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար	Գրավի իրական արժեքը վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար
Չարժեզրկված վարկեր			
Բանկային հաշվի շրջանառություն	4,338,179	4,338,179	-
Անշարժ գույք	4,778,882	-	4,778,882
Կորպորատիվ երաշխավորություն	6,795,629	-	6,795,629
Կորպորատիվ բաժնետոմսեր	3,852,334	-	3,852,334
Բարձր իրացվելի ակտիվներ*	197,453	197,453	-
Առանց գրավի	861,369		861,369
Առանց գրավի կամ ապահովության այլ միջոցի	3,699,637	-	3,699,637
Ընդամենը չարժեզրկված վարկեր	**24,523,483**	**4,535,632**	**19,987,851**
Արժեզրկված վարկեր			
Անշարժ գույք**	5,642,939	5,642,939	-
Բարձր իրացվելի ակտիվներ*	2,225,250	2,225,250	-
Ընդամենը արժեզրկված վարկեր	**7,868,189**	**7,868,189**	**-**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**32,391,672**	**12,403,821**	**19,987,851**

31 դեկտեմբերի 2017թ.

հազ. դրամ	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	Գրավի իրական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար	Գրավի իրական արժեքը վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր			
Բանկային հաշվի շրջանառություն	7,241,797	7,241,797	-
Անշարժ գույք	5,490,769	-	5,490,769
Կորպորատիվ բաժնետոմսեր	3,395,000	-	3,395,000
Շրջանառվող արժեթղթեր	1,416,283	-	1,416,283
Սարքավորումներ	552,923	-	552,923
Բարձր իրացվելի ակտիվներ*	159,721	159,721	-
Բանկերի երաշխավորություններ	45,364	-	45,364
Կորպորատիվ երաշխավորություններ	58,063	-	58,063
Այլ գրավ	30,006	-	30,006
Առանց գրավի (անձնական երաշխավորություն)	44,300	-	44,300
Առանց գրավի կամ ապահովության այլ միջոցի	**18,434,226**	**7,401,518**	**11,032,708**
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր			
ժամկետանց կամ արժեզրկված վարկեր	12,628,084	-	12,628,084

Անշարժ գույք**	52,301	-	52,301
Սարքավորումներ	1,693	-	1,693
Կորպորատիվ երաշխավորություններ	4,389	-	4,389
Այլ գրավ	17,095	-	17,095
Առանց գրավի (անձնական երաշխավորություն)	**12,703,562**	-	**12,703,562**
Առանց գրավի կամ ապահովության այլ միջոցի	**31,137,788**	**7,401,518**	**23,736,270**

* Բարձր իրացվելի ակտիվները ներառում են բանկերի և հաճախորդների ավանդները:

** Անշարժ գույքի գումարում ներառված 3,744,738 հազար դրամ (2017թ-ին՝ 5,317,311 հազար դրամ) գումարն ուղղակիորեն գրավադրված չէ Բանկում: Այնուամենայնիվ, այն ապահովություն է ծառայում երկու վարկառուներին տրամադրված վարկերի դիմաց Բանկում գրավադրված իրավունքի համար:

Վերը ներկայացված աղյուսակը բացառում է լրացուցիչ գրավի անհրաժեշտությունը:

Բանկն ունի վարկեր, որոնց համար գրավի իրական արժեքը գնահատվել է վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ և չի վերանայվել՝ հետագա փոփոխություններն արտացոլելու նպատակով, ինչպես նաև վարկեր, որոնց գրավի իրական արժեքը չի որոշվել: Որոշ վարկերի համար գրավի իրական արժեքը վերանայվել է հաշվետու ամսաթվի դրությամբ: Գրավի գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է կախված այն փաստից, թե երբ է այն գնահատվել, եթե նման գնահատում իրականացվել է:

Մի քանի տեսակի գրավներով ապահովված վարկերի համար բացահայտվում է այն գրավը, որն առավել համապատասխանում է արժեզրկման գնահատմանը: Անհատներից, այդ թվում ՓՄՁ վարկառուների բաժնետերերից, ստացված հավաստումները չեն դիտարկվում արժեզրկման գնահատման նպատակների համար: Այդ իսկ պատճառով, նման վարկերը և մասնակիորեն ապահովված վարկերի չապահովված մասերը ներկայացվում են որպես առանց գրավի կամ ապահովության այլ միջոցների վարկեր:

Ոչ ժամկետանց և ոչ արժեզրկված վարկերի փոխհատուցելիությունը հիմնականում կախված է վարկառուների վճարունակությունից, այլ ոչ՝ գրավի արժեքից, և Բանկի համար պարտադիր չէ վերանայել գրավի գնահատումը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

(ii) Անհատներին տրված վարկեր

Սպառողական վարկերի համար հիմնականում որպես ապահովություն է ծառայում անշարժ գույքը: Բանկի քաղաքականության համաձայն՝ սպառողական վարկերը տրամադրվում են առավելագույնը 40% վարկ/արժեք հարաբերակցությամբ վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ:

Երաշխավորությամբ և առանց երաշխավորության էքսպրես վարկերը հիմնականում գրավով ապահովված չեն:

Ոսկու գրավով վարկերի դիմաց գրավադրվում են ոսկյա զարդերը:

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Բանկի քաղաքականության համաձայն՝ հիփոթեքային վարկերը տրամադրվում են առավելագույնը 80% վարկ/արժեք հարաբերակցությամբ վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ: Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրված անշարժ գույքի իրական արժեքն առնվազն հավասար է առանձին վարկերի հաշվեկշռային արժեքին՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ որոշված արժեքը:

Դրամական միջոցների գրավով վարկերի և վարկային գծերի մի մասի դիմաց գրավադրվում են բարձր իրացվելի ակտիվները, որոնք ներառում են ավանդները, Բանկի կողմից թողարկված պարտքային արժեթղթերը և ընթացիկ հաշիվները:

Աշխատավարձային ծրագրերի գծով վարկերի և վարկային գծերի մի մասի դիմաց գրավադրվում են հաճախորդների ընթացիկ հաշիվները:

Գրավի իրական արժեքը գնահատվել է վարկի տրամադրման պահին և չի վերանայվել մինչև հաշվետու ամսաթիվը՝ հետագա փոփոխություններն արտացոլելու համար:

(iii) Բռնագանձված գրավ

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել 552,491 հազար դրամ զուտ հաշվեկշռային արժեքով ակտիվներ՝ հաճախորդներին տրված վարկերի դիմաց գրավադրված միջոցների նկատմամբ սեփականության իրավունք ստանալու միջոցով (2017թ-ին՝ 459,259 հազար դրամ): 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բռնագանձված գրավն իրենից ներկայացնում է անշարժ գույք:

	2018թ. Հաշվեկշռային արժեք հազ. դրամ	2017թ. Հաշվեկշռային արժեք հազ. դրամ
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	749,383	3,164,048
Ավելացումներ	552,491	459,259
Վաճառք	(214,431)	(2,873,924)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,087,443**	**749,383**

Բանկի քաղաքականության համաձայն՝ նման ակտիվները պետք է վաճառվեն հնարավորինս սեղմ ժամկետներում:

(գ) Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են տնտեսության հետևյալ ճյուղերում գործունեություն իրականացնող հաճախորդներին.

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Առևտուր և ֆինանսներ	21,795,817	21,204,831
Էներգետիկայի ոլորտ	8,697,421	7,928,899
Արդյունաբերություն	1,878,999	1,773,712
Հանգստի կազմակերպման ոլորտ	645,957	616,180
Տրանսպորտ և կապ	647,589	441,745
Շինարարություն	613,725	118,680
Հանքարդյունաբերություն	53,899	53,903
Գյուղատնտեսություն, անտառապահություն և փայտամշակում	19,935	20,610
Սպասարկման ոլորտ	132,800	327
Այլ	7,061,138	2,694,183
Անհատներին տրված վարկեր	29,677,819	27,170,877
	71,225,099	**62,023,947**
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(9,754,597)	(4,260,158)
	61,470,502	**57,763,789**

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 66,319,916 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2017թ-ին՝ 62,023,947 հազար դրամ) տրամադրվել են Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին:

(դ) Գրավադրված ակտիվներ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2,503,920 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2017թ-ին՝ 3,159,743 հազար դրամ) ծառայում են որպես գրավ վարկային կազմակերպություններից ստացված վարկերի և ՀՀ կառավարությունից ստացված փոխառությունների համար (Ծանոթագրություններ 16, 20):

(ե) Պարտքային ռիսկին ենթարկվածություն

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի հինգ վարկառու կամ կապակցված վարկառուների խմբեր (2017թ-ին՝ չորս), որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկերի ընդհանուր գումարը կազմում է 29,776,070 հազար դրամ (2017թ-ին՝ 26,218,329 հազար դրամ):

(զ) Վարկերի մարման ժամկետներ

Վարկային պորտֆելի մարման ժամկետների վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 23-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

74 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Շենքեր	Վարձակալված գույքի բարելավում	Համակարգիչներ և կապի սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխադրա-միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք/վերագնահատված արժեք							
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	4,396,920	208,321	1,375,132	864,006	101,781	564,637	7,510,797
Ավելացումներ	68,894	58,196	96,980	294,496	26,455	105,457	650,478
Օտարումներ/դուրսգրումներ	(187,477)	-	(8,016)	(71,768)	(46,365)	(11,784)	(325,410)
Վերադասակարգում	-	-	35,603	(35,603)	-	-	-
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,278,337**	**266,517**	**1,499,699**	**1,051,131**	**81,871**	**658,310**	**7,835,865**
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	787,947	45,612	831,003	456,714	55,387	299,856	2,476,519
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	85,336	10,967	169,665	90,289	6,965	106,932	470,154
Օտարումներ/դուրսգրումներ	(50,900)	-	(7,927)	(62,370)	(39,907)	(11,548)	(172,652)
Վերադասակարգում	-	-	274	(274)	-	-	-
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**822,383**	**56,579**	**993,015**	**484,359**	**22,445**	**395,240**	**2,774,021**
Հաշվեկշռային արժեք 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,455,954**	**209,938**	**506,684**	**566,772**	**59,426**	**263,070**	**5,061,844**
Սկզբնական արժեք/վերագնահատված արժեք							
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	4,324,746	185,036	1,091,770	776,983	93,763	533,585	7,005,883
Ավելացումներ	72,174	25,565	287,813	113,010	32,096	71,603	602,261
Օտարումներ/դուրսգրումներ	-	(2,280)	(4,451)	(25,987)	(24,078)	(40,551)	(97,347)
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,396,920**	**208,321**	**1,375,132**	**864,006**	**101,781**	**564,637**	**7,510,797**
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	703,512	35,526	709,224	415,985	75,100	242,130	2,181,477
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	84,435	10,086	125,771	63,814	4,365	98,277	386,748
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	(3,992)	(23,085)	(24,078)	(40,551)	(91,706)
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**787,947**	**45,612**	**831,003**	**456,714**	**55,387**	**299,856**	**2,476,519**
Հաշվեկշռային արժեք							
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	3,621,234	149,510	382,546	360,998	18,663	291,455	4,824,406
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,608,973**	**162,709**	**544,129**	**407,292**	**46,394**	**264,781**	**5,034,278**

(ա) Վերագնահատված ակտիվներ

2014թ. ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը հանձնարարել է անկախ գնահատողին իրականացնել շենքերի իրական արժեքի գնահատում: Անկախ գնահատման արդյունքների համաձայն՝ շենքերի իրական արժեքը մոտավորապես համապատասխանել է դրանց հաշվեկշռային արժեքին:

Գնահատումն իրականացվել է շուկայական և եկամտի կապիտալացման մեթոդների համակցությամբ:

Շենքերի իրական արժեքը դասվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին, քանի որ կիրառվող գնահատման մեթոդի դիտարկելի ելակետային տվյալների գծով կատարվել են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ (գործակիցներ):

Հիմք ընդունելով 2015-2018թթ. անշարժ գույքի գների փոփոխությունների վերլուծությունը՝ ղեկավարությունը գտնում է, որ շենքերի իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է դրանց հաշվեկշռային արժեքին 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Եթե վերագնահատում չիրականացվեր, ապա 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շենքերի հաշվեկշռային արժեքը կկազմեր 3,368,903 հազար դրամ (2017թ-ին՝ 3,480,180 հազար դրամ):

75 Այլ ակտիվներ

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Այլ ստացվելիք գումարներ	250,940	147,034
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(660)	(14,984)
Ընդամենը զուտ այլ ֆինանսական ակտիվներ	**250,280**	**132,050**
Բռնագանձված ակտիվներ	1,087,443	749,383
Կանխավճարներ	767,052	360,550
Նյութեր և պաշարներ	75,277	59,218
Այլ	10,882	-
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	**1,940,654**	**1,169,151**
Ընդամենը այլ ակտիվներ	**2,190,934**	**1,301,201**

76 Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Ժամկետային ավանդներ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	1,914,529	2,139,087
Գրավով ապահովված վարկեր վարկային կազմակերպություններից	1,707,152	1,926,549
Լորո հաշիվներ	1,624,109	923,183
	5,245,790	**4,988,819**

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,802,431 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2017թ-ին՝ 1,918,263 հազար դրամ) ծառայում են որպես գրավ վարկային կազմակերպություններից ստացված գրավով ապահովված վարկերի համար (Ծանոթագրություն 13):

2018թ. դեկտեբերի 31-ի դրությամբ բանկերը և այլ ֆինանսական կազմակերպությունները Բանկում չունեին տեղաբաշխված այնպիսի միջոցներ (2017թ-ին տեղաբաշխված այդպիսի միջոցներ չկային), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

77 Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ ՀՀ ԲԿ-ին	4,002,696	-
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ տեղական բանկերին	2,769,206	-
	6,771,902	**-**

78 Թողարկված պարտքային արժեթղթեր

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Թողարկված պարտքային արժեթղթեր	**10,823,040**	**10,815,059**

2018թ. հոկտեմբերի ընթացքում Բանկը թողարկել է 5,000,000 ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտատոմսեր (2017թ-ին՝ 15,000,000 ԱՄՆ դոլար և 1,000,000 հազար դրամ): Պարտատոմսերը ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ» ֆոնդային բորսայում:

Տարվա ընթացքում մարվել են Բանկի «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ» ֆոնդային բորսայում ցուցակված 2016թ-ին թողարկված 5,000,000 ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտատոմսերը:

(ա) Պարտավորությունների փոփոխությունների և ֆինանսավորման գործունեությունից ստացվող դրամական միջոցների հոսքերի համադրում – թողարկված պարտքային արժեթղթեր

հազ. դրամ	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	10,815,059	2,428,223
Ֆինանսավորման գործունեությունից ստացվող դրամական միջոցների հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Մուտքեր թողարկված պարտքային արժեթղթերից	2,418,750	8,336,627
թողարկված պարտքային արժեթղթերի մարում	(2,422,500)	-
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացվող դրամական միջոցների հոսքերի հետ կապված փոփոխություններ	**(3,750)**	**8,336,627**
Արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների ազդեցությունը	**(448)**	**21,986**
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	712,633	431,068

հազ. դրամ	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Վճարված տոկոսներ	(700,454)	(402,845)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10,823,040**	**10,815,059**

79 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
- Անհատներ	5,880,267	4,066,690
- Իրավաբանական անձինք	4,820,251	2,900,646
Ժամկետային ավանդներ		
- Անհատներ	42,687,970	43,406,498
- Իրավաբանական անձինք	2,931,868	14,277,174
	56,320,356	**64,651,008**

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկում պահվող հաճախորդների ավանդների 3,655,108 հազար դրամ գումարով մնացորդները (2017թ-ին՝ 12,200,646 հազար դրամ) ծառայում են որպես գրավ հաճախորդներին տրված վարկերի և Բանկի կողմից տրամադրված երաշխավորությունների համար:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի այնպիսի հաճախորդ (2017թ-ին՝ մեկ հաճախորդ), որի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդները կազմում էին 12,200,646 հազար դրամ:

80 Այլ փոխառություններ

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Փոխառություններ ՀՀ կառավարությունից	691,990	1,293,648
Գրավով չապահովված վարկեր այլ միջազգային ֆինանսական կազմակերպություններից	-	64,058
	691,990	**1,357,706**

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 701,489 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2017թ-ին՝ 1,241,480 հազար դրամ) ծառայում են որպես գրավ ՀՀ կառավարությունից ստացված փոխառությունների համար (Ծանոթագրություն 13):

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի այնպիսի վարկատու (2017թ-ին նման վարկառուներ չկային), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

(ա) Պարտավորությունների փոփոխությունների և ֆինանսավորման գործունեությունից ստացվող դրամական միջոցների հոսքերի համադրում – այլ փոխառություններ

հազ. դրամ	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	1,357,706	3,262,564
Ֆինանսավորման գործունեությունից ստացվող դրամական միջոցների հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Մուտքեր այլ փոխառություններից	315,235	414,599
Այլ փոխառությունների մարում	(968,962)	(2,305,099)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացվող դրամական միջոցների հոսքերի հետ կապված փոփոխություններ	**(653,727)**	**(1,890,500)**
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	77,992	210,370
Վճարված տոկոսներ	(89,981)	(224,728)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**691,990**	**1,357,706**

81 Այլ պարտավորություններ

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Այլ ֆինանսական պարտավորություններ	269,467	273,041
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**269,467**	**273,041**
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	664,205	458,053
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	288,661	211,300
Վճարվելիք հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	115,762	1,246
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**1,068,628**	**670,599**
Ընդամենը այլ պարտավորություններ	**1,338,095**	**943,640**

82 Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

(ա) Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 679,437 սովորական բաժնետոմսից (2017թ-ին՝ 679,437): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 50,000 դրամ (2017թ-ին՝ 50,000 դրամ):

2018թ. ընթացքում սովորական բաժնետոմսեր չեն թողարկվել (2017թ-ին նույնպես չէին թողարկվել): Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի

բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Պահուստների բնույթը և նպատակը

Շենքերի վերագնահատումից աճ

Շենքերի վերագնահատումից աճը ներառում է շենքերի վերագնահատված կուտակային դրական արժեքը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

(գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով:

2018թ-ին և 2017թ-ին շահաբաժիններ չեն հայտարարվել:

83 Ռիսկերի կառավարում

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարումն էական գործոն է բանկային ոլորտի համար և Բանկի գործառնությունների կարևոր տարր է: Ֆինանսական ռիսկը, շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, գործառնական և իրավական ռիսկերը և համբավը վտանգող ռիսկն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով: Բանկը մշակել է նշանակալի ռիսկերի և կապիտալի մասին հաշվետվությունների ներկայացման համակարգ:

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար՝ սահմանված համապատասխան սահմանաչափերում Բանկի գործունեությունն ապահովելու նպատակով: Ռիսկերի կառավարման վարչության ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և համապատասխանության ապահովման համար, նա նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ռիսկերի կառավարման վարչության ղեկավարը ուղղակիորեն հաշվետու է Վարչության նախագահին և անուղղակիորեն՝ Բանկի Խորհրդին: Ռիսկերի կառավարման վարչությունը չի ենթարկվում և հաշվետու չէ համապատասխան ռիսկերն ընդունող բաժիններին:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով, կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության չափից և տեսակից:

Ռիսկի թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցման ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը: Բացի ստանդարտ վարկային և շուկայական վերլուծություններից, Ռիսկերի կառավարման բաժինը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական միավորների հետ՝ նրանց մասնագիտական կարծիքը ձեռք բերելու համար:

Բանկի ներքին փաստաթղթերի համաձայն՝ Ռիսկերի կառավարման վարչությունը և ներքին աուդիտի բաժինը հաճախ պատրաստում են Բանկի էական ռիսկերին անդրադարձող հաշվետվություններ: Հաշվետվությունները ներառում են դիտարկումներ Բանկի ընթացակարգերի և մեթոդաբանության արդյունավետության գնահատման վերաբերյալ և առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ:

(բ) Ֆինանսական ռիսկերի ուսումնասիրություն

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ֆինանսական ռիսկերին Բանկի ենթարկվածության վերաբերյալ:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար,

ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ստեղծումը՝ պարտքային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական անձանց և անհատների) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական վերահսկման ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող մենեջերների կողմից և փոխանցվում են Վարկային բաժին, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության կառուցվածքային վերլուծության և ֆինանսական արդյունքների վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման բաժնի կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկի դիմումը՝ Կորպորատիվ վարկերի բաժնի և Ռիսկերի կառավարման բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Բանկի իրավաբանական, հաշվապահական հաշվառման և հարկային բաժինների կողմից՝ կախված ռիսկերի առանձնահատկություններից:

Բանկը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Անհատների վարկային դիմումներն ուսումնասիրվում են Անհատական վարկավորման ծառայությունների բաժնի կողմից՝ կիրառելով Ռիսկերի կառավարման բաժնի հետ համատեղ մշակած գնահատման մոդելները և դիմումների տվյալների ստուգման ընթացակարգերը:

Բացի առանձին վարկերի վերլուծությունից, Ռիսկերի կառավարման բաժինը վարկային պորտֆելը գնահատում է պարտքային ռիսկի կենտրոնացվածության և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Պարտքային ռիսկ – սպասվող պարտքային վնասի գումարներ

Արժեզրկման գնահատման համար օգտագործվող ելակետային տվյալներ, ենթադրություններ և մեթոդներ

Տես՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Ծանոթագրություն 3 (ե) (iv) կետում:

Պարտքային ռիսկի էական աճ

Երբ Բանկը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի գծով պարտականությունների չկատարման ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի: Գնահատումը ներառում է թե՛ քանակական և թե՛ որակական տվյալները, ինչպես նաև Բանկի նախկին փորձի, վարկային որակի փորձագետների գնահատման և հեռանկարի վերաբերյալ տեղեկատվության վրա հիմնված վերլուծությունը:

Գնահատման նպատակն է պարզել, թե արդյոք տեղի է ունցել պարտքային ռիսկի էական աճ՝ համեմատելով հետևյալ երկու ցուցանիշները.

- պարտականությունների չկատարման հավանականությունը ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում՝ հաշվետու ամսաթվի դրությամբ,
- պարտականությունների չկատարման հավանականությունը ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում տվյալ պահի դրությամբ, որը գնահատվել է պարտքային ռիսկին ենթարկվող գործիքի սկզբնական ճանաչման պահին (ճշգրտված վաղաժամկետ մարումների ակնկալիքների հետ կապված փոփոխությունների մասով՝ կիրառելի լինելու դեպքում):

Բանկն օգտագործում է երեք չափանիշ, որոշելու համար, թե արդյոք տեղի է ունցել պարտքային ռիսկի էական աճ.

- քանակական թեստ՝ հիմնված պարտականությունների չկատարման հավանականության փոփոխությունների վրա,
- որակական ցուցանիշներ և
- ժամկետանցության 30-օրյա սահմանափակիչ:

Պարտքային ռիսկի դասեր

Բանկը պարտքային ռիսկին ենթարկվող յուրաքանչյուր գործիքը դասում է պարտքային ռիսկի համապատասխան դասին՝ հիմք ընդունելով բազմազան տվյալներ, որոնք օգտագործվում են պարտականությունների չկատարման ռիսկը կանխատեսելու համար, և կիրառելով վարկի որակի վերաբերյալ փորձագետների դատողությունները:

Պարտքային ռիսկի դասերը որոշվում են որակական և քանակական գործոնների հիման վրա, որոնք ծառայում են որպես պարտականությունների չկատարման ռիսկի հայտանիշ: Այս գործոնները տարբեր են՝ կախված պարտքային ռիսկին ենթարկվող գործիքի բնույթից և վարկառուի տեսակից:

Պարտքային ռիսկի դասերը սահմանվում և այնպես են չափաբերվում, որ պարտականությունների չկատարման ռիսկը մի քանի ագամ աճում է պարտքային ռիսկի վատթարացմանը զուգահեռ, օրինակ՝ պարտքային ռիսկի 1-ին և 2-րդ դասերի պարտականությունների չկատարման ռիսկի միջև տարբերությունն ավելի մեծ է քան 2-րդ և 3-րդ դասերի միջև տարբերությունը:

Պարտքային ռիսկին ենթարկվող յուրաքանչյուր գործիք դասվում է պարտքային ռիսկի համապատասխան դասին սկզբնական ճանաչման պահին՝ հիմք ընդունելով վարկառուի վերաբերյալ առկա տեղեկատվությունը: Պարտքային ռիսկին ենթարկվող գործիքները կանոնավոր կերպով վերահսկվում են, որի արդյունքում գործիքը պարտքային ռիսկի մի դասից կարող է տեղափոխվել մեկ այլ դասի: Վերահսկողությունը որպես կանոն ներառում է հետևյալ տեղեկատվության վերլուծությունը.

Ենթարկվածությունը պարտքային ռիսկին	**Ենթարկվածությունը պարտքային ռիսկին (իրավաբանական անձիք և անհատներ)**
• Հաճախորդի փաստաթղթերի, օրինակ՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների, կառավարչական հաշվետվությունների, բյուջեների և կանխատեսումների պարբերական ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը: Ցուցանիշները, որոնց հատուկ ուշադրություն է դարձվում, ներառում են՝ համախառն շահույթը, ժամկետանց օրերի քանակը, ֆինանսական լծակի ցուցանիշը, պարտքի սպասարկման գործակիցը, համապատասխանությունը սահմանափակումների, կառավարման որակը, վերադաս ղեկավարության կազմի փոփոխությունները:	• Վճարումների մասին տեղեկատվությունը, ներառյալ՝ ժամկետանցության կարգավիճակի, մարումների փոփոխականության մասին տեղեկատվությունը:
• Վարկանիշային գործակալությունների, մամուլի հոդվածների տվյալները, արտաքին վարկանիշների փոփոխությունների մասին տեղեկատվությունը	• Տրամադրված սահմանաչափի օգտագործումը • Վարկային պայմանագրի պայմանների վերանայման դիմումը և դիմումի բավարարումը
• Պարտատոմսերի և վարկերի գծով պարտականությունների չկատարման սվոպերի գները վարկառուի համար՝ հասանելի լինելու դեպքում	• Գործունեության, ֆինանսական և տնտեսական պայմանների ընթացիկ և կանխատեսվող փոփոխությունները

Ենթարկվածությունը պարտքային ռիսկին	Ենթարկվածությունը պարտքային ռիսկին (իրավաբանական անձիք և անհատներ)
• Վարկառուի գործունեության ոլորտի քաղաքական, կարգավորիչ և տեխնոլոգիական միջավայրի կամ նրա գործունեության փաստացի և ակնկալվող էական փոփոխությունները	

Պարտականությունների չկատարման հավանականության ժամանակային կառուցվածքի ստեղծում

Պարտքային ռիսկի դասերը հանդիսանում են հիմնական ելակետային տվյալներ պարտքային ռիսկին ենթարկվող իրավաբանական անձանց հետ կապված պարտականությունների չկատարման հավանականության ժամանակային կառուցվածքը ստեղծելիս: Բանկը հավաքագրում է պարտքի սպասարկման և պարտականությունների չկատարման վերաբերյալ տեղեկատվություն պարտքային ռիսկին ենթարկվող գործիքների հետ կապված, որոնք վերլուծվում են ըստ վարկատեսակի և վարկառուի տեսակի, ինչպես նաև ըստ պարտքային ռիսկի դասի: Որոշ պորտֆելների համար օգտագործվում է նաև արտաքին վարկանիշային գործակալություններից ստացված տեղեկատվությունը: Բանկը սահմանում է պարտականությունների չկատարման առավելագույն չափ, որը հավասար է այն երկրի պարտականությունների չկատարման վարկանիշին, որտեղ իր գործունեությունն է իրականացնում վարկառուն:

Ժամկետանց օրերը հանդիսանում են հիմնական ելակետային տվյալներ պարտքային ռիսկին ենթարկվող անհատների հետ կապված պարտականությունների չկատարման հավանականության ժամանակային կառուցվածքը միգրացիայի մատրիցների Մարկովի մոդելում ստեղծելիս: Միգրացիայի մատրիցները կառուցվում են նախորդ 48 ամիսների տվյալների հիման վրա:

Պարտքային ռիսկի էական աճի որոշում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո: Պարտքային ռիսկի աճի էական լինելը որոշելիս հաշվի են առնվում ֆինանսական գործիքի և վարկառուի բնութագրերը և աշխարհագրական տարածաշրջանը: Էականության չափանիշները տարբեր են վարկավորման տարբեր տեսակների, մասնավորապես, իրավաբանական անձանց և անհատների վարկավորման համար:

Սկզբնական ճանաչումից հետո պարտքային ռիսկի աճը համարվում է էական, եթե դրա մասին են վկայում Բանկի պարտքային ռիսկի կառավարման հետ կապված որակական ցուցանիշները, որոնք այլ պարագայում կարող են ժամանակին ամբողջական առումով չարտացոլվել քանակական վերլուծության շրջանակներում: Սա վերաբերում է պարտքային ռիսկին ենթարկվող այն գործիքներին, որոնք համապատասխանում են բարձր ռիսկի որոշ չափանիշներին, որոնցից է հատուկ ուշադրության ցանկում ներառվելը: Այս որակական գործոնները հիմնված են փորձագետների դատողությունների և նախորդ տարիների համապատասխան փորձի վրա:

Որպես սահմանափակիչ, Բանկը համարում է, որ պարտքային ռիսկի էական աճ տեղի է ունենում ոչ ուշ, քան երբ ակտիվը դառնում է 30 օր ժամկետանց և 1 օր ժամկետանց՝ բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների և ներդրումային արժեթղթերի դեպքում: Ժամկետանց օրերի քանակը որոշվում է հաշվելով օրերն առաջին օրվանից, երբ վճարումն ամբողջությամբ չի ստացվել: Վճարում կատարելու ամսաթվերը որոշվում են առանց հաշվի առնելու արտոնյալ ժամանակահատվածը, որը կարող է տրամադրվել վարկառուին:

Որպես ընդհանուր ցուցանիշ համարվում է, որ տեղի է ունեցել պարտքային ռիսկին ենթարկված գործիքի պատքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո, եթե Բանկի մոդելավորման քանակական մեթոդների հիման վրա որոշվում է, որ ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի համար պարտականությունների չկատարման հավանականությունն աճել է ավելի քան 116%-ով:

Եթե գոյություն ունի վկայություն, որ այլևս չկա պարտքային ռիսկի էական աճ ի համեմատություն սկզբնական ճանաչման, գործիքի հետ կապված վնասի գծով պահուստը կրկին չափվում է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասի չափով: Պարտքային ռիսկի աճի որոշ որակական ցուցանիշներ, այդ թվում՝ վերանայված պայմանների խախտումը, կարող են վկայել պարտականությունների չկատարման ռիսկի աճի մասին, որը պահպանվում է, նույնիսկ երբ ցուցանիշն ինքնին դադարում է գոյություն ունենալ: Այս դեպքերում Բանկը սահմանում է փորձաշրջան, որի ընթացքում ֆինանսական ակտիվի գծով վճարումները պետք է կատարվեն ժամանակին և սահմանված չափով՝ ապացուցելու համար, որ պարտքային ռիսկն էականորեն նվազել է: Վարկի պայմանագրային պայմանների փոփոխության դեպքում, ապացույցն առ այն, որ գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասը ճանաչելու չափանիշներն այլևս չեն բավարարվում, ներառում է փոփոխված պայմանագրային պայմանների համաձայն վճարումները ժամանակին կատարելու մասին տեղեկատվությունը:

Պարտականությունների չկատարման սահմանում

Բանկը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով պարտականությունները չեն կատարվել, եթե՝

- հավանական չէ, որ վարկառուն ամբողջությամբ կկատարի իր վարկային պարտավորությունները, եթե Բանկը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (առկայության դեպքում), կամ
- Բանկի նկատմամբ վարկառուի էական վարկային պարտավորություններից որևէ մեկն ավելի քան 90 օր ժամկետանց է հաճախորդներին տրված վարկերի համար և ավելի քան 30 օր՝ բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների և ներդրումային արժեթղթերի համար: Օվերդրաֆտները համարվում են ժամկետանց այն օրվանից, երբ հաճախորդը խախտում է սահմանված սահմանաչափը կամ երբ հաճախորդին առաջարկվում է այնպիսի սահմանաչափ, որը փոքր է ընթացիկ չմարված պարտավորության գումարից, կամ
- հավանական է դառնում, որ ակտիվի պայմանները կվերանայվեն վարկառուի սնանկության արդյունքում՝ վարկային պարտավորությունները մարելու վարկառուի անկարողության պատճառով:

Վարկառուի կողմից պարտականությունների չկատարումը գնահատելիս՝ Բանկը հաշվի է առնում՝

- որակական ցուցանիշները, օրինակ՝ սահմանափակումների խախտումը,
- քանակական ցուցանիշները, օրինակ՝ նույն թողարկողի կողմից Բանկի նկատմամբ այլ պարտավորության ժամկետանց կարգավիճակը և չկատարումը և
- Բանկի ներսում մշակված և արտաքին աղբյուրներից ստացված տվյալները:

Ֆինանսական գործիքի գծով պարտականությունների չկատարման փաստը գնահատելիս ելակետային տվյալները և դրանց նշանակալիությունը կարող են փոփոխվել ժամանակի ընթացքում՝ հանգամանքների փոփոխություններն արտացոլելու համար:

Հեռանկարի վերաբերյալ տեղեկատվության ներառում

Բանկը ներառում է հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը, երբ գնահատում է, թե արդյոք տեղի է ունեցել գործիքի պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո և երբ չափում է սպասվող պարտքային վնասը: Հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը գնահատելիս Բանկն օգտագործում է փորձագետների դատողությունները:

Բանկը որոշել և փաստաթղթավորել է պարտքային ռիսկի և պարտքային վնասի առանցքային գործոնները ֆինանսական գործիքների յուրաքանչյուր պորտֆելի համար և, օգտագործելով նախորդ ժամանակաշրջանների տվյալների վերլուծությունը, գնահատել է մակրոտնտեսական փոփոխականների, պարտքային ռիսկի և պարտքային վնասի միջև հարաբերությունները: Առանցքային գործոն են հանդիսանում ՀՆԱ-ի կանխատեսումները, արտարժույթի փոխարժեքի և անշարժ գույքի շուկայի գների փոփոխությունները:

Առանցքային գործոն են հանդիսանում անշարժ գույքի շուկայի գների կանխատեսումները: Բանկը դիտարկում է երկու սցենար՝ հիմնական սցենար, որի հավանականությունը 90% և պակաս հավանականությամբ սցենար (սթրես թեստ), որի հավանականությունը կազմում 10%: Հիմնական սցենարի հիմքում ընկած է արտաքին աղբյուրներից ստացված տեղեկատվությունը: Արտաքին աղբյուրներից ստացված տեղեկատվությունը ներառում է Հայաստանի Հանրապետության պետական կադաստրի կողմից հրապարակված վերջին 10 տարիների ընթացքում անշարժ գույքի շուկայի գների փոփոխությունների վերաբերյալ տվյալները: Ղեկավարությունն ակնկալում է նույն միտումն անշարժ գույքի գների հետ կապված:

Այլ առանցքային գործոնների, ֆինանսական ակտիվների տարբեր պորտֆելների գծով պարտականությունների չկատարման և վնասի դրույքների կանխատեսվող փոխադեցությունը մշակվել է վերջին 6 տարիների տվյալների հիման վրա:

Ղեկավարության գնահատմամբ հեռանկարի վերաբերյալ տեղեկատվության ներառումն էական ազդեցություն չի ունենա:

Փոփոխված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Վարկի պայմանագրային պայմանները կարող են փոխվել մի շարք պատճառներից ելնելով, ներառյալ՝ շուկայական պայմանների փոփոխությունը, հաճախորդների պահպանումը և այլ գործոնները, որոնք կապված չեն հաճախորդի վճարունակության ներկայիս կամ հնարավոր վատթարացման հետ: Գոյություն ունեցող վարկը, որի պայմանները փոխվել են, կարող է ապաճանաչվել և վերանայված պայմաններով վարկը կարող է ճանաչվել որպես նոր վարկ իրական արժեքով՝ Ծանոթագրություն 3 (ե) (iii) կետում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

Երբ ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում են և փոփոխությունը չի հանգեցնում ապաճանաչման, պարտքային ռիսկի էական աճի որոշումն արտացոլում է հետևյալ երկու ցուցանիշների համեմատությունը.

- պարտականությունների չկատարման հավանականությունը ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում հաշվետու ամսաթվի դրությամբ՝ ելնելով փոփոխված պայմաններից,
- պարտականությունների չկատարման հավանականությունը ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում, որը գնահատվում է սկզբնական ճանաչման պահին առկա տվյալների և սկզբնական պայմանագրային պայմանների հիման վրա:

Երբ փոփոխությունը հանգեցնում ապաճանաչման, ճանաչվում է նոր վարկ և դասվում 1-ին փուլին (ենթադրելով, որ այն արժեզրկված չէ այդ պահին):

Բանկը վերանայում է ֆինանսական դժվարություններ ունեցող հաճախորդների վարկերի պայմանները (վարկային պայմանագրի պայմանների վերանայում)՝ նպատակ ունենալով առավելագույնի հասցնել գումարների հավաքագրման հնարավորությունները և նվազագույնի հասցնել պարտականությունների չկատարման ռիսկը: Վարկային պայմանագրի պայմանների վերանայման Բանկի քաղաքականության համաձայն՝ վարկի պայմանները վերնայավում են, եթե վարկառուն ներկա պահին չի կատարել իր պարտականությունները կամ գոյություն ունի պարտականությունների չկատարման մեծ ռիսկ, գոյություն ունի վկայություն, որ վարկառուն ձեռնարկել է բոլոր ողջամիտ քայլերը սկզբնական պայմանագրային պայմանների համաձայն մարումը կատարելու համար և ակնկալվում է, որ կկարողանա մարել վարկը վերանայված պայմաններով:

Պայմանների վերանայումը սովորաբար ներառում է մարման ժամկետի երկարաձգումը, տոկոսների վճարման ժամկետների փոփոխությունը և սահմանափակումների պայմանների փոփոխությունը: Վարկային պայմանագրի պայմանների վերանայման քաղաքականությունը գործում է թե՛ անհատներին և թե՛ իրավաբանական անձանց տրված վարկերի համար:

Վարկային պայմանագրի պայմանների վերանայման Բանկի քաղաքականության շրջանակներում փոփոխված ֆինանսական ակտիվների համար պարտականությունների չկատարման հավանականության գանահատումն արտացոլում է այն հանգամանքը, թե արդյոք փոփոխությունը բարելավել է կամ վերականգնել է տոկոսները և մայր գումարը հավաքագրելու Բանկի կարողությունը, ինչպես նաև վարկային պայմանագրերի պայմանների նման վերանայման Բանկի նախկին փորձը: Այս գործընթացի շրջանակներում Բանկը գնահատում է մարումները ժամանակին կատարելու հնարավորությունը պայմանագրի պայմանների փոփոխության դեպքում և դիտարկում է տարբեր վարքագծային ցուցանիշներ:

Ընդհանուր առմամբ, վարկային պայմանագրի պայմանների վերանայումն իրենից ներկայացնում է պարտքային ռիսկի էական աճի որակական ցուցանիշ, և պայմանների վերանայման մտադրությունը կարող է հանդես գալ որպես արժեզրկում (տես՝ Ծանոթագրություն 3 (ե) (iv)): Պայմանների վերանայումից հետո, որոշակի ժամանակի ընթացքում հաճախորդը պետք է կանոնավոր հիմունքով ժամանակին կատարի մարումները, մինչև որ վարկն այլևս չհամարվի արժեզրկված/վարկի հետ կապված այլևս չարձանագրվի պարտականությունների չկատարում, կամ մինչև որ չհամարվի, որ պարտականությունների չկատարման հավանականությունն այնքան է նվազել, որ վնասի գծով պահուստը կարող է կրկին գնահատվել 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային ռիսկին հավասար գումարի չափով:

Սպասվող պարտքային վնասի չափում

Սպասվող պարտքային ռիսկը չափելիս որպես առանցքային ելակետային տվյալներ հանդես են գալիս հետևյալ փոփոխականների ժամանակային կառուցվածքները.

- պարտականությունների չկատարման հավանականությունը,
- վնասը պարտականությունների չկատարման դեպքում և
- պարտքի գումարը պարտականությունների չկատարման դեպքում:

1-ին փուլի գործիքների գծով սպասվող պարտքային վնասը հաշվարկվում է բազմապատկելով 12 ամսվա պարտականությունների չկատարման հավանականությունը պարտականությունների չկատարման դեպքում առաջացող վնասի գումարով և պարտականությունների չկատարման դեպքում պարտքի գումարով: Ֆինանսական գործիքի ամբողջ գործողության ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասը հաշվարկվում է բազմապատկելով գործիքի ամբողջ գործողության ժամկետի համար պարտականությունների չկատարման հավանականությունը պարտականությունների չկատարման դեպքում առաջացող վնասի գումարով և պարտականությունների չկատարման դեպքում պարտքի գումարով:

Պարտականությունների չկատարման հավանականության գնահատման մեթոդաբանությունը ներկայացված է վերը՝ «Պարտականությունների չկատարման հավանականության ժամանակային կառուցվածքի ստեղծում» բաժնում:

Բանկը գնահատում է պարտականությունների չկատարման դեպքում առաջացող վնասը հիմք ընդունելով պարտականությունները չկատարած պայմանագրային կողմերին ներկայացված պահանջների արդյունքում միջոցների վերադարձման դրույքների վերաբերյալ տեղեկատվությունը: Պարտականությունների չկատարման դեպքում առաջացող վնասի գնահատման մոդելներում դիտարկվում են պահանջի կառուցվածքը, գրավը, առաջնահերթությունը, պայմանագրային կողմի գործունեության ոլորտը, ֆինանսական ակտիվի մաս կազմող ցանկացած գրավի փոխհատուցման ծախսերը: Անշարժ գույքով ապահովված վարկերի համար վարկի գումար/գրավի արժեք հարաբերակցությունն առանցքային ցուցանիշ է պարտականությունների չկատարման դեպքում առաջացող վնասը որոշելու համար: Պարտականությունների չկատարման դեպքում առաջացող վնասի գնահատականները ճշգրտվում են տարբեր տնտեսական սցենարների տեսանկյունից և անշարժ գույքի ապահովվածությամբ վարկերի հետ կապված՝ անշարժ գույքի գների հնարավոր փոփոխություններն արտացոլելու համար: Պարտականությունների չկատարման դեպքում առաջացող վնասը հաշվարկվում է զեղչված դրամական միջոցների հոսքերի հիմունքով՝ որպես զեղչման գործակից կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքի գումարը պարտականությունների չկատարման դեպքում իրենից ներկայացնում է պարտքի գնահատված գումարը, որը կառաջանա, եթե վարկառուն չկատարի իր պարտականությունները: Բանկը հաշվարկում է այս գումարը հաշվի առնելով պարտականությունների չկատարման դեպքում պարտքի ընթացիկ գումարը և պայմանագրով թույլատրվող և մաշվածության արդյունքում այդ գումարի հնարավոր փոփոխությունները: Ֆինանսական ակտիվի համար պարտականությունների չկատարման դեպքում պարտքի գումար է հանդիսանում համախառն հաշվեկշռային արժեքը: Վարկ տրամադրելու պարտավորվածությունների համար պարտականությունների չկատարման դեպքում պարտքի գումարը ներառում է հնարավոր ապագա գումարները, որոնք կարող են ստացվել պայմանագրի համաձայն, որոնք գնահատվում են նախորդ ժամանակաշրջանների դիտարկումների և հեռանկարի վերաբերյալ տեղեկատվության հիման վրա: Ֆինանսական երաշխավորությունների համար պարտականությունների չկատարման դեպքում պարտքի գումարն իրենից ներկայացնում է ֆինանսական երաշխավորության կատարման պահին վճարման ենթակա գումարը:

Ինչպես վերը նշված է և պայմանով, որ 1-ին փուլին դասված ֆինանսական ակտիվների համար, պարտականությունների չկատարման հավանականությունը դիտարկվում է առավելագույնս 12 ամսվա կտրվածքով, Բանկը սպասվող պարտքային վնասը չափում է հաշվի առնելով պարտականությունների չկատարման ռիսկը պայմանագրով նախատեսված առավելագույն ժամկետի ընթացքում (ներառյալ՝ վարկառուի երկարաձգման բոլոր հնարավորությունները), որի ընթացքում այն ենթարկվում է պարտքային ռիսկի, եթե նույնիսկ Բանկը դիտարկում է ավելի երկար ժամկետ պարտքային ռիսկի կառավարման նպատակով: Պայմանագրով նախատեսված առավելագույն ժամկետը տևում է մինչև այն ամսաթիվը, երբ Բանկն իրավունք ունի պահանջել վարկի մարումը կամ դադարեցնել վարկ տրամադրելու պարտավորվածությունը կամ երաշխավորությունը:

Եթե ցուցանիշի մոդելավորումն իրականացվում է հավաքական հիմունքով, ֆինանսական գործիքները խմբավորվում են ըստ ռիսկի ընդհանուր բնութագրերի, որոնք ներառում են՝

- գործիքի տեսակը,
- պարտքային ռիսկի դասը,
- գրավի տեսակը:

Խմբավորումները կանոնավոր հիմունքով վերանայվում են, առանձին խմբերի շրջանակներում պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների միատեսակ լինելը ապահովելու համար:

Այն պորտֆելների համար, որոնց վերաբերյալ Բանկն ունի նախորդ ժամանակաշրջանների սահմանափակ տվյալներ, որպես լրացուցիչ տեղեկատվություն օգտագործվում է արտաքին աղբյուրներից ստացված համադրելի տեղեկատվությունը: Ստորև ներակայացված են այն պորտֆելները, որոնց համար արտաքին աղբյուրներից ստացված համադրելի տեղեկատվությունն իրենից ներկայացնում է նշանակալի ելակետային տվյալներ սպասվող պարտքային վնասը գնահատելու համար:

		Օգտագործված արտաքին չափորոշիչ տեղեկատվություն	
	Պարտքային ռիսկին ենթարկվածություն	**Պարտականությունների չկատարման հավանականություն**	**Վնասը պարտականու-թյունների չկատարման դեպքում**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	4,728,200	«S&P» գործակալության դեֆոլտի վերլուծության հաշվետվություն	«Moody» գործակալության պարտքի վերականգնման վերլուծության հաշվետվություն
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	20,760,470	«S&P» գործակալության դեֆոլտի վերլուծության հաշվետվություն	«Moody» գործակալության պարտքի վերականգնման վերլուծության հաշվետվություն
Իրավաբանական անձանց տրված վարկեր	14,693,031	«S&P» գործակալության դեֆոլտի վերլուծության հաշվետվություն	«Moody» գործակալության պարտքի վերականգնման վերլուծության հաշվետվություն
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր	13,110,526	«S&P» գործակալության դեֆոլտի վերլուծության հաշվետվություն	«Moody» գործակալության պարտքի վերականգնման վերլուծության հաշվետվություն

Վնասի գծով պահուստ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է վնասի գծով պահուստի տարեսկզբի և տարեվերջի դրությամբ մնացորդների համադրումն ըստ ֆինանսական գործիքների դասերի: 2017թ. համադրելի տեղեկատվությունն իրենից ներկայացնում է պարտքային վնասների գծով պահուստը և արտացոլում է չափման հիմունքները ՀՀՄՍ 39 համաձայն:

	2018թ.				2017թ.
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ					
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	(3,633)	-	-	(3,633)	-
Փոխանցում 1-ին փուլ	-	-	-	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	-	-	-	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	-	-	-	-	-
Վնասի գծով պահուստի զուտ վերաչափում	3,633	-	-	3,633	-
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	(3,633)	-	-	(3,633)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(3,633)**	**-**	**-**	**(3,633)**	**-**

	2018թ.				2017թ.
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ					
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	(30,675)	-	-	(30,675)	(338)
Փոխանցում 1-ին փուլ	-	-	-	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	-	-	-	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	-	-	-	-	-
Վնասի գծով պահուստի զուտ վերաչափում	30,675	-	-	30,675	-
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	(41,534)	-	-	(41,534)	(15,246)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(41,534)**	**-**	**-**	**(41,534)**	**(15,584)**

	2018թ.				2017թ.
հազ. դրամ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ					
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	(3,636)	-	-	(3,636)	-
Փոխանցում 1-ին փուլ	-	-	-	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	-	-	-	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	-	-	-	-	-
Վնասի գծով պահուստի զուտ վերաչափում	3,636	-	-	3,636	-
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	(2,017)	-	-	(2,017)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(2,017)**	**-**	**-**	**(2,017)**	**-**

հազ. դրամ **Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք**	2018թ. 1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը	2017թ. Ընդամենը
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	(121,832)	(11,607)	(7,061,736)	(7,195,175)	(315,141)
Փոխանցում 1-ին փուլ	(41)	41	-	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	-	-	-	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	3,305	-	(3,305)	-	-
Վնասի գծով պահուստի զուտ վերաչափում	52,355	5,111	(1,722,105)	(1,664,639)	(3,311,871)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	(176,869)	(252)	-	(177,121)	-
Դուրսգրումներ/(վերականգնումներ)	39,015	5,925	(163,613)	(118,673)	(88,271)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(204,067)**	**(782)**	**(8,950,759)**	**(9,155,608)**	**(3,715,283)**

հազ. դրամ **Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – անհատներ**	2018թ. 1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը	2017թ. Ընդամենը
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	(243,450)	(70,647)	(340,800)	(654,897)	(945,981)
Փոխանցում 1-ին փուլ	(2,552)	2,278	274	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	29,312	(29,473)	161	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	126,394	14,774	(141,168)	-	-
Վնասի գծով պահուստի զուտ վերաչափում	(114,829)	10,291	141,081	36,543	(670,825)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	(110,100)	(9,276)	(19,770)	(139,146)	-
Դուրսգրումներ	90,633	34,917	32,961	158,511	1,071,930
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(224,592)**	**(47,136)**	**(327,261)**	**(598,989)**	**(544,876)**

հազ. դրամ **Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ**	2018թ. 1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Ընդամենը	2017թ. Ընդամենը
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	(4,507)	-	-	(4,507)	(2,084)
Փոխանցում 1-ին փուլ	-	-	-	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	-	-	-	-	-

	2018թ.				2017թ.
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**	**Ընդամենը**
Փոխանցում 3-րդ փուլ	-	-	-	-	-
Վնասի գծով պահուստի զուտ վերաչափում	4,507	-	-	4,507	(12,900)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	(660)	-	-	(660)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(660)**	**-**	**-**	**(660)**	**(14,984)**

	2018թ.				2017թ.
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր (2017թ-ին՝ վաճառքի համար մատչելի արժեթղթեր)					
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	(176,270)	-	-	(176,270)	-
Փոխանցում 1-ին փուլ	-	-	-	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	-	-	-	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	-	-	-	-	-
Վնասի գծով պահուստի զուտ վերաչափում	182,341	-	-	182,341	-
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	(42,815)	-	-	(42,815)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(36,744)**	**-**	**-**	**(36,744)**	**-**

	2018թ.				2017թ.
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**	**Ընդամենը**
Տրամադրված ֆինանսական երաշխավորություններ					
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	(1,058)	-	-	(1,058)	-
Փոխանցում 1-ին փուլ	-	-	-	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	-	-	-	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	-	-	-	-	-
Վնասի գծով պահուստի զուտ վերաչափում	1,058	-	-	1,058	-
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	(4,601)	-	-	(4,601)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(4,601)**	**-**	**-**	**(4,601)**	**-**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է հետևյալ երկու մեծությունների համադրումը.

- վնասի գծով պահուստի տարեսկզբի և տարեվերջի դրությամբ մնացորդներն ըստ ֆինանսական գործիքների դասերի և
- «Ներդրումային արժեթղթերի և այլ ֆինանսականա ակտիվների, հաճախորդներին տրված վարկերի և վարկ տրամադրելու պարտավորվածությունների գծով արժեզրկումից կորուստ» հոդվածը շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

հազ. դրամ	Վնասի գծով պահուստի զուտ վերաչափում	Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,633	(3,633)	-
Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	30,675	(41,534)	(10,859)
Ամորտիզացված արժեքով չափվող հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,636	(2,017)	1,619
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք	(1,664,639)	(177,121)	(1,841,760)
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – անհատներ	36,543	(139,146)	(102,603)
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	4,507	(660)	3,847
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	182,341	(42,815)	139,526
Տրամադրված ֆինանսական երաշխավորություններ	1,058	(4,601)	(3,543)
Ընդամենը	**(1,402,246)**	**(411,527)**	**(1,813,773)**

Ստորև ներկայացված են անհատներին և իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելների համախառն հաշվեկշռային արժեքի էական փոփոխությունները ժամանակաշրջանի ընթացքում, որոնք հանգեցրել են վնասի գծով պահուստի փոփոխությանը:

	2018թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք – համախառն հաշվեկշռային արժեք				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	17,666,275	222,740	16,964,055	34,853,070
Փոխանցում 1-ին փուլ	2,050	(2,050)	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	-	-	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	(165,250)	-	165,250	-
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	13,355,365	14,218	-	13,369,583
Ամբողջությամբ կամ մասնակի մարված ֆինանսական ակտիվներ	(6,240,399)	(79,677)	(473,970)	(6,794,046)
(Դուրսգրումներ)/վերականգնումներ	(39,015)	(5,925)	163,613	118,673
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**24,579,026**	**149,306**	**16,818,948**	**41,547,280**

	2018թ.			
հազ. դրամ	**1-ին փուլ**	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – անհատներ – համախառն հաշվեկշռային արժեք				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	24,852,344	638,301	1,680,233	27,170,878
Փոխանցում 1-ին փուլ	10,633	(9,492)	(1,141)	-
Փոխանցում 2-րդ փուլ	(122,133)	122,804	(671)	-
Փոխանցում 3-րդ փուլ	(461,581)	(22,523)	484,104	-
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	17,214,547	91,217	54,848	17,360,612
Ամբողջությամբ կամ մասնակի մարված ֆինանսական ակտիվներ	(14,060,896)	(433,427)	(200,837)	(14,695,160)
Դուրսգրումներ	(90,633)	(34,917)	(32,961)	(158,511)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**27,342,281**	**351,963**	**1,983,575**	**29,677,819**

Վարկի որակական ցուցանիշների վերլուծություն

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառքի համար մատչելի պարտքային ակտիվների որակական ցուցանիշների վերաբերյալ: Եթե այլ նշում առկա չէ, աղյուսակում ֆինանսական ակտիվների համար ներկայացվում է համախառն հաշվեկշռային արժեքը:

«1-ին փուլ», «2-րդ փուլ» և «3-րդ փուլ» եզրույթների բացատրությունը ներկայացված է Ծանոթագրություն 3 (ե) (iv) կետում:

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2018թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	
	12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնաս	Չարժեզրկված ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս	Արժեզրկված ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
A- ից A+ վարկանիշով	1,891	-	-	1,891
BBB+ վարկանիշով	52,077	-	-	52,077
BB- -ից BB+ վարկանիշով	157,033	-	-	157,033
B- ից B+ վարկանիշով	10,997,000	-	-	10,997,000
Առանց վարկանիշի	56,388	-	-	56,388
	11,264,389	**-**	**-**	**11,264,389**
Պարտքային վնասի գծով պահուստ	**(3,633)**	**-**	**-**	**(3,633)**
Հաշվեկշռային արժեք	**11,260,756**	**-**	**-**	**11,260,756**
Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ				
A- ից A+ վարկանիշով	166,818	-	-	166,818
BBB+ վարկանիշով	83,047	-	-	83,047
BB- -ից BB+ վարկանիշով	971,196	-	-	971,196
B- ից B+ վարկանիշով	5,385,396	-	-	5,385,396
Առանց վարկանիշի	6,504,069	-	-	6,504,069
	13,110,526	**-**	**-**	**13,110,526**
Պարտքային վնասի գծով պահուստ	**(41,534)**	**-**	**-**	**(41,534)**
Հաշվեկշռային արժեք	**13,068,992**	**-**	**-**	**13,068,992**

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2018թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	
	12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնաս	Չարժեզրկված ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս	Արժեզրկված ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս	Ընդամենը
*Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք**				
Ոչ ժամկետանց	24,568,638	79,022	14,561,621	39,209,281
Մինչև 30 օր ժամկետանց	10,388	35,187	73,354	118,929
31-90 օր ժամկետանց	-	35,097	-	35,097
91-180 օր ժամկետանց	-	-	115,910	115,910
81-360 օր ժամկետանց	-	-	340,260	340,260
Ավելի քան 1 տարի ժամկետանց	-	-	1,727,803	1,727,803
	24,579,026	**149,306**	**16,818,948**	**41,547,280**
Պարտքային վնասի գծով պահուստ	**(204,067)**	**(782)**	**(8,950,759)**	**(9,155,608)**
Հաշվեկշռային արժեք	**24,374,959**	**148,524**	**7,868,189**	**32,391,672**

* 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 14,693,031 հազար դրամ հաշվեկշռային արժեքով հաճախորդներին տրված վարկերի գծով պարտականությունների չկատարման հավանականության չափը է այն երկրի կորպորատիվ վարկանիշին, որտեղ իր գործունեությունն է իրականացնում վարկառուն:

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2018թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	
	12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնաս	Չարժեզրկված ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս	Արժեզրկված ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – անհատներ				
Ոչ ժամկետանց	26,227,208	342,586	54,514	26,624,308
Մինչև 30 օր ժամկետանց	522,459	6,496	108	529,063
31-90 օր ժամկետանց	327,440	577	-	328,017
91-180 օր ժամկետանց	104,268	485	-	104,753

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2018թ.			
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	
	12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնաս	Չարժեզրկված ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս	Արժեզրկված ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս	Ընդամենը
81-360 օր ժամկետանց	114,539	1,799	389,855	506,193
Ավելի քան 1 տարի ժամկետանց	46,367	20	1,539,098	1,585,485
	27,342,281	**351,963**	**1,983,575**	**29,677,819**
Պարտքային վնասի գծով պահուստ	**(224,592)**	**(47,136)**	**(327,261)**	**(598,989)**
Հաշվեկշռային արժեք	**27,117,689**	**304,827**	**1,656,314**	**29,078,830**
Ամորտիզացված արժեքով չափվող հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ				
Առանց վարկանիշի	3,431,830	-	-	3,431,830
	3,431,830	**-**	**-**	**3,431,830**
Պարտքային վնասի գծով պահուստ	**(2,017)**	**-**	**-**	**(2,017)**
Հաշվեկշռային արժեք	**3,429,813**	**-**	**-**	**3,429,813**
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
B- ից B+ վարկանիշով	20,068,103	-	-	20,068,103
Առանց վարկանիշի	692,367	-	-	692,367
	20,760,470	**-**	**-**	**20,760,470**
Պարտքային վնասի գծով պահուստ	**(36,744)**	**-**	**-**	**(36,744)**
Հաշվեկշռային արժեք	**20,723,726**	**-**	**-**	**20,723,726**
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ				
Առանց վարկանիշի	250,940	-	-	250,940
	250,940	**-**	**-**	**250,940**
Պարտքային վնասի գծով պահուստ	**(660)**	**-**	**-**	**(660)**
Հաշվեկշռային արժեք	**250,280**	**-**	**-**	**250,280**

Պարտքային ռիսկի կենտրոնացվածություն

Պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8,658,588	14,261,985
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	9,952
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	4,728,200	29,406,955
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	20,723,726	-
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	13,068,992	11,476,427
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,429,813	6,493,486
Հաճախորդներին տրված վարկեր	61,470,502	57,763,789
Այլ ֆինանսական ակտիվներ	250,280	132,050
Պարտքային ռիսկին ենթարկվածության ընդհանուր առավելագույն չափը	**112,330,101**	**119,544,644**

Որպես կանոն գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում կատարած ներդրումների, բանկերին տրված վարկերի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառության գործունեության մաս:

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և այդ վարկերի գծով պարտքային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 13-ում:

Չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների գծով պարտքային ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է Ծանոթագրություն 25-ում:

2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պարտապաններ կամ կապակցված պարտապանների խմբեր, որոնց հետ կապված պարտքային ռիսկը գերազանցում է առավելագույն պարտքային ռիսկի 10%-ը, բացառությամբ ՀՀ ԿԲ-ում պահվող մնացորդների և պետական արժեթղթերի:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ ֆինանսական գործիքները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, թե՝ ոչ:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ քլիրինգային պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի՝ որպես փոխառության տրամադրման գլխավոր պայմանագրերը: Նմանատիպ ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի՝ որպես փոխառության ստացման և տրամադրման պայմանագրերը:

Բանկը ստանում և ընդունում է գրավ դրամական միջոցների և շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով:

Նման գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի գործողության ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտակարությունների չկատարման, անվճարունակ դառնալու կամ սնանկացման դեպքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		Զուտ գումար
				Ֆին. գործիքներ	Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,429,813	-	3,429,813	(3,429,813)	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**3,429,813**	**-**	**3,429,813**	**(3,429,813)**	**-**	**-**
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	(1,707,152)	-	(1,707,152)	1,707,152	-	-
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(6,771,902)		(6,771,902)	6,771,902		-
Այլ փոխառություններ	(691,990)	-	(691,990)	691,990	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(9,171,044)**	**-**	**(9,171,044)**	**(9,171,044)**	**-**	**-**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		Զուտ գումար
				Ֆին. գործիքներ	Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,493,486	-	6,493,486	(6,493,486)	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**6,493,486**	**-**	**6,493,486**	**(6,493,486)**	**-**	**-**

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		Զուտ գումար
				Ֆին. գործիքներ	Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	(1,925,446)	-	(1,925,446)	1,925,446	-	-
Այլ փոխառություններ	(1,357,706)	-	(1,357,706)	1,357,706	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(3,283,152)**	**-**	**(3,283,152)**	**3,283,152**	**-**	**-**

Վերը նշված աղյուսակներում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների ու արատարժույթի փոխարժեքների տատանումների ազդեցությանը: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը: Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են ԱՊԿԿ-ի կողմից՝ Ռիսկերի կառավարման բաժնի առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույքների, ժամկետայնության, արտարժույթի դիրքերի և վնասի սահմանաչափերի հետ կապված, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Վարչության կողմից:

(iii) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Բանկը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների ճեղքվածքների մոնիտորինգի միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների ճեղքվածքների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2018թ.							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	-	-	308,200	3,177,559	1,242,441	4,728,200
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	66,387	925,784	912,046	3,416,502	15,403,007	-	20,723,726
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	8,214,655	965,409	2,873,894			1,015,034	13,068,992
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,429,813	-	-	-	-	-	3,429,813
Հաճախորդներին տրված վարկեր	3,922,392	7,172,129	6,174,262	37,782,849	6,418,870	-	61,470,502
	15,633,247	**9,063,322**	**9,960,202**	**41,507,551**	**24,999,436**	**2,257,475**	**103,421,233**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	787,673	673,500	479,415	502,120	1,178,973	1,624,109	5,245,790
Թողարկված պարտքային արժեթղթեր	3,504,627	2,422,063	2,451,389	2,444,961	-	-	10,823,040
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	6,771,902	-	-	-	-	-	6,771,902
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	14,104,413	11,563,156	15,710,086	3,191,261	1,050,922	10,700,518	56,320,356
Այլ փոխառություններ	-	1,830	-	690,160	-	-	691,990
	25,168,615	**14,660,549**	**18,640,890**	**6,828,502**	**2,229,895**	**12,324,627**	**79,853,078**

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
	(9,535,368)	(5,597,227)	(8,680,688)	34,679,049	22,769,541	(10,067,152)	23,568,155

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2017թ.							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,000,740	-	-	-	-	15,228,513	17,229,253
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	247,737	1,165,313	1,942,993	8,936,926	16,940,009	173,977	29,406,955
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	9,596,626	35,000	9,726	581,177	-	1,253,898	11,476,427
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,476,664	-	-	16,822	-	-	6,493,486
Հաճախորդներին տրված վարկեր	5,124,030	9,037,147	7,641,453	33,106,930	2,854,229	-	57,763,789
	23,445,797	**10,237,460**	**9,594,172**	**42,641,855**	**19,794,238**	**16,656,388**	**122,369,910**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	550,801	834,626	767,864	1,359,893	552,452	923,183	4,988,819
Թողարկված պարտքային արժեթղթեր	92,185	40,778	2,420,943	8,261,153	-	-	10,815,059
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	13,545,509	22,078,316	16,763,225	4,051,111	1,242,506	6,970,341	64,651,008
Այլ փոխառություններ	8,728	29,711	34,729	850,316	434,222	-	1,357,706
	14,197,223	**22,983,431**	**19,986,761**	**14,522,473**	**2,229,180**	**7,893,524**	**81,812,592**
	9,248,574	**(12,745,971)**	**(10,392,589)**	**28,119,382**	**17,565,058**	**8,762,864**	**40,557,318**

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2018թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			2017թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսակիր ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ						
- Օվերնայթ ավանդ ՀՀ ԿԲ-ում	-	-	-	4.5%	-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	9.5%	6.7%	-	13.7%	6.6%	-
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	14.6%	5.4%	-	-	-	-
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	7.5%	3.5%	13.2%	7.8%	1.5%	12.0%
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6.8%	3.3%	-	6.1%	2.6%	0.5%
Հաճախորդներին տրված վարկեր	12.6%	11.7%	6.9%	14.3%	12.7%	12.9%
Տոկոսակիր պարտավորություններ						
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ						
- Ժամկետային ավանդներ	9.5%	4.7%	-	11.4%	5.8%	-
- Վարկեր բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	8.6%	-	-	8.6%	-	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ						
- Ժամկետային ավանդներ	9.0%	4.8%	3.7%	11.0%	5.1%	3.2%
Թողարկված պարտքային արժեթղթեր	12.3%	5.8%	-	12.3%	4.8%	-
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	6.2%	-	0.9%	-	-	-

	2018թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			2017թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Այլ փոխառություններ	8.1%	-	-	7.6%	23.9%	-

Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիտորինգով: Ստորև ներկայացվում է տոկոսադրույքի փոփոխության (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
100 բկ զուգահեռ նվազում	113,423	13,256
100 բկ զուգահեռ աճ	(113,423)	(13,256)

Ստորև ներկայացվում է սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը՝ պայմանավորված տոկոսադրույքների փոփոխության հետևանքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությամբ, որն իրականացվել է 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի և 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	2018թ.	2017թ.
	Սեփական կապիտալ հազ. դրամ	Սեփական կապիտալ հազ. դրամ
100 բկ զուգահեռ նվազում	182,498	1,383,860
100 բկ զուգահեռ աճ	(182,498)	(1,383,860)

(ii) Արտարժութային ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում: Թեև Բանկը հեջավորում է իր

ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին, այս գործունեությունը չի որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն ՖՀՄՍ պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ՀՀ դրամ հազ. դրամ	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,070,377	2,320,822	480,114	1,389,443	11,260,756
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	1,570,422	2,209,045	-	948,733	4,728,200
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	16,703,028	4,020,698	-	-	20,723,726
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	585,429	11,934,458	98,143	450,962	13,068,992
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,236,227	193,586	-	-	3,429,813
Հաճախորդներին տրված վարկեր	29,746,643	26,880,223	4,151,994	691,642	61,470,502
Այլ ֆինանսական ակտիվներ	217,415	32,742	117	6	250,280
Ընդամենը	**59,129,541**	**47,591,574**	**4,730,368**	**3,480,786**	**114,932,269**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	4,330,487	896,023	16,955	2,325	5,245,790
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	19,268,486	34,905,492	1,778,639	367,739	56,320,356
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,036,400	9,786,640	-	-	10,823,040
Այլ փոխառություններ	691,990	-	-	-	691,990
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	4,002,696	-	2,769,206	-	6,771,902
Այլ ֆինանսական պարտավորություններ	256,276	12,824	367	-	269,467
Ընդամենը պարտավորություններ	**29,586,335**	**45,600,979**	**4,565,167**	**370,064**	**80,122,545**
Զուտ դիրքը	**29,543,206**	**1,990,595**	**165,201**	**3,110,722**	**34,809,724**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ՀՀ դրամ հազ. դրամ	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8,664,994	3,155,947	3,342,366	2,065,946	17,229,253
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	23,647,401	5,758,620	934	-	29,406,955
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	1,574,199	2,598,098	4,125,130	3,179,000	11,476,427
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,114,690	478,177	2,900,619	-	6,493,486
Հաճախորդներին տրված վարկեր	30,091,574	26,894,826	519,502	257,887	57,763,789
Այլ ֆինանսական ակտիվներ	51,542	77,224	69	3,215	132,050
Ընդամենը	**67,144,400**	**38,962,892**	**10,888,620**	**5,506,048**	**122,501,960**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	4,224,291	748,625	15,903	-	4,988,819
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	19,892,109	42,627,218	945,341	1,186,340	64,651,008
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,036,968	9,778,091	-	-	10,815,059
Այլ փոխառություններ	1,293,812	63,894	-	-	1,357,706
Այլ ֆինանսական պարտավորություններ	231,871	24,653	444	16,073	273,041
Ընդամենը պարտավորություններ	**26,679,051**	**53,242,481**	**961,688**	**1,202,413**	**82,085,633**
Ռիսկերի կառավարման համար պահվող ածանցյալ գործիքների ազդեցությունը	**3,374,390**	**9,575,769**	**(8,933,540)**	**(4,236,420)**	**(219,801)**
Զուտ դիրքը	**43,839,739**	**(4,703,820)**	**993,392**	**67,215**	**40,196,526**

2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունն իրականացվել է զուտ հիմունքով և հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Բանկը դիտարկում է որպես հնարավոր հաշվետու ժամանկաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% արժևորում ՀՀ դրամի նկատմամբ	159,248	(376,306)
Եվրոյի փոխարժեքի 10% արժևորում ՀՀ դրամի նկատմամբ	13,216	79,471

2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևովումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է թողարկվող պարտքային արժեթղթերը, այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական կորպորատիվ հաճախորդների և անհատների ավանդները, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու արդյունավետ բավարարելու նպատակով:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքերի ֆինանսավորման ծրագրերի ապահովում,
- բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման ծրագրերի անընդհատության ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Գանձապետարանը գործարար ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակներով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում:

Գանձապետարանը վերահսկում է իրացվելիության դիրքն օրական կտրվածքով և իրականացնում է կանոնավոր «սթրես թեստերը» իրացվելիության գծով՝ շուկայի սովորական և ավելի խիստ պայմանների տեսանկյունից: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Գանձապետարանի կողմից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների ու վարկային պարտավորվածությունների գծով դրամական միջոցների չզեղչված հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է դրամական միջոցների պայմանագրային չզեղչված հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ վարկային պարտավորվածությունների գծով:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ներհոսքի (արտահոսքի) ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	1,655,674	798,066	719,863	568,962	2,416,250	6,158,815	5,245,790
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	17,850,775	8,089,972	11,994,217	17,553,752	6,349,919	61,838,635	56,320,356
Թողարկված պարտքային արժեթղթեր	29,108	3,604,882	2,519,757	2,563,902	2,590,501	11,308,150	10,823,040
Այլ փոխառություններ	-	-	27,911	27,835	817,795	873,541	691,990
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	6,780,089	-	-	-	-	6,780,089	6,771,902
Այլ ֆինանսական պարտավորություններ	101,348	151,702	16,417	-	-	269,467	269,467
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**26,416,994**	**12,644,622**	**15,278,165**	**20,714,451**	**12,174,465**	**87,228,697**	**80,122,545**
Վարկային պարտավորվածություններ	**2,537,830**	**-**	**-**	**-**	**-**	**2,537,830**	**-**

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ներհոսքի (արտահոսքի) ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	1,237,693	1,150,547	867,291	822,090	2,036,160	6,113,781	4,988,819
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	12,274,850	8,353,465	22,480,846	17,633,166	7,770,922	68,513,249	64,651,008
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	286,040	309,204	2,689,370	8,412,338	11,696,952	10,815,059
Այլ փոխառություններ	2,382	6,652	32,088	39,405	1,708,639	1,789,166	1,357,706
Այլ ֆինանսական պարտավորություններ	81,673	191,368	-	-	-	273,041	273,041
Ածանցյալ պարտավորություններ							

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ներհոսքի (արտահոսքի) ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
- Ներհոսք	16,533,462	-	-	-	-	16,533,462	16,533,462
- Արտահոսք	(16,313,661)	-	-	-	-	(16,313,661)	(16,313,661)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**13,816,399**	**9,988,072**	**23,689,429**	**21,184,031**	**19,928,059**	**88,605,990**	**82,305,434**
Վարկային պարտավորվածություններ	**19,768,641**	**-**	**-**	**-**	**-**	**19,768,641**	**-**

ՀՀ օրենսդրության համաձայն՝ անհատները կարող են ցանկացած պահի ելքագրել իրենց ժամկետային ավանդները՝ դեպքերի մեծամասնությունում կորցնելով հաշվեգրված տոկոսները: Ստորև ներկայացված է այս ավանդների դասակարգումն ըստ սահմանված մարման ժամկետների:

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Ցպահանջ և մինչև 1 ամիս ժամկետով	5,859,177	5,272,497
1-ից 3 ամիս ժամկետով	6,365,294	7,866,022
3-ից 6 ամիս ժամկետով	11,170,115	9,022,348
6-ից 12 ամիս ժամկետով	15,190,423	16,524,836
1-ից 5 տարի ժամկետով	3,095,720	3,560,974
Ավելի քան 5 տարի ժամկետով	1,007,241	1,159,821
	42,687,970	**43,406,498**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունը՝ ըստ ակնկալվող մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11,260,756	-	-	-	-	-	-	11,260,756
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	119,731	-	-	308,200	3,177,559	1,122,710	-	4,728,200
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	66,387	1,837,830	3,416,502	15,403,007	-	-	20,723,726
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	6,295,224	1,937,548	3,835,670	80,035	-	920,515	-	13,068,992
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,429,813	-	-	-	-	-	-	3,429,813
Հաճախորդներին տրված վարկեր	1,838,440	2,317,989	12,835,681	36,337,058	6,155,094		1,986,240	61,470,502
Ընթացիկ հարկային ակտիվ	-	-	139,189	-	-	-	-	139,189
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	5,061,844	-	5,061,844
Այլ ակտիվներ	302,525	386,759	131,305	31,302	-	1,339,043	-	2,190,934
Ընդամենը ակտիվներ	**23,246,489**	**4,708,683**	**18,779,675**	**40,173,097**	**24,735,660**	**8,444,112**	**1,986,240**	**122,073,956**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	1,337	-	-	-	-	-	-	1,337
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	1,636,921	774,861	1,152,915	502,120	1,178,973	-	-	5,245,790
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	16,980,184	7,824,747	27,273,242	3,191,261	1,050,922	-	-	56,320,356
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	3,504,627	4,873,452	2,444,961	-	-	-	10,823,040
Այլ փոխառություններ	-	-	1,830	690,160	-	-	-	691,990
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	6,771,902	-	-	-	-	-	-	6,771,902
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	-	617,324	-	617,324
Այլ պարտավորություններ	775,953	160,256	392,205	6,758	2,923	-	-	1,338,095

ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց*	Ընդամենը
Ընդամենը պարտավորություններ	**26,166,297**	**12,264,491**	**33,693,644**	**6,835,260**	**2,232,818**	**617,324**	**-**	**81,809,834**
Զուտ դիրքը	**(2,919,808)**	**(7,555,808)**	**(14,913,969)**	**33,337,837**	**22,502,842**	**7,826,788**	**1,986,240**	**40,264,122**

* ժամկետանց վարկերի ժամկետանց մասը

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունը՝ ըստ ակնկալվող մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17,229,253	-	-	-	-	-	-	17,229,253
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	9,952	-	-	-	-	-	-	9,952
Վաճառքի համար մատչելի պարտքային ակտիվներ	24,281	223,456	3,108,306	8,936,926	16,940,009	173,977	-	29,406,955
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	7,489,837	2,106,789	44,726	581,177	-	1,253,898	-	11,476,427
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,476,664	-	-	16,822	-	-	-	6,493,486
Հաճախորդներին տրված վարկեր	1,442,987	2,544,793	16,678,600	33,106,930	2,854,229	-	1,136,250	57,763,789
Ընթացիկ հարկային ակտիվ	-	142,648	-	-	-	-	-	142,648
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	5,034,278	-	5,034,278
Այլ ակտիվներ	101,391	261,315	129,894	-	-	808,601	-	1,301,201
Ընդամենը ակտիվներ	**32,774,365**	**5,279,001**	**19,961,526**	**42,641,855**	**19,794,238**	**7,270,754**	**1,136,250**	**128,857,989**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	229,753	-	-	-	-	-	-	229,753
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	950,607	523,377	1,602,490	1,359,893	552,452	-	-	4,988,819
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	12,251,945	8,260,738	38,841,541	4,051,111	1,245,673	-	-	64,651,008

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց*	Ընդամենը
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	92,185	40,778	2,420,943	8,261,153	-	-	10,815,059
Այլ փոխառություններ	2,350	6,378	63,953	850,316	434,709	-	-	1,357,706
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	-	1,486,487	-	1,486,487
Այլ պարտավորություններ	293,818	191,368	329,446	129,008	-	-	-	943,640
Ընդամենը պարտավորություններ	**13,728,473**	**9,074,046**	**40,878,208**	**8,811,271**	**10,493,987**	**1,486,487**	**-**	**84,472,472**
Զուտ դիրքը	**19,045,892**	**(3,795,045)**	**(20,916,682)**	**33,830,584**	**9,300,251**	**5,784,267**	**1,136,250**	**44,385,517**

* Ժամկետանց վարկերի ժամկետանց մասը

Ստորև ներկայացված են բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցության ցուցանիշները հաշվետու ամսաթվի դրությամբ:

	2018թ. Աուդիտի չենթարկված	2017թ. Աուդիտի չենթարկված
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	235.4%	604.4%
Միջինը դեկտեմբեր ամսվա համար	268.2%	536.0%

Վերը նշված հարաբերակցությանն օգտագործվում է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության սահմանաչափերի հետ համապատասխանությունը գնահատելու համար:

84 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ առևտրային բանկերի համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշի («կապիտալի համարժեքության ցուցանիշ») նվազագույն մակարդակը կազմում էր 12% (2017թ-ին՝ 12%): 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի համարժեքության ցուցանիշը դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2018թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	2017թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված
Հիմնական կապիտալ		
Հիմնական կապիտալ	36,409,735	37,711,970
Նվազեցումներ	(1,894,244)	(1,013,698)
Ընդամենը հիմնական կապիտալ	**34,515,491**	**36,698,272**

	2018թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	2017թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված
Լրացուցիչ կապիտալ		
Լրացուցիչ կապիտալ	217,785	3,498,848
Նվազեցումներ	-	-
Ընդամենը լրացուցիչ կապիտալ	**217,785**	**3,498,848**
Ընդամենը կապիտալ	**34,733,276**	**40,197,120**
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվները՝ ներառյալ վարկային, շուկայական և գործառնական ռիսկերը	**92,690,658**	**120,282,650**
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)	**37.5%**	**33.4%**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած ընդունելի գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

Բանկն իր կապիտալի համարժեքության ցուցանիշը վերահսկում է նաև համաձայն Բազել II-ի: Ստորև ներկայացված է կապիտալի համարժեքության ցուցանիշի հաշվարկը Բազել II-ի համաձայն դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2018թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	2017թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված
1-ին մակարդակի կապիտալ	43,402,297	40,886,667
2-րդ մակարդակի կապիտալ	217,785	3,498,850
Ընդամենը կապիտալ	**43,620,082**	**44,385,517**
Ռիսկով կշռված ակտիվների	**94,483,462**	**131,168,266**
Պարտքային ռիսկ	87,887,131	90,614,466
Շուկայական ռիսկ	234,248	4,591,438
Գործառնական ռիսկ	557,312	275,018
Կապիտալի համարժեքության ցուցանիշ	**46.17%**	**33.84%**

Բազելի II-ի համաձայն՝ վերահսկողության նպատակների համար պահվող կապիտալը պետք է ներկայացվի երկու մակարդակով, այնպես, որպեսզի Բանկի կապիտալի բազայի առնվազն 50%-ը բաղկացած լինի հիմնական տարրը, որը կներառի սեփական կապիտալը և հրապարակված պահուստները չբաշխված շահույթից՝ հարկումց հետո (1-ին մակարդակի կապիտալ): Կապիտալի մյուս տարրը (լրացուցիչ կապիտալը) կներառվի 2-րդ մակարդակի կապիտալում՝ չգերազանցելով 1-ին մակարդակի կապիտալի 100%-ը:

85 Վարկային պարտավորվածություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Այս պարտավորվածություններն իրենցից ներկայացնում են հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների գծով պարտավորվածություններ:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումն երրորդ անձանց հանդեպ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Վարկային պարտավորվածությունների, ֆինանսական երաշխավորությունների և ակրեդիտիվների հետ կապված Բանկը կիրառում է պարտքային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք գործում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են վարկային պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն պայմանագրային պարտականությունները:

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Պայմանագրային գումար		
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	925,248	6,114,547
Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ	1,276,546	1,137,393
Երաշխավորություններ և ակրեդիտիվներ	336,036	12,516,701
	2,537,830	**19,768,641**

Վերը ներկայացված ընդհանուր պայմանագրային պարտավորվածությունները պարտադիր չէ որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ժամկետը: Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածությունների մեծամասնությունն իրենից չի ներկայացնում միանշանակ պարտավորվածություն Բանկի կողմից:

86 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Բանկի գույքն ապահովագրված է, և Բանկն ունի Բանկերս Բլանկետ Բոնդ (Banker's Blanket Bond (BBB)) ապահովագրության պայմանագիր մինչև 3,000 հազար ԱՄՆ դոլար գումարով:

(բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

2017թ. հոկտեմբերի 4-ին Առաջին ատյանի դատարան ներկայացվել է հայց, որով Բանկից պահանջվում է 22,301 հազար ԱՄՆ դոլար՝ Բանկի կողմից իր հաճախորդներից մեկի հետ կնքված պայմանագիրը խախտելու պատճառով: 2018թ. մարտի 2-ին Առաջին ատյանի դատարանը բավարարել է 22,301 հազար ԱՄՆ դոլար գումար պահանջի հայցը: 2018թ. մարտի 30-ին Բանկը բողոքարկել է Առաջին ատյանի դատարանի որոշումը Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ դատարանում: 2018թ. հուլիսի 20-ին Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ դատարանը չի ընդունել Առաջին ատյանի դատարանի որոշումը և գործը վերադարձրել է Առաջին ատյանի դատարան նոր վարույթի համար:

Ղեկավարությունը գտնում է, որ վճարումը քիչ հավանական է, քանի որ պայմանագիրը (որը հետագայում խախտվել է) չի կնքվել օրենսդրությանը համապատասխան (պայմանագիրը պետք է գրանցված լիներ ՀՀ պետական կադաստրում), որի արդյունքում այն անվավեր է ճանաչվում:

(գ) Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

37 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Բանկի մայր կազմակերպությունն է FISTOCO LTD: Բանկի վերջնական վերահսկող անձն է հանդիսանում պրն. Վարդան Դիլանյանը:

Բանկի մայր կազմակերպությունը չի կազմում հանրությանը հասանելի ֆինանսական հաշվետվություններ:

(բ) Գործարքներ Խորհրդի և Վարչության անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Բանկի Խորհրդի անդամներ	69,998	97,920
Վարչության անդամներ	637,423	574,070
	707,421	**671,990**

Այս գումարները ներառում են Խորհրդի և Վարչության անդամների դրամային և ոչ դրամային հատուցումները:

Ստորև ներկայացված են 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները:

	2018թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	2017թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
ԱԿՏԻՎՆԵՐ				
Տրված վարկեր (համախառն)	151,800	9.9%	53,958	13.1%
Վարկերի արժեզրկման գծով պահուստ	(1,281)	-	(540)	-
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	-	-	16,822	7.3%
Այլ ակտիվներ	745	-	180	-
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Ատացված ավանդներ	296,214	5.3%	241,132	6.9%
Թողարկված պարտքային արժեթղթեր	22,096	5.7%	99,086	6.3%
Այլ պարտավորություններ	-	-	30	-
Երաշխավորություններ	38,477	0.0%	28,634	13.8%

Ստորև ներկայացված են Խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում ներառված գումարները դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Շահույթ կամ վնաս		
Տոկոսային եկամուտ	7,342	10,167
Տոկոսային ծախս	(2,843)	(3,977)
(Արժեզրկումից կորուստ)/արժեզրկման վերականգնում, զուտ	(741)	736
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	1,068	604
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	(28,877)	(182)

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր		Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ		Այլ		
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	Ընդամենը հազ. դրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	617	-	-	-	-	-	617
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	453,826	0.0%	-	-	453,826
Այլ ակտիվներ	-	-	48,119	-	-	-	48,119
Պարտավորություններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ							
- Լորո հաշիվներ	765,833	-	-	-	-	-	765,833
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ							
- Ընթացիկ հաշիվներ	35,974	-	-	-	639	-	36,613
Թողարկված պարտաքային արժեթղթեր	-	-	-	-	146,595	5.25%	146,595
Այլ պարտավորություններ	-	-	7,794	-	-	-	7,794
Շահույթ (վնաս)							
Տոկոսային եկամուտ	1,967		14,812		1,576		18,355
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	34,130		4		10		34,144
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	(10)		(10)		(4)		(24)

Ստորև ներկայացված են 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր		Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ		Այլ		
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադր., %	Ընդամենը հազ. դրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	203	-	-	-	-	-	203
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	546,935	0.0%	-	-	546,935
Այլ ակտիվներ	-	-	51,547	-	-	-	51,547
Պարտավորություններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ							
- Լորո հաշիվներ	773,314	-	-	-	-	-	773,314
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ							
- Ընթացիկ հաշիվներ	6,668	-	20,756	-	1,602	-	29,026
Թողարկված պարտաքային արժեթղթեր	32,313	6.5%	242,781	6.5%	-	-	275,094
Այլ պարտավորություններ	-	-	8,410	-	-	-	8,410
Շահույթ (վնաս)							
Տոկոսային եկամուտ	-		13,779		3,006		16,785
Տոկոսային ծախս	(8,721)		(15,701)		(82)		(24,504)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	77		-		40		117
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	-		-		(17)		(17)

Այլ կապակցված կողմերը ներառում են Խորհրդի և Վարչության նշանակալից ազդեցության ներքո գտնվող կազմակերպությունները և Խորհրդի ու Վարչության անդամների ընտանիքների անդամներին:

Այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդների մեծ մասի մարման ժամկետը կազմում է մեկ տարի: Այլ կապակցված կողմերի հետ իրականացվող գործարքները գրավով ապահովված չեն:

88 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Ակտիվ շուկայում շրջանառվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները հիմնված են շուկայում գնանշված գների կամ դիլերների գնանշված գների վրա: Բոլոր այլ ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելու համար Բանկը կիրառում է գնահատման այլ մեթոդ:

Գնահատման մեթոդի նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է այն գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և դրամական միջոցների զեղչված հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայի դիտարկելի գներ, և այլ գնահատման մոդելներ: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ռիսկից զերծ և ելակետային տոկոսադրույքները, վարկային սպրեդերը և այլ ճշգրտումները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնետոմսերի և բաժնետոմսերի ինդեքսների գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»:

2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

(ա) Իրական արժեքի հիերարխիա

Բանկը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար ակտիվ շուկայում գնանշվող գները (չճշգրտված):

- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալներ դիտարկելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները նմանատիպ գործիքների համար ակտիվ շուկայում, գնանշվող գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտարկելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահաջվում են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	Ընդամենը
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ			
- Ածանցյալ պարտավորություններ	-	(1,337)	(1,337)
Ներդրումային արժեթղթեր			
- Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	-	3,605,490	3,605,490
- Բաժնային գործիքներ	1,122,712	-	1,122,712

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	Ընդամենը
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ			
- Ածանցյալ ակտիվներ	-	9,952	9,952
- Ածանցյալ պարտավորություններ	-	(229,753)	(229,753)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
- Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	-	29,232,977	29,232,977
- Բաժնային գործիքներ	173,978	-	173,978

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Բանկի փայատերերի Ժողովում
«09» հուլիսի 1990թ.
թիվ 01 արձանագրության թիվ 2 որոշմամբ

ՓՈՓՈԽՎԱԾ Է

Բանկի բաժնետերերի ժողովում 22/12/2017 թիվ 3 արձ.

Ժողովի նախագահ՝
Վարտան Դիլանյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ Կենտրոնական բանկում

«01» օգոստոսի 1990 թ.
գրանցման համարը N335

վերագրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկում
«28» դեկտեմբերի 1993 թ.
գրանցման համարը N9

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ՝

Digitally signed by Arthur Javadyan
Date: 2018.06.01 12:05:46 AMST
Reason: Գրանցված է 01.06.2018թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

«Այդի Բանկ» ՓԲԸ

IDBank

Երևան, 2018

Փոփոխված է	Փոփոխությունը գրանցված է
Բանկի փայատերերի Ժողովում 15/10/1993 թիվ 02 արձ.	10/02/1994
Բանկի փայատերերի Ժողովում 31/03/1994 թիվ 02 արձ.	11/05/1994
Բանկի փայատերերի Ժողովում 17/04/1996 թիվ 12 արձ.	23/05/1996
Բանկի փայատերերի Ժողովում 17/12/1996 թիվ 15 արձ.	24/02/1997
Բանկի փայատերերի Ժողովում 07/05/1997 թիվ 18 արձ.	30/05/1997
Բանկի փայատերերի Ժողովում 20/06/1997 թիվ 21 արձ.	14/07/1997
Բանկի փայատերերի Ժողովում 12/06/1998 թիվ 27 արձ.	17/07/1998
Բանկի փայատերերի Ժողովում 14/09/1998 թիվ 29 արձ.	09/10/1998
Բանկի փայատերերի Ժողովում 25/09/1998 թիվ 30 արձ.	16/10/1998
Բանկի մասնակիցների Ժողովում 14/12/1999 թիվ 38 արձ.	04/01/2000
Բանկի մասնակիցների Ժողովում 20/01/2000 թիվ 01 արձ.	17/02/2000
Բանկի մասնակիցների Ժողովում 22/04/2000 թիվ 03 արձ.	12/05/2000
Բանկի մասնակիցների Ժողովում 10/05/2000 թիվ 04 արձ.	22/06/2000
Բանկի մասնակիցների Ժողովում 10/12/2003 թիվ 07 արձ.	15/01/2004
Բանկի մասնակիցների ժողովում 31/05/2004 թիվ 01 արձ.	02/07/2004
Բանկի մասնակիցների ժողովում 04/11/2004 թիվ 02 արձ.	09/12/2004
Բանկի մասնակիցների ժողովում 23/01/2006 թիվ 01 արձ.	21/03/2006
Բանկի մասնակիցների ժողովում 15/04/2006 թիվ 02 արձ.	30/06/2006
Բանկի մասնակիցների ժողովում 15/10/2006 թիվ 03 արձ.	28/11/2006
Բանկի մասնակիցների ժողովում 13/12/2006 թիվ 04 արձ.	30/12/2006
Բանկի մասնակիցների ժողովում 07/04/2007 թիվ 01 արձ.	09/07/2007 թիվ 1/871 Ա որոշմամբ
Բանկի մասնակիցների ժողովում 19/04/2008 թիվ 01 արձ.	08/05/2008
Բանկի մասնակիցների ժողովում 21/02/2009 թիվ 01 արձ.	24/06/2009 թիվ 1/820 Ա որոշմամբ
Բանկի մասնակիցների ժողովում 11/03/2009 թիվ 02 արձ.	10/04/2009 թիվ 1/435 Ա որոշմամբ
Բանկի մասնակիցների ժողովում 04/07/2009 թիվ 04 արձ.	24/07/2009 թիվ 1/945 Ա որոշմամբ
Բանկի մասնակիցների ժողովում 12/11/2009 թիվ 05 արձ.	26/12/2009 թիվ 1/1587 Ա որոշմամբ
Բանկի մասնակիցների ժողովում 14/04/2011 թիվ 01 արձ.	24/05/2011 թիվ 1/522 Ա որոշմամբ
Բանկի մասնակիցների ժողովում 24/11/2011 թիվ 02 արձ.	15/12/2011 թիվ 1/1413 Ա որոշմամբ
Բանկի մասնակիցների ժողովում 20/09/2012 թիվ 03 արձ.	31/10/2012 թիվ 1/1110 Ա որոշմամբ
Բանկի մասնակիցների ժողովում 30/04/2013 թիվ 02 արձ.	17/06/2013 թիվ 1/499 Ա որոշմամբ
Բանկի մասնակիցների ժողովում 18/12/2013 թիվ 05 արձ.	29 /01 / 2014 թիվ 1/58 Ա որոշմամբ
Բանկի մասնակիցների ժողովում 29/04/2014 թիվ 01 արձ.	
Բանկի մասնակիցների ժողովում 28/03/2015 թիվ 01 արձ.	
Բանկի բաժնետերերի ժողովում 28/07/2016 թիվ 2 արձ.	
Բանկի բաժնետերերի ժողովում 22/12/2017 թիվ 3 արձ.	

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Բանկ) հանդիսանում է «Անելիք Բանկ» ՓԲԸ-ի լիիրավ իրավահաջորդը (Բանկի բաժնետերերի 2017թ. դեկտեմբերի 22-ի

արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ (արձանագրություն թիվ 3) «Անելիք Բանկ» ՓԲԸ-ն վերանվանվել է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ): «ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը, ստեղծվել է «Անելիք բանկ» ՍՊԸ վերակազմավորման արդյունքում՝ համաձայն Բանկի բաժնետերերի 2007թ.-ի ապրիլի 7-ի ժողովի որոշման (արձանագրություն թիվ 1) և հանդիսանում է «Անելիք բանկ» ՍՊԸ-ի իրավահաջորդը, որը ստեղծվել է Բանկի հիմնադիրների 1990թ. հուլիսի 9-ին կայացած ընդհանուր ժողովի որոշմամբ (արձանագրություն թիվ 1)՝ համաձայն 1990թ. օգոստոսի 1-ին կնքված հիմնադիր պայմանագրի:

1.2. Բանկի հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են Բանկի բաժնետերերի և կառավարման մարմինների համար:

1.3. Բանկն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) քաղաքացիական օրենսգրքով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով, ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված և այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և Բանկի ներքին իրավական այլ ակտերով:

1.4. Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ԱյԴի Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
անգլերեն՝ “ID Bank” Closed Joint Stock Company
ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество «АйДи Банк»

1.5. Բանկի կրճատ անվանումն է՝

հայերեն՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ
անգլերեն՝ “ID Bank” CJSC
ռուսերեն՝ ЗАО «АйДи Банк»

1.6. Բանկի իրավաբանական, գտնվելու և փոստային հասցեն է՝
Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Վարդանանց փող. 13:

2. Բանկի իրավական կարգավիճակը

2.1. Բանկը շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն է:

2.2. Բանկը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ ՀՀ Կենտրոնական բանկում գրանցվելու պահից և իրավունք ունի իրականացնել բանկային գործունեություն և օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեության լիցենզիա ստանալու պահից:

2.3. Բանկն ունի բաժնետերերի գույքից առանձնացված և սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, իր անվամբ և խորհրդանիշով կլոր կնիք, անկյունային դրոշմակնիք, ձևաթղթեր, համարային կնիքներ Բանկի գլխամասի և տարածքային ստորաբաժանումների համար:

2.4. Բանկն իրավունք ունի իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարաններում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող:

2.5. Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2.6. Բանկը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:

Բանկի բաժնետերերը պատասխանատու չեն Բանկի պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

Բանկի բաժնետերերը, ղեկավարները և այլ անձինք օրենքով նախատեսված դեպքերում Բանկի առջև կարող են կրել պատասխանատվություն իրենց գործողությունների կամ անգործության համար:

2.7.Բանկն ունի է ՀՀ օրենսդրությամբ Բանկին վերապահված իրավունքներ և կրում է պարտականություններ, անկախ դրանք սույն կանոնադրությամբ նախատեսված լինելու փաստից:

2.8. Բանկը ինքնուրույն է իրականացնում իր հիմնական միջոցների տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը, այդ թվում՝ գույքի վերագնահատումը:

2.9. Բանկը երաշխավորում է իր հաճախորդների բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանումը «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

3. Բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունները և այլ գործարքները

3.1.Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները.

ա) ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ,

բ) տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ հիփոթեքային վարկեր, իրականացնել, պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,

գ) տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ),

դ) բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ,

ե) մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները,

զ) թողարկել, գնել (զեղչե)լ, վաճառել և սպասարկել արժեթղթեր, կատարել նման այլ գործառնություններ,

է) իրականացնել (ինվեստիցիոն) ներդրումային և բաժանորդագրական գործունեություն,

է.1) իրականացնել ներդրումային ֆոնդի (ներառյալ կենսաթոշակային ֆոնդի) պահառության գործունեությունը,

ը) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ

անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում),

թ) գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ,

ժ) գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,

ժա) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

ժբ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

ժգ) մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն,

ժդ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի ետ ստացման գործունեություն,

ժե) իրացնել ապահովագրական վկայագրեր և (կամ) պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ,

ժզ) իրականացնել «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նախատեսված հաշվի օպերատորի գործառույթներ:

3.2. Բանկը կարող է ՀՀ ԿԲ թույլտվությամբ Բանկին իրականացնելու «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով ուղղակիորեն չնախատեսված այլ գործունեություն կամ գործառնություններ, եթե դրանք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության կամ սույն կանոնադրության 3.1. կետովնախատեսված գործառնությունների հետ:

3.3. Բանկը «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով իրավունք ունի իրականացնել արժեթղթերի շուկայի մասնագիտացված գործունեություն (բրոքերային, դիլերային, հավատարմագրային կառավարման, պահառուական և այլն): Բանկն իրականացնում է մասնագիտացված գործունեություն պետական արժեթղթերի շուկայում՝ մասնակցելով պետական պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացում (դիլերային, գործակալական, պահառուական գործունեություն):

3.4. Բանկը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իրեն օրենքով թույլատրված գործունեությունն իրականացնելու համար:

3.5. Բանկը սույն կանոնադրությամբ նշված ֆինանսական գործառնությունները կատարում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3.6. Բանկն ինքն է որոշում ներգրավվող ավանդների, տրամադրվող վարկերի, իր կողմից թողարկված արժեթղթերի տոկոսադրույքները և իր կողմից մատուցվող այլ ծառայությունների դիմաց գանձվող միջնորդավճարների չափը:

3.7. Բանկի և հաճախորդի միջև հարաբերությունները կրում են պայմանագրային

բնույթ: Բանկը սահմանում է իր գործունեության այնպիսի կանոններ, որպեսզի բացառվի շահերի բախումը, մասնավորապես՝

ա) մեկ հաճախորդի նկատմամբ Բանկի ստանձնած պարտավորությունները չհակասեն մեկ այլ հաճախորդի նկատմամբ նրա ստանձնած պարտավորություններին.

բ) Բանկի ղեկավարների և աշխատակիցների շահերը չհակասեն Բանկի հաճախորդի նկատմամբ Բանկի ստանձնած պարտավորություններին:

3.8. Բանկն այլ անձանց կանոնադրական կապիտալում մասնակցություն կարող է ձեռք բերել՝ պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները, իսկ անհրաժեշտության դեպքում ստանալով համապատասխան թույլտվություն:

3.9. Բանկն իրավունք ունի թղթակցային հաշիվներ բացել այլ բանկերում, այդ թվում՝ օտարերկրյա:

3.10. Բանկն օրենսդրությամբ սահմանված դեպքերում կարող է իրականացնել պետական բյուջեի դրամարկղային սպասարկման գործառնությունները:

4. Բանկի մասնաճյուղերը, ներկայացուցչությունները և հիմնարկները

4.1. Բանկը ՀՀ տարածքում և նրա տարածքից դուրս կարող է հիմնել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղեր և ներկայացուցչություններ՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

4.2. Բանկի խորհուրդը ստեղծում է Բանկի տարածքային ստորաբաժանումներն ու հաստատում դրանց կանոնադրությունները՝ Բանկի կանոնադրության սահմաններում դրանց տալով համապատասխան լիազորություններ:

4.3. Բանկի մասնաճյուղը Բանկի իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը գործում է Բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից բանկային գործունեություն և (կամ) «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ֆինանսական գործառնություններ է իրականացնում ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:

4.4. Բանկի ներկայացուցչությունը Բանկի իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը ներկայացնում է Բանկը, ուսումնասիրում է շուկան, Բանկի անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառույթներ:

Ներկայացուցչությունն իրավունք չունի իրականացնել բանկային գործունեություն և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ:

4.5. Բանկը ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված կարգով և ժամկետով կարող է ժամանակավորապես դադարեցնել ստորաբաժանումների գործունեությունը:

4.6. Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գույքը հաշվառվում է ինչպես Բանկի հաշվեկշռում:

4.7. Բանկը կարող է հիմնել նաև հիմնարկներ, որոնք կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Բանկի ստեղծած

իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություններ են: Բանկի հիմնարկ ստեղծելու մասին որոշումն ընդունում է Բանկի խորհուրդը:

4.8. Բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, գրանցումը և լուծարումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Բանկի բաժնետոմսերը

5.1. Բանկի բաժնետոմսերը բաժնետերերի միջև տեղաբաշխվում են փակ բաժանորդագրության ձևով:

5.2. Թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման գինը դրանց անվանական արժեքն է կամ Բանկի խորհրդի կողմից որոշվող շուկայական արժեքը: Շուկայական արժեքը որոշվում է օրենքով սահմանված կարգով: Բանկի բաժնետոմսերը ոչ փաստաթղթային են:

5.3. Բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց, որպես վճարման միջոց, օգտագործվում է միայն ՀՀ դրամը:

5.4. Բանկի մեկ սովորական բաժնետոմսը տվյալ բաժնետիրոջը տալիս է ընդհանուր ժողովում մեկ ձայնի իրավունք:

5.5. Բանկի կանոնադրական հիմնադրամում մեկ բաժնետիրոջը պատկանող հասարակ (սովորական) բաժնետոմսերի քանակը չի սահմանափակվում:

5.6. Բանկը կարող է օրենքով սահմանված կարգով թողարկել և տեղաբաշխել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր:

5.7. Բանկի բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մասնագիտացված կազմակերպության կողմից:

6. Բանկի պարտատոմսերը և այլ արժեթղթերը

6.1. Բանկը կարող է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով թողարկել պարտատոմսեր և այլ արժեթղթեր:

6.2. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումը կատարվում է Բանկի խորհրդի որոշմամբ: Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ պետք է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները:

Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք: Բանկի թողարկած բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չպետք է գերազանցի կանոնադրական հիմնադրամը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Բանկի պարտատոմսեր թողարկելու նպատակով:

6.3. Պարտատոմսեր կարող է թողարկվել միայն Բանկի կանոնադրական հիմնադրամի լրիվ վճարումից հետո: Բանկը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր,

որոնք տալիս են Բանկի պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռքբերման իրավունք: Ընդ որում, Բանկն իրավունք չունի տեղաբաշխել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, եթե ըստ տեսակների և դասերի հայտարարված բաժնետոմսերի քանակը պակաս է նշված տեսակների և դասերի բաժնետոմսերի այն քանակից, որոնք անհրաժեշտ են փոխարկվող պարտատոմսերը և այլ արժեթղթերը Բանկի բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար:

Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի փոխարկումն իրականացվում է՝ հաշվի առնելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելու սահմանափակումները:

6.4. Բանկը կարող է թողարկել միաժամանակյա, ինչպես նաև տարաժամկետ (Բանկի կողմից սահմանված ժամկետային հաջորդականությամբ)մարման ժամկետով պարտատոմսեր: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկման որոշմամբ սահմանվում են տվյալ պարտատոմսերի կամ այլ արժեթղթերի տեսակները և դասերը, դրանց սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև օրենքով պահանջվող այլ տեղեկություններ:

6.5. Բանկի անվանական պարտատոմսերի և այլ արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը վարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մասնագիտացված կազմակերպության կողմից:

7. Բանկի բաժնետերերը

7.1. Բանկի բաժնետերեր կարող են լինել ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

7.2.ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները Բանկի բաժնետեր կարող են լինել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Բանկի բաժնետեր չեն կարող լինել կուսակցությունները և արհեստակցական միությունները:

7.3. Բանկի յուրաքանչյուր սովորական բաժնետոմս իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը տալիս է միևնույն իրավունքները:

7.4.Բանկին պարտադիր ցուցում տալու իրավունք կամ Բանկի գործունեությունը օրենքով չարգելված այլ կերպ կանխորոշելու հնարավորություն ունեցող բաժնետերը Բանկի անվճարունակության դեպքում Բանկի պարտավորությունների համար կրում է լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն, եթե նշված իրավունքը կամ հնարավորությունն ունեցող բաժնետերը դրանք իրագործելիս նախօրոք իմացել է, որ դրա հետևանքով Բանկը կհայտնվի օրենքով սահմանված անվճարունակության վիճակում, այդ թվում կսպառի հիմնական կապիտալի զգալի մասը:

7.5. Ընդհանուր ժողովում ձայնի իրավունքից օգտվում են միայն լրիվ վճարված սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը:

7.6. Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերը իրավունք ունի՝

7.6.1. անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել Բանկի կառավարմանը, այդ թվում՝ մասնակցել ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը վերապահված բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ըստ իր բաժնետոմսերի քանակի,

7.6.2. ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից,

7.6.3. օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն,

7.6.4. իր գրավոր դիմումի համաձայն ծանոթանալ Բանկի ֆինանսական և այլ հաշվետվություններին և օրենքով սահմանված այլ տեղեկատվությանը,

7.6.5. ընդհանուր ժողովում հանդես գալ առաջարկություններով, ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով,

7.6.6. ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,

7.6.7. դիմել դատարան՝ ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

7.6.8. Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի իրեն հասանելիք մասը,

7.6.9. առաջնահերթ կարգով ձեռք բերել Բանկի կողմից թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ,

7.6.10. անվճար ստանալ Բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները,

7.6.11. Բանկի քվեարկող բաժնետոմսերի 2%-ին և ավելիին տիրապետող յուրաքանչյուր բաժնետիրոջ գրավոր (բաժնետերերի) պահանջով Բանկը նրան պետք է անվճար տրամադրի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի ա-է ենթակետերով նախատեսված տեղեկատվությունը: Ընդ որում, նշված տեղեկությունները տրամադրվում են Բանկի բաժնետերերին երկու բանկային օրվա ընթացքում վերջիններիս գրավոր դիմումի հիման վրա,

7.6.12. ունենալ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

7.7. Բանկի բաժնետերերը պարտավոր են՝

7.7.1. պահպանել սույն կանոնադրության պահանջները և կատարել Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները,

7.7.2. բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իրենց բաժնետոմսերի արժեքը,

7.7.3. չհրապարակել Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկություններ,

7.7.4. սույն կանոնադրության 7.7. կետի 7.7.4. ենթակետի համաձայն ստացված տեղեկությունները չփոխանցել այլ անձանց, դրանք չօգտագործել Բանկի գործարար համբավը արատավորելու, Բանկի բաժնետերերի կամ հաճախորդների իրավունքներն ու օրինական շահերը խախտելու կամ նմանատիպ այլ նպատակներով:

Հակառակ դեպքում Բանկի բաժնետերերը կրում են պատասխանատվություն ՀՀ օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված կարգով,

7.7.5. Բանկի խորհրդին բացահայտել փոխկապակցված անձանց և շահագրգիռ գործարքների առկայության մասին տեղեկատվություն:

7.7.6. Բանկի բաժնետերերը կարող են կրել նաև ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ պարտավորություններ:

7.11 8. Բանկի կանոնադրական հիմնադրամը

8.1.Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը կազմվում է Բանկի բաժնետերերի կողմից ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից: Բանկի կանոնադրական հիմնադրամը պարտատերերի շահերը երաշխավորող Բանկի գույքի նվազագույն չափն է, որը համալրվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

8.2. Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմում է 33,971,850,000 (երեսուներեք միլիարդ ինը հարյուր յոթանասունմեկ միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, բաղկացած է 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով 679,437 (վեց հարյուր յոթանասունինը հազար չորս հարյուր երեսունյոթ)հատ սովորական բաժնետոմսից:

8.3. Բանկը կարող է ավելացնել իր կանոնադրական հիմնադրամի չափը՝ ընդհանուր ժողովի կողմից սահմանված քանակով, յուրաքանչյուրը՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով լրացուցիչ սովորական բաժնետոմսեր թողարկելով:

9. Կանոնադրական հիմնադրամի նվազեցումը

9.1.Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի նվազեցումն գործունեության ընթացքում՝ դրա հաշվին շահութաբաժիններ բաշխելու կամ այլ ձևերով արգելվում է, բացառությամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնադրության 9.2 կետով նախատեսված դեպքերի:

9.2. Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերը իրավունք ունեն Բանկից պահանջելու մասնակցության հետգնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնում, եթե՝

ա) որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին (այն դեպքերում, երբ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է Ընդհանուր ժողովի կողմից), և տվյալ բաժնետերերը քվեարկել են Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չեն մասնակցել,

բ) կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նշված բաժնետերերի իրավունքները, և նրանք դեմ են քվեարկել կամ քվեարկությանը չեն մասնակցել:

9.3. Բանկից իրենց մասնակցության հետգնման պահանջի իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա, այն ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ, որի օրակարգը պարունակում է հարցեր, որոնց ընդունումը հանգեցրել է բաժնետերերի իրավունքների՝ սույն կանոնադրության 9.2 կետով նշված սահմանափակումներին:

9.4. Բանկի կողմից մասնակցության հետգնումը կատարվում է դրա շուկայական արժեքով, որը որոշվում է առանց մասնակցության գնահատման և հետգնման պահանջի իրավունք տվող Բանկի գործողությունների հետևանքով առաջացող փոփոխությունները հաշվի առնելու:

9.5. Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազեցում թույլատրվում է նաև «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքում:

9.6. Մասնակցության հետգնման համար անհրաժեշտ է ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությունը:

9.7. Բանկը պարտավոր է տեղեկացնել բաժնետերերին՝ նրանց պատկանող բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի և իրականացման կարգի մասին:

Ընդհանուր ժողովի մասին ծանուցումը, որի օրակարգում ընդգրկված են հարցեր, որոնց վերաբերյալ քվեարկությունը կարող է օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հանգեցնել բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի առաջացմանը (9.2 կետ), պետք է պարունակի սույն կետում նշված տեղեկությունները: Ծանուցումը պետք է պարունակի նաև տեղեկություններ բաժնետոմսերի հետգնման գնի մասին:

Նշված ընդհանուր ժողովի որոշումների ընդունման պահից 7-օրյա ժամկետում, Բանկը պարտավոր է ծանուցել բաժնետոմսերի հետգնման իրավունք ունեցող բաժնետերերին նրանց մոտ Բանկից բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի առաջացման և հետգնման կարգի մասին:

Բաժնետիրոջ՝ իրեն պատկանող բաժնետոմսերը հետ գնելու մասին գրավոր պահանջը, որը

պարունակում է տեղեկություններ հետգնման ներկայացված բաժնետոմսերի քանակի և բաժնետիրոջ բնակության (գտնվելու) վայրի մասին, ներկայացվում է Բանկ՝ ընդհանուր ժողովի կողմից համապատասխան որոշումների ընդունման պահից ոչ ուշ, քան 45 օրվա ընթացքում:

Սույն կետում սահմանված ժամկետի ավարտից հետո Բանկը պարտավոր է 30 օրվա ընթացքում հետ գնել բաժնետոմսերը հետգնման գրավոր պահանջ ներկայացրած բաժնետերերից:

Բաժնետոմսերի հետգնումն իրականացվում է սույն կետում նշված ծանուցման մեջ սահմանված գնով:

Բաժնետոմսերի հետգնմանն ուղղվող միջոցների գումարը չի կարող գերազանցել Բանկի զուտ ակտիվների արժեքի տասը տոկոսը: Զուտ ակտիվների արժեքը սահմանվում է սույն կանոնադրության 9.2 կետի «ա» և «բ» ենթակետերում նշված որոշումների ընդունման պահի դրությամբ:

Եթե բաժնետերերի պահանջով հետգնման ենթակա բաժնետոմսերի գումարային արժեքը գերազանցում է այն գումարը, որը Բանկը կարող է տրամադրել բաժնետոմսերի հետգնման համար, ապա բաժնետոմսերը հետ են գնվում բաժնետերերի ներկայացված պահանջներին համամասնորեն:

Եթե բաժնետերը համաձայն չէ հետգնման գնի հետ, ապա նա իրավունք ունի բաժնետոմսերի վերագնահատման պահանջով դիմել դատարան՝ Բանկի կողմից բաժնետերերին վճարումը կատարելու սահմանված օրից 3 ամսվա ընթացքում:

Սույն կանոնադրության 9.2. կետով սահմանված հիմքերով հետ գնված բաժնետոմսերն անցնում են Բանկի տնօրինմանը:

Նշված բաժնետոմսերը չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, և դրանցով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Դրանք ենթակա են տեղաբաշխման մեկ տարվա ընթացքում: Հակառակ դեպքում ընդհանուր ժողովը պարտավոր է որոշում ընդունել նշված բաժնետոմսերի մարման միջոցով կանոնադրական հիմնադրամի չափի նվազեցման մասին:

9.8. Բանկի կողմից իր բաժնետոմսերը հետ գնելու դեպքում կանոնադրական հիմնադրամի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի իրացման մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից, դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4 –ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

10. **Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը**

10.1.Բանկը կարող է ավելացնել իր կանոնադրական հիմնադրամը Բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով:

10.2. Բանկն իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց այլ կերպ առաջարկել ձեռք բերել դրանք:

10.3. Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Բանկը կանոնադրական հիմնադրամը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

10.4. Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվեն՝

ա) լրացուցիչ տեղաբաշխվող հասարակ (սովորական) բաժնետոմսերի քանակը,

բ) լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետները և պայմանները, այդ թվում՝ տեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը,

գ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ տվյալներ:

10.5. Բանկն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական հիմնադրամը՝

ա) շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական հիմնադրամ,

բ) Բանկի զուտ ակտիվների (սեփական կապիտալի) արժեքից կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և արտոնյալ բաժնետոմսերի (դրանց առկայության դեպքում) լուծարային ու անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող մասը լրիվ կամ մասնակի փոխանցելով կանոնադրական հիմնադրամ:

10.6. Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Բանկը չի կարող ավելացնել կանոնադրական հիմնադրամն ավելի, քան ընդհանուր ժողովի հաստատած վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

10.7. Մեկ տարուց ոչ պակաս ժամկետում բաժնետոմսերի հավաստագիրը փոխանակելու նպատակով կամ համապատասխան գրառում կատարելու համար չդիմելու դեպքում հավաստագրերը համարվում են անվավեր:

11. **Բանկի պահուստային հիմնադրամը (գլխավոր պահուստը) և այլ հիմնադրամները**

11.1. Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ ոչ պակաս կանոնադրական հիմնադրամի 15 տոկոսից:

Եթե պահուստային հիմնադրամը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից 5 տոկոսի չափով:

11.2.Պահուստային հիմնադրամը օգտագործվում է Բանկի կորուստները ծածկելու, ինչպես

նաև Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Բանկի շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Բանկի խորհրդի որոշմամբ:

11.3.Պահուստային հիմնադրամը ձևավորվում է օրենքով սահմանված կարգով Բանկի շահույթից տարեկան մասհանումների միջոցով՝ մինչև սահմանված չափերին հասնելը:

11.4.Բանկն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է ստեղծել նաև այլ հիմնադրամներ:

11.5.Հիմնադրամների ձևավորումը, դրանց հատկացումների կարգը և չափերը որոշվում են Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, իսկ դրանց օգտագործումը կատարվում է Բանկի խորհրդի որոշմամբ:

12. Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելը և դրա սահմանափակումները

12.1. Բանկի բաժնետերերը օրենքներով և սույն կետով սահմանված կարգով ցանկացած ժամանակ կարող են օտարել իրենց պատկանող բաժնետոմսերը:

Բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի օտարումն իրականացվում է՝ հաշվի առնելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված Բանկի կանոնադրական հիմնադրամում այլ մասնակցություն ձեռք բերելու սահմանափակումները:

Բանկի բաժնետերն ունի այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք իրեն պատկանող բաժնետոմսերին համամասնորեն:

Բաժնետերն իր բաժնետոմսերն օտարելու իր մտադրության մասին գրավոր ձևով հայտնում է Բանկի վարչության նախագահին: Վարչության նախագահը պարտավոր է գրությունը Բանկ մուտքագրվելու պահից 5-օրյա ժամկետում տեղեկացնել Բանկի մյուս բաժնետերերին սույն կանոնադրությամբ ընդհանուր ժողովի գումարման համար սահմանված ծանուցման կարգով: Բաժնետերերի կողմից առաջարկվող բաժնետոմսերը գնելու նախապատվության իրավունքի ժամկետը սահմանվում է 30 օր:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում բաժնետերերից ոչ մեկը չի օգտվում նախապատվության իր իրավունքից, ապա բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձանց:

Բանկի բաժնետոմսի օտարումը երրորդ անձանց կարող է կատարվել միայն օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բանկի կողմից փակ բաժանորդագրության կարգով տեղաբաշխվող բաժնետոմսեր կարող են ձեռք բերել նաև Բանկի մասնակից չհանդիսացող անձինք:

Բանկի բաժնետերերը (հասարակ բաժնետոմսերի սեփականատերերը) Բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք ունեն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Նշված նախապատվության իրավունքը բաժնետերերն իրականացնում են համապատասխան

տեղաբաշխման մասին իրենց ծանուցելու պահից 10 օրվա ընթացքում:

Բանկի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերը պետք է ընդհանուր ժողովի գումարման մասին սահմանված կարգով Բանկի դրամական վճարման ենթակա քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն սկսվելու օրվանից առնվազն 30 օր առաջ ծանուցվեն նախապատվության իրավունքի՝ իրենց կողմից իրականացման հնարավորության մասին:

Ծանուցումը պետք է տեղեկություններ պարունակի՝

ա) տեղաբաշխվող քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի քանակի մասին,

բ) տեղաբաշխվող քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման գնի (այդ թվում՝ տեղաբաշխվող քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի համար տեղաբաշխման գնի) մասին,

գ) ընկերության բաժնետերերի կողմից նախապատվության իրավունքով ձեռք բերվող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի քանակի որոշման կարգի, ինչպես նաև այդ իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին,

դ) ձեռք բերվող բաժնետոմսերի տեսակների ու դասերի մասին:

Բաժնետերն իրավունք ունի իրականացնել իր նախապատվության իրավունքը լրիվ ծավալով կամ մասնակիորեն՝ քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկող արժեթղթերի ձեռքբերման մասին Բանկին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով, որը պետք է բովանդակի՝

ա) բաժնետիրոջ լրիվ ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի համար՝ անունը), պետական գրանցման տվյալները (անձնագրային տվյալները), գտնվելու (բնակության) վայրը,

բ) ձեռք բերվող բաժնետոմսերի և (կամ) արժեթղթերի քանակը,

գ) բաժնետոմսերի և (կամ) արժեթղթերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը:

Ծանուցումը պետք է ներկայացվի Բանկի քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն սկսելու օրվանից ոչ ուշ, քան մեկ օր առաջ:

12.2. Բանկի կանոնադրական հիմնադրամի բաժնետոմսերը անցնում են Բանկի բաժնետեր իրավաբանական անձանց իրավահաջորդներին և բաժնետեր քաղաքացիների ժառանգներին:

12.3. Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում կարող են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված նշանակալից մասնակցություն ձեռք բերել միայն ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

12.4. Առանց ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնության, Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռքբերման պայմանագիրն

առոչինչ է:

13. Բանկի շահույթի բաշխումը

13.1. Իր գործունեության արդյունքում Բանկի ստացած շահույթը ՀՀ օրենսդրության համաձայն ենթակա է հարկման:

13.2.ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և մյուս պարտադիր վճարումները կատարելուց հետո ձևավորվում է Բանկի տրամադրության տակ մնացած զուտ շահույթը, որի բաշխումն իրականացվում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ սույն կանոնադրությամբ սահմանված գլխավոր պահուստի և այլ ֆոնդերի համալրման և շահաբաժինների վճարման նպատակով:

13.3. Բանկն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր բաժնետերերին եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

13.4. Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Բանկի խորհուրդը:

Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը:

13.5. Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ:

Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

13.6. Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում: Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

13.7.Ընդհանուր ժողովը իրավունք ունի որոշում ընդունելու շահութաբաժիններ չվճարելու մասին:

13.8. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունումից 30 օր հետո: Եթե այլ բան նախատեսված չէ Ընդհանուր ժողովի որոշմամբ, հայտարարված տարեկան շահութաբաժինները

Բանկի կողմից պետք է վճարվեն Ընդհանուր ժողովի կողմից շահույթի բաշխման համապատասխան որոշումը կայացնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

13.9. Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

ա) միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Բանկի մասնակիցների ռեեստրում՝ խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ.

բ) տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Բանկի մասնակիցների ռեեստրում՝ Բանկի մասնակիցների տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

13.10. Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարին:

13.11. Շահույթի բաշխումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

14. Բանկի կառավարման մարմինները

14.1. Բանկի կառավարման մարմիններն են՝

ա) Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր Ժողով),

բ) Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ),

գ) Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն),

դ) Բանկի վարչության նախագահը (այսուհետ՝ Վարչության նախագահ),

Ընդ որում, Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Բանկի Վարչության նախագահը՝ Բանկի Վարչության հետ համատեղ:

Բացի վերը նշված կառավարման մարմիններից, Բանկն ունի նաև գլխավոր հաշվապահ և ներքին աուդիտի ստորաբաժանում:

15. Բանկի Բաժնետերերի Ընդհանուր ժողովը

15.1. Բանկի կառավարման բարձրագույն մարմինը Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովն է:

15.2. Բանկը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով: Տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է ֆինանսական տարվա ավարտից հետո չորս ամսվա ընթացքում:

15.3. Ընդհանուր ժողովը գումարվում է բաժնետերերի համատեղ նիստի, հեռակա

կարգով քվեարկության (հարցման) կամ հեռախոսակապի միջոցով: Տարեկան ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:

Սույն կանոնադրության 15.26 կետի «բ» և «գ» ենթակետերում նշված հարցերից յուրաքանչյուրի վերաբերյալ որոշմանը (դրա ցանկացած փոփոխությանը) բաժնետերերը կարող են տալ իրենց հաստատումը գրավոր ձևով կամ Ընդհանուր ժողովում այդ նպատակով իրենց լիազորված ներկայացուցիչների միջոցով:

15.4. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովները կարող են լինել հերթական կամ արտահերթ:

15.5. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում Բանկի Խորհուրդը որոշում է ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, տեղը և ժամանակը, ժողովի օրակարգը, ժողովի մասնակիցների ցուցակի կազմման տարին, ամիսը, ամսաթիվը, ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը, ծանուցման ձևը, քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

15.6. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն.

ա) Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող Բանկի բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր,

բ) Բանկի կանոնադրությամբ սահմանված արտոնյալ բաժնետոմսեր տեղաբաշխված լինելու դեպքերում՝ Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով՝ օրենքով սահմանված դեպքերում, ինչպես նաև այդ բաժնետոմսերի անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր,

գ) Բանկի բաժնետեր չհանդիսացող խորհրդի անդամները և Վարչությունը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,

դ) Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ,

ե) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում),

զ) ՀՀ Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ,

է) Բանկի այլ աշխատակիցները՝ իրենց կողմից Ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը զեկուցելու դեպքում,

ը) տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները՝ որպես դիտորդ,

թ) Ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված որոշակի հարցերի վերաբերյալ մասնագիտական գիտելիքներին տիրապետող անձինք:

15.7. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի

ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը պետք է միաժամանակ բավարարեն հետեւյալ երկու պահանջները.

ա) այն չպետք է նախորդի ընդհանուր ժողով գումարելու մասին որոշումն ընդունելու օրվան,

բ) ցուցակը կազմելու օրվա եւ ընդհանուր ժողովի անցկացման օրվա միջեւ ընկած ժամանակահատվածը չի կարող 45 օրից ավելի լինել:

Եթե Ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում է Ընդհանուր ժողովի գումարումից առնվազն 35 օր առաջ:

15.8. Բանկը բաժնետերերի ընդհանուր ժողովի անցկացման մասին ՀՀ Կենտրոնական բանկին ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

15.9. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

15.10. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը պետք է տվյալներ պարունակի Բանկի յուրաքանչյուր բաժնետիրոջ անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և Բանկի կանոնադրական հիմնադրամում նրան պատկանող մասնակցության մասին:

15.11. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Բանկի այն բաժնետերերին, որոնք գրանցված են Բանկի բաժնետերերի ռեեստրում:

Նշված ցուցակը տրամադրվում է ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետիրոջը սույն կանոնադրության 15.14 կետում նշված ծանուցման հետ միաժամանակ:

Բանկի բաժնետիրոջ պահանջով Բանկը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:

Նշված տեղեկանքը տրամադրվում է Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետիրոջը վերջինիս գրավոր դիմումի հիման վրա՝ երկօրյա ժամկետում:

15.12. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված Բանկի բաժնետերերի խախտված իրավունքները և օրինական շահերը վերականգնելու նպատակով:

15.13. Բանկը տարեկան ընդհանուր ժողովի անցկացման մասին իր բաժնետերերին ծանուցում է ընդհանուր ժողովի գումարման օրվանից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

Արտահերթ ընդհանուր ժողովի անցկացման մասին Բանկն իր բաժնետերերին ծանուցում է

դրա գումարման օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ:

15.14. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետիրոջ ծանուցումն իրականացվում է պատվիրված նամակներ ուղարկելու կամ առձեռն հանձնելու կամ էլեկտրոնային փոստի հասցեով ծանուցելու միջոցով:

15.15. Բանկի տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը օրենքով սահմանված ժամկետում հրապարակվում է ինտերնետում՝ Բանկի կայքէջում և մամուլում:

15.16. Ընդհանուր ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի՝

ա) Բանկի ֆիրմային անվանումն ու գտնվելու վայրը,

բ) Ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,

գ) Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,

դ) Ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը,

ե) բաժնետերերի ծանոթանալու կարգը Ընդհանուր ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին Ընդհանուր ժողովը նախապատրաստելու ընթացքում:

15.17. Եթե Բանկի բաժնետերերի ռեեստրում գրանցված անձը բաժնետոմսերի անվանատերն է, ապա Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է նրան: Վերջինս պարտավոր է ծանուցումն ուղարկել այն անձանց, որոնց շահերը նա ներկայացնում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ նրա և այդ անձանց միջև կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում:

15.18. Բանկի բաժնետերը, որը ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է հանդիսանում, Բանկի ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 30-60 օրվա ընթացքում, իրավունք ունի երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ:

Տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով՝

ա) հարցի առաջարկման հիմքերը,

բ) հարցը առաջարկող բաժնետիրոջ անունը (անվանումը),

գ) նրան պատկանող բաժնետոմսերի քանակը,

դ) առաջարկության հեղինակի ստորագրությունը կամ դրա ֆաքսիմիլային վերարտադրությունը:

15.19. Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք տարեկան ընդհանուր ժողովում ընդգրկելու մասին՝ սույն կանոնադրության 15.18 կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում:

Խորհուրդը կարող է որոշում ընդունել ներկայացված առաջարկները տարեկան ժողովի օրակարգում ընդգրկելը մերժելու մասին միայն այն դեպքում, եթե՝

ա) առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ կողմից խախտվել է սույն կանոնադրության 15.18 կետով սահմանված ժամկետը,

բ) առաջարկ ներկայացրած բաժնետերը չի տնօրինում Բանկի սույն կանոնադրության 15.18 կետով սահմանված քանակի քվեարկող բաժնետոմսերը,

գ) լրիվ չեն կամ բացակայում են սույն կանոնադրության 15.18 կետով սահմանված տվյալները,

դ) առաջարկը հակասում է օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին:

15.20. Խորհրդի հիմնավորված որոշումը ներկայացված առաջարկը տարեկան ընդհանուր ժողովում ընդգրկելը մերժելու մասին ուղարկվում է առաջարկը ներկայացրած բաժնետիրոջը (բաժնետերերին)՝ որոշումն ընդունելու պահից 3 օրվա ընթացքում: Խորհրդի որոշումը ներկայացված առաջարկը տարեկան ընդհանուր ժողովում ընդգրկելը մերժելու մասին կարող է բողոքարկվել դատական կարգով:

15.21. Ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում Խորհուրդը որոշում է՝

ա) Ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամն ու վայրը,

բ) Ընդհանուր ժողովի օրակարգը,

գ) Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,

դ) Ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը,

ե) բաժնետերերին ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը,

զ) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

15.22. Տարեկան ընդհանուր ժողովից բացի գումարվող ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ:

15.23. Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Բանկի խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Բանկի Վարչության, Բանկի աուդիտն անցկացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Եթե խորհուդը որոշում է մերժել ընդհանուր արտահերթ ժողով հրավիրելու վերաբերյալ առաջարկը, ապա մերժման մասին որոշումը խորհուրդը պարտավոր է ընդունել 5 օրվա ընթացքում՝ պահանջը ներկայացնելու պահից:

Արտահերթ ընդհանուր ժողովի գումարման մասին որոշում ընդունելու դեպքում խորհուրդը պետք է արտահերթ Ընդհանուր ժողովը գումարի սույն կանոնադրության և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Արտահերթ ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ խորհրդի որոշմամբ սահմանվում է օրակարգը, արտահերթ ընդհանուր ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով:

15.24. Բաժնետերերը ունեն Բանկի կանոնադրական հիմնադրամում իրենց բաժնետոմսերին

համամասնական ձայնի իրավունք:

15.25. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է, եթե Ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

Քվորումի բացակայության դեպքում սույն կանոնադրությամբ սահմանված ընթացակարգի պահպանմամբ հրավիրվում է նոր Ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Եթե քվորումի բացակայության պատճառով չկայացած Ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը տեղափոխվում է 20 օրից պակաս ժամկետով, ապա այդ Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի նոր ցուցակ չի կազմվում: Նոր Ընդհանուր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում: Չկայացած Ընդհանուր ժողովի փոխարեն գումարվող նոր Ընդհանուր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

15.26. Բանկի Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,

բ) Բանկի վերակազմակերպումը, ներառյալ՝ այլ անձի (անձանց) հետ միացումը,

գ) Բանկի լուծարումը,

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,

ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը, ինչպես նաև կանոնադրական հիմնադրամի ավելացումը,

է) խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

ը) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը,տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

թ) Ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը.

ժ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

ժա) բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը,

ժբ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը,

ժգ) առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը,

ժդ) խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,

ժե) օրենսդրությամբ սահմանված դեպքերում շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը,

ժզ) օրենսդրությամբ սահմանված դեպքերում Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 %-ից ավելին), ինչպես նաև Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից մինչև 50 տոկոսի դեպքերում, եթե Խորհրդի կողմից չի ընդունվել միաձայն, և հարցը բարձրացվել է Ընդհանուր ժողովի քննարկմանը,

ժէ) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը:

15.27. Ընդհանուր ժողովն անցկացվում է հետևյալ կարգով՝

ա) Ընդհանուր ժողովի քարտուղարը մինչև նիստի բացումը Ընդհանուր ժողովի նախագահին զեկուցում է բաժնետերերի նիստին ներկա լինելու վերաբերյալ,

բ) Ընդհանուր ժողովի նախագահը ողջունում է ներկաներին և նիստը հայտարարում է բացված,

գ) Ընդհանուր ժողովի նախագահը ներկայացնում է ընդհանուր ժողովի օրակարգը, որից հետո օրակարգի հարցերը ըստ հերթականության դնում է քննարկման,

դ) Ընդհանուր ժողովի նախագահը առաջարկում է ցանկացողներին իրենց կարծիքը ներկայացնել առաջադրվող հարցի վերաբերյալ,

ե) առաջադրված հարցի վերաբերյալ կարծիքների արտահայտման փուլն ավարտվելուց հետո քննարկվող հարցերը դրվում են քվեարկության:

Քվեարկությունը ընդհանուր ժողովում իրականացվում է «Բանկի մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով:

15.28. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են Ընդհանուր ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ.

ա) Բանկի կողմից իր բաժնետոմսերը հետ գնելու դեպքում կանոնադրական հիմնադրամի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի իրացման մասին որոշումներն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից,

բ) սույն կանոնադրության 15.26 կետի «ա», «դ», «զ» և «ժզ» ենթակետերում նշված հարցերի, որոնց վերաբերյալ որոշումներն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով,

գ) սույն կանոնադրության 15.26 կետի «բ» և «գ» ենթակետերում նշված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի

սեփականատերերի միաձայն քվեարկությամբ.

դ) կանոնադրական հիմնադրամի ավելացման մասին որոշումը, որը ենթադրում է երրորդ անձանց բաժանորդագրումը նոր թողարկված լրացուցիչ բաժնետոմսերի համար, որոնք կազմում են Բանկի քվեարկող բաժնետոմսերի 10 տոկոսը կամ ավելին, Ընդհանուր ժողովի կողմից ընդունվում են քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի միաձայն քվեարկությամբ.

Սույն կանոնադրության 15.26 կետով սահմանված հարցերի (բացառությամբ 15.26 կետի (ժզ) ենթակետով սահմանված հարցերի) վերաբերյալ որոշումների ընդունումը հանդիսանում է Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը և չի կարող փոխանցվել Բանկի խորհրդին, Բանկի Վարչության անդամներին կամ այլ անձի, բացառությամբ «ժբ-ժդ» ենթակետերում թվարկված հարցերի և Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացման հարցի, որոնցով որոշումների ընդունումը Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել Խորհրդին:

15.29. Ընդհանուր ժողովը «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող այլ հարցերով որոշումներ ընդունելու դեպքերում առաջնորդվում է նույն օրենքով տվյալ որոշումների ընդունման համար սահմանված կարգով՝ հաշվի առնելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթները:

Ընդհանուր ժողովն իրավունք չունի փոփոխել օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

15.30. Քվեարկության արդյունքները հայտարարվում են տվյալ ժողովում, կամ ժողովի ավարտից հետո բաժնետերերը տեղեկացվում են քվեարկության արդյունքների մասին:

15.31. Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել նաև հեռակա քվեարկության (հարցման) միջոցով, բացառությամբ սույն կանոնադրության 15.26 կետի «բ», «գ» և «ը» ենթակետերում նշված հարցերի:

Հեռակա կարգով անցկացվող Ընդհանուր ժողովի նիստերի ծանուցումն իրականացվում է սույն կանոնադրությամբ սահմանված Ընդհանուր ժողովին բաժնետերերի ծանուցման կարգով՝ ծանուցման մեջ պարտադիր կերպով նշելով հեռակա կարգով անցկացման մասին:

Ընդհանուր ժողովը հեռակա քվեարկությամբ գումարելիս Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր բաժնետերերին քվեաթերթիկների և Ընդհանուր ժողովի օրակարգի հետ մեկտեղ ուղարկվում են օրենքով սահմանված տեղեկությունները և նյութերը:

Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված Ընդհանուր ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Բանկի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ:

Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունումն ավարտելու պահից

առնվազն 30 օր առաջ:

15.32. Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ Ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում:

Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:

Հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով անցկացվող Ընդհանուր ժողովի նիստերի ծանուցումն իրականացվում է սույն կանոնադրությամբ սահմանված Ընդհանուր ժողովի գումարման ծանուցման կարգով:

Բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի գումարման մասին Բանկի մասնակիցների ծանուցման հետ միասին նրանց են ուղարկվում նաև Ընդհանուր ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ նյութերը և այլ տեղեկատվություն:

Բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի գումարման օրը սահմանված կապի միջոցով հաղորդակցվելով միմյանց հետ՝ Բանկի մասնակիցները քննարկում են օրակարգի հարցերը և ընդունում են համապատասխան որոշումներ, որոնց հիման վրա կազմվում է արձանագրություն Բանկի մասնակիցների ընդհանուր ժողովում քննարկված հարցերի և դրանց վերաբերյալ ընդունված որոշումների մասին, որը ուղարկվում է Բանկի մասնակիցներին ստորագրման և Բանկ ետ վերադարձման համար:

Արձանագրության մեջ որպես Ընդհանուր ժողովի գումարման վայր լրացվում է սահմանված կապի միջոցի անվանումը:

15.33. Ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է Ընդհանուր ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում՝ 2 օրինակով, որոնք ստորագրում են Ընդհանուր ժողովի նախագահը և քարտուղարը:

Ընդհանուր ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում Ընդհանուր ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար: Արձանագրության մեջ նշվում են՝

ա) Ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.

բ) Բանկի՝ տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը.

գ) Ընդհանուր ժողովին մասնակցած բաժնետերերին պատկանող ձայների գումարային քանակը.

դ) Ընդհանուր ժողովի նախագահը (նախագահությունը) և քարտուղարը (քարտուղարությունը),

ե) Ընդհանուր ժողովի օրակարգը:

Արձանագրությունը պետք է պարունակի Ընդհանուր ժողովում հնչած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, դրանց վերաբերյալ քվեարկության արդյունքները, Ընդհանուր ժողովի ընդունած որոշումները:

Բանկի բաժնետերերն իրավունք ունեն ծանոթանալ Ընդհանուր ժողովի արձանագրություններին:

16. Բանկի խորհուրդը

16.1. Բանկի խորհուրդը իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

16.2. Բանկի խորհրդի անդամներն ընտրվում են Բանկի մասնակիցների տարեկան ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից, իսկ Բանկի խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ Ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Ընդհանուր ժողովին Բանկի խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Բանկի մասնակիցները, ինչպես նաև Խորհուրդը (բացառությամբ առաջին անգամ Խորհրդի ձևավորման դեպքի):

16.3. Բանկի մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովում Բանկի խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Բանկի խորհրդի նոր անդամի ընտրությունը կատարվում է հետևյալ կարգով.

Լիազորությունները վաղաժամկետ դադարեցված Խորհրդի անդամին ներկայացնող խումբը (բաժնետերը) արտահերթ Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցվելու պահից հնգօրյա ժամկետում Բանկի բաժնետերերին և Ընդհանուր ժողովին օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տեղեկացնում է իրենց խումբը (կամ իրեն) ներկայացնող Խորհրդի անդամի թեկնածուի մասին անհրաժեշտ տեղեկությունները և արտահերթ Ընդհանուր ժողովում Խորհրդի նոր անդամի ընտրությունը կատարվում է օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

16.4. Բանկի Խորհրդի անդամները ընտրվում են նվազագույնը մեկ տարի ժամկետով, վերընտրման իրավունքով:

16.5. Բանկի այն մասնակիցները, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվելու Խորհրդի կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին:

16.6. Բանկի այն մասնակիցները, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են միավորվել և Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին Խորհրդի կազմում:

Սույն կետի առաջին պարբերությամբ նշված ձևով ներկայացուցչի ընդգրկումը Խորհրդում հնարավոր է միայն Բանկի մասնակիցների խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ Ընդհանուր ժողովին տեղեկացնելու դեպքում:

Սույն կետի երկրորդ պարբերությամբ նշված պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պայմաններն ու տեղեկությունները.

ա) Բանկի միավորվող բաժնետերերի վերաբերյալ տվյալներ, ներառյալ՝ նրանց պատկանող Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակը,

բ) միավորվող բաժնետերերի կողմից առաջարկվող Խորհրդի անդամի թեկնածուի վերաբերյալ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43 հոդվածի 5-րդ մասով սահմանված տեղեկությունները,

գ) պայման այն մասին, որ պայմանագիրը կնքվում է առնվազն մեկ տարի ժամկետով և մինչև այդ ժամկետի ավարտը փոփոխման կամ լուծման ենթակա չէ,

դ) միավորվող բաժնետերերի հայեցողությամբ՝ այլ պայմաններ:

Պայմանագրի պատճենները տրամադրվում են Ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ Ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

16.7. Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերն իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու Բանկի խորհրդի կազմում:

Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող բաժնետեր է համարվում տվյալ Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 տոկոսից պակասին տիրապետող այն բաժնետրեը, որը չի կնքել սույն կանոնադրության 16.6 կետում նշված պայմանագիրը:

Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի միասնական ներկայացուցիչը պետք է առաջադրվի նրանց կազմից և ընդգրկվի Խորհրդի կազմում՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության: Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցչի ընտրությանը մասնակցում են միայն Ընդհանուր ժողովին ներկա փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերը կամ նրանց ներկայացուցիչները, թեկուզև դրանց թիվը կազմի մեկ: Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի առաջադրած ներկայացուցչի մասին օրենքով պահանջվող տեղեկատվությունը Խորհրդի կողմից ներկայացվում է Ընդհանուր ժողովի բոլոր բաժնետերերին՝ Ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

16.8. Փոքր մասնակցություն ունեցող բաժնետրերի, ինչպես նաև Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10%-ը տիրապետող բաժնետերերի կողմից բաժնետերերի խմբի ներկայացուցիչների ընդգրկումը Բանկի խորհրդի կազմում կատարվում է հետևյալ կարգով.

Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10%-ը տիրապետող այն բաժնետերերը,

ովքեր ցանկանում են միավորվել և ստեղծել բաժնետերերի խումբ, որոնց հավաքական մասնակցությունը կկազմի Բանկի քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը, կնքում են մասնակիցների խումբ ստեղծելու մասին համապատասխան պայմանագիր՝ նշելով իրենց ներկայացուցչին, վերջինիս վերաբերյալ օրենքով սահմանված տեղեկությունները և դրանց պատճենները ներկայացնում են Բանկի խորհրդին՝ դրանք Ընդհանուր ժողովին և Ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին տրամադրելու համար:

Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը ստանալու պահից հնգօրյա ժամկետում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցները Բանկի խորհրդին ներկայացնում են իրենց կողմից առաջարկվող ներկայացուցչին և վերջինիս վերաբերյալ օրենքով պահանջվող տեղեկությունները, իսկ Խորհուրդը դրանք ներկայացնում է Ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին:

Ընդհանուր ժողովում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների կողմից առաջադրված միասնական ներկայացուցչի՝ Խորհրդի կազմում ընտրությանը մասնակցում են միայն փոքր մասնակցություն ունեցող մասնակիցները, թեկուզ և դրանց թիվը կազմի մեկ:

Ընդհանուր ժողովում մասնակիցների խումբ ստեղծված մասնակիցների ներկայացուցիչը առանց ընտրության ընդգրկվում է Բանկի խորհրդի կազմում:

16.9. Բանկի խորհուրդը կարող է կազմվել առնվազն 5 անդամից, սակայն ոչ ավել, քան 7 անդամից:

16.10. Խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն: Խորհրդի անդամները և տվյալ Բանկի գործադիր մարմնի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք:

16.11. Խորհրդի անդամները վարձատրվում են: Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է Ընդհանուր ժողովի կողմից և չի կարող մեկ տարուց պակաս լինել:

16.12.**Բանկի խորհրդի նախագահը**

Բանկի խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կողմից Խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Բանկի խորհրդի նախագահը.

ա) կազմակերպում է Բանկի խորհրդի աշխատանքները,

բ) գումարում և նախագահում է Բանկի խորհրդի նիստերը,

գ) կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,

դ) նախագահում է Բանկի մասնակիցերի ընդհանուր ժողովներում,

ե) կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքները:

Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա լիազորությունները կատարում է Խորհրդի տարիքով ավագ անդամը:

16.13.Բանկի խորհրդի իրավասություններն են՝

ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի

հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,

բ) Ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,

գ) այլ իրավաբանական անձանց (ներառյալ՝ դուստր և կախյալ ընկերությունների) ստեղծման կամ դրանցում մասնակցության վերաբերյալ որոշումների ընդունումը,

դ) Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,

ե) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,

զ) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,

է) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը,

ը) Ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը,

թ) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,

ժ) ըստ անհրաժեշտության՝ Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

ժա) Բանկի կողմից սույն կանոնադրության 3.1 կետով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,

Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,

ժբ) Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը,

ժգ) սույն կանոնադրության 15.26 կետի «բ», «ժ-ժզ» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումն Ընդհանուր ժողովի քննարկմանը,

ժդ) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը,

ժե) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

ժզ) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը և

գործունեության դադարեցումը,

ժէ) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,

ժը) օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը, որը պետք է ընդունվի միաձայն, ինչպես նաև խորհրդի կողմից միաձայն չընդունվելու դեպքում խոշոր գործարքի հարցն Ընդհանուր ժողովում քննարկելու մասին որոշման ընդունումը,

ի) օրենսդրությամբ սահմանված դեպքերում շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը,

իա) Բանկի անունից կնքվող գործարքների կնքման ընթացակարգերի հաստատումը, այդ թվում՝ Բանկի կառավարման մարմինների կողմից գործարքների կնքման սահմանաչափերի սահմանումը,

իբ) գույքի շուկայական արժեքի որոշումը օրենսդրությամբ սահմանված կարգով,

իգ) օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

16.14. Սույն կանոնադրության 16.13 կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Բանկի խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների կամ այլ անձանց:

16.15. Առնվազն տարին մեկ անգամ Բանկի խորհուրդն իր նիստում քննարկում է արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը):

Արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), մինչև Բանկի խորհրդի նիստում քննարկվելը, քննարկվում է Բանկի վարչության նիստում, արձանագրված փաստերի վերաբերյալ ընդունվում են համապատասխան որոշումներ, այնուհետև արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը) քննարկվում է Բանկի բաժնետերերի հերթական տարեկան ընդհանուր ժողովից հետո գումարվող առաջին իսկ Խորհրդի նիստում:

Բանկի խորհուրդը յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո, հիմք ընդունելով պլանային և փաստացի ցուցանիշները, մինչև ընթացիկ տարվա փետրվարի 10-ը իր նիստում քննարկում է Բանկի հեռանկարային զարգացման ծրագիրը, և քննարկման արդյունքից ելնելով որոշում է կայացնում Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, հետագա ռազմավարությունը վերանայելու կամ նույնը թողնելու վերաբերյալ և հաստատում է Բանկի հեռանկարային զարգացման ծրագիրը:

Առնվազն տարին մեկ անգամ Բանկի խորհուրդը մինչև հաշվետու տարվա մայիս ամիսը պետք է վերանայի Բանկի գործունեությունը կարգավորող կարգերն ու ներքին իրավական ակտերը: Բանկի գործող կարգերում ու ներքին իրավական ակտերում կատարվող փոփոխություններն, ինչպես նաև նոր կարգերն ու ներքին իրավական ակտերը Բանկի խորհրդի քննարկման ու հաստատմանն է ներկայացնում Բանկի Վարչությունը:

Բանկի համապատասխան ստորաբաժանումները, հիմք ընդունելով բանկային գործունեությունը կարգավորող օրենքներում և նորմատիվ իրավական ակտերում, Բանկի կազմակերպչական կառուցվածքում, ինչպես նաև կատարվող գործարքների իրականացման գործընթացում կատարվող փոփոխությունները, վերանայում են գործող կարգերն ու ներքին իրավական ակտերը, անհրաժեշտության դեպքում մշակում են նոր կարգեր ու ներքին իրավական ակտեր և ներկայացնում են Բանկի Վարչության քննարկմանը, որոնք Բանկի Վարչության կողմից հավանության արժանանալուց հետո ներկայացվում են Բանկի խորհրդի քննարկմանը և հաստատմանը:

Առնվազն եռամսյակը մեկ անգամ, տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 15-ից հետո գումարվող առաջին իսկ նիստում Բանկի խորհուրդը պետք է քննարկի նախորդ եռամսյակի գործունեության վերաբերյալ Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, Բանկի Վարչության և գլխավոր հաշվապահի հաշվետվությունները իր սահմանած կարգով և ձևով:

Ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ինչպես նաև օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտվելու դեպքում Բանկի խորհրդին, անհրաժեշտության դեպքում Խորհրդի նախագահին ներկայացված ներքին աուդիտի ղեկավարի հաշվետվությունը Բանկի խորհուրդը քննարկում է արտահերթ նիստում հաշվետվությունը ստանալու պահից առավելագույնը մեկ շաբաթվա ընթացքում:

Բանկի խորհուրդը քննարկման արդյունքներից ելնելով ընդունում է համապատասխան որոշումներ՝ անհրաժեշտության դեպքում տալով համապատասխան հանձնարարականներ:

16.16. Խորհրդի նիստերը

16.16.1. Խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն երկու ամիսը մեկ անգամ:

Խորհրդի նիստերը գումարում է Բանկի խորհրդի նախագահը՝ իր, Խորհրդի անդամի, Բանկի վարչության նախագահի (վարչության), ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից գրավոր, այդ թվում՝ էլէկտրոնային նամակագրության եղանակով պահանջ ներկայացնելով:

Բանկի խորհրդի նախագահը, բաժնետիրոջ (բաժնետերերի) գրավոր պահանջի դեպքում, Բանկի խորհրդի նիստի գումարման (այդ թվում՝ հեռակա կարգով կամ հեռախոսային կապի այլ միջոցով նիստի գումարման) մասին եռօրյա ժամկետում գրավոր ծանուցում է Բանկի խորհրդի բոլոր անդամներին, օրենքով սահմանված դեպքերում Վարչության նախագահին, ինչպես նաև Բանկի խորհրդի նիստ գումարելու մասին գրավոր պահանջ ներկայացրած անձին:

Բանկի խորհրդի նիստի գումարման մասին ծանուցման մեջ նշվում է Խորհրդի նիստի գումարման վայրը, ժամկետը, ժամը, օրակարգի հարցերը, նիստում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին Խորհրդի անդամների ծանոթանալու կարգը, իսկ հեռակա կարգով կամ հեռախոսային կապի, կամ հեռուստակապի կամ կապի այլ միջոցով

կայանալու դեպքում նշվում է նաև այդ մասին, ինչպես նաև նշվում է կոնկրետ կապի միջոցը:

Խորհուրդը կարող է իր կողմից ընդունվող Բանկի ներքին իրավական ակտերով առանձին հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման այլ կարգ սահմանել:

Խորհրդի անդամների ծանուցումը նիստի գումարման մասին իրականացվում է պատվիրված նամակներ ուղարկելու կամ անձամբ դրանք հանձնելու կամ էլեկտրոնային փոստային հասցեով ծանուցելու միջոցով:

Խորհրդի նիստի գումարման մասին Խորհրդի անդամները ծանուցվում են նիստի գումարման օրվանից առնվազն 3 օր առաջ:

16.16.2. Խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով:

Հեռակա կարգով նիստի գումարման մասին ծանուցման հետ միասին ուղարկվում են նաև քվեաթերթիկները՝ ծանուցման մեջ նշելով լրացված քվեաթերթիկների ետ վերադարձման ժամկետը:

Հեռակա կարգով գումարված Խորհրդի նիստերի ժամանակ որոշումները ընդունվում են Խորհրդի նիստի մասնակիցների կողմից լրացված քվեաթերթիկների հիման վրա:

Սույն կանոնադրության 16.13 կետի «գ», «դ», «թ» և «ժգ» ենթակետերում նշված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունումը, ինչպես նաև Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը, Բանկի խորհրդի նախագահի ընտրության հարցերը չեն կարող լուծվել Բանկի խորհրդի հեռակա նիստերի ժամանակ:

Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ Խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:

Հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով Բանկի խորհրդի նիստերի գումարումը և արդյունքների ամփոփումը կատարվում է հետևյալ կերպ.

Բանկի խորհրդի նիստի գումարման մասին ծանուցման մեջ նշվում է, որ Բանկի խորհրդի նիստը կայանալու է (Բանկի խորհրդի նիստի բոլոր մասնակիցները միմյանց հետ հաղորդակցվելու են) կամ հեռախոսային կապի կամ հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով:

Բանկի խորհրդի նիստի գումարման մասին Բանկի խորհրդի նիստի մասնակիցներին ծանուցման հետ միասին ուղարկվում է նաև Խորհրդի նիստի օրակարգի հարցերի վերաբերյալ նյութերըև այլ տեղեկատվություն:

Բանկի խորհրդի նիստի գումարման օրը սահմանված կապի միջոցով հաղորդակցվելով միմյանց հետ՝ Բանկի խորհրդի նիստի մասնակիցները քննարկում են օրակարգի հարցերը և ընդունում են համապատասխան որոշումներ, որոնց հիման կազմվում է արձանագրություն Բանկի խորհրդի նիստում քննարկված հարցերի և դրանց վերաբերյալ ընդունված որոշումների մասին, որը ուղարկվում է Բանկի խորհրդի նախագահին և անդամներին ստորագրման և Բանկ վերադարձման համար:

Արձանագրության մեջ որպես Բանկի խորհրդի նիստի գումարման վայր լրացվում է

սահմանված կապի միջոցի անվանումը:

16.16.3. Եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնադրությամբ, Խորհրդի նիստերի քվորումը համարվում է ապահովված, եթե նիստին մասնակցում են Խորհրդի անդամներից 3-ը: Խորհրդի որոշումներն ընդունվում են Խորհրդի համապատասխան նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ 16.13 կետի «գ» և «ժզ» ենթակետերով սահմանված Խորհրդի որոշումների, որոնց ընդունման համար քվորումը համարվում է ապահովված, եթե նիստին մասնակցում են Խորհրդի բոլոր անդամները, և որոնք ընդունվում են Խորհրդի բոլոր անդամների կողմից միաձայն: Այն դեպքում, երբ 16.13 կետի «դ» ենթակետով սահմանված հարցերով պահանջվում է Բանկի Վարչության նախագահի վարձատրության հաստատումը, և այդ վարձատրությունը գերազանցում է շուկայական ստանդարտները, այդ հարցերով որոշումների ընդունման համար քվորումը համարվում է ապահովված, եթե Խորհրդի նիստին մասնակցում են Խորհրդի անդամներից 5-ը, և որոշումներն ընդունվում են Խորհրդի բոլոր անդամների կողմից միաձայն: Այն դեպքում, երբ 16.13 կետի «ժա» ենթակետով սահմանված հարցերը պահանջում են որոշակի վարկային փաթեթների և ընտրված ակտիվները ներառող ֆինանսական գործարքների հետ կապված ներքին կանոնակարգերի հաստատումը (ներառյալ՝ փոփոխությունները), այդ հարցերով քվորումը համարվում է ապահովված, եթե Խորհրդի նիստին մասնակցում են Խորհրդի անդամներից 5-ը, և որոշումներն ընդունվում են Խորհրդի բոլոր անդամների կողմից միաձայն:

Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում:

Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

16.16.4. Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Բանկի Վարչության նախագահի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Բանկի Վարչության նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի:

Բանկի Վարչության նախագահը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

16.16.5. Խորհրդի նիստերը արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո 10-օրյա ժամկետում:

Արձանագրության մեջ նշվում են՝

1) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,

2) նիստին մասնակցած անձինք,

3) նիստի օրակարգը,

4) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած Խորհրդի յուրաքանչյուր անդամի,

5) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ Խորհրդի անդամների և Խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները,

6) նիստում ընդունված որոշումները:

Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:

Խորհրդի նիստերը վարում է Խորհրդի նախագահը, որն ստորագրում է նիստի որոշումները և պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

16.17. Բանկի խորհրդին կից հանձնաժողովները

Բանկի խորհրդին կից կարող են ստեղծվել հանձնաժողովներ:

16.18. Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման հիմքերը

16.18.1. Ընդհանուր ժողովի կողմից Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե՝

1) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Բանկի խորհրդի անդամ (Բանկի ղեկավար),

3) մեկ տարվա ընթացքում բացակայել է Խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից: Սույն կետի իմաստով՝ իրական ժամանակի ռեժիմով և սույն կանոնադրությամբ սահմանված հեռակա մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն,

4) օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

16.18.2. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Բանկն իրավունք ունի Խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու սույն մասի առաջին պարբերությամբ նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով Խորհրդի անդամի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

16.19 Բանկի խորհրդի նախագահը կամ Խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել տվյալ Բանկի գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, ինչպես նաև այլ Բանկի կամ վարկային կազմակերպության խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, բացառությամբ եթե տվյալ Բանկը և այլ Բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում են միմյանց հետ փոխկապակցված անձինք:

17. Բանկի Վարչությունը

17.1. Բանկի Վարչությունը՝

ա) ապահովում է Ընդհանուր ժողովի և Բանկի խորհրդի որոշումների կատարումը, կազմակերպում և իրականացնում է օրենքով, Բանկի կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից ընդունված իրավական ակտերի շրջանակներում Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ լիազորություններ,

բ) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի խորհրդի կողմից հաստատման ենթակա ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը,

գ) սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների միջնորդավճարների չափերը, ներգրավվող ավանդների և տրամադրվող վարկերի տոկոսադրույքները,

դ) քննարկում է վերստուգումների, ստուգումների նյութերը, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները:

17.2. Բանկի Վարչությունը կազմված է նվազագույնը 5, առավելագույնը 9 անդամից՝ Վարչության նախագահը, Բանկի գլխավոր հաշվապահը և Վարչության անդամները:

17.3. Բանկի Վարչության կազմը ընտրվում է առնվազն մեկ տարի ժամկետով:

17.4. Բանկի Վարչության նախագահը նշանակվում է Խորհրդի կողմից:

17.5. Վարչության անդամները նշանակվում են Խորհրդի կողմից՝ Վարչության նախագահի ներկայացմամբ:

17.6. Վարչությունը գործում է կանոնադրության, ինչպես նաև Խորհրդի կողմից հաստատված Բանկի վարչության կանոնակարգի և այլ ակտերի հիման վրա, որոնք սահմանում են Վարչության նիստերի հրավիրման ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման կարգը:

17.7. Բանկի Վարչության կառուցվածքում պարտադիր ընդգրկվում են Բանկի Վարչության նախագահը և գլխավոր հաշվապահը:

17.8. Բանկի Վարչության նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

Բանկի Վարչության նիստերը գումարվում են Բանկի Վարչության նախագահի նախաձեռնությամբ:

Բանկի Վարչության նիստերը կարող են գումարվել նաև Բանկի Վարչության անդամների, Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, ներքին աուդիտի ստորաբաժանման առաջարկությամբ, Բանկի Վարչության նախագահի որոշմամբ, Վարչության իրավասության ենթակա հարցերի քննարկում կազմակերպելու համար:

17.9. Բանկի Վարչության նիստերին մասնակցում են Վարչության անդամները: Նիստերին կարող են մասնակցել նաև Վարչության նախագահի կողմից հրավիրված անձինք:

Վարչության նիստերը նախագահում է Վարչության նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ Վարչության անդամներից մեկը:

17.10. Վարչության նիստերի քննարկմանը ներկայացվող նախագծերի և այլ փաստաթղթերի քննարկումը կազմակերպելու նախապատրաստման գործընթացը համակարգում է Բանկիհամապատասխան ստորաբաժանումը:

17.11. Վարչությունն իրավասու է քննարկել և որոշումներ ընդունել, եթե նիստին մասնակցում են Վարչության անդամների առնվազն 2/3-ը:

17.12. Վարչության նիստում որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող Վարչության անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Քվեարկության ժամանակ Վարչության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Վարչության այլ անդամի) չի թույլատրվում:

Ձայների հավասարության դեպքում Վարչության նախագահի ձայնը որոշիչ է:

17.13. Վարչության նիստերն արձանագրվում են:

Վարչության նիստերի արձանագրությունները ներկայացվում են Խորհրդին, ներքին աուդիտին, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ նրանց պահանջով:

Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 5-օրյա ժամկետում:

Արձանագրությունում նշվում են՝

ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,

բ) նիստին մասնակցած անձինք,

գ) նիստի օրակարգը,

դ) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած Վարչության յուրաքանչյուր անդամի,

ե) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ Վարչության անդամների և Վարչության նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները,

զ) նիստում ընդունված որոշումները:

Վարչության նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Վարչության նիստերը կազմակերպում և վարում է Վարչության նախագահը, որը ստորագրում է նիստերի որոշումները և պատասխանատվություն է կրում դրանց մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

17.14. Այն հարցերը, որոնք օրենքով կամ կանոնադրությամբ չեն սահմանվել որպես Ընդհանուր ժողովի, Խորհրդի, Վարչության նախագահի կամ ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են Վարչության իրավասությանը:

18. Բանկի Վարչության նախագահը

18.1.Բանկի Վարչության նախագահը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է Բանկի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

18.2. Բանկի Վարչության նախագահը՝

ա) տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

բ) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում գլխամասային Բանկի աշխատակիցներին, մասնաճյուղերի կառավարիչներին և մյուս աշխատակիցներին, բացառությամբ այն աշխատակիցների, որոնց աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու իրավասությունը պատկանում է Ընդհանուր Ժողովին կամ Խորհրդին:

գ) Բանկի խորհրդի հաստատած Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում հաստատում է Բանկի աշխատատեղերը և դրանց նկարագրերը:

դ) Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

ե) Խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Խորհրդի կողմից սահմանված կարգով:

18.3. Բանկի Վարչության նախագահի (Վարչության) իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմիններին, Բանկի ներքին աուդիտին, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ եթե Բանկի Վարչության նախագահի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին:

Վարչության նախագահի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

18.4. Խորհրդի կողմից Վարչության նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե՝

ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Բանկի Վարչության նախագահ (Բանկի ղեկավար),

գ) օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

18.5. Վարչության նախագահի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Բանկն իրավունք ունի Վարչության նախագահի պաշտոնից ազատված անձից հետ պահանջելու նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով Վարչության նախագահի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

19. Բանկի գլխավոր հաշվապահը

19.1. Բանկի գլխավոր հաշվապահը կամ նման պարտականություններ իրականացնող անձը (այսուհետ՝ Գլխավոր հաշվապահ) իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

19.2. Բանկի գլխավոր հաշվապահը նշանակվում է Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի Վարչության նախագահի (Վարչության) ներկայացմամբ:

Բանկի գլխավոր հաշվապահը ընտրվում է նվազագույնը մեկ տարի ժամկետով:

19.3. Բանկի գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Բանկի ընդհանուր ժողովին, Խորհրդին, գործադիր մարմնի անդամներին, ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի:

19.4. Բանկի գլխավոր հաշվապահը առնվազն եռամսյակը մեկ անգամ Բանկի խորհրդին և Վարչության նախագահին (Վարչությանն) է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ Խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:

19.5. Բանկի գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և Բանկի կանոնադրությանը համապատասխան:

19.6. Հաշվետվությունների և տեղեկատվության մեջ անարժանահավատ տվյալների հայտնաբերման դեպքերում Գլխավոր հաշվապահը ներկայացնում է դրանց առաջացման նախադրյալները, վկայակոչում է Բանկի աշխատակիցներին, որոնք անմիջականորեն մասնակցել են տվյալ հաշվետվությունների կամ տեղեկատվության կազմման աշխատանքներին և առաջարկում է միջոցներ դրանք ապագայում բացառելու կամ առկա թերությունները վերացնելու ուղղությամբ: Եթե նման դեպքերը կրում են պարբերական բնույթ, ապա Խորհուրդը հարց է բարձրացնում Գլխավոր հաշվապահի մասնագիտական համապատասխանության հարցը քննարկելու մասին:

19.7. Գլխավոր հաշվապահը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իր կողմից կնքված «Լրիվ նյութական պատասխանատվության» պայմանագրին համապատասխան պատասխանատվություն է կրում իր դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով Բանկին պատճառված վնասների համար:

20. Ներքին աուդիտի ստորաբաժանումը

20.1. Ներքին աուդիտի ստորաբաժանման (այսուհետև՝ ներքին աուդիտ) ղեկավարը և անդամները նշանակվում են Բանկի խորհրդի կողմից:

20.2. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցները ընտրվում են նվազագույնը մեկ տարի ժամկետով:

20.3. Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև Վարչության անդամների հետ փոխկապակցված անձինք:

20.4. Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:

20.5. Բանկի ներքին աուդիտը Բանկի խորհրդի հաստատած կանոնադրության համաձայն՝

ա) հսկողություն է իրականացնում Բանկի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ,

բ) հսկողություն է իրականացնում Բանկի Վարչության նախագահի (Վարչության), տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Բանկի ներքին ակտերի, Խորհրդի կողմից Վարչության նախագահին (Վարչությանը) տրված հանձնարարականների կատարման նկատմամբ,

գ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Բանկի խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

20.6. Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմիններին կամ այլ անձանց:

Ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցները դիտորդի կարգավիճակով կարող են մասնակցել Բանկի խորհրդի և Վարչության նիստերին:

Ներքին աուդիտի պահանջով ներքին աուդիտին ներկայացվում են Վարչության նիստերի արձանագրությունները:

20.7. Ներքին աուդիտի ղեկավարը Բանկի խորհրդին և Վարչության նախագահին (Վարչությանն) է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝

ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին,

բ) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են Վարչության նախագահի

(Վարչության) կամ Խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Խորհրդի նախագահին:

20.8.Ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ բացահայտվելու դեպքում ներքին աուդիտի կողմից կազմվում է համապատասխան արձանագրություն, որտեղ տրվում է խախտման մանրամասն նկարագիրը, ում կողմից է կատարվել խախտումը և Ներքին աուդիտի ղեկավարի կողմից փակ ծրարով համապատասխան գրանցամատյանում գրանցելուց հետո ներկայացվում է Բանկի խորհրդին և Վարչության նախագահին, իսկ եթե խախտումը հետևանք է Վարչության նախագահի (Վարչության) կամ Խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա ներկայացվում է անմիջապես Խորհրդի նախագահին:

Նշված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:

20.9.Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Բանկի խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

20.10. Օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտվելու դեպքում Ներքին աուդիտի կողմից կազմվում է համապատասխան արձանագրություն, որտեղ տրվում է խախտման մանրամասն նկարագիրը, ում կողմից է կատարվել խախտումը, ներքին աուդիտի առաջարկությունները նշված խախտումների վերացման և ապագայում բացառման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ և ներքին աուդիտի ղեկավարի կողմից փակ ծրարով համապատասխան գրանցամատյանում գրանցելուց հետո ներկայացվում է Բանկի խորհրդին՝ խախտումը հայտնաբերելուց առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում:

21. Բանկի արտաքին աուդիտը

21.1.Յուրաքանչյուր տարի Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Բանկը պետք է ներգրավի օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի (այսուհետ՝ արտաքին աուդիտ), կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:

21.2. Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին ընտրում է Ընդհանուր ժողովը՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով: Արտաքին աուդիտի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշում է Բանկի խորհուրդը:

21.3. Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտն իրականացնող անձի կողմից կարող է իրականացվել նաև Բանկի՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր բաժնետերերի պահանջով:

Այդ դեպքում արտաքին աուդիտ իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում, նրա ծառայությունների դիմաց վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը, ընդ որում, նրանք կարող են Բանկից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե այդ

ստուգումն Ընդհանուր ժողովի որոշմամբ արդարացված է եղել Բանկի համար:

Բանկի արտաքին աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել նաև Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի միջոցների հաշվին:

21.4. Բանկն արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացության կազմումից, պետք է նախատեսի նաև աուդիտորական հաշվետվության (նամակ Բանկի ղեկավարությանը) կազմում:

Բանկն արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսի նաև իր կողմից ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում:

21.5. Բանկում աուդիտ իրականացնելու ընթացքում արտաքին աուդիտի կողմից Բանկի ֆինանսական վիճակն իր կարծիքով էականորեն վատթարացման փաստեր, ինչպես նաև ներքին համակարգերի (այդ թվում՝ ներքին հսկողության համակարգի) թերություններ հայտնաբերելու դեպքում արտաքին աուդիտն իրականացնող անձը պարտավոր է դրանց մասին անմիջապես տեղյակ պահել ՀՀ Կենտրոնական բանկին:

21.6. ՀՀ Կենտրոնական բանկը կարող է պարտադրել Բանկին չորս ամսվա ընթացքում հրավիրել արտաքին աուդիտ և հրապարակել նրա եզրակացությունը, ինչպես նաև իրավունք ունի պահանջելու Բանկից, որպեսզի նա փոխի արտաքին աուդիտն իրականացնող անձին և նշանակի այլ արտաքին աուդիտ իրականացնող անձ:

22. Հաշվառումը, հաշվետվությունը և վերահսկողությունը Բանկի նկատմամբ

22.1. Բանկը կազմում, հրապարակում և ՀՀ Կենտրոնական բանկ է ներկայացնում տարեկան, եռամսյակային ֆինանսական և այլ հաշվետվություններ, որոնց ձևերը, ներկայացնելու կարգը և ժամկետները սահմանում է ՀՀ Կենտրոնական բանկը՝ հաշվի առնելով միջազգային ստանդարտները:

Բանկի կողմից ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և այլ տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:

22.2. Բանկը հաշվապահական հաշվառումը վարում է ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ կառավարության լիազորված մարմնի հետ համաձայնեցված կարգով՝ ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:

22.3. Բանկի գործառնական տարին սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում է նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

23. Բանկի ղեկավարների պատասխանատվությունը

23.1. Բանկի ղեկավարները գործում են՝ ելնելով Բանկի շահերից, իրականացնում են իրենց իրավունքները և կատարում են Բանկի նկատմամբ իրենց պարտականությունները բարեխիղճ ու

ողջամիտ կերպով (ֆիդուցիար պարտականություն):

Բանկի ղեկավարները Բանկի առջև պատասխանատվություն են կրում իրենց դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով Բանկին պատճառված իրական վնասի համար՝ ՀՀ օրենսդրության համաձայն:

Եթե Բանկին վնաս պատճառած արարքն իրականացրել են Բանկի մեկից ավելի ղեկավարներ, ապա նրանք Բանկի առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

Բանկին հասցված վնասի համար պատասխանատվությունից ազատվում են Բանկի այն ղեկավարները, որոնք Բանկին վնաս պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

23.2. Եթե Բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտում են օրենքների, այլ նորմատիվ իրավական և Բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, ապա Խորհուրդը պարտավոր է ձեռնարկել միջոցներ այդ խախտումները վերացնելուև հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:

23.3. Բանկի ղեկավարների պատասխանատվությունը ներառում է, սակայն չի սահմանափակում հետևյալ հնարավոր դեպքերը՝

ա) մեկ փոխառուի, խոշոր փոխառուների, Բանկի հետ կապված անձանց գծով սահմանված նորմատիվների խախտումով տրամադրված վարկերի, փոխառությունների կամ կնքված այլ գործարքների հետևանքով Բանկին պատճառված իրական վնասների հատուցման համար պատասխանատվություն է կրում Բանկի վարչության նախագահը, իսկ եթե տվյալ գործարքի կնքման համար օրենքով պահանջվում է Խորհրդի որոշում, ապա Խորհրդի անդամները և Վարչության նախագահը.

բ) գործադիր մարմնի անդամները պարտավոր են հատուցել նաև Բանկի խորհրդի կողմից ընդունված ներքին իրավական ակտերի խախտումներով կնքված գործարքների հետևանքով Բանկին պատճառված իրական վնասները.

գ) եթե Բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտել են օրենքների, այլ նորմատիվ իրավական և Բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, և հետագայում Բանկը կրել է նույն խախտումներով պայմանավորված վնաս, ապա Խորհրդի անդամները համապարտ պատասխանատվություն են կրում այդ իրական վնասների հատուցման համար, բացառությամբ, եթե Խորհրդի անդամն իր իրավասությունների սահմաններում ձեռնարկել է այդ խախտումները կանխելու ուղղությամբ բավարար և խելամիտ գործողություններ.

դ) եթե ներքին աուդիտի կողմից ստուգման արդյունքներով բացահայտված օրենքների, այլ իրավական ակտերի խախտումների վերաբերյալ տեղեկությունները Բանկի խորհրդին չեն ներկայացվել, և հետագայում Բանկը, այդ խախտումներով պայմանավորված, վնասներ է կրել, ապա ներքին աուդիտի ղեկավարը պարտավոր է հատուցել այդ իրական վնասները.

ե) եթե Բանկի հետ կապված անձի հետ գործարքը կնքվել է Բանկի ներքին ընթացակարգերի խախտումով Խորհրդին ներկայացված դրական եզրակացության հիման վրա, ապա այդ գործարքի հետևանքով Բանկին պատճառված իրական վնասների հատուցման համար

պատասխանատվություն է կրում Բանկի վարչության նախագահը:

23.4. Անձն ազատվում է Բանկին պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ այն համոզմունքով, որ իր գործողությունները ելնում են Բանկի շահերից: Մասնավորապես՝

ա) եթե ողջամիտ գործարար տրամաբանությունից ելնելով՝ կայացվել են որոշումներ, նույնիսկ եթե դրանք Բանկին հետագայում հասցրել են այնպիսի վնասներ, որոնց առաջացումն այդ որոշումն ընդունելիս հստակորեն հաշվի է առնվել որպես բիզնես ռիսկ.

բ) եթե ղեկավարի կողմից սխալ կամ թերի որոշումների ընդունումը եղել է բարեխիղճ՝ առանց վնաս պատճառելուն հատկապես ուղղված միտման, և եթե այդ որոշումների ընդունմամբ չեն խախտվել օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջները: Բանկի ղեկավարների պաշտոնից ազատվելը չի ազատում նրանց իրենց մեղքով Բանկին պատճառված վնասի համար պատասխանատվությունից:

23.5. Բանկը կամ Բանկի այն բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք համատեղ) տնօրինում է (են) Բանկի տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի (կանոնադրական հիմնադրամում մասնակցության) մեկ և ավելի տոկոսը, իրավունք ունի (ունեն) Բանկի ղեկավարների դեմ հայցով դիմելու դատարան՝ Բանկին պատճառված վնասների փոխհատուցման պահանջով:

24. Բանկի գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված խոշոր գործարքները: Բանկի գործարքներում շահագրգռվածությունը

24.1. Խոշոր գործարքներ են համարվում՝

ա) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Բանկի բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են Բանկի կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի ձեռքբերման հնարավորության կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 և ավելի տոկոսը.

բ) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնց առարկա է հանդիսանում Բանկի հասարակ (սովորական) կամ հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխումը, որը կազմում է Բանկի կողմից արդեն տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 25 և ավելի տոկոսը:

Խոշոր գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը որոշվում է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

24.2. Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը, որի առարկա է հանդիսանում գույքը, և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի

ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, պետք է ընդունվի Խորհրդի կողմից միաձայն: Եթե գործարք կնքելու մասին որոշումը Խորհրդի կողմից չի ընդունվել, ապա Խորհուրդն իրավունք ունի որոշում ընդունելու՝ հարցն Ընդհանուր ժողովում քննարկելու մասին:

Սույն կետով սահմանված սահմանված դեպքում, ինչպես նաև եթե գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

Սույն կետով սահմանված պահանջները չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության:

Սույն կետով պահանջները չպահպանելը խոշոր գործարք կնքելիս չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե Բանկի հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ նշված պահանջները Բանկի կողմից չպահպանելու մասին:

24.3. Բանկի գործարքներում շահագրգիռ անձինք են համարվում Խորհրդի անդամը, Բանկի կառավարման մարմիններում այլ պաշտոն զբաղեցնող անձը կամ Բանկի բաժնետերը, որն իր հետ փոխկապակցված անձանց հետ միասին տիրապետում է Բանկի քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, եթե այդ անձինք կամ նրանց հետ փոխկապակցված անձինք՝

ա) հանդիսանում են գործարքի կողմ կամ մասնակցում են գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ.

բ) տիրապետում են գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի քվեարկող բաժնետոմսերի 20 և ավելի տոկոսին.

գ) պաշտոններ են զբաղեցնում գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի կառավարման մարմիններում:

24.4. Սույն կանոնադրության 24.3 կետում նշված անձինք պարտավոր են տեղեկություններ տրամադրել Խորհրդին, ներքին աուդիտին և արտաքին աուդիտն իրականացնող անձին՝

ա) այն իրավաբանական անձանց մասին, որոնցում նրանք ինքնուրույն կամ նրանց հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ համատեղ տիրապետում են քվեարկող բաժնետոմսերի 20 և ավելի տոկոսին.

բ) այն իրավաբանական անձանց մասին, որոնց կառավարման մարմիններում նրանք պաշտոններ են զբաղեցնում.

գ) կնքված կամ կնքման նախատեսված իրենց հայտնի գործարքների մասին, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգիռ անձ:

24.5. Բանկի որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունում է Խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

24.6. Խորհուրդը շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու համար պետք է գա այն եզրակացության, որ՝

ա) գործարքը կնքելու հետևանքով Բանկի կողմից ստացված վճարը պակաս չէ գործարքի արդյունքում Բանկի կողմից գործարքի մյուս կողմին փոխանցվող գույքի, տրամադրված ծառայության կամ կատարված աշխատանքի՝ սույն կանոնադրության 24.12 կետով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքից, կամ՝

բ) գործարքը կնքելու հետևանքով Բանկի ձեռք բերած գույքի, ստացված ծառայության կամ Բանկի համար կատարված աշխատանքի դիմաց վճարը չի գերազանցում նշված գույքի, ծառայության կամ աշխատանքի՝ սույն կանոնադրության 24.12 կետով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը:

24.7. Որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է Ընդհանուր ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող մասնակիցների ձայների մեծամասնությամբ, եթե գործարքը և (կամ) փոխկապակցված գործարքները կնքվում են Բանկի քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող Բանկի այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, որոնց քանակն ավելի է Բանկի՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից:

24.8. Գործարքի կնքումը, որում առկա է շահագրգռվածությունը, և որը բավարարում է սույն կանոնադրության 24.7 կետով սահմանված պահանջները, կարող է կնքվել առանց Ընդհանուր ժողովի որոշման, եթե՝

ա) գործարքը Բանկին շահագրգիռ անձի կողմից տրամադրվող փոխառություն է.

բ) գործարքը Բանկի և մյուս կողմի միջև արդյունք է բնականոն տնտեսական գործունեության, որը կնքվել է մինչև սույն կանոնադրության 24.3 կետի դրույթներին համապատասխան շահագրգռվածության ճանաչումը (որոշում չի պահանջվում մինչև հաջորդ Ընդհանուր ժողովի գումարման օրը):

Եթե Ընդհանուր ժողովի անցկացման օրվա դրությամբ անհնար է կանխատեսել Բանկի և գործարքի մյուս կողմի բնականոն տնտեսական գործունեության ընթացքում շահագրգռվածության հնարավորությունը, ապա սույն կանոնադրության 24.7 կետի պահանջները համարվում են կատարված, եթե Ընդհանուր ժողովը որոշում կընդունի Բանկի և մյուս կողմի միջև պայմանագրային հարաբերությունների հաստատման մասին, որով կսահմանվի կնքվող գործարքների բնույթը և գործարքների առավելագույն արժեքը:

24.9. Եթե Խորհրդի բոլոր անդամները շահագրգիռ անձինք են ճանաչվել, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ գործարքում շահագրգռվածություն չունեցող մասնակիցների ձայների մեծամասնությամբ:

24.10. Եթե գործարքը, որում առկա է շահագրգռվածությունը, միևնույն ժամանակ Բանկի գույքի օտարման կամ ձեռքբերման խոշոր գործարք է հանդիսանում, ապա դրա կնքումն իրականացվում է՝ հաշվի առնելով նաև սույն կանոնադրության օրենքի 24.1 և 24.2 կետերի դրույթները:

24.11. Գործարքը, որում առկա է շահագրգռվածությունը և կնքվել է սույն կանոնադրությամբ

սահմանված պահանջների խախտմամբ, չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե Բանկի հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չգիտեր և չէր կարող իմանալ նշված պահանջները Բանկի կողմից չպահպանելու մասին:

Շահագրգիռ ճանաչված անձը Բանկի առջև պատասխանատվություն է կրում Բանկին պատճառված վնասների չափով: Եթե պատասխանատվության ենթակա է մի քանի անձ, ապա նրանք Բանկի առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

Անձն ազատվում է սույն մասով սահմանված պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ գործարքի կնքմամբ Բանկը կկրի վնասներ:

Շահագրգռվածության առկայության դեպքում Բանկի գործարքների կնքման վերաբերյալ սույն կանոնադրության և օրենքի պահանջները չեն կիրառվում, եթե՝

ա) բոլոր բաժնետերերի կողմից իրականացվում է բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը.

բ) իրականացվում է բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի փոխարկումը.

գ) կանոնադրական հիմնադրամում մասնակցությունը Բանկի կողմից ձեռք բերելու դեպքում, եթե տվյալ տեսակի (դասի) բաժնետոմսերի բոլոր սեփականատերերն ունեն հավասար իրավունք՝ համամասնորեն վաճառելու իրենց պատկանող տվյալ տեսակի (դասի) բաժնետոմսերը:

Սույն կետի պահանջները չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության:

24.12. Գույքի շուկայական արժեք է համարվում (ներառյալ՝ Բանկի բաժնետոմսերի և այլ արժեթղթերի արժեքը) այն գինը, որով գույքի արժեքի մասին անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը կհամաձայներ վաճառել այդ գույքը, իսկ գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը կհամաձայներ այդ գույքը ձեռք բերել:

Գույքի շուկայական արժեքը որոշվում է Խորհրդի որոշմամբ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից:

Եթե մեկ կամ մի քանի գործարքներում, որոնց համար պահանջվում է սահմանել գույքի շուկայական արժեք, շահագրգիռ անձ է հանդիսանում Խորհրդի անդամը, ապա գույքի շուկայական արժեքը սահմանվում է Խորհրդի այն անդամների որոշմամբ, որոնք չունեն շահագրգռվածություն նշված գործարքում:

Գույքի շուկայական արժեքի որոշման համար՝ անկախ գնահատողի ծառայություններից Բանկը կարող է օգտվել Խորհրդի որոշմամբ:

Անկախ գնահատողի կողմից գույքի շուկայական արժեքի որոշումը պարտադիր է օրենքով սահմանված՝ Բանկի մասնակիցների՝ Բանկի կանոնադրական հիմնադրամում ունեցած մասնակցության հետգնման դեպքերում:

Բանկի բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի շուկայական արժեքի որոշման անհրաժեշտության դեպքում հաշվի են առնվում այդ բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև առաջարկի և պահանջարկի գներին վերաբերող և համապատասխան զանգվածային

լրատվության միջոցներում պարբերաբար հրապարակվող տեղեկությունները:

Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել Բանկի զուտ ակտիվների (հիմնական կապիտալի) արժեքը, ինչպես նաև այն գինը, որը Բանկի բոլոր տեղաբաշխված հասարակ (սովորական) արժեթղթերի համար համաձայն է վճարել Բանկի գույքի մասին լրիվ տեղեկություններ ունեցող գնորդը, ինչպես նաև այլ գործոններ, որոնք Բանկի գույքի շուկայական արժեքը սահմանող մարմինը (անձը) կհամարի կարևոր:

Սույն կետով որոշվող հասարակ (սովորական) բաժնետոմսերի շուկայական արժեքը չի կարող պակաս լինել այն գնից, որը հաշվարկվել է՝ Բանկի զուտ ակտիվների (հիմնական կապիտալի) արժեքը հիմք ընդունելով:

25. Տեղեկությունները և դրանց հրապարակումը

25.1. Բանկը ինտերնետում՝ Բանկի կայքէջում, պարտավոր է մշտապես հրապարակել՝

ա) Բանկի ֆինանսական հաշվետվությունները (առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային) և հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճենը:

Բանկը պարտավոր է նաև հրապարակել դրանք առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով (Բանկի գլխամասային գրասենյակում, Բանկի մասնաճյուղերում և ներկայացուցչություններում).

բ) օրենքով սահմանված ժամկետում՝ տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը: Ընդ որում, Բանկը պարտավոր է տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը հրապարակել նաև մամուլում.

գ) շահութաբաժիններ վճարելու մասին որոշումների պատճենները, ինչպես նաև Բանկի շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերի պատճենները՝ առկայության դեպքում.

դ) Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), Բանկում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն՝ բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ), նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը.

ե) Բանկի խորհրդի, Վարչության անդամների ցանկը և անձնական տվյալները՝ նրանց անունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը, Խորհրդի անդամների, Վարչության նախագահի և Գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Բանկից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, Բանկի համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը,

նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը:

25.2.Սույն Կանոնադրության 25.1 կետի «ա»-«ե» ենթակետերում նշված տեղեկություններից բացի, ՀՀ Կենտրոնական բանկը կարող է պահանջել Բանկից ինտերնետում՝ Բանկի կայքէջում, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած հաճախականությամբ և կարգով հրապարակել նաև այլ տեղեկություններ, բացառությամբ առևտրային, բանկային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկությունների:

25.3. Բանկը պարտավոր է հրապարակել սույն Կանոնադրության 25.1 կետի «ա»-«ե» ենթակետերում նշված տեղեկությունների մեջ տեղի ունեցած փոփոխությունները՝ դրանց ընդունման օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:

25.4. Բանկը պարտավոր է ինտերնետում՝ Բանկի կայքէջում, և առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով (Բանկի գլխամասային գրասենյակում, Բանկի մասնաճյուղերում և ներկայացուցչություններում) հրապարակել օրական կտրվածքով թարմացված տեղեկություններ՝ իր կողմից ավանդների ընդունման, վարկերի տրամադրման, ինչպես նաև մատուցվող բոլոր այլ ծառայությունների և հաճախորդների համար իրականացվող ֆինանսական գործառնությունների վերաբերյալ, այդ թվում՝ տոկոսադրույքներ, ծառայության միջնորդավճարներ, ժամկետայնություն և էական այլ պայմաններ:

25.5. Բանկը պարտավոր է նաև ցանկացած անձի պահանջով նրան տրամադրել՝

ա) Բանկի պետական գրանցման վկայականի և Բանկի կանոնադրության պատճենները.

բ) Բանկի թողարկած պարտատոմսերի և այլ արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման դեպքում՝ տեղեկություններ՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված ծավալով և կարգով.

գ) սույն կանոնադրության 25.1 կետում նշված տեղեկությունները կամ փաստաթղթերի պատճենները:

Սույն կետում նշված տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարը չի կարող ավելի լինել դրանց պատրաստման և (կամ) փոստային առաքման համար արված փաստացի ծախսերից:

Բանկը պարտավոր է իր գլխամասային գրասենյակում, Բանկի մասնաճյուղերում և ներկայացուցչություններում՝ տեսանելի վայրում, փակցնել հայտարարություն՝ սույն կետում նշված տեղեկությունների ստացման հնարավորության և այդ տեղեկությունների ստացման կարգի, վայրի և ժամանակի մասին:

25.6. Բանկն իրավունք չունի իր գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ իր անունից արված որևէ հայտարարության մեջ օգտագործելու ապակողմնորոշող այնպիսի տեղեկություններ կամ այլ անձանց կողմից այդ Բանկի վերաբերյալ կատարված հայտարարություններ, որոնք կարող են թյուր ենթադրության տեղիք տալ Բանկի ֆինանսական

վիճակի, ֆինանսական շուկայում նրա զբաղեցրած դիրքի, հեղինակության, գործարար համբավի կամ իրավական կարգավիճակի վերաբերյալ:

25.7.Բանկի կողմից, սույն կանոնադրությամբ և օրենքների համաձայն, հրապարակվող կամ տրամադրվող տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:

26. Բանկի վերակազմակերպումը և լուծարումը

26.1. Բանկի վերակազմակերպումն ու լուծարումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ:

27. Բանկի ապրանքային նշանի համառոտ նկարագրությունը

27.1. Համակցված ապրանքային նշան, որտեղ ուղղանկյան մեջ ձախ մասում ներկայացված է գրաֆիկական պատկեր, իսկ աջ կողմում ոճավորված գրված է IDBank լատինատառ բառը: ID (հայերեն տառադարձությունը՝ ԱյԴի) մտացածին հապավում է, իսկ Bank թարգմանաբար նշանակում է «Բանկ»:

«Անելիք Բանկ» ՓԲԸ վարչության նախագահի Ժ/պ՝ Ռ. Մելիքյան